ԵՐՎԱՆԴ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

ԻՄ ՀՈՒՇԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Գրքի երկրորդ հրատարակությունը նվիրում ենք մեր հայրիկի՝ հայ ապատամարտի քաջարի կինվոր Երվանդ Կյուրեղյանի և անկուգական ու բազմաչարչար մայրիկի՝ Վարդանուշի պայծառ հիշատակին։

Զավակներ՝ Անժել Ալթունյան և Վարուժ Կյուրեղյան

Գ(56)
Կ-61

20 հունիս 2010

ԵՐՎԱՆԴ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

Գ.Գ. Սիսեանի թանգարան-ին

Վարուժ Կյուրեղյան-ից

ԻՄ ՀՈՒՇԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

4333

Հրատարակության պատրաստեցին,
խմբագրեցին և ծանոթագրեցին
Սերգեյ Վարդանյանը** և **Լուսինե Սահակյանը

«Արարատ» ռազմավարագիտական կենտրոն
Երևան - 2009թ.

ՀՏԴ 941 (479. 25)
ԳՄԴ 63. 3 (2Հ)
Կ 613

«Արարատ» ռազմավարագիտական կենտրոն
ԵՊՀ օսմանագիտական կենտրոն

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ ԵՐՎԱՆԴ
Կ 613 **Իմ հուշերի ճանապարհով**, -Եր.: «Լուսակն» հրատ., 2009, 354 էջ:

Հեղինակը ծնվել է Վանի նահանգի Հայոց ֆոր գավառակի Քերծ գյուղում: Օսմանյան կայսրության հայահալած քաղաքականության պատճառով պատանեկան տարիներից զինվորագրվել է հայ ազգային-ազատագրական պայքարին, մասնակցել բազմաթիվ կռիվների, Վանի և Սարդարապատի հերոսամարտերին, 1921թ. անցել Պարսկաստան և հարյուր տարեկանում՝ 1988թ. Լոս Անջելեսում գրել իր հուշերը, որոնք ունեն անհերքելի վավերագրերի արժեք:

Նախատեսված է գիտնականների, ուսանողների և ընթերցող լայն շրջանակների համար:

ԳՄԴ 63. 3 (2Հ)

© Երվանդ Կյուրեղյան
© Վարդանյան Ս. Գ., Սահակյան Լ. Ս., 2009թ.
© «Արարատ» ռազմավարագիտական կենտրոն, 2009թ.

ԵՐՎԱՆԴ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

ԶՕՐԵԱՆ ՀԻՄՆԱՐԿ

ԳԻՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Ցարգելի Երվանդ Կիւրեղեան

Այս վկայագրով կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը Զօրեան Հիմնարկի նախաձեռնած Բանաւոր Պատմութեան հաւաքի գործին ձեր մատուցած անգին օժանդակութեան համար:

Ձեզ հետ ունեցած ասուլիսի պատկերաժապաւէնը, որը կը պարունակէ ձեր կեանքի փորձառութիւնը հայ ժողովուրդի պատմութեան ամենէն ալեկոծ պահերուն՝ կը հարստացնէ Զօրեան Հիմնարկի Բանաւոր Պատմութեան հաւաքածոն: Որպէս անփոխարինելի վաւերագրային նիւթ՝ այդ ժապաւէնը մեծ արժէք կը ներկայացնէ մեր ժողովուրդի պատմութեան եւ մանաւանդ մեր ապագայ սերունդի ինքնագիտակցութեան համար:

Տնօրէնութեան Խորհուրդի Նախագահ՝

Վարիչ՝

Հայ Ժամանակակից Հետազօտական եւ Փաստաթուղթերի ԶՕՐԵԱՆ ՀԻՄՆԱՐԿ
ZORYAN INSTITUTE for Contemporary Armenian Research and Documentation, Cambridge, Massachusetts.

ZORYAN Institute for Contemporary Armenian Research and Documentation, Inc.

Gerard J. Libaridian, *Director*

July 18, 1989

Mr. Yervant Gureghian
17221 Roscoe Blvd. #4
Northridge, CA 91324

Dear Mr. Gureghian,

A short while ago, the staff of the Zoryan Institute had the opportunity to interview you and record on videotape your experiences as an Armenian and especially as a survivor of the Genocide.

On behalf of the Board of Directors, Friends, and staff of the Zoryan Institute, I would like to take this opportunity to express my deepest gratitude for your willingness to be a part of this important project and help preserve a critical segment of our past in a live forum for future generations.

To express our gratitude, the Board of Directors of the Zoryan Institute would like to present to you this Certificate of Appreciation expressing the importance of your interview for our heritage as well as for research. This certificate represents only a small measure of our appreciation and the gratitude future generations will have toward your valuable contribution.

It might interest you to know that to date we have interviewed over 550 survivors of the Genocide in the United States. We hope that our community will continue to provide moral and financial support to enable us to conduct as many interviews as possible before those who remember the events of seventy-five years ago are no longer with us. In this respect, we will appreciate any assistance you may provide in attaining our goal and in reaching other survivors whose testimonies we may record.

Please accept our deep appreciation for your support and best wishes for success.

Sincerely,

Gerard J. Libaridian
Director

Zoryan Institute Headquarters, 19 Day Street, Cambridge, MA 02140, (617) 497-6713
Zoryan Institute West Coast Office, 16200 Ventura Boulevard, Suite 423, Encino, CA 91436, (818) 784-0748.
Zoryan Institute of Canada, 101 Duncan Mill Road, Suite 300A, Don Mills, Ontario, M3B 1Z2, (416) 449-7171.

ԳԻՐՔ ՄՆԱՑ ՀԻՇԱՏԱԿՈՂ

(Տառապանքի ուղիներով)

1995-ին լրացավ Աբդուլ Համիդի կազմակերպած հայկական ջարդերի 100-ամյակը: Համարյա չհիշվեց, չնշվեց, չքննարկվեց, ժողովածուներ ու գրքեր չտպագրվեցին: Էներգետիկ ճգնաժամի տարիներն էին: Լեռնային Ղարաբաղի շուրջը դեռևս պայթյունավտանգ լարվածություն էր: Հայաստանն արնաքամ էր անում թափ առած արտագաղթը:

Մտածում էինք, որ 1895-ի ջարդերին կանդրադառնանք հետո՝ ավելի հանգիստ իրավիճակում: Անցել է 14 տարի: Շուտով՝ 6 տարի հետո, կբոլորի Մեծ եղեռնի 100-ամյակը: Բայց գրադարաններում ու ընտանեկան գրադարակներում քիչ գրքեր կան՝ նվիրված քաղաքակիրթ (արդյո՞ք քաղաքակիրթ) մարդկության պատմության ամենաբարբարոսական, քարեղարյան նողկալի ոճրագործություններով հարուստ էջերից մեկին: Քիչ՝ երևույթի ողբերգականության ու ծավալների ահռելիության համեմատ: Ցավալիորեն քիչ, ամոթալիորեն քիչ, աններելիորեն քիչ: Պատճառները չանտեսենք. հատկապես ստալինյան բռնապետության տարիներին հայոց ցեղասպանության մասին խոսելն ու գրելը անթույլատրելի էին: Եղեռնի խլյակներին զենքը ձեռքին պաշտպանած կամ Սարդարապատում թուրքական ոհմակների դեմ պատնեշ կանգնած լինելու համար մարդիկ կարող էին խորհրդային աքսորավայրերում ու զնդաններում հայտնվել:

Սփյուռքը դեռ ուշքի չէր եկել, դեռ ոտքի չէր կանգնել:

Հայ ժողովրդի հայրենիքի փրկված մի հատվածում՝ Խորհրդային Հայաստանում, մինչև 1965թ. հայտնի ցույցը մարդիկ իրենց ծնողների, ազգականների, զավակների տանջալից սպանդի մասին բարձրաձայն խոսելու և գրելու շատ քիչ հնարավորություններ ունեին: Եթե 1965-ից հետո Հայաստանում ինչ-որ չափով վիճակը փոխվեց, քիչումիչ գրքեր

ու հոդվածներ սկսեցին տպագրվել, Մեծ եղեռնի զոհերին նվիրված հուշարձան կանգնեցվեց, ապա Ռուսաստանում, Ադրբեջանում ու Վրաստանում, մյուս հանրապետություններում, որտեղ ապաստանել էին տասնյակ հազարավոր գաղթականներ, նույնիսկ 1965-ից հետո էլ չէր կարելի մարդկության դեմ գործված այդ մեծագույն ոճիրի մասին խոսել:

Այսպես չգրանցվեցին վերապրողների հուշերը, մեռան գնացին նրանք, ովքեր կարող էին եզակի վկայություններ տալ հայ ժողովրդի պատմության ամենասև էջի մասին, նաև պատմել հերոսացման հարյուրավոր դրվագներ: Գրողներ եղան, տարբեր վայրերում գտնվեցին մարդիկ, ովքեր ծերունական դողդոջ ձեռքերով գրի առան իրենց հուշերը, պատմեցին հայի ողբերգության ու հերոսության պատմությունը, բայց այդ տետրերից շատերն այդպես էլ չհրատարակվեցին: Մերօրյա ժամանակագիրները մեռան գնացին: Նրանց թողած խունացած թղթերը գուցե դեռևս մնում են նրանց սերունդներից ոմանց գզրոցներում, կամ, որ ավելի հաճախ է պատահում, նետվել են աղբանոց արդեն ուծացած թոռների կամ օտարազգի հարսների ու փեսաների ձեռամբ: Օտարին չենք մեղադրում: Մեր միջի օտարին ենք մեղադրում: Մեր միջի այն օտարին, որ այդպես օտարել է հային հայից, որ օտարներով շրջափակված Հայաստան կոչվող այս կղզում մենք ևս տեր չկանգնեցինք, չգրառեցինք, չհրատարակեցինք երկրային դժոխքով անցածների հուշերը:

Հասկանալի է, որ խոսքը երևույթին ինչ-որ չափով արժանի ծավալների մասին է և ոչ թե այն հատուկենտ հուշագրությունների, որոնք երբեմն հրատարակվում են:

Այսօր, երբ հայոց ցեղասպանությունը ժխտող թուրքական պետական քաղաքականությանն ենք առճակատվում, վարժ ու անվարժ ձեռագրերով, երբեմն ընդամենը տարրական կրթություն ստացած վերապրողների գրած հուշերը անժխտելի վկայություններ կարող էին լինել: Բայց դրանք արժեքավոր են մեզ համար նաև որպես մեր անցյալ, մեր

ապրած, բայց այդպես էլ կիսատ գրված պատմություն: Մովսեսի լեռան հերոսամարտի նման քանի՞սն է եղել, բայց ընդամենը մեկը գիտենք, այն էլ Ֆրանց Վերֆելի շնորհիվ: Քանի՜-քանի հերոսների անուններ այդպես էլ անհայտ մնացին, ինչպես անհայտ ու անանուն են հարյուր հազարավոր նահատակները, որոնց վրա հող լցնելով՝ հանձնեցինք մոռացումի: Հողը նրանց վրա թեթև չի լինի:

Նրանց հոշոտված մարմինները հողում թաղվեցին, բայց նրանց հոգիները հանգիստ չեն գտնի, քանի դեռ չի կայացել այն դատավարությունը, որտեղ պետք է կարդացվեն զոհերի վկայությունները, որպեսզի հնչի արդար դատավճիռը: Այդպիսի մի վկայություն է նաև Երվանդ Կյուրեղյանի «Իմ հուշերի ճանապարհով» հուշագրությունը:

Գիրքը հրատարակության պատրաստելիս, խմբագրելիս, ծանոթագրելիս, սրբագրելիս, բնականաբար, քանիցս կարդացել ենք և, պետք է խոստովանենք, որ ամեն անգամ որոշ հատվածներ առանց արցունքները զսպելու չենք կարողացել ընթերցել:

Սա հայ մարդու ոդիսական է: Հեղինակը երկու մեծադիր տետրում գրել է իր փոթորկահույզ կյանքի պատմությունն առանց ջնջումների և խմբագրումների, պարզապես առաջին էջից սկսել է գրել և ավարտել է վերջին էջում: Գրել է մահից տասը տարի առաջ՝ հարյուր տարեկանում՝ 1988թ., հիշելով մանուկ հասակում իրենց գյուղի քահանայի և, ապա, հորաքրոջ ամուսնու մոտ տառերը տարբեր առարկաների ու կենդանիների նմանեցնելով կարճ ժամանակում սովորած այբուբենը: Գրել է առանց մեծատառերի, շատ անգամ տառերի չփոթով և ուղղագրական կանոնների խախտումով, առանց կետադրության ու վերջակետի: Հորդացող մտքի, պատումի, տողի հետևից նա կարծես հազիվ հասցրել է արձանագրել իր ժողովրդի ու իր գլխին եկած պատուհասը: Դա կյանքի դառը բաժակը ցմրուր խմած, կյանքի չարը տեսած անչար մարդու պատմություն է, որը շատ ավելի հավաստի և կենդանի է, քան բազում գրա-

գետների կեղծ տվայտանքներն ու բառարաններից հանած բառակույտերը: Պարզ, անմշակ քարերով շարվածք են հիշեցնում նրա տողերը: Բնությունից անաղարտ, չոր, կոպիտ, ճշմարիտ, անկեղծ, առանց շինծու պատկերի, բառի, նոտայի, համեստ, առնական ... կարելի է ածականները շարունակել, բայց դա արդեն կանեն ընթերցողներն իրենք:

Հեղինակի կենսագրությունից նշենք ընդամենը մի քանի փաստ: Նա 1905-ին ընդգրկվել է Արմենական կուսակցության ինքնապաշտպանական հոտաղական գաղտնի միության մեջ, կյանքը վտանգելով եղել է սուրհանդակ, 1908-ին ընդունվել է ՀՅԴ շարքերը, 1914-ին փախել թուրքական բանակից, այնուհետև մասնակցել է Հայոց ձորի պաշտպանական կռիվներին, Վանի հերոսամարտին, Սարդարապատի ճակատամարտին, Արևելյան Հայաստանի մի շարք օտարաբնակ գյուղերի հպատակեցմանը, Մայիսյան խռովության ճնշմանը և Փետրվարյան ապստամբությանը, Պարսկաստանի քրդերի հետ ռազմական բախումներին և այլն, և այլն: Լինելով հեծելազորի հիսնապետ՝ նա իր մարտական ուղին այնպես է նկարագրում, կարծես ընդամենը կատարել է իր սովորական, հանապազօրյա աշխատանքը: Ոչ մի տրտունջ, ոչ մի դժգոհություն ձյան և ցեխի մեջ, խրամատներում անցկացրած օրերի, ամիսների ու տարիների, անձրևի ու արևի տակ կիսաքաղց զինվորական առօրյայի, ամեն պահ՝ գիշեր թե ցերեկ, կյանքը վտանգելով, թշնամու գնդակների տարափի տակ անսպասելի հրամանների կատարման մասին: Իր անձի և գործի հանդեպ չափազանց համեստ գնահատանքին ի հակադրություն՝ նա հիացմունքով է գրում իր գնդի հրամանատարի, կողքին կռված սպաների ու զինվորների մասին:

Գիրքը միայն տառապանքի ուղիներով անցած մարդու պատմություն չէ, այն ընթերցողին է մատուցում նաև ազգագրական հարուստ նյութ գյուղացիների կենցաղի, ընտանեկան սովորույթների, ավանդույթների, աշխատանքի և աշխատանքային երգերի, հայ-թուրքական և հայ-քրդական հարաբերությունների մասին: Հայերի հանդեպ քրդերի սահմռկեցուցիչ ոճիրների կողքին պատմվում է նաև համագյուղացի քուրդ Ջիբոյի, Աբզեյնի (Ավզնի) գյուղի քուրդ մոլլայի մասին, որոնք, իրենց կյանքը վտանգելով, պաշտպանում են հայերին: Արյան բազում նախճիրների միջով անցնելով՝ Եղեռնի օրերին մերձավորներին՝ հորն ու մորը, կնոջը, ազգականներին կորցնելուց, հազարավոր մորթված մայրեր ու երեխաներ տեսնելուց հետո հանկարծ մի կռվի ժամանակ հեղինակը փրկում է երկու թուրք անծանոթ երեխայի (քույր ու եղբայր) և գաղտնի ուղարկում իրենց մոր մոտ, իսկ ինքը նստում է և ողբում իր կորուստները:

Երվանդ Կյուրեղյանի հուշապատումն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ, և մեր ոչ հեռավոր անցյալի շատ իրողություններ հառնում են նորովի, անծանոթ կողմերով և մանրամասներով, գրված դեպքերի մասնակցի, այսինքն՝ պատմություն կերտողներից մեկի կողմից:

Հեղինակը, նկարագրելով իր ծննդյան օրից՝ 1888թ. (1886թ.) մինչև 1988թ. դեպքերը, հիշատակում է բազմաթիվ հանրաճանաչ և անծանոթ մարդկանց, մոռացումից փրկում շատերի անուններն ու գործը, համարյա անսխալ հիշում է ընդամենը մեկ-երկու անգամ տեսած տասնյակ ու տասնյակ վայրերի, գետերի, աղբյուրների, լճերի, գյուղերի, լեռների ու ձորերի, արոտավայրերի, վանքերի ու եկեղեցիների անունները, որոնք կամ վաղուց անվանափոխվել են կամ էլ օգտագործվում են միայն մասնագիտական գրականության մեջ, աշխարհագրությանը կամ պատմությանը նվիրված ուսումնասիրություններում: Գրքի ծանոթագրությունները կազմելիս մենք հաճախ զարմացել ենք, թե ինչպես է կյանքի ահավոր թոհուբոհի, Առաջին համաշխարհային պատերազմի գլխապտույտ իրադարձությունների միջով անցած, թանկագին կորուստներ ունեցած մարդը տասնամյակներ

անց քարտեզագրի ճշգրտությամբ նկարագրում իր անցած ուղին, մեծ ու փոքր ճակատամարտերի, տարբեր գյուղերի տեղադրությունը, մտապահում շատերի հիշողությունից վաղուց ջնջված տեղանունները:

Թեև մենք տողատակերում հնարավորինս մանրամասն տեղեկություններ ենք տվել այդ տեղանունների մասին, բայց հեղինակի հայրենի Քերծ գյուղը չենք ծանոթագրել, քանզի ցանկանում էինք այն ավելի հանգամանալից ներկայացնել: Քերծի մասին մեզ ծանոթ ամենաընդարձակ աղբյուրը Մանուել Միրախորյանի՝[1] 1884թ. հրատարակած նշանավոր ուղեգրությունն է[2]: Նա Քերծ գյուղում է եղել 27 տարեկանում՝ 1883թ.՝ Երվանդ Կյուրեղյանի ծննդից ընդամենը մի քանի տարի առաջ: Մ. Միրախորյանը գրում է, որ Քերծն ունի 60 տուն հայ բնակիչ[3], «Ս. Ստեփաննոս անուամբ մի եկեղեցի 300 տարուան կառուցեալ»[4], երկու քահանա, «գիւղական ճաշակաւ մի դպրոց, որ պիտի տայ յոյս եւ լոյս խաւարամիտ գիւղացւոց»[5]: Գյուղի մոտ նշմարվում են նաև երկու այլ եկեղեցիների «հիմնատեղիք», որոնց շուրջը կան «նախնի ժամանակի ... մահարձաններ»[6]: Գյուղից հյուսիս-արևելք եղել են բերդի ավերակներ: Միրախորյանը նշում է, որ ծերունիները պատմում են, որ 400-450 տարի առաջ, այսինքն՝ 15-րդ դարում, հիշյալ երկու եկեղեցիների շեն եղած ժամանակ «գիւղս ունեցած է 7-800 տուն բնակաւորք, բաժնուած այդ երկու սրբավայրերուն վրայ»[7]: Միրախորյանը պատմում է նաև մի փոքրիկ դիպվածի մասին, թե ինչպես «տեղէս մեկնելոյ վերջի պահուն մի խեղճ պատանի գիւղացի, ուսման շատ ծարաւի և սրտիւք ազնիւ ու կենդանի, ամօթխածութենէն շիկնած, որով եկաւ պատկառոտ դիմօք ձեռքս համբուրեց և հեռացաւ, կեցաւ լուռ և մտահոգ»[8]: Միրախորյանը բացատրում է, որ պատանին, նրա ձեռքին գրիչ տեսնելով, այս կերպ է արտահայտել իր ուսումնատենչությունը:

Մ. Միրախորյանը ցավով է նշում, որ գյուղի վարելահողերը մեծ մասամբ անջրդի են և «գիւղս 20 հատ պանդուխտ ունի 'ի Պոլիս, այդ պանդուխտներէն ոմանք ունին գաւազանի վրայ կոթնող տարեւոր հայրիկներ ու մայրիկներ, որոց աղի արտասուքը չ'կրցայ անթաց աչօք դիտել»[9]:

Որ Քերծն, իրավ, ծանրագույն կացության մեջ էր, վկայում է դեռևս Մ. Միրախորյանից 11 տարի առաջ՝ 1872թ. ապրիլի 26-ին, տասը համագյուղացիների ստորագրած նամակն ուղղված ընդամենը մեկ ամիս առաջ Վանում ստեղծված «Միութիւն ի փրկութիւն»[10] գաղտնի կազմակերպությանը. «Մեծապատիւ անդամք գաղտնի ընկերութեան: Մենք՝ ստորագրեալքս, մեր կրած նեղութեանց, հարստահարութեանց եւ զրկանաց երեսէն բոլորովին յուսահատած ըլլալով, եւ միջոցներս լսելով որ քաղաքամէջդ ալ նոյն ցաւօք ժողովուրդը վարակած է եւ զգացած են այս անտանելի չարութեանց իրենց վրայ ծանրանալը, ընկերութիւն մը կազմած էք Միութիւն ի Փրկութիւն անուամբ. ուստի ալ չկարենալով տոկալ սոյն անկրելի լուծին՝ ձեզ կը դիմենք. ձեզ

---

[1] **Մ. Միրախորյանը** ծնվել է 1856թ. Վանում՝ Այգեստանում, 1868թ. ընդունվել է Վարագա ժառանգավորաց վարժարանը և երեք տարի աշակերտել Խրիմյան Հայրիկին: Ապա ուսումը շարունակել է Կ. Պոլսում, ավարտելուց հետո դասավանդել է նույն վարժարանում, այնուհետև ուսուցիչ է աշխատել մի քանի քաղաքներում և Ռումինիայում: 1934թ. վախճանվել է Բուխարեստում: Թողել է մի շարք տպագիր և անտիպ արժեքավոր գրքեր և հոդվածներ (Տէր-Մկրտիչեան Ե., Գանձեր Վասպուրականի, հ. 1, Պոսթոն, 1966, էջ 415-420):

[2] Միրախորեան Մ., Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, մասն Ա., Կ. Պոլիս, 1884, էջ 189-192:

[3] Միրախորեան Մ., նշվ. աշխ., էջ 189:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

[6] Նույն տեղում:

[7] Նույնը, էջ 190:

[8] Նույնը, էջ 190-191:

[9] Նույնը, էջ 192:

[10] **Տէր-Մկրտիչեան Ե.**, նշվ. աշխ., էջ 347-352: Պողոսյան Հ., Վասպուրականի պատմությունից, 1850-1900, Երևան, 1988, էջ 179-183:

հետ միանալու՝ թերեւս դարման մը գտնենք թէ ի՞նչ միջոցով որ կարելի է այս չարիքներէն փրկուելու:

Պատրաստ եմք արեան եւ մահու չափ ձեզ հետ գալելու, ուր որ ալ մեր փրկութեան յոյս զմեզ տանի. թէ ռուսանալ հարկ է՝ ռուսանալ, թէ գաղթել՝ գաղթենք. թէ վերջապէս մեռնիլ՝ մեռնինք, բայց փրկուինք. այս է մեր աղերս առ ձեզ եւ առ Աստուած. եւ կ՚երդնունք չբաժնուիլ ի միմեանց, բայց եթէ մահուամբ միայն:

Քերց գիւղացիք՝ Իռէս Սարկիս մհ. Կարպլեան (կնիք), Իռէս Սարկիս Յարութեան (կնիք), Կուլան Սարկիսեան (կնիք), Ազիզ Բաղդասեան (կնիք), Ակոբ Կազեան (կնիք), Վարդտան Ավիտեան (կնիք), Արթեն Տէր Ակոբեան (կնիք), Մխօ Օհանեան, Օվան Յոնանեան, Կարապետ Խըլօեան»[11]:

Ի դեպ, Տ. Երեմիա արքեպիս. Տեկանցի[12] տվյալներով 1872թ. Քերծն ուներ 40 տուն բնակիչ և Հայոց ձորի 35 գյուղերի մեջ իր մեծությամբ հինգերորդն էր[13]: Շուրջ մեկ տասնամյակ անց՝ 1883-ին, գյուղն ուներ 60 տուն հայ բնակիչ: Յավոք, Քերծն անմասն չի մնում Աբդուլ Համիդի սանձազերծած ջարդերից և 1896թ. Քերծում, որտեղ արդեն կար 70 տուն հայություն, ըստ Ա-Դոյի[14], սպանվում կամ կրոնափոխվում է 72 հոգի (48 սպանված, 24 կրոնափոխված)[15]: Ըստ նրա՝ 1909-ին Քերծն ուներ 85 տուն՝ 491 (246 արական և 245 իգական) հայ բնակիչ և 8 տուն մահմեդական[16]: Այս թվերը, որքան էլ կարևոր, բայց ընդամենը վիճակագրություն են, իսկ Քերծի՝ 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի կյանքի մանրամասները փրկվել են Երվանդ Կյուրեղյանի շնորհիվ: Յավոք, Սև ծովից մինչև Կիլիկիա, Մարմարայի ափերից մինչև Վանա լճի ափերը սփռված հազարավոր հայկական գյուղերից ու քաղաքներից շատերը այդպես էլ չունեցան իրենց տարեգիրները:

Երվանդ Կյուրեղյանի «Իմ հուշերիս ճանապարհով» գիրքը հապշտապ լույս է տեսել 1996թ. Լոս Անջելեսում, քանզի 108-ամյա հեղինակի առողջությունը կտրուկ վատացել է, և որդին՝ Վարուժան Կյուրեղյանը, ցանկացել է, որ հայրն իր գրառումները հրատարակված տեսնի: Այդ շտապողականության պատճառով այն տպագրվել է առանց անհրաժեշտ ծանոթագրությունների և ինչպես նշված է գրքի սկզբում՝ «բազմաթիվ տպագրական թերություններով»: Տեղ են գտել նաև մի շարք փաստական սխալներ, արվել են հավելումներ, առկա են բնագրային տարընթերցումներ և այլն: Մենք ոչ միայն շուրջ 390 ծանոթագրություն, հղում ու բառերի բացատրություն ենք զետեղել էջատակերում, այլև շատ անգամ ստուգել և վերականգնել ենք բնագիրը: Կազմվել են տեղանունների և անձնանունների նոր, ամբողջական ցանկեր:

Հեղինակի որդու խնդրանքով հուշագրությունը տպագրում ենք նույնությամբ, խմբագրական նվազագույն միջամտությամբ, թեև Երվանդ Կյուրեղյանը, ապրելով Քերծում, Արևելյան Հայաստանի տարբեր բնակավայրերում, Պարսկաստանում՝ Մուժումբարում, Քերմանշահում, Թեհ-

---

[11] Տէր-Մկրտիչեան Ե., նշվ. աշխ., էջ 349-350:

[12] **Երեմիա աքեպիս. Տեկանցը** (Տեր-Սարգսյան) ծնվել է 1831թ. Վանում: Եղել է Լիմի միաբան, 1864-ից՝ Բաղեշի և Մուշի առաջնորդ, 1875-ից՝ Վանի և Վարագավանքի առաջնորդական տեղապահ: 1868-ին ձեռնադրվել է եպիսկոպոս: Վախճանվել է 1895-ին: Ունի մի քանի տպագիր և անտիպ գրքեր (Տէր-Մկրտիչեան Ե., նշվ. աշխ., էջ 263-265): Ըստ Հ. Պողոսյանի Ե. Տեկանցը ծնվել է 1829-ին և մահացել 1885-ին, տե՛ս Տեկանց Ա., Այցելություն ի Հայաստան 1878թ., Եր., 1985, էջ 6: Տեկանց Ե., Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական (1872-1873թթ.), Եր., 1991, էջ 5):

[13] Տեկանց Ե., նշվ. աշխ., էջ 222-223:

[14] Պատմաբան, տնտեսագետ-վիճակագիր Ա-Դոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) ծնվել է 1867թ. Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): 1891թ. ավարտել է Երևանի թեմական դպրոցը, ապա սովորել Խարկովի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, հոգեբանություն է ուսումնասիրել Պետերբուրգում: Հեղինակ է մի շարք արժեքավոր գրքերի և հոդվածների: Մահացել է Երևանում 1954թ. (Հայկական համառոտ հանրագիտարան, այսուհետ՝ ՀՀՀ, հ. 1, Երևան, 1990, էջ 45):

[15] Ա-Դո, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները, Երեւան, 1912, էջ 370:

[16] Նույնը, էջ 47:

բանում, ԱՄՆ-ում՝ Լոս Անջելեսում, իր խոսքում խառնել է այդ վայրերին հատուկ բարբառները, խոսվածքները և լեզվական իրողությունները: Քանի որ գիրքը տպագրվում է Երևանում, ուստի այն վերածել ենք արդի ուղղագրության: Նախկին հրատարակությանը ավելացրել ենք նաև երեք գլուխ՝ «Գութանի հերկը», «Մեր գյուղի ժամացույցը» և «Հայոց ձորի գյուղերը», որոնք քաղել ենք տարբեր հաստատություններում կազմակերպված նրա բանախոսությունների ձայնագրություններից: Գրքի վերջում ավելացրել ենք ևս մեկ գլուխ՝ «Հավելված» վերնագրով, որում հեղինակի որդին մեր խնդրանքով հոր մասին պատմում է որոշ մանրամասներ: Պետք է նշենք, որ առանց Վարուժան Կյուրեղյանի ջանքերի և անսահման որդիական սիրո այս գիրքը լույս աշխարհ չէր գա:

Սերգեյ Վարդանյան
ՀՀ ԳԱԱ հնագիտության և
ազգագրության ինստիտուտի գիտաշխատող

Լուսինե Սահակյան
ԵՊՀ օսմանագիտական կենտրոնի ղեկավար,
բանասիրական գիտությունների թեկնածու

Ս. Վարդանյանը ծնվ. է 1952թ.: Պապը Հայոց ձորի Աստվածաշեն (Հայկաշեն) գյուղից է, տատը՝ Վանից: Հրատարակել է մի քանի բանահյուսական ժողվածու, հեղինակ է գիտ. հոդվածների և գրքերի, այդ թվում՝ «Հայաստանի մայրաքաղաքները» (1995), «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)» (2009): 2004թ-ից «Ձայն համշենական» թերթի գլխ. խմբագիրն է:

Լ. Սահակյանը ծնվ. է 1969թ: Պապը Ալաշկերտի Խաստուր գյուղից է: Հեղինակ է գիտ. հոդվածների և մենագրության՝ «Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում» (2007): Հրատարակության է պատրաստել բան. գիտ. թեկ. Ս. Սահակյանի՝ Խաստուրի խոսվածքով գրառած «Ասք Անդրանիկ Զորավարի մասին» (2008) վիպասքը: ԵՊՀ թուրքագիտ. ամբիոնի դոցենտ է:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ[17]

1888 թվականի հունվարից մինչև մեր օրերը, հայ ժողովրդի կյանքի ամենածանր տարիներն ու ամենապայծառ իրադարձություններն է տեսել Երվանդ պապը:

Նրա նմաններից քչերին է հաջողվել շարադրել կյանքի ապրած ու չապրած օրերի ասքը, սերունդներին հանձնել անձնական մաքառումների գնով ձեռք բերված փորձը, շարքային հայի դիտակետից խոսել դեպքերի ընթացքի ու դեմքերի գործունեության մասին:

Ալեհեր ծերունի Երվանդ Կյուրեղյանի գրչի տակ մեկեն մատչելի են դառնում և մերկանում են պատմական բազմաթիվ անցքեր, խոշոր դեմքեր, մերկանում են ու հնազանդ կանգնում ընթերցողի դատաստանի առջև:

Ժողովրդական տրամաբանության ամենալուրջ փաստարկներով, ամենախոր իմաստնության կիրառումով Երվանդ Կյուրեղյանը շարադրում է իր կյանքի պատմությունը: Այլ ժողովուրդների հետ շփվելու, հարազատաբար ապրելու, հարգելու ու հարգվելու մարդկային պատմությունը: Ոսոխների դեմ արիաբար կանգնելու, զարկվելու և զարկելու հերոսական պատմությունը: Հայրենիքով հրճվելու, հայրենականով ոգևորվելու, զարթոնքի, հաղթանակի, հառնումի ու հզորացման պանծալի պատմությունը:

Ակամա որբուկը, պարզ գյուղացին, ֆիդային, հայոց բանակի հեծյալ սպան, վտարանդին, վարորդը, ընտանիք կազմած հայ հայրը, թոռնիկներին գուրգուրացող ու փայփայող պապը, բոլորն ու բոլորը ինքն է՝ Երվանդ Կյուրեղյանը, բո-

[17] Ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում նաև գրքի 1996թ. (Լոս Անջելես) հրատարակության առաջաբանը:

լոր դերերում ու բոլոր դիրքերում՝ մարդկային չափանիշներին հավատարիմ և հայեցի: Այդպես է, որ «Արմենականը», «Դաշնակցականը», Վտարանդին, վերապրող Հայաստանի երկրպագուն ապրում են միևնույն մարմնի մեջ, հագնում միևնույն զգեստը:

Երվանդ Կյուրեղյանի հուշերը, կուսակցության կամ գովազդի կարիք ունեցող այլ կառույցի պատվերով լույս չի ընծայվում: Նվիրյալ ռազմիկն իր հուշերի մի փոքրիկ փունջը գրի է առնում ինքնաբուխ կերպով և կտակ դարձնելու նպատակով: Նյութը խմբագրվում է նվազագույն միջամտություններով և լույս է տեսնում սկզբնաղբյուրի արժեքով:

Կուսակցական ղեկավար կամ զորապետ չի եղել Երվանդ Կյուրեղյանը, գուցե այդ դեպքում անցուդարձերը շպարելու և քողարկելու անհրաժեշտություն կզգար: Ոգի ի բուին՝ հայրենյաց նվիրյալը շպարի կարիք չի ունեցել և չի ունենալու:

Կտակի պարզ, հստակ ու հասուն շարադրանքը սակավ է շտկումների կարիք զգացել: Երվանդ Կյուրեղյանի լեզուն, հնարավորության սահմաններում, պահպանվել է: Նույնիսկ նույն բառի տարաձև գործածությունները պահպանվել են նույնությամբ: Շարադրանքի լեզուն և ոճը ամբողջովին անձնական ու սեփական են և ոչ թե խմբագրության արդյունք:

Տեղանունների, բառային բազմաթիվ այլ միավորների տառադարձումը տրվել է կանոնակարգված ուղղագրության չափանիշներով:

«Հին» ուղղագրության մեջ թափանցել է մի սխալ սկզբունք, երբ բառը գրվում է մի տառով, օրինակ՝ ամէն, կամ Սարօ, և աճելու դեպքում առանց հնչյունափոխվելու, գրվում է մի այլ տառով՝ ամենամեծ, Սարոյեան: Սա սխալ ձև է և անհարազատ Մ. Մաշտոցի՝ մեկ հնչյունի դիմաց մեկ տառ սկզբունքին: Ձայնավորների համար, եթե չկա հնչումի փոփոխություն, չի կարող գրության փոփոխություն լինել:

Նշենք նաև, որ հայերենում գործածվում են նույնահունչ 2 բառեր՝ **ամէն** և **ամեն**: Առաջինը եբրայական փոխառություն է, կատարվել է Սուրբ Գրքի թարգմանության ժամանակ, դրա գրությունն է՝ **ամէն** և նշանակում է՝ **լինի**: Երկրորդը հայերենի **ամեն** դերանունն է, որով կազմվում է նաև ածականի գերադրական աստիճանը, **ամենամեծ**, **ամենաթեժ** և այլն: Այս երկու բառերի գրության շփոթը մեծ տարածում ունեցող սխալ է: Նոր ուղղագրությամբ սրանք երկուսն էլ գրվում են ե-ով:

Երվանդ Կյուրեղյանի խոսքի մեջ նկատելի են և՛ Վանի ու Թավրիզի բարբառային տարրեր, և՛ Թեհրանի խոսվածքի ազդեցություն: Դրանք նույնությամբ պահպանվել են՝ հեղինակի սեփական ոճը չխաթարելու միտումով:

Ինչպես արդեն ասել ենք, ուղղագրության մեջ նկատվող բարդություններն ավելի շատ են:

Մեր որդեգրած անթերի ուղղագրությունը կարող էր պրոֆ. Սևակինը լինել: Կարելի էր նաև շարադրանքը տալ բարբառային տառադարձման սկզբունքով: Շարադրանքը տրված է հին կամ ավանդական ուղղագրությամբ, որի նկատմամբ մենք վերապահություն ունենք: Հատկապես այն պատճառով, որ չկա դրա միասնական ու մշակված տարբերակը, և ապա այն պատճառով, որ այդ ուղղագրությամբ բազմաթիվ բառեր զուգաձև կամ բազմաձև գրություններ ունեն:

Երվանդ պապիկն իր վիպասքը շարադրել է 100 տարեկան հասակում: Նա այդ տարիքում ապրող մարդու համար նախանձելի ուշադրությամբ հետևել է իր հերոսներին, հետապնդել դեպքերը և վերապրել դրվագները: Առաջին հայացքից տեղանունների կապակցությամբ բացատրության անհրաժեշտություն է զգացվում, բայց դա միայն առաջին հայացքից: Հեղինակն, իր անցած վայրերը վերադառնալով, ընթերցողին տալիս է այնքան տեղեկություն, որքան անհրաժեշտ է:

Ամբողջ հուշագրության մեջ գուցե մեկ-երկու թյուրիմացություն է նկատվում, մեկը Ղազարոսին է վերաբերում, երբ հայրը նրան թողնում է Երևանի որբանոցում, իսկ նա անհետ կորչում է օսմանցիների միջոցով Ալեքսանդրապոլի գրավման ժամանակ, և հստակ չէ, թե Ղազարոսը երբ և ինչ հանգամանքներում է տեղափոխվել Ալեքսանդրապոլ:

Համենայն դեպս, Ձեր ձեռքում գտնվող գիրքը ժամանակային ու տարածքային իր ընդգրկումով, վավերականությամբ ու անկողմնակալ կեցվածքով անփոխարինելի գանձ է և կարող է նոր դիտակետից դիտել տալ 19-րդ դարի վերջին տասնամյակի և 20-րդ դարի սկզբնական 20 տարիների դեպքերի ընթացքը: Թե այդ ամբողջն ինչպես էր երևում Վասպուրական աշխարհի Քերծ գյուղից, և որ Հակոբի որդի Երվանդը հայ ազգին սպառնացող պատուհասի իր մասնաբաժինը ինչպիսի ողբերգությամբ ապրեց և ինչպիսի ծանրությամբ տարավ:

Սա իսկական «Անկեղծ զինվորի հիշատակարան» է:

Դոկտ. Անդրանիկ Սիմոնյան
1996 թ. ապրիլ, Թեհրան

4333

ԻՄ ՀՈՒՇԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Այս հուշերս թող մի բուռ խունկ լինեն
Իմ նահատակ ծնողներիս հոգու համար:

Եվ իմ նահատակ կնոջս՝ Հեղինեի և հինգ
տարեկան կորած տղայիս՝ Ղազարոսի հոգու համար:

Եվ երկրորդ կնոջս՝ Վարդանուշի և
Պարգև տղայիս հոգու համար:

Եվ Սարդարապատի կռվին իմ կողքիս
նահատակված յոթ ընկերներիս հոգու համար:

Ու նաև իմ հերոս գնդապետ, շատախցի
Զանկե Տիգրան Բաղդասարյանի հոգու համար:

Ամեն

Երվանդ Կյուրեղյան
1988թ., Լոս Անջելես

ԽՈՍՔ՝ ԳԱԼԻՔ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՍ

Այս հուշերս ես գրի առա իմ տղա Վարուժանի խնդրանոք, և այս հուշերս կթողնեմ գալիք սերունդներիս համար իբրև մի հիշատակ ու նաև մի կտակ: Թող սերնդեսերունդ կարդան և հասկանան, որ իրենց մեծ հայր Երվանդը ո՞ր երկրից է եղած, և նրա երկիրը ո՞ր քաղաքն է, և ո՞ր գյուղն է, և, մանավանդ, Երվանդի մեծ պապի պապերը ո՞ր երկրից են եղած և ինչո՞ւ իրենց երկրից եկած են, Քերծ[18] գյուղը շինած են և ապրած են, ի՞նչ հանգամանքով փախած են և ինչո՞ւ են փախած: Այս ամենը գրեցիմ, որ չմոռանան իրենց տոհմական շառավիղը և ես կհավատամ և համոզված եմ իմ սերունդին, նրանց տոհմին և նրանց ապագա գալիք զավակներին օրերից մի օր կհաջողվի տիրանալ իրենց պապենական հողին: Կերթան Վասպուրական՝ Վան[19] քաղաքը, և կանցնեն Հայոց ձորը[20], և կգտնեն մեր Քերծ գյուղը, և կերթան, Կատալակի ջրվեժից պաղ-պաղ ջուր կխմեն, և էն չիմանների[21] միջից ծաղիկներ կքաղեն, կներպուկ[22] կհավաքեն և ինձ կհիշեն և ողորմի կասեն իրենց մեծ պապա Երվանդին:

---

[18] **Քերծ** (Գերծ) գյուղի մասին տե՛ս գրքի առաջաբանում:

[19] **Վանը** համաշխարհային քաղաքակրթության օրրաններից է: Այն Վանի թագավորության (Ուրարտու) մայրաքաղաք է դարձրել Սարդուր Ա-ռաջին (մ.թ.ա. 840-825թթ.) թագավորը: Վանում կառուցվել են պաշտամունքային և պաշտպանական հրաշալի շինություններ, տաճարներ, պարիսպներ, միջնաբերդ: Մենուա Առաջինի (մ.թ.ա. 810-786թթ.) կառուցած ջրանցքի շնորհիվ՝ Վանը այգեշատ քաղաք էր: Թեև մ.թ.ա. 4-րդ դարում Հայաստանի մայրաքաղաք է հռչակվում Արմավիրը, բայց Վանը այդ և հետագա դարերում շարունակում էր մնալ Հայաստանի ամենանշանավոր քաղաքներից մեկը: Այն 908-1021թթ. Վասպուրականի թագավորության մայրաքաղաքն էր: 20-րդ դարի սկզբին Վանը հռչակված էր որպես արհեստների և արվեստների կենտրոն և ուներ շուրջ 55 հազար բնակչություն: Կային մի շարք հայկական դպրոցներ, հրատարակվում էին հայերեն թերթեր (Վարդանյան Ս., Հայաստանի մայրաքաղաքները, Երևան, 1995, էջ 7-46):

[20] **Հայոց ձորը** Մեծ Հայքի Վասպուրական նահանգի գավառներից էր, Խոշաբ գետի հովտում: Իր տարածքի զգալի մասով համապատասխանում է հին Երվանդունիք գավառին: Ըստ ավանդության՝ Հայոց ձորում՝ Հայկաշեն (հետագայում՝ Աստվածաշեն) գյուղի մոտ է տեղի ունեցել հայոց

նահապետ Հայկի հաղթական ճակատամարտը Բելի դեմ: Ճակատամարտի տեղում Հայկը կառուցել է Հայկաբերդ դաստակերտը (Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 86-90): Հայոց ձորի այգիներն ու մշակովի տարածքները ոռոգվում էին Շամիրամի ջրանցքի ջրերով: Բնակչությունը հիմնականում զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Տարածքում հայտնաբերվել են տարբեր ժամանակների հնություններ: Մեծ եղեռնի ժամանակ Հայոց ձորի շուրջ 10 հազար հայեր բնաջնջվեցին: XX դարի սկզբին կենտրոնն էր Կղզի գյուղը: Կլիման բարեխառն էր, հողը՝ արգավանդ: Հարուստ էր հատկապես հացահատիկով:

Հայոց ձորը Արևմտյան Հայաստանի ամենաստվար հայ բնակչություն ունեցող տարածքներից էր: XIX դարի 2-րդ կեսին այնտեղ ավելացել են քրդական ցեղերը, որոնց հոսքը Հայոց ձոր հատկապես ուժեղացել է 1896-ի հայկական կոտորածներից հետո (զոհվել է ավելի քան 900 հայ, կողոպտվել է շուրջ 1300 տուն): 1915-ին՝ Մեծ եղեռնի ժամանակ, Հայոց ձորի հայերի մեծ մասը, զինված ինքնապաշտպանության շնորհիվ, փրկվել է կոտորածից և գաղթել Արևելյան Հայաստան (ՀՀՀ, հ. 3, Երևան, 1999, էջ 277): Ըստ Ա.-Դոյի՝ Հայոց ձոր գավառակը 1909 թ. ուներ 32 հայաբնակ գյուղ (Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 47):

[21] **Չիման**-մարգագետին:

[22] **Կներպուկ-դինարբուկ**՝ ծաղկի տեսակ:

ՄԵՐ ՔԵՐԾ ԳՅՈՒՂԸ ԵՎ ԻՄ ՏԽՈՒՐ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեր գյուղը Վան քաղաքից տասը ժամ հեռու է, դեպի հարավ, Հայոց ձորի ցածրի մասը, Արտոս սարի[23] արևելյան կողմը: Մոտիկ է Վանա ծովին և Ոստան[24] գյուղաքաղաքին: Սարը երկու թևեր ունի և այդ երկու թևերից ցածր, մի փոքր բլուր կա, որ երկու աղբյուր ունի, մեկը բլուրի վերևումն է, իսկ մյուսը՝ վարի մասում: Սարի երկու թևերի մեջը, «Լայն սիրտ» կըսեն, մոտավորապես երկու կիլոմետր է, ուր խոտը մի մետրի չափ կբարձրանա. գյուղացիք ամառը կքաղեն և մեծ-մեծ դեզեր կպատրաստեն: Ձմեռը դահուկներով կբերեն իրենց անասունների համար: Սարի հարավային կողմը աղբյուր չկա, բայց ձմեռը ձյունահյուս կուգա և կհասնի մինչև գյուղի մոտը: Այնքան կհավաքվի, որ ամբողջ ամառ, այդ հարավային կողմերի աշխատավորներն այդ ձյունի ջուրից կօգտվեն: Իսկ սարի հյուսիսային թևը շատ ջրային է: Քառասունութ աղբյուր ունի, մանավանդ Կատալակ ասված ջրվեժը, որ մի մեծ ժայռի ճեղքվածքի միջից մի ջրաղացի ջուր կժայթքի և տասը մետրից կիջնի գետին: Ցածում մի մեծ փոս է գոյացել և ջուրն այնքան սառն է, որ գոմեշները մտնելուց քիչ հետո կփախչեն, չեն դիմանա սառնությանը: Եվ այդ Կատալակից ներքև՝ չիմանի մեջ, մի հրաշալի աղբյուր կա, որ Կաթողիկոսի աղբյուր կըսեն, շուրջն ալ կներպուկ ծաղիկները կապույտ գույն կփայլեն:

Պապերի ասելով՝ ժամանակին Աղթամարի Խաչատուր կաթողիկոսը[25] եկել է այդտեղ, վրան է խփել, մի ամիս մնացել է, և ատոր համար այդ աղբյուրի անունը մնացել է Կաթողիկոսի աղբյուր: Գյուղացիք այդ աղբյուրների ջուրերը միացրել և երեք հատ մեծ գյոլ (լիճ) են կազմել, որ հերթով իրենց արտերը ջուր տան: Ամենամեծը մեր արտի վրա էր, որ Խաչկե գյոլ կըսեին: Եվ այս է մեր Քերծ գյուղի դիրքը: Բայց ինչպես է կազմվել մեր գյուղը, այս էլ գրեմ, որ լավ հասկանալի լինի կարդացողին:

---

[23] **Արտոսը** Հայկական Տավրոսի լեռնագագաթներից է՝ Վանա լճի հարավային մասում, Ոստան գյուղաքաղաքից հարավ: Պայտաձև է, բարձրությունը՝ 3536մ, գագաթամերձ մասերը ծածկված են հավերժական ձյունով: Ըստ ավանդության՝ Նոյ նահապետը, մոտենալով այդ լեռնագագաթին, արտասվել է, այդ պատճառով էլ այն կոչվել է Արտոս (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, այսուհետև՝ ՀՀՇՏԲ, հ.1, Երևան, 1986, էջ 504-505):

[24] **Ոստան** գյուղաքաղաքը գտնվում էր Վանի նահանգի Վանի գավառում, Գավաշ գավառակում, պատմական Ոստան ավանի մոտակայքում, Արտոս լեռան լանջին, Արտամեդ ավանից շուրջ 17 կմ հեռավորությամբ: Ըստ Ա-Դոյի՝ Ոստանում մինչև 19-րդ դարի կեսերը «ապրում էին բաւական թւով հայեր», 1909 չկար ոչ մի տուն հայ: Ոստանն իր բոլոր թաղերով ուներ 600 տուն քուրդ բնակիչ (Ա-Դօ, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները, Երեւան, 1912, էջ 54): Ոստանը համապատասխանում է Մեծ Հայքի Ռշտունիք գավառին: Գյուղաքաղաքի մոտ է գտնվում Սբ Նշան վանքը, որտեղ, ըստ ավանդության, թաղված է Վարդանանց պատերազմի մասնակից պատմագիր Եղիշեն (ՀՀՇՏԲ, հ. 4, Երևան, 1998, էջ 177-178):

---

[25] **Աղթամարի** կաթողիկոսության (1113-1895թթ.) վերջին կաթողիկոս Խաչատուր Բ Շիրոյան (1864-95թթ.): Աղթամարի կաթողիկոսների մասին ավելի մանրամասն տես՝ Ակինեան Ն., Գավազանագիրք կաթողիկոսաց Աղթամարա, Վիեննա, 1920:

ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆՎԵԼԸ[26]

Գյուղացիները ձմեռ ժամանակ գործ չունին: Կհավաքվին իրենց թաղի ռեսի գոմի սաքուն: Բուխարիկը կվառվի: Սովորաբար ռեսը մի կողմը, իսկ տերտերը մյուս կողմն է նստում, իսկ գյուղացիք, գետնին ծալապատիկ նստած, կսկսեն իրենց անցյալից ու ներկայից պատմություն ասել: Երիտասարդները և կամ փոքրերը ուշիուշով կլսեն նրանց պատմածները: Այժմ ես գրի կառնեմ նրանց պատմածները մեր գյուղի կառուցվելու մասին:

Այսպես է եղած: Մոկս գավառի[27] տեր ու տիրական Մահմուդ խանի ժամանակ, ռուս և թուրքական պատերազմին՝ Լորիս-Մելիքովի[28] կռվին, իրենց պատմելով, մի քուրդ՝ Թեյմուր խան անունով, չդիմանալով Մահմուդ խանի հալածանքներին, իր երկու գյուղերը կհավաքի և գիշերով կփախնի դեպի Վանա կողմերը, որ այդ ժամանակ ապահով տեղ է եղել: Այդ երկու գյուղերից երեսունհինգ տուն հայ կլինեն, և

[26] **Քերծ** գյուղն ունեցել է հարյուրամյակների պատմություն, ըստ գյուղացիների վկայության, 15-րդ դարում ուներ 7-800 տուն բնակիչ: Գյուղում կար 16-րդ դարի եկեղեցի Սբ Ստեփանոս անունով: Քերծի շրջակայքում պահպանվել էին երկու հին եկեղեցու և մեկ բերդի ավերակներ (Միրախորեան Մ., նշվ. աշխ., էջ 189-190): Ըստ երևույթին՝ Ե. Կյուրեղյանը նկատի ունի ավելի ուշ շրջանում տեղի ունեցած բնակչության տեղաշարժերը:

[27] **Մոկս (Մոկաց)** գավառակը գտնվում էր Վանա լճի հարավային կողմում: Կենտրոնն էր Մոկս գյուղաքաղաքը, ուներ խիստ լեռնային ռելիեֆ, խմելու և ոռոգելու առատ ջուր, զով ու առողջարար կլիմա, սաղարթախիտ անտառներ (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 862): Ըստ Ա.-Դոյի՝ 1909թ. գավառակն ուներ 48 հայաբնակ գյուղ, ընդհանուրը՝ 868 տուն (Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 74-75):

[28] **Կոմս Միքայել Լորիս-Մելիքովը** (1825-1888 թթ.) ռուսական բանակի գեներալ էր, մասնակցել է Ղրիմի՝ 1853-56 թթ., 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմներին, 1879-ին նշանակվել է Աստրախանի, Սարատովի, Սամարայի և Խարկովի ժամանակավոր գեներալ-նահանգապետ, 1880-ին՝ Ռուսաստանի ներքին գործերի նախարար (ՀՀՀ, հ. 2, էջ 453): Հնարավոր է, որ Ե. Կյուրեղյանը նկատի ունի նախորդ՝ 1806-12 թթ., 1828-29 թթ. ռուս-թուրքական պատերազմները:

անոնց մեջ երկու եղբայրներ, մեկը Գառնիկ, իսկ մյուսը Գրիգոր անունով: Թեյմուր խանը շատ կտրիճ և շատ հայասեր մարդ էր: Փախչելով սարերով և անտառներով՝ կուգան-կհասնեն մեր գյուղի տեղը: Վրաններ կխփեն և մի քանի օր հանգիստ կառնեն: Այդ ժամանակ Թեյմուր խանը՝ ձին հեծած, այս և այն կողմերը քննելով, այդ վայրը շատ կհավանի:

Թեյմուր խանն իր մեծ տղա Հեյդարին կպատվիրի, որ մի չվան[29] բերեն և այս տեղում գյուղ շինեն, ճիշտ այս փոքր բլուրի վրա, որ հսկում է ամբողջ շրջանը, որովհետև սարի երկու թևերը գրկած են այս բլուրը, ինչպես մայրը կգրկի իր զավակին: Շատ ապահով է՝ ամեն պատահարից պաշպանվելու համար:

Նախ և առաջ բլուրի երկու կողմը երկու տուն շինել կուտա, մեկը՝ հայերի աղոթատեղ, իսկ մյուսը՝ քուրդերի: Ուրեմն, իրենց մեջ տերտեր և մոլլա կունենան, գյուղը կշինվի, և ամեն կողմերից շատ մարդիկ կուգան:

Տասը տուն կուգան Բարվարի շրջանի Ոզիմ[30] գյուղից, որ ամենը կատան[31] էին (քուրդ գզող), թաղիք չինող: Ութ տուն կուգան Շատախի[32] կողմեն, որ բոլորը շալագործ

[29] **Չվան, թոկ-պարան:**

[30] **Ոզիմ** (Ոզմ, Ոզմի, Օզիմ) գյուղը գտնվում էր Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի Սղերդի գավառում, Բարվարի գավառակում: Ըստ Ա.-Դոյի՝ 1909թ. գյուղն ուներ 150 տուն հայ բնակիչ (Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 155): Գյուղում կար եկեղեցի և դպրոց: Բնակիչները տեղահանվել են, և գյուղն ավերվել է 1915թ. (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 168): Ոզմի մասին Արամ Մանուկյանն իր հուշերում գրում է, որ «Ոզմը 15-րդ դարուց սկսած ըմբոստ է եղել, միշտ ռազմիկներ է տուել, ընդամենը 100-ի չափ տնից բաղկացած լինելով: Մի քանի հարիւր տուն էլ Ոզմցիներ կան ցրուած Վասպուրականի գիւղերի մէջ» (Արամը, Բեյրութ, 1969, էջ 329):

[31] **Կատան** - 1.Բուրդ գզող, գզրար: 2. Թաղիք չինող, թաղիքագործ:

[32] **Շատախի** գավառակը գտնվում էր Արևմտյան Հայաստանում, Վանի նահանգի Վանի գավառում, Արևելյան Տիգրիսի ակունքի շրջանում: Կենտրոնը Շատախ ավանն էր, անտառապատ էր, ջրառատ և գեղատեսիլ: 19-րդ դարի 80-90-ական թթ. Նորդուզ գավառակի հետ ուներ 115 գյուղ՝ 26245 հայ, 447 ասորի, 5190 քուրդ բնակիչ: 20-րդ դարի սկզբին Նորդուզ գավառակի հետ միասին Շատախն ուներ 46

կլինեն, քսանհինգ տուն կուգան Տիգրանակերտի շրջանից, և այսպես կշատանան: Թեյմուր խանի հետ եկած, իմ վերև գրած երկու եղբայրները՝ Գրիգորը և Գառնիկը, կշատանան և երկու մասի կբաժանվեն, երկու թախում[33] կանվանվեն:

Գրիգորի թախում կլինի Կավռոյիկի թախում, իսկ Գառնիկի թախում կլինի Կյուրեղյան թախում: Այդ երկու թախումից 1915 թվականից հետո մնացել էր երկու մարդ, մեկը՝ Ենովքը, որի տղաները՝ Գառնիկը և Գրիգորը, այժմ Հայաստանում են, իսկ մյուսը, որ Կյուրեղյան է, տողերիս գրողն է՝ Երվանդ Կյուրեղյանը:

Թեյմուր խանը այս նոր գյուղն իր Մոկաց երկրի գյուղի անունով «Քերծ» անուն կուտա: Ոստանի Աբուբաքր խանը, նախանձելով այս գյուղի շենության, գիշերով կհարձակվի, որ քարուքանդ անի: Թեյմուր խանը լավ կջարդի, և Աբուբաքրը կսպանվի, բայց Թեյմուր խանը կվիրավորվի, կմեռնի: Իր տղա Հեյդար կանցնի իր տեղ:

Մինչև մեր օրերը քուրդերից մնացած էին մեր գյուղում 10 տուն, իսկ 95 տունը հայ էր:

ԻՄ ԾՆՈՒՆԴԸ

Մեր գյուղը շատանալով կհասնի մինչև իմ հայրիկիս ժամանակը: Մեր գյուղացիներ կնորոգեն և սրբատաշ քարերով մի լավ եկեղեցի կպատրաստեն, և Սուրբ Ստեփանոս կանվանեն: Գյուղի ժամհարի անունը Կարապետ է լինում, Կրպոկը կանչեն:

Ժամհարը մի ընկույզի տախտակին փայտե մուրճով տըխկլ-տըխկլ զարնելով կերգի. «Հա՛յ քրիստոնյայք, ժամ հրամեցե՛ք»:

Հայրիկս, որ ծխախոտ ծխող էր, մի պատառ հաց՝ մեջը մի քիչ պանիր, կառնի և կերթա ժամ: Ծոմ բերանով պիտի աղոթք անեն, ժամից ելնելուց այդ պատառ կուտե, որ ծխիկ ծխե: Այսպիսով, կուգա դեպի տուն և կտեսնա՝ մեր տունից կանայք դուրս կելնեն, կասի. «Աստվա՛ծ, խեր անի՛»: Եվ արագ-արագ կուգա տուն: Ներս մտնելուց տատմեր անմիջապես կասի. «Ռե՛ս Հակոբ, ծառդ պտուղ տվեց: Քեզի մի լաճ եղավ, իմ նվերս տուր»:

Հայրիկս մի ոսկի կուտա: Այդ լաճը ես էիմ: Այդ եղած է 1888-ի հունվարի 16-ին[34]:

Իմ ծնունդից երկու ամիս անցած կլինի, որ կմահանա մեր տոհմի ամենամեծը՝ Հունան անունով, հարյուր երկու տարեկանում: Շատ մեծ սուգ կլինի ամբողջ գյուղի մեջ: Ըստ սովորության՝ ննջեցյալի գերեզմանին երկու քար պիտի պատրաստեն: Քարերը սարից կբերեն և պիտի նախշեն և անուն-ազգանուն փորագրեն քարերի վրա: Մեր ամբողջ Հայոց ձորի քար նախշողը մի մարդ էր, նա մեր գյուղից երկու ժամ հեռու՝ Կրզըլդաշ[35] գյուղի նաղաշ[36] Մանուկն էր: Հունանի մեծ տղան՝ Խաչիկը,

---

եկեղեցի և 7 վարժարան: Շատախը մինչև 19-րդ դարի 60-70-ական թթ. պահպանում էր իր ներքին ինքնավարությունը (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 82): Ըստ Ա.-Դոյի՝ 1909թ. Շատախի գավառակն ուներ 90 գյուղ, այդ թվում՝ 52 հայաբնակ բնակավայր՝ 926 տուն հայ բնակչությամբ (Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 64-65): Շատախի հայերը 1896թ. և 1915թ. հերոսական մարտեր են մղել թուրք ցեղասպանների դեմ: Հայերի մի մասը զոհվել է անհավասար կռիվներում:

[33] **Թախում**-ցեղ, սերունդ, գերդաստան:

---

[34] Ինչպես վկայում է հեղինակի որդին՝ **Վարուժան Կյուրեղյանը**, հայրը բանավոր զրույցներում միշտ իր ծննդյան թվական է նշել 1886թ., բայց քանի որ հուշատետրում (էջ 6) 1888թ. է գրված, ուստի տպագրում ենք նույնությամբ:

[35] **Կրզըլդաշ** գյուղը գտնվում էր Վանի գավառում, Հայոց ձորի գավառակում: Ըստ Մ. Միրախորյանի՝ 1883-ին Գզըլ-թաշը (Կարմրաքար) ուներ 16 հայ բնակիչ և Սբ Երրորդությանը նվիրված եկեղեցի, կար քահանա, չկար դպրոց (Մ. Միրախորեան, նշվ. աշխ., էջ 187): Ըստ երևույթին, Միրախորյանը նկատի է ունեցել 16 տուն հայ բնակիչ, քանզի 1909-ին Ա.-Դոյի տվյալներով գյուղում կար 43 տուն հայ բնակիչ (Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 46-47):

[36] **Նաղաշ**-նկարիչ:

կերթա Կրզըլդաշ գյուղից Մանուկին կբերի, որ քարերը նախշի: Նախշքարը ամեն քարին երկու ոսկի հախ[37] կառնի:

Մանուկը կուգա և քարերը կնախշի: Գլխի վրայի քարը ինչ-ինչ տեսակ նախշած էր՝ շուրջը խաղողի ողկույզներ. մեջը մի մեծ խաչ, խաչի վերև մի աղավնի, որ բերանում բռնած է մի ձիթենու ճյուղ, իսկ վրայի քարը նույնպես նախշած է, և վրան Հունանի անունը, որտեղացի է, քանի տարեկան է, իսկ խաչի տակը՝ ռես Հակոբի լաճը՝ Երվանդ, ծնունդ 1888 թ., հունվար 16:

Ամեն տարի մեռելոցի օրը մայրիկս կասեր. «Երվա՛նդ, էս քարին քո ծննդյան օրն է գրած»:

Նաղաշ Մանուկը քարեր կնախշի և չորս ոսկի կառնի, կերթա: Տարին որ կլրանա, քարերը կդնեն ննջեցյալի գերեզմանին, ոչխար կմորթեն, հոգեհաց կուտեն:

Մոկաց երեցի տոհմից տերտեր է եղած Տեր Հովհաննեսը: Հայրիկիս կասի. «Ռե՛ս Հակոբ, սուգ շատ ենք արել ազգովին, բեր տղաղ կնքենք, այս տխուր սուգերը փոխարինենք ուրախության»: Հայրիկս կհամաձայնի, և ինձի մկրտած է Մոկաց երեց Տեր Հովհաննեսը մեր Սուրբ Ստեփանոս եկեղեցում, իմ կնքահայրս եղած է Սեփոյի Խաչոն:

ՏԱՎԱՐԻ ԺԱՆՏԱԽՏԸ

Իմ երկու տարին չլրացած՝ մեր գյուղը տավարի ցավ կսկսի. եղներ, գոմեշներ կընկնեն, կսատկեն: Կառավարությունից մարդ կուգա և սատկածները գյուղից կհանեն, կվառեն նավթով, իսկ մնացածը կհանեն սարը: Ժողովրդին էլ կհանեն սարը: Գյուղի թոնիրները կվառեն, մեջը քրքութ[38] կլցնեն, որ վառվի, հականեխվի:

[37] Հախ-աշխատանքի վարձատրություն:
[38] Քրքութ-ծծումբ:

Երեք օր այսպիսով ծծումբը կմնա, չորրորդ օրը կուգան սարից իրենց տները և ախոռները կմաքրեն, որ մնացած տավարները չվարակվեն, բայց գյուղը սուգի մեջ է, ախր գյուղացին ուրախ է իր տավարներով: Կորոշեն երթալ զարիբության, որ փող աշխատեն: Այդ տարին շատ ձյուն է եկած, գյուղացիներ իրենց քուրսին[39] կնորոգեն, կփակվեն տունների մեջ, իսկ տարեց մարդեր կերթան ռեսի օդեն, իրենց ցավեր քրքրելու, որ ինչպես պիտի ապրի իրենց ընտանիքը՝ իրենց զարիբության գնալուց հետո:

Մեր գյուղը տասը տուն քուրդ կար, ամենը հովիվ և ծառայող էին, բացի երկու եղբայրներ Ահմադից և Ջիբոյից: Այս երկու եղբայրների տոհմային ծագումը կուգար Թեյմուր խանից և իր տղա Հեյդարից: Նրանք թե՛ հարուստ էին և թե՛ շատ հայասեր, իրենց ազգանունը յան-ով կգրեին և մաքուր հայախոս էին:

Մեր պատը և Ջիբոյի տան պատը ծակած էին, ճրագ կտային և կառնեին: Տավարների սատկելու ցավը և գյուղացիների տխրությունն ու սուգը տեսնալով՝ Ջիբոն, որ միշտ հայերի հետ կերթար ռեսի սաքուն զրույց անելու, կմտածի և առաջարկ կանի. «Աստված մեծ է, մի մտածեք ձեր ընտանիքի համար»: Ռես Խաչոն կասի. «Ջիբո՛, ի՞նչ անենք, որ կարողանանք գյուղի ժողովուրդը պահենք, մինչև զարիբությունից ասոնք վերադառնան»:

Ջիբոն կասի. «Ռե՛ս Խաչո, տավարները բոլոր չեն սատկել և աշխատող մարդ էլ շատ ունինք, եկեք միանանք, սաղ մնացած տավարներով մոտիկ և ջրային արտերը վարենք, ցանենք և շունչերի վրա բաժանենք»:

Այս առաջարկը բոլոր գյուղացիների սրտին մոտիկ էր, և ամենը սիրով կընդունեն: Կորոշեն. ռես Խաչոն՝ ամենի մեծը, Ջիբոն՝ նրան օգնական, Թանկոյի ռես Ավետ կնշանակվի

[39] Քուրսի-քառակուսի երեսով մեծ, սեղանաձև փայտյա առարկա, որը դնում են տաք թոնրի վրա, վերևից ծածկում են կարպետով, նստում են մոտը, ոտքերը կախում թոնրի մեջ:

անասունների պատասխանատու, Հալեպցի Մկրտիչը՝ արտերին հսկիչ, Մուքայելի տղան՝ Բարսեղ, աշխատողների կառավարիչ: Այս որոշումից հետո շատ ուրախ և տրամադիր կխորհրդակցեն, թե ով կուզի երթալ ղարիբություն և ո՞ր երկիր պիտի երթան: Մի մաս կուզի Թիֆլիս երթալ, մի մաս՝ Բաքու և մի մաս՝ Պոլիս:

Պոլիս երթացողների մեջ նաև իմ հայրիկն էր: Ես երկու տարեկան եմ եղած, որ իմ հայրս գնացել է Պոլիս՝ աշխատելու: Գյուղացիները գնացին, թող երթան, Աստված նրանց հետ լինի: Ինչպես որոշված էր, գյուղի մնացած եզներ կհավաքեն և մի մեծ տեղ կպատրաստեն, կհանձնեն Թանկոյի ռես Ավետին: Գարունը կբացվի, արտերի ձյունը կհալվի և կսկսեն վարել, ցանել, ջրել, հնձել և շունչերի վրան բաժանել:

Երկու տարի լրացավ: Հետ եկան ղարիբություն գնացողները, շատերը չեկան, մեռան, կորան կամ մնացին:

ՀՈՐՍ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Չորս տարեկան էի, որ հայրիկս Պոլսից եկավ: Հայրիկիս հետ եկած էր մի մորուքավոր, հաստաբազուկ քուրդ մոլլա, որը մաքուր հայերեն կխոսեր:

Ինձի գրկեց և ասաց. «Երվա՛նդ, արի քեզի տանեմ մեր գյուղ, իմ թոռ Համիդի հետ խաղա, ես քեզի մի լավ ոչխարի գառնուկ կուտամ»:

Ես բան չհասկացամ: Մոլլան գնաց իրենց գյուղը:

Մեր դրացիները հավաքված էին աչքալույսի, և շատ ուրախություն եղավ: Իմ հայրիկս երկու բան էր բերած, որ ես շատ կսիրեիմ, մեկը՝ մի ջուր խմելու կուլիկի պես բան էր, կրակը վերևն էր, իսկ ջուրը տակն էր, կքաշեին կբռբռար, ես էլ ժամերով այդ բռբռոցին կնայեի:

Մյուսը՝ մի թիզ երկարությամբ և մաքուր մետաքսե թելով նախշված էր, գլուխը մի գունդ արճիճ ուներ, անոր անունը զոպա[40] կասեին: Հայրիկս միշտ իր գոտիի տակ կպահեր, և շատ թանկ բան էր: Կասեին, որ շատ գաղտնի պիտի պահեն, որ ոչ ոք չիմանա, կառավարություն կբռնի, կբանտարկի, էլ ազատում չկա:

Օտարությունից եկող ամեն մարդ բերած փողի չափ իր համար եզներ և գոմեշ կառնի: Կրկին գյուղը շեն և ուրախ օրեր կունենա: Ոստանի Խուրշուդ աղան այս շեն գյուղ տեսնելուն կնախանձի և իր մարդկանց կուղարկի մեր սարերը, որ ոչխար կթող կանանց հափշտակեն: Գյուղացիներն այս լսելուն պես ժողով կանեն, որ մի ազդեցիկ քուրդ աղա ճարեն, որ իրենց հովանավորի:

Ջիբոն կասի՝ միայն Շաքիր աղան կարող է մեզի պաշտպանել, և կորոշեն երթալ Շաքիր աղայի մոտ, որ մի մարդ բերեն:

Կերթան Վան քաղաքը և շատ ընտիր նվերներ կառնեն՝ մետաքսե կտորներ, կանանց համար ոտնամաններ, շաքար և շատ ուրիշ բաներ, կուգան գյուղ, կպատրաստվեն՝ երթալու, մի խումբ կկազմեն՝ ռես Խաչոն, Թանկոյի Ավետը, Հալեպցի Մկրտիչը և իմ հայրիկս:

Շալակավոր երկու հոգի՝ մեկը իմ հորաքրոջ մարդն էր, որ նրան Գոմեշ Հոխան կասեին և Տարմոյի Հակոբը:

Գիշերը կհասնեն վերի Հայոց ձորի Տեմկոսնի[41] գյուղը: Գյուղի աղան՝ Ռասուլ բեկը, սրանց լավ կընդունի, հայասեր

[40] **Զոպա**-գուրզի տարատեսակ:

[41] **Տեմկոսնի**-Մ. Միրախորյանը, որը 19-րդ դարի վերջին շրջագայել է Հայոց ձորում, իր «Նկարագրական ուղևորութիւն ի Հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի» նշանավոր գրքում Հայոց ձորի գավառակում Տեմկոսնի անունով հայաբնակ գյուղ չի հիշատակում: «Հայկական հարց» հանրագիտարանում (1996, էջ 278), Հայոց ձորի գավառակում հիշատակվում է Գոսնի (Կյուսնի) հայաբնակ գյուղը, որը 1896թ. ջարդերից հետո քրդաբնակ է դարձել: Ա.-Դոն «Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները» գրքում ո՛չ Հայոց ձորում, ո՛չ Գավաշում (Ոստան), ընդհանրապես Վանի վիլայեթում, Տեմկոսնի անունով հայաբնակ գյուղ

էր, որովհետև նրա փեսան հայ էր: Առավոտյան իր ծառաներից մեկը կուտա իբրև սուրհանդակ: Սարը, որ պիտի բարձրանային, քառասուն պտույտ ունի, և շատ դժվար է, քուրդերը «Զըլուչապ» կասեն, այսինքն՝ «Քառասուն չափ», երբ կիջնեն ցածը՝ մյուս երես, կհանդիպեն մի մեծ գետի, որ Տիգրիսի մի ճյուղն է, կերթա Շատախի Թաղ[42] քաղաքը,

---

չի նշում, ըստ երևույթին, գյուղի արդեն ոչ հայաբնակ լինելու պատճառով:

Ե. Կյուրեղյանը, հավանաբար, նկատի ունի Հայոց ձորի Դիմգոստնի գյուղը, որը գտնվում էր Կղզի և Անկշտանց գյուղերից հարավ և 20-րդ դարի սկզբին ուներ 40 տուն բնակիչ (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 115):

[42] **Թաղ (Շատախ, Մեյդանթաղ, Շատախու թաղ)** գյուղաքաղաքը գտնվում էր Վանի նահանգի Շատախի գավառակում, Մոկս քաղաքից 30կմ հարավ-արևելք՝ Արևելյան Տիգրիսի աջ ափին: Գյուղաքաղաքի երեք կողմերում վեր էին խոյանում լեռնագագաթներ, որոնցից վաղ գարնանը հաճախ ձյունահյուսեր էին իջնում և մեծ վնաս պատճառում գյուղաքաղաքին: Զուտ հայաբնակ էր: 19-րդ դարի սկզբներին ուներ 3500-4000 բնակիչ, իսկ 20-րդ դարի սկզբին՝ 1200-1300 (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 82): Ըստ Ա-Դոյի՝ 1909-ին կար 200 տուն՝ 1200 հոգի հայություն (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 65), որոնք զբաղվում էին արհեստով, առևտրով, տնայնագործությամբ, մեղվաբուծությամբ, այգեգործությամբ, շալագործությամբ: Գյուղաքաղաքը բաղկացած էր երեք թաղամասից՝ Վերին, Ներքին և Զրաղացի: Կար երկու եկեղեցի: Թաղն ուներ արական և իգական դպրոցներ, գրադարան, ընթերցատուն, լույս էին տեսնում խմորատիպ «Տիգրիս» և «Անկախ Տիգրիս» թերթերը: Շատախը եղել է նաև գրչության կենտրոն: 1915թ. Շատախի հայերը, կազմակերպված պաշտպանության շնորհիվ, կարողացան փրկվել կոտորածից: 1915թ. Վանի կուսակալ Ջևդեթի հրամանով գավառակի կենտրոն Թաղում ու Շատախի այլ վայրերում կատարվեցին ձերբակալություններ և սպանություններ՝ լցնելով հայերի համբերության բաժակը: Շատախի հայությունը, կռահելով վերահաս վտանգը, դիմեց ինքնապաշտպանության: Կազմվեց Զինվորական մարմին (Տիգրան Բաղդասարյան, Ազատ Սիմոնյան, Սամվել Մեսրոպյան և ուրիշներ): Ջախջախվեցին թշնամու բոլոր հարձակումները, և թուրքերը նահանջեցին: 1915թ. մայիսին Դրոյի գլխավորած հայ կամավորական գնդերը մտան Թաղ: Ռուսական զորքերի հուլիսյան անսպասելի նահանջի պատճառով Շատախի հայերը ևս ստիպված գաղթեցին Արևելյան Հայաստան (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 82-83: Տիգրան, Շատախի ինքնապաշտպանությունը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1931, N 3, էջ 156-163, N 5, էջ 153-158: Մեսրոպյան Ս., Հերոսամարտ Շատախում և Փեսանդաշտում, Վան-Վասպուրականի հերոսամարտը, ժողովածու, կազմող՝ Փափազյան Հ., Երևան, 1990, էջ 72-91: Արծրունի Վ.,Հայ-տաճկական պատերազմը. Հայ սպայությունը. Շատախ, Երևան, 2002, էջ 387-404):

կխառնվի Սիվտիկնա[43] գետին և կերթա Միջագետք: Երեկոյան կհասնեն Շաքըր աղայի գյուղը՝ Փիրբաղալանը[44]:

Շաքըր աղան շատ սիրալիր կընդունի նրանց և երեք օրից հետո նոր կհարցնի նրանց գալու նպատակը: Մեր պատգամավորները կբացատրեն իրենց գալու նպատակը: Երրորդ օրը Շաքըր աղան կկանչի իր ամենալավ կոլամին[45] կասի. «Կոլա՛մ, դու պիտի երթաս այս հայերին ծառայելու և շատ հնազանդ կլինես, ինչ որ կուտան, էն կուտես, և դու քո աչքը գետին կպահես, ջահել ես, այս հայերը մեզանից քիչ են, բայց մեզանից պատվազգաց են, չլինի քեզանից մի գանգատ լսեմ, հասկացա՞ր»:

Ծառան, մինչև գետին խոնարհվելով, կըսի. «Սար ճավ մըն», այսինքն՝ «Իմ աչքիս վրա»: Հինգ օր ուտել-խմելուց հետո կհավաքվեն՝ ճանապարհվելու:

Շաքըր աղան մի կապույտ ձի նվեր կուտա ռես Խաչոյին, Շաքըրի կին՝ Այիշեն, մի ձի կուտա Ավետին, տղան՝ Լազկին, մի ձի կուտա հալեպցի Մկրտիչին, մեծ տղան՝ Աբուբաքրը, կուզի մի ձի տալ հայրիկիս, բայց հայրիկս Պոլիս եղած ժամանակ տեսած էր զինված հնչակյան զինվորներին, կասի. «Աղանե՛ր, ես ձի չեմ ուզում, մեր սահման շատ-շատ է: Մենք կտրված ենք մեր շրջանից: Քո ծառան մինակ չի կարող սարեր և դաշտեր պահի, խնդրեմ մի հրացան տվեք ձեր ծառային, երբ որ նեղն ընկնի, ես նրան կօգնեմ»: Այս առա-

---

[43] **Սիվտիկնա** (Սևտիկին, Սուրբ տիկին) գետը հոսում էր Վանի գավառի Շատախի գավառակի տարածքով և Շատախ գյուղաքաղաքի մոտ նրան էին միանում Սևտիկին ձորում բխող հսկայական շատրվանի ջրերը (Ա- Դո, նշվ. աշխ., էջ 61):

[44] **Փիրբաղալան** գյուղը գտնվում էր Վանի նահանգի Նորդուզ գավառակում, Շատախ գյուղաքաղաքից 25 կմ հարավ-արևելք, Արևելյան Տիգրիս գետի հարավարևելյան ակունքների շրջանի մի սարահարթում: Ուներ Սուրբ Սարգիս անունով եկեղեցի: 1850-ական թթ. գյուղում կար 54 տուն 440 հայ բնակիչ: Ըստ Ա-Դոյի՝ 1909թ. ուներ 36 տուն հայ և 40 տուն մահմեդական բնակիչ (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 69): Մահմեդականները բնակություն են հաստատել 1896թ. հայկական կոտորածներից հետո (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 260):

[45] **Կոլամ**- ծառա:

ջարկը Շաքըր աղան շատ կհավնե: Աբուբաքրը մի չախ-մախլու[46] հրացան կուտա հայրիկիս և կասի. «Էս նվեր իմ կողմից կուտամ քեզի, հալալ լինի»: Աղայի աղջիկ Փարի-շան մի ոսկի շղթա շարված տասը ոսկի կնվիրե ռես Խաչոյի աղջկան և կխնդրի, որ ռես Խաչոն իր աղջկան ամառը տանի Նորդուզ[47] գավառ, որ միասին երթան զոզաններ[48] ամառանոց:

Եկան մեր պատգամավորները, գյուղացիք դհոլ-զուռնայով գնացին՝ դիմավորելու, հասան գյուղը, սկսեցին պարկապզուկ նվագել և պատմել իրենց ճամփորդության մասին:

Այս ուրախ ժամանակը մի խումբ փախստական հայեր եկան հասան մեր գյուղը: Նրանք եկած էին Բիթլիսի շրջանից[49], Բարվարի գավառից[50], տասնմեկ տուն կլինեին, գյուղացիք անմիջապես բաժանեցին տունների վրա: Սրանց մեջ երկու հոգի ընտանիք չեն ունեցել: Իմ հայրիկն այդ երկուսին կբերի մեր տուն և մի սենյակ կուտա, որ ապրեն: Մեկի անունը Հոխան կլինի, իսկ մյուսինը՝ Բարխո: Հոխանը լավ շալագործ և լավ սնխչի՝ ոսկրաբույժ էր:

Մեր գյուղը մի լավ աղջիկ կար, բայց ծաղիկը նրա դեմքը ձևափոխել էր, և ոչ ոք նրան չէր առնում: Հայրիկս նրան կամուսնացնի Հոխանի հետ և դրամագլուխ կուտա: Հոխան շալագործություն կանի, իսկ Բարխոն ոչինչ չի անի: Բայց Հոխանի հետ կապրեն եղբայրների պես: Բարխոյի գոտիի տակ մի սիրուն դաշույն կար, հայրիկս կհարցնի. «Էս ի՞նչ խանչալ է»: Բարխոն կասի. «Մեր գյուղը կոտորող աղայի խանչալն է, ես և Հոխան նրան սպանեցինք և գիշերով այս եկողների հետ փախանք»:

Այժմ դառնանք մեր գյուղի գործերին: Շաքըր աղայի ծառան ռես Խաչոյին կխնդրի, որ մի մարդ տա՝ սահման պտտեն և որոշեն, թե որտեղ կարող են տավարներն արածացնեն, և թե որտեղ է խոտնոցը, որտեղ է արգելված:

Ռես Խաչոն հայրիկիս կուղարկի Յաղուբի հետ և իր ձին կուտա հայրիկիս, քանի որ ոտքով չի լինի մեր հանդը պտտել:

Յաղուբը և հայրիկս մինչև գիշեր հազիվ կվերջացնեն իրենց պտույտը: Մյուս օրը սար պիտի բարձրանային, ոտքով պիտի երթային: Առավոտ շուտ հայրիկս՝ հրացանն ուսին գցած, խուրջինը՝ լիփ-լիք ուտելիքներով, Յաղուբի հետ կեր-

---

[46] **Զախմախլու**-հրացանի տեսակ, որի վառոդը վառում էին կայծքարով՝ չախմախով:

[47] **Նորդուզի** (Նորդուս, Նորտուզ, Նուրտուզ) գավառակը գտնվում էր Վանի գավառում, Շատախի հարավարևելյան կողմում: Մեծ մասը լեռնային էր, հարուստ էր ջրերով ու անտառներով, ածխի պաշարներով: Կենտրոնը Նորդուզ գյուղն էր: 1891թ. ուներ մոտ 80 բնակավայր, 17600 բնակիչ (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 27): Արամ Մանուկյանը, Վանի Առաջնորդարանի ստույգ տվյալներից օգտվելով, գրում է, որ «1895-ին Նորտուզ կար 16 հայ գիւղ 280 տուն, 1897-ի կեսերին այս թիւը իջած է 277 տուն, 1899-ին՝ 168 տուն (Արամը, էջ 326-327): Ըստ Ա.-Դոյի՝ 1909թ. Նորդուզ գավառակի ավելի քան 60 գյուղերից միայն 11-ն էին հայաբնակ և 1896թ. կոտորածների և արտագաղթի պատճառով ունեին ընդամենը 164 տուն հայություն (Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 68-69): Նորդուզցիները զբաղվում էին անասնապահությամբ, երկրագործությամբ և շալագործությամբ: Պահում էին բրդատու ոչխարներ և այծեր, որոնց բուրդն արտահանվում էր: Հայտնի էր նաև կաթնամթերքով ու մեղրով: Հարևան տարածքների հետ միասին համապատասխանում էր Վասպուրական աշխարհի Անձևացիք գավառին:

[48] **Զոզան**-լեռնային արոտավայր, որտեղ ամառները պահում են կենդանիներին:

[49] **Բիթլիս** (Բաղեշ) քաղաքը գտնվում էր Վանա լճի հարավարևմտյան կողմում, լճափից 18-20կմ հեռու: Որպես Բաղեշ բերդ առաջին անգամ հիշատակում է 7-րդ դարի պատմիչ Սեբեոսը: Բիթլիսում ամառը շոգ էր, իսկ ձմեռը՝ երկարատև և խստաշունչ: Այն ջրառատ, պտղառատ և վաճառաշահ քաղաք էր, զարգացած էին արհեստները, հատկապես՝ կաշեգործությունը, կոշկակարությունը և կտավագործությունը: 20-րդ դարի սկզբին Բիթլիսում կային 5 արական և 3 օրիորդաց հայկական դպրոցներ, ինչպես նաև 4 եկեղեցի և 4 վանք: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Բիթլիսի գավառն ընդգրկում էր Խլաթի, Մոտկանի, Խիզանի և Բիթլիսի գավառակները, որոնք միասին ունեին 441 գյուղ, 11 վանք և 100 եկեղեցի: 1915թ. հունիսին սկսվեցին գավառահայության գաղթը, կոտորածներն ու կրոնափոխությունները (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 685-686):

[50] **Բարվարի** գավառակը գտնվում էր Բիթլիսի նահանգի Սղերդ գավառի (սանջակ) արևելյան կողմում: Հարուստ էր արոտավայրերով: Նշանավոր էր այգեգործությամբ, խաղողագործությամբ և մեղվապահությամբ: Ըստ Ա.-Դոյի, գավառակը 1909թ. ուներ 19 հայաբնակ գյուղ, ընդհանուրը՝ 739 տուն հայ բնակչությամբ (նշվ. աշխ., էջ 155):

թա սարի աջ թևը: Ուր որ արգելված էր, Յաղուբը քար կշարի, որ չսխալվի: Մյուս օրը հերթը սարի ձախ կողմը կլինի: Իմ հորքուրի մարդը՝ Գոմեշ Հոխանը, ռես Խաչոյին խնդրում է, որ ինք Յաղուբի հետ երթա սարը, պայմանով, որ հայրիկիս հրացանը տան իրեն: Ռես Խաչոն հայրիկիս հրացանը կառնի, կուտա Հոխանին և անցյալ օրվան պես կերթան ձախ կողմը: Հոխանը և Յաղուբը սարը կպտտեն, քարեր կշարեն, վերջավորության մի եղջերու կտեսնան, Յաղուբը եղջերուին կսպանի: Հոխանը կշալակի, կուգան Կատալակի ջրվեժի մոտ, կսկսեն կրակ վառել, որ խորոված ուտեն: Նույն ժամին մի նապաստակ կփախնի, Հոխան անմիջապես հրացանը կվերցնի, կխփի, հրացանի չախմախի քարը կկոտրի, կեսը կմտնի Հոխանի երկու աչքերի մեջտեղը: Յաղուբը անմիջապես Հոխանի քոլոզը[51], որ թաղիք էր, կվառի և մոխիր կդնի վերքի վրա, արյունը կկտրվի: Եվ այդպես կուգան գյուղը: Մեր տուն ապրող փախստական Հոխանը, Գոմեշ Հոխանի ճակատից քարը կհանի և կսկսի բժշկել, բայց քարի տեղը մնաց փոս, և Գոմեշ Հոխանի անունը մնաց Երեք աչքանի Հոխան:

ՄՈԿԱՑ ԵՐԵՑԻ ԴՊՐՈՑԸ

Հայրիկս մի հատ ընկույզի փայտից տախտակ շինեց, տվեց ինձի: Մայրիկս, որ քաղաքացի էր, այդ տախտակի վրան ա, բ, գ գրեց: Ինձի տարան Մոկաց երեց Տեր Հովհաննեսի մոտ, որ դաս սովորեմ, վարձն էլ այն էր, որ երկու օր հայրս տերտերի համար քաղ անի: Սկսեցիմ սովորել, գյուղացիք այս տեսնելուն պես իրենց տղաներ բերին, եղանք տասնութ տղա:

[51] Քոլոզ-թաղիքե կոնաձև գլխարկ:

Տերտերը հեղափոխական էր և մեզի բերանացի կպատմեր մեր թագավորներից, Քրիստոսից ու Սուրբ Խաչի զորությունից: Մեր մատաղ ուղեղը անմիջապես կընդուներ տերտերի պատմածը:

Մի օր դպրոցից եկամ տուն, տեսամ՝ այն մորուքավոր մոլլան և հայրս սաքուին[52] հաց են ուտում: Մոլլան ինձի տեսնալուն պես իջավ, գրկեց, համբուրեց և ասաց. «Երվա՛նդ, տղաս, չեկար մեր գյուղ՝ Համիդի հետ խաղայիք, ես քեզի մի սիրուն գառ կտայիմ»: Ես լացակումած ասացիմ: «Ձե՛մ գա ձեր գյուղը, դո՛ւք քուրդ եք, խաչին չեք հավատա, մարդ կսպանեք, մեր տերտերի հորը սպանած եք»: Եվ լացիմ: Հայրիկս վեր ելավ, որ ինձի ծեծի, մոլլան արգելեց և ասաց. «Ռե՛ս Հակոբ, այս անմեղ երեխան ի՞նչ կհասկնա, չե՞ս լսում, որ ասում է՝ տերտերի հոր սպանած են քուրդերը և խաչին չեն հավատա, այս մեր երկու ազգի դժբախտությունն է, որ մեր մոլլաները և ձեր տերտերներ կքարոզեն»: Հայրիկս բարկացավ և չթողեց, որ ես տերտերի մոտ դաս սովորեմ, մայրիկս շատ-շատ տխրեց, և ինձի տանը կսովորեցներ, բայց ես կփախնեիմ՝ ընկերներիս հետ ճան[53] խաղալու: Մայրս տեսավ՝ չի լինի: Մի օր ձեռքս բռնեց, տարավ հորաքրոջս երեք աչքանի մարդու մոտ, որ ինձի դաս տա, և ես սկսեցիմ նրա մոտ դաս սովորել: Նա ավելի ուշադիր էր իմ հանդեպ, քան մեր տերտերը:

Անցան շաբաթներ: Ես քսան հատ գիր լավ սովորեցիմ և մի առավոտ շուտ գնացիմ: Հորաքույրս թոնիրը վառած էր, և մուխը իջած էր գետին: Ես և հորաքրոջս ամուսինը փախանք դուրս: Նստանք դուրսի սրահը, և նա մատներս կբռներ, ամեն մի գիրը կնմանացներ մի առարկայի և կամ մի կենդանու: Ես նայեցիմ նրա երեսին, տեսամ՝ ճակատի մեջտեղ մի փոս կա, ասիմ. «Էն ի՞նչ փոս է քո ճակատին,

[52] Սաքու-մեծ թախտ, որի վրա նաև ծալապատիկ նստած ճաշում էին:
[53] Ճան- կճղակավոր կենդանիների ծնկան հոդի ոսկորը, որով երեխաներն ու պատանիները խաղում էին մի շարք խաղեր, օրինակ՝ վեգ:

ո՞վ է խփել»: Ասաց. «Քե՛ մեռնեմ, ոչ ոք չի խփել, այդ քո հոր անթրոցից[54] է եղել»: Ես լացելով եկամ տուն, հարցուցիմ, նոր մայրս ծիծաղելով պատմեց եղածը:

ՀՈՐՍ ՓԱԽՈՒՍՏԸ

Մի օր իմ հայրիկս քաղաքից տուն վերադարձի ճանապարհին մի ձիու կոտրած նալ կտեսնա, կվերցնի, որ բերի տա երկաթագործին, դնի գութանի խոփի վրան, որ շուտ չմաշվի: Կհասնի Արտամետ[55], կուզի մի կոֆե խմի և հանգստանա: Մի թութուն խուզարկող ոստիկան հորս ծոցը թութուն փնտրելուց այդ նալի կտոր կտեսնա և հորս ծեծելով՝ կդարձնի քաղաք: Երեք օրից հետո հայրիկս տուն հասավ՝ ծեծված և ջարդված:

Անցան օրեր և ամիսներ: Հասավ աշնան ցանքսի ժամանակ: Գյուղացիք հանգստություն չունին: Ամեն մարդ կուզի, որ շուտ աշնան ցորեն ցանի, շուտով անձրևներ կսկսին:

[54] Անթրոց-կրակխառնիչ:

[55] Արտամետ (Արդամետ, Արդեմիդա և այլն) գյուղաքաղաքը գտնվում էր Հայոց ձորի գավառակում՝ Վանա լճի հարավարևելյան գեղատեսիլ ափին: Այն հայտնի էր իր խնձորի այգիներով: Արտամետցիները նորահարսերի շորերի վրա խնձորներ էին դնում, որոնց բուրմունքը պահպանվում էր երկար ժամանակ: Հեթանոսական շրջանում Արտամետում եղել է Անահիտ (Արտեմիդա) աստվածուհուն նվիրված մեհյաններից մեկը: Այսօր էլ Արտամետում և շրջակայքում պահպանվել են բազմաթիվ հուշարձանների մնացորդներ, սեպագրեր ու խաչքարեր, հեթանոսական ու քրիստոնեական պաշտամունքային շինությունների հետքեր, բերդի ավերակներ: Ըստ ավանդության, այստեղ է Սաթենիկ թագուհու հետ իր ամուսնական մեղրամիսն անցկացրել հայոց Արտաշես թագավորը, այստեղ է Շամիրամը կորցրել իր հուռութները: Ի դեպ, Շամիրամի նշանավոր ջրանցքն անցնում էր Արտամետի միջով՝ այն բաժանելով երկու մասի: Ըստ Ա-Դոյի՝ 1909թ. Արտամետն ուներ 500 տուն բնակչություն, որից 150 տունը հայ էր (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 21), Սբ Աստվածածին անունով եկեղեցի, հայկական վարժարան: Արտամետցիները քաջաբար մասնակցել են 1915թ. Վանի հերոսամարտերին: Նրանց մեծ մասը զոհվել է Մեծ եղեռնի տարիներին, մյուսները հանգրվանել են տարբեր երկրներում (ՀՀՇՏԲ, հ. Ա, էջ 490-491):

Հայրս նույնպես տենդագին աշխատանքի մեջն էր: Մի երեկո, որ ուշ կուգա աշխատանքի տեղից, երկու քուրդ առաջը կկտրեն, որ սպանեն և տավարներ տանեն: Դրանցից մեկը խանչալով կհարձակվի հորս վրան:

Հայրիկիս՝ իր գոտիկից անմիջապես զոպան քաշելը և քուրդի գլխին զարնելը մեկ կլինի: Քուրդը կսատկի, և էն մեկը կփախնի: Գիշեր էր: Հայրիկս տխուր-տրտում տուն եկավ: Ինձի գրկեց, համբուրեց և լացելով՝ մորս ասաց. «Զարդա՛ր, ես մարդ սպանեցիմ, պիտի փախնեմ, կերթամ քաղաք, քո քրոջ տղան՝ Գասպարը, մեծացեր է, կուզարկեմ, թող գա մալ[56]-մուլքին[57] տերություն անի, տեսնամ իմ հալս ինչ կլինի»: Մայրս ընկավ գետին, լացեց: Հայրիկս մի քիչ փող վերցրեց, ինձ համբուրեց և էն պատը, որ մեր տունի և Ջիբոյի տունի մեջ ծակված էր, էն ծակից Ջիբոյին կանչեց, ասաց. «Ես մի մարդ եմ սպանել, ուրիշի վրան չգցեն, ես կփախնեմ, ամանաթ[58] քեզի իմ մալ և մուլքս»: Հայրիկս դուրս ելավ և գնաց:

Առավոտյան լույսը բացվելուն՝ ձայն ընկավ գյուղը, որ մարդ է սպանված: Ջիբոն ամենին կհանգստացնի՝ ասելով, որ «Ես գիտեմ սպանողը, դուք հանգիստ եղեք»: Գյուղացիք գնացին տեսան և հագուստից հասկացան, որ սպանվածը Ոստանի քուրդերից է: Մեր տուն լցվան գյուղացիներ, ռես Խաչոն ասաց. «Սանամե՛ր, մի մտածի, ես ամեն գործ, որ ձեր տունինն է, իմ աչքիս վրա, հանձն կառնեմ և իմ կինս էլ քեզի ամեն ինչով կօգնի»:

[56] Մալ-ունեցվածք, ինչք:

[57] Մուլք-կալվածք, հող, շինություններ:

[58] Ամանաթ-պահ տված բան, ավանդ:

ՄԵՐ ԿՅԱՆՔԸ
ՀՈՐՍ ՓԱԽՈՒՍՏԻՑ ՀԵՏՈ

Այդ տարին եղավ 1892 թ., ես չորս տարեկան էիմ[59], որ իմ հայրիկս փախավ: Մի շաբաթից հետո եկավ մորաքույրիս տղան՝ Գասպարը:

Ռես Խաչոն մի ծառայող տվեց, որ աշխատի: Գասպարը գյուղացիություն չգիտեր: Այսպիսով, հասավ աշնան վերջը, մեր սարերը ձյուն նստավ: Գյուղացիք գործ չունեին և իրենց քուրսիները նորոգեցին, մտան տակը:

Շատ սոսկալի ձմեռ էր: Գասպարը կերթա, որ տավարներին կեր տա, կտեսնի գոմի դուռը բաց է, երկու կով ու մի եզ տարած են:

Լուր հասավ գյուղացոնց: Ամեն եկան, տեսան, ի՞նչ կարող են ասել, ավազակի երկիր է: Մեր լուծը մնաց պարապ, ո՛չ եզ ունենք, ո՛չ փող, որ մի հատ եզ առնենք, որ լուծը գետին չմնա:

Գյուղացիները հավաքվան մեր տուն. սուգ ու լաց է: Մայրս կլացի, հորեղբորս կին և իր փոքր տղան կլացեն, ես էլ կլացեմ:

Հալեպցի Մկրտիչը ասաց. «Էստեղ նամուսի գործ կա: Մենք մեր Հակոբին ոչ թե մի եզ պիտի տանք, այլ պիտի նրա գութանն էլ գործի լծենք: Հակոբի գոմեշները կան, երեք եզ կա և երեք եզ կպակասի, որ գութանը աշխատի: Ահա՝ մեկ եզ ինձանից»: Ռես Խաչոն կասի. «Մեկ էլ ինձանից»: Զիբոն կասի. «Մեկ էլ ինձանից»: Ռես Ավետը կասի. «Գութանը լրիվ եղավ, տարած կովերի տեղ՝ երկու կով էլ ինձանից, որ Զարդար քույրս առանց կովի չմնա»: Մորս անունը Զարդար էր:

Մեր տնտեսությունը վերականգնավ: Գութանն իր հորովել սկսեց, բայց մորս լաց չի կտրի: Հորիցս ոչ մի լուր չկա ու չկա:

Հորեղբորս կինը Սպիտակ վանք[60] գյուղից էր, Ոսկո էր անունը: Նա մի տղա ուներ՝ Ղազարոս անունով, ինձանից երկու տարի մեծ էր: Հորեղբայրս, երբ գնացել էր Պոլիս, հայրիկս նրան բերեց մեր տուն, և այժմ երկու տեգերկիններ որբևայրի են, կլացեն և կսգան:

Այս դժբախտությունն անցավ: Մայրիկս, որ քաղաքացի էր, սկսեց գյուղացիներին հայտարարել, որ բոլոր գյուղի կանանց հագուստն առանց փողի կկարի, վարձն էն լինի, որ աշնանն աղջիկները գան մեր տուն և ձավարի ցորենը քարերից մաքրեն:

Այսպիսով, մայրիկս թե՛ իրեն և թե՛ տեգերկնկան զբաղեցրեց, որ ուրախանան:

Մեր գութանը կաշխատի, բայց ես չգիտեմ, ո՞ր արտի մեջն է:

Մի օր Գասպարը ասաց. «Երվա՛նդ, մայրիկից իրավունք առ, քեզի տանեմ դաշտը, տես գութանը և նրա անուշ երգերը»: Ես մայրիկից իրավունք վերցրամ, և Գասպարի հետ գնացինք դաշտը:

Առավոտ էր, գոմեշներ և եզներ լծեցին՝ մի լուծ գոմեշ, երեք լուծ եզ: Ամենը պատրաստ են, պիտի առաջ շարժվեն և միանգամից մաճկալը կանչեց. «Անուն Աստուծո՛յ»: Բոլորը միասին կանչեցին. «Հաջողություն Աստուծմե»: Եվ սկսվեց մի անուշ երգ: Կարժե այստեղ մի քանի տող գրեմ այդ երգից, այսպես է.

---

[59] Կարծում ենք՝ հեղինակը չէր կարող չորս տարեկանում դպրոց հաճախել: Եթե նա, ինչպես բանավոր խոսքում հաճախ ասել է ընտանիքի անդամներին, ծնվել է 1886թ., ապա ավելի հավանական է, որ վեց տարեկանում է տառաճանաչ դարձել: Կամ հոր փախուստը տեղի է ունեցել ոչ թե 1892թ-ին, այլ՝ ավելի ուշ:

[60] **Սպիտակ վանք** գյուղը գտնվում էր Հայոց ձորում, ըստ Ա-Դոյի՝ 1909թ. ուներ 16 տուն՝ 114 հայ բնակիչ (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 47):

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ[61]

Բարի լուսոյ աստղ ելավ,
Սարվասկ[62] լծեմ էրթամ գութան,
Աշխարքի շեն վեր գութնին է,
Գութան չըլլի աշխարք ի՞նչ է:

Ձեռքս տնեմ վեր էն մաճին[63],
Աղոթք անեմ էն Սուրբ Փրկչին,
Փրկչին մեռնեմ, Տիրոջն էլ խետ[64],
Ակոս շուռ տանք իրարու խետ:

Կրկներգ՝ Աշխարքի շեն վեր գութնին է
Գութան չըլլի աշխարք ի՞նչ է:

Ամոլ[65], ոժտուն[66], սառծիլ[67], խուրիկ[68],
Խետ զիկ կանեմ խալալ[69] շիրիկ[70],

[61] Այս երգի մեկ այլ տարբերակ է վասպուրականցիներից գրառել Երվանդ Լալայանի՝ 1915-1916թթ. բանագիտական արշավախումբը: Այն հրատարակվել է Արամ Ղանալանյանի կազմած «Հայ շինականի աշխատանքի յերգերը» գրքում (Երևան, 1937, էջ 69): Մեկ այլ տարբերակ Ա. Փահլևանյանն է գրի առել բնիկ շատախցի, հայ ազգագրական երգերի լավագույն գիտակներից և կատարողներից մեկից՝ Հայրիկ Մուրադյանից, տե՛ս Հայրենի երգեր, վերծանեց և կազմեց Ա. Փահլևանյանը, Երևան, 1980թ., էջ 52, 56:

[62] **Սարվասկ** - գութանի ամբողջ սարքը:

[63] **Մաճ** - գութանի ղեկը:

[64] **Խետ**- հետ:

[65] **Ամոլ** - գութանի առաջին լուծը, անմիջապես գութանի լծված զույգ եզը:

[66] **Ոժտուն**- ուժեղ:

[67] **Սառծիլ**- սածիլ:

[68] **Խուրիկ**- հորիկ, գութանի առաջին լուծը, որը բոլոր լուծերի առաջինն է լինում:

[69] **Խալալ**-հալալ:

Քաշի կովան[71], փաթ[72] մ'էլ դառնանք,
Ձմեռ կուգա տաք է բուխրիկ[73]:

Գութնի թախում նմուշ, նմուշ,
Ձկա վաստակ զանց քե անուշ:

Կրկներգ՝ Աշխարքի շեն վեր գութնին է,
Գութան չըլլի աշխարք ի՞նչ է:

Խոփ քաշ կուգա գետնի տակեն,
Ակոս բանա հերկեն-հերկեն,
Քաշի կովան, փաթ մ' էլ դառնանք,
Միջնակ հանենք ռհաթ անենք[74]:

Կրկներգ՝ Աշխարքի շեն վեր գութնին է,
Գութան չըլլի աշխարք ի՞նչ է:

ԳՈՒԹԱՆԻ ՀԵՐԿԸ

Մեր գյուղն ուներ 180 տուն[75], կազմված էր երեք մասից, որոնց Համփա, Պճեղ, Թվարեք կսեին: Թվարեքում ապրում էին ուրիշ տեղերից եկած բանվորները, որ քաղհան, ծառայութ-

[70] **Շիրիկ** - գործընկեր, մասնակից:

[71] **Կովան** - 1. Խոշոր եղջերավոր անասունների ոտքերի ներքևի մասերը, կոճղերը: 2. Մի քանի զույգ եզ: 3. Հաղթանդամ գոմեշ, կոռի: 4. Գութանի մաս՝ կոռ: 5. Շրջվել, ծռել, ետ դարձնել՝ կոռել:

[72] **Փաթ** - դարձ, պտույտ:

[73] **Բուխարիկ**- պատի մեջ շինված, մի կողմը բաց կրակարան:

[74] **Ռհաթ անել**- հանգիստ առնել:

[75] Ե. Կյուրեղյանը «Մեր գյուղի հիմնվելը» գլխում գրում է, որ Քերծ գյուղն ուներ 95 տուն հայ և 10 տուն քուրդ բնակիչ, ընդհանուրը՝ 105 տուն: Ա.-Դոն ևս 1909-ին մոտավորապես այս թիվն է նշում՝ 85 տուն՝ 491 հայ և 8 տուն մահմեդական, ընդհանուրը 93 տուն (Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 47): Հայկական սովետական հանրագիտարանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեի համար Քերծում նշում է 110 տուն՝ 600 հայ բնակիչ (ՀՍՀ, հ. 12, էջ 445):

յուն անելով իրենց համար լավ կապրեին: Համփան էն է, որ բնակիչները երկու փոխգութան ունեն, հազար հատ ոչխար, կով: Պճեղը դրա կեսը՝ մեկ փոխգութան, եզներ: Կառավարությունն էլ միայն Համփայից էր տուրք հավաքում, այնտեղ հարուստներն էին, էն աշխատողներին ձեռք չէին տա: Ինչպես ասացիմ, Համփան ուներ երկու փոխգութան: Առավոտ արշալույսին գութանը կսկսե աշխատել մինչև ժամը 10-ը: Դրանից հետո էն մյուսը կլծվի, կաշխատի մինչև ժամը 4-ը: Հետո նորից մյուսը կլծվի և կաշխատի մինչև 8-ը, 9-ը: Դրանց կըսեն երկու փոխգութան: Իսկ էն որ մեկ գութան ունի, առավոտ ժամը 5-ին կսկսի, կարձակի ժամը 10-ին: Տավար կհանգստանա, ժամը 4-ին կլծեն, 8-ին բաց կթողնեն, որ հանգստանա: Ով որ գութան չուներ, աղքատ էր, արոր ու երկու եզ ուներ: Ամենաաղքատը արոր ուներ[76]: Ամեն գյուղ, կամ երկու-երեք գյուղ մեկ վարպետ ուներ: Էդ վարպետը փողով գութանը, արորը շինում էր: Մեր շրջանում՝ Խարականց գյուղում Հոխան անունով մի հյուսն կար, շատ հայտնի էր: Նա էր էդ գութաններն ու արորները շինում, կարգի բերում: Նա կհասկանար էդ գութանը, արորը լա՞վ կաշխատեր, թե՞ չէ:

Գյուղացիք առաջ գութանի հերկը կանեին, աշունն անձրևները, որ կգային, կցանեին, գարունը ցորենը կլիներ մեկ մետրի չափ, կհնձեին, կբառնային մեծ գոմեշի սայլերը, կբերեին կալատեղ: Կալատեղն էլ նախապես կմաքրեին, կմշակեին, կջրեին, հողը ասֆալտի պես կհարթացնեին, որ ցորենի հատիկը հողի հետ չխառնվեր:

Հետո կառավարությունից մարդ կգար, մե տուփ կբերեր, ցորենը կլցներ տուփը: Ինն անգամ կլցներ մի կողմը, մեկ անգամը՝ մյուս կողմը: Ինը անգամը գյուղացու բաժինն էր, մի անգամը՝ կառավարության: Պարսկաստան էդպես չէր. հինգին մեկ ա, չորսին մեկ ա: Կառավարությունը մեկ հատ

[76] Վասպուրականի վարող գործիքների՝ արորների և գութանների ձևերի և կիրառությունների մասին մանրամասն տե՛ս Վ. Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 187-201:

ամբար է վարձում: Մինչև աշունն ցուցակ կա, թե ամեն մարդ ինչքան ցորեն է տվել: Հետո հավաքված ցորենը կտանեն Ոստան, կբառնան նավեր և կտանեն քաղաք: Նախքան գարունը՝ կառավարությունը ամեն մի գյուղ տալիս ա մե մարդու իջար[77] փողով: Էդ մարդիք թուրք էին: Կառավարությունը նրանց կտար 100-ից մինչև 1000 ոսկի: Մեր գյուղն ամենաշատ պտուղ, ցորեն տվողն էր: Էդ իջարա անողը ծառայող էր ուղարկում, էդ ծառայողը տուն կվարձեր, իրա համար կապրեր: Երբ որ ցորենն արդեն ծեծեցիր, տվեցիր քամուն, մաքուր ցորեն եղավ, մի հատ մեծ փայտ՝ վրեն գրված, կբերեր ու էդ կողմով հավաքված ցորենի չորս կողմի վրա թաջ կաներ[78], որ չլինի գյուղացին իր ապրանքը գողանա, կառավարությանը քիչ տա: Մեր գյուղի իջարա անողը, քանի տարի էր, ինչ կհիշեմ, Սոլեյման անունով մի էֆենդի էր: Շատ հայասեր էր, իբրև հայերին օգնություն՝ հիսուն տաճկական մաուզեր փողով տվավ Վանի դաշնակցական կոմիտեին: Իմ հոր հետ միշտ մեր տունը կլիներ, որովհետև հայրս Պոլիս էր եղել, դոմինո էին խաղում, կոֆե խմում: Նա թուրքերին չէր սիրում, երբ որ կամավորներ եկան, նա չփախավ, մնաց հայերի մեջ: Եվ մեր հետ եկավ, սահմանն անցավ: Մեկ էլ, մենք երբ վերադարձանք Վան, մեզ հետ եկավ իրա տունի վրեն: Շատ հայասեր մարդ էր: Կլիներ 60-70 տարեկան:

Կալը, որ վերջացավ, գյուղացին ցորենը տարավ իր տուն, կսկսե հաշիվ անելը, թե մեկ տարի ինչքան կուտեն, ամենքը՝ քանի կիլո: Ենթադրենք, մեկ տարի 50 արկղ ուտելու, 10 արկղ ղոնաղների, 10 արկղ էլ աղքատների համար էր: Գյուղացին ցորենը երեք մասի կբաժաներ, որ տարին լրացավ, առանց ալյուրի չմնա: Գիտեին նաև՝ ամեն արտը ինչքան սերմնացան է տանում, առանձնացնում էին: Ինքը՝ տանտերը, այդ ամենը ժամանակին կբաժաներ, որ նեղ չմնա: Հետո, եթե մեկինը պակաս եղավ, կօգնեն իրարու, եթե մեկի արորը կոտրավ, խարաբ

[77] Իջար-վարձ, կապալ, վարձակալություն:
[78] Թաջ անել-դաջել, նշան անել:

եղավ, հարևանն իրենը կտար: Գյուղի ցածր դաշտը մարտին կբացվեր, մարտին ցանքս կանեին, իսկ գյուղին մոտիկ սարի արտերում՝ ապրիլին: Ապրիլին նոր ձուն կերթա: Մինչև ապրիլ մեր գյուղը հլա ձուն ա: Ամեն մարդ գիտեր իր արտի տեղը: Մեր ընտանիքը յոթ արտ ուներ: Մեկը շատ մեծ էր: Դրա մոտի աղբյուրի ջրերը լիճ էին շինել, գյոլ էին ասում: Բացում էին, արտը ջրում: 10-12 գութան աշխատում էր, չէր վերջանում: Ով որ չէր կարողանում իր ցորենը ժամանակին հնձի, հինգ, տասը, տասնհինգ քաղվոր էր բռնում, որ քաղ անեն: Դրանք կամ հայ էին կամ քուրդ, մեր կողմերը թուրք չկար:

Մեր գյուղի տներ իրար կպած էին, կտուրով կարող էիր հարևանի տուն երթալ, բայց դռներ առանձին էին: Տներ առանձին բակ չունեին, կար մեկ ընդհանուր մեծ հրապարակ: Մեր ընտանիքը համարվում էր միջին: Մենք ունեինք մեկ գութան: Մեզնից չորս տուն հարուստ կար: Մեր գյուղից քառասուն գութան էր դուրս գալիս: Երբ որ սարից կնայեիր, տեսարան էր. գութանները աշխատում էին, հորովել էին կանչում, երգ ասում: Սարից նայում ես, հոգիդ բավարավում է: Գութան, որ ասում եմ, շատ մեծ փայտ է: Մեր երկիր երկաթե գութան ուշ դուրս եկավ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո ռուսներ հանեցին: Առաջ բոլորը փայտե գութան էր: Գութանը չորսը լուծ էր. առաջ երկու գոմեշ, հետո մե զույգ եզ, հետո նորից մե զույգ եզ: Առաջին լուծը երկար շղթա էր: Էդ գոմեշների վրա նստողին ամոլվար կասեին, հետո՝ սարծիլ, ոշտուն, խուրիկ: Էդ երեքի վրա երեք փոքր երեխա են նստում: Տավարները էնպես էին սովորել, որ գութանի երգին համապատասխան լուծ էին քաշում: Էդ հսկա գոմեշը, որ սարի պես էր, մե պստիկ երեխա հենց ականջը կբռնի, գոմեշը գլուխը կքաշի, կգա կմտնի լուծի տակ: Մեր գյուղ ջրաղաց չկար: Մեզի մոտիկ Անգղ[79] գյուղը կար: Վարդան զորավարի պատմության մեջ հիշվող Անգղն է[80]: Այնտեղ տասներկու ջրաղաց կար: Շատ ջրառատ էր: Մեր գյուղից էն կողմ՝ Կղզիանոցում[81], ուր իմ հորքուր էտեղ մարդու էր գնացել, 40 ջրաղացի ջուրն էլ առանձին էր էրթում:

Մենք, որ դեռ փոքր էինք, մեր տավարներ տանում էինք սար՝ արածացնելու: Մեր չանթեն երկու հաց էին դնում և կես պանիր: Պաղ ջրի մոտ նստում էինք, պանիր ուտում: Էնքա՜ն բանջար էինք ուտում, որ հացը մոռանում էինք, էնքա՜ն բանջար կար մեր սար, որ գարնան երեք ամիսը բանջար էինք ուտում: Ամբողջ ամառ գյուղացին կտուրն էր քնում: Տուն չէր քնում, դուռեր բաց էր, գյուղում գող չկար: Ամեն տուն իր տավարի փթիրն էր վառում, գնա 200 տուն, մուխ

---

[79] Անգղ-գյուղ Վանի նահանգի Հայոց ձորի գավառակում: Ժողովրդական ստուգաբանությամբ անունն առաջացել է իբր շրջակայքում շատ անգղներ լինելու պատճառով: 1909-ին գյուղն ուներ 105 տուն՝ 467 հայ բնակիչ (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 47): Գյուղացիները զբաղվում էին այգեգործությամբ, անասնապահությամբ և երկրագործությամբ: Անգղը հայտնի էր հատկապես շաղգամով: Ուներ ուսումնարան, Սուրբ Գևորգ անունով եկեղեցի: 1872թ. Անգղում կազմակերպվել է «Փրկություն ի միություն» հայրենասիրական խմբակը: Բնակիչները մասնակցել են 1895թ. և 1915թ. թուրք ջարդարարների դեմ մղված հերոսական ինքնապաշտպանական կռիվներին: Գյուղի մոտ էր գտնվում Սբ Աստվածածին վանքը, որը երբեմն կոչվել է նաև Անգղավանք: Անգղում կար երկու բլուր՝ Սբ Սարգիս և Սբ Թիրանավոր անուններով, որոնց վրա նշմարվում էին հին եկեղեցիների ավերակներ: Գյուղի մոտ էր գտնվում նաև Սաչան անունով ջրվեժը: Գյուղն ավերվել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, բնակիչների մեծ մասը զոհվել է, մյուսները գաղթել են (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 255):

[80] Իսկապես, Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» (Երևան, 1971, էջ 63) երկում հիշատակվում է Անգղ անունը. «Իսկ Հայոց զորագունդը բոլոր օգնականներով ու բազմաթիվ մոգերով չորրորդ ամսին եկան հասան Հայոց աշխարհը, մի մեծ գյուղաքաղաք, որի անունն էր Անգղ»: Ցավոք, պատմիչը չի մանրամասնում, թե որ գավառում է Անգղ գյուղաքաղաքը: Նույն իրադարձությունների առիթով Ղազար Փարպեցին Ծաղկոտն գավառում հիշատակում է Անգղ բերդ (Ղ. Փարպեցի, Հայոց պատմություն, թարգմ. Վահան Մամիկոնյանին, Երևան, 1982, էջ 141): Բայց Ծաղկոտն գավառը գտնվում էր Բագրևանդ գավառի հարևանությամբ, և ոչ թե Հայոց ձորում: Այնպես որ Ե. Կյուրեղյանը սխալվում է, երբ Եղիշեի Անգղը նույնացնում է Հայոց ձորի Անգղ գյուղի հետ:

[81] Խոսքը Վանի նահանգի Հայոց ձոր գավառակում խոշոր գետի ձախ ափին գտնվող Կղզի գյուղի մասին է: Կղզի է կոչվել, քանի որ շրջապատված էր Շամիրամի ջրանցքի ճյուղավորումներով: 1850-ական թթ. ուներ 25 տուն և 159 բնակիչ: Ըստ Ա-Դոյի 1909թ. գյուղում կար 32 տուն և 241 հայ, 11 տուն մահմեդական բնակիչ (նշվ. աշխ., էջ 47):

բռնում էր ամեն կողմ, և մի հատ մոծակ չէր մնում, թե չէ մալարյա, այլ հիվանդություններ շատ կլիներ:

ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

Մեր գյուղացիները ժամացույց չունեին: Ճաշվա ժամանակն ամեն մարդ կկայնի, իրա հովը կչափի: Եթե հովը հինգ ոտ էր, ժամը տասնմեկն էր, եթե չորս ոտ էր, ուրեմն կես ժամ կար մինչև ժամը տասը: Եթե երկու ոտկես էր, ճիշտ տասն էր: Էդ էլ մեր գյուղացու ժամացույցն էր: Ամեն տուն ժամացույց չուներ: Մեր գյուղ մե մարդ ժամացույց ուներ: Պոլսից էր եկել, շղթայով ու բանալիով «Սարկիսով» ժամացույց էր: Մեր գյուղը երկու թաղ էր, էս թաղից մարդ պետք է վազեր էն թաղը, կհարցեր. «Պարո՛ն Մարկոս, ժամ քանի՞սն ա», նոր նա կասեր: Բայց մեր ամենաճիշտ ժամացույցը մեր սարի հովն էր: Մեր օրացույցը աստղերն էին:

ՀԱՅՈՑ ՁՈՐԻ ԳՅՈՒՂԵՐԸ

Հիմա, ինչ-որ կպատմեմ, ամեն ինչ իմ միտն է, ամեն ինչ աչքիս առաջն է:

Հայոց ձորում երեսունվեց գյուղ[82] կար, որոնցից չորս խառն էին, մնացածը՝ հայ: Երբ թշնամուց պաշտպանվելու կարիք լիներ, մեր գյուղի մոտ երեք գյուղ կար, կգային մեր գյուղը. Կըզըլդաշ, Բըլթենց, Աթանանց գյուղերն էին: Ամենամեծը Աթանանցն էր: Ուներ ութսուն տուն: Հիրճ գյուղի

[82] Հեղինակի հիշատակած տեղանունները հիմնականում համընկնում են Ա-Դոյի կազմած Հայոց ձորի տեղանվանացանկին, տների քանակի մեջ կան տարբերություններ: Հայոց ձորի տարբեր գյուղերի մասին առավել մանրամասն տե՛ս սույն գրքի համապատասխան ծանոթագրություններում:

կեսը թուրք էր, կեսը՝ հայ, 20-30 տուն կլիներ: Իշխանին էնտեղ սպանած էին: Մեր գյուղը Վանա լճին ավելի մոտ էր, Հիրճը հեռու էր: Հիրճից Ոստան երթալու համար կառավարական ճանապարհ կար: Մեր գյուղը կառավարական ճանապարհ չուներ, հեռու էր ամեն գյուղերից, կտրված էր, Փեսանդաշտին էր մոտ: Խոսպ գյուղում կլիներ 50 տուն: Խոսպի մոտ Հանկշտանցն էր, 20-30 տուն կլիներ, իմ հորքուրները այնտեղ կապրեին: Խառականց անունով գյուղ կար, խմբապետ Լևոնի[83] գյուղն էր, կլիներ 50 տուն: Կըզգի գյուղում կառավարական մարդ կնստեր, որ մյուդուր կըսեին: Մեծ գյուղ էր, կլիներ մոտ 100 տուն, Էրմերու գյուղը կլիներ 50 տուն: Տեմկոսնի գյուղը կար, Հայկաշեն[84] գյուղը կար: Խեք գյուղը ուներ 100 տուն, Կեմը 80-90 տուն կլիներ, Հարադենց գյուղը կար, Անգըղ կլիներ 100 տուն, Իշխանիգոմը ուներ 60 տուն: Քեռչք, Խորգոմ գյուղերը ունեին 80 տուն, Ս. Վարդան ուներ 30 տուն, Մաշտակ ուներ 80 տուն, Մարկըսը՝ 60 տուն: Զորսը գյուղը խառն էր՝ Թուրքաշեն, Մուլք, Հիրճ և Մժնկերտ: Այդ գյուղերում հայ, թուրք և

[83] Նկատի ունի **Լևոն Շաղոյանին**, տե՛ս համապատասխան ծանոթագրությունը:

[84] **Հայկաշեն** գյուղն ավելի հաճախ հիշատակվում է **Աստվածաշեն** անունով: Նրա մոտ էր նշանավոր Հայկաբերդը: Ըստ Մ. Խորենացու գյուղը հիմնել է Հայկ նահապետը (Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 86): 1872թ. ուներ 20 տուն հայ բնակիչ (Տևկանց Ե., նշվ. աշխ., էջ 223): 1883թ. ուներ 30 տուն հայ և 20 տուն քուրդ բնակիչ: Կար Սբ Ստեփանոս անունով 15-րդ դարի եկեղեցի: Գյուղի ընդարձակ գերեզմանատանը կային զանազան ձևերի և գույների խաչքարեր (Միրախորեան Մ., նշվ. աշխ., էջ 145-152): 1896թ. ջարդերի ժամանակ Աստվածաշենում սպանվել է 14 և առևանգվել 2 հոգի: 1909թ-ին ուներ 47 տուն՝ 197 (102 արական և 95 իգական) հայ բնակիչ և 46 տուն մահմեդական (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 47, 370): 1915թ. ապրիլի 6-ին գյուղի 60 տղամարդիկ սպանվում են, այնուհետև լկվում և անպատմելի չարչարանքներով նահատակվում են կանայք և երեխաները (Մխիթարեան Օ., Վանի հերոսամարտը, էջ 126): Եղեռնից ինը տասնամյակ անց էլ Աստվածաշենի (այժմ՝ Զավուշթեփե) ամենամեծ շինությունը Վարդանի պահպանված երկհարկանի տունն է իր ընդարձակ պարտեզով, որը գյուղացիները ցույց են տալիս այցելողներին (Սերովբեան Ս., Ուխտաւորի ճամբաներով, «Ակօս», Ստամբուլ, 13 հոկտեմբերի, 2006թ.):

քուրդ խառն էին ապրում: Էդ գյուղերից շատ քիչ հայ փրկվավ, մեծ մասը կոտորվեց: Ոստանը գյուղաքաղաք էր, մեր գյուղեն հեռու էր, կունենար 20-25 հազար մարդ:

ՀՈՐԵՂԲՈՐՍ ԵՂԵՐԱԿԱՆ ՎԱԽՃԱՆԸ

Այսպիսով, մայրս իր հոգսերը թեթևացրեց: Հազիվ էին ուրախացե, երեխայի ծաղիկի հիվանդություն եկավ: Ո՛չ դեղ կա, և ո՛չ էլ դարման: Փոքրիկներ շատեր մեռան, մեռավ նաև մեր Ղազարոսը:

Կրկին մեր տուն սուգ ու լաց է, նամանավանդ՝ մեր գյուղացի Աբաջի Մուրադի տղան եկավ Բուլղարիայից, իր հետ բերեց իմ հորեղբայր Դալի Մկրտիչի ժամացույցը և հինգ ոսկի փողը, տվեց Ոսկոյին:

Դեպքը այսպես է եղած. հորեղբայրս Պոլիսում կմտնի Հնչակյան կուսակցության[85] մեջ, կբռնվի, կաշառքով կփախնի բանտից, և նույն կաշառակերը փախցնելու ատեն հետևից կզարնի:

Հորեղբայրս չի մեռնի, կազատվի, կուսակցությունը նրան կփոխադրի Բուլղարիա, բայց Բուլղարիայում կմեռնի, և այս սուգը ավելացավ մեր փոքր Ղազարոսի սուգի վրան:

[85] Հնչակյան կուսակցությունը հիմնվել է 1887թ.՝ Ժնևում: Հիմնադիր ղեկավարներն էին Ա. Նազարբեկյանը, Մ. Նազարբեկյանը, Գ. Կաֆյանը, Ռ. Խանազատը: Կուսակցության կենտրոնական օրգանը «Հնչակ» թերթն էր: Հնչակյան կուսակցության գաղափարախոսության և գործելակերպի վրա ազդել է ռուս հեղափոխական նարոդնիկությունը: Հնչակյան կուսակցության ծրագիրն էր՝ թուրքական լծից ազատագրել Արևմտյան Հայաստանը և միավորել հայկական հողերը, ստեղծել անկախ հայկական պետականություն, հասնել սոցիալիստական հասարակարգի: Թուրք բռնակալների դեմ պայքարելու նպատակով հնչակյանները 1890-ական թվականներին կազմակերպել են մի շարք զինված ելույթներ (Զեյթունում, Սասունում) և ցույցեր (Գում-Գափուի՝ 1890թ., Բաբ Ալիի՝ 1895թ.):

ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ԱՎԵՐՈՒՄԸ

Անցան օրեր, ամիսներ և տարիներ: Հասանք 1895 թվականին: Ձմեռն անցեր է, այժմ ամառ է, ցորեն հասած է, գութաններ կաշխատեն, ցորեն կքաղեն, կալեր կկալսեն:

Հունիսի մի գիշեր հանկարծ կարծես երկինք և երկիր խառնվեցին իրարու: Ոստանի Խուրշուդ աղան՝ իր աշիրաթով և փեսան՝ Մուլք գյուղի Հուսեյին աղան իր աշիրաթով, գիշերով հարձակվան մեր գյուղի վրա: Սուլթան Համիդը հրաման է արձակել, որ ինչքան կարող են հայերին կոտորեն, թալանեն: Տասը տարեկանից վեր սպանեն մինչև հարյուր տարեկան, և կանանց ձեռք չտան:

1895 թ. հունիսի առաջին կիրակին էր. մեր գյուղը տակնուվրա եղավ:

ԻՄ ԽԱՂԸՆԿԵՐ ԱՏՈՄԸ

Այդ գիշեր մինչև լույս հրացանի ձայներ, ժողովուրդի լաց և աղաղակ մինչև երկինք բարձրացան: Ջիբոն անմիջապես մեր հարևան քուրդերին կհրամայի, որ հայերին հավաքեն գյուղից դուրս՝ իրենց մարագները:

Հավաքեցին երկու մարագում, մեկը՝ Ջիբոյի, մեկը իր Ահմադ ախպոր, և հանդապահ Յաղուբն էլ իրանց հետ պահակ կանգնան, որ ոչ ոք չգա այդ կողմը: Մենք Ջիբոյի մարագն էինք, գիշերն անցավ:

Գասպարին կանացի հագուստ հագցրին, տարան մարագի մութ անկյունը՝ կանանց մեջ, իսկ իմ խաղընկեր Ատոմը, որ տասնվեց տարեկան էր ու վերևի պռունկը սևացել էր, նրան էլ կանացի հագուստ հագցրին, տարան կիների մեջ: Մեր հարևան քուրդերը և կիները մեզ հաց ու ջուր կբաժանեին:

Երկրորդ օրն էր: Ջիբոն և իր եղբայրը գնացին հաց ուտելու: Մենք՝ փոքրիկներս, մարագի առաջ կալատեղ կխաղայինք:

Հանկարծ երկու քուրդ եկան և սկսեցին կիների երեսի թաշկինակները բացել, որ հասկանան մա՞րդ է, թե՞ կին: Էն մեկը Ատոմի երեսը բացավ և տեսավ տղա է: Քաշկռտեց կալատեղ, որ սպանի: Մեր և իր դժբախտ մոր ճիչն ու աղաղակը Ջիբոն լսեց, վազեց, եկավ, բայց մինչև Ջիբոյի հասնելը, Ատոմի շորեր հանեցին և մի դաշույն խփեցին: Ատոմը վիրավոր իրեն գցեց Ջիբոյի գիրկը, և միշտ ասում էր. «Քեռի՛, մի թողնի ինձի սպանեն»: Ջիբոն մի ձեռքով Ատոմին գրկած էր և մի ձեռքով քուրդին կհեռացներ: Էն մյուս քուրդը Ջիբոյին գրկեց, իսկ էն մյուսը Ատոմին դաշունահարեց: Ատոմ ընկավ, մյուս քուրդը մի մեծ քար բարձրացրեց, խփեց, Ատոմի գլուխը ջարդվավ:

Ատոմի մայրը ընկավ տղայի դիակի վրա և մեռավ:

Ահմադը, որ այս ձայները կլսի, հացից վեր կելնի և հրացան կվերցնի, կգա: Հասավ էն ժամանակ, որ երկու քուրդեր կուզեին փախնել: Հրացանը կրակեց, և Ատոմի սպանողը սատկավ: Էն մյուսը փախավ գյուղի մեջ: Այս ամենը ես իմ աչքերով տեսած եմ:

Երրորդ օրն է. Ահմադը Ջիբոյին լուր կուտա, որ սարից ձիավորներ կուգան դեպի գյուղը: Ջիբոն կերթա առաջ, տեսնա, թե ովքեր են եկողները: Ձիավորներ կուգան աղբյուրի մոտ և կիջնեն ջուր խմելու: Ջիբոն կհասնի, կտեսնի մի մոլլա է և կացինով զինված երեք երիտասարդներ:

Կբարևի և մոլլան Ջիբոյին կհարցնի. «Կյուրեղի Հակոն որտե՞ղ է»:

Ջիբոն կասի. «Աղա՛, Հակոն երեք տարի է չկա, բայց կինը մեր մարագում գյուղացիների հետ է»:

Կուգան, կհասնեն մարագի դուռը, Ջիբոն կանչեց. «Հակոյի՛ կնիկ, արի դուրս, քեզի ծանոթ մարդ է եկած»:

Մայրս իմ ձեռք բռնեց, մարագից դուրս ելանք: Երբ որ մայրիկս մոլլին տեսավ, իմ ձեռս թողեց և ընկավ մոլլի ոտները՝ համբուրելու: Մոլլան մայրիկիս ձեռք բռնեց, բարձրացուց և ինձի գրկեց, այնպես կլացեր, որ իր արտասուքն իմ երեսը կթրջեր, կլացեին բոլոր ներկաները:

Մի քիչ հանգստանալուց հետո մոլլան ասաց. «Ո՞վ կա ձեզանից մարագում»:

Մայրիկս ասաց, որ քրոջ տղան է և տեգերկինը, կանչեցին: Գասպարը եկավ, կանացի շորերը հանեցին: Ոսկոն էլ եկավ, և գնացինք Ջիբոյի տուն՝ հաց ուտելու: Հացից հետո Ջիբոն գնաց՝ պահակ կանգնելու: Ես և մայրիկս քնանք: Մոլլան և տղաներ սկսեցին իրենց աղոթքը՝ «Քուրդերի բարի Աստծուն, որ այսպես բարի և ողորմած սուլթան՝ թագավոր է տվել իրենց»:

ՄԵՐ ԳՅՈՒՂԸ՝ ԹԱԼԱՆՎԱԾ

Լույսը բացվավ: Աստծո արևը ծագել է հայոց արնաներկ աշխարհի վրան: Մոլլան կանչեց Ջիբոյին, որ երթանք գյուղի հավաքված տավարների մեջ, տեսնանք մեր եզներից, գոմեշից և ոչխարներից կարո՞ղ ենք ճարել:

Գնացինք և ի՜նչ տեսանք, մի մարդ նստած է աթոռի վրա՝ սուրը կողքին երկար կախած, տաճկական հրացան ծունկերի վրան դրած, ամբողջ մեր գյուղի տավար-ոչխար հավաքած են մի մեծ արտի մեջ: Եվ կբաժանեն իրենց մեջ, Ջիբոն ասաց մոլլին, որ այդ նստած մարդը Ոստանի Խուրշուդ աղի եղբայր Թահիր բեկն է:

Մենք մտանք այդ խառնիխուռն տավարների մեջ: Ոչինչ չի տեսնվի, գոմեշներ կկռվեն, տավար-ոչխար ոտքի տակ կսատկի, փոշին բարձրացել է մինչև երկինք: Մինչև ճաշ հազիվ կարողացանք մեր երկու եզը, մեկ էշը և քսանհինգ ոչխարը ճարել:

Մոլլան իմ մորս ասաց. «Երթա՛նք ձեր տուն»: Եկանք, հասանք մեր տունի առաջ, տեսանք երկու քուրդ և երկու եզ մեր տունի առաջն են: Նույն վայրկյանին մի քուրդ՝ մեր տունից մի կարպետ և մի թաղիք ձեռին, դուրս ելավ: Մայրիկս ուզեցավ կարպետը քուրդի ձեռքից առնել, քուրդը մայրիկիս հրեց,

մայրս ընկավ գետին: Մոլլայի մեծ տղան՝ Աբուբաքրը այս տեսնելով իր թաբարով[86] որ զարկեց, քուրդի գլուխը թռավ էն կողմը: Մենք մտանք մեր տունը, քարուքանդ էին արել, ալյուրի փեթակը կոտրել էին, բայց ալյուրը չէին տարել:

Մոլլան ասաց մայրիկիս. «Ուրիշ տեղ ցորեն-բան ունի՞ք»: Մամես ասաց. «Ցորենի մեծ հորը մարագումն է»: Գնացինք, ցորենը հանանք և մեր եզներ, քուրդի երկու եզներ, ալյուր և ցորեն բարձանք, ընկանք ճանապարհ:

ԴԵՊԻ ԱԲԶԵՅՆԻ[87] ԳՅՈՒՂԸ

Առավոտ շուտ մեր քարավան ճանապարհ ընկավ: Առաջից կերթար մոլլան, ես նստած էի էշի վրան, մայրիկս և հորեղբորս կինը, էշի սանձը բռնած, կերթայինք: Գասպար եզներ կտաներ, մոլլայի երեք տղաներ հետևից կուգային: Ջիբոն մինչև գյուղի տակ եկավ: «Մնաս բարի, երթաք բարի» ասացին: Ջիբոն վերադարձավ ժողովուրդին պաշտպանելու: Գյուղից ճիչ և աղաղակ կլսեինք, մեր առաջից կերթային տասնմեկ սայլ՝ բարձած գյուղի ավարը, ինչպես մենք խոտ կբառնայինք այս սայլերին: Մեզի ծուռ-ծուռ կնայեին՝ գիտնալով, որ մենք հայ ենք, չէ՞ որ մեր հագուստը կտարբերվեր քուրդի հագուստից:

Մի ժամ չանցած՝ նրանք բաժանվան դեպի Ոստան, մենք մեր դաշտի ճանապարհով առաջ կերթանք: Ճանապարհի երկու կողմերի ցորենները մի մետրի չափ բարձրացել են, քաղող չկա: Հեռվից տեսանք երկու մարդ ցորենի արտի մեջ կռվում են: Քիչ հետո մի մարդ ցորենի արտից դուրս եկավ: Կուգա դեպի մեզի: Հասավ մեզի, մոլլան կանգնավ, մարդու ձեռքերը և հագուստը արյունոտ էին:

[86] Թաբար-կացին:

[87] Աբզեյնի նշանակում է մաքուր ջուր: Շատախի գավառակի Ավզնի գյուղի անվան հնչյունափոխված տարբերակն է (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 363):

Մոլլան հարցրեց. «Այդ ի՞նչ արյուն է»: Մարդը հանգիստ պատասխանեց. «Մի հատ գյավուր[88] սպանեցիմ»: Մոլլան ասաց. «Ի՞նչ էր արել քեզի այդ գյավուրը»: Ասաց. «Ոչինչ, Սուլթանի հրամանն է, որ հայերին սպանենք»:

Մոլլան ասաց. «Ես ի՞նչ եմ»: Մարդը ասաց. «Դու մոլլա ես և փեղամբարի վաքիլը[89]»: Մոլլան ասաց. «Ուրեմն՝ ես թագավորից բարձր եմ: Բաքը՛ր, մի հատ խփիր»: Բաքըրը մի թաբարի հարվածով գլուխը կտրեց:

Մայրիկս խնդրեց, որ երթա, տեսնի գուցե իր ամուսինը՝ Հակոբն է, ես և մայրս գնացինք:

Դեռ կչարժվեր, մեր խեղճ դրացի Ահարոնն էր: Լացելով եկանք և շարունակեցինք մեր ճանապարհը: Հասանք մեր սահմանի վերջը, որ պիտի մտնենք Սիսեռկա կալեն[90]:

Մտանք կիրճը: Երկու կողմերից բարձր ժայռեր են, մեծ-մեծ քարայրներով: Մեջից հսկա գետն է հոսում: Մի բարակ ճանապարհ է և բարձունք:

Կալուց դուրս ելանք, մեր առջև մի գեղեցիկ դաշտ է և մարգագետիններ: Մոլլան ասաց՝ հանգստացեք, մի պատառ հաց ուտենք:

Մեր նստած տեղը մի մեծ քար կար. քարի տակից շատ առատ ջուր էր թափվում, իսկ քարի կողքին մի ծառ կար, որին կապած էին շորի պատառիկներ:

Մայրիկս էլ մի պատառ շոր կապեց, ես բարձրացամ քարի վրան՝ խաղալու: Հանկարծ մի խումբ քուրդեր եկան, որ անցնեն: Մեկը հրացանն ուղղեց, որ ինձի սպանի, մայրիկս

[88] Գյավուր-անհավատ, ոչ մահմեդական:

[89] Փեղամբերի (փեյգամբերի) վաքիլ -մարգարեի ներկայացուցիչ:

[90] Սիսեռկա կալե–Սիսեռկա-գէլին, այսինքն՝ Սիսեռկա ձորը գտնվում էր Շատախի գավառակում, ինչպես գրում է ականատեսը. «Վանէն Շատախ երկարող խճուղին կ՚անցնի «Սիսեռկայ գէլի»-էն, 15 քիլոմէտր երկարութեամբ, անտառապատ է, ժայռուտ, նեղ ու մթին, 30-է ավելի քարանձաւներով» (Սօս-Վանի, Ճանչնանք մեր հայրենիքը. «Վասպուրական մեր աշխարհ», Աթէնք, 1938, էջ 106):

ճչաց, ինձի գրկեց, մոլլի տղան՝ Զհանգիրը, հասավ և մի հարվածով քուրդին սպանեց, մյուսներ փախան:

Մենք ելանք ճանապարհ և հասանք մոլլի գյուղը:

Բոլոր գյուղացիք եկած էին՝ ընդառաջելու մոլլային:

Գիշերը մոլլան կանչեց իր երկու հարսներին և կնկանը, պատվիրեց, որ միասին աշխատենք. մայրս խմոր անի, հորեղբորս կինը հաց թխի, իրենք ոչխարի և ուրիշ գործերը անեն, Գասպարը հովիվի հետ երթա սարը, ես և իր թոռ Համիդը գառնարածի հետ երթանք՝ խաղալու գյուղից դուրս:

Այսպիսով՝ մեր կյանքը կանցներ: Օր մը ես, Համիդ և երկու քուրդի տղաներ ճան կխաղայինք, մենք նրանց ճաներն ու ընկույզները տարանք: Մեկը ինձնից մեծ էր, ուզեցավ ճաները իմ ձեռքից առնել և խաչը հայհոյեց: Ես մի քար վերցրիմ, խփեցիմ, նրա գլուխ կոտրվավ: Նա իր գլուխ բռնեց, գնաց դեպի իր հայրը: Ես և Համիդ փախանք դեպի մեր տուն: Վախեցած լացելով ընկամ մոլլի գիրկը, Համիդը եղելություն պատմեց: Մոլլան ինձի գրկեց, համբուրեց և ասաց. «Մի՛ վախենա»: Չէ՞ որ ես երկու մարդ տեսամ, որ սպանում են: Մեկը իմ ընկեր Ատոմը, մեկ է՝լ Ահարոնը: Շատ կվախնայիմ արյունից:

ՆԱՄԱԿ ՄԵՐ ԳՅՈՒՂԻՑ

Ամառ անցավ: Հասանք ձմեռվան, քուրսիներ դրեցին, մտանք տակը մինչև գարուն: Գարնանը մոլլան մի թուղթ գրեց, տվեց իր ծառա Հուսեյինին, որ տանի տա Զիբոյին: Հուսեյինը մի շաբաթից վերադարձավ, ես և մայրիկս անհամբեր էինք, որ տեսնանք Զիբոն ի՞նչ է գրած մեր գյուղից:

Զիբոն գրած էր. «Հակոբից լուրը այսքանն է, քեռին որ քաղաք կաշխատեր, եկած է գյուղ և կովից առաջ տեսած է, որ Հակոբը մի քարավանի հետ գնացեր է, քարավանի ծառա

է եղած: Իսկ գյուղի կանայք հավաքված են իրենց քանդված տունները, գետնի տակ թաքցրած ցորեն և գարին կհանեն և երկանքով կաղան, ալյուր կշինեն և ես կբաժանեմ: Գյուղում ո՛չ եզ կա, ո՛չ էլ արոր, այդ անաստված թահիր բեկը բոլոր գութաններ և արորներ հավաքեց Տերտերի կալատեղը և վառեց: Էն դժբախտ շալագործ Մնոյի Հակոբին բերին, իր կնկա ու տղայի առաջ գցեցին, կրակի մեջ վառեցին: Մինչև այժմ սարերի և արտերի մեջեն վաթսուն և ութ մարդու ջանդակ[91] ճարած եմ և տեղնուտեղը խորած: Այսքանը: Քո ծառա Զիբրայել Ահմադի»:

ՄՈԼԼԱ ԹԱՀԻՐԻ ԱՐԴԱՐ ՎՃԻՌԸ

Այսպիսով, մի քիչ մորս արտասունքը պակասեց: Գիշերվան այդ գյուղի քուրդերը և այդ գլուխ կոտրած տղան, իր հայրը եկան մոլլայի մոտ՝ գանգատվելու: Բոլորը նստան տան սրահի պատերի տակ, մեկը անոնցմե բարձրացավ խոսալու և ասաց՝ «Մեր գլխու տեր և տիրական, և Հազրաթե Մուհամադ Փեյղամբարի վաքիլ Թահիր աղա մոլլա Թահիրի, թագավոր հրամայած է հայերին կոտորեն, իսկ դու հայերին բերած ես, կպահես, որ մեր տղաների գլուխը քարով ջարդեն»: Եվ առաջ բերավ գլուխ կապած տղան և իր հայրը: Մոլլան ասաց. «Առա՛ջ եկեք»: Հայրը և տղան առաջ եկան, մոլլան կանգնավ քարոզի և այսպես ասաց. «Ո՛վ իմ հավատարիմ քուրդեր, իմ տունը և իմ սերունդը այս գյուղի հոգևորականն է եղած, ես Ստամբուլում չորս տարի թե՛ աշխատամ և թե՛ Ղուրան կարդացիմ, մեր Հազրաթ Փեյղամբարը ոչ մի տեղ չի գրած, որ գիրք ունեցողը քաֆար[92] է: Ե-

[91] Ջանդակ-մեռածի մարմին, դի:
[92] Քաֆար-անօրեն:

թե մենք ունինք Հազրաթե Մուհամադ Ռասուլոլլահ[93], ապա հայերն ունին Հազրաթե Իսա Ռուհոլլահ[94], ունին իրենց Ինջիլը[95], որ մեր Ղուրանի պես սուրբ է: Ինչպե՞ս կլինի, որ հայը քաֆար լինի: Իմ ազիզ եղբայրներ, այս երկիրը մերը և հայինն է եղած, մենք և հայեր թագավոր ենք ունեցել, աղջիկ ենք տվել իրարու, թուրքը եկավ և մեզի բաժանեց ու թշնամացրեց, որ ինքը հանգիստ տիրանա մեզի: Այս զուլումը կվերջանա և հերթը նաև կուգա մեզի»: Տղայի հորը ասաց. «Եկե՛ք առաջ»: Եկան: Տղային ասաց. «Խաչը ի՞նչ է, որ դու հայհոյել ես»: Տղան ասաց. «Իմ բաբոն կհայհոյեր, և ես էլ հայհոյամ»: Ասաց. «Ո՛վ քուրդեր, լսեցի՞ք»: Ամեն ասին. «Այո՛»: Ասաց. «Ֆախկի[96], սրա թևեր բռնի»: Ֆախկին մարդու թևերը բռնեց, և մոլլան իր փայտով սկսեց ծեծել, բոլորը մեջ ընկան, մոլլի ձեռքը համբուրան, մարդուն ազատեցին ու գնացին: Բայց այդ մարդու սրտի մեջ մնաց քուրդի վրեժը:

ԼՈՂՄԱՆԻ[97] ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

Այդ գյուղը երկու աղբյուր ունի՝ մեկը գյուղի մեջն է, իսկ մյուսը, որ շատ առատ ջուր ունի, գյուղից մի քիչ հեռու է: Գյուղի միջի աղբյուրը ցամաքեց: Աշուն է, մոլլի կինը՝ Այիշե խանումը, ասաց. «Երվա՛նդ, այդ կուժը առ, վազի աղբյուրից պաղ-պաղ ջուր բեր»: Ես կուժը շալակամ և վազեցիմ ջուր բերելու: Շատ ուրախ էիմ, որ Այիշե խանումի ինձի ուղարկեց ջուր բերելու, չէ՞ որ ինձի չոր դեղին սեր կուտար: Հասամ

[93] Ռասուլոլլահ-Աստծու ուղարկած:
[94] Նկատի ունի Հիսուս Քրիստոսին:
[95] Ինջիլ-Նոր կտակարան:
[96] Ֆախկի - կրոնի գիտակ:
[97] Լողման-բանահյուսության մեջ հռչակավոր բժշկի անուն, որ իբր բուժում է բոլոր հիվանդությունները:

աղբյուրին, մի պառավ կին ամանը լցրեց, քաշվավ, ես լցրեցիմ և կուժը շալակամ: Հասամ այդ կնկան և անցամ: Այդ տղայի հայրը առաջս կտրեց, ծամերիցս բռնեց, դաշույնը քաշեց, որ խփի: Այդ կինը հասավ, մարդուն հրեց այն կողմը: Ես ճիչ արձակեցիմ, կուժը ընկավ, կոտրվավ, ես հազիվ հասամ տուն և ուշագնաց եղամ: Զգիտեմ՝ որքան մնացեր եմ ուշագնաց: Աչքերս բացիմ, տեսամ, որ մայրս է, Այիշե խանումը և էդ պառավ կինը: Գլխուս մոտ նստած խոսում են:

Ես ջուր ուզեցիմ, ինձի մի թաս թան տվեցին, խմեցիմ և նստամ: Այդ կինը եղելությունը պատմած է ամենին: Նա թե՛ շեյխի աղջիկն էր, և թե՛ այդ գյուղի ռեսի կինը: Մյուս օրը մոլլան և էդ ռեսը ձիեր կհեծնան, կերթան՝ մեծ շեյխին գանգատվելու: Մեծ շեյխը՝ Աբութալեբը, կկարգադրի ռեսին, որ ծեծելով այդ մարդուն գյուղից վռնդեն, եթե կհակառակվի՝ սպանեն:

Եկան, մարդուն ծեծեցին, ինչ-որ ուներ շարժական, հավաքեցին տարան: Տունը և հողերը մնաց շեյխի գյուղի Գոնբաթ[98] աղոթատեղիին:

Ես չեմ լավանա, այդ կինը Այիշեին և մայրիկիս կասի, որ մի գառ մատաղացու վերցնեն, երթան, մատաղ անեն Գոնբաթում, շեյխը աղոթի և գիր անի, կլավանա, որովհետև Գոնբաթը հրաշագործ է:

Մյուս օրը մի թաղիք գցեցին մեր էշի վրա, ես նստամ և գառը դրեցին գիրկս: Ես, մայրս, Այիշե խանումը և այդ կինը ճանապարհվանք դեպի Կորանդաշտ՝ շեյխերի գյուղը:

Կորանդաշտի ամբողջ գյուղը շեյխեր են, չեն աշխատում և մի հոյակապ աղոթատեղի ունին, որ Գոնբաթե Կորանդաշտ կըսեն: Մի ժամվա ճանապարհ է, հասանք: Այդ կինը գնաց, իր եղբայր շեյխը բերեց, բոլորս կարգով շեյխի ձեռքը համբուրեցինք: Շեյխը մետաքսե երկար և ճերմակ հագուստ էր հագած: Մի բամբակից թել առավ, աղոթելով և յոթ հան-

[98] Գոնբաթ-գմբեթ:

գույց անելով՝ կապեց իմ ձախ ձեռքը և մի թուղթի վրա նշաններ անելով՝ տվեց մայրիկիս, որ կախի իմ սրտիս վրա: Այնուհետև գառի ականջից մի փոքր արյուն առավ, քսեց իմ երեսը և գլուխը, որ չարերը հեռանան: Վերջացավ: Կինը շեյխի հետ գնաց: Ես, մայրս և Այիշե խանումը եկանք տուն: Անցավ մի երկու շաբաթ: Ես չեմ առողջանում, շեյխի թալիսմանը[99] օգուտ չբերավ, ես օրեցօր նիհարում եմ, հաց չեմ ուտում, բայց ջուր շատ կխմեմ:

Խեղճ մայրիկս միշտ կարտասվի և աղոթք կանի: Այդ կինը, չգիտեմ՝ ինչ էր խոսացել մայրիկիս և Այիշե խանումի հետ: Մի գիշեր ես ջուր ուզեցիմ, մի անհամ և շոռ ջուր տվեցին ինձի, մի քիչ խմելուց հետո ես սիրտս հետ տվեցիմ՝ շա՛տ և շա՛տ, պառկամ, քունս տարավ: Լույս բացվեց, աչքերս բացեցիմ, տեսամ մայրիկս և Այիշե խանումը նստած են իմ մոտ: Ես ասեցիմ՝ անօթի եմ, անմիջապես Այիշե խանում գնաց, մի քասա[100] ոչխարի մածուն և մի հացի չափ չոր սեր բերավ, ես այդ չոր սերը և էդ քասա մածունը կերամ, պառկեցիմ մորս ծունկի վրա, քունս տարավ և լավ քնեցիմ: Օրեցօր ես առողջացամ, հետո իմացամ, որ Համիդի շեռը խմցրած են ինձի: Այդ պառավ կնոջ կարգադրությունն է եղած և ասած է, որ այդ դեղը հեքիմ Լողմանից է մնացել իրենց մեջ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐՈՒՄ

Օրեր, ամիսներ անցան: Եկավ աշունը, երկրորդ աշունն է: Մոլլան մի թուղթ գրեց, տվեց իր ծառա Հուսեյինին, որ տանի, տա Ջիբոյին: Հուսեյինը գնաց և մի շաբաթից եկավ, թուղթը տվեց մոլլային: Մայրս, ես և Այիշե խանում գնա-

[99] Թալիսման-ըստ սնոտիապաշտական պատկերացումների, չար աչքից, փորձանքից փրկող, բախտ շնորհող գիր, առարկա՝ թալիսման:
[100] Քասա-կավե խոր աման:

ցինք մոլլայի օդեն, որ Ջիբոյի թուղթը կարդա, լսենք՝ ի՞նչ է գրած Ջիբոն: Զէ՞ որ քուրդերեն գրված է, մենք լեզուն կհասկանանք, նամակը այսպես էր գրված.

«Քո ոտքը և ձեռքդ համբուրող Ջիբոյից սալամ, աղա՛, և մեր գլխի տեր մոլլա Թահիրին. Սուլթանը «Աֆ» է արել, ներած է, և ով որ քաղաքն է եղած՝ սաղսալամաթ եկան գյուղ: Նրանց մեջ են ռես Խաչոն, հալեպցի Մկրտիչը, Թանկոյի Ավետը, Տանտանի Նշանը և իր եղբայր Պողոսը, Կուլանի Սրկոն, տերտերը և իր տղան՝ Մարկոսը և Մուքոյի Բարսեղը: Աղա՛, Հակոբից լուր չկա, երևի գրած եմ ձեզի, որ Հակոբը մի քարավանի ծառա է եղած, այսքանը:

Քո ոտքի հողը՝ Ջիբոյե Ահմադի»:

Մայրս կրկին լացեց, ես էլ լացեցիմ, ելանք, գնացինք տուն:

ՎԵՐԱԴԱՐՁ

Այդ աշունն էլ անցավ: Երկար ձմեռը քուրսիների տակ անցկացրինք: Մոտեցավ գարունը: Մոլլան կանչեց մորս և ասաց. «Պատրաստվե՛ք, ձեզի ճանապարհեմ ձեր տուն»: Փետրվարի վերջն էր: Մոլլան մի սայլ բերել տվեց, վրան չորս պարկ ցորեն, գարի դրեցին, մի արոր ու լուծ, և քուրդից առած մեր երկու եզը ալյուր բարձին: Մոլլան ասաց. «Այդ եզները ձեր գյուղացունն է, տարեք, տվեք տիրոջը, հարամ մալ է», և մի կով տվեց իր կովերից: Մեր էշի վրա գցեցին չորս թաղիք և չորս կարպետ: Մոլլի հարսները աման, պուտուկ, քասա, գդալ, աղ և շատ բաներ բերին, դրին սայլի վրա, նաև մեր կովի երկու հորթերը և ոչխարները, որ քսանհինգից շատացած, եղած էին երեսունչորս հատ: Այսպիսով՝ մեր քարավանն առտուն կանուխ ճանապարհ ընկավ դեպի մեր քանդված գյուղը: Մինչև մեր գյուղը մեզ հետ եկած մոլլան, Այիշե խանումը, Ջհանգիրը, Հուսեյինը մեզի

պիտի տանեին, հանձնեին Ջիբոյին: Եկած էր նաև իմ ազիզ խաղընկեր Համիդը: Մոլլայի գյուղը ցածր դաշտ է, ամեն քայլափոխին գարնանային ցեխ և ջուր է, մոլլան իր երկու գոմեշներ լծեց սայլին՝ մինչև Սիսեռկա կալեն հասնելը:

Մեր քարավանը շարժվեց: Գասպարը սայլ կտաներ, մայրս և հորեղբորս կինը տավարներ և ոչխարներ կտանեին, ես նստած էիմ էշի վրա: Մեր քարավանը հասավ էն սուրբ ծառին և էն քարին, որ ինձի պիտի սպանեին: Մոլլան հանգիստ հայտարարեց, ասաց. «Նստե՛ք, հաց կերեք»: Հանգստից հետո մեր եզների բեռներ դրեցին սայլի վրա և մոլլի գոմեշներ արձակեցին, մեր եզներ լծեցին սայլին: Արդեն բաժանվելու ժամն է: Մայրս և Այիշե խանում գրկախառնված կլացեն, ես և Համիդն իրար գրկած կլացենք: Մոլլան կանգնած է հեռու, կլացի: Վերջապես մոլլան ասաց. «Բավակա՛ն է, ճանապարհվեք»: Մեր երթալու ատեն՝ ես տեսամ, որ Այիշե խանումը մի թաշկինակով 15 ոսկի դրեց մայրիկիս գրպանը և ասաց. «Խարսե՛, քեզի պետք կուգա»: Մենք ընկանք մեր ճանապարհը: Երբ կալուց դուրս ելանք, տեսամ մեր սարը և շատ ուրախացամ: Ջհանդիրը մի հրացան արձակեց և իր սպիտակ նժույգը դարձուց, արտերի մեջ խաղացրեց: Այժմ մեր հողն է և մեր արտերը: Շատ չանցած՝ տեսանք մի սևություն արտերի մեջեն կուգա դեպի մեզ, եկան հասան, մեր գյուղի կանայք էին, ռես Խաչոն և Ջիբոն երկու գոմեշ լծած մի գութան և մի արոր կբերեն: Մայրս ռես Խաչոյի ձեռքը համբուրեց և հարցրեց. «Այս ի՞նչ գութան և արոր է»: Ռես Խաչոն ասաց. «Սանամե՛ր, մերոնք են: Եղբայրս՝ Ղազարը և մեր հոտաղը[101] սպանեցին, տավարներ տարած են, գնացինք փոս մը փորեցինք, երկուսին էլ մի փոսի մեջ թաղեցինք, ձեռք տալ չէր՛լինի»:

Այսպես խոսալով հասանք գյուղը, գնացինք մեր տունի առաջ, դուռը տարած էին, և տունը քարուքանդ էին արած, հողից շինած ամանները, բոլոր կոտրատած էին:

[101] Հոտաղ-գյուղացու մոտ վարձով աշխատող մշակ:

Ռես Խաչոն ասաց. «Սանամե՛ր, այս դիշեր եկեք մեր տունը հանգստացեք, վաղը կհավաքվենք, ձեր տունը կմաքրենք, նոր կքաշվեք ձեր տունը»: Այդպես էլ արեցինք, առավոտուն գյուղի կանայք եկան մեր ալյուրի ամբարը, որ կոտրած էին, տարան թափեցին դուրս: Տունը մաքրան, թոնիրը մաքրան, Տեր Հովհաննեսը եկավ օրհնեց, խունկ ծխեցին, մայրիկս խմոր արեց, հաց թխեց ու մեր տունից հացի հոտ դուրս ելավ: Եվ այսպիսով կամաց-կամաց սկսեց մեր քանդված գյուղը կյանք առնել:

Այս եղավ 1898 թվականը, մեր տերտերը եկեղեցու գաղտնի պահարանի մեջ եկեղեցու սրբությունները պահած ատեն երկու կուժ վառելու ձեթ պահած կլինի, կբաժանի գյուղացիներին, որ ճրագները վառեն: Մի ամանով ձեթ էլ մեզի ուղարկեց: Մայրս պատրույգ շինեց և ճրագը վառեց, ուրախացանք: Հանկարծ երկու ուրվականի պես մարդ մտան մեր տուն և սկսեցին մորս ձեռք, ոտքը համբուրել, մայրս վախեցավ, էն մեկն ասաց. «Ազի[102], ես Օքսենն եմ, էս էլ իմ հայրս՝ Խաչոն»: Մենք բոլորս էլ այս տեսարանի վրան լացեցինք: Ի՞նչ հալի են ընկած, ոչ հագուստ ունին և ոչ էլ ոտնաման, գլուխների մազերը և երեսներինը խառնվեր են իրարու և աչքերնին չի երևում:

Մայրս արտասուքն աչքերին նրանց հաց տվեց, կերան: Գնացին գոմը՝ հանգստանալու: Առավոտուն սարերից եկավ իմ հորաքրոջ փախած մարդը՝ Գոմեշ Հոխան և իր տղան՝ Մանուկը, հորաքույրս բերեց մեր տուն, շատ ուրախացանք: Մի քանի օրը այսպես անցավ:

Մի օր մեր գյուղի դաշտապան Յաղուբը Ջիբոյին կասի, որ մի տեղ մի արոր է տեսել և արորի մոտ երկու սպանված մարդ: Լուրն ընկավ մեր գյուղը, թե՛ կին, թե՛ մարդ գնացին տեսնալու, թե ով են այդ մարդերը: Ես և մայրս էլ գնացինք, հասանք, և ի՛նչ սարսափելի բան տեսանք... այսպես

[102] Ազի-մայր, հորեղբոր կին, տարեց կնոջը տրվող հարգանքի անուն:

էր՝ Փափախ Ավոն և իր տղան՝ Մանուկը, լծած են եզների տեղ և նրանց սպանած են: Երկու ամառ և երկու ձմեռ այդպես լծված մնացած են: Մանուկի մայրը՝ Խուռիկը, որ իր տղային տեսավ, մի ճիչ արձակեց, ընկավ ու տեղում մեռավ: Կինները նրան շալակեցին տարան, մարդիկ բահերով մի փոս փորեցին, երկուսին էլ հրեցին էդ փոսի մեջ ու հողով ծածկեցին: Արորը առին, եկանք գյուղ:

Աշխատողներ եկած են գյուղ, բայց եզ և գոմեշ չկա, որ աշխատեն: Մայրիկս կերթա քավոր Խաչոյի մոտ, կասի. «Քավո՛ր աղա, իմ երկու տեքրերը և մեր փեսան՝ Գոմեշ Հոխանը, եկած են: Ես հինգ ոսկի փող ունիմ, տուր Ջիբոյին, երթան Ոստան և Մուլք[103] գյուղերը մեր եզներ և կովեր առնեն բերեն»: Ռես Խաչոն Ջիբոյին կկանչի և հինգ ոսկի կուտա իր եղբայր Ահմադին ու դաշտապահ Յաղուբին, որ երթան եզ և գոմեշ կամ կովեր առնեն ու բերեն: Գնացին, մի շաբաթից եկան, բերած էին ութ եզ, չորս կով և մի գոմեշ: Նախկինի նման, որ միություն էին կազմել, նույնպես շարունակեցին:

Վերջապես հասանք 1904 թվականը: Մեր գյուղից սպանված 72 մարդ կհաշվեին: Իմ հայրս այդ թվի մեջ չկար, բայց ես էլ որբերի շարքում էի: Ուրեմն 112 տղա որբ կայինք մեր գյուղը, աղջիկներից բացի, որ մեզնից շատ էին: Խաչոն, Մկրտիչը, Ջիբոն գյուղի գործին հավասարապես կնայեին:

---

[103] **Մուլք (Մյուլք)** գյուղը գտնվում էր Վան քաղաքից հարավարևմուտք, Ոստան գյուղաքաղաքից 6կմ արևելք՝ Մենուայի ջրանցքի ափին: 1883թ. ուներ 20 տուն քոչվոր քուրդ և 5 տուն նստակյաց հայ բնակիչ: Եկեղեցուց պահպանվել էին միայն հիմքերը և խաչքարեր (Միրախորեան Մ., նշվ. աշխ., էջ195-196): 1909 թ. կրկին հայերի թիվը նշվում է 5 տուն, իսկ մահմեդականներինը՝ 30 տուն (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 47):

ՀՈՏԱՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Մի օր երկու մարդ եկան Ռշտունյաց գավառից, մեկը Նոր գյուղից Հաջի Մուրադն էր՝ շատ բարձրահասակ, և մեկը՝ իր թիկնապահ Ասպոն: Գիշերը ժողով արեցին և ամեն գործերը կանոնավոր դասավորեցին: Դաշտապահ Յաղուբին, որ այժմ չի գործի և ամուսնացեր է Ջիբոյի քրոջ՝ Զարեի հետ, Հաջի Մուրադը կկարգադրի, որ գնա և Հոտաղական միություն կազմի և միանա մեծերի միության հետ, ենթարկվի մեծերին:

Որոշվեց. ինչ որ գյուղացիք առաջ կտային Շաքըր աղային, վճարեն հոտաղական միությանը:

Այսպես կազմվեց մեր միությունը: Ամեն տասը տղային մի տասնապետ նշանակվեց: Այդ տասնյակը ինչ վատ բան անի, տասնապետը պատասխանատու է և չարաչար կպատժվի: Մեր միությունը եղավ տասնմեկ խումբ: Հաջի Մուրադ գնաց և ասաց. «Ես աշուն ետ կուգամ, շա՜տ գործեր ունիմ հայ ժողովուրդի համար»: Մեր դրացի Մուքոյի Բարսեղը քաղաքում դպրոց գնացած և ուսում առած էր: Մի օր կկանչի իմ հորեղբոր տղա Ենովքին, որ մեզանից մեծ էր, կասի. «Մի քանի լավ տղաներ ջոկի, բեր ինձի մոտ, որ խոսեմ նրանց հետ»: Ենովք տասը տղա կջոկի, ինքը և ես եղանք տասներկու, մեր անունները գրեց, գնաց քաղաքը և մի շաբաթից եկավ: Մեզի հավաքեցին նրանց գոմի օդեն, և Բարսեղը սկսեց խոսել կուսակցությունից, զենք առնելուց, Սերոբ Փաշայից[104], շատախցի երկու կտրիճներ

---

[104] **Աղբյուր Սերոբը** կամ Սերոբ Փաշան (Վարդանյան Սերոբ) ծնվել է 1864թ. Բիթլիսի նահանգի Խլաթ գավառում: Հայ ազատագրական շարժման կազմակերպիչներից է: Խուսափելով թուրքական հետապնդումներից՝ 1891-ին անցել է Կ. Պոլիս, ապա Ռումինիա: 1895-ին վերադարձել է Արևմտյան Հայաստան, իր կազմակերպած ֆիդայական խմբով Բիթլիսում, Խլաթում և Սասունում կռվել է թուրք և քուրդ ջարդարարների դեմ, բազմաթիվ հայկական գյուղեր է փրկել կոտորածից ու կողոպուտից: Զոհվել է 1899թ. Սասունի Գելիեգուզան գյուղի մոտ, դավադիրնե-

Զաթոյից և Շերոյից, որ նրանց գյուղը կոտորած են, սպաներ են, նրանք էլ եկած են սարեր, և մեր միությունը Արմենական կուսակցությանն է[105]: Մեր խումբի անունը «Ծաղիկ» խումբ է: «Դե գնացե՛ք, երբ որ ուզեմ պատրաստ եղեք»: Ասաց ու գնաց:

Մեր խմբապետը Ենովքն էր, հարցրիմ. «Ենո՛վք, մայրիկիս ասե՞մ»: Ասաց. «Չէ՛, գաղտնի է, ոչ ոքի չասեք»:

Այսպես հասանք 1905 թիվը:

ՄԵՐ ՄՈՒՏՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեր կոմիտեն եղավ Մուքոյի Բարսեղը և նրա օգնականը՝ իր հորեղբոր, տերտերի տղան՝ Մարկոսը: Միշտ կերթային քաղաք, առևտուր կանեին, կուգային: Հաջորդ շաբաթ մեզի հավաքեցին Բարսեղի օդեն: Մարկոսը քաղաքից էր եկած և պատմեց, որ Վանում ռուսահայեր կան, հրաման կա, որ բոլոր գյուղերում երիտասարդներ անխտիր ցուցակագրեն: Անցավ մի շաբաթը: Ենովք ինձի կանչեց, ասաց. «Բարսեղը մեզի հրամայեր է, որ նրանց գոմի սաքուն մաքրենք, թաղիք-կարպետ փռենք, քաղաքից մարդ է գալու»: Մենք շատ ուրախացանք, որ քաղաքի մարդ պիտի տեսնանք. ո՛չ քաղաք ենք տեսած, և ո՛չ մարդեր:

րի ձեռքով, Անդոկ լեռան վրա թուրքական գերակշիռ ուժերի դեմ մարտում, որտեղ սպանվել են նաև նրա երկու եղբայրները, որդին, իսկ վիրավոր կինը՝ Սոսեն, գերվել է (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 28-29: ՀՀՀ, հ.1, էջ 131):

[105] **Արմենական կուսակցությունը** հիմնվել է 1885 թ. Վանում, հիմնադիրներ՝ Մ. Փորթուգալյան, Գ. Թերլեմեզյան, Ռ. Շատվորյան և ուրիշներ, կուսակցության «Արմենիա» պաշտոնաթերթը լույս էր տեսնում Մարսելում: Արմենականները ակտիվորեն են մասնակցել 1896թ. և 1915թ. Վանի ինքնապաշտպանական կռիվներին (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 66-67):

Մենք մեզի պատվիրածը կատարեցինք: Երրորդ օրը գիշերով երկու մարդ եկան, զինված էին, չորս կապ պատրոնդաշներով, առաջը կախված էր դաշույնը, կողքերին՝ մի տուփ, որի մեջը ատրճանակ կար: Էն մեկը մինչև ականջները հաստ բեղեր ուներ, անունը Լորթո Հարություն էր, իսկ մյուսը Գրիգորն էր, որ տարբեր լեզու կխոսեր, Բուլղարացի Գրիգոր[106] կըսեին: Լորթոն ասաց. «Պարո՛ն Բարսեղ, քանի՞ այսպես տղաներ կան ձեր գյուղը»: «Հարյուրից ավելի է»,- պատասխանեց Բարսեղ: Լորթոն ասաց. «Որ այսպես է, ամենին ցուցակագրի և կազմակերպի, ցուցակը ուղարկի քաղաք՝ Արամ Փաշային[107], և չմոռանաս նրանց հարուստ հայրերին ևս գրի առնել»:

---

[106] **Բուլղարացի Գրիգորը** (Գրիգոր Կոզյան, Կյոզեյան, Գեզյան) ծնվել է Կարինում: Ծնողների հետ գաղթել է Բուլղարիա: Այդտեղից էլ ծագում է նրա Բուլղարացի մականունը: Երիտասարդ հասակում անցել է Արևելյան Հայաստան, Ալեքսանդրապոլում, Հառիճում և Գանձակում զբաղվել է զինագործությամբ, ազատագրական պայքարի համար զենք պատրաստելով: ՀՅԴ անդամ էր: Ցարական իշխանությունների հետապնդումից խուսափելով, անցել է Ղարաբաղ, ապա՝ Վան: 1915-ին Վանի հերոսամարտի ժամանակ Արմենակ Եկարյանի, Կայծակ Առաքելի հետ եղել է Վանի Զինվորական մարմնի ղեկավարներից: Ինքնուրույն ձուլել է երեք թնդանոթ: 1918-ին Վասպուրականի իշխանության կազմում եղել է Զինվորական գործերի վարիչ: 1919-ին նախագահել է Երևանում տեղի ունեցած Արևմտահայերի համագումարը: Վախճանվել է 1922-ին՝ Կոստանդնուպոլսում (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 92: Մխիթարեան Օ., Վանի հերոսամարտը, էջ 53-54: Լազեան Գ., Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, էջ 212: Մաքսապետյան Ա., Վասպուրականի իշխանությունը, Վան-Վասպուրականի հերոսամարտը (ժողովածու), էջ 116):

[107] **Արամ Փաշան** (Արամ Մանուկյան, իսկական անուն-ազգանունը՝ Սերգեյ Հովհաննիսյան) ծնվել է 1879թ. Սյունիքի Զեյվա գյուղում (այժմ՝ Դավիթ-Բեկ): Եղել է ՀՅԴ անդամ, սովորել է Շուշիի և Երևանի թեմական դպրոցներում: Ընդգրկվելով հայ ժողովրդի հակացարական պայքարի մեջ 1901-1903թթ. գործել է Բաքվում, Գանձակում, Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Կարսում: 1903թ. Կարսում զբաղվել է Արևմտյան Հայաստան զենք, զինամթերք և կամավորական խմբեր փոխադրելով: 1904 թվականից, կարճ ընդմիջումներով, գործել է Վանում: Կազմակերպել է 1915թ. Վանի հերոսամարտը, որի հաղթական ավարտից հետո ղեկավարել է Վանի նահանգապետությունը, որը գոյատևել է 70 օր: Ռուսական զորքերի նահանջի ժամանակ կազմակերպել է Վասպու-

Աչնան վերջն է: Մեր սարը ձյուն ծածկեր է: Սարի ճանապարհը փակված է, բայց մենք ծանոթ ենք, կարող ենք երթալ և գալ: Կոմիտե Բարսեղը մեզի կանչեց և պատվիրեց. «Գնացեք մեր մարագը, որ գյուղից դուրս է, հարդը մաքրեք, խոտն էլ փռեք, վրան կարպետ և թաղիք գցեք, վաղը գիշեր շատ լավ զոնախներ կտեսնաք և հույս ունիմ, որ դուք ալ անոնց պես պիտի լինեք»: Մենք շատ ուրախ էինք, և ինչ որ պատվիրած էր, կատարեցինք:

Մյուս օրը՝ կեսգիշերին, սարից կիջնեն մեր պատվական և ազիզ զոնախները, բոլորը տասնչորս հոգի էին: Երբ մտան մարագը, ձյունի մեջ կորած էին, գլխաշորերով փաթաթված և երկար-երկար թաղիքե ծածկոցի մեջ անտեսանելի էին:

Մարագը մտնելով՝ խմբապետ ասաց. «Հանե՛ք ձեր վրայի լաթերը»: Անմիջապես հանեցին և մենք ի՜նչ տեսանք՝ բոլորը երիտասարդ, երեք շարք պատրոնդաշ մեջքներին և երկու պատրոնդաշ խաչկապ ուսերից կապած, իսկ գոտկատեղից կախված է փայլուն դաշույնը: Մենք այնքան զմայլված էինք այս տեսարանից, որ չէինք հասկանում, թե Բարսեղը և նրանց խմբապետը ինչ կխոսեին: Հանկարծ խմբապետը հրամայեց. «Հանգի՛ստ առե՛ք»: Տեսանք, որ ամեն մեկը իր հրացանը շարքով շարեց պատի տակ և իրենց պատ-

բականի հայության գաղթը դեպի Արևելյան Հայաստան: 1916-1917թթ. Թիֆլիսում զբաղվել է արևմտահայ գաղթականների հարցերով: 1917թ., որպես Հայոց ազգային խորհրդի լիազոր-ներկայացուցիչ, ժամանել է Երևան: 1918թ. մարտին Երևանի տարբեր խավերի ներկայացուցիչների ժողովում ընտրվել է դիկտատոր: Սարդարապատի և Բաշ Ապարանի հերոսամարտերի ժամանակ ապահովել է հայկական բանակի թիկունքը: Հայաստանի Հանրապետության նոր կառավարության կազմում Ներքին գործերի նախարարն էր և այդ պաշտոնը վարեց մինչև իր մահը: Մահացել է տիֆից 1919թ., Երևանում: (Քանի որ Արամ Մանուկյանի մասին հրապարակվել են բազմաթիվ նյութեր, աղբյուրներ, հիշողություններ, վավերագրեր, ուստի մենք այդ բոլորին չենք անդրադառնում, նշում ենք միայն նրա մահվան հիսնամյակի առթիվ 1969թ. Բեյրութում լույս տեսած «Արամը» գիրքը և ՀՀՀ, հ. 3, էջ 572):

ղոնդաշները կախեցին հրացաններից, պայուսակները բերին, որ թրջված շորերը փոխեն:

Մենք ուշիուշով կնայեինք նրանց պայուսակներին, տեսանք՝ հանեցին մի շապիկ, մի վարտիք և մի զույգ գուլպա՝ տակը տեսանք երկու գունդ չորթան և մի փոքր ալյուր: Այս էլ իմ աչքերով տեսած ֆիդայու հարստությունը: Թաց շորերը տղաները տարան չորացնելու և մաքրելու:

Բարսեղը կարգադրեց, որ հաց բերեն, և մենք հաց բերինք: Ոչխար էին մորթած, լավ ընթրիք էր: Ուտելուց և վերջացնելուց հետո խմբապետը ժամացույցին նայեց և ասաց. «Իջե՛ք»: Անմիջապես վեր թռան զինվորները, զենքեր կապեցին, կանգնան շարքի: Մեկ էլ կանչեց. «Հանգի՛ստ, քնե՛ք»: Ամենը շարվեցին կողք-կողքի և հրացանի խողովակը դրան ոտքերի մեջ, զոնդաղի[108] վրա դրին իրենց պայուսակը և քնան, իսկ խմբապետը, որ մի երկար, նիհար մարդ էր, չքնեց: Միշտ իր սիգարն էր ծխում և ժամացույցին կնայեր: Մենք վեց հոգի արթուն պահակ էինք, և այժմ, երբ կգրեմ այս տողերը, այս ծերության տարիքիս ինձի կզգամ, որ Մուքոյի Բարսեղի մարագում եմ: Ով որ ֆիդայի չի տեսել իր աչքերով, չի կարող հասկանա ֆիդայու կարգապահությունը, նրա չարքաշ կյանքը և անձնվեր զոհաբերությունը:

Երկրորդ գիշերը Բարսեղը մի ոչխար էլ մորթեց, ամանով բերեցինք մարագը, հետն էլ շատ լավաշ հաց: Ֆիդայիք հացը կերան մսաջուրի հետ, խմբապետը միսը կտրատեց և պատառ-պատառ փաթաթեց լավաշ հացերի մեջ, բաժանեց զինվորներին: Քիչ անցած՝ իր ժամացույցին նայեց, կանչեց. «Պատրա՛ստ»: Ամենը մի վայրկյան շարվեցին, սպասեցին հրամանի և իրենց թաղիքե հագուստը հագան, ճանապարհվան: Այդ ցուրտ և ձյուն գիշերին ո՞ւր գնացին, չգիտենք և հարցնելու իրավունք էլ չունեինք: Միայն Բարսեղը ասաց. «Այդ խումբը ոզմեցի Եղիազարի խումբն է»:

[108] Զոնդաղ-հրացանի փայտե մասը, կոթը:

Մի շաբաթից հետո հանգիստ էինք, բայց մայրիկս կասկածած էր գիշերների իմ բացակայության համար: Ինձի գրկեց և ասաց. «Երվա՛նդ, ինչո՞ւ գիշերները ուշ կուգաս և երբեմն էլ չես գա: Դու գիտես, որ ես կապրեմ քեզանով, մալը-մուլքը իմ աչքիս ոչինչ է, արի դուն ինձի ճիշտ խոսի, իմ սիրտս հանգստանա»: Եվ ես մեկ առ մեկ պատմեցիմ մեր միության, ֆիդայիներին մեր ծառայելու մասին: Երբ պատմեցիմ ֆիդայու շորերը մաքրելու և նրանց ունեցածի մասին, թե նրանք ինչ լավ երիտասարդներ են, մայրիկս հոնգուր-հոնգուր լացեց և ասաց. «Նրանք էլ քեզի պես մեկ մորե ազատված են»: Եվ խնդրեց, որ ես ֆիդայու հագուստները բերեմ, ինքը լվանա:

Եկավ մի ավելի մեծ խումբ, ոզմեցի Լաթո[109] Միհրանի խումբն էր: Տասնվեց երիտասարդներ էին, նրանց շորերը բերեցիմ մայրիկս լվաց, տարամ, տվեցիմ Բարսեղին: Ամեն շաբաթը կամ երկու շաբաթը մի խումբ կուգար և կանցներ: Վերջին խումբը ոզմեցի Սիմոնի խումբն էր, եկան և գնացին: Մեր գյուղը, որ կտրված է մեր շրջանից և երկու ճանապարհով կերթա Շատախ, Շատախից մեր գյուղ և քաղաք, քաղաքից մեր գյուղ և Ռշտունիք[110]:

[109] Արամ Մանուկյանն իր հուշերում գրում է, որ «Ոզմը տուել է հրաշալի զինուորներ: Ոզմը Վասպուրականի յեղափոխական Սպարտան է կամ մեր Զէյթունը: **Ոզմեցի Լաթոն, Ցովսէփը** և ուրիշները նշանավոր խմբապետներ եւ զինուորներ են եղել» (Արամը, էջ 329):

[110] **Ռշտունիք-Ըռշտունիք**, գավառ Վասպուրական նահանգում: Եղել է Վանի թագավորության (Ուրարտու) կենտրոնական գավառներից (որոշ ուսումնասիրողներ անվանումը բխեցնում են հենց Ուրարտու-Ուրաշտուից): Հետագայում եղել է Երվանդունիների, Արտաշեսյանների և Արշակունիների Մեծ Հայքի թագավորությունների կազմում: 428-ից հետո Ռշտունիքը ներառվել է մարզպանական Հայաստանի, իսկ VIII դարի սկզբից՝ Արմինիա կուսակալության, 885-ից՝ Բագրատունիների միասնական պետության, 908-ից՝ Վասպուրականի թագավորության մեջ, 1021-ից Ռշտունիքին տիրել են բյուզանդացիները: XI դարի 70-ական թթ. թեև ենթարկվել է սելջուկներին, սակայն կազմել է Արծրունիների կրտսեր ճյուղի ներկայացուցիչ Խեդենեկյանների, իսկ XIII դարից՝ Սեֆեդինյանների կիսանկախ իշխանության բաղկացուցիչ մասը (կենտրոնը՝ Աղթամար): XVI-XVII դդ. թուրք-պարսկական պատերազմների

ԳՅՈՒՂԻ ՅՈՒՅԱԿԱԳՐՈՒՄԸ

Այս տարվան ձմեռը շատ սոսկալի էր: Մենք հասանք 1906 թիվ: Կոմիտեն ասաց. «Տղանե՛ր, ռես Ավետի գոմի սաքուն մաքրեք, մարդ է գալիս»: Մենք վախեցանք, ասինք. «Պարո՛ն Բարսեղ, ռես Ավետը ֆիդայուն չի սիրի: Նա նոր է եկած Պոլիսից, շատ հարուստ է, կմատնի բոլորիս»: Ասաց. «Ավետի եղբոր որը տղան մեր մեջն է, չի մատնի»: Գնացինք օդեն մաքրեցինք, գիշերը չորս հոգի եկան, ժողով սկսեց: Նախ խոսեց Լևոն Շաղոյանը[111]: Ասաց. «Ո՛վ Քերծ

հետևանքով Ռշտունիքն անցել է Օսմանյան կայսրությանը՝ դառնալով Վանի նահանգի մեջ մտնող Բաղեշի (Բիթլիսի) քրդական իշխանության գավառներից մեկը (մինչև XIX դարի 40-ական թթ.):

Ռշտունիքի նշանավոր բնակավայրերից էին Ոստան և Աղթամար քաղաքները, Մանակերտ և Կապուտկողա բերդերը, Գուկանս, Դեղձիս, Մահռաշտ, Նորագյուղ, Պարծիս, Տշող (Տայշող) գյուղերը: Ռշտունիքը հռչակված էր բազմաթիվ վանքերով և մենաստաններով՝ Աղթամարի Ս. Խաչ, Անծղնապատի Ս. Աստվածածին, Բերդաձորի Ս. Աստվածածին (Սպիտակ վանք), Դիվաբույնի Ս. Հարություն, Ս. Թովմա, Լուսապատուղ Ս. Սահակ, Կապուտկողա Ս. Հակոբ, Նարեկավանք (Գրիգոր Նարեկացու շիրիմ-ուխտատեղիով), Ս. Վարդան վանք: Ուշ միջնադարում Կավաշ կամ Գավաշ գյուղաքաղաքի անունով Ռշտունիքը վերանվանվել է Գավաշ (Գյավաշ), որը XX դարի սկզբին ուներ ավելի քան երկու տասնյակ հայաբնակ գյուղեր՝ շուրջ 10 հզ. բնակչությամբ (ՀՀՀ, հ. 4, Երևան, 2003, էջ 283-84):

[111] **Լևոն Շաղոյանը** ծնվել է Հայոց ձորի Խարականց գյուղում 1887թ. (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 361 և «Ով ով է, հայեր» կենսագրական հանրագիտարան, հ. 2, էջ 251): Մ. Միրախորյանը 1884թ. հրատարակած իր նշանավոր ուղեգրության մեջ Խարականց գյուղի մասին գրում է, որ «Գիւղն ունի 25-30 տուն հայ, որք բաւական բարոք նիւթական վիճակի տէր են, ունին Աստուածածին անուամբ մի եկեղեցի պարզ՝ որպէս և իւր քահանայն, իսկ դպրոց ո՛չ, թէև իրենք լինին ուսումնասէր և եռանդուն» (Միրախորեան Մ., նշվ. աշխ., էջ 197-198): Մյուս ուսումնասեր խարականցիների նման Լևոն Շաղոյանը ևս սովորել է Աղթամարի կղզում (Մեսրոպյան Ս., նշվ. աշխ., էջ 90), այնպես որ, 20-րդ դարասկզբին, ինչպես վկայում է Ա.-Դոն, Խարականցը լուսավորյալ գյուղ էր: Ըստ նրա, 1909թ. գյուղն ուներ 34 տուն՝ 173 հայ բնակիչ, «կար երիտասարդների մի շրջան, որը հրատարակում էր «Ծովակ» անունով մի փոքրիկ խմբագրատիպ թերթ, որի մէջ տեղ էին գտնում գաւառի ուսումնասիրութեան վերաբերեալ նիւթեր և փոքրիկ քարտէզներ: Սրանք մի մի լուսատու ցոլքեր էին անթափանց խաւարի մէջ» (Ա-

Դո, նշվ. աշխ., էջ 47-48): Լևոն Շաղոյանը մինչև Առաջին համաշխարհային պատերազմն իր ֆիդայական խմբով պայքարում էր Թուրք և քուրդ կեղեքիչների դեմ: Եղել է ՀՅԴ անդամ: 1915թ. Վան-Վասպուրականի հերոսամարտերի ժամանակ ղեկավարել է Գավաշ (Ոստան) գավառակի ինքնապաշտպանությունը: Ինչպես նրա մասին գրում է Վան-Վասպուրականի նշանավոր գործիչներից մեկը՝ հետագայում Շատախի գավառապետ Սամվել Մեսրոպյանը. «Այս շրջանի ինքնապաշտպանության կռիվների ղեկավարն ու ոգին հանդիսանում է խարականցի Լևոն Շաղոյանը...: Սա վերջին 4-5 տարիների ընթացքին Վասպուրականի Կենտրոնական կոմիտեի շրջանում հանդիսանում էր հանդուգն ու բացառիկ մի դեմք և Հայոց ձորում ու Գավաշում վայելում էր ժողովրդական համակրանք: Պատերազմի ընթացքին Լևոնին հանձնված էր Ռշտունիքի կուսակցական և զինվորական գործերի ղեկավարությունը, թեև շրջանն ուներ յուր կուսակցական մարմինը, բայց սա ենթարկվում էր Լևոնի հեղինակությանը: Երբ Շատախում ապրիլի սկզբին վիճակը սկսեց բարդանալ ու ընդհարումն անխուսափելի էր, մենք խնդրեցինք, որ Լևոնն անձամբ օգնության գա Թաղ: Նա եկավ, բայց հազիվ երկու օր մնաց մեզ մոտ, որովհետև կռիվները սկսել էին Գավաշի գյուղերում» (տե՛ս Մխիթարյան Օ., Վանի հայկական ժամանակավոր կառավարությունը, Վան-Վասպուրականի հերոսամարտը (ժողովածու), էջ 102, տես՝ նաև Մեսրոպյան Ս., նշվ. աշխ., էջ 90):

1917թ. փետրվարին՝ Վասպուրականի ժամանակավոր կառավարության ստեղծումից հետո Լ. Շաղոյանը նշանակվում է Ոստանի (Գավաշի) գավառապետ (տե՛ս Մխիթարյան Օ., նշվ. հոդվածը, էջ 102: Մխիթարեան Օ., Վանի հերոսամարտը, նշվ. աշխ., էջ 128): 1918թ. կռիվների ժամանակ նա ղեկավարում էր հարավային ռազմաճակատի Ոստանի հատվածը (Մաքսապետյան Ա., նշվ. աշխ., էջ 119): 1918թ. նա վասպուրականցիների բազմահազարանոց գաղթի ղեկավարներից էր: «Նահանջող ժողովուրդը՝ Լևոն Շաղոյանի ղեկավարությամբ, Պարսկաստանի ճանապարհով Ատրպատականի հայերի և ասորի գաղթականների հետ հասավ Բաղդադի արևելյան կողմը և Տիլա գետի ափին, անգլիական զինվորական իշխանության հրահանգով, 17000 գաղթականների համար կանգնեցրեց 3 հազար վրան: Հետագայում մի մասը ինքնակամ փոխադրվեց Բաղդադ, իսկ մնացածները՝ Բասրայի մոտ գտնվող Նահր-էլ-Օմար: Լևոն Շաղոյանի (Լևոն փաշա) ղեկավարությամբ մոտավորապես 500 ընտանիք, փոխադրվեց Մոսուլի մոտ գտնվող Հավրեզք ամայի գյուղը, որը տրամադրել էր կառավարությունը» (Մուրադյան Ս., Իրաքի հայ համայնքը, Ե., 1997, էջ 22-23: Տե՛ս Յուշամատեան Բաղդադի հայ երկսեռ երիտասարդաց միութեան, Բաղդադ, 1976, էջ 191-193): Հավրեզք տեղափոխությունը տեղի է ունեցել 1929թ. վերջերին (Ալպոյաճեան Ա., Իրաքի հայերը, Ե., 2003, էջ 100): Գաղթականության շրջանում Լևոն Շաղոյանի գործունեությունը շատ բարձր են գնահատել ժամանակակիցներից շատերը. Ռուբենն իր «Հայ յեղափոխականի մը յիշատակները» գրքում գրում է. «Միջագետքի մեր ընկերների անձնվիրութիւնը եւ բացառիկ յամառ տոկունութիւնը մեծ արդիւնքներ տուին: Առաջին

գյուղացիք, ես ձեր շրջանից եմ, մեր գյուղն էլ կոտորեցին ձերոնց պես, ես իմ հորս հոշոտած մարմինը տեսամ մեր դուռի վրան և գլուխը կտրած էին, ես այս հրացանը վերցիմ, սարեր բարձրացամ և ֆիդայի դարձամ, որ իմ հորս նման իմ գլուխս չկտրեն: Ես ուխտած եմ, որ ինչ քուրդ և կամ թուրք ձեռքս անցնի գլուխը ձեռքովս կտրեմ, բավական է մենք աշխատենք, քուրդը տանի՝ ուտի: Այժմ խոսքը Ղազարինն է»: Ղազարը բարձրացավ, ասաց. «Քերծ գյուղի ռեսե՛ր, տանուտերե՛ր, աշխատավորնե՛ր, լավ լսեցե՛ք, այսօրվանից ձեր գյուղի կոմիտեն է Մուքոյի Բարսեղը, իսկ նրա օգնական է իր հորեղբոր տղան՝ Մարկոսը, նրանց պարտականությունն է, որ բոլոր գյուղացիներին՝ հարուստը, թե աղքատը, նրանց տարիքը, և ունեցածը՝ շարժական, թե անշարժ, մաքուր ցուցակագրեն և ուղարկեն քաղաք՝ Արամ փաշային, հակառակողը և չգրվողը կպատժվի այս դաշույնով»:

պատիւը այդ դժուարին գործի յաջողութեան կը պատկանի Լեւոնին, որ կարողացաւ իւր հետ նահանջած Վասպուրականի եւ Պարսկաստանի զինվորների եւ գաղթականների կեդրոնական անձնաւորութիւնը դառնալ եւ մինչեւ այսօր չբաժնուեց նրանցից: Գաղթականները պահեցին իրենց հաւաքականութիւնը, երկար ու յամառ կռիւներ մղեցին, եւ փորձանքներից ազատուեցին: Լեւոնի ջանքերով գլխաւորապէս, 8-9 հազար գաղթականներ ծովով ու ցամաքով հասան Հայաստան եւ Պարսկաստան, եւ այժմ էլ նա է Նահր-էլ-Օմարի մոտ 3 հազար մնացորդ գաղթականներին ուղղութիւն տուողը» (Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ.7, Ե. 1990, էջ 171-172): Իսկ գաղթի մասնակիցներից մեկը՝ Սիրաք Սարհադյանը, իր հուշերում գրում է, որ «Շաղոյեանի... նման մարդիկ, որոնք չռնդալից համբաւ և հռչակ շահելու մոլեգին ցանկութիւն չեն ունեցել, շատ աւելի ազգապահպանման և հայրենասիրական ծառայութիւն են կատարել, քան շատերը, որոնց անունները ոսկի տառերով են գրւել և դրւատվել ու բարձրացւել են մինչև երկնային կամարները (Սիրաք Սարհադեան, Կեանքիս յուշերից, Երեւան, 2007, էջ 200): Լ. Շաղոյանի՝ Նահրը-էլ-Օմար և Հավրեզք գաղթակայաններում գործունեության մասին մանրամասն տե՛ս նաև Վարդանեան Գ., Ազգային տոմար, Վասպուրականէն մինչեւ Իրաք, Լոս Անճելըս, 1992, էջ 123-175: Լևոն Շաղոյանը վախճանվել է 1933 թ. (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 361 և «Ով ով է, հայեր» կենսագրական հանրագիտարան, հ 2, էջ 251):

Դաշույն քաշեց ձեթի ճրագի առաջ, դաշույնը փայլեց, ուստա Ավետը ոտքի ելավ, ասաց. «Դուք ո՞վ եք, այս ի՞նչ կոմիտե է, ես ձեզի չեմ ճանաչի, հայդե՛, ուրկից եկած եք, հոն կորսվեցեք»:

Ղազարը հարձակվեց, որ սպանի, Լևոնը չթողեց, Խուշոյին ասաց. «Բռնի՛ր»: Խուշոն Ավետին բռնեց, տասը հատ փայտ խփեցին մեր այս պատվական հյուրերը: Լևոնը մեր շրջանի Խարականց գյուղացի էր[112], իր հորը սպանելը տեսնալով՝ սարեր բարձրացավ, մինչև դարձավ «Լևոն փաշա», իսկ Խուշոն Ռշտունյաց Կիճի[113] գյուղացի էր, նրա փեսային կսպանի մի աղա և քրոջը կտանի:

Խուշոն շատ տանջվելուց հետո կգտնի Նորգյուղացի[114] Հաջի Մուրադին և իր զինվոր Ասպոյին, կպատմի իր քրոջ հափշտակող աղայի մասին, Հաջի Մուրադի հետ կուգան աղային կսպանեն, բայց քույրն ալ կսպանվի կռվի ատեն:

Այդ հսկա երիտասարդը այժմ Լևոնի թիկնապահն է, իսկ մյուս երկուսը, մեկը՝ դարաբաղցի Դալի Ղազոն էր[115], էն մե-

---

[112] **Խարականց** (Խառականց, Խարագան, Խարականաց) գյուղը գտնվում էր Վանի նահանգի Հայոց ձորի գավառակում, 1850թ. ուներ 18 տուն, 1883-ին Մ. Միրախորյանի տվյալներով՝ 25-30 տուն (նշվ. աշխ., էջ 197-198), 1909-ին՝ ըստ Ա-Դոյի՝ 34 տուն (173 բնակիչ): Ա-Դոն Խարականցը նկարագրում է որպես «գեղեցիկ ծառազարդ գիւղ, ընկած ծովափին, Խոշաբ գետի խառնուրդի մօտ մի սիրուն դիրքի վրա»: Նա տեղեկացնում է նաև, որ դարասկզբին Խարականցում հրատարակվում էր «Ծովակ» անունով խմորատիպ թերթ (նշվ. աշխ., էջ 47-48): Գյուղի եկեղեցին կոչվում էր Սբ Աստվածածին: Մեծ եղեռնի նախօրեին՝ 1913-ին, Խարականցն ուներ 36 տուն և 185 բնակիչ, որոնք տեղահանվեցին, և շատերը զոհվեցին գաղթի ճանապարհներին (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 693):

[113] **Կիճի** գյուղը գտնվում էր Վանի նահանգի Կարկառի գավառակում, ըստ Ա-Դոյի՝ 1909 թ. ուներ 14 տուն հայ բնակչություն (նշվ. աշխ., էջ 77):

[114] **Նոր գյուղը** գտնվում էր Գավաշի գավառակում: 1909թ. ուներ 85 տուն հայ բնակչություն (Ա- Դո, նշվ. աշխ., էջ 53)

[115] **Դալի Ղազարը (Միքայել Պատալգեհյան)** ծնվել է 1886թ. Գանձակում: ՀՅԴ անդամ: 1915թ. Վան մտնող հայ կամավորների առաջապահ հեծելագնդի հետ մտել է Վան: 1919-ին որպես վաշտապետ իր գնդով եղել է Տարոնում: Վիրավորվել է Սարիղամիշի ճակատամարտում: Մասնակցել է

ՀԱՅՈՑ ՁՈՐ (XX դ. սկիզբ)

Մասշտաբ 1:220 000

Հեղինակ՝ Գ.Մ. Բաղալյան
Համակարգչային ձևավորող՝
Մ.Պ. Մարտիրոսյան
Ծ Ա Ծ Ա Ն
Ս Ա Ս Ա Ն
Ս Ա Ս Ա Ն
Ս Ա Ս

կը Սարդարապատի գյուղացի Եգորն էր: Գիշերվան անհանգիստ էին, միշտ կվիճեին, որ ինչու Լևոնը չթողեց Ղազարը Ավետին սպանի:

Լուսացավ: Լևոնը Բարսեղին ասաց. «Մի շաբաթ քեզի ժամանակ կտամ, որ այդ ցուցակը հասնի Վան՝ Արամի ձեռքը»: Բարսեղը ցուցակը պատրաստեց և մեզի կանչեց և ասաց. «Ով որ պատրաստ է, այս ցուցակը տանի, թող մատ բարձրացնի»: Ոչ ոք առաջ չեկավ, լռություն խզեց Մարկոսը, ասաց. «Ես մի միտք արեցիմ այս թուղթը տանելու համար: Պարոն Բարսեղ, Գասպարը վանեցի է, քանի տարի է, որ իր մայրը չի տեսել, թող մի ընկեր վերցնի և ցուցակը տանեն»: Բարսեղ ասաց. «Ձեզանից ո՞վ պատրաստ է, թո՛ղ առաջ գա»: Ոչ ոք չեկավ, ես մատ բարձրացրիմ: Մարկոսն ասաց. «Լավ է, Երվանդ իր մորաքույր կտեսնա և գուցե իր հորից մի լուր ստանա»: Ես շատ ուրախացամ այս որոշումից: Բարսեղ ասաց. «Գնացե՛ք, պատրաստվե՛ք և գիշերվան եկե՛ք այստեղ»:

Մենք ուրախ-ուրախ եկանք մեր տուն և մայրիկիս հայտնեցինք, որ կերթանք քաղաք: Մայրս մի նամակ գրեց և երկու ոսկի տվեց, որ տանք մորաքրոջս:

Սարդարապատի ճակատամարտին: 1920թ. զոհվել է Լեռնային Ղարաբաղում՝ Ասկերանում (Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, այսուհետ՝ ՅՀՅԴ, ալբոմ-ատլաս, Բ հատոր, Լոս Անճելըս, 2001,էջ 94):

ԱՌԱՋԻՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՍ ԴԵՊԻ ՎԱՆ ՔԱՂԱՔԸ

Երեկոյան մենք ներկայացանք կոմիտեին և ասինք. «Մենք պատրաստ ենք»: Ասաց. «Շատ լավ, սպասե՛ք ձեր ճանապարհի քարտեզը բերեմ»: Մի թուղթ բերեց, գիծ քաշեց և ասաց. «Երվա՛նդ, այս արտը ձեր Խաչկե գյուղի արտն է»: Ասացիմ. «Այո՛»: Ասաց. «Այս գյուղը Կըզըլդաշ գյուղն է», ասեցիմ. «Այո՛»: Ասաց. «Այս գյուղը Կեմն[116] և այս Կեմի սարն է»: Ասացիմ. «Այո՛»: Ասաց. «Ուրեմն, ձեր ճանապարհը այդ արտի գլխից կծռվի, կերթաք Կըզըլդաշ գյուղի վրայեն, դաշտերով կհասնեք Կեմ գյուղ, գետի կամուրջը գյուղի ցածրն է, կամուրջն անցնելուն պես կբարձրանաք սարը, սարի գլխին մի վանք կա, որ Կռունդ վանք[117] են անունը դրել, դուռը կծեծեք, երբ հարցնեն ո՞վ է, կըսեք «Լուսո՛ւ աստղը»:

Մենք ուրախ-ուրախ եկանք տուն, մայրիկիս ասացիմ ամեն բանը: Մայրս շատ ուրախացավ, մեր հացը պատրաստեց, մի նամակ գրեց իր քրոջը, եկանք Բարսեղի մոտ, կապոցը և մի նամակ էլ պրն. Նշանի համար առանք ու ճանապարհվանք: Հասանք մեր արտին, մի քիչ հաց կերանք, ընկանք ճանապարհ, ինչպե՛ս կերթանք, ուրախ կերթանք, կթռչենք: Հասանք կամուրջին, անցանք, հասանք վանքը, դուռը զարկանք: Մի կին ասաց. «Ո՞վ ի», ասացինք. «Լուսու աստղը»: Դուռը բացեց, մեզի տարավ մի սենյակ, քնանք մինչև լույս, առավոտուն մեր նախաճաշն արեցինք և ճանապարհվանք, հասանք Ծվստան[118] գյուղը: Մի մարդու հարցուցինք պրն Նշանի տունը, այդ մարդը մեզի տարավ Նշանի տունը: Եկավ Նշանը, բարևեցինք, շատ լավ երիտասարդ էր՝ բարձրահասակ, մաուզերը կողքին կախած, մեզի տարավ ներս և ասաց. «Նստե՛ք, հանգստացե՛ք, ձեզի պես մի մարդ եկած է Ռշտունյաց կողմից, նրան ճամբեմ, կուգամ»: Եվ գնաց: Կես ժամեն եկավ: Բարսեղի նամակ և կապոցը հանձնեցինք իրեն: Եկավ կապոցը լավ քննեց, կնիքը նայեց և Բարսեղի նամակը կարդաց, ասաց. «Դո՛ւք այստեղ հանգստացե՛ք, ես երեք օրեն կուգամ ձեզի ճամբելու»: Մենք նրան պատմեցինք, որ կուզենք երթալ քաղաքը՝ Գասպարի մորը տեսնալու: «Շատ բարի,- ասաց,- հաց կերեք, երթանք»: Մեզի լավ կերակրելուց հետո ճանապարհվանք և չհասած Փաշի աղբյուրը՝ շեղվեցինք դեպի աջի կողմի ճանապարհը, որ ապահով էր: Երեկոյան հասանք Թազա Քյարեզ՝ մորաքրոջս տուն: Մորաքույրս մեզի տեսնելուն, հասավ, մեզի առեց իր թևերի մեջ, մեկ ինձի կհամբուրի, մեկ իր տղա Գասպարին: Հետո տեսավ Նշանին, ասաց. «Վա՛խ, քոռանամ ես, այս պարոնը կանգնած է, ես չեմ տեսել, համեցեք, նստեք, ներողություն, պարոն Նշան, էս տղաս է՝ Գասպարը, տասներկու տարի է չեմ տեսել, կոտորածից առաջ նա Երվանդենց տուն է եղել, իր հոր սպանվելը չգիտի»: Մի պատառ հաց ու ժաժիկ Նշան կերավ, մի քասա գի-

[116] **Կեմ (Գեմ)** գյուղը գտնվում էր Հայոց ձորի գավառակում, 1909թ. ուներ 98 տուն՝ 467 հայ բնակիչ (Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 47): Գյուղում կար մեկ եկեղեցի և նախակրթարան (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 832):

[117] **Կռունդ** վանքը (Կռունկի վանք) գտնվում էր Վան քաղաքից հարավ, 17կմ հեռավորության վրա, Արտամետ ավանի և Ծվստան գյուղի միջև, լճափից 1,5 կմ հեռավորությամբ, բլրի վրա: Շրջապատված էր հասարակ պարսպով և բաղկացած էր մի եկեղեցուց՝ Սբ Աստվածածին անունով, մի գավթից և մի քանի սենյակներից: Ըստ ավանդության՝ մի անգամ՝ սուրբ խորհրդի ժամանակ, գինին պակասում է, և այդ պահին լուսամուտից ներս է թռչում մի կռունկ՝ կտուցին մի ողկույզ խաղող: Խաղողը քամելով սկիհի մեջ՝ պատարագիչ վանահայրը շարունակում և ավարտում է ծեսը: Եկեղեցու մի քարի վրա փորված էր 1603 թիվը (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 244):

[118] **Ծվստանը** գտնվում էր Վան քաղաքից 7-8 կմ հարավ, լճափից 1,5 կմ հեռու, գյուղի արտերն ու պտղատու այգիները ոռոգվում էին Շամիրամի ջրանցքի ջրով: 1850-ական թվականներին գյուղն ուներ 57 տուն հայ, 18 տուն այլազգի, 1909թ.՝ 80 տուն հայ, 60 տուն մահմեդական բնակիչ (Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 22): Զբաղվում էին անասնապահությամբ, պտղաբուծությամբ, խաղողագործությամբ: Ուներ Սբ Գևորգ անվամբ եկեղեցի և 13-րդ դարի տաճար: Գյուղի շրջակայքում կային բերդի և գյուղատեղիների ավերակներ, գերեզմաններ, խաչքարեր, սեպագիր արձանագրություններ, գյուղի մոտ էին Սբ Աստվածածին վանքը, Փաշի աղբյուր կոչվող աղբյուր-ուխտատեղին: Ծվստանը բռնագաղթել է Մեծ եղեռնի օրերին (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 868):

նի խմեց և ասաց. «Ես երեք օրից կուգամ ձեզի տանելու»: Մենք երեք օրը մորաքրոջս տուն գիշերներ կպատմեինք կոտորածից, սպանվածներից և մոլլի տունից, իսկ մորաքույրս պատմեց իր մարդու սպանվելը, ոնց իր երեք որբեր կառնի կուգա Նորաշեն թաղի գաղթած ժողովուրդի հետ ապրելու: Կպատմեր և կլացեր: Երեք օրից հետո եկավ պրն. Նշանը. հացի նստանք: Մորաքույրս մեր պայուսակներ պատրաստեց, համբուրվանք և մի նամակ գրեց մայրիկիս: Մնաս բարի ասեցինք, ճանապարհվանք, հասանք Ծվստան:

Նշան մի նամակ գրեց Բարսեղին և մի կնքված կաշիից պայուսակ հանձնեց մեզի, ասաց. «Շատ զգույշ և շատ ապահով պիտի երթաք, մեր ամենիս կյանքը ատոր մեջն է, կվստահեմ ձեզի, Աստված ձեզի հետ, երթաք բարի»: Մի նամակ էլ տվեց, որ տանք վանքի պառավին, որ իր հորաքույրն է:

Նշանը մեզ գյուղից հանեց դուրս, ինքը գնաց: Երեկոյան մենք հասանք վանքը, նամակ տվեցինք մայրիկին, կարդաց, հաց կերանք, պառկանք քնելու: Առավոտուն մայրիկը չթողեց երթալու, ասաց. «Մեր հովիվը տեսած է, տասը հոգի ժանդարմ գնացած են Կեմ գյուղը»:

Առավոտուն մենք ելանք սարը, չմնացինք վանքը: Սարից նայեցինք Վասպուրական փառավոր աշխարհին. մեր առաջն է Վանա ծովը, Վան քաղաքը իր բերդով և արևելյան կողմը՝ մինչև Վարագա սարը[119], փռված է Այգեստանը[120], իսկ մեր հարավի կողմը՝ Հայոց ձորն է, մեջից կանցնի Անգղա գետը[121]: Արդյոք կա՞ աշխարհի մեջ մի երկիր, որ նմանի Վասպուրական աշխարհին...

Երեկոյան մենք մայրիկին մնաս բարի ասացինք: Մայրիկը Գասպարին մի թաշկինակի մեջ փաթաթած բան տվեց, և ճանապարհ ընկանք: Կեմ և Կըզըլդաշ գյուղերից անցանք և հասանք մեր Խաչկե գյոլի առատ աղբյուրին, Գասպար ասաց. «Երվա՛նդ, այս ջուրի մոտ հաց ուտենք, նոր երթանք»: Բացեց մայրիկի տված թաշկինակը, մեջը երկու լավաշ հաց և չոր դեղին սեր, կերանք և Լուսո աստղը դուրս ելավ, հասանք Բարսեղի օդեն, պառկանք քնելու:

---

[119] **Վարագա սարը** (Վարագա լեռ), որն ունի 3250մ բարձրություն, գտնվում է Վանա լճից 10կմ արևելք՝ Վան քաղաքից 7-8կմ արևելք: Կազմված է թխագույն ապարներից, ժայռոտ է և բուսականությամբ աղքատ: Լանջերից բխում են սառնորակ աղբյուրներ: Լեռը խորունկ ձորերով բաժանված է երկու մասի՝ Ներքին և Վերին Վարագ: Հռչակավոր Վարագա վանքը կառուցված էր լեռան առաջին լանջին, իսկ լեռան բարձր գագաթներից մեկում Աստղկան բերդն էր: Վասպուրականցիների ամենասիրելի լեռն է, որի մասին հյուսվել են շատ ավանդություններ: Լեռան լանջերին 19-րդ դարի 20-ական թթ. հայտնաբերվել են սեպագիր արձանագրություններ (Հայկական սովետական հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985, էջ 304: ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 769):

[120] **Այգեստան** թաղամասը Վան քաղաքի արևելյան մասում էր: Ուներ փարթամ այգիներ, պարտեզներ, սառնորակ ջրեր ու աղբյուրներ: Մինչև 1915-16թթ. այստեղ բացառապես հայեր էին ապրում: Վանի ամենաբարեկարգ և հարուստ արվարձաններից էր: Ֆրանսիացի նշանավոր ճանապարհորդ և արևելագետ Պիեր Ժորերը Վանի «չքեղ տաղավարներով» ու պարտեզներով զարդարված արվարձանների մասին գրում է. «Ոչինչ այնքան հաճելի չէ, որքան բազմաթիվ վտակներով ոռոգված և գեղեցիկ ծառերով հովանավորված այս մրգաստանների տեսքը» (տե՛ս Վարդանյան Ս., Հայաստանի մայրաքաղաքները, Երևան, 1995, էջ 33: Հմմտ. Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ.Զ, Երևան, 1934, էջ 220): Այգեստանը բաղկացած էր մի քանի թաղերից՝ Հայկավանքի, Սուրբ Հակոբի, Հանկույսների, Նորաշենի, Արարքի և Կլորդարի: Այգեստանում հայերի թիվը հաշվվում էր 3000 տուն (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 17): Այգեստանի մասին ավելի մանրամասն կարելի է կարդալ բնիկ այգեստանցի, նշանավոր բանահավաք Գարեգին Սրվանձտյանցի գրույցներում (տես Սրվանձտյանց Գ., Երկեր, Երևան, 1978, էջ 126-133): Ուսումնասիրողներից մեկի տվյալներով, քաղաքի այգիներում աճում էր 70 տեսակի տանձ և 40 տեսակի խնձոր: Այգեստանում էին գտնվում ռուսական, պարսկական, անգլիական և ֆրանսիական հյուպատոսարանները, բողոքականների դպրոցն ու որբանոցը: Քաղաքամասի ողջ երկարությամբ ձգվում էր Խաչփողան փողոցը: Այգեստանը հայտնի դարձավ 1915թ. մայիսյան հերոսական ինքնապաշտպանական կռիվներով: Շուրջ մեկ ամիս հայերը դիմադրեցին թուրք ջարդարարներին և կարողացան փրկվել ոչնչացումից (Վարդանյան Ս., Հայաստանի մայրաքաղաքները, էջ 33-42):

[121] **Անգղա գետ** - գետ Վանա լճի ավազանում: Ըստ ավանդության՝ Անգղ գետի մոտ հնում գոյություն է ունեցել հեթանոսական մեհյան, որը քանդել է Թադեոս Առաքյալը և տեղում կառուցել քրիստոնեական տաճար (ՀՀՇՏԲ, հ. Ա, էջ 255):

Առավոտուն Բարսեղ կուգա, կտեսնի մենք քնած ենք, մեզի ձայն տվեց, արթնացանք, Նշանի նամակը, կնքված կապոցը հանձնեցինք Բարսեղին: Իրավունք առինք, եկանք մեր տունը: Մայրիկս հաց էր թխում, մեզի տեսնելուն պես վազեց, գրկեց, համբուրեց: Մորաքրոջս նամակը և նվերները տվեցինք մայրիկիս: Մայրս նվերները բացեց, ուրախ-ուրախ կծիծաղեր, երբ վերջացուց, սկսեց նամակ կարդալ, արտասուքը այտերից կթափվեր: Նամակի մեջ մորաքույրս նկարագրած էր իր մարդու սպանվելը և որ իր տղան՝ Հակոբը և երկու աղջիկները տարած է ամերիկյան որբանոց, իսկ ինքը այս և այն տունները հաց թխելով կապրի:

ՄԱՐՏՈՆ

Այսպիսով, տարիներ անցան: Հասանք 1907 թվականը: Վանի Իշխանից[122]*, որ Հիրճ*[123] *գյուղում սպանեցին դավադրաբար, մի նամակ է եկած, որ պիտի տարվի Շատախի կոմիտեին: Գարնան սկիզբն է, մարտ ամիսը: Բարսեղը մեզի կանչեց ժողովի, հավաքված ենք: Բարսեղը մի ճառ ասաց և բացատրեց, որ Շատախ նամակ պետք է տանել, և որ այն շատ լուրջ գործ է. «Շատախը Վանին չի նմանի, ճանապարհ շատ հեռու է, ճանապարհի վրա զորանոց կա: Այս նամակը, ինչ ձևով որ լինի, պիտի հասնի Շատախ»: Թուղթ բերեցին, մեր տասներկու ընկերների անունները գրեց և մեկի վրա նշանակեց Շատախ: Մեզի շարքի կանգնեցուց և ասաց. «Առանց բացելու՝ ամեն մեկդ մի թուղթ վերցրեք »: Մենք մեր թուղթերը վերցրանք և կանգնանք: Իր օգնական Մարկոսին ասաց. «Մեկ-մեկ կարդա»: Մարկոսը կարդաց, տասերորդինը իմ անուն դուրս ելավ:*

Ամենը ծափահարեցին: Բարսեղը ասաց. «Քեզի ընկեր որոշիր»: Ես որոշեցիմ Մարտոյին, որ շատ հպարտ էր և հարուստի տղա: Մարտոն ոտքի ելավ և ասաց. «Ես չեմ երթա և ձեր միությունից կհեռանամ»: Բարսեղը մի թուղթ վերցրեց, ասաց. «Այս թուղթ ստորագրիր և կորիր»: Գրված է, եթե մեզի մատնի, պիտի սպանվի, կարդաց և ստորագրեց, մի ապտակ կերավ ու գնաց:

Մի պահ այսպես անցավ: Ոչ ոք առաջ չի գա, որ ասի՝ ես կերթամ: Ենովքը ոտքի ելավ և ասաց.

---

[122] **Վանի Իշխանը** (Նիկոլ Պողոսյան, Միքայելյան) ծնվել է 1883թ. Շուշի քաղաքում, զոհվել 1915թ. Շատախի գավառակի Հիրճ գյուղում: Եղել է ազգային-ազատագրական շարժման գործիչներից, ՀՅԴ կուսակցության անդամ: Սովորել է Շուշիի և Երևանի թեմական դպրոցներում: Գործել է (1901-03թթ.) Ալեքսանդրապոլում, Կարսում: Նևրուզի «Շանթ» խմբի կազմում մեկնել է Արևմտյան Հայաստան, 1903թ. մտել է Վան և մնացել մինչև մահը: Գյուղերում ստեղծել է գաղտնի խմբեր և կազմակերպություններ, աջակցել և անձամբ հսկել կրթության գործը: Գործունեություն է ծավալել կառավարության հսկողությունից համեմատաբար զերծ մնացած շրջաններում, զինել ժողովրդին և կազմակերպել ինքնապաշտպանություն: 1908թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո մերժել է կազմալուծել ֆիդայական խմբերը: 1915թ. ապրիլին, երբ Վանի կուսակալ Ջևդեթը դիմել է ՀՅԴ ԿԿ-ին՝ հարթել Շատախի հայ-թուրքական միջադեպը, Իշխանը ընկերների հետ գնացել է Շատախ բանակցությունների: Սակայն Հիրճ գյուղում, քնած ժամանակ, թուրքերը դավադրաբար սպանել են Իշխանին և նրա ընկերներին: Ինչպես գրում է Արամ Մանուկյանը, «Բազմաթիվ կուիների էր մասնակցած, զարմանալի ղեկավարելու, թելադրելու, կազմակերպելու շնորհք ունէր... Իմ Վան մտած ժամանակ Իշխանը, կարելի է ասել, ամենահեղինակավոր զինվորական հեղափոխականն էր» (Արամը, Բեյրութ, 1969, էջ 257): Իշխանի մասին իր նշանավոր «Հայ յեղափոխականի մը յիշատակները» հուշագրության հատորներում բազմիցս անդրադարձել է Ռուբենը (Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Թեհրան, հ. 1-5, 1982), տե՛ս նաև Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Գ, Աթենք-Երևան, 1992, էջ 430: Թաշճեան Վահէ, Իշխանը (Վանայ Իշխանի կեանքն ու գործունէութիւնը), Երևան, 1994: Հայկական հարց, հանրագիտարան, Երևան, 1996, էջ 151:

[123] **Հիրճ** գյուղը գտնվում էր Վանի նահանգում՝ Խոշաբ գետի ձախափնյակում Ոստան (Գավաշ) գավառակում: Հայաբնակ էր: Նախկինում եղել է մարդաշատ մեծ գյուղ: Ունեցել է 120 տուն: Ըստ Մ. Միրաքանյանի՝ 1883-ին այդ 120-ից մնացել էր 10 տուն հայություն (նշվ. աշխ., էջ 185-186): 1909 թ. դրանցվել է 30 տուն (Ա- Դո, նշվ. աշխ., էջ 53): Ուներ Սբ Ստեփանոս անունով եկեղեցի:

- Ես իմ հորեղբորս տղային մենակ չեմ թողնի երթա: Մեր թախումից երկուսս ենք մնացել, կամ կսպանվենք և կամ կազատվենք:

Բարսեղը արտասվեց, ասաց. «Վաղ առավոտյան եկեք ինձի մոտ»: Ես հարցրիմ. «Մայրիկիս ի՞նչ ասեմ»: Մտածեց և ասեց. «Մայրիկիդ ասե, որ ես և Ենովքը կերթանք Ռշտունիք՝ Բարսեղի համար երկու գոմեշ բերելու»:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՇԱՏԱԽ

Առավոտուն Ենովքը եկավ: Երկու ջվալ և երկու չվան վերցրանք, ներկայացանք կոմիտե Բարսեղին: Բարսեղ մի թուղթի վրա ճանապարհ կգծեր, ասաց. «Տղանե՛ր, սարը ձյուն է, պիտի մեր դաշտով երթաք, կվախենամ բռնվեք, այդ դեպքում կորած կլինենք»: Ես բացատրեցիմ. «Այդ կոտորածի տարին մեր ծանոթ մոլլան մեզի տարավ իրենց Աբզեյնի գյուղը և մենք Սիսեռկա կալուց (կիրճից) գնացինք մոլլի գյուղը: Դուք էն Տարենց գյուղի Շայինկե Հարոյին կճանաչեք, նա իմ հորեղբոր Մարգարիտ աղջկա ամուսինն է, 1904 թվականին ինձի տարավ իրենց գյուղը, գնացինք Փեսանդաշտի[124] վանքը, ես տիրացություն արեցիմ, քուրդերը այդ վանքին Կարադեր կըսեն, որովհետև սև քարից է շինված»:

[124] **Փեսանդաշտը** (Բեսանդաշտ) գտնվում էր Վանի նահանգի Շատախի գավառակում, Շատախ գյուղաքաղաքից 20 կմ հյուսիս, Շատախ-Վան ճանապարհից արևմուտք: Ուներ 12-13 կմ երկարություն, 7-8 կմ լայնություն: Չորս կողմից շրջապատված էր Արտոս, Կարաբուլաղ, Ջմեն, Բարադոտիկ լեռներով: Այստեղ էին գտնվում Առեղ, Կայնեմերան, Կաղազիս, Շիդան գյուղերը (Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 63-65: ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 251): Փեսանդաշտի հայերի կյանքի, սովորույթների, ինչպես նաև 1915թ. իրադարձությունների մասին տե՛ս Ասլանյան Ա., Փեսանդաշտը պաշարված էր (դրվագներ արևմտահայ ցեղասպանությունից), Երևան, 1990:

Եվ վստահեցրիմ, որ մենք չենք բռնվի և ամեն ճանապարհ գիտենք:

Բայց մայրիկիս ի՞նչ ասեմ, ինչպես որ կարգադրված էր, պիտի ասեի, թե կերթանք գոմեշ առնելու Բարսեղի համար: Այդպես էլ ասեցիմ:

Բարսեղը մեզի երկու կոշտ և ծուռ փայտ տվեց, ասաց. «Քոնը կտաս Սևտիկին[125] գյուղի Բաղիկին և ով որ ձեզի կհարցնի՝ ո՞ւր կերթաք, ասեք՝ կերթանք ածուխ բերելու, երկաթագործի աշակերտներ ենք»:

Լուս չբացված՝ ելանք ճանապարհ: Մտանք Սիսեռկա կալեն (կիրճը) և հասանք էն Սուրբ ծառին, որ ինձի պիտի սպաներին: Նստանք հացի, հանգստի: Բարսեղը մեր հետ ամեն տեսակ ուտելիք և առատ լավաշ հաց էր դրած: Հազիվ էինք հաց կերած, տեսանք կալուց հիսունի չափ թուրք զինվոր եկան: Ենովք ինձի ասաց. «Դու չխոսաս»: Եկան նստան՝ հանգստանալու: Ենովքը թուրքերեն լավ գիտեր, մի լավաշ հացի մեջ պանիր դրեց և ասաց. «Աֆանդի[126], համեցեք»: Աֆանդին մի լավ երիտասարդ էր, իր չանթայից[127] կլոր հաց հանեց, պարզեց դեպի Ենովքը, ասաց. «Կարդա՛շ եղբայր, դուք մեր հացը կերեք, ես ալ ձեր հացը կուտեմ»: Զինվորները հացները կերան և մենք միասին ճամբա ընկանք: Աֆանդին կհարցնի, թե ուր կերթանք, Ենովք կըսե, որ կերթանք քոմուռ[128] բերելու:

Մենք հասանք Սևտիկե կալու բերանը: Այնտեղ զորանոց կար, աֆանդին ձեռք տվեց, մնաք բարի ասաց, գնաց: Կես ժամից մենք մտանք կալեն (կիրճը), բայց ի՞նչ տեսանք, այս կալեն չի նմանի Սիսեռկա կալուն, դուրսը արև է, իսկ ներ-

[125] **Սևտիկին** գյուղը գտնվում էր Վանի նահանգի Շատախի գավառակում, Շատախ գյուղաքաղաքից 8-9 կմ հյուսիս, Սևտիկին գետի աջ ափին: Ըստ Ա.-Դոյի՝ 1909 թ. ուներ 48 տուն հայ բնակիչ (նշվ. աշխ., էջ 64): Կար եկեղեցի և վարժարան: Ավերվել է 1915 թ. (ՀՀՇՏԲ, հ., 4, էջ 585):

[126] **Աֆանդի**-հարգալից դիմելաձև, պարոն:

[127] **Չանթա**-պայուսակ:

[128] **Քոմուռ**-ածուխ:

սը՝ մութ: Վախեցանք, որ գիշեր մնանք այստեղ, վայրի գազաններ մեզ կուտեն:

Սարերն այնքան բարձր են, որ հազիվ կապուտ երկինք կտեսնանք. մի կողմից անտառը, հսկա գետը և գետի մյուս կողմեն կերթա մի բարակ ճանապարհ: Մենք, Աստված կանչելով, կամուրջն անցանք և սկսեցինք ոչ թե քայլել, այլ վազել և ինչպե՜ս ենք վազում: Մի ժամ էր, որ կվազեինք: Հանկարծ մի խումբ մարդեր տեսանք, մոտիկացանք, բարևեցինք:

Ենովք ասաց. «Եղբայրնե՛ր, Սևտիկին գյուղը շա՞տ հեռուն է»: Մի մարդ ասաց. «Այս է Սևտիկին գյուղը»: Եվ ծիծաղեց: Ասաց. «Երիտասարդ, իրավունք ունիք իբրև գյուղ չճանաչեք: Պատեր չկա, մեր գյուղի շուրջ բոլոր տներ գետնի տակն է»: Մենք հանգստացանք, որ հասեր ենք Սևտիկին գյուղը: Հարցուցինք պարոն Բաղդիկին, մի մարդ՝ տիժ քոլոզը[129] գլխին, չուռ[130] աբան[131] հագած, մաուզերը կողքին կապած, եկավ առաջ, ասաց. «Ես Բաղդիկն եմ»: Մենք կոմիտեի թուղթը և Ենովքի փայտը տվեցինք նրան: Կանչեց. «Ապրո՛, այս տղաներին տար ձեր տուն»: Ապրոն ընկավ մեր առաջ, գնացինք, տանիք, դուռ և պատուհան չկա, մի փայտ հրեց էն կողմը, մի դուռ բացվավ, տեսանք աստիճան է, որ պիտի իջնենք ցածը: Ապրոն մեկ-մեկ մեր ձեռքեր բռնեց, իջանք ցածը, տեսանք մի կողմը կապված մի ջորի և երկու կով, իսկ մյուս կողմը մի սենյակ է՝ քուրսին դրած, մենք մտանք քուրսու տակ և քնանք: Երբ արթնացանք, մյուս առավոտն էր, Ապրոյի կինը մեզի համար չորթանի ապուր էր պատրաստել:

Մեր հացը վերջացած էր: Ապրոն ասաց. «Բաղդիկը ձեզի կսպասե»: Մենք դուրս ելանք, տեսանք մի ավելի երիտասարդ՝ հագած չուռ քազաղիկ[132] և քոլոզ փուշին[133], շուրջը՝ պատրոնդաշը կապած, դաշույնը՝ մեջքին խրած և մաուզերը՝ կողքին կախած: Բաղդիկը մեզի ծանոթացուց, ասաց. «Այս էլ մեր երիտասարդ Ֆիդայի Ազատ Սիմոնյանն է»:

Մութ ընկած էր: Բաղդիկը տվեց մի նամակ և Ենովքի փայտը ու մի մարդու կանչեց և ասաց. «Գյուղից քիչ մը երթալուն կամուրջը կանցնես, կերթաս Հաշկանց գյուղը[134], ասոնց կհանձնես Նեթոյին և ստացական կբերես»: Այս մարդը մեզի կտանի: Վերելք է, ճանապարհ չի երևում: Ընկնելով և կանգնելով՝ հասանք Հաշկանց գյուղը: Մեզի դիմավորեց մի տարիքավոր մարդ՝ հրացանը ուսին: Բարևեցինք, մեզի տարավ իր տուն, քնանք, մինչև լույս բացվավ: Մեզի կերակրեցին, մնացինք մինչև մութը ընկավ, մեր երեկվան մարդը, որ անունը Նեթո էր, ասաց. «Ելե՛ք, երթանք, այժմ կիջնենք, շատ դժվար է իջնելը, մութ է և ցեխ»: Հասանք գետին: Ասաց. «Ձեր հագուստները հանեք, կապեք, դրեք ձեր գլխի վրա և մի ձեռքով պահեք, մյուս ձեռքերով կբռնենք իրարու, կամաց-կամաց կանցնենք»: Այդպես էլ արեցինք, մտանք ջուրը, այնքան սառն է և քարքարոտ, որ չենք կարող առաջ երթալ. վերջապես անցանք:

Սառել էինք, չէինք կարող մեր ոտնամանների կապերը կապել, քիչ էր մնացել, որ լացեինք, վերջապես ճանապարհվեցինք: Նեթոն ասաց. «Տղանե՛ր, վազե՛նք, որ տաքանանք»: Սկսեցինք վազել և տաքացանք: Հասանք Թաղ քա-

[129] **Տիժ քոլոզ**-թաղիքից կամ բրդից պատրաստված սրագագաթ, ցից գլխարկ:

[130] **Չուռ**-անգորական այծ, նաև նրա փայլուն ու գանգուր բուրդը:

[131] **Չուռ աբա**-անգորական այծի բրդից գործված, ուսերին գցվող երկար հագուստ:

[132] **Քյազաղիկ** – կարճ թևերով և կուրծքը բաց վերնազգեստ, բաճկոն, հագնում էին տղամարդիկ, գործվում էր անգորական այծի բրդից: Դրսից այծի մորթու տպավորություն էր թողնում, ներսից հարթ էր և ամուր:

[133] **Փուշի (փուշի)** – մետաքսե սև, մեծ թաշկինակ՝ մոխրագույն եզրագծերով, երկու կողմից երկար ծոպերով, որ տղամարդիկ կապում էին գլխարկի՝ քոլոզի շուրջը այնպես, որ ծոպերը կախվեին:

[134] **Հաշկանց (Հաշկունց)** գյուղը գտնվում էր Շատախի գավառակում: Հայաբնակ էր: Ըստ Ա.-Դոյի՝ գյուղն ուներ 10 տուն բնակիչ (Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 64):

ղաքը: Կեսգիշերն անցել էր, Նեթոն մի դուռ ծեծեց, ներսից ասացին. «Ո՞վ է»: Նեթոն ասաց. «Կարապե՛տ»: Դուռը բացեցին, մտանք տուն: Մի սենյակ տվեցին մեզի: Նեթոյի հետ պառկանք կողք-կողքի մինչև առավոտ:

ԹԱՂ ՔԱՂԱՔԸ

Առավոտյան մի մարդ եկավ, մեզի նախաճաշի հրավիրեց: Շատ լավ նախաճաշ էր: Մեր սեղանին երեք մարդ էր նստած՝ կոմիտե Այվազը, Երկար Միրզոն ու Նեթոն: Մեր սուրհանդակը՝ Նեթոն, այն մարդն էր, որ տարիներ հետո տեսանք Պարսկաստան. «Ալիք» թերթ կբաժաներ: Ծանոթացանք, պատմեցինք, ասեցինք ու լացեցինք: Հացից հետո Ենովք իր ձեռքի փայտը և Բարսեղի թուղթը տվեց պարոն Այվազին: Ասաց. «Տղա՛, Կրպո՛, էդ խերունը[135] բեր»: Այդ մեխով Ենովքի փայտի ծայրը քանդեց, մեջից հանեց մի ճերմակ թուղթ, վրան գիր չէր երևում, գաղտնի գրով էր գրված: Ասաց. «Կրպո՛, տղաներին տար կողքի սենյակ, երեք օրից կտեսնվենք»: Մենք գնացինք մեր սենյակը: Նույն օրը դուրս չելանք, բայց պատուհանից կնայենք դուրս. ի՛նչ բարձր սարեր, ի՛նչ անտառներ, ո՛չ արտ և ո՛չ էլ ցորեն, կապույտ երկինքն է և էլ՝ ոչինչ: Ենովք ասաց. «Երվա՛նդ, ափսոս չե՞ն մեր կանաչ սարերը, մեր ցորենի արտերը»: Ես ասի. «Ենո՛վք, արի վաղը ելնենք պտույտի»: Կրպոյին ասացինք. «Մեզի իրավունք խնդրիր պարոն Այվազից՝ մենք երթանք դուրս»: Գնաց, եկավ ասաց. «Գնացե՛ք, բայց հեռու չերթաք, այստեղ կայմակամ[136] ու զինվորներ կան, ձեր հագուստը կտարբերվի մերինից, ձեզի կբռնեն»:

[135] Խերուն- փայտ՝ ծայրին մեխ, հերյուն, բիզ:
[136] Կայմակամ-գավառապետ:

Երկրորդ օրը՝ լուսաբացին, մենք ելանք պտույտի, կտեսնենք Շատախի վայելուչ բնությունը, երկու գետեր. մեկը Սևտիկնա գետն է, որ գիշերով անցանք, իսկ մյուսը կուգա շա՛տ հեռուներն, որ կըսեն Տիգրիս գետի մի ճյուղն է: Այս երկու գետերը կուգան Թաղի մեջը և կզարնեն իրարու, ահռելի փրփուր և ձայն հանելով՝ կերթան դեպի Մոսուլ և Բաղդադ, կխառնվեն Եփրատ գետին: Այդ երկու գետերի մեջն է գավառապետի երկու հարկանի շենքը:

Թաղ քաղաքում մահիկ և աստղ՝ թուրքի դրոշակը տեսանք, վախեցանք, անցանք մյուս փողոցը: Կեսօր էր... Մի անուշ կանացի երգ լսեցինք, գնացինք առաջ, տեսանք մի քանի հայ կիներ նստած սանդերի առաջ՝ երգելով ցորեն կծեծեն: Էն մեկը կերգի և երբ ՔԸ՛շտ-ՔԸ՛շտ - կանի, մյուսներն իրենց ձեռքի քարը ՔԸ՛շտ ասելով՝ կզարկեն սանդի մեջ: Մենք տարված էինք այս երգով:

Այստեղ կուզեմ այդ երգերից մի քանի տուն գրեմ.



ՍԱՆԴԻ ԵՐԳԸ[137]

Շատախու սարեր պետ-պետ[138] քարեր, խանե-խանե,
Ֆը՛շտ, ֆը՛շտ, ֆը՛շտ...
Տալ[139] չի լուսցիր արևն առից, խանե-խանե,
Խիյո-խիյո-խիյո, ֆը՛շտ, ֆը՛շտ...
Ես քի մեռնիմ կամար լուսնակ, խանե-խանե
Խիյո-խիյո-խիյո, ֆը՛շտ, ֆը՛շտ...
Տու[140] հո՞ւր կուկաս մինակ-մինակ, խանե-խանե
Ֆը՛շտ, ֆը՛շտ...
Արևն առեց վերնա սարին, խանե-խանե,
Խիյո, խիյո
Բարև տարեք ֆիդա յարին, խանե, խանե,
Գարուն բացվի երթանք զոմեն[141]
Իմ յար կիկա ձեռքնի շաշխանեն[142],
Խիյո, խանե, ֆը՛շտ, ֆը՛շտ...

---

[137] Սույն «Սանդի երգի» Մոկսի տարբերակը 1937թ. հրատարակել է Արամ Ղանալանյանը «Հայ չինականի աշխատանքի յերգերը» գրքում (էջ 173): Շատախի մեկ այլ տարբերակ է երգել Հայրիկ Մուրադյանը (տե՛ս Հայրենի երգեր, վերծանեց և կազմեց Ա. Փահլևանյանը, Երևան, 1980, էջ 55): Ըստ բանագետ Սուրեն Սահակյանի՝ «Սանդի երգերն» «ունեն երգիծական երանգավորումներ և ծավալվում են դրամատիկ բարդ պահերի դրսևորումներով ու համապատասխան երաժշտական դարձվածքներով: Վանի տարածքում այն ունի լայն դրսևորում: Ծավալուն է (օկտավայից ավելի) և բովանդակությամբ հարուստ՝ պատկերվում է սանդ ծեծելու ամբողջ գործողությունը, ա) աշխատանքի պատրաստվելը (ձավար բերելը, գործիքներ պատրաստելը, նստելը), բ) սանդ ծեծելու ռիթմիկական շարժումը, գ) ծեծված ձավարը հավաքելն ու աշխատանքի ավարտը: Ըստ այդմ էլ՝ երգն ունի երեք մաս: Առաջինը դանդաղ է և ոչ խստիվ չափավորված, երկրորդը՝ ենթարկված սանդը ծեծելու գործողությանը, երրորդ մասը գործի ավարտն է՝ աշխույժ ռիթմով, հետզհետե արագացող տեմպով և գոհ, ուրախ բացականչությամբ («ու՛շը», որը երեք անգամ կրկնվում է), տե՛ս Սահակյան Ս., Հակոբ Հարությունյան, Երևան, 1985, էջ 102-103:

[138] Պետ-պետ-մեծ-մեծ, խոշոր-խոշոր:

[139] Տալ, դալ-դեռ, դեռևս:

[140] Տու-դու (դերանուն):

[141] Զոմեն-ամառանոց, յայլա:

[142] Շաշխան (չեշխանա)-հրացանի տեսակ, վեցկրականի:

Մենք այս երգերից և այդ կիների հագուստից շվարած ենք, կանգնած ենք պատի տակ, իսկ Կրպոն մեզի կփնտրե: Կեսօր է, և մենք կորած ենք: Վերջապես Կրպոն մեզի գտավ: Գնացինք տուն, եկած էր Երկար Միրզիկը: Պարոն Այվազը հարցրեց. «Դուք ո՞ւր էիք»: Մենք պատմեցինք մեր տեսածը և սանդի երգը, պարոն Միրզիկ ասաց. «Դուք ի՞նչ է, իրարու շատ կնմանիք»: Ես ասացիմ. «Պարո՛ն, մենք հորեղբոր տղաներ ենք»: Ասաց. «Ձեր հայրեր շատ տավար և գոմեշ ունի՞ն»: Ենովք ասաց. «Մենք որբ ենք, հայր չունինք, իմ հայրս սպանեցին, իսկ ասոր հայրը մի քուրդ սպանեց և փախած է, հայտնի չէ, սա՞ղ է, թե՞ ոչ»: Միրզիկը քուրդերեն ասաց. «Մեր հույսը այսպիսի որբ սերունդն է»:

Մեզի մի օր ևս պահեցին, ճանապարհը փակված էր, ձյունահյուս էր եկած և մյուս օրը Կրպոն եկավ մեզի ճանապարհով տարավ: Զհասած Սևտիկին գյուղը՝ էն բարձր սարերի գլխից մի շատ մեծ ջուր կուգա, կթափի գետի մեջ: Կաթի պես ճերմակ է, տակից անցնելուն չի թափվի մարդու վրան, նրան Հաշկանի ակ անուն կուտան: Սևտիկին հասնելուն մեզի դիմավորեց պարոն Բաղդիկը: Ասաց. «Տղանե՛ր, մի երկու օր պիտի սպասեք, ձյունահյուս է եկած, ջուրի առաջը կտրած և ճանապարհը փակած է, մնացեք երկու օր ևս»: Սևտիկին գյուղի վերևը մի հսկա ժայռ կա, որ կախվեր է գյուղի վրա, մարդ նայելուն՝ կվախենա: Մի գիշեր սոսկալի խուլ ձայներ լսեցինք, մեզի արթնացրեցին, բոլոր գյուղը փախած էր այդ ժայռի տակ, մենք էլ գնացինք: Առավոտ լուսացավ, տեսանք այդ երկու օրվան ջուրը, որ լիճ էր եղած, ձյունահյուսին կկոտրի և ահռելի դղրդյունով եկավ, ոչխարի գոմեր և կառավարական շենքը սրբեց տարավ: Բաղդիկ ասաց. «Տղանե՛ր, այդ ձեր հետ եղած զինվորներ պիտի գային այդ շենքը, Աստված մեր երես նայեց, ջուրը սրբեց, տարավ, թե չէ նրանք մեր գլխին փորձանք կլինեին»: Մի մարդու կանչեց և ասաց. «Եղո՛, այս տղաներին կտանես մինչև մեր կալու բերան, կծռվես ձախ թևի կալեն, այդ զինվորականը վա-

ղը կուգա տեսնալու այն շենքը, որ ջուր տարավ, թող սրանց չտեսնա, կճանաչի, լավ չէ»: Մենք մի քանի լիտր ածուխ և մի քանի հատ ձեռքի և գութանի փայտ ջոկեցինք, շալակեցինք, Կրպոյի հետ ճանապարհվանք, հասանք կալու բերանը, ծռվանք ձախ կողմը, այս էլ կալեն է, հասանք մի քանդված վանքի, որ «Սուրբ Նշան» անուն կուտային: Ելանք դեպի վերևի սարը, շատ գնացինք, ձյունն և ցուրտը սկսեց, սարերով հասանք մեր սարի գլուխը, ուրախացանք. մեր գյուղը երևում է:

Մենք այժմ սարի գլխին ենք, կտեսնանք ամբողջ Հայոց ձորը, մինչև Վան քաղաքը ու ծովը՝ մինչև Սիփանա սարը: Ի՜նչ հրաշալի է, Վասպուրականին նայես բարձր սարի գլխից: Մենք Եղոյի հետ համբուրվանք և ճանապարհվանք: Այժմ պիտի իջնենք մեր գյուղը, իջնելուն մենք վարժ էինք: Մեր շալակներինը դրեցինք մեր տակը և մի հաստ փայտ դրեցինք մեր թևերի տակ, սկսանք սահել ձյունի վրա, երբ սրընթաց էր լինում, հենվում էինք փայտին, արգելակ էր լինում և դանդաղում էր, մենք վարժ էինք, չէ՞ որ սարի զավակ էինք:

Իջանք սարի տակ իմ աղաջան[143] Գոմեշ Հոխանի մարագի առաջ, ասացիմ. «Ենո՛վք, մտնենք մարագը, քնենք մինչև առավոտ»: Ենովք ասաց. «Չէ՛, առավոտուն մեզ կտեսնան գյուղացիք: Եկ երթա՛նք Բարսեղի օդեն, թե՛ տաք է և թե՛ մեզի մարդ չի տեսնա»: Գնացինք, դուռը ծեծեցինք, ծառան բացեց, մեր շալակներ ցած առինք և կողք-կողքի քնանք: Առավոտուն Բարսեղ կուգա, կտեսնի, որ քնած ենք: Մեզի ձայն տվեց, վեր ելանք, շատ ուրախ համբուրվանք, նամակը և մեր ձեռքի փայտերը հանձնեցինք, հետո գնացինք մեր տունը: Մայրիկս նոր էր թոնիրը վառել, վերջացրել և թանապուրի պուտուկը ձեռքումն էր, մենք բարի լույս ասացինք, հասավ մեզի, առեց իր թևերի մեջ, մեկ ինձի, մեկ Ենովքին կհամբուրեր:

[143] Աղաջան – հարգալից դիմելաձև:

Վերջապես նստեցինք՝ թանապուր ուտելու, մայրիկս ասաց. «Ուշացաք»: Ենովք ասաց. «Ազի՛, բա երկու գոմեշ բերել շատ դժվար է»: Մայրս ասաց. «Որ փախնեին, ի՞նչ կանեիք»: Ես ասացիմ. «Մամ՛ ջան, Բարսեղի հոտաղը երկու մեծ լուծ կապեց գոմեշների վզից, որ չփախնեն»: Ասաց. «Ոստանի քուրդերը ձեզի չնեղացրեցի՞ն»: Ենովք ասաց. «Չէ, ազի՛ ջան, Ոստանում այժմ կայմակամ կա, զորք կա, շատ ծուռ կնայեին մեզի»:

ԵՐԴՈՒՄ ՄՈՐՍ ՄՈՏ

Մայրիկս ասաց. «Բարսեղ ձեզի մի բան տվե՞ց»: Ասինք. «Չէ՛, մայրիկ»: Մայրս բարկացավ: Ասաց. «Բեմուրա՛զ մեռնի, նրա պատանքը սև թելով կարեմ, խա վալլա, խա»: Ես ասացիմ. «Մա՛մա, մի՛ անիծի: Բարսեղ ասաց՝ ձեր նեղության համար երկուսիդ արտերը ամառվան այդ գոմեշներով կհերկեմ»: Այս խոսակցության ամբողջ ժամանակ, մայրս տարօրինակ կծիծաղեր, վերջը ասաց. «Բարսեղի գոմեշի կոտոշը իր փորում լինի: Ելե՛ք, գնացե՛ք ձեր շալակած և բերած Սեւտիկնա շախկամը բերեք, ուտենք»: Մենք լուրջ ապշանք: Ենովք ասաց. «Ազի՛ ջան, ի՞նչ Սեւտիկին, ի՞նչ շախկամ[144]»: Մայրիկս երկուսիս էլ գրկեց և ծիծաղելով ասաց. «Իմ ազիզ բալաներ, ես ձեր ամեն քայլին ծանոթ եմ, ձեր Վան քաղաքը երթալը, ձեր Շատախ երթալը և ձեր Սուրբ միությունը, բոլորը Գասպարը պատմեր է ինձի, ես շա՛տ-շա՛տ ուրախ եմ, որ դուք հասած եք և չեք ուզի ձեր հայրերի նման դաշույնով սպանվեք»: Մի ա՛խ քաշեց և ասաց. «Զմեռնեմ, որ դուք երկուսով էն Գասպարի պատմած ֆիդայիների նման պատրոնդաշ կապած և հրացան ձեռքերնիդ՝

[144] Շախկամ-շաղգամ:

իմ առաջ ջուխտով[145] կանգնած տեսնեմ և մեկ էլ տեսնեմ, որ դուք մի թուրքի և կամ մի քուրդի դաշույնով սպանել եք, ինչպես տեսամ էն խեղճ Ատոմը և ցորենի արտի մեջ Ահարոնը»: Եվ լաց եղավ: Ենովքը իմ ձեռքս բռնեց, ասաց. «Մամի՛, ոտքդ համբուրենք, երդվենք, ուխտ անենք, որ պիտի ֆիդայի դառնանք և մեր հայրերի վրեժը առնենք»:

Այսպես էլ արեցինք: Մայրիկիս արտասուքը չէր դադարում: Ելանք, գնացինք Բարսեղի օդեն: Հավաքված էին մեր ընկերները, մեզի տեսնալով՝ շատ ուրախացան: Բարսեղը նամակները կկարդար և շատ տխուր էր, կարդաց, վերջացուց և ասաց.

- Գրած է, որ Հայոց Հայրիկը[146] վախճանվել է և էն Սասունի անմահ հերոս Գևորգ Զավուշը[147] մի ահեղ կռվի մեջ նահատակվել է. սուգ է:

---

[145] **Ջուխտ-զույգ:**

[146] **Հայոց Հայրիկը** (Մկրտիչ Խրիմյանը) ծնվել է 1820թ. Վանում: 1840-60-ական թթ. զբաղվել է լուսավորչական-կրթական գործունեությամբ, եղել է ուսուցիչ, հիմնադրել «Արծվի Վասպուրական» (1855), «Արծվիկ Տարոնո» (1863) պարբերականները, ինչպես նաև Վարագա վանքի ժառանգավորաց գիշերօթիկ վարժարանը (1857), Մշո Ս. Կարապետ վանքին կից ժառանգավորաց վարժարանը (1862): Փորձել է թեթևացնել թուրք և քուրդ հարստահարողներից ճնշվող հայ գյուղացու վիճակը, վայելել է ժողովրդի համակրանքը՝ ստանալով «Հայրիկ» պատվանունը: Հայկական հարցը լուծելու նպատակով եղել է եվրոպական մի շարք երկրների իշխանավորների մոտ: 1878թ. գլխավորել է հայկական պատվիրակությունը Բեռլինի կոնգրեսում: Սակայն կոնգրեսից հետո, հիասթափվելով եվրոպական տերություններից, հանդես է եկել ազգային-ազատագրական պայքարի կոչով: 1893թ. մայիսին Էջմիածնում օծվել է Ամենայն Հայոց կաթողիկոս՝ շարունակելով ազգային-ազատագրական գործունեությունը: Հեղինակ է մի շարք գրքերի, որոնցում արտահայտել է հայ ժողովրդի վիշտը, հույզերն ու տառապանքը: Մահացել է 1907թ. Վաղարշապատում (Խրիմյան Հայրիկի մասին տե՛ս Տէր-Մկրտիչեան Երուանդ, Գանձեր Վասպուրականի, հ. 1, Պոսթոն, 1966, էջ 164-229, Խրիմյան Հայրիկ, Երկեր, հրատարակության պատրաստեցին Հ. Պետրոսյանը, Ա. Մադոյանը, Երևան, 1992, էջ 5-18):

[147] **Գևորգ Զավուշը** (Ղազարյան Գևորգ Արոյի)՝ հայ ազատագրական շարժման ակնառու կազմակերպիչներից և հերոսական դեմքերից մեկը, ծնվել է 1870 թ. Սասունի Բասնայ գավառի Մըկտենք գյուղում, զոհվել է 1907թ. Մշո Սուլուխ գյուղում՝ թուրքերի դեմ մղված անհավասար մարտում: Սովորել է Մշո Առաքելոց վանքի դպրոցում: 1890-ին միացել

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ[148] «ԾԱՂԻԿ» ԽՈՒՄԲԻ ՀԻՄՆՎԵԼԸ

Անցան օրեր, և հասանք 1908 թվականը: Ես մտամ քսանի մեջը, Ենովքը մտավ քսանհինգի մեջը: Եկան-գնացին մեր ջանֆիդայիները: Բարսեղը ասաց. «Տղանե՛ր, մեր վերի սենյակը դասավորեք, շատ մեծ մարդ է եկողը, դուք էլ մաքուր հագնվեք և ձեզի լուրջ պահեք, մեր պատիվ բարձր մնա, մեր անուն ամեն տեղ գնացեր է և շատ ուրախ պիտի լինենք»: Մենք ամեն ինչը պատրաստեցինք և եկան մեր հարգելի հյուրերը:

է համբարձում Պոյաջյանի մարտական խմբին, մասնակցել Սասունի 1891-94թթ. ինքնապաշտպանական կռիվներին: 1894թ. թուրքական կառավարությունը ձերբակալել և դատապարտել է 15 տարվա ազատազրկման: Քսան ամիս հետո բանտից փախել է Սասուն: Անդրանիկի հետ մասնակցել է Բերդակի և Առաքելոց վանքի կռիվներին, 1904թ.՝ Սասունի ապստամբությանը, ղեկավարել է Իշխանաձորի և Տալվորիկի մարտական գործողությունները: Գևորգ Զավուշի մարտական խումբը Կարսում, Աստղում, Արքավանքում և այլուր հերոսաբար կռվել է թուրքական ուժերի դեմ (Գևորգ Զավուշի մարտական գործունեության մասին տե՛ս Հ. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Երևան, 1999, էջ 70,75, 76, 79, 81, 82, տե՛ս նաև Հ. Գևորգյան, Ազատագրական պայքարի հերոսապատումից, Երևան, 2006, էջ 409-449):

[148] **Հայ յեղափոխական դաշնակցություն** կուսակցությունը ստեղծվել է 1890-ի հուլիս-օգոստոսին Թիֆլիսում: Հիմնադիրները և առաջին ղեկավարներն էին Ք. Միքայելյանը, Ս. Զավարյանը, Ս. Զորյանը (Ռոստոմ): 1890-ի սեպտեմբերին հրապարակված ՀՅԴ հռչակագրում նշված է, որ նոր ստեղծված կուսակցության նպատակն է համախմբել ժողովրդի ուժերը, ձեռք բերել քաղաքական և տնտեսական ազատություն Արևմտյան Հայաստանի համար: Այն արտահայտվել է ՀՅԴ առաջին ծրագրում, որն ընդունվել է 1892-ին, կուսակցության առաջին ընդհանուր ժողովում: ՀՅԴ դավանում է ժողովրդավարության ու ընկերվարության գաղափարներ, սակայն կուսակցության գաղափարախոսության, ռազմավարության և գործելակերպի հիմնական խնդիրը Հայկական հարցի լուծումն է: Նրա շարքերում են եղել բազմաթիվ հայ նշանավոր մտավորականներ, գրողներ, հասարակական-քաղաքական, ռազմական, պետական գործիչներ: Աշխարհի բազմաթիվ երկրներում ունի կուսակցական հզոր կառույցներ, հրատարակում է մի շարք թերթեր և ամսագրեր (Հայկական հարց, Հանրագիտարան, էջ 205):

Նոր տարի է, գյուղը ցնծության մեջ է: Կոմիտեն ասաց. «Եկեղեցու դուռը բացե՛ք, մաքրե՛ք և ժամկոչին ասե՛ք՝ ժամի կոչնակը զարկի և գյուղացիներին հրավիրի ժամը»: Մենք այս ամեն կարգադրեցինք: Գյուղացիք հավաքվեցին եկեղեցին: Եկան մեր հյուրերը: Սրանց հագուստը ուրիշ տեսակ էր: Առաջինների պես զինված էին, բայց գլուխներ քոլոզ չկար, ամեն մեկը մի գառան մորթի գլխարկ ուներ և ոտներին մինչև ծունկերը հասնող կոշիկ:

Երբ մտան ժամը, գյուղացիք ոտքի ելան և անոնցմե մեկը՝ նստե՛ք, ասաց: Ժողովուրդը նստեց: Նրանցից ամենամեծը Սարգիսն էր[149], մյուսը զինագործ Բուլղարացի Գրիգորն էր, մեկը Սարդարապատ գյուղացի Եգորն[150] էր, վերջինը ղարաբաղցի Դալի Ղազարն էր: Նախ խոսեց Մեծ Սարգիսը: Ասաց. «Սիրելի Քերծ գյուղացիք, չեք հարցնի ինչո՞ւ այս ձուն-ձմեռոցին մենք, փոխանակ քաղաքում Նոր տարի տոնենք և ուրախանանք, եկած ենք ձեզի հետ Նոր տարի տոնենք: Ես մի շաբաթ է կշրջեմ ձեր գյուղի շուրջը, ձեր գյուղը շատ լավ դիրք ունի կռվելու համար: Ձեր սարի հետև Փեսանդաշտն է, որ Լևոն Շաղոյանն իր խումբով այնտեղ է, ձեզի կպաշտպանի: Ինձի ուղարկել է Արամ փաշեն, անցյալ տարվան ցուցակով ձեր գյուղը շատ հարուստ է: Հայոց Ձորի գյուղերի ցուցակում գրված է, որ ձեր գյուղից յոթանասուն մարդ է

[149] **Սարգիս Բարսեղյանը** ծնվել է 1875թ. Գետաբեկ գյուղում, հայտնի է նաև Վանա Սարգիս անունով: 1886թ. ծնողները տեղափոխվում են Գանձակ: 1891թ. Սարգիսը Թիֆլիսում ընդունվում է Ներսիսյան դպրոց: Եղել է Քրիստափոր Միքայելյանի աշակերտներից: Կիսատ թողնելով համալսարանական ուսումը՝ մասնակցում է Կովկասում ահաբեկչական գործողություններին: Եղել է ՀՅԴ Բյուրոյի անդամ: Նա մեծ հեղինակություն էր վայելում Վան քաղաքում և շրջակայքում, հայտնի էր որպես փայլուն հռետոր և կազմակերպիչ: Սարգիս Բարսեղյանը Վանում հիմնադրում է «Աշխատանք» թերթը, 1915թ. նահատակներից է (տե՛ս Գ. Լազեան, Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Մոնթեբելո, Կալիֆորնիա, 1993, էջ 207-219):

[150] **Եգոր Տեր-Մինասյանը** նշանավոր հայդուկ էր, ՀՅԴ անդամ, Անդրանիկի կամավորական գնդի վաշտապետ (Թուրշյան Հ., Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969, էջ 233-236):

սպանված: Մի՞թե այն քուրդը ձեզանե առավելություն ուներ: Հարցը նրանումն էր, որ նա դաշույն ուներ:

Իսկ դուք, նրա ոտքերն ընկնելով, աղաչանք կընեիք: Մի՞թե չեք լսել Խրիմյան Հայոց Հայրիկի քարոզը, որ կըսե. «Հա՛յ ժողովուրդ, քո գութանի խոփը կոտրի՛, քեզի սուր չինի՛, որ քեզի պաշտպանես»: Այժմ, սիրելինե՛րս, վերջի խոսքս այս է, դուք պիտի զենք առնեք, մի կուռ կազմակերպություն կազմեք: Մենք կրկին կուգանք և ձեր գյուղի համար դպրոց և դիրքեր կշինվի: Իմ խոսքս վերջացավ, խոսքը ասոնցն է»:

Եվ ձեռքով ցույց տվեց իր ընկերներին: Դալի Ղազարը ոտքի ելավ, ասաց. «Կոմիտեն թող առաջ անցնի»: Բարսեղը առաջ եկավ: Ասաց. «Քո խումբը ներկայացուր»: Կոմիտեն մեզի շարքով ներկայացրեց և դիմեց տերտերին. «Տե՛ր Հայր, բե՛ր քո Սուրբ խաչը և Ավետարանը»: Տերտերը բերեց: Դալի Ղազարը պայուսակից հանեց մի կարմիր թաշկինակ, իսկ թաշկինակի միջից հանեց մի դրոշակ, որի վրան կարված էին՝ մի սո՛ւր, մի բա՛հ և մի գրի՛չ: «Թող գա՛ Բարսեղը»: Առաջ գնաց, ասաց. «Քո ձեռքդ դիր այս Խաչի և Ավետարանի վրան և մյուս ձեռքդ՝ այս Սուրբ Դրոշակի վրան»: Բարսեղը այդպես էլ արեց: Ամբողջ գյուղացիները շատ լուրջ կնայեին այս արարողությանը:

Դալի Ղազար իր թնդուն ձենով հրամայեց. «Ես ինչ որ ասեմ, դու կրկնի՛ր: Երդվում եմ այս Սուրբ Խաչով և Սուրբ Ավետարանով, երդվում եմ այս Սուրբ Դրոշակով, որ հավատարիմ լինեմ իմ հայ ազգին և այս Սուրբ Կուսակցությանը, որ կոչվում է Դաշնակցություն: Եթե պետք լինի, իմ կյանքս և արյունս կզոհաբերեմ ազգիս համար: Եթե դավաճանեմ իմ ազգիս կամ իմ կուսակցությանս, այս սուրը իմ դատավորը թող լինի»:

Բարսեղից հետո մենք մեկիկ-մեկիկ չոքեցինք, երդվանք: Վերջանալուց Եգորն իր պայուսակից հանեց մեդալի պես կուսակցական կնիքով կնքված բաներ, բաժանեց մեզի, և

մենք եղանք մեր գյուղի առաջին դաշնակցական «Ծաղիկ» խումբը՝ 1908 թ.:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ԿԶԻՆՎԵՆ

Վերջանալուց Մեծ Սարգիսը կոմիտեին պատվիրեց, որ գյուղի բոլոր երիտասարդներին ցուցակագրի, խումբերի բաժանի և գյուղի պաշտպանությունը այս խումբին հանձնի: Կոմիտեն բոլոր տղաների ցուցակը պատրաստեց: Բոլորը եղան հարյուր և չորս որբ, մնացած տղաները և տաս խումբ եղավ, տասնապետներ որոշեց և հանձնեց մեր խումբին, որ նրանց կարգապահություն սովորեցնենք: Ինչ որ գյուղացին մինակ չի կարող անել, մենք պետք է օգնենք: Այժմ հերթը գյուղի պաշտպանությանն է: Կոմիտեն որոշեց, որ իմ հորս շաշխանեն բերեմ, մի շաշխանա հրացան էլ Ենովքի քեռին՝ Մուքայելը ուներ: Որոշեցինք Ջիբոյի տղային՝ Թեյմուրին, առնենք մեր մեջ: Մի հրացան էլ Ջիբոն ունի, պատրոնով է, և մեր գյուղը պիտի որ պաշտպանենք: Շաքըր աղայի ծառան Ջիբոյի քույր Մասումեն առեր է և մնացեր է մեր գյուղը: Մի հրացան էլ նա ունի, և այս չորս հրացանը Ջիբոյի իրավունքով տվեցին մեզի, որ գյուղը հսկենք:

Ջիբոյի փեսա Յաղուբի հրացանը տվեցին ինձի: Ենովքն իր քեռու շաշխանեն առավ: Մեր շաշխանեն տվեցին մեր խումբի անդամ բարվարցի Վարդանին:

Թեյմուրն իր հոր հրացանը ուներ, ուրեմն, երբ որ ոչխար կթելու հերթը սարին լինի, մենք չորսով պիտի առաջուց բարձրանանք սարը, որ կանայք ապահով լինեն: Եվ, այսպիսով, մեր գյուղը դարձած էր մի անխորտակելի, ապահով ամրոց, իսկ ամբողջ գյուղացիք՝ որպես մի տունի բնակիչ:

Հասանք ամառվան: Ցորենը հասած է քաղելուն: Մարդ է պետք: Այն ընտանիքը, որ քաղվոր չուներ, մեր բոլոր խումբերով կերթայինք՝ քաղելու և սայլով բերելու: Գյուղի ամեն գործերը կանոնավորապես կկարգադրեինք:

ՀՈՒՐԻԱԹ[151]

Մի առավոտ չորս ձիավոր թուրք եկան ռես Խաչոյի տուն և հրամայեցին՝ բոլոր գյուղացիք հավաքվեն՝ նրանց խոսքը լսելու:

Գյուղացիները հավաքվեցին ռես Խաչոյի դուռի առաջ: Թուրք զինվորականը սկսեց իր քարոզը: Մեր գյուղի ժողովուրդը թուրքերեն չի հասկանա: Մի գրագիր ունեինք՝ Աբել Եսայան, որ Պոլիս է կարդացել, թուրքի ասածները կթարգմանի հայերենի: Մի նամակ տվեց Աբելին, որ կարդա: Նամակը գրված էր երկու լեզվով՝ հայերեն և քուրդերեն, այն ստորագրած էին Արամ Մանուկյան և փոլիսի մուդուրը[152]: Գրվածը Աբելը բարձր կարդաց. «Սիրելի՛ հայ ժողովուրդ, այժմ հասած է ժամը մեր ուրախության, կարմիր Սուլ-

[151] Հուրիաթ (Հուրիեթ)-ազատություն: Հեղինակը նկատի ունի 1908թ. երիտթուրքական հեղաշրջումը: Նրանց հաղթանակը Համիդյան բռնապետության նկատմամբ սկզբնական շրջանում համընդհանուր խանդավառության առաջ բերեց: Ամբողջ կայսրությունում տեղի ունեցան ցույցեր՝ «ազատություն», «հավասարություն», «եղբայրություն», «արդարություն» կարգախոսներով, ազատ արձակվեցին հազարավոր բանտարկյալներ ու աքսորականներ, վերացվեց գրաքննությունը, վերադարձան քաղաքական վտարանդիները: Սակայն, կարճ ժամանակ անց, բացահայտվեց երիտթուրքերի իսկական էությունը: Նրանք որդեգրել էին հակաժողովրդական և հետադեմ քաղաքականություն: Ոչ թուրք հպատակների նկատմամբ շարունակեցին ձուլման՝ բռնի թուրքացման քաղաքականությունը: Ադանայում և Կիլիկիայի մյուս շրջաններում կազմակերպեցին հայ բնակչության զանգվածային ջարդեր, որոնց զոհ գնաց 30 հազար հայ: Առաջնորդվելով պանթուրքիզմի շովինիստական գաղափարախոսությամբ՝ նրանք 1915թ. նախապես մշակված ծրագրով իրականացրին արևմտահայության ցեղասպանությունը (ՀՍՀ, հ. 3, էջ 590-591):

[152] Փոլիս-մուդուր-ոստիկանապետ:

թան Համիդը[153] տապալվեց: Իր եղբայր Սուլթան Ռաշիդն է թագավորելու: Հուրիաթ է հայտարարված: Այսուհետև ո՛չ աղա կլինի, և ո՛չ էլ՝ քուրդ բեկ: Հավասարություն է. բոլոր ֆիդայիներին ներում է եղած, բանտերից կազատվեն բոլոր բանտարկյալները: Նույնիսկ ցմահ բանտարկյալները, որ հարյուր տարի պիտի մնային բանտի մեջ, այժմ ազատված են, կուգան իրենց տունները: Դո՛ւք աշխատեք ձեր գյուղական միությունը ամուր պահել»: Վերջացավ:

Մյուս երեսը կարդաց Ջիբոն, նույն բառերը և խոսքերը: Մի շաբաթ հետո եկան բանտարկյալները՝ խումբ առ խումբ: Եկան մեր գյուղից երեք քուրդ և երկու հայ՝ Ներսոյի Ղազարը, Տարմոյի Հարոն, որ ցմահ բանտարկված էին:

ՀԱՋԻ ՄՈՒՐԱԴԸ

Մի գիշեր կոմիտեն լուր ղրկեց, որ երկու մարդ է գալու. «Մեր վերին սենյակը մաքրե՛ք և պատրաստ կեցե՛ք»: Եկան երեք մարդ և ո՛չ թե երկու: Երկուսը մեզի ծանոթ էին, իսկ մեկը անծանոթ էր: Մենք ինչ-որ պետք էր կարգադրեցինք, հաց կերան և հանգստացան:

Կոմիտեին ասեցին, որ վաղը ժողով կլինի:

Երկրորդ օրը ժողով արեցին, և Հաջի Մուրադը կանգնավ խոսելու. ի՜նչ պարթև հասակ ուներ: Հինգ շարք պատրոնդաշներ, մաուզերը՝ կողքին, մետաքսե գոտու մեջ՝ խանչալը, քոլոզի շուրջ փաթաթեր է մետաքսե փոշին, հրացանը ձեռքին՝ կանգնավ և խոսեց: Ասաց. «Ո՛վ քերծեցիք, ես երկու տարի առաջ եկամ, հոտաղական միություն կազմեցիմ: Արդյոք կա՞, թե՞ քայքայված է: Ես գործով գնացած էիմ Շատախ: Եթե միություն գոյություն ունի, խնդրեմ, մի մարդ թող խոսի»: Կոմիտեի օգնական Մարկոսը վեր ելավ և այսպես պատասխանեց, ասաց. «Պարո՛ն Մուրադ, քո կազմած միությունը ո՛չ թե քանդված է, այլ ավելի հաստատված է, ցուցակը կազմված և զարաբաղցի Դալի Ղազարի մոտ է: Մենք այժմ ունինք հարյուր և մեկ երիտասարդ և տասը խումբ, շուտով մի խումբ ևս կավելնա, իսկ հացահատիկը չենք հավաքել, դուք ոչինչ չկարգադրեցիք»:

Պարոն Մուրադը ասաց. «Դուք ինձի և իմ թիկնապահ Ասպոյին կճանաչեք, իսկ այս ընկերը Ռշտունյաց գավառից է՝ Հիրճ գյուղացի է, մեծ կոտորածին ասոր ընտանիքը կոտորած են, իր կնոջ սիրուն լինելու համար կին ու երկու փոքրիկները քուրդը չի սպաներ: Այս մարդը քուրդին սպաներ է և այժմ պիտի մնա ձեր գյուղը մինչև նոր կարգադրությունը, ես աշուն կուգամ և նորանոր գործեր կլինեն: Այժմ մնաք բարի, ես կերթամ և նորից կուգամ»:

Անցան տարիներ: Ես այն հսկա մարդուն տեսամ Թավրիզի ճանապարհին՝ Թուրքմենչայում[154], որ յուղ կառներ և թիթեղներով կծախեր շոֆերներին: Ծանոթացանք, պատմեցինք մեր անցած օրերը, շատ հուզվանք: Ծերացեր էր, մնացինք անբաժան ընկեր մինչև իր մահը: Երկու տղա ուներ՝ Արամը Թեհրան էր, իսկ Ռաֆայելը՝ Հայաստան:

---

[153] **Սուլթան Աբդուլ Համիդ II** (1842-1918թթ.) - հայտնի է նաև «Կարմիր սուլթան» անունով, որն ստացել է հայկական արյունալի ջարդեր կազմակերպելու համար: 1895-96թթ. Աբդուլ Համիդը թուրքական զորքերով և «Համիդիե» հեծելագնդերով Օսմանյան կայսրությունում բնաջնջեց ավելի քան 300 հազար հայ:

[154] **Թուրքմենչայ**-գյուղ Թավրիզի ճանապարհին:

ԶԵՆՔԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄՆԵՐ

Հաջի Մուրադի երթալուց հետո գյուղացիները ժողով արեցին և որոշեցին՝ Մարկոսը հոտաղական միության պետն է լինելու և հոտաղների հասանելիք հացահատիկը պիտի հավաքի և աշնանը հանձնի Հաջի Մուրադին: Վերջը կտեսնանք Հաջի Մուրադի գործը: Մեր գյուղը մի մարդ կար, վեց մատ ուներ, անունը Սարգիս էր, բայց այդ վեց մատի համար «Շաշո Սարգիս» անուն կուտային: Այդ Շաշոն Արամ փաշայի սուրհանդակն էր: 1908 թ. գարնանն էր... Քաղաքից Շաշոն եկավ, բայց շատ տխուր լուրեր բերեց: Ասաց. «Արամ փաշայից խռոված մի զինվոր՝ դհերցի Դավիթը[155]*, զենքերի տեղը մատներ է և երկու հարյուր զինվորով կշրջի, բայց իր խումբի տղաներից մեկը՝ Տաճատ*[156] *անունով, նրան*

[155] 1907թ. դեկտեմբերին ՀՅԴ Վանի կենտրոնական կոմիտեն ցուցում է տալիս՝ քաղաքի թաքստոցներում եղած զենքերը մաքրել, յուղել, հաշվառել և նորից պահեստավորել իրենց տեղերում: Աշխատանքները մոտենում էին ավարտին, երբ զինապահեստի հսկիչներից մեկը՝ դաշնակցական դհերցի Դավոն (Դավիթը), 1908թ. հունվարի 23-ին ներկայանալով թուրքական իշխանությանը, մատնում է իրեն հայտնի զինապահեստների տեղերը Վանի Այգեստան և ուրիշ թաղերում, ինչպես նաև Վանից դուրս գտնվող Սբ Գրիգոր վանքում, որտեղ տարիների ընթացքում մեծ դժվարությամբ ամբարված էին Դաշնակցության զենքն ու ռազմամթերքը, հրազեն, ուժանակ և այլն (տե՛ս Միքայել Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հ. Բ, տպ. «Յուղաբեր», Կահիրե, 1950, էջ 28): Սարգիս Բարսեղյանի, Կոմսի, Արամի և Բուլղարացի Գրիգորի որոշումով պատանի Տաճատը դավաճանին ենթարկում է ահաբեկչության (տե՛ս Ավո, Տաճատ Թերլեմեզյան (վավերագրական պատում), Երևան, 2002, էջ 41, տե՛ս նաև Գ. Լազեան, նշվ. աշխ., էջ 212):

[156] **Տաճատ Թերլեմեզյանը** ծնվել է 1888-ին Վանի Այգեստան թաղամասում: Եղել է ՀՅԴ անդամ: Մասնակցել է զենքի Վան՝ Այգեստան տեղափոխությանը: Երբ Դավոն թուրքական իշխանություններին հայտնում է զենքերի թաքստոցների տեղերը, 18 տարեկան Տաճատ Թերլեմեզյանը նրան գնդակահարում է: Այնուհետև նա մեկնում է Կ. Պոլիս, այնտեղից էլ՝ Ամերիկա: Առաջին համաշխարհային պատերազմի օրերին գալիս է Թիֆլիս, միանում Իշխան Արղությանի խմբին, նրանց հետ գնում Վան, մասնակցում կռիվներին: 1918թ. նա Վանի 4-րդ գնդի կազմում մտնում է Իգդիր: Առաջին հանրապետության օրերին նա զինվորական ծառայության մեջ էր, իսկ Հայաստանի խորհրդայնացումից հետո

սպաներ է: Կառավարությունը Արամին և շատ հայտնի մարդկանց բռներ է: Այժմ սոսկալի խուզարկություն կլինի»:

Մի շաբաթ չէր անցել, տասը ձիավոր եկան մեր գյուղը: Նույն թուրք չավուշն[157] *էր, որը մեզի ազատություն քարոզեց, իջան ռես Խաչոյի տունը: Երեկոյան բոլոր գյուղացիներին հավաքեց և ասաց. «Երկու օր ձեզի ժամանակ կուտամ, որ ձեր զենքերը բերեք և հանձնեք ինձի»: Երկու օր անցավ: Զենք չունի գյուղացին: Երկու հատ շաշխանա բերին, մեկը մերն էր, չընդունեց, ոտքով հրեց և ասաց. «Քաֆի՛ր օղլի, քաֆիրներ, ձեր զենքեր, որ բռնված են, բոլոր ռուսական են, դո՛ւք ինձի կծաղրե՞ք»: Հրամայեց բոլորին կապկպել և ծեծել:*

Հալեպցի Մկրտիչի տաբատի մեջ կատու գցեցին, ծեծեցին, իսկ Թամկո Ավետի գլխին մեխ խփեցին, մի աչքը կուրացավ: Այս զուլումը Ջիբոն տեսնելով՝ կերթա չավուշի մոտ, կխնդրի, որ այս գյուղը զենք չկա, եթե լիներ, ինքը նրան կցուցներ: «Մեղք մի՛ անի, ասոնք մաքուր հողագործներ են»: Ջիբոն հիսուն ոսկի հավաքավ, տվավ չավուշին, չավուշը ոսկիներ առավ, գնաց մյուս գյուղերը՝ նույն գործը անելու:

ՀԱՅՐԻԿԻՍ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ամառ է: Գյուղացին տենդագին աշխատանքի մեջն է: Իմ Շատախ երթալուց մորաքույրս՝ Նարգիզ խաթունը, նամա-

մեկնում է ԱՄՆ: Քանիցս այցելել է Հայաստան: Մահացել է 1982թ. ապրիլի 23-ին Նյու Ջերսիում (տես՝ Ավո, Տաճատ Թերլեմեզյան, վավերագրական պատում, Երևան, 2002): Նրա անունով է կոչվել Արագածոտնի մարզի Ագարակ գյուղի դպրոցը (Յովնանեան Ռ., Հայ ազգի նուիրեալ զաւակը, «Վարագ» պարբերական, Լոս Անջելես, 2008, N 55, էջ 99):

[157] Չավուշ-զինվորական կոչում, սերժանտ:

կով կխնդրի մայրիկից, որ իր տղա Գասպարին թողնի, որ գա քաղաք և աշխատի: Գրած կլինի, որ Երվանդ մեծացեր է, մի հոտաղ վարձի՝ նրան օգնի: Մայրիկս մի ոզմեցի երիտասարդ՝ Մանուկ անունով, կվարձի, որ ինձի օգնական լինի: Ես և Մանուկը մի տարիքի և մի հասակի էինք, ճաշից հետո դաշտից կուգայինք, տեսանք մեր դուռի առաջ չորս ձի է կանգնած, երկուսը թամբած է, իսկ մյուս երկուսից բեռներ կիջեցնեն և կտանին մեր տունը: Մենք վախեցանք և կանգնանք: Հանկարծ մորաքույրս և հորեղբորս կինը վազելով հասան և ինձի գրկած կասեն. «Երվա՛նդ, բարոդ՝ հայրիկդ, ողջ և առողջ Պոլիսից եկած է»: Ես շշմած եմ և չեմ հասկանա՝ ի՞նչ բարո: Ես որբ եմ մեծացել, բաբո չունիմ: Մեկ էլ այս խոսակցության ժամանակ մեր տունից դուրս եկան գյուղի բոլոր իշխանները: Ջիբոն առաջն է, և ռես Խաչոն նրա կողքին, իսկ մեջտեղը մի կարմիր գլխարկով մարդ է Պոլիսի չուխա[158], շալվար և ջաքեթը հագին: Քաղաքացու ոտնաման էր հագած և ոսկի ժամացույցի շղթան ժիլետի աջ կողմից կերթար դեպի ձախ կողմը: Մայրս, այդ մարդու ձեռքը բռնած, հասան մեզի, ասաց. «Զարդա՛ր, իմ չոջուխս[159] ո՞ր մեկն է»: Մայրիկս լացակումած իմ ձեռքս բռնեց, ասաց. «Հակո՛բ, քո չոջուխը այս երիտասարդն է, որ չորս տարեկանից հասցրեր եմ քսան տարեկանի»:

Հայրիկս մի անսպասելի բարձր ձայնով անունս տվեց, ինձի գրկեց և այնպես արտասուք կթափի, որ արտասուքն իր սև բեղերից ջուրի պես կթափվի իմ երեսիս վրա, և ամբողջ ներկաները կլացեն: Այս տեսարանի վրա Ջիբոն եկավ առաջ և հայրիկիս ասաց. «Հակո՛բ եղբայր, հերի՛ք է, մեզի բոլորիս լացացրեցիր», և խումբով մտանք տուն:

Տուն հասնելուն պես սեղան բացեցին: Գյուղացու օրենքով շարեշար նստան գետնին: Հայրիկս Վանից մի մեծ

[158] Զուխա-բրդյա նուրբ, խավավոր գործվածքից կարված տղամարդու երկար վերարկու:
[159] Չոջուխ-երեխա:

կուժ օղի էր բերել: Ջիբոն և իր եղբայրը՝ Ահմադը, շարբաթ կխմեին, և ռես Խաչոն հորս բերած ղայլանը[160] պատրաստեց, սկսեց խմել և ծխել, ուրախանալ մինչև ուշ գիշեր:

Առավոտուն հայրս Ջիբոյին և ռես Խաչոյին կոֆե խմելու կանչեց: Եկան, հավաքվան, սկսեցին իրենց պատմությունները: Ջիբոն ասաց. «Հակո՛բ, ինչպե՞ս խփար Ոստանի քուրդին»: Հայրիկս իր գոտկատեղից հանեց զոպան և ցուց տվեց գլխի գունդ արճիճը, ասաց. «Երբ նա խանչալով հարձակվեց, որ ինձի զարնե, ես ասով անոր գլխուն զարկիմ և նա ընկավ: Իր ընկերը փախավ»: Ջիբոն և մյուսները մեկմեկու նայեցին և զարմացան: Սա ի՛նչ հրաշալի գործիք է, տասը հատ խանչալ կարժե: Այնուհետև հայրս շարունակեց. «Հասնելուս երկրորդ օրը գնացիմ բերդի տակ՝ մի քարվանսարա, իբրև քուրդ՝ մտամ ծառայության: Գնացիմ Ստամբուլը՝ իմ հին աղայիս մոտ: Աղաս ասավ. «Ձեր երկրի բոլոր հայերը կոտորած են: Ոչ մեկ հայ չի մնացել Վանի մեջ: «Հուրիաթ» եղավ, նոր իմացանք, որ աղաս սուտ է ասել և ինձ խաբած է, որ մնամ իրան ծառայելու: Այս էր իմ պատմությունը»: Եվ Ջիբոյից խնդրեց, որ ինքը պատմի մեր տունից, թե ինչպես է եղած: Մայրիկս հացի պատրաստություն կտեսնար, իսկ Ջիբոն կպատմեր. «Հակո՛բ, երբ հարձակվան գյուղի վրա, ես և եղբայրս բոլորին հավաքեցինք մեր մարագները, և երրորդ օրը սարից չորս ձիավոր եկան, մեկը՝ մոլլա էր, և երեքը իր տղաներն էին: Քո անունը հարցուցին, ես ասացիմ. «Աղա՛, Հակոբ չկա, բայց իր կինը մեր մարագն է»: Եկանք, մարագից կանչեցիմ. «Հակոբի՛ կին, արի՛ դուրս, ձեզի ծանոթ մի մոլլա է ուզում»: Մարագից դուրս գալուն պես մոլլան Երվանդին գրկեց և լացեց: Մի ժամից հետո գնացինք հանգստանալու: Երկրորդ օրը մոլլի հետ գնացինք: Գյուղի բոլոր տավարը՝ գոմեշներ, ոչխարներ

[160] Ղայլան-նարգիլե, ծխախոտ ծխելու հարմարանք, որի մեջ լցված ջրի միջով ծուխն անցնելով սառչում և մաքրվում է:

խառնված էին, և Խուրշուդ աղայի եղբայր Թահիր աղան կբաժաներ իր զինվորներին: Երկու եզ, մեկ էշ, քսանհինգ ոչխար ջոկեցինք, ալյուր և ցորեն բարձեցին, գնացին մոլլայի գյուղը: Երկու տարի մնացին, մինչև որ ներում եղավ սուլթանից: Մոլլան նրանց ետ բերեց տուն: Այս էր իմ պատմությունը»,- ասաց Ջիբոն:

Մայրս սեղանը զարդարեց նորանոր ուտելիքներով: Սկսեցին ուտել և արաղ խմել: Այս պատմությունը լսելուց՝ հայրիկս թե՛ կխմեր, և թե՛ կլացեր: Հետո կրկին պատմեցին, թե խուզարկության ժամանակ ի՞նչ չարչարանք տալով կծեծեին գյուղացիներին և զենք կուզեին: Պատմեցին Թանկո Ավետի աչքի կուրանալը, հալեպցի Մկրտիչի չարչարանքը: Երկու տարի պառկելուց լավացեր էր, բայց հազիվ տունից դուրս կուգար:

ԻՄ ՆՇԱՆԴՐԵՔԸ

Հայրիկս գնաց իր ընկերներին տեսնալու: Առաջինը ուս Ավետի մոտ կերթա: Մի շաբաթից հետո կերթա՝ հալեպցի Մկրտիչին տեսնալու: Հայրիկիս հացի կպահեն, հացի սեղանը պատրաստելու ժամանակը կտեսնա, որ մի սիրուն աղջիկ սեղան է պատրաստում, կհարցնի. «Այս աղջիկը որի՞ աղջիկն է»: Մկրտիչը կասի. «Իմ Հեղինե աղջիկն է»: Հայրիկս կասի. «Մկրտի՛չ, ես և դու եղբոր պես Պոլիս կաշխատեինք, արի նույնը ընենք և այսօր»: Մկրտիչ կզարմանա, թե ի՞նչ է Հակոբի խոսքի միտքը: Հայրս կասի. «Մկրտի՛չ, այս աղջիկդ տուր ինձի հարս անեմ, տղաս՝ Երվանդը, պսակեմ, մեր եղբայրությունը նորոգենք»: Մկրտիչ աղջկան մորը կհարցնե, նա ևս կհամաձայնե և հայրիկս իր ոսկի ժամացույց

կհանի, կդնի սեղանին իբրև խոսքի ապացույց և կուգա տուն, մայրիկիս կպատմի:

Գարուն եկավ և անցավ: Այժմ ամառ է: Մենք չարաչար կաշխատենք, որ գործերը շուտ վերջացնենք: Երեկոյան եկանք տուն և տեսանք մեր տունը շատ դրացիներ են հավաքված: Առաջինը հորեղբորս կինը՝ Ոսկոն, ինձի համբուրեց և ասաց. «Երվա՛նդ, բաբոն քեզ պըտի պսակի հալեպցի Մկրտիչի աղջկան հետ»: Մայրս եկավ և պատմեց, որ հայրիկս շատ է հավանել, սկսեց գովել, որ շատ սիրուն է, երկար և ճյուղ-ճյուղ ծամերը մեջքին կհասնի, սև-սև աչքեր ունի, շատ հունարով[161] է. «Ես էլ մենակ եմ, Երվա՛նդ, թող ինձի օգնի և ես ուրախանամ, շատ եմ տանջվել»: Այս բոլոր խոսակցությունը ես կարծես չէի լսում, կմտածեմ՝ ո՞վ է այս աղջիկ: Ճիշտ է, որ մենք մեկ գյուղացի ենք, բայց նրանք վերի թաղիցն են և շատ հարուստ են: Երկու փոխգուլթան ունին, մենք նրանց չենք հասնի, Մկրտիչ Ամերիկայից նոր փող է ստացել և երկու հարկանի տուն ունի: Այսպես շշմելով գնացիմ գոմի օդեն, նստամ՝ մտածելու: Շատ միտք չարչարելուց հետո նոր հասկացամ, որ կոտորածից մի քանի տարի անցած՝ մի օր, տեսանք մի կին՝ Հիրճ գյուղացի, իր աղջկա ձեռքը բռնած եկավ մեր գյուղը: Ուրեմն՝ այդ կինը ամուսնացած է հալեպցի Մկրտիչի հետ և այդ էլ նրա աղջիկն է, այս ամենը ինձի պատմեց հորեղբորս կին Ոսկոն: Ես իմ աշխատանքին եմ, ինչ որ կուզեն թող անեն: Մայրս նամակ կգրի մորաքրոջս, որ գա նշանդրեքի, և մի մարդ կուղարկի Տարենց[162] գյուղը, որ հորեղբորս աղջիկ Մարգարիտին բերեն: Կուգան, կհավաքվեն և կպատրաստվեն նշան տանելու: Իմ հայրիկս Պոլիսից բերած կլինի մի արծաթե գո-

---

[161] **Հունար**- շնորհք:

[162] **Վերին Տարենց (Դարենց)**-Հայաբնակ գյուղ Վանի գավառում՝ Շատախի գավառակում: 1850-ական թթ. ուներ հինգ, 1909թ., ըստ Ա-Դոյի՝ յոթ տուն բնակիչ (նշվ. աշխ., էջ 64): Գյուղի մոտ էր գտնվում Սբ Աստվածածին վանքը:

տի և մատանիներ: Մորաքույրս նույնպես՝ մատանի, և կերթան նշան կդնեն, իսկ ես դաշտումը կաշխատեմ: Այն ժամանակ ո՞վ կարող էր հորը և մորը հակառակել:

ՀԱՐՍԱՆՅԱՑ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Աշուն եկավ: Գյուղացին իր գործը վերջացուցած է, և այժմ հանգիստ սրտով կսկսեն նշանդրեք, հարսանիք և ուրախություն: Հայրիկս ռես Խաչոյից ձին ուզեց, նստավ, գնաց քաղաք, երեք օրից եկավ: Ձիու խուրջինը լիք և լիք մետաքսե կարմիր-կապույտ կտորներ, շաքար և կոֆե էր: Մյուս առավոտուն Ջիբոյի հետ ճանապարհվեցին դեպի մոլլի գյուղը՝ Աբգեյնի: Հինգ օրից հետո մոլլի ծառան՝ Հուսեյինը, ձիով եկավ և լուր տվեց, որ եկող հյուրերը շուտով կհասնեն մեր սահմանը, գյուղի բոլոր մեծամեծներ հավաքվեցին՝ ընդառաջ գնալու:

Մայրիկս կարգադրեց, որ երկու մառանները, սենյակները մաքրեն և փռվածք գցեն հյուրերի համար: Ես և մայրս ձեռք-ձեռքի բռնած գնացինք, հասանք մեր սահմանը և մեր պատվական հյուրերը Սիսեռկա կալուց դուրս եկան, Ջիբոն մեզի տեսնալուն մի հրացան արձակեց և հասան մեզի: Մայրիկս օգնեց, որ մոլլի կինը՝ Այիշեն, ձիուց իջնի, գրկախառնվան: Ես և Համիդը գրկախառնվանք, իրարու կուշտ համբուրելուց մոլլան իր գրպանից Ղուրանը հանեց, կարդաց, և ամենը մեկ-մեկ Ղուրանը համբուրան. ճանապարհվեցինք դեպի մեր գյուղը: Երբ հասանք մեր տան առաջ, մոլլի ծառան՝ Հուսեյինը, ոչխարի վիզը կտրեց՝ իբրև բարի գալուստ մեր հյուրերին: Մոլլան տասը հատ ոչխար բերած էր՝ իբրև աչքալույս: Ամբողջ գյուղը հավաքված էր մեր տունը, մեր հյուրերը հանգստացան: Երեք օրից հետո սկսեցին հարսանիքի պատրաստությունը: Կանչեցին տերտերին, որ պատրաստվի Սուրբ պսակի արարողության: Տերտեր ասաց. «Պետք է

առաջնորդարանից ինձի արտոնագիր բերեք»: Մենք կպատկանեինք Աղթամարի թեմին: Ենովք նստավ ռես Խաչոյի ձին, առավոտուն գնաց, երեկոյան եկավ, թուղթը բերեց:

ԻՄ ՊՍԱԿՎԵԼԸ 1908-Ի ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՕՐԸ

Առավոտուն տեսանք՝ մեր Արտոս սարը մինչև կեսը ձյուն է եկած: Մեր տունը կնմանի մեղուի փեթակի, վազվզոց, խառն-խուռն խոսակցություն, դհոլ-զուռնան կթմբթմբա, ժամհար Կարոն իր ընկույզի տախտակը՝ իր կոչնակը, կմուրճահարե: Այս բոլորը ինձի համար էր, չէ՞ որ ռես Հակոբը Պոլիսից եկած է և մի հատիկ տղա ունի, կպսակե, ինքը, որ կորած էր, ողջ և առողջ եկավ, ատոր համար ամբողջ գյուղը ուրախության մեջ էր:

Իմ հայրս քաղաքից հագուստ առած էր ինձի համար, և շատ թանկարժեք հագուստ էր, վրաս չեղավ, կրկին իմ հագուստը հագամ: Տիրացու Նշանը մի փայտե խաչ էր պատրաստել և շուրջը մետաքսե թելերով հյուսած էր, շատ գեղեցիկ բան էր, բերեց խրեց իմ քոլոզի առաջ: Հայրիկս Պոլիսից մի մեծ մետաքսե թաշկինակ բերած էր, մայրիկս մի փունջ անթառամ ծաղիկ փաթաթեց այդ թաշկինակի մեջ և տվեց, որ բռնեմ իմ ձեռքս: Արարողությունը սկսվեց: Մենք առաջացանք դեպի եկեղեցին, հասանք ժամի դուռը, հարսը և իր եղբայրները կանգնած էին, հարսի գլխին երեքտակ մետաքսե թաշկինակ գցած էին: Տերտերը մոլլին քուրդերեն ասաց. «Աղա՛, քյարամ կա» (Աղա՛, համեցի՛ր): Մոլլան հայերեն ասաց. «Տե՛ր Հայր, Դո՛ւք առաջ գնացեք»:

Տերտերը մոմեր վառեց, ռես Խաչոն՝ քավորը, խաչը պահեց մեր գլխի վրա, և տերտեր ինչ-որ կկարդար, մայրս մոլլի կնգան կթարգմաներ: Երբ հասավ գինի խմցնելու ժամը, ես խմելուց հետո բաժակս հարսին տվեցիմ, հարսի քողը բարձրացնելու ատեն՝ նոր ես տեսամ իմ հարսնացուին:

Այս արարողությունից հետո, որ Սուրբ խաչի օրն էր, տերտերը մի մետաքսե կանաչ-կարմիր ոլորված թել կապեց իմ վզից, և մոլլի կինը՝ Այիշեն, մայրիկիս կհարցնի. «Այս ի՞նչ է», մայրս կթարգմանի, որ այս թելը թալիսման չէ, այս թելը կնշանակե՝ երեք օր ժամանակ է տրվում այս երկուսին, որ մեկը չուզի կարող է բաժանվել, և իր կուսություն պահած հարսը կարող է երթա իր հոր տունը:

Պսակը վերջացավ: Դհոլ-զուռնայով հասանք մեր տունը: Հարսին, ըստ սովորության, տարան քավորի տունը: Մեր հարսանիքը տևեց յոթ օր: Ութերորդ օրը հարսը բերեցին, և տերտերը իմ վզի թելը մկրատով կտրեց:

Այիշե խանումը մի ոսկի շղթա՝ հինգ ոսկի շարված, կապեց հարսի վզին և ասաց. «Պիրոզբա», այսինքն՝ շնորհավոր լինի: Մորաքույրս մի մատանի տվեց, մայրս և հորեղբորս կինը նույնպես նվերներ տվեցին:

Քավորկին Աշխենը իր հարս ժամանակվան գլխի քորոցը՝ ոսկիից և մեջտեղը մի հատ մեծ փիրուզա քար, կապեց հարսի ճակատին, և այսպես շատ և շատ նվերներով զարդարեցին մեր հարսին:

Յոթ օր անցավ: Այժմ պետք է մեր հյուրերին ճանապարհենք: Բոլոր գյուղացիք հավաքվան մեր տունը: Հայրիկս երկու եզ բարձեց ցորենով և ալյուրով, իսկ էշին բարձեր է ձավար և ոսպ, մեկնեցինք, հասանք մեր սահմանի վերջավորության: Մոլլան և Այիշե խանումը ձիուց իջան: Մոլլան աղոթք անելուց հետո, Ջիբոյին կանչեց առաջ և ասաց. «Աղայե Հեյդար խանի Քերծ գյուղը տասը տուն քուրդ կա, կհանձնեմ քո հսկողության և դուք պիտի եղբոր պես ապրեք, ինչպես ձեր պապեր այս գյուղը շինեցին և հայերի հետ եղբոր պես ապրեցին: Հասկացեք, որ այս հողը մերն էր, Թուրքը մեզի բաժանեց, որ մեր հողերին տիրանա, չլսեմ, որ ջոկողություն լինի ձեր մեջ»: Վերջացավ քարոզը, և ամեն մեկս համբուրվանք: Մոլլան նստավ ձին, ճանապարհվեցին:

ՂԱԶԱՐԸ՝ ՏՂԱՍ

Մենք վերադարձանք մեր տունները և սկսեցինք մեր աշխատանքը: Տարիներ անցան: Հասանք 1910 թիվը: Աստված մեզի մի տղա տվեց: Կնքելու ժամանակ հորեղբորս կինը, որի տղան ծաղկախտով մահացավ, անունը Ղազարոս էր, շատ խնդրեց, որ իմ տղային Ղազարոս կոչենք, այդպես էլ եղավ: Մեր տունը կրկին ուրախություն էր, ոչխար մատաղ արեցինք, ուրախությունով շաբաթն անցավ: Մեր սուրհանդակը՝ Շաշո Սարգիսը, քաղաքից եկավ և բարի լուր բերեց, որ կառավարությունը բոլոր ֆիդայիներին ներում է հայտարարել, որ սարերից իջնեն, հալալ աշխատանք անեն: Ամրամ փաշեն ազատվեր է բանտից: Այսպես անցնում էին տարիներ: Մեր գյուղի և Անգղ գյուղի մեջ մի փոքր ձոր կար, միշտ Ոստանի քուրդեր կուգային այնտեղ՝ մարդ կողոպտելու և սպանելու: Գյուղացիք որոշեցին, որ այսուհետ խումբ կազմեն՝ քաղաք երթալու, որ փորձանքից ազատ լինեն:

Խումբ կազմելուց մի օր առաջ գյուղի գզիրը՝ ծառան, բարձր ձայնով կկանչե. «Ո՛վ մեր գյուղացիք, վաղը քարավան պիտի երթա քաղաք, ով որ ուզի, թո՛ղ պատրաստվի»: Մի այսպիսի օր, ինձի էլ պատրաստեցին քաղաք երթալու: Մեր երկու եզը ալյուր բարձեցին և էշին է՝լ մանր-մունր բաներ: Մեր քարավանը, Լուսո աստղը չելած, ճանապարհվեց. հասանք Շամիրամի առուն, այդտեղ պիտի հանգստանանք, որ մի բլուր կա, հանգիստ անցնինք: Հանգստացանք, ելանք ճանապարհ, բլրակը բարձրանալուն՝ մեր էշը հոգնավ, կանգ առավ և ես ետ մնացիմ, վախենում եմ, թե՛ ավազակներից և թե՛ ծարավությունից: Երկու ժամվա ճանապարհ է մինչև Արտամետ: Ջուր չկա, մեր էշը չի քելում, բզում եմ, ծեծում եմ, չէ՛, հոգնած է, չի երթա: Հանկարծ մի քուրդերեն երգ լսեցիմ, հետև նայեցիմ, մի կարմիր ձիավոր

«Բերիվանո»[163] երգելով հասավ ինձի: Ես վախից շուտ բարևեցիմ, ծիծաղեց, մտրակով գլխարկս թռցրեց ու գնաց:

ԹԱՀԻՐ ԲԵԿԻ ԱՏՐՃԱՆԱԿԸ

Այս ձիավոր քուրդը Ոստանի Խուրշուդ աղայի եղբայրը՝ Թահիր բեկն էր, որ 1895թ.-ին մեր գյուղը կոտորեց և բոլոր արորներ, գութաններ հավաքեց, վառեց և էն դժբախտ շալագործ Մնոյին գցեց կրակի մեջը, վառեց: Ահա այս անգութ աղան էր, որ ձին խաղացնելուն՝ կողքի ատրճանակը վեր-վար կթռչեր: Ես, ախ քաշելով, ասացիմ, երանի այդ ատրճանակը իմս լիներ: Ծարված եմ, քրտնած եմ, մեր էշն ավելի դանդաղացել է և ես շատ եմ հեռու ընկել, միմիայն հույս Աստվածն է: Քիչ էլ գնացիմ, տեսամ՝ ատրճանակը ընկած է ճանապարհի վրա, գիտցամ այդ շունինն էր, առեցիմ տարամ, արտի մեջ մի մեծ քարի տակ պահեցիմ և մանր քարեր շարեցիմ մինչև ճանապարհի վրա: Այժմ ես էլ ուրախ-ուրախ «Բերիվանո» կերգեմ:

Քուրդ աղան մեր գյուղացիներին կհասնի և իր հաճույքի համար ամեն մեկին մի մտրակ կխփի և կերթա, կհասնի Արտամետ: Ձին կերակրելուց հետո կուզենա մի կոֆե խմի, կնայի, ատրճանակը չկա, մեր քարավանը կհասնի: Աղան մտրակ կվերցնի և կսկսի ծեծել, ատրճանակ պահանջել: Խեղճ գյուղացիք ինչքան երդում կընեն, ոչ մի արժեք չի տա: Գյուղացոց բոլոր բեռները դաշույնով կպատռտի, ալյուր և ցորեն կխառնի իրարու, հայհոյանքին հաշիվ չկա: Այդ սարսափելի վայրկյանին ես հասամ Արտամետ, ինձի

[163] **«Բերիվանե»**-ները տարածված երգեր են քրդերի և եզդիների շրջանում: Դրանք երգում են ոչխարը կթելու տանելիս և կթելիս: Բերի է կոչվում քարերով ցանկապատված այն տեղը, որտեղ հավաքում են ոչխարներին: Բերիվան են կոչվում և՛ ոչխարը կթելու քշողը, և՛ ոչխարի գլուխը բռնողը, և՛ կթողը (տեղեկատու՝ ՀՀ վաստակավոր լրագրող Հասան Թամոյան):

տեսնալուն հարձակվավ և մտրակ բարձրացրեց, որ խփի և իր ատրճանակ պահանջեց: Ես անմիջապես իմ մեջքի գոտիս բացեցիմ և ասացիմ. «Աղա՛, եթե ես տեսնայիմ, կուտայիմ քեզի, տե՛ս իմ չարուխները ծակվեր են, և դու ինձի «փեշքաշ»[164] փող կուտայիր, ես մի զույգ չարուխ կառնեիմ ինձի»: Աղան մտրակը իջեցուց և ասաց. «Քու տավարներ հեռացուր ասոնցմե»: Եվ կրկին հայհոյել և ծեծել սկսեց: Ես կանգնած կլացեիմ մեր խեղճ գյուղացոց համար: Վերջապես, երևի հոգնեց և թողեց ու գնաց: Գյուղացիք իրենց թափթփված ցորենը, ալյուրը հավաքեցին, պարկերը կարեցին, լցրեցին մեջը, ճանապարհվանք դեպի քաղաքը:

Հասանք Փաշի աղբյուրը: Մաքուր ջուր է, կանաչ չիման, նստանք՝ հանգստի և տավարներին կեր տալու: Ես իմ չանթեն բացեցիմ, որ հաց ուտեմ: Մեր տանը ապրող հեղափոխական Բարխոն եկավ մոտս, ի՞նչ տեսնամ, ամբողջ երեսը կապուտցած է և աչքի մի կողմի կաշին պոկված է, ասացիմ. «Պարո՛ն Բարխո, հա՛ց կեր»: Ասաց. «Հացի համար չեկամ քո մոտ, կտեսնե՞ս իմ վիճակս: Մեր հետև դու մինակ էիր Երվա՛նդ, ճիշտ ասա, եթե դուն ճարած լինես, այս վերքերս կլավանան և ինչ-որ ուզես, կառնեմ քեզի համար: Ես ֆիդայի եմ, գաղտնիքը ուրիշներուն չեմ ասի»: Ես իմ երկու կողմեր նայեցիմ, մարդ չկար, ասեցիմ. «Պարո՛ն Բարխո, երդվի՛ր դաշնակցության դրոշակով, որ ոչ ոքի չասես»: Բարխոն ծոցի գրպանից հանեց կարմիր կնիքով կնքված՝ մեդալի պես դրոշակը և ասեց. «Երդվում եմ այս սուրբ դրոշակով, որ մինչև դու չասես, ես ոչ ոքի չպիտի ասեմ»: Ասացիմ. «Ո՞ւր է, ցո՛ւյց տուր ինձի»: Ասացիմ. «Ճանապարհին պահած եմ, վերադարձին կցուցանեմ քեզի»: Բարխոն ինձի գրկեց, լացեց և համբուրեց, ասեց. «Ի՞նչ կուզես, որ առնեմ քեզի համար, կոշի՞կ, չարո՞ւխ, կուզե՞ս կտորեղեն ընտանիքիդ համար»: Ասացիմ. «Ոչ մի բան չեմ ուզի, պատրոն առ, միայն յոթ հատ կա մեջը»:

[164] Փեշքաշ - նվեր:

Մեր հանգիստը վերջացավ, ելանք դեպի քաղաք: Հասանք քաղաքի Թավրիզի դուռը[165]: Ես պիտի ջոկվեմ դեպի Այգեստան, խոսքներս մեկ արեցինք, որ երեք օրից հետո մենք հավաքվենք Արարուց մեյդանը[166]: Եվ այդպես խումբով ճանապարհվենք: Գնացիմ դեպի Այգեստան: Իմ մորաքրոջ տունը Թազա Քայրեզի վրա էր: Թազա Քայրեզը մի ջրատար առու է, որ գետնի տակով դարեր առաջ Վարագա սարից բերած են Այգեստան, իրենց ասելով՝ այս համեղ և անուշ ջուրը բերած է Ասորեստանի թագուհի Շամիրամը:

Երեկոյան հասամ Թազա Քայրեզը: Մորաքույրս ինձի տեսավ: Գասպարի հետ վազեցինք, համբուրվանք: Եղներին տարան, բեռներ իջեցուցին, եկանք տուն: Ես հայրիկիս նամակը տվեցիմ մորաքրոջս, կարդաց և տվեց Գասպարին, որ նամակում գրվածները առնի:

Երեք օր ես ազատ եմ: Գնացիմ Նորաշենի ժամը և չամիչ առեցիմ, եկամ տուն: Մորաքույրս ասաց. «Երվա՛նդ, այդ չամիչը ինչո՞ւ համար է»: Ասացիմ. «Մորաքո՛ւյր, մեր գյուղը չամիչ չկա, կտանեմ Հեղինեի համար»: Մորաքույրս ինձի գրկեց, համբուրեց, ասաց. «Տղա էլ ունիս և դեռ կամաչես ասելու՝

[165] 16-րդ դարի թուրքական պետական գործիչ և գրող Ֆերիդուն Բեյը այսպես է նկարագրում Վանի քաղաքային դռները. «Պարսպից դուրս, հարթ տեղում, ըստ սովորության, ժայռեր փորելով, երեք դռներ են շինել. արևելքում՝ Թավրիզի դուռը, հարավում՝ Իսքելեյի դուռը, իսկ հարավարևելքում այգիներ ու պարտեզներ են (տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմանություն թուրքական բնագրերից, ներածական ակնարկով, ծանոթագրություններով և հավելվածով, կազմեց Ա. Սաֆրաստյանը, հ. Բ, Երևան, 1964, էջ 204, տե՛ս նաև Ս. Վարդանյան, Հայաստանի մայրաքաղաքները, Երևան, 1995, էջ 18): Առաքել Դավրիժեցու նկարագրության համաձայն, 1648թ. ահավոր երկրաշարժը մի քանի վայրկյանում տակնուվրա արեց ամեն ինչ. «Փլվեց Վան քաղաքի ներքին բերդի պարիսպը Թավրիզի դարպասից մինչև Իղարի բուրգը (տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, 1988, էջ 381, տե՛ս Վարդանյան Ս., նշվ. աշխ., էջ 19):

[166] **Արարուց մեյդանը**-Վանի Այգեստան թաղամասի Արարք թաղի հրապարակը:

կնգանս համար»: Երեք օրը լրացավ, մենք հավաքվեցինք Արարուց մեյդանը և ճանապարհվեցինք, հասանք էն քարի մոտ:

Ես չարուխներիս թելերը կապելու պատրվակով հետ մնացիմ, գնացիմ քարի տակից ատրճանակը հանեցիմ և դրեցիմ գոտիիս տակը, վազելով հասամ մերոնց և կամացուկ Բարխոյին ցույց տվեցիմ: Բարխոն կարծես Աստուծո լույս տեսավ, ուրախացավ և ինչպես խոստացել էր, ինձի համար 60 պատրոն առած էր, այդ նվերը ինձի շատ ուրախացրեց:

Հասանք մեր գյուղը, ինչ որ մորաքույրս առած էր, մեկմեկ բաժանեցինք: Շատ ուրախ կապրեինք:

Ի ՁԵՆ

Հասանք 1913 թիվը: Աշուն է: Կալեր հավաքված են: Գյուղացին պիտի հանգստանա, բայց ֆիդայիներ սարից իջեր են և այժմ կգործեն ժողովուրդի հետ:

Կոմիտեն կանչեց իր օգնական Մարկոսին, ասաց. «Ձեր տունի հյուրանոցը դատարկի, մարդ է գալու»: Մարկոս ասաց. «Բարսե՛ղ, դու գիտես, որ իմ հայրս տերտեր է և շատ դեմ է ֆիդայուն: Անցյալ օրը ինձի ասաց. «Եթե չհեռանաս, իմ տունից գնա»: Բարսեղ ասաց. «Դո՛ւք մաքրեք, քո և իմ հայրերը կկակղեցնեն»: Եվ մենք տերտերի հյուրանոցը մաքրեցինք:

Գիշերվան եկան չորս հոգի, մեզի չորսն ալ ծանոթ էին: Խարականցի Լևոնն էր և իր թիկնապահ Խուշոն, Դալի Ղազարը և Եգորը, բոլորն էլ սպառազեն: Հրամայեցին, որ վաղը ժամի դուռ բացենք և բոլոր գյուղացիք հավաքենք ժամը: Ժամհար Կարոն կոչնակ չափկեց[167] և բոլոր գյուղացիք հավաքվեցին ժամը՝ իրարու ականջին կամացուկ ըսելով. «Աստված խեր անի»:

[167] **Չափկել** - զարնել, խփել:

Առաջի խոսող եղավ Լևոնը, ասաց. «Սիրելի՛ Քերծ գյուղացիներ, դուք ինձի ալ կճանաչեք և իմ հորն ալ, ձեր պատմածով յոթանասուն մարդ է սպանված ձեր գյուղից: Ուրեմն՝ յոթանասուն որբեր, որ միայն տղաներ էին, այժմ հարյուր երիտասարդ պատրաստ ունինք զենքի ընդունակ:

Ես էլ ձեր որբերի պես տեսամ իմ հորս հոշոտված մարմինը և այս հրացանը վերցրիմ և ուխտեցիմ՝ հորս վրեժն առնելու, և այս ցուցակի համեմատ, որ դուք ղրկած եք Արամ փաշային, պիտի կետ առ կետ կատարվի, չհնազանդվողն առանց խղճալու կսպանվի: Ես իմ խոսքս վերջացրի, այժմ գործը Ղազարինն է»: Եվ ցուցակը հանձնեց Ղազարին: Ղազարը ցուցակը շուռումուռ տվեց, կանգնավ, կանչեց. «Ռե՛ս Խաչո, ոտքի՛, ռե՛ս Հակոբ, ոտքի՛, ռե՛ս Ավետ, ոտքի՛, հալեպցի՛ Մկրտիչ, ոտքի՛, Կուլանի Սրկե, ոտքի՛, Ճուկլանի Հարություն, ոտքի՛»:

Այսպես առաջավոր հարուստներ մոմի պես կանգնած կսպասեին դատավճռին: Ասաց. «Ռես Հակո՛բ, առաջ եկ»: Հայրիկս առաջացավ, ասաց. «Քո տղան հասած է, մի հատ մաուզեր[168] կառնես տղայիդ, կարժե ութ ոսկի և մի «Մոդել» հրացան էլ եղբորդ տղա Ենովքին, կարժե չորս ոսկի և մի ռուսական «Բերտանկա»[169] մեզի համար, կարժե երկու ոսկի»: Հայրիկս պատասխանեց. «Այս Սուրբ Ստեփանոս ժամը վկա, չունիմ»: Ղազարը ծիծաղեց և ասաց. «Հակո՛բ, այդ ժամի մեջ ի՞նչ կա, քար է և փայտ»: Իմ հայրիկս բռնկվեց, ասաց. «Դո՛ւք անաստված եք: Ինչպե՞ս, մեր Սուրբ Ստեփանոսը քա՞ր է»: Ուզեցավ գնալ, Լևոնն ասաց. «Խուշո՛, բռնիր»: Խուշոն հայրիկիս գրկեց և դրեց իր ոտքերի տակ: Լևոնը եկավ, փայտ խփեց, ես անմիջապես վազեցիմ առաջը և իմ գոտիից «Բռավնիկ»[170] հանեցիմ և տվեցիմ Լևոնին: Խնդրեցիմ, որ առնեն և արժեք անեն ու ինձի մաուզեր առնի հայրիկս:

Այս տեսարանը բոլոր գյուղացիներին զարմացուց: Հայրիկս իր ծեծը մոռացավ և բարկացավ, թուրքերեն ասաց. «Դուն իմ մալիս մեջը հարամություն ըրած ես»: Ես կանչեցիմ պարոն Բարխոյին, որ առաջ գա և պատմի, որ ինչպես եմ ճարել և երկու տարի գաղտնի պահած եմ իմ հայրիկից:

Պարոն Բարխոն առաջացավ, նախ ասաց. «Երվա՛նդ, ես իմ երդումից ազա՞տ եմ»: «Այո՛» ասացիմ, և Բարխոն մեկ առ մեկ պատմեց այս ատրճանակի պատմությունը, Արտամետի՝ մեր գյուղացիների ծեծվելը, ասաց. «Ատրճանակի գտնվելը միայն ինձի էր ասել այն պայմանով, որ ես դաշնակցության դրոշակով երդում արեցիմ, որ ոչ ոքի չասեմ, նույնիսկ իր հորը»: Բարխոն վերջացուց և կոմիտեն եկավ առաջ: Ասաց. «Պարոնե՛ր, այդ ցուցակը, որ այժմ ձեր ձեռքն է, այս տղան տարավ Վան, երկու անգամ ձուն-ձմեռվան Շատախ է գնացել, ես որ նրանց կոմիտեն եմ, ինձի ևս չի ասել: Պարո՛ն Ղազար, քո ձեռքով մկրտված դաշնակցական է»: Բարսեղի խոսքից հետո Ղազարը և Եգորը ռուսերեն խոսացին: Ղազարը հայրիկիս ասաց. «Պոլսեցի աֆանդի, այս տղան մեծ հույս է իր շրջապատի համար: Պարոն Լևոնը թող որոշի քո առնելիք, ես մեկ ոսկի կնվիրեմ իր գաղտնապահության համար, այժմ խոսքը Լևոնին է»:

Պարոն Լևոնը հայրիկիս ասաց. «Ռե՛ս Հակոբ, քո «Շաշխանեն» քո առած «Բերտանկի» տեղ կհաշվեմ, այսպես, ատրճանակը երեք ոսկի է, մաուզերը ութ ոսկի, մեկ ոսկի պարոն Ղազարը նվիրեց այս ոսկի չոջուխիդ, մնաց չորս ոսկի, չորս էլ «Մոդել»[171] հրացան է, որ պիտի առնես, այժմ ութ ոսկի տուր, գնա հանգիստ ապրիր»:

Հայրիկս չորս ոսկին հանեց տվեց և չորսը մնաց հետո: Ղազարը ոսկիներ առեց և ստացական տվեց, այն օրվան ժողով վերջացավ, մնաց վաղվան: Երկրորդ օրը ժողովը սկսեց,

---

[168] **Մաուզեր**-ավտոմատ, խոշոր ատրճանակ:

[169] **Բերտա**-բերդանկա, մեկ հարվածանի հրացան, որով զինված էր ռուսական բանակը 1870-1891 թթ.:

[170] **Բրավնիկ**- բրաունինգ, փոքր ատրճանակի տարատեսակ՝ կոչված գյուտարարի անունով:

[171] **Մոդել** տիպի հրացան:

կանչեցին ռես Խաչոյին, Ղազար ասաց. «Ո՞վ ունիս»: Ռես Խաչոն ասաց. «Ես եմ և տղաս՝ տասնութ տարեկան, և եղբորս որբ տղա Վահանը՝ քսաներկու տարեկան»:

Ղազարը ասաց. «Մեկ «Մուսենի» կառնես Վահանի համար, մեկ տասնոց՝ տղայիդ համար և մեկ «Մոդել» հրացան՝ քեզի համար»:

Հաշվեցին, եղավ երեսուն ոսկի: Խաչոն քսանը վճարեց, տասը մնաց գարնան, ստացական առավ, գնաց:

Եկավ ռես Ավետը, ասաց. «Տղա չունիմ, եղբորս տղան Գասպարն է»:

Ղազարը ասաց. «Մեկ «Մուսենի»[172] Գասպարին, մեկ «Մաուզեր»՝ քեզի և մեկ «Մոդել»՝ չունեցողին»:

Ավետը ասաց. «Որ այդպես է, «Մոդել»-ը՝ իմ կնոջ եղբայր Բալասանին»: Եվ քսան ոսկին տվեց, ստացական առավ, մնացածը մնաց գարնան:

Կանչեցին Կուլանի Սրկեին, նա քաղաքն էր, իսկ տղան՝ Մարտոն, ներկա էր: Կանչեցին. «Մարտո՛, առաջ»:

Մարտոն էն հպարտ տղան էր, որ մեր խումբից հրաժարվեց:

Ղազարը ասաց. «Ո՞վ ունիք»: Մարտոն ասաց. «Ես եմ, իմ հայրս և հորեղբորս տղան՝ երեսուն տարեկան է»: Ղազարը ասաց. «Մեկ «Մուսենի»՝ քեզի, մեկ «Մուսենի»՝ Հարությունին և մեկ «Մոդել»՝ հայրիկիդ»:

Մարտոն ոտքի ելավ և գոռոզացավ, ասաց. «Դուք ո՞վ եք, ես ձեզի չեմ ճանաչի, դուք ավազակներ եք»:

Այս բառը Մարտոյի բերանումն էր, Ղազարը հրացանը շտկեց Մարտոյի կողմը և կրակեց: Լևոնը ձեռքը զարկեց հրացանի լուլային, և գնդակը կպավ ժամու առաստաղին և մի դուման[173] եղավ, հող և փոշին թափվեց գյուղացոնց գլխների վրա:

Մարտոն ուզեց երթալ, Լևոն ասաց. «Խուշո՛, բռնի՛ր, տասը հատ ուժեղ փայտ զարկիր»: Տասը փայտ զարկեցին և

[172] Մուսենի-մոսին, ռուսական հրացանի տարատեսակ:
[173] Դուման – ծուխ, մառախուղ:

Մարտոյին շալակեցին, մեռելի պես տարան տունը, մի ոչխար մորթեցին, կաշին փաթաթեցին Մարտոյին, որ արյունը չսևանա, Մարտոն վեց ամիս մի կողի վրա պառկավ տունը: Որոշեցին առողջանալուց՝ տեռոր անեն, սպանեն Մարտոյին:

Սրկեն էկավ, աղաչեց Լևոնին և Ղազարին, որ ներում տան իր տղային և ինչ տուգանք որոշեն, ինքը պատրաստ է առնելու, որոշեցին, որ երեք հատ «Մուսենի» և մեկ «Մոդել» հրացան առնի, գումարեցին, եղավ հիսունութ ոսկի:

Սրկեն քառասունը վճարեց, տասնութը մնաց գարնան և ստացականը առեց, գնաց տուն:

Այս ցուցակագրությունը տևեց մի շաբաթ: Ամփոփ կերպով այստեղ գրեմ մեր գյուղի զինական ուժը: 1913-ի[174] մարտի 22-ին մեր գյուղը ունեցավ հետևյալ զենքերը:

Քերծ գյուղի զենքերի ցուցակ

1. Լևոնի և Դալի Ղազարի առած զենքերը:

Մեծեր և փոքրեր	Հատ
	45 «Մուսենի» հրացան
	60 «Մոդել» հրացան
	50 «Մաուզեր»
	15 «Բռավնիկ» ատրճանակ
Հայրս Ջիբոյից էր առել	2 տաճկական հրացան

2. Հաջի Մուրադի «Հոտաղական միության» զենքերը	6 «Մոդել» հրացան
	2 «Մուսենի» հրացան
	15 «Բռավնիկ» - ատրճանակ

Գումար՝ 195 հրազեն

[174] Թեև հեղինակի բնագրում (էջ 69) նշված է 1915թ., բայց մի քանի նախադասություն հետո նա գրում է «1913-ի վերջի աշունն էր» (էջ 70): Եվ, ընդհանրապես, հետագա իրադարձությունները վերաբերում են 1913 և հաջորդ՝ 1914 թվականներին, ուստի, ենթադրում ենք, որ 1915-ը գրչական սխալ է, և պետք է լինի 1913թ.:

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՐ

Այս մեկ շաբաթում գնված զենքերը մեզի ոգևորեցին և ուրախացանք:

Այդ ցուցակը մանրամասն Լևոնը կարդաց՝ ով ի՞նչ էր առել, մեկ առ մեկ անուններով և վճարած դրամներով, ստացականներով հանձնեց Ղազարին, որ տանի տա Արամ փաշային:

Այս ցուցակը ստանալուն պես Արամը Լևոնին կկարգադրի, որ մի խումբ կազմի և անցնի Փեսանդաշտի շրջանը, որ մեր սարի հետևն է: Այս կարգադրությունը մեր գյուղացիներին շատ ուրախացրեց, որովհետև Փեսանդաշտը մեր սարի թիկունքն էր:

Ուրեմն՝ մենք ապահովված ենք:

1913թ. վերջի աշունն է: Կոմիտեն մեզի կանչեց և հայտնեց, որ հյուրեր կուգան: Այս անգամ ուրիշ խումբ էր՝ զինագործ Բուլղարացի Գրիգորը, Դալի Ղազարը, Եգորը, Լորթո Հարությունը և մի հաստաբեղ, որ Դավիթ Կոճան[175] էր:

Գիշերը հանգստացան, առավոտուն ելան գյուղի չորս կողմը, պտտեցին և որոշեցին՝ առաջինը դպրոց չինեն: Դպրոցի շենքը երկու հարկանի է լինելու, ցածի հարկը դպրոցն է, իսկ վերի հարկը կռվելու դիրքն է լինելու:

Դպրոցից դեպի արևմուտք՝ Ոստանի ճանապարհի վրա, խրամներ կփորեն հիսուն զինվորի համար, գյուղի կողքի բլուրի վրան և կողքերը խրամներ՝ երեսուն զինվորի համար, իսկ սարը՝ ինքը բնական դիրք է արդեն, սարում տասնութ մարդ բավական է:

[175] Ըստ Արամ Մանուկյանի՝ **Կոճեցի Դավիթը** Խառակոնիս գյուղից էր, որտեղ նրա ընդարձակ կալված քը խլել էին քրդերը: Նա լավ քրդախոս էր, հորինում էր քրդերեն երգեր, խոսք ու զրույցի, առակախոս, աշխատասեր, շինարար մարդ էր (տե՛ս Արամը, էջ 303-304, 366-370): Մականունից դատելով՝ կապ է ունեցել Թիմար գավառակի Կոճ գյուղի հետ, որը 1909-ին ուներ 9 տուն հայ և 20 տուն մահմեդական բնակիչ (Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 27):

Այս կարգադրությունն անելուց գծված թուղթը տվեցին Կոճա Դավոյին, որն էլ ընդհանուր գործերի կարգադրիչ եղավ, իսկ կոմիտե Բարսեղը նշանակվեց նրան օգնական, ուս Խաչոն և Թանկոյի Ավետը՝ գործավորների և սայլապանների պատասխանատու:

Այսպիսով՝ մեր գյուղը եղավ մի հսկա ամրոց և մինչև 1914-ը լրացավ այս ամենը:

ՊՈՋԱՎՈՐ ԱՍՏՂԸ

Տասնչորսի ամառն է: Մենք ցորենի հնձվորների հետ կաշխատենք, ճաշի ժամանակ հայրիկս հաց բերեց հնձվորներին:

Հացից հետո ելան իրենց գործին: Տեսամ, որ հայրիկս կուլա, հարցուցիմ իր լացի պատճառը: Ասաց. «Թուրքերը մտան կռվի մեջ, զինվոր են տանելու 17-ից 45 տարեկանը, ե՛ս էլ, դո՛ւ էլ պիտի երթանք»:

Այդ օրը տխուր էր հայրիկս: Նրա գնալուց երկու ժամ չանցած՝ տեսանք, որ գետինը կարմրեց և մութ գիշեր եղավ:

Ընկանք գետին և կաղոթենք:

Ժամի չորսն է՝ ճաշից հետո: Արևմուտքի կողմից մի աստղ դուրս ելավ, չգիտեմ՝ ինչքան անցավ, նորեն լույսը բացվեց, և մենք անմիջապես հավաքեցինք մեր գործիքները, եկանք տուն:

Բոլոր գյուղացիք հավաքված էին ժամի դուռը, աղոթք կանեին: Մի շաբաթ անցավ այդ օրվանից: Կալեր կալսելու ժամանակը գյուղացին տունը չի քնի, իր կալերի փափուկ հարդի վրա հոգնած, անուշ-անուշ կքնի:

Հազիվ էր մութն ընկել, տեսանք արևելյան կողմից մի կապույտ, լուսավոր աստղ դուրս ելավ, որ մի երկար պոչ ուներ, այնքան կապույտ էր, որ նայել չէր լինի:

Գյուղացիք որոշեցին երթալ Կըզըլդաշ գյուղի նաղաշ Մանուկին բերեն՝ իր թալիսմանի գրքերին նայի, այս աստղի և արեգակի մասին գուշակություն անի:

Գնացին նաղաշ Մանուկը բերին, նայեց իր գիրքերին և ասաց. «Ինչ-որ արեգակինն է, այդ սովորական է լուսինի և արեգակի համար, իսկ ինչ-որ պոչով աստղին, այդ շատ վտանգավոր է, եթե իր պոչը կպնի մեր երկրագունդին, մենք մոխիր կդառնանք, այդ աստղը յոթանասուն և չորս տարին մի անգամ դուրս կուգա իր սահմանից և շատ արյուն պիտի թափվի»:

Այս գուշակությունը մեր տիրացու Նշանը փորագրեց մեր ժամի պատի մեծ քարի վրա:

ԶՈՐԱՀԱՎԱՔԸ ԵՎ ՍՈԼԵՅՄԱՆԸ

Այս պատահարներից շատ չէր անցել՝ մեր գյուղ եկան տասը ձիավոր ու այն չավուշը, որ «Հուրիաթի» լուրը բերեց և այժմ եկած է զինվոր հավաքելու:

Հայտարարեց, որ անխտիր տասնյոթ տարեկանից մինչև քառասունհինգը զինվոր է, քառասունհինգից մինչև յոթանասունհինգը «ամալա թաբուռ» է, այսինքն՝ ճանապարհի աշխատող և ավելացրեց՝ ով որ մեկ տղա ունի հարյուր ոսկի տալով՝ իբրև բադալ[176], կարող է իր տղան ազատել զինվորությունից, և ասաց. «Կշրջեմ բոլոր գյուղեր, ռեսերը պարտավոր են զինվորացուներ պատրաստել մինչև իմ վերադարձը»:

Այս չավուշին կաշառելով՝ ճամփու դրեցինք:

Մեր գյուղը, որ հացահատիկից շատ հարուստ էր, մի թուրք փաստաբան՝ Սոլեյման աֆանդի, մեր գյուղի բերքը կառավարությունից կվարձեր և միշտ մեր տուն կուգար,

[176] Բադալ, բադալաթ-փոխհատուցում զինվորական ծառայությունից ազատվելու համար:

հայրիկիս հետը դոմինո կխաղար, չէ՞ որ հայրիկս լավ թուրքերեն կխոսեր, միշտ միասին էին: Ուրեմն՝ չավուշի խոսքով, փողով կարելի է մեկ տղա ունեցողն իր տղան ազատի, հայրիկս ասաց. «Երվա՛նդ, արի մի ոչխար ջոկի և փող վերցնենք, երթանք քաղաքը Սոլեյման աֆանդու մոտ, գուցե մեզի ազատի»: Գնացինք:

Աֆանդու տունը Բերդաքաղաքի մեջն է, Այգեստան չէ, հասանք, ծառան եկավ ոչխարը տարավ: Աֆանդին մեզի տեսնալուն՝ իր թևեր բացեց, ինձի գրկեց, համբուրեց և հորս հետ համբուրվեցին:

Ամառ էր, նստանք բակը, ավազանի շուրջը հարցուփորձից հետո հայրս բացատրեց մեր գնալու պատճառը և չավուշի խոսքերը: Երկու բաժակ կոֆե բերեց ծառան, նստեցին՝ խմելու: Եվ աֆանդին ինչ-որ ասաց հայրիկիս, մեկ առ մեկ կգրեմ առանց սխալվելու:

Նա ասաց. «Ռե՛ս Հակո՛, ես տարիներ է, որ ձեր գյուղը ի-ջարա կընեմ և ձեր հացը շատ եմ կերել, մանավանդ՝ քո հացը, այդ չավուշի ասածները չհավատաք, ձեր փողը կառնեն և ձեզի կտանեն: Թուրքը մտավ պատերազմի գերմանացու կողքին և գերմանացու ցուցումով, որ ռուսին իր սահմանից հեռու պահի, իսկ ձեր անխոհեմ մեծամեծները ռուսին բերած են Վան քաղաքը»: Ասաց. «Ռե՛ս Հակո, այս ի՞նչ փաշաներ են՝ Արամ փաշա, Ռուբեն փաշա[177], Վռամ փաշա[178]:

[177] Նկատի ունի Ռուբեն (Մինաս) Տեր-Մինասյանին, տե՛ս համապատասխան ծանոթագրությունը:

[178] Նկատի ունի ազգային ազատագրական շարժման նշանավոր գործիչ Արշակ Վռամյանին (Օնիկ Դերձակյան): Նա ծնվել է 1870թ. Կ. Պոլսում, նախնական կրթությունը ստացել է տեղում, 1889թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: 1896թ. մասնակցել է Բանկ Օտոմանի գործողությանը: 1897թ. Բուլղարիայում և Ռումինիայում զբաղվել է քարոզչական աշխատանքով: 1899թ. եղել է «Դրոշակ» ամսագրի խմբագիրը: Գործուն մասնակցություն է ունեցել ԱՄՆ-ում ՀՅԴ կազմակերպությունների ստեղծմանը, «Հայրենիք» թերթի հիմնադրմանը: Երիտթուրքերի հեղաշրջումից հետո ընտրվել է Օսմանյան խորհրդարանի պատգամավոր: 1915թ. ապրիլին դավադրաբար սպանվել է (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 437: ՀՀՀ, հ. 4, էջ 664):

Հայեր, ամեն փաշա՞ եղան, մի՞թե չեք հիշի, մի քանի տարի առաջ, ձեր դավաճան Դավուդ աղեն զենքերի տեղը մատնեց, և այդ բոլոր զենքերը ռուսական էին: Այն ռումբի խմորը, որ պայթեցրին, ռուսական էր: Տե՛ս էն շիշաներ,- ցույց տալով պատուհանները,- նույն օրը փշրվեցին: Ձեզի ազատելու ո՛չ մի հույս չկա: Ո՛չ դու կազատվես, ո՛չ էլ քո տղան, միայն ձեր սարերը ձեզի կազատեն: Փախե՛ք, տեսնանք՝ ինչ կլինի վերջը»:

ԵՍ՝ ԹՈՒՐՔԻ ԶԻՆՎՈՐ

Մենք մնաս բարի ասացինք աֆանդուն և գնացինք շուկան: Մի քիչ տունի համար բան-ման առեցինք, ելանք ճանապարհ: Հասանք Փաշի աղբյուրը, ջուր խմեցինք: Քիչ անցած՝ տեսանք մի ձիավոր ժանդարմ, մի խումբ մարդիկ մտրակելով, կբերի. հասան մեզի և ինձի տեսնալուն՝ երկու մտրակ զարկեց ինձի և խառնեց այդ խումբի մեջ:

Հայրիկս այնքան աղաչանք արեց, փող առաջարկեց, օգուտ չտվեց: Ես և հայրիկս արտասուքով բաժանվանք իրարմե: Ժանդարմը, մեզի մտրակելով, հասցրեց Ավանց նավահանգիստ գյուղը[179], մեզի լցրեցին գոմերը, դուռեր փակեցին և գնացին:

[179] **Ավանց** նավահանգիստ գյուղը գտնվում էր Վան քաղաքից մոտ 3 կմ հյուսիս-արևմուտք, Վանա լճի արևելյան ափին, սարահարթի վրա և թաղված էր մրգատու այգիների մեջ: 1850-ական թթ. ուներ մոտ 200 տուն բնակիչ, իսկ 20-րդ դարի սկզբներին ըստ տարբեր աղբյուրների՝ 300-500 տուն հայ բնակչություն: Զբաղվում էին երկրագործությամբ, այգեգործությամբ, ձկնորսությամբ, բորակի հանույթով, նավաշինարարությամբ և նավավարությամբ: 19-րդ դարի սկզբներին ուներ վարժարան և եկեղեցի: Համարվում է Հայաստանի հին բնակավայրերից մեկը: Միջին դարերում եղել է գրչության կենտրոն: Բնակիչներն ակտիվ մասնակցել են 1915թ. Վանի հերոսական ինքնապաշտպանությանը: Բնակավայրը ավերվել է Առաջին աշխարհամարտի տարիներին, բնակչության մի մասը զոհ է գնացել Մեծ եղեռնի օրերին, իսկ փրկվածները գաղթել

Այս 1914-ի օգոստոսն էր: Երկու ամիս մեզի պահեցին և մարզանք տվեցին: Կսպասեին նավերին, որ մեզի նավերով փոխադրեին Դատվան[180] և այնտեղեն Մուշ քաղաքը և Մուշից Էրզրում: Նավեր չեկան:

Մի առավոտ մի խումբ ևս բերեցին: Եղանք հարյուր և քսան մարդ և չորս ժանդարմ:

Մեզ բերեցին ճանապարհի վրա և «հազը-դայիը» (ներկաբացակա) անելուց՝ ամեն մեկիս երկու կլոր հաց սոմին[181] տվեցին, և ընկանք ճանապարհ: Հասանք մի գետի, որ Սև ջուր կըսեին: Հագուստները հանեցինք, մտանք ջուրը, մինչև մեր թևերի տակ կհասներ, անցանք, սկսեցինք վազել, որ հասնենք Ջանիկ[182] գյուղը:

Գիշերով հասանք, մեզի լցրեցին մարագները և գնացին:

Առավոտյան գյուղի ռեսը մեզի հաց բերեց, ժանդարմը ամեն մեկիս երկու լավաշ հաց բաժանեց, ճանապարհվեցինք:

են Արևելյան Հայաստան: Այժմ այն կոչվում է Իսքելեքոյ կամ Իսքալաքոյ (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 357): Այնտեղ կային մոտ հարյուր ճերմակաթուլը առագաստանավեր, որոնցից ամեն մեկը կարող էր տեղափոխել 40-50 մարդ: Կային ավելի մեծ տարողության նավեր (տե՛ս Պողոսյան Հ., Վասպուրականի պատմությունից, էջ 30: Վարդանյան Ս., Հայաստանի մայրաքաղաքները, էջ 31-32):

[180] **Դատվան** նավահանգիստը գտնվում էր Բիթլիսի նահանգի Բիթլիսի գավառում, Վանա լճի հարավարևմտյան ափին, գեղատեսիլ հովտում: Հնում Արծրունի թագավորների ամառանոցն էր: 10-11-րդ դարերում ուներ 10-15 հազար բնակիչ և ամուր բերդ: Վաճառաշահ նավահանգիստ էր: Դատվանում կար 6 եկեղեցի (ՀՀՇՏԲ, հ.2, էջ 48): 1909-ին այն ուներ ընդամենը 100 տուն բնակիչ (Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 87):

[181] **Սոմին**-սոմոն, փռում թխված կլոր, ուռուցիկ հաց:

[182] **Ջանիկը** գտնվում էր Վանի գավառում, Թիմարի գավառակում, Վան քաղաքից մոտ 37 կմ հյուսիս, Վանա լճից 2-3 կմ հեռավորությամբ, Լիմ կղզու դիմաց: Զուտ հայաբնակ գյուղ էր: Շրջակայքում կային աղահանքեր, աղի աղբյուր և մարմարի պաշարներ: Թիմարի գավառակի կենտրոնն էր: 1850-ական թթ. ուներ 47 տուն՝ 329 բնակիչ: Ըստ Ա. Դոյի՝ 1909թ. ուներ 80 տուն հայ բնակիչ (նշվ. աշխ., էջ 27): Ուներ Սբ Ստեփանոս անունով եկեղեցի և հայոց վարժարան: Ավերվել ու ամայացել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (ՀՀՇՏԲ, հ.4, էջ 386):

Գիշերը հասանք Բերկրի կալան[183]: Մի շաբաթ մեզի պահեցին և Առնիս[184] կամանդիրներ եկան մեզի մարզանքի հանեցին:

Քուրդերը ոչ մի խոսք չէին հասկանում: Մենք՝ հայերս, բավականին լավ էինք:

Այդ տեղի կայմակամը եկավ, մեզի շարքի կանգնեցուց և երկուական սոմին հաց տվեց: Մի խումբ նոր բռնվածների՝ հայ, քուրդ, ասորի և թուրք, խառնեցին իրարու: Եղանք վեց հարյուր զինվոր և տասը ժանդարմ: Գիշերվան հասանք Առնիս: Առաջուց մեր տեղերը պատրաստած էին: Խումբ առ խումբ տարան գոմեր և մարագներ: Մի շաբաթ Առնիս մնալուց հետո մեզի տարան Ալջավազ[185] քաղաքը: Այս քաղաքը մյուսների պես, հայերից միայն տարիքավոր կին և տղամարդ մնացած էր: Այս քաղաքում շատ այգիներ և շատ պտղատու ծառեր կային:

Մեզի մի ամիս ևս պիտի մարզեին, հետո Մուշ և կամ Էրզրում տանեին: Օրական երկու անգամ մարզանքի և

---

[183] **Բերկրի կալա** բերդաքաղաքը կառուցվել է Վանա լճից հյուսիս-արևելք, Բերկրի գետի ստորին հոսանքի շրջանում, նրա աջ ափին: Քարաժայռի վրա ուներ ամուր բերդ: Վանի նահանգի համանուն գավառակի կենտրոնն էր: 20-րդ դարի սկզբին ուներ 3100 բնակիչ, որից՝ 2100-ը հայ, մնացյալները՝ մահմեդականներ ու հրեաներ: Կար հայկական վարժարան, Սբ Աստվածածին անունով եկեղեցի (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 676): Ըստ Ա-Դոյի՝ 1909թ. Բերկրի-Աբաղա գավառակն ուներ 26 հայաբնակ գյուղ՝ 665 տուն (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 35):

[184] **Առնիս Վերին** գյուղը գտնվում էր Վանի նահանգի Արճեշի գավառակում, Բերկրիի շրջանում: 19-րդ դ. վերջերին ուներ 80 քուրդ բնակիչ: Գյուղի մոտ՝ ժայռերի վրա, պահպանվել էին ուրարտական սեպագիր արձանագրություններ: **Առնիս Ներքին** գյուղը 20-րդ դարի սկզբին ուներ 40 տուն բնակիչ (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 330):

[185] **Ալջավազը** գավառ էր Վանա լճի հյուսիսային ափին, համապատասխանում էր պատմական Խորխոռունիքին: Գավառի 44 գյուղերից 23-ը հայաբնակ էր: Երբեմն գավառի վարչական կենտրոն Արծկեն էլ են Ալջավազ անվանել: 1909-ին Արծկեն ուներ 81 տուն՝ 521 բնակիչ (Ա- Դո, նշվ. աշխ., էջ 43-44): Նշանավոր նավահանգիստ էր և արձանագրվել է դեռևս ուրարտական սեպագրերում: Այն հիշատակում են հայ պատմիչներ Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին և Ստեփանոս Տարոնացին:

պետքերի համար դուրս կհանեին, արդեն բոլորս իրարու ծանոթ էինք:

ՓԱԽՈՒՍՏ

Ուրբաթ օր էր: Մեզի դուրս հանեցին: Հսկողությունը թուլացեր էր, զենք չունենք: Մեզի մոտեցավ մի քուրդ տղա, բարևեց, նստավ և հարցուց. «Դուք ֆլա՞ եք՝ (այսինքն՝ հա՞յ եք): Ասացիմ. «Այո՛, մե՛նք ֆլա ենք»: Ասաց. «Ո՞ր կողմից եք»: Ասացիմ. «Ծովի էն կողմի սարը կտեսնա՞ս, այդ սարի տակ մեր գյուղն է»: Ասաց. «Մեր գյուղն էլ այդ սարի հետևն է»: Ասացիմ. «Ձեր գյուղի անունն ի՞նչ է»: Ասաց. «Կորոնդաշտ»: «Վա՛յ,- ասացիմ,- ես ձեր գյուղ եկած եմ, շեյխերի գյուղն է: Ես երկու տարի Աբզեյնի գյուղը ապրած եմ»:

Այս խոսքեր լսելով՝ ինձի գրկեց, լացեց և շատ լացելուց հետո ասաց. «Արի՛ եղբայրանանք, «Դաստաբրա լինենք»: Այդ «Դաստաբրան» ձեռք ձեռքի կուտան, երդում կընեն, քանի որ սաղ են իրարուց չբաժանվեն:

Ուրեմն՝ ես, Կալեն և Հասանոն «Դաստաբրա» եղանք և որոշեցինք փախնել:

Երկու գիշեր իրարու քով-քովի պառկած կմտածեինք՝ ինչպես փախնենք:

Մի երեկո նստած կնայեինք սարերին և կուզեինք գտնել մեր ճանապարհը, թե ծովի ո՞ր կողմից մեզի բերեցին:

Մեր հետևի սարը Սիփանա սարն է և ծովի հյուսիսային կողմն է, իսկ մեր Արտոս սարը՝ հարավի կողմն է: Ուրեմն՝ մենք դեպի հարավ պիտի երթանք:

Մեզ հավաքեցին գոմերը և մի ոստիկան նստեց դուռի առաջ պահակ: Ամեն մարդ իր հացը կերավ և պառկավ հանգստանալու:

Ամեն երկու ժամ մի պահակ կփոխվեր: Գիշերը մի քանի հրացանի ձայներ լսեցինք: Կկանչեին՝ «Թութ, կաչտըլար», այսինքն՝ «Բռնե՛ք, կփախնեն»:

Մի քանի մարդու ոտնաձայն լսեցինք: Մեր պահակը վազեց բռնելու, և մտան փողոցը:

Հասանոն ասաց. «Եղբա՛յր, փախնենք»:

Մենք կամացուկ դուռը բացինք, մտանք այգիների մեջեն դեպի ծովը:

Առաջուց մեր երթալիք ճանապարհը ուսումնասիրած էինք:

Հասանք ծովափին և սկսեցինք կակուղ ավազի վրա վազել: Երիտասարդ էինք, լավ կվազեինք: Լույս բացվելուց հասանք մի գյուղի առաջ, մի պատի տակ նստանք:

Մի մարդ, մի տղա և երկու եզ փողոցից դուրս ելան: Մեզի տեսնալուն՝ բարևեցին: Մենք բարև առեցինք, հայ էին՝ Սիմոն և իր տղան: Խնդրեցինք մեզի մի տեղ տա՝ հանգստանանք: Ընդունեց, մեզի տարավ իր տուն, հաց տվեց, կերանք և տարավ իր գոմի սաքուն՝ հանգստանալու: Ճաշին մեզի տարավ տուն՝ հաց ուտելու: Զորթանի ապուր էր պատրաստել:

Զորս ամիս է՝ մենք տաք բան չէինք կերած, շատ ախորժակով կերանք և նստանք զրույցի, ասացինք, որ փախստական ենք: Ասաց, որ մի շաբաթ առաջ երկու զինվոր իրենց զենքերով փախած էին: Մենք ասացինք. «Մեզի զենք չեն տված»: Ես հարցուցիմ. «Այս ո՞ր շրջանն է»: Ասաց. «Ռիշտունյաց շրջանն է»: Ասացիմ. «Ուրեմն Աղթամարի շրջանն է»: Ասաց. «Այո՛»: Հարցուցիմ. «Էստեղից Աղթամարի Դրսի տուն քանի՞ ժամվան ճանապարհ է»: Ասաց. «Երեք ժամ»:

Խնդրեցիմ իրեն՝ մի մարդու հետ մեզի մինչև այնտեղ տանի և հարցրեցիմ. «Էդ Դրսի տունի մայրապետը կա՞, թե՞ գնացեր է քաղաք»: Մարդը զարմացավ: Ասացիմ. «Նա իմ խնամին է, նրա հարսը իմ մորաքրոջ աղջիկն է»:

Մարդը ելավ ինձի գրկեց և ասաց. «Այդ կինը հրեշտակ է, և այս երկու եզը նա է առել ինձի համար: Ես հինգ տարի ծառայել եմ վանքի համար, այժմ հանգստացեք, ես ձեզի կտանեմ և կը հանձնեմ Կալիպսե մայրիկին»:

Գիշերվան եկավ և ճանապարհ ելանք, հասանք Աղթամար:

Մեզի տարավ ձիթհանքը, որ ձեթ կհանեն, մեծ և շատ տաք տեղ էր: Պառկանք մինչև լուսացավ:

ԿԱԼԻՊՍԵ ՄԱՅՐԻԿԻ ՆՎԵՐԸ

Առավոտուն մարդը եկավ և մեզի տարավ Կալիպսե մայրիկի մոտ:

Մայրիկն ասաց. «Սիմո՛ն, ասոնք ո՞վ են»: Ասաց. «Քեզի կճանաչեն և քեզի հետ խնամի է այս տղան»:

Ինձի հարցրեց. «Դու ո՞վ ես»:

Ես ասացիմ. «Կալիպսե՛ մայրիկ, ես քո խնամի հացթուխ Նարկիզի քրոջ տղան եմ»: Ասաց. «Էն պոլսեցի Հակոբի տղա՞ն ես»: Ասացիմ. «Այո՛»: Իմ ականջս բռնեց, ասաց. «Ինձի չկանչեցիր հարսանիքի, քո պսակի թուղթը ես առեցիմ վարդապետից»: Մի ոսկի նվեր տվեց Սիմոնին և ասաց. «Սրանց տար ճաշարան և պատվիրիր լավ կերակրեն: Կովեր կթելն վերջանա, ես կուգամ»:

Սիմոնը մեզի բերեց ճաշարան և մնաս բարի ասաց ու գնաց:

Կալիպսե մայրիկը եկավ, գնացինք մեծ տունը: Ես ամենը մեկ առ մեկ պատմեցիմ Սոլեյման աֆանդու զրույցից, և՛ իմ բռնվելը, և՛ մեր փախուստը, և՛ պարոն Սիմոնին հանդիպելը:

Մեզի երեք օր պահեց և չորրորդ օրը մի մարդու ասաց. «Գնա՛, հովիվ Ավդոյին ասա, թող գա»: Ավդոն եկավ: Զոր, ցամաք, երկարահասակ մի մարդ էր: Մայրիկն ասաց. «Ավդո՛, երեք ոսկի նվեր ունիս, այս երեքը իմ բարեկամներն են, կտանես Փեսանդաշտ, կհանձնես Լևոն փաշին և ստացական կբերես»:

Եվ ասաց. «Ի՞նչ ճանապարհով կտանես: Ոտանը մոտիկ է, չբռնվեք»:

Ավդոն ասաց. «Մայրի՛կ, տասը տարի է, որ քո հացը կուտեն իմ ճժերը[186], ես տասը տարի է՝ այս սար-քար կքայլեմ, մեր ճանապարհը այսպես է, կերթանք Մոխրաբերդ և Պատականց գյուղերի վրայից կանցնենք Փաշավանց գյուղի տակից, կելնենք Քարադաշտ գյուղի վրայից և արդեն Փեսանդաշտի սահմանն է»:

Կալիպսե մայրիկը մեր չանթաները հաց և պանիր լցրեց և մի նամակ գրեց, փաթաթեց թաշկինակով, տվեց ինձ, որ տամ Լևոնին:

Գիշերով մենք մայրիկի ձեռքը համբուրեցինք, ճանապարհվեցինք, առավոտուն հասանք Փեսանդաշտի սահմանը:

Մի սևություն քարի տակից դուրս ելավ, կանչեց. «Ո՞վ եք»: Ավդոն ասաց. «Աղթամար»: Եկան երկու երիտասարդներ, ուրեմն՝ ասոնք Լևոնի պահակներն են: Հասանք Շիտան[187] գյուղը:

Ավդոն մեզի տարավ ոչխարի գոմը: Հանգստացանք, և առավոտուն եկավ մեզի տարավ պարոն Լևոնի մոտ, և ստացական առեց, գնաց: Ես Կալիպսե մայրիկի նամակը և թաշկինակը տվեցիմ Լևոնին:

Լևոնը նամակ կարդալուց ինձ ճանաչեց, որ ես Հակոբի տղան եմ, ասաց. «Դո՞ւն էիր այդ քուրդ աղայի «Բռավնիկը» ճարողը»: Ասացիմ. «Այո՛»: Ասաց. «Դո՛ւն պիտի քո մաուզերը Դալի Ղազարից ստացած լիներիր, չե՞ս ստացել»:

Ես պատմեցիմ, որ չորս ամիս է՝ ես տունից հեռացեր եմ, ոչնչից խաբար չունիմ: Ասաց. «Կալիպսե մայրիկը տասը

[186] Ճժեր-զավակներ, երեխաներ:

[187] Շիտան գյուղը գտնվում էր Վանի գավառի Շատախի գավառակում՝ Փեսանդաշտի գյուղախմբում: 1850-ական թթ. ուներ 15 տուն՝ 104 հայ բնակիչ և Սուրբ Ամենափրկիչ անունով եկեղեցի (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 129): Ըստ Ա.-Դոյի՝ 1909-ին գյուղն ուներ 45 տուն հայ բնակիչ (Նշվ. աշխ., էջ 65):

ոսկի ուղարկած է, որ քեզի մաուզեր տամ, ինչպես կուզես, այնպես անենք»:

Ասացիմ. «Պարո՛ն Լևոն, ես առայժմ ոչինչ չեմ ուզի, թող այդ ոսկիները մնան քո մոտ: Ես կխնդրեմ քեզանից մեզի հասցրու Վերին Տարենց գյուղը, իմ հորեղբոր աղջիկը էնտեղ հարս է գնացել, Շահինկե Հայրոյի կինն է»:

Պարոն Լևոնը մի զինվորի պատվիրեց, որ մեզի հասցնի Տարենց:

Գնացինք, հասանք գյուղը: Հորեղբորս աղջիկը հաց կթխեր, մեզի տեսնալուն՝ չճանաչեց, այնքան որ փոխված էինք:

Զորս ամիս էր, որ ո՛չ սափրիչ էինք տեսել, ո՛չ հագուստ էինք փոխել, ո՛չ էլ՝ լողացել: Մեր գլխի մազերը, մորուքի մազերը խառնվեր էին իրարու:

Ասացիմ. «Մարգարի՛տ, Երվանդին չե՞ս ճանաչի»: Հասավ, գրկեց և լաց եղավ՝ իմ վիճակս տեսնալով:

Հայրոն և իր մեծ տղան եկան, շատ ուրախացան:

Իմ քուրդ ընկերս խնդրեց, որ ինքն երթա ցածրի Տարենց գյուղը իր քրոջ տունը, որ մի ժամվան ճանապարհ է: Շա՛տ քաղցր բաժանվանք, և նա գնաց: Ես և Կալեն մնացինք:

Մարգարիտ անմիջապես ջուր տաքացրեց, և Հայրոն սափրիչ բերեց, սափրեց, լողացանք: Մարգարիտն իր տղայի և Հայրոյի հագուստներով մեզի հագցրեց: Ազատվեցինք ոջիլներից:

Ես խնդրեցիմ Հայրոյից, որ երթա մեր գյուղը և իմ ողջ լինելը հայտնի մայրիկիս:

Հայրոն չարուխներ հագավ, որ երթա: Ասացիմ. «Չեն հավատա, սպասիր, նշանաբան տամ, որ մայրիկս հավատա»:

Հայրիկս Պոլիսից գալուն մի գեղեցիկ թաշկինակ բերած էր, իմ հարսանիքին ծաղկեփունջով ես բռնած էիմ: Իմ մոտն էր, տվեցիմ Հայրոյին, և նա գնաց:

Զորս օրից հետո իմ հայրիկի հետ եկան: Շա՛տ հուզիչ էր մեր հանդիպումը: Գրկախառնված կլացեինք բոլորս էլ: Վերջապես հանգստացանք:

Կոմիտե Բարսեղը գրած էր, որ մենք երթանք իմ հորաքրոջ մարդու մարագը, որ գյուղից հեռու է և սարի տակն է, եթե վտանգ պատահի, անմիջապես բարձրանանք սարը:

Մենք եկանք Գոմեշ Հոխանի մարագը, կեսը քանդված էր, բայց հարդ շատ կար:

Գիշերով հայրիկս, Հայրոն՝ աղաջանս, կերթան մեր տուն, որ ծածկոց և ուտելիք բերեն: Մայրիկս չէր համբերել և եկել էր: Երբ եկան և մարագի դուռը բացեցին, մայրիկս ճիչ արձակեց, ընկավ հարդի վրա և ուշագնաց եղավ: Այս որ կգրեմ՝ արտասուքս թափելով կգրեմ, ու այժմ այդ տեսարանն իմ աչքիս առաջն է:

Մայրիկիս ուշքի բերեցին: Կնայի ինձի, չի կարող խոսել, ջուր տվեցին, ուշքի եկավ: Նստանք զրույցի:

Կեսգիշերին հայրիկս և Հայրոն գնացին: Ես և մայրիկս կողք-կողքի պառկեցինք կակուղ հարդի վրան, քնեցինք:

Մյուս օր մայրիկս մնաց մինչև գիշերվան:

Գիշերը եկան հայրիկս, աղաջանս և կոմիտե Բարսեղը: Շատ ուրախացավ կոմիտեն, նստեցինք և սկսեցինք մեր զրույցը: Ես մանրամասն պատմեցիմ մեր գլխի եկածից, բռնվելուց մինչև այստեղ: Կոմիտեն բերած էր մի մաուզեր: Ես կոմիտեին ասացիմ, որ Կալիպսե մայրիկը տասը ոսկի տված է պարոն Լևոնին, որ ինձի մաուզեր տա:

Կոմիտեն ասաց. «Վնաս չունի, այդ փողով զենք կառնենք ուրիշի համար»:

Որոշեցին իմ ընկեր Կալեին տանեն իրենց գյուղը, ես գիշերներ երթամ մեր տուն, ցերեկներ գամ այս մարագը, որ չբռնվեմ: Այդպես էլ արեցինք:

Երբ գնացիմ մեր տունը, տղաս՝ Ղազարոսը, չորս տարեկան էր, ինձի չէր ճանաչում:

Մայրիկս շատ էր տանջվել և շատ էր ընկճվել և այս տեսարանը տեսնալուն՝ ասաց. «Երվա՛նդ, մի զարմանա, որ տղաղ քեզի չի ճանաչում, քո հայրիկն էլ քեզի չէր ճանաչում Պոլիսից գալուն»:

ԶԵՆՔԵՐԻ ԱՌԱՔՈՒՄԸ

1914-ի նոյեմբերի վերջերին ես մարագը թողեցիմ և հաստատվամ մեր տունը, բայց ցերեկը դուրս չեմ երթա: Օրենքը շատ խիստ է, և որին բռնեն՝ նույն տեղը կսպանեն, մեր գյուղի մեջ մենակ կոմիտեն և Զիբոն գիտեին իմ գտնվելուս տեղը:

Մեր տունի և Զիբոյի տան մեջ մի պատ կար, որ ծակած էին ճրագ վառելու համար:

Մի գիշեր Զիբոն հայրիկիս կանչեց, որ զրույց անեն: Շատ կպատահեր այդպիսի երթալ և գալը:

Հայրիկս գնաց, բայց շատ ուշ եկավ: Այդ գիշեր սոսկալի ձյուն ու փոթորիկ եղավ: Կեսգիշերին ահռելի դղրդյուն լսեցինք, կարծես երկրաշարժ էր եղած:

Առավոտուն տեսանք ձնահյուս է եկած մինչև գյուղի մոտը և մի մեծ բլուր է կազմել:

Երեք օր շարունակ ձյուն եկավ և ամեն ճանապարհներ փակեց, մանավանդ մեր գյուղինը, որ կտրված է շրջաններից:

Երկու օր էր հայրիկս կերթար Զիբոյի օդեն, կխոսային և ուշ գիշեր կուգար: Եվ մի օր էլ Զիբոն, հայրիկս և կոմիտեն եկան տուն և երկու տաճկական հրացան դրեցին պատի տակ:

Զիբոն ու կոմիտե Բարսեղը գնացին, և հայրիկս այսպես բացատրեց. «Զորս հատ քուրդ զինվոր փախած են և եկած են: Հանդիպած են Զիբոյին, որովհետև ձմեռ է և հացի փող չունին: Նրանք Բիթլիսի շրջանից են, կուզեն հրացաններ ծախել»: Երկու հատը Զիբոն կառնի, իսկ երկուսը հայրիկս կառնի վեց ոսկի:

Զիբոն կխոստանա նրանց պահել մինչև գարուն՝ այս հրացանների փողով:

Մեր սուրհանդակ Շաշոն քաղաքից վատ լուրեր բերեց: Արամ փաշեն գրած էր, որ թուրքերը պարտված են Պարսկաստանի ճակատամարտից՝ Անդրանիկի զորքերից[188], և Խալիլ

[188] Հեղինակը նկատի ունի **Դիլմանի** ճակատամարտը, որը տեղի է ունեցել 1915թ. ապրիլի 17-18-ին: Այդ հերոսամարտը համակողմանիորեն քննել է ակադեմիկոս Հ. Սիմոնյանը, ցանկանում ենք միայն նշել, որ

փաշան պարտվելով ու կորսնցնելով իր երեսուն հազարանոց բանակը՝ խիստ վրեժխնդիր եղած է հայ զինվորի հանդեպ:

Նա գրած էր. «Հայերին կջոկեն և կսպանեն: Ձեր դիրքերը լավ պահեք և զգույշ եղեք»: Այս լուրերը շատ ազդեցին մեր գյուղացիների վրա, սկսեցին դիրքերի ամրությունները նորոգել և պահակները ավելացնել:

Այս ձյուն ձմեռվան մեր դպրոցի պահակը ասաց. «Բլթենց գյուղի կողմեն մի սևություն կուգա մեր կողմը»:

Լուր տվեցին կոմիտե Բարսեղին, որ մի քանի մարդ և ձիավոր Բլթենց գյուղի կողմից դեպի մեր գյուղ կուգան:

այդ կռիվներում Անդրանիկը փայլուն է դրսևորել իր ռազմագիտական տաղանդը: Ինչպես գրում է Հ. Սիմոնյանը. «Դիլմանի ճակատամարտը հայոց զենքի փառահեղ ստեղծագործություններից մեկն է: Այն մեկ անգամ ևս ապացուցեց, որ զինված հայ մարդը կարող է անկարելին կարելի դարձնել»: Խալիլ բեյի գլխավորած թուրքական բանակը, Դիլմանի կռիվներում տվել է «շուրջ 3000 սպանված և 1500 վիրավոր: Միայն Անդրանիկի գունդը ոչնչացրել է թշնամու 700 զինվոր», իսկ հայերի զոհերը կազմել են 30 սպանված և 50 վիրավոր: Զորավար Զեռնոզուբովն իր հուշերում Անդրանիկի մասին գրում է. «Անդրանիկն այստեղ դրսևորեց իր բոլոր հատկությունները. խիզախորեն պաշտպանում էր ոչ միայն իրեն հանձնարարված մարտական ճակատը, այլև դրսևորում էր ակտիվություն մեր կողմից կազմակերպվող հակագրոհների ժամանակ: Այդ ճակատամարտում զորամասը մեծ կորուստներ տվեց, բայց արժանացավ մարտական փառքի, և այդ կռվին մասնակցած ամեն մի կամավոր հպարտությամբ կարող է ասել. Անդրանիկի հրամանատարությամբ զորամասը պատվով մասնակցեց Մուհանջիկի (Դիլման) հռչակավոր ճակատամարտին, որը փրկեց Կովկասը թշնամու ներխուժումից»: Եվ իսկապես, Դիլմանի ճակատամարտի հաղթական ելքը ձախողեց Անդրկովկաս ներխուժելու երիտթուրքերի պանթուրքական ծրագրերը: (Տե՛ս Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, Երևան, 1999, էջ 433-449: Այս ճակատամարտի մասին տե՛ս նաև Ա. Զելեսյան, Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, կենսագրական ակնարկ, Երևան, 1990, էջ 304-320: Арутюнян А. О., Кавказский фронт 1914-1917гг., Ереван, 1971. Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 398-420, տե՛ս նաև Ասք Անդրանիկ Զորավարի մասին, բանահավաք և մշակող՝ Սուրեն Սահակյան, Երևան, «Լուսակն» հրատ., 2008, էջ 18-20, 114-134:)

Կոմիտեն ասաց. «Կրա՛կ վառեք, որ մեզի տեսնեն և մեր կողմը գան և մի քանի տղա վազեք ընդառաջելու նրանց»:

Եկան վեց ձի բարձած և չորս մարդ էլ հետները:

Բոլորը հավաքվեցին կոմիտեի դուռը: Անմիջապես բեռներն իջեցուցին և տարան կոմիտեի գոմի սաքուն, արկղները բացեցին: Բոլորը զենք էր: Շարեցին պատերի տակ և նրանց թրջված հագուստները մենք տարանք, որ մաքրենք: Երբ նստան սաքուն, մենք նոր ճանաչեցինք մեր հյուրերին:

Երեքը ծանոթ էին՝ Դալի Ղազարն էր, Եգորն էր և Կոճա Դավոն, իսկ էն մեկը Բլթենց գյուղի Տիգրանն էր, որին Արամ փաշեն մեր շրջանի հրամանատար էր նշանակել: Քաջ և փորձված զինվորական էր:

Ձմեռ էր, գյուղացիք պարապ էին: Այդ զենքերը մենք կմաքրեինք և կուտայինք Կոճա Դավոյին և Դավոն փայտը, այսինքն՝ զոնդաղը կմիացներ խողովակին և կյուղեինք, կտայինք կոմիտեին, իսկ մաուզերները և բռավնիկները կուտայինք Ղազարին:

Այս գործողությունը տևեց երկու ամիս:

Հասանք 1915 թվական, մարտ ամիսը:

Մի գիշեր ժողով արեցին, և բոլոր գյուղացիք եկան: Կոմիտեն ցուցակով կանչեց անունները, և Ղազարը հրացաններ ու ատրճանակներ մեկիկ-մեկիկ բաժանեց գյուղացիներին:

Եգորը երկար հրացանների տերերին կսովորեցներ պատրոն լցնել և նշան բռնել, իսկ Ղազարը՝ մաուզեր լցնել, արգելակ փակել-բացելն ու կրակելը:

Այս ամենը վերջացավ:

Մեր դպրոցի պահակը լուր տվեց, որ մեր սարից մարդ է իջնում դեպի գյուղը: Ղազարն ասաց. «Մի՛ վախենաք, պարոն Լևոնն է, ես լուր ունիմ»: Անմիջապես տեղ պատրաստեցին, և Լևոնի խումբը իջավ մեր գյուղը և բաժանվան երկու մասի, կեսը մնաց Հալեպցի Մկրտիչի և կեսը՝ կոմիտե Բարսեղի տունը:

Պարոն Լևոնն ասաց. «Երթա՛նք, գյուղի դիրքերը քննենք»:

Մեր գյուղին երեք դիրք որոշեցին: Դպրոցի վերի հարկը առաջի դիրքն է, և նրա առաջ՝ բաց դաշտի մեջ, մի հիսուն քայլը մեկ, խրամ էին պատրաստել, որ կռվի ժամանակ թշնամին միայն դպրոցը տեսնա, կրակի, իսկ երբ մոտիկանա դպրոցին, խրամներից կրակ բացեն թշնամու գլխին: Երրորդ՝ գյուղի բլուրի կողքին նույնպես խրամ էին փորել, որ կռվեն, իսկ սարի գլխին շատ հարմար դիրք է, և լավ պիտի պաշտպանվի, որ հակառակ դեպքում ժողովուրդը դեպի սար բարձրանա և ազատվի:

Այսպիսով, որոշեցին հրամանատարը՝ բլթենցի Տիգրանը, նրա օգնականը՝ Բարսեղը, իսկ Մարկոսը հացի և փամփուշտի պատասխանատուն է:

Այս ամենից հետո հարցը եկավ այդ երկու տաճկական հրացաններին, որ հայրիկս առած էր Ջիբոյի միջոցով:

Կոմիտե Բարսեղը բացատրեց, որ չորս զինվոր թուրքական բանակեն փախած, կհանդիպեն Ջիբոյին և չորսն ալ քուրդ են, կուզեն հրացաններ ծախել և ձմեռը մնալ գյուղը և ապրել:

Ջիբոն կկանչի ռես Հակոբին և խորհուրդ կընեն երկուսը: Ջիբոն կառնի պայմանով, որ նրանց մինչև գարուն պահի, իսկ երկուսը ռես Հակոբ կառնի վեց ոսկի՝ մեկը կուտա իր փեսա Գոմեշ Հոխանին, իսկ մեկը կնվիրի մեր խումբին. «Ջիբոն թեպետ քուրդ է, բայց կոտորածի տարին բոլոր գյուղացիներին պահեց երկու տարի, և իր տղան այս խումբի մեջն է»:

Կոճա Դավոն այս խոսքերը լսելուց վեր ելավ և հայրիկիս գրկեց ու համբուրեց, ասաց. «Պարո՛ն Լևոն, Սուրբ Տիրամեր վկա, զմըլա[189] խորաթա չէիմ լսած, էդ Ջիբոն պետք է կանչել և նվեր տալ»:

Ջիբոյին կանչեցին, Լևոնը և Ջիբոն շատ սիրով համբուրվեցան, և Լևոն ասաց հայրիկիս. «Կալիպսե մայրիկը տասը ոսկի ուղարկած էր, որ քո տղայիդ մի մաուզեր տայիմ, մի՞թե Ղազարը քո տված փողի դիմաց մաուզեր չի տվել»:

[189] Զմըլա-այդպիսի:

Հայրիկս ասաց. «Պարո՛ն Լևոն, Ղազարը մաուզերը տված է»: Ասաց. «Ուրեմն՝ ռես Հակոբ, այս ինն ոսկին քեզի կպատկանի, և մեկը տվեցիմ տղայիդ բերողին»:

Հայրիկս ասաց. «Ես այդ փարան կնվիրեմ իմ տղայիս միությանը»:

Ես առաջ եկամ և խնդրեցիմ պարոն Լևոնին, որ Ջիբոն մեր գյուղի ժողովուրդի ազատարարն է, և նրա տղան՝ Թեյմուրը, մեր խումբի մեջն է, մի նվեր տան, որ մեր կերած հացը հալալ լինի:

Լևոնը կանչեց, որ Թեյմուրն առաջ գա: Թեյմուրը եկավ, զինվորական բարևով կանգնավ բոլորի առաջը: Լևոնը կանգնավ, Թեյմուրին համբուրեց և իր թիկնապահ Խուշոյին ասաց. «Մի մաուզեր տուր ինձի»: Մաուզեր առեց, կախեց Թեյմուրի վզից և ասեց. «Շնորհավոր լինի»:

Ջիբոն ելավ և Լևոնին խոստացավ. «Քանի ես սաղ եմ, քո հրամանի տակն եմ»: Եվ այսպես ուրախությամբ ժողովը վերջացավ:

Լևոնն իր խումբով գնաց:

Կերթան կհասնեն Աթանանց գյուղը, նրանց առաջը դուրս կուգան հարյուրի չափ թուրք զինվորներ և կայմակամը: Կռիվ կսկսի, մի տասնյակ թուրք սպանելով, Լևոնը կռվելով սարը կբարձրանա և կանցնի Փեսանդաշտի գավառը: Այս կռվից հետո, երեք գյուղ փախան, եկան մեր գյուղը: Տիգրանը բոլորին տեղավորեց և կարգադրեց. «Այս օրվանից բոլոր գյուղի ունեցվածքը և եկողների ունեցվածքը մեկ միություն է, իմ և քո չկա»: Մեծ-մեծ փոսեր փորեցին, կաթսաները փոսերի վրան դրեցին, միս և ցորեն կեփեին և շունչի վրա կբաժանեին:

Այս գործը հանձնեցին հայրիկիս, հալեպցի Մկրտիչին, Թանկո Ավետին և Ջիբոյին:

Անցավ մի շաբաթ, զինվածների միջև դիրքերը բաժանեցին: Մեր տասնյակին ընկավ սարի գլուխը: Մեր չանթանները լիք-լիք հաց և պանիր լցրեցինք և ամեն մեկիս մի կտոր միս տվեցին: Գիշերով հասանք սարի գլուխը:

Երկու օր հանգիստ պահակ կդնեինք և կքնեինք: Երրորդ օրը տեսանք՝ Վան քաղաքից դեպի Ոստան երեք նավ կուգա: Մենք անմիջապես մարդ ղրկեցինք՝ լուր տալու:

ՔԵՐԾ ԳՅՈՒՂԻ ԿՌԻՎԸ 1915 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-ԻՆ[190]

Մեր սուրհանդակը գնաց, վերադարձավ և ասաց, որ Ջիբոյի եղբայր Ահմադը Ոստանից եկած է և ասեր է, որ հազարավոր Թուրքի զինվորներ քաղաքից եկան Ոստան:

Մեր հրամանատարն ըսած էր. «Ով որ վտանգ տեսնա, իր դիրքից մի հրացան թող կրակի՝ իբրև ազդանշան»:

Կեսգիշերն անց էր: Այն օրը պահակը ես և բլթենցի Կալեն էինք: Կալեն ասաց. «Երվա՛նդ, մեր գյուղի կողմից մի սևություն կուգա դեպի ձեր գյուղը»: Մենք լավ նայեցինք, տեսանք, որ շարժվում են: Մեր տասնապետ Ենովքին լուր տվեցինք, Ենովք ասաց, որ խուժան է, կամ զորք է, մի հրացան կրակենք, և ինքը մի հրացան կրակեց, նույն ժամանակ գյուղի դիրքերից մեկ-մեկ հրացան կրակեցին: Հանկարծ այդ սևությունը երեք մասի բաժանվեց: Մի մասը գնաց ուղղակի մեր դպրոցի դիրքերի վրա: Երկրորդը գնաց գյուղի կողքի բլուրի վրա: Երրորդը եկավ դեպի սարը՝ մեզի վրա:

Մի ահռելի աղաղակ բարձրացավ. հրացանների և մարդկանց գոռում-գոչյունը դժոխք էր դարձել: Մենք երկու մասի բաժանվանք: Մեզանից ցածր մի մեծ փոս կար: Ենովքը մեզանից տասներկուսը իջեցուց այդ փոսը, իսկ վեց հոգի թողեց սարի գլուխը, որ կռվեն, և թշնամին միայն էդ տեղին կրակի: Մենք ձյունը մաքրեցինք և մտանք փոսի մեջ և կսպասենք, թե երբ դեպի սար բարձրացողները կհասնեն մեր դիրքերի առաջ: Մենք բոլորս էլ, բացի հրացանը, մաուզեր ունենք:

Ենովքն ասաց. «Չկրակե՛ք, մինչև հասնեն մաուզերի գնդակի սահմանը»:

Գյուղի կռիվը սոսկալի էր:

Արև առեց, տեսանք գյուղի խրամների առաջ հարյուրավոր սպանված ձիերի և մարդկանց լեշեր: Այժմ հերթը մերն է: Պառկած ենք փոսում, կտեսնանք Թուրքի չավուշը մի ձեռքով սուրն է բռնած և մի ձեռքով՝ ատրճանակը, կկանչի՝ հա՛ յավրում, հա՛ յավրում, հառաջ-հառաջ: Մենք կսպասենք կրակելու հրամանին. ուշանում է: Թուրքեր հասան հիսուն քայլի վրա և ապահով կուգան:

Հանկարծ Ենովքը գոռաց. «Մաուզերնե՛ր, ընդհանուր կրա՛կ»: Եվ մենք ուղղակի կրակ թափեցինք թշնամու գլխին: Ով որ հետ էր մնացել, կուզեր փախնել: Ենովքը կանչեց. «Երկար զենքեր գործածեք»:

Դեպի սարը հարձակվողներից ոչ մեկը չվերադարձավ: Սարի լանջի ձյունը սև և կարմիր էր եղած: Ինչպես մենք կտեսնայինք գյուղի առաջին կոտորվող թշնամին, նույն և գյուղից կտեսնային սարի կոտորածը: Թշնամին դաշտը թո-

---

190 Ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Օնիկ Մխիթարյանի «Վանի հերոսամարտը» գրքի (Սոֆիա, 1930, էջ 127-128) համապատասխան հատվածը, որը սահմռկեցուցիչ մանրամասներով լրացնում է Երվանդ Կյուրեղյանի պատումը: Ամսաթվերի շուրջ մեկ ամիս տարբերությունը գուցե պայմանավորված է նրանով, որ Կյուրեղյանը հուշերը գրել է այս դեպքերից 73 տարի անց: «Ապրիլ 7-ին և 8-ին այս գիւղը կը լեցուին Պլթենց և Աթանանց գիւղի բնակիչները և Կզլդաշի գիւղացիութեան մէկ մասը: (Այս ամբողջ գիւղացիութիւնը անվնաս կը մնայ Դաշնակցական Պլթենցի Տիգրանի ղեկավարութեան տակ մինչև Ապրիլ 20-ը: Ապրիլ 21-ին, Պախանցի Հիւսէյին աղան, մօտ 500 հեծեալ և հատեւակ միլլիներով և ոստիկաններով, կը յարձակի գիւղին վրայ, բայց չի կրնար գրաւել զայն: Պլթենցի Տիգրանի, Աթանանցի Տէր Յովակիմի, Քերծցի Յովհաննէսի և Նշանի ղեկավարութեամբ մղուած դիմադրութիւնը կը տեւէ ամբողջ օրը: Կռիւի ընթացքին կը սպանուին 20 կիներ և երախաներ: Մութը իջնելուն, գիւղացիութիւնը կը բարձրանայ Արտօս լեռը և ապա կ'իջնէ Փեսանդաշտ, ուր աւելի քան 15,000 ժողովուրդ իր թեւերուն տակ առած էր ու կը պաշտպանէր Դաշնակցական գաւառական գործիչ և մարտիկ Լեւոն Շաղոյեանը: Քերծի գիւղացիութենէն շատ փոքրիկ մաս մը միայն անցաւ Վարագ և անկէ Այգեստան»:

ղեց և հետ փախավ: Ոստանի դաժան Խուրշուդ աղան սպանված էր նույն կռվին:

Մենք դիրքերից իջանք սպանվածների վրա: Տասնութը թուրք էր և քառասունհինգը քուրդ, սատկել և դեռ վիրավոր էին, մենք նրանց էլ սատկացրինք:

Նրանց հրացանները և զենքերը հավաքեցինք, կապեցինք և երկու տղա տարան հանձնեցին կոմիտեին:

Զինվորները նրանց գրպաններ նայելուց քսան ոսկի գտան: Փողերը տվեցինք կոմիտեին: Մի քանի ատրճանակ մնացած էր: Տիգրանն ասաց, որ տանեմ բաժանեմ իմ տղաներին: Զավուշի բռավնիկը ես տվեցիմ իմ ընկեր Կալեին:

Երկրորդ օրը թշնամին ավելի ուժով հարձակվեց: Այս անգամ Ոստանի Խուրշուդ աղայի փեսան՝ Մուլք գյուղի Հուսեյին աղան, իր աշիրաթով հարձակվեց բերդի դիրքի վրա: Բերդի հրամանատարը մեր կոմիտե Բարսեղն էր: Մինչև ուշ գիշերը կռիվ չդադարեց: Հուսեյին աղան սպանվեց և զորքը փախուստի դիմեց, իսկ մեզի վրա եկող թշնամին չառաջացավ, միայն հեռաձիգ հրացանով կռվեց: Գիշերը բոլոր դիրքերը հանգիստ մնացին:

Այդ օրը գյուղը շատ հանգիստ էր, երեկոյան քաղաքից սուրհանդակ կուգա և մի նամակ կբերի Արամ փաշայից՝ ուղղված հրամանատար Տիգրանին: Գրված էր, որ քաղաքը պաշարված է, Վարագա վանքը նեղության մեջ է, կռվող քիչ ունի: «Այս նամակը ստանալուն պես անհապաղ կռվող ուժը երկու մասի բաժանիր, կեսը թող գա Վարագ՝ օգնության և մյուս զինվորներն ու ժողովուրդը ինչ-որ կարող են վերցնեն և ճանապարհ բացեն, տավարներ՝ ոչխարներով սարը բարձրանան և անցնեն Փեսանդաշտ՝ Լևոնի մոտ»:

Այս նամակը մեր սրտեր արյունոտեց: Դե արի այս ձյուն ձմեռ քո ընտանիքից բաժանվի: Ի՞նչ կարող ենք անել: Կենաց և մահու ժամանակ է: Մեզ հավաքեցին մի հրապարակում և մի քարի վրա թաց և չոր նշանակեցին՝ թացը Վանին է, իսկ չորը՝ Փեսանդաշտին: Ես և հայրիկս ընկանք Վանի

բաժին, մեզ հետ էին Ենովքը և Կալեն: Չեմ կարող նկարագրել մեր բաժանումը մեր ընտանիքից՝ Հեղինե կնոջից և Ղազարոսից, մանավանդ իմ ազիզ մայրիկից: Ընկած էր գետնին, ոտքերս բռնած, հավի պես կթպրտար: Վերջապես լացկոծով բաժանվանք, և հարյուր քսանչորս մարդ ճամփա ընկանք դեպի Վան քաղաքը: Գիշերը հասանք Կեմ գյուղը:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՆ ՔԱՂԱՔԻՆ

Սուրբ լույսը բացվեց: Պահվտանք քարերի տակ մինչև գիշեր: Գիշերվան ճանապարհվեցինք: Ցյուն ու անձրև էր: Հասանք Վարագա գետը, հագուստները հանեցինք, մտանք գետի սառը ջուրը, մինչև թևերի տակ կհասնի: Ջուր և ձյուն խառնված էին, տղաներ բոլորը կդողան: Անցանք, հասանք վանքը: Իմ հայրիկի ոտները ցուրտը տարավ և երեք հոգու հետ տարան տավարների գոմը, որ շատ տաք էր, իսկ մեզի բաժանեցին դիրքերի: Մեզի՝ տասնվեց մեր գյուղացիք, հանձնեցին խմբապետ Կոճա Դավոյին և տարան Շուշանից դիրքերը, ամեն մեկիս մի հաց և պատրոն տվեցին: Երեք օր մենք կռվեցինք: Չորրորդ օրը Դավոն մեզի հաց չբերեց: Կեսգիշեր է, մի տղա ուղարկեցինք վանքը, որ մեզի հաց բերի, տղան եկավ, երեք գունդ խմոր բերեց և ասաց. «Դավոն, մեզի լուր չտված, փախած է և վանքը մարդ չկա, մենք կորսված ենք»: Գիշեր է և անծանոթ սարը, մենք եկանք վանքը ոչ-ոք չկա: Միայն որ ժողովուրդը գնացեր է, ճանապարհը սևացեր է, մենք էլ նույն ճանապարհը բռնեցինք, քայլեցինք: Շատ չէինք եկած՝ տեսանք մի մարդ կերթա: Ձայն տվեցինք, կանգնավ: Հարցուցինք ճանապարհը: Մարդը ասաց. «Ճանապարհը կտրված է թուրքերի կողմից, և եթե ինձի տանեք, ես գաղտնի ճամբով ձեզի կտանեմ Նորաշենի մեյդանը»:

Մենք մարդուն հերթով շալակեցինք մինչև Նորաշենի մեյդանը:

Առավոտուն հասանք Նորաշեն՝ եկեղեցու բակը: Եկան քաղաքի երիտասարդներ և ուղեցին մեզի զինաթափ անել: Մենք անմիջապես, նրանցից ջոկվանք և տասնոցներ քաշեցինք, ասացինք. «Մենք Քերծ գյուղացի ենք, առանց մեռնելու և մեռցնելու ձեզի զենք չենք տա»: Ենովք ասաց. «Անպիտաննե՛ր, մենք մեր ընտանիքը թողած ենք թշնամու բերան և Արամ փաշայի հրամանով եկանք ձեզի օգնության, ա՞յդ է մեր վարձատրությունը»: Այդ միջոցին մի խումբ զինված ներս մտան, տեսան՝ մենք զենքեր ձեռքերնիս՝ պատրաստ ենք կռվելու: Երբ հասկացան եղելությունը, նեղություն խնդրեցին, ասացին «Ձեր մեծը ո՞վ է»: Ենովքն ասաց. «Մենք բոլորս մեկ գյուղացի ենք, բայց մեծը ես եմ»: Այդ պարոնը, որ անունը Սեպուհ էր, հրամայեց, մեզի հաց բերեցին, չայ բերեցին: Հացերը կերանք, չայը սովոր չէինք, չխմեցինք: Ենովքը խնդրեց, որ Արամ փաշի սուրհանդակը գտնեն, բերեն մեր մոտ: Գնացին և Շաշո Սարգիսին բերեցին: Մենք շատ ուրախացանք: Ենովքը խնդրեց, որ եթե բլթենցի Տիգրանը եկած է քաղաք, անմիջապես բերի մեզ մոտ:

Շաշոն գնաց և Տիգրանին բերեց: Շատ ուրախացանք և մենք պատմեցինք, որ Կոճա Դավոն մեզի թողեց անծանոթ սարի մեջ ու փախավ:

Տիգրանը պատմեց, որ բոլոր զինվորներին բահ ու բրիչ տված են, նրանք ձյունը մաքրելով ճանապարհ բացած են և ամբողջ ժողովուրդը, անասունները ողջ և առողջ հասեր են Փեսանդաշտ և հանձնած են Լևոնին: Ինքը Արամ փաշայի հրամանով եկած է Վան՝ մեր գյուղացիներին տերություն անի:

ԽՄԲԱՊԵՏ ԱՐԵՍԻ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Այդ գիշեր հանգստացանք: Առավոտը Տիգրանի հետ եկան, և քաղաքի պաշտպան կոմիտեն մեզի բաժանեցին դիրքերի վրա: Մենք չորս հոգի ընկանք խմբապետ Արեսի

խումբը, Ենովքն էր, ես էի, Կալեն էր և Նախրջի Խաչիկը: Մեզի գիշերով տարան ծուռ-մուռ փողոցներով: Կեսգիշեր էր, մենք հասանք մեր դիրքը: Եղանք քսանչորս հոգի:

Պարոն Արեսը մեզի մեկ-մեկ թաղիքից պատրաստված թիկնոց, հաց ու պատրոն տվեց: Մեր դիրքը մեկ հարկանի տուն էր և առաջը լայն բակ էր, բակից էն կողմը կաղամբի բոստան էր եղած: Մի շաբաթ լավ կռվեցինք այդ տունի մեջ: Մեր առաջները լիքը ավազով լցրած պարկեր կային, որ թշնամու գնդակը մեզի վնաս չէր տա և կմտներ ավազի մեջ, իսկ երկրորդ շաբաթը մեր դիմաց դուրս եկավ Հաջի Բաքըրի ամենամեծ զորանոցը: Այնտեղից չորս թնդանոթ անընդհատ կռմբակոծեին քաղաքի բարձր մասերը: Մի գիշեր լույսը գցեցին, մեր տունը տեսան: Երկու թնդանոթի արկ դիպավ մեր շենքին և քանդվեց, և երկու զինվոր մնացին տակը: Գիշերով բանվորական ջոկատը եկավ, երկուսին էլ հանեցին, տարան: Մեռած էին: Մենք փոխադրվանք: Բակի պատը ծակեցինք և դիրքեր պատրաստեցինք: Մի շաբաթ էլ այդպես կռվեցինք: Մեր պատն էլ թնդանոթով քանդեցին: Նույն գիշերը բանվորական ջոկատը եկավ և երեք մասի բաժնվեց՝ մեկ մասը տունը նորոգեց, մեկ մասը պատը նորոգեց և մեկ մասը պատից հարյուր քայլ հեռու՝ այդ կաղամբի արտի մեջ, խրամ փորեց, և մենք փոխադրվեցինք խրամների մեջ: Երբ մեր ավազի պարկերը կփոխադրեինք խրամների առաջ, ես ճանաչեցիմ ՝իմ ՝քեռի քարտաշ Մանուկին: Շատ ուրախացավ՝ ինձի տեսնալուն: Այդ օրը ցերեկով թնդանոթը մեր տունը և պատը կրկին քանդեց, և գիշերը մի շատ մեծ հարձակում գործեցին մեր վրա: Զգիտեին, որ մենք պահված ենք մեր խրամների մեջ: Արեսը՝ մեր խմբապետը, չթողեց, որ կրակենք, ասաց. «Թող գան, հասնեն մաուզերի գնդակի սահմանին»: Եկան: Տեսնում ենք նրանց շվաքը: Շատ հանգիստ կրակելով կուգային: Հասան գրեթե հիսուն քայլին և Արեսը կանչեց. «Անընդհատ կրա՛կ»: Սկսեցինք մաուզերի խռռոցը: Կտեսնայինք նրանց ընկնելը և փախնելը: Առավոտուն նոր տեսանք նրանց լեշերը:

Գիշերվան մեր շարքերից Փանոս անունով մի զինվոր մի երկար փայտ շինած էր, գլուխին էլ կեռ երկաթ էր կապած: Կերթար այդ լեշերից կքաշեր-կբերեր հրացան ու պատրոններ կառնեին և նրանց կտանեին մեր հետևի քանդված շենքը, կթաղեին: Եվ մենք նոր հասկացանք, որ մեր հետ այդ օրվան կռվողները քուրդեր էին:

Արեսը գիշերը գնաց՝ պատրոն բերելու: Վերադարձավ երկու կուլիկ գինի և բավականին ղավուրմա բերեց, բաժանեց մեզի: Խմեցինք, ղավուրմեն կերանք, բայց զարմացած ենք Արեսի ուրախ շարժումների, խմելու և ծիծաղելու վրա: Ենովք հարցրեց. «Պարո՛ն Արես, խնդրեմ ասեք՝ ի՞նչ է պատճառը Ձեր ուրախության»: Արեսը բացատրեց, որ ամերիկացի դոկտոր Աշերը[191] և դոկտոր Ռեյնոն[192] իրենց շինած քամու ջաղացից տեսած են, որ ծովի

[191] Աշերը-դոկտոր Աշերը (հանդիպում է նաև Ըշըր տառադարձությամբ) ամերիկյան բժիշկ էր և բողոքական քարոզիչ, որը գործում էր Վանում: Անշուշտ, նրա կրոնական հավաքները անվրդով չեն անցել, օրինակ՝ 1906թ. մի խումբ վանեցիներ Նորաշեն եկեղեցու տիրացուի գլխավորությամբ խանգարել են Վանի բողոքականների երեկոյան հավաքը, հանգցրել են լույսերը և այլն (Տէր-Մկրտիչեան Ե., նշվ. աշխ., էջ 297-298): Անցյալ դարասկզբին Վանում գաղտնորեն գործող Արամ Մանուկյանն իր հուշերում բժիշկ Աշերի մասին գրում է. «Բժշկական օգնության գործում մեզ մեծ ծառայութիւն են մատուցել ամերիկեան բժիշկները, մանաւանդ տոքթ. Աշերը, որն անվախ միշտ յաճախում էր մեր հիվանդներին, ձրիաբար բժշկում եւ ոչ մի անգամ, ոչ ցերեկ եւ ոչ գիշեր չէր մերժում գալ: Նա կատարել է նաեւ վիրաւոր ընկերների վիրաբուժական գործողութիւն եւն: Բացի իր անձնական օգնութիւններից՝ նա թուլատրել էր իրենց հիվանդանոցի ֆելդշերներին և հիւանդապահներին, որ յաճախեն մեր հիւանդներին և բժշկեն: Դեղերն էլ, ի հարկէ, նրանց դեղատնից էին գնում» (Արամը, էջ 263): Վանի հերոսամարտի օրերին ևս բժիշկ Աշերը նվիրված էր հիւանդների և վիրավորների խնամքին, ինքն էլ ծանր հիվանդանում է, իսկ նրա տիկինը Վանում մահանում (Ատանալեան Կ., Յուշարձան Հայ Աւետարանականաց և Աւետարանական Եկեղեցւոյ, Ֆրեզնո, 1952, էջ 388): Առաջին համաշխարհային պատերազմից հետո բժիշկ Աշերը նշանակվում է Կովկասի Ամերիկյան Նպաստամատույց ընկերության և կրոնական գործերի վերատեսուչ (Ղազարյան Ա., Լևոնյան Ռ., Հայաստանյայց Ավետարանական եկեղեցին (Հայաստան-Կովկաս), Երևան, 1999, էջ 144):

[192] Ռեյնոն-հեղինակը նկատի ունի Վանում ամերիկյան հյուպատոս, բժիշկ, բողոքական քարոզիչ Ջ. Ռեյնոլդսին, որը շուրջ չորս տասնամյակ

վրայից անհաշիվ նավեր կերթան դեպի Բիթլիս: Թուրքերը հեռանում են, և այս լուրը ղրկած է Արամ փաշան:

Այս լուրը լսելով՝ մենք շատ ուրախացանք:

Առավոտուն թնդանոթները սկսեցին ամերիկյան շենքերը ռմբակոծել, մեր դեմը սկսվեց շատ ուժեղ հարձակում: Թշնամին կմտածեր, որ մենք տունի և կամ պատերի տակն ենք և կխփեին այն կողմը: Մեր հրացանները անծուխ էին, թշնամին մեր խրամները չէր տեսնա և չէր կարող առաջ գալ: Կռիվը մինչև գիշեր մեզի ժամանակ չտվեց ջուր խմելու և մեր գլուխը դուրս հանելու, բացի մեր լավ փորված խրամը, մեզի կպաշտպանեին ավազի տոպրակները: Թշնամին, ծանր կորուստներ տալով, գիշերը մեզի հանգիստ թողեց:

Մյուս օր հանգիստ անցավ: Պարոն Արեսը գնաց մթերք բերելու և այս անգամ խմած եկավ, մեկիկ-մեկիկ մեզի համ-

հայերի հետ ապրելով լավ հայերեն է խոսել, իհարկե, ամերիկյան առոգանությամբ (Տէր-Մկրտիչեան Ե., նշվ. աշխ., էջ 353): Նրա մասին ժամանակակիցները հակասական կարծիքներ են հայտնել: 1896թ. Վանի կոտորածի ժամանակ, երբ ռուսական և պարսկական հյուպատոսարանները ջարդարարներին չեն հանձնում իրենց մոտ պատսպարված մի քանի հազար վանեցիներին, Ռեյնոլդսը, տեղի տալով ջարդարարներին, նրանց է հանձնում տղամարդկանց, որոնց տեղնուտեղը թուրքերն ու քրդերը սպանում են: Սա, թերևս նրա կենսագրության ամենասև էջն է: Ջարդից հետո նա Վանում բացում է 500 որբերի համար որբանոց: Վանի ամերիկյան դպրոցի ու դեղատան հիմնադիրը ևս Ռեյնոլդսն է (Պողոսյան Հ., նշվ. աշխ., էջ 269, 273,319-320): Ռեյնոլդսը հայտնի է նաև բազմաթիվ հայանպաստ գործերով, օրինակ՝ 1908թ. նա փրկում է Շատախի հայությանը կոտորածից, գնալով Թաղ, այնտեղից հեռագրում է, բողոքում և ի վերջո հասնում նրան, որ տեղական իշխանությունները հրահանգում են Թաղում ապաստանած շուրջ երկու հազար հայերին կոտորելու պատրաստ քրդերին հեռանալ (Մուտոյեան Յ., Տր. Ջ. Ս. Ռեյնօլտս, դրուագներ անոր կեանքէն մահուան քառասունքին առթիւ, «Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, 1959, թիւ 49, էջ 1261): Ռեյնոլդսի տիկինը, որը նույնպես միսիոներուհի էր, 1915թ. Վանի գաղթի ժամանակ հայ որբեր տանող սայլից ընկնելով վնասվում է և Թիֆլիսում մահանում: 1917թ. հունիսին Ռեյնոլդսը Երևանում որբանոց է բացում, բայց 1918թ. ետ է կանչվում ԱՄՆ: Մահից առաջ գրած իր կտակում նա ցանկություն է հայտնում, որ աճյունը այրեն և հարմար ժամանակ մոխիրը տանեն Վան (Ատանալեան Կ., նշվ. աշխ., էջ 388-389):

բուրեց և ասաց, որ շատ ուրախալի լուր է բերած, սուրհանդակ եկած է Անդրանիկի և Համազասպի կողմից և ասած են. «Երեք օր էլ դիմացեք, մենք կհասնենք Վան: Ուրեմն, այս գիշեր ընդհանուր հարձակում պիտի լինի Հաջի Բաքըրի զորանոցի վրան, ատոր համար ո՞վ կսպանվի, ո՞վ սաղ կմնա՝ համբուրվենք, իրարու հալալ անենք»:

ՀԱՋԻ ԲԱՔԸՐԻ ԶՈՐԱՆՈՑԻ ԿՌԻՎԸ

Գիշերվան մեզի պատրոն բաժանեցին, զենքերը վազելինով յուղեցինք և պատրաստ ենք, կսպասենք հրամանի: Լուսո աստղը երևաց, և մի կարմիր լույս գցեցին, այդ լույսը հարձակման նշանն էր: Մենք առաջ անցանք արտերի միջով, կընկնենք և կերթանք, մեր աջ և ձախ կողմերից կգայլեին հարյուրավոր զինվորներ: Զորանոցին չհասած՝ կանչեցին. «Ուռա՛, կանչելով՝ առաջ վազե՛ք»: Ուռան թնդաց, բոլորը կվազեին: Մենք հասանք զորանոցին, և այժմ ատրճանակն է գործ տեսնողը: Բազմաթիվ դուռեր ունի զորանոցը: Չգիտես՝ քո դիմաց թո՞ւրք է, թե՞ հայ: Մի դուռից մի երիտասարդ դուրս գալուն պես՝ իմ կողքի վանեցի տղան զարկեց, սպանվողը ասաց. «Ա՛խ, ե՛ս... հա՛յ եմ»: Եվ ընկավ: Իմ ձեռքս մի շատ սիրուն թուր ընկավ: Ոսկեզօծ գրերով գերմանական սուր էր: Ես սուրին կնայեիմ, էն կողմից մի թուրք զինվոր եկավ դեպի ինձի: Ես այդ սուրով խփեցիմ, թևը կտրվեց, սատկավ:

Կռիվ կշարունակվեր ամեն տեղ: Ճաշի վերջը զորանոցի զինվորների մի մասը դարձավ դեպի Կլոր-դար թաղամասը, մենք էլ նրանց հետապնդեցինք, հասանք մի տունի առաջ: Տունից մուխ կելներ: Մտանք ներս. ութից տասը թուրքեր հաց կթխեին, կանչեցինք. «Թասլի՛մ»: Ձեռքեր բարձրացրին: Իմ ընկեր Հովիկը, որ իր հոր սպանվելը տեսած էր, խելագարված սկսեց ատրճանակով սպանել: Թոնրատան անկյունում մի թիթեղ նավթ տեսանք: Նավթը լցրեցինք թոնիրը և դուրս ելանք: Տունը վառվեց, և նրանք էլ՝ հետը: Շրջվեցինք դեպի Արարուց մեյդան: Այդտեղ մի հայերեն՝ գրաբար աղոթագիրք գտամ, որ մինչև այժմ պահած եմ և միշտ գրպանումս է եղել: 1915 թվականի մայիսի 4-ից մինչև այսօր մեր տունումն է՝ որպես հիշատակ Արարուց մեյդանի:

Զորանոցը գրավեցինք, զորքը փախավ: Լեշերը մնացին գետին:

Գնացինք Նորաշենի եկեղեցին: Մեկս մեկին ճարեցինք և գտանք մեր հրամանատար բլթենցի Տիգրանին: Պատվիրեց. «Վաղը առավոտ շուտ եկեք այստեղ»:

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՇՔԵՐԹԸ

Երկրորդ օրը հավաքվեցինք Նորաշենի եկեղեցու բակը, բոլոր զինվորական կազմը պատրաստ էր, կսպասեին կամավորներին:

Հաջի Բաքըրի զորանոցի չորս թնդանոթները բերած էին գրադարանի առաջ, շղթայած պահած էին, հրաման եկավ ընդհանուր զինվորական հրամանատար Արմենակ Եկարյանից[193], որ շարք կանգնեն ու պատվի առնեն:

Բուլղարացի զինագործ Գրիգորը իր պղնձից շինած թնդանոթները բերեց մյուս թնդանոթների շարքին, դասավորեց և

[193] **Արմենակ Եկարյանը** ծնվել է 1870թ. Վանում: 1888-ին մտել է 1885-ին Վանում հիմնադրված Արմենական կուսակցության մեջ, որի հանձնարարությամբ 1891թ. անցել է Թավրիզ, մասնակցել զինագործական արհեստանոցի ստեղծմանը և զենք տեղափոխել Վասպուրական: 1896թ. ինքնապաշտպանական մարտերից հետո հեռացել է ծննդավայրից և հաստատվել Ուրմիայում: 1908թ. վերադարձել է Վան: 1915-ին դարձել է Վանի հերոսամարտի ղեկավարներից, ապա եղել է քաղաքի մարտական ուժերի, հայկական ոստիկանության պետ: Այնուհետև անցել է Եգիպտոս, որտեղ էլ մահացել է 1925թ. (Տէր-Մկրտիչեան Ե., Նշվ. աշխ., էջ 520-524: ՀՀՀ, հ. 2, էջ 89):

հանկարծ հնչեց «Մեր Հայրենիքի» նվագը: Արմենակ կանչեց. «Պատվի՛ առ»: Բոլոր հրացանները պատվի առան:

Եկավ կամավորական առաջին խումբը, որ մտել էր Վան քաղաքը: Դաշնակցական Խաչոյի[194] ճիավոր խումբն էր՝ երկար փափախները գլխներին: Մի գեղեցիկ, հաղթանդամ մարդ էր Խաչոն: Հետո եկան Համազասպի[195], Դրոյի[196] և Իշ-

[194] **Դաշնակցական Խաչոն՝** Խաչատուր Ամիրյանը, ծնվել է 1872թ. Նախիջևանում: ՀՅԴ անդամ: Եղել է Կամավորական գնդի հեծելազորի հրամանատար: Վանից իր հեծելազորով օգնության է գնում Տարոնի և Սասունի կռվողներին և ահեղ մարտում 1915թ. զոհվում (ՅՀՅԴ, ալբոմ-ատլաս, հ. Բ, էջ 17):

[195] **Համազասպ Սրվանձտյանցը** հայ ազգային-ազատագրական շարժման ակնավոր գործիչներից է, ծնվել է Վանում 1873թ.: Նա նշանավոր հոգևորական և բանահավաք Գարեգին Սրվանձտյանցի եղբոր որդին է: Երիտասարդական տարիներից անդամակցել է Արմենական, այնուհետև ՀՅԴ կուսակցությանը: 1890թ. փոխադրվել է Երևան, ապա՝ Շուշի: 1905-1906թթ. մասնակցել է հայ-ադրբեջանական (թաթարական) բախումներին, 1906թ. կազմակերպել է Գանձակի պաշտպանությունը: 1908թ. ցարական կառավարությունը նրան դատապարտել է մահվան, որը փոխարինվել է 15 տարվա աքսորով Սիբիր: 1913թ. փախել է բանտից: Առաջին աշխարհամարտի տարիներին նա 3-րդ կամավորական գնդի հրամանատարն էր: Կռվել է Բասենում, Ալաշկերտում, Վանում և այլն, 1918թ.՝ Բաքվում, որտեղ ղեկավարել է հայկական բրիգադը, որն ուներ 3 հազար զինվոր ու սպա: 1918թ. նշանակվել է Նոր Բայազետի շրջանի հրամանատար: Հայաստանի խորհրդայնացումից հետո ձերբակալվել է և 1921թ. Երևանի բանտում կացնահարվել (Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Գ, էջ 32: Լազեան Գ., Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Մոնթեբելո, Կալիֆորնիա, 1993, էջ 66-71):

[196] **Դրոն՝** Դրաստամատ Մարտիրոսի Կանայանը, ծնվել է 1883թ. Իգդիրում: Սովորել է Երևանի ռուսական գիմնազիայում: 1904թ. ընդունվել է Պյատիգորսկի զինվորական ուսումնարանը: 1905թ. Բաքվում, ՀՅԴ կուսակցության հանձնարարությամբ ահաբեկել է հայ-թաթարական բախումների հրահրիչ նահանգապետ Նակաշիձեին: 1908թ. անցել է Արևմտյան Հայաստան (Բայազետ), հսկել հայդուկային խմբերի համար զենք տեղափոխելու գործը: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Դրոն ստանձնել է հայկական Երկրորդ կամավորական գնդի ղեկավարությունը: 1914թ. հոկտեմբերի 24-ին առաջինը ռազմաճակատ է մեկնել Դրոյի գունդը: 1917թ. վերջին նշանակվել է Սարիղամիշում ռազմական կոմիսար: Զորամասեր է ղեկավարել 1918թ. թուրքերի դեմ Բաշ-Ապարանի ճակատամարտում: 1918թ. հայ-վրացական ընդհարումների ժամանակ Դիլիջան-Լոռի ուղղության հայկական զորախմբի հրամանատարն էր: 1920թ. նոյեմբերին նշանակվել է Հայաստանի Հանրապետության ռազմական նախարար: ՌԽՖՍՀ և Հայաստանի Հանրապետության միջև 1920թ.

խան Արղությանի[197] խմբերը: Անդրանիկը չկար, նրա խումբը Պարսկաստանի գծով գնացեր էր Վարագա վանք:

Այժմ որ կգրեմ այս տեսածներս և ապրածներս, արտասուքն ինձի խեղդում է: Արդյոք կա՞ աշխարհքի մեջ ավելի երջանիկ օր, քան այն, որ մի ամբողջ Վասպուրականի ժո-

դեկտեմբերի 2-ի համաձայնությամբ Դրոն մտել է Հայհեղկոմի մեջ՝ որպես ձախ դաշնակցական, սակայն Երևան ժամանած Հայհեղկոմը չի համաձայնել այդ որոշմանը: Մինչև 1921թ. հունվարի 4-ը եղել է Խորհրդային Հայաստանի զորքերի ընդհանուր հրամանատարը: 1921թ. Փետրվարյան ապստամբության կազմակերպիչներից էր, հետագայում՝ վտարանդի: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին գործակցել է Գերմանիայի հետ՝ Հայաստանը գերմանացիների կողմից գրավվելու պարագայում հայ ժողովրդի անվտանգությունն ապահովելու ակնկալությամբ: Գերի ընկած հայ զինվորներից կազմել է հայկական լեգեոններ: Պատերազմից հետո հաստատվել է Լիբանանում, ապա՝ ԱՄՆ-ում: Մահացել է Բոստոնում 1956թ.: (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 116: Գևորգյան Հ., Դրո, կենսագրական, հուշեր, վկայություններ, Երևան, 1991, տե՛ս նույնի՝ Դրո, Երևան, 2007):

[197] **Իշխան (Հովսեփ) Արղությանը (Խանասորի Իշխան)** ծնվել է 1863թ. Սանահինում (Լոռու մարզ) և մահացել է 1925թ. Փարիզում: Եղել է ազատագրական շարժման գործիչ: Ծագումով՝ Արղության իշխանական ընտանիքից է: ՀՅԴ կուսակցության հիմնադիր անդամներից է: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1884): Աշխատել է Ջալալօղլիի, Սուրամիի, Թիֆլիսի հայկական դպրոցներում: 1889թ. անցել է Արևմտյան Հայաստան, գործակցել եպիսկոպոս Ներսես Խարախանյանի, Արաբոյի հետ: 1890թ. մեկնել է Տրապիզոն, սակայն մատնությամբ ձերբակալվել է, հանձնվել ցարական իշխանություններին և աքսորվել Քիշնև: Վերադառնալով՝ անցել է Պարսկաստան (Թավրիզ), որտեղ հսկել և կարգավորել է ՀՅԴ զինագործարանի աշխատանքները, կազմակերպել և ղեկավարել Արևմտյան Հայաստան զենքի և զինամթերքի տեղափոխման գործը, զինատար խմբով հասել Վան: Մասնակցել է Խանասորի արշավանքին որպես հրամանատարի օգնական (1897թ.): Արշավանքից հետո պարսկական իշխանությունները ձերբակալել են Արղությանին և, որպես ռուսահպատակ, հանձնել ռուսական կառավարությանը: Բանտարկվել է Մետեխի բանտում (Թիֆլիս), ապա աքսորվել է Վոլոգդա: 1903թ. վերադարձել է: Մեծ աշխատանք է կատարել 1905-1906թթ. թաթար ջարդարարների դեմ հայերի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հայկական կամավորական 7-րդ գնդի հրամանատարն էր, Հայաստանի Հանրապետության ժամանակաշրջանում՝ Վիրահայոց ազգային խորհրդի նախագահ, 1919-ին, Հայաստանի խորհրդարանի անդամ, ապա՝ Հանրապետության դեսպանը Պարսկաստանում: 1922թ. հաստատվել է Փարիզում, որտեղ մահացել է 1925-ին (Հայկական Հարց, հանրագիտարան, էջ 65, Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Ա, էջ 426, ՅՀՅԴ, ալբոմ-ատլաս, հ. Բ, էջ 15):

զովուրդը քառասուն օր պաշարված և թնդանոթի առաջ կռվելով և հաղթելով՝ այժմ իր փառավոր հաղթանակը կտոնե: Ասոնք աչքիս առաջն են, և ես կտեսնամ պարզորեն ու հրճվանքի և ուրախության հուզմունքը կոկորդս կսեղմե:

Երկրորդ առավոտ ցավալի տեսարան էր:

Տասներկու կամավորներ սպանված էին, բերեցին դպրոցի բակը: Տեղերը պատրաստ էին, քահանան պատշաճ քարոզը կարդաց, աղոթքը վերջացուց և տասներկուսին էլ կողքկողքի թաղեցին և հինգական հրացան արձակեցին՝ իբրև զինվորական հարգանք:

ՀՈՐՍ ՎԱԽՃԱՆԸ

Մեր ընտանիքը չգիտեինք՝ ի՞նչ եղավ, ոչ լուր կա և ոչ էլ՝ նոր եկող:

Ես Ենովքին ասացիմ, որ Անդրանիկը Վարագա վանք[198] է իջել, ուրեմն ես կերթամ տեսնեմ, իմ հայրիկս և իր տարեց

[198] **Վարագա վանքը** գտնվում էր Վասպուրական աշխարհի Տոսպ գավառում, Վան քաղաքից արևելք, Վարագա լեռան արևմտյան լանջին, կանաչապատ ձորալանջի ոչ ընդարձակ հարթակի վրա: Վանքը հայտնի էր նաև **Ավագ Սբ Նշան, Եղդիքիլիսա, Սբ Խաչ մենաստան, Մայրավանք, Մայրաքաղաք մենաստանաց, Սբ Նշան, Սբ Վարագավանք, Վարագ Ներքին, Վարագ Ստորին, Վարագ Վարի, Վարագ Ցածրի** անուններով: Հիմնադրվել է VII դարում: Այս համալիր շինությունը բաղկացած էր վեց եկեղեցուց, գավթից, նախասրահից, օժանդակ շինություններից: 1648թ. ավերվել է երկրաշարժից, այնուհետև վերանորոգվել: 1803թ. կառուցվել են Վարագավանքի պարիսպները, առաջնորդարանը, խուցերի երկհարկանի շենքը: 1817թ. Սբ Խաչ եկեղեցին վերակառուցվել է որպես մատենադարան, իսկ 1849թ. երկրաշարժից ավերված Սբ Սիոն եկեղեցին՝ որպես ցորենի շտեմարան: 1857թ. Վարագավանքի վանահայր է դարձել Խրիմյան Հայրիկը, որը վանքում դպրոց է հիմնել: 1858թ. լույս է տեսնում «Արծվի Վասպուրական» շաբաթաթերթը՝ Խրիմյան Հայրիկի խմբագրությամբ: (Տե՛ս Վարդ., Մի պտույտ Վանի շրջակայքում, Վարագ, «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1898, գիրք Ա., էջ 53-65: Լալաեան Ե., Վասպուրական,

ընկերներ, որ մեզանից ջոկեցին, ի՞նչ են եղած: Սա՞ղ են, թե՞ սպանված: Ենովքը և ընկերներս միասին գնացինք: Վանքին չհասած՝ ընկերս՝ Կալեն, ասաց. «Նայե՛ք, տեսե՛ք, որ բերդի գլուխը հայկական դրոշակ է պարզվել»: Նայեցինք և տեսանք:

Կեսօրվան մոտ էր. մենք հասանք վանքը, պահակը մեզի կանգնեցրեց և մի տղա ուղարկեց, որ հիսնապետին լուր տա, հիսնապետը եկավ հարցրեց. «Դուք ո՞վ եք»: Ես ասացիմ, որ կռվի ժամանակ չորս տարիքավորներ այստեղ մնացած են, որ մեկը իմ հայրիկս էր, չգիտենք՝ ի՞նչ են եղած: Ասաց. «Ցավոք սրտի, այդ չորսն ալ վանքի մեջ սպանած էին, ես նրանց թաղեցիմ այս պատի տակ, ձեռք չէր լինի տալ, բայց հագուստներն այստեղ են, եկեք ցույց տամ ձեզի»: Գնացինք, տեսանք: Ես ճանաչեցիմ իմ հայրիկիս Պոլիսից բերած չուխան, անդարին[199], ելաքը[200]: Շատ լացիմ, և տղաներն էլ լաց եղան: Եկանք, նստեցինք, խոսալուց ես նրա անունը հարցուցիմ, ասաց. «Հարություն է իմ անունս»: Ասիմ. «Պարո՛ն Հարություն, քո խոսակցության բարբառը Ռշտունիքի շրջանին կնմանի»: Ասաց. «Ես խսխերցի[201] եմ՝ Ռշտունիքից»:

Մենք խնդրեցինք, որ ընդունի իր խումբի մեջ, ասաց. «Շատ ուրախ կլինեիմ, որ դուք ինձի հետ լինեիք, բայց Անդրանիկը քաղաքումն է, ես իրավունք չունիմ ձեզի ընդունելու»: Մենք մնաք բարի ասացինք, որ երթանք: Ասաց. «Ընկե՛ր Երվանդ, այդ սուրը չէի՞ր ծախի, ես կառնեմ, ինչքան որ կուզես, կուտամ»: Ես ասեցիմ. «Պարո՛ն Հա-

նշանաւոր վանքերը, Թիֆլիս, հ. 1, 1912: Տես՛ նաև Վարդանյան Ս., Հայաստանի մայրաքաղաքները, էջ 22):

[199] **Անդար**-անթարի, երկար և լայն վերնազգեստ, որ հագնում են թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ:

[200] **Ելաք**-ելակ, մորթուց կարված անթև բաճկոնակ:

[201] **Խսխեր**, ավելի ճիշտ՝ Խոսխեր, գյուղը գտնվում էր ոչ թե Ռշտունիքում, այլ Բիթլիսի նահանգի Սղերդի գավառի Բարվարի գավառակում, 1909-ին ուներ 30 տուն հայ բնակիչ (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 155):

րութիւն, դու որ մեր հայրերին շնորհքով թաղած ես, ես այս սուրը կնվիրեմ քեզի»: Եվ սուրը կախեցիմ նրա վզից:

ՄԵՐ ԳՅՈՒՂԸ՝ ԱՎԵՐՎԱԾ

Տխուր իջանք քաղաք: Երկրորդ օրը կամավորները կպատրաստվեին ճանապարհվելու: Նորաշենի մեյդանում հավաքված էին շրջանի բոլոր գյուղացիները: Մեր հրամանատար Բլթենցի Տիգրանը, մեր գյուղացիները և շրջանի գյուղացիները նույնպես հավաքված էին: Եղանք վաթսունչորս հոգի և ընկանք ճանապարհ դեպի մեր գյուղը: Հասանք. ի՜նչ զարհուրելի տեսարան էր, որ բացվեց մեր առաջ: Մեր գյուղացիք դեպի Փեսանդաշտ գնալուց ամբողջ տավարը, ոչխարները և գոմեշները կտանեն, կհանձնեն Ջիբոյին: Կամավորների Վան մտնելու ժամանակ Ջիբոն էլ կփախնի, և գոմեշները բոլորը կեր չուտելուց կսատկեն և կհոտեն:

Անհամբեր և երկմիտ բոլորս մտածում էինք մեր ընտանիքների և մեր տների մասին:

Գյուղը հասնելուն՝ ես գնացի մեր տունը՝ տեսնալու: Տեսամ, որ տունը վառած են: Մայրս, կինս, Ղազարոսս չկան: Այս տխուր տեսարան տեսամ: Եկամ իմ ընկերների մոտը: Բոլորը նույն վիճակի էին: Այդ գիշերը մեր ամենից տխուր գիշերն էր: Պահակներ դրեցինք, և կողք-կողքի պառկեցինք, տանիքի վրա քնանք: Առավոտուն պահակը ասաց. «Պարո՛ն Տիգրան, ձեր գյուղի կողմից մի խումբ ձիավորներ կուգան դեպի մեր գյուղը»: Տիգրանը հեռադիտակով նայեց, ասաց. «Զկրակե՛ք, կամավորներ են, ելեք մի տասը հոգի երթանք նրանց դիմավորելու»: Գնացինք, երբ հասանք նրանց, Տիգրանը կանչեց. «Աղասի՛, դո՞ւ ես»: Աղասին անմիջապես ձիուց իջավ և գրկախառնվեցին, ու այդպես եկանք մեր գյուղը:

ՄԻԱՑՈՒՄ ՀԱՄԱԶԱՍՊԻ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

Հիսնապետ, զարաբաղցի Աղասին և Տիգրանը 1905 թվի հայ-թուրքական կռիվներին՝ Ադրբեջանի Բաքու քաղաքի կռիվներին, միասին են եղած: Մենք խնդրեցինք, որ մեզի ընդունեն Համազասպի կամավորների մեջ: Աղասին Տիգրանին ասաց. «Մեր բանակը ձեր և Աթանանց[202] գյուղերումն է, երթանք, ես կմիջամտեմ»:

Անդրանիկը Նորդուզի գավառով էր անցել, և հարձակվող քուրդերի կոտորվելուց հետո նրանց ամբողջ տավարը և ոչխարները մնացեր էին անտեր, ցրված էին մեր Հայոց ձորի բոլոր գյուղերը:

Տիգրանը հրամայեց, ինչքան կարող ենք տավար և ոչխար հավաքենք, տանենք Համազասպի բանակին: Մենք երկու օրը հավաքեցինք երեք հարյուրից ավելի եզ, կով և շուրջ հազար ոչխար: Ամենը մեր առաջ գցած գնացինք Բլթենց գյուղը: Աղասին մեզի ներկայացրեց Եղիշե անունով կարճլիկ մի սև մարդու և խնդրեց, որ մեզի ընդունի իր շարքերում:

Եղիշն ասաց. «Ասոնք զինվորական մարզանք չեն արել, կարող է մեր շարքերը խանգարեն»: Տիգրանը բացատրեց. «Մենք այս գյուղի և այս շրջանի տղաներ ենք, այս բլուրը՝ հազար հոգի զոհ տաք, չեք կարող առնել, մենք գաղտնի

---

[202] **Աթանանց** գյուղը գտնվում էր Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Հայոց ձոր գավառակում, Վանա լճի ափի մոտ, Ոստան գյուղաքաղաքից ոչ հեռու, Արտոս լեռան ստորոտում: 15-րդ դարի Սբ Գևորգ եկեղեցու պատին մինչև 19-րդ դարի վերջը պահպանվել էր 1412 թ. մի արձանագրություն: 1850-ական թթ. ուներ 175 բնակիչ: 1909թ. ըստ Ա. Դոյի՝ Աթանանցն ուներ 61 տուն՝ 308 հայ բնակիչ (նշվ. աշխ., էջ 47), մեկ վարժարան: Բնակչության հիմնական զբաղմունքներն էին երկրագործությունը և ձկնորսությունը: 1890թ. Աթանանցում ծավալվել էին ազատագրական շարժումներ: Բնակիչները գործուն մասնակցություն են ունեցել Վանի 1915 թ. ինքնապաշտպանական կռիվներին: Եղեռնի տարիներին ավերվել է, բնակիչներից կենդանի մնացածները ապաստանել են Արևելյան Հայաստանում: Գյուղի մոտ էր գտնվում Զարահան Սբ Նշան հայտնի վանքը (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 5):

ճանապարհ գիտենք, այս սարի հետևից կարող ենք թուրքերի քամակը առնել»: Եղիշը ասաց. «Որ այդպես է, պատրաստվեք, երթանք Անգղ գյուղը, քո տեղեկությունն ասեք հրամանատարներին, ինչ-որ կարգադրեն, իմ աչքիս վրա կընդունեմ»: Աղասին և Տիգրանը տասը զինվոր վերցուցին և մեզի տարան Անգղ գյուղը: Նրանք գնացին հրամանատարների մոտ: Տիգրանը թուղթի վրա կբացատրի մեր երթալիք ճանապարհը, Սպիտակ վանքը և գյուղը, թուրքերի դիրքերը: Ընդհանուր հրամանատար Խանասորի Վարդանը[203], Համազասպը և Դրոն, Տիգրանի քարտեզը լավ ուսումնասիրելուց հետո մեզի կընդունեն կամավորական բանակում և կարձանագրեն մեր անունը և ինչ-որ պետք է Եղիշեին կկարգադրեն անելու: Մենք մեր զենքեր ունեինք, ոչինչի պետք չկար, վերադարձանք Բլթենց, և Եղիշի հետ կազմակերպված գնացինք Աթանանց գյուղը: Մեր զենքերը հանձնեցինք պահեստ, և մեզի տվեցին կամավորների զենքերից՝ ֆրանսիական «երեք հարված» և շատ մաքուր նոր զենքեր, երեք հարյուր պատրոն, մի ջուրի աման, մի կերակուրի աման և մի փայտե գդալ: Մենք այս պատրաստության մեջն

[203] **Խանասորի Վարդանը** (Մեհրաբյան Սարգիս, կեղծանունը՝ Վահե Սյունի) ծնվել է Ղարաբաղում, ծառայել է ռուսական բանակում: 1890թ-ից ՀՅԴ անդամ, 1890թ-ից գործել է Ատրպատականում, զինատար խմբերով հաճախ անցել է Վասպուրական, բախվել թուրք սահմանապահ ուժերի և քրդերի հետ: 1896թ. գարնանը ղեկավարել է Շատախի ինքնապաշտպանությունը, սեպտեմբերին մասնակցել Վանի կռիվներին: 1897թ. նշանակվել է Խանասորի արշավանքի ընդհանուր հրամանատար: 1905թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Վարդանին էր վստահված Ղարաբաղի ինքնապաշտպանությունը: 1908թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո հաստատվել է Իզմիրում: 1915թ. գարնանը Վարդանը նշանակվել է Արարատյան գնդի հրամանատար: Նա պահել է օրագրություն, որտեղ անդրադարձել է հայ ազատագրական շարժման ճանաչված դեմքերին և նշանավոր իրադարձություններին: Հայաստանի խորհրդայնացումից հետո մինչև կյանքի վերջը՝ 1943թ., ապրել է Երևանում: Խանասորի Վարդանը քանիցս մյուս ֆիդայիների հետ եղել է սույն հուշագրության հեղինակ Երվանդ Կյուրեղյանի հայրենի Քերծ գյուղում (տե՛ս Խանասորա Վարդանի հիշատակարանը, մշակումը և առաջաբանը Ս. Վրացյանի, Երևան, 1992, էջ 3-9, տե՛ս նաև Հայկական հարց, հանրագիտարան, էջ 432):

էինք, երբ կամավորները երկու հոգի բռնած՝ բերեցին պահեստը՝ Եղիշին հանձնելու: Նրանց տեսնալով ուրախությամբ Տիգրանը կանչեց. «Վարդա՛ն, Սիմո՛ն, այդ որտեղի՞ց դուրս եկաք»: Գրկախառնվան, համբուրվեցան:

ՍՊԻՏԱԿ ՎԱՆՔԻ[204] ԴԱԺԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տիգրանը Եղիշին բացատրեց, որ ասոնք հին ֆիդայի են, քաղաքից եկած են իրենց գյուղեր տեսնալու և մեզի շատ ու շատ օգտակար են եղած: Նրանք էլ սպառազինվեցին: Եկանք Բլթենց գյուղը, որ երթանք Սպիտակ վանքի գյուղը: Եղիշեն մի հիսնյակ զինվոր և երկու գնդացիր հիսնապետ Արտաշի հետ ղրեց Տիգրանի տրամադրության տակ, և մենք գիշերով ճանապարհվեցինք դեպի Սպիտակ վանքը:

Նախքան ճանապարհվելը, Սիմոնը պարոն Տիգրանին ասաց, որ երկու ճանապարհ կա դեպի մեր գյուղը՝ մեկը կարճ է և շատ դժվար, կեսգիշերին կհասնենք, իսկ մյուսը հանգիստ է, բայց մինչև լույս հազիվ հասնենք: Տիգրանն ասաց. «Վարդանը թող այդ հանգիստ ճամփով գնդացիրներ և պարենի շալակավորները տանի, իսկ դու մեզի դժվար ճամփով տար»: Մենք բաժանվանք երկու մասի: Սիմոնը մեզի դժվար ճամփով տարավ: Գիշեր է, շատ վատ ճանապարհ է: Գլորվելով և ընկնելով՝ հասանք ընկուզենիների անտառը: Կեսգիշե-

[204] **Սպիտակ վանքը**, որը կոչել են նաև Սիվտկու վանք, Սպիտակ Սբ Աստվածածնա վանք, գտնվում էր պատմական Ռշտունիքում, Վանա լճի հարավարևելյան կողմում, Արտոս լեռան փեշին, բարձրադիր վայրում: Եկեղեցին կառուցված էր սպիտակավուն սրբատաշ քարով, պարսպապատ էր, ուներ մի քանի սենյակներ՝ վանականների համար: Շրջակայքի հողերը նույնպես սպիտակավուն էին, որի համար էլ կոչվել է Սպիտակ վանք: Ըստ երևույթին, կառուցվել է 10-11-րդ դարերում, Վասպուրականի Արծրունիների նախաձեռնությամբ: Այս տոհմի ներկայացուցիչներից մի քանիսի գերեզմանները գտնվում էին վանքի տարածքում: Վանքից ոչ հեռու պահպանվել են մի հին ամրոցի ավերակները (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 679):

ին ելանք ձորից և հասանք վանքի գերեզմանոցը: Սիմոնը ասաց. «Դուք հանգստացե՛ք, ես կերթամ Վարդանի առաջ»: Լույսը չէր բացվել, Վարդանը հասավ մեզի: Այսպես էլ կարգադրվավ, մինչև մենք լուր չտանք, որ պատրաստ ենք, կռիվ չսկսի: Այդ օր հանգստացանք: Սիմոնը և Վարդանը, հիսնապետ Արտաշը գնդացիրներ տարան, որ տեղավորեն վանքի տանիքը: Մենք էլ պարենի արկղեր վերցրեցինք, որ տանենք վանքը, բայց, ցավոք սրտի, տեսանք բոլոր գյուղացիք լցրած են վանքը և կոտորած, վանահորը այլանդակած՝ կտոր-կտոր արած են: Մենք մի ընկուզենու տակ վանահորը թաղեցինք և նրա կողքին փոս փորեցինք, այդ բզկտված գյուղացիներին էլ թաղեցինք: Վանքը մաքրեցինք: Մեր արկղերը տեղավորեցինք: Լուր ղրկեցինք բանակը, որ մենք պատրաստ ենք: Տիգրանը Վարդանին ասաց. «Քո տղաները կարո՞ղ են բարձրանալ այս ընկույզի ծառերը»: Վարդանը ասաց. «Այդ մեր սովորական գործն է»:

Քսանչորս աթանանցի տղաները Վարդանի հետ բարձրացան ծառերի ամենավերի ճյուղերին, սուրհանդակ եկավ և ասաց. «Վաղը, երբ կարմիր ու կանաչ լույսը կտեսնաք, սկսեք կռիվը»: Եվ այդպիսով, մենք մտանք կռվի թուրքական կանոնավոր զորքի հետ: Այս կռիվը չի նմանի մեր գյուղի կռվին, որ պատրոն խնայելով կրակենք: Այժմ արկղով պատրոնը կողքիդ է, կրակիր ուզածիդ չափ: Մինչև գիշեր մենք անընդհատ կռվեցինք: Գիշերվան կռիվը թուլացավ: Երկու կողմից վիրավոր կա, սպանված կա, պետք է կռիվ քիչ լինի, որ այդ վիրավորներին ու սպանվածներին փոխադրենք թիկունք:

Երկրորդ օրը մեր գնդացիրները և ծառերի վրայի տղաները հրաշք գործեցին, և ինչ-որ օգնություն կուգար թուրքերի համար, ոչ մեկը տեղ չէր հասնի: Մեր դիրքերը գերեզմանի քարերն էին: Շատ ապահովված էր, թուրքերը չշմած էին, չգիտեին, ո՞ր կողմից գնդակներ կուգային: Այդպես մեր կռիվը տևեց հինգ օր: Թուրքերը, օգնություն չստանալով, վեցերորդ օրը սկսեցին փախնել: Սարից պիտի իջնեին և մեր դիրքերի

առաջից անցնեին: Ոչ մեկը մեր գնդակից չազատվեց: Կամավորների դրոշակը բարձրացավ սարի գլխին: «Ուռա՛-ուռա՛» կանչելով՝ հասանք կամավորներին և սկսեցինք համբուրվել: Մտանք Ոստանի պտղատու այգիների մեջ, որ ամեն մեկս մի տեղ հանգիստ քնանք: Առավոտյան շտաբը Անգղից կփոխադրվի Ոստան: Կամավորները բերեցին թուրքերի սպանվածներից հազար և յոթ հարյուր հրացան, յոթ գերմանական գնդացիր: Եղիշեն հրամանատարությանը կզեկուցի, որ այս հաղթանակը Տիգրանին կպատկանի:

ՀԻԼԻ ԳՅՈՒՂԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Մի շաբաթ հանգիստ եղավ: Այժմ Ոստանից Ռշտունիք անցնելուց մի սար կա, Բղլաքար սար կըսեն: Թուրքերը խրամատված և թաքնված են:

Կանչեցին Տիգրանին, թե ի՞նչ գաղտնի ճանապարհ կա՝ այս սարի ետև գնալու համար:

Տիգրանը կբացատրի և կգծագրի, որ ձորերով ու Հիլի[205] և Քարադաշտ[206] գյուղերով կարելի է այս սարի հետևը հասնել: Սարը կերկարի մինչև ծովը: Ոչ մի ճանապարհ չկա, շտաբը կարգադրում է, որ Տիգրանն ու Եղիշը երթան հետախուզելու: Տիգրանը մեզնից քսան հոգի զինվոր վերցրեց և գիշերով, Արտոսա սարի կիրճերով հասանք Հիլի գյուղը: Ոչ ոք

---

[205] **Հիլի** գյուղը Վանի նահանգի Վանի գավառի Գավաշի գավառակում՝ Արտոս լեռան ստորոտին էր: Այստեղ էր գտնվում 10-րդ դարում կառուցված Քառասուն խորան Սբ Աստվածածնի վանքը(ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 413): Ըստ Աղթամարի տեղեկագրի 20-րդ դարի սկզբին գյուղն ուներ 20 տուն հայ բնակիչ(Ա-Դո, նշվ. աշխ. էջ 53):

[206] **Քարադաշտ** գյուղը գտնվում էր Վանի գավառի Գավաշի գավառակում, Ոստան ավանից 6-7 կմ հարավ-արևմուտք, լեռան զառիվայր լանջին: Հնում կոչվել է Մանակերտ: 1850-ական թթ. ուներ 12 տուն, 1901-ին՝ 21 տուն բնակիչ (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 312): Ըստ Ա-Դոյի՝ 1909-ին Քարադաշտն ուներ 15 տուն հայ բնակիչ (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 53):

չկա, փախած են: Հիլի գյուղից բարձրացանք դեպի Քարադաշտ գյուղը: Տիգրանը մեզնից չորս հոգի վերցրեց, գնացինք գյուղի մոտ: Տիգրանն իմ քոլոզը առեց, երկու կտոր արեց, կապեց իր ոտքերի տակ, ասաց. «Երբ ես պու-պու կանչեմ, եկեք»: Մի ժամից հետո պու-պու կանչեց: Մենք գնացինք և ցերեկով կտեսնայինք թուրքերի դասավորումը: Եղիշեն և Տիգրանը մանրամասն գծագրեցին, ղրկեցին Ոստան՝ շտաբ: Երկրորդ օրը, Սիմոնի և Վարդանի առաջնորդությամբ, երկու հարյուր զինվոր՝ վեց գնդացիրով, եկան:

Նույն օրը երկու ռուսական նավ եկավ Վանա քաղաքից, սկսեցին ռմբակոծել թուրքական դիրքերը: Այս նավերը զրահավորված նավեր էին, ռուսները նոր էին բերած: Սարսափելի կռիվ սկսեց երկու կողմից: Ութ օր՝ գիշեր-ցերեկ, կռիվ էր: Ո՛չ - հացի և ո՛չ էլ ջուրի ժամանակ կար: Իմ կողքին կռվող բլթենցի Կալեն ասաց. «Երվա՛նդ, ես թևից խփվեցիմ»: Ասացիմ. «Պառկի էն պատի տակ և թևդ թաշկինակով կապիր մինչև գիշեր»:

Իններորդ օրը թուրքերի կրակը թուլացավ: Նավերն այնքան գնդակ էին թափած թուրքերի դիրքերը, որ սև հողակույտ էին եղած: Տասներորդ օրը թուրքերը նահանջեցին և փախան, բայց մեր կողմից շարքերով կուգային մեր վրա:

Տիգրանը հրամայեց գնդացիրները շիտկեն թուրքական շարքերի վրա: Թուրքերը կոտորվելով իջան ցածրի Մոխրաբերդ գյուղը[207] և դիրք բռնեցին: Ծովի թնդանոթները տեսան և սկսեցին գյուղը ռմբակոծել: Գյուղը հողին հավասարեցրին, մենք կամավորների հետ մտանք գյուղ, ուր ամբողջը թուրքի ջանդակ էր թափված: Երկրորդ օրը թուրքերը գնացին Պատականց[208], այնտեղից Փշավանց[209] գյուղերը, հետո փախան:

Մենք մայիս 29-ին հասանք Նարեկա վանքը: Մեր հարյուրյակը տարան Նոր գյուղը՝ Հաջի Մուրադի գյուղը: Ցավոք սրտի, Հաջի Մուրադը գյուղը չէր: Այդ գյուղից երկու եղբայրներ՝ Հարությունը և Պետրոսը, մեզի ցույց տվեցին Հաջիի տունը: Մեկ շաբաթ հաղթանակի տոնն էր: Մի առավոտ տեսանք, որ սարից ահագին բազմություն կիջնի ցած: Մարդ ղրկեցինք, գնաց-եկավ, պատմեց, որ Լևոն փաշեն բոլոր տարագիրներին բաց է թողել, որ երթան իրենց տունները: Այս լսելով՝ Տիգրանը խնդրեց Եղիշին, որ միջամտի՝ մեզի թողնի երթանք մեր ընտանիքներին տիրություն անենք:

Երկրորդ օրը երաժշտություն հնչեց, և բոլոր կամավորները շարքի կանգնան, եկան Խանասորի Վարդանը և Համազասպը. ի՛նչ պարթև հասակ ուներ Վարդանը, կապույտ փափախը՝

---

[207] **Մոխրաբերդը** գտնվում էր Վանի նահանգում, Վանի գավառի Գավաշի գավառակում, Վանա լճի հարավարևելյան ափին, Աղթամար կղզու դիմաց, Ծռտաքար լեռան հարավային լանջին: Գյուղի մոտով էր հոսում Մոխրաբերդի գետը: 1909թ. ուներ 80 տուն հայ բնակիչ (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 53): Զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, ձկնորսությամբ և արհեստներով: 1915թ. ամռանը մոխրաբերդցիները Նոր գյուղի բնակիչների հետ հերոսաբար կռվել են թուրքական հրոսակների դեմ, իսկ կենդանի մնացածները ռուսական զորքերի հետ գաղթել են Կովկաս: Գյուղն ուներ 2 եկեղեցի՝ Սբ Գևորգ և Սբ Սարգիս անուններով: Մոտակայքում էր գտնվում Բերդաձորի Սբ Աստվածածին վանքը: Հավանաբար այս գյուղի մոտ էր Մոխրաբերդը: Գյուղում՝ մի քարի վրա, հայտնաբերվել են Վանի թագավորներ Իշպուինիի և Մենուա 1-ի

սեպագիր արձանագրությունները, որոնք պահվում էին Աղթամարի վանքում (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 859):

[208] **Պատականց (Բատականց)** գյուղը գտնվում էր Վանի նահանգի Գավաշի գավառակում, Ոստան քաղաքից մոտ 11կմ արևելք: Գյուղը թաղված էր այգիների մեջ: 1909թ. ուներ 60 տուն հայ բնակիչ (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 53): Գյուղի եկեղեցին կոչվում էր Սբ Աստվածածին, կար վարժարան: Թուրքերի կողմից ավերվել և կողոպտվել է 1898թ.: 1915թ. իսպառ վերացվել է (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 309) :

[209] **Փշավանց (Փշավանք, Փշևանք)** գյուղը գտնվում էր Վանի նահանգի Գավաշի գավառակում, Ոստան ավանից 14 կմ արևմուտք, Նարեկա վանքի մոտ, Վանա լճի ափամերձ շրջանում, Փշավանք գետակի լայն ձորի եզրին: 1850թ. ուներ 21 տուն՝ 138 անձ: 1909թ. ուներ 50 տուն հայ բնակիչ (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 53): Կար Սբ Հովհաննես անունով եկեղեցի: 1858թ. այստեղ է սպանվել Աղթամարի Պետրոս Պյուլպյուլ կաթողիկոսը: Սա այն պատմական գավառն է, ուր եկել է Հակոբ Մծբնա Հայրապետը՝ Ռշտունյաց Մանաճիհր իշխանից խնդրելու իր 7 սարկավագների ազատությունը: Ըստ ավանդության՝ Հակոբ Մծբնացին Մանաճիհրի մոտից վերադառնալիս այգեստանի մշակներին հարցնում է, թե ինչ են տնկում, նրան ծաղրելով, պատասխանում են՝ փուշ: «Եղիցի ըստ բանի ձեր» ասելով՝ հայրապետը հեռանում է: Նրանց բոլոր տնկածներն իսկույն փուշ են դառնում, որի պատճառով գավառն անվանվում է Փշավայր (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 269) :

գլխին և մաուզերը՝ կողքին: Խոսեց և մեզի գովաբանեց, շնորհակալություն հայտնեց. «Մյուս երկու սարերի հաղթանակը ձեր հմտության շնորհիվ է եղած և փառքի արժանի եք»: Այսպես խոսեց Խանասորի քաջ Վարդանը. «Կրկին կհայտարարեմ, որ այս երկու բլուրների հաղթանակը ձեզի կպատկանի և դուք արժանի եք վարձատրության»: Եվ առաջացավ դեպի մեզի:

Մենք առանձին շարքով կանգնած էինք, Տիգրանը կանչեց. «Պատվի՛ առ»: Մենք պատվի առանք: Առաջ եկան Վարդանը, հետո Դրոն և Համազասպը: Ի՜նչ պատկառելի հասակ ուներ Վարդանը, զինվորական հագուստի վրան կապած էր մաուզեր ատրճանակը: Տիգրանի կրծքին խփեց հաղթանակի նշանը, խաչը և շարքով մեր կուրծքերին խփեց մեկ-մեկ խաչ: Նույն ատեն Համազասպը կբաժաներ խաչերի վկայականները: Այս արարողությունը վերջացավ, հնչեց «Զեյթունցիների երգը», և Դրոն բաժանվեց, գնաց դեպի Մոկաց գավառը: Մենք համբուրվելով բաժանվեցինք կամավորներից:

Համազասպը ամեն մեկիս հինգ ոսկի փող նվեր տվեց: Եղիշեն երկու տղաների կարգադրեց, որ մեզի տանեն Աթանանց գյուղը, և մեր զենքերը պահեստից առնենք, նրանցը՝ հանձնենք պահեստին:

Մենք զենքեր առանք, եկանք մեր գյուղը: Գյուղացիներին հարցուցիմ մեր ընտանիքներից, ասացին. «Մայրիկդ, որ տեսավ տունը վառված է, կնոջդ և տղայիդ հետ քաղաք գնաց»: Անմիջապես ճանապարհ ընկամ և հասամ մորաքրոջս տունը:

Մայրս, ինձի տեսնալուն, թևերը բացեց և սկսեց կարոտով համբուրել, նույնպես մորաքույրս: Կինս՝ Հեղինեն, և տղաս՝ Ղազարոսը, կանգնած կնայեին: Երբ ուզեցիմ տղայիս գրկել, փախավ, չէր ճանաչում. կեղտոտ մաղ-մորուքով մարդ էիմ, ինձ չճանաչեց: Գասպարը ջուր տաքացրեց, լողացամ, սափրվեցիմ և նստանք հարցուփորձի:

Հայտնեցիմ, որ հայրիկս սպանված է և թաղված է Վարագա վանքում: Մայրս շատ լացեց, և սկսեցինք մեր տանջված ժողովուրդի և ընտանիքի ցավերից խոսել:

ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՆԱՀԱՆՋԸ

Այսպիսով, 1915-ի ապրիլ ամսվանից մինչև հուլիսի քսանչորսը, իրար կորսնցուցած լինելուց հետո, նորեն հավաքվեցինք Վան քաղաքում՝ մորաքրոջս տունը:

Բայց այդ երջանիկ օրերը շատ կարճ եղան: Աստված հային հանգստություն չի տվել: Անսպասելի լուր եկավ: Լսեցինք, որ ռուսները պիտի Վանը թողնեն և գնան Երևան: Նորից տանջալի օրեր պիտի դիմավորենք և նորից մեր տուն-տեղից և հող ու ջրից պիտի բաժանվենք:

Քանդվում էր Վասպուրականը...

1915 թվականի օգոստոսի կեսին ռուսական զորքի նենդամիտ և անփառունակ նահանջը Վասպուրական աշխարհին շատ մեծ պատուհաս բերեց: Կրկին իմ ցավալի և շատ դառն օրերի շարունակությունը սկսվեց:

Մորաքրոջս տղան՝ Գասպարը, գնացեր էր ամերիկյան որբանոցում իր քույրերին և եղբայր Հակոբին տեսնալու: Գիշերը եկավ, շատ տխուր էր և շատ լացեր էր: Հարցուցինք իր լացի պատճառը: Ասաց. «Աստվածը ե՞րբ է հային ուրախ օր տվել, որ այժմ տա, երկինք և գետին խառնված են իրարու: Ռուսները կփախնեն, և մենք էլ պիտի փախնենք: Ամերիկացիք իրենց որբերին ճանապարհած են դեպի Երևան»: Ես չհավատացիմ և ասիմ. «Սո՛ւտ է, ես մի շաբաթ է եկած եմ Ռշտունյաց աշխարհից, իմ աչքովս տեսած եմ, որ Դրոյի զորամասը գնաց դեպի Մոկաց գավառ, Համազասպը և Անդրանիկը այժմ հասած են Բիթլիսի դուռները, Շատախի և Փեսանդաշտի ժողովուրդը Լևոնի հետ ուրախության մեջ են, ինչպե՞ս նահանջ կլինի»:

Գասպարն ասաց. «Եթե չես հավատում, արի երթանք Խաչփողանը[210] և տե՛ս»: Գնացինք Խաչփողան, ի՜նչ տես-

[210] **Խաչփողանը** (Խաչ փողոց) Վանի Այգեստան թաղամասի գլխավոր փողոցն էր:

նամ, ժողովուրդը խառնված է իրարու: Բեռցուցած կառքերը, շալակ շալակած մարդիկ կաճապարեն դեպի քաղաք:

Մենք վերադարձանք տուն և պատմեցինք: Մորաքույրս սկսեց հաց թխել, որ մենք էլ ճանապարհվենք:

Ոչինչ չունեինք տանելու: Թալանված էինք: Մորաքույրս էլ թալանված էր: Վանի կռիվներին հազիվ տուն-տուն փախնելով՝ ազատվել էին:

Ինչ-որ ունեինք, շալակեցինք, հացը ես շալակեցիմ՝ Ղազարոսի ձեռքը բռնած: Բոլորս միասին ելանք ճանապարհ: Հասանք Խաչի փողոցը: Տեսամ մի խանութ, որ չինեղեն, կահ-կարասիք ուներ, կթալանեն: Ջուր խմելու բաժակները թափված էին, ես մերոնց ամեն մեկին մի հատ բաժակ տվեցիմ, որ ճանապարհին ջուր խմեն: Մենք դեպի քաղաք չգնացինք: Խաչի փողոցից ուղիղ կերթա Ակռփու քար[211] ու Մհերի դուռ[212], հետո կհասնի Լեզք՝ Արալեզք,[213] գյուղը:

[211] Ժողովուրդը **Ակռփու քար** (Ակռավաքար) էր կոչում Ռուսախինիլին, ուր հնում գտնվում էր Ռուսա Առաջին (մ.թ.ա. 735-713թթ.) թագավորի արքունիքը: Գ. Սրվանձտյանցը գրում է. «Վանա բերդեն դեպի հարևելս նայելով՝ Այգեստանյայց հյուսիսա կողմը փոքրիկ լեռնագոտի մը կա, որ արևելյան գլուխը կ'ըսվի Զըմփ-զըմփ-մաղարա, արևմտյան ծայրը՝ Ագրփի, և մեջտեղը՝ Մհերի դուռը» (Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 87):

[212] **Մհերի դուռ**-Վան քաղաքում ժայռի վրա դռան նման փորվածք, որի վրա կան սեպագիր արձանագրություններ:

[213] **Լեզք** գյուղը գտնվում էր Վանի նահանգի Վանի գավառում, Վան քաղաքից 3-4 կմ հյուսիս-արևմուտք, լճափին: Թաղված էր պտղատու այգիների մեջ և ուներ հիասքանչ բնություն: Լեզքը 1850-ական թթ. ուներ 76 տուն (501 շունչ): Ըստ Ա-Դոյի՝ 1909թ. Լեզքում կար 130 տուն հայ բնակիչ (նշվ. աշխ., էջ 22): Բնակիչները զբաղվում էին հողագործությամբ և պտղաբուծությամբ: Ուներ վարժարան և Սբ Աստվածածին անունով եկեղեցի: Գյուղամիջում, մի քարաժայռի վրա գտնվում էր Ամենափրկիչ մատուռը, որի տեղում, ըստ ավանդության, հնում հեթանոսական մեհյան էր: Այստեղ է իբր Ասորեստանի թագուհի Շամիրամը դրել է կռվում սպանված Հայոց Արա Գեղեցիկ թագավորի դին, որպեսզի արալեզները լիզելով նրա վերքը՝ վերակենդանացնեն, որտեղից էլ ծագել է գյուղի Լեզք անունը: Ավանդությունն ասում է, որ մեհյանը հետագայում քանդել է տվել Թադեոս Առաքյալը և կառուցել Ամենափրկիչ մատուռը: Գյուղից քիչ հեռու կա ևս մեկ քարաբլուր, որն անվանվում էր Ադամանց քար: Լեզքում դեռևս 19-րդ դարում հայտնաբերվել են ուրարտական սեպագիր արձանագրություններ: Լեզքի հայերը զանգվածաբար կոտորվեցին կամ տարագրվեցին 1915թ. Մեծ եղեռնի ժամանակ (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 566-567): Լեզքի, Վանի անցքերի մասին առավել մանրամասն տե՛ս Աբրահամյան Ս., Վանից Դետրոյթ. հայկական ցեղասպանությունից մազապուրծ, Երևան, 2001:

Երեկոյան հասանք Լեզք գյուղը: Գյուղացիները կալեր կալսած են, ցորեն-գարին մաքրած են, և թողած արտում՝ գնացած են: Մենք հաց կերանք, պառկեցինք կակուղ հարդի վրա: Հոգնած էինք, քնեցինք:

ՆԱՀԱՆՋԻ ԺԽՈՐԸ

Առավոտուն վեր ելանք և սկսեցինք շարունակել մեր ճանապարհը: Հասանք ժողովրդին: Հասանք, բայց ճանապարհ չկա: Մի բարակ ճանապարհ է, ռուսական զորքը և բեռնավորված կառքերը մի կողմից, ժողովրդի սայլերը և կառքերը՝ մյուս կողմից: Մանավանդ, ռուսական թնդանոթները՝ ութ ձի լծած, ոչ ոքի չի նայի, կքշի ժողովրդի վրան: Փոշին երկինք բռնած է: Մենք ցորենի արտերով կերթանք: Հասանք մի ջուրի, որ Սև գետ կըսեն: Ջուրը մինչև գոտկատեղը կհասնի: Հագուստները վեր քաշեցինք և իրարու ձեռքեր բռնելով՝ մտանք ջուրը: Հազիվ էինք առաջացել, հանկարծ ռուսական թնդանոթները՝ ութ ձիերով և ահռելի թափով, մտան ջուրը, ալիքը մեզի գլորեց ջուրի մեջը: Մենք դուրս եկանք բոլորովին թրջված, իսկ իմ շալակի հացը խմոր էր դարձել: Մի ցորենի արտի մոտ նստանք, մեր հագուստները քամեցինք, ցորենի արտի կեսը քաղած էր, անտեր թողած և գնացած էին: Մենք քաղված ցորենը բերինք վառեցինք, մեր հագուստները չորացուցինք և խանձված ցորենի հատիկները կերանք: Գիշերը մնացինք արտում: Առավոտուն արթնացանք և տեսանք արտի մեջը մի էշ է նստած: Գասպարը գնաց էշը բերեց: Էշի վրա մի թաղիք ու մի կարպետ և մի խուրջին կար, խուրջինի երկու աչքերը լիք հաց, պա-

նիր, հավկիթ կար: Նախաճաշեցինք, ոտքի ելանք: Տղաս դրեցիմ էշի վրան, կինս, սանձը՝ ձեռքին, ժողովրդից հեռու կերթանք: Փոշին մարդ կխեղդի: Երեկոյան հասանք Ջանիկ գյուղը: Ես գիտեիմ՝ աղբյուրը որտեղ է: Նստանք աղբյուրի մոտ, լվացվանք, հաց կերանք, քնանք: Առավոտուն ես մի ջուրի կուժ տեսամ, կուժը վերցրիմ, լիք ջուր լցրեցիմ և շալակեցիմ: Հասանք Բերկրի կալան: Ռուսական զորքը հանգիստ էր տվել: Գիշեր էր, ժողովուրդ, ամեն մեկը մի տեղ կրակ վառած էր, կհանգստանար: Բերկրու կալայից մենք գետի կամուրջը անցանք և մի քարի տակ նստեցինք, որ հանգստանանք:

ՀԵՂԻՆԵՆ՝ ՎԻՐԱՎՈՐ

Դեռ լրիվ չէինք տեղավորվել, որ հանկարծ հրացանի ձայներ բարձրացան: Զիլանի քրդերը[214] սարի գլխից ինչ տեղ որ կրակ կար, կգարկեն: Փախնուփախը սկսվեց: Մենք էլ փախանք դեպի կամուրջը: Հանկարծ կինս՝ Հեղինեն, պառկավ և կանչեց. «Ոտքիս դյուլլա դիպավ»: Ես անմիջապես նրան շալակած հասցրիմ կամուրջի մոտ, որ ռուսական հիվանդանոցն էր:

Զորքի վիրաբույժն անմիջապես ոտքը կապեց, մի քիչ էլ բամբակ ու փաթաթելու վիրակապեր տվեց: Նստանք կամուրջի մոտը, այդ գիշեր ոչ ոք չքնեց: Միայն հորեղբորս կինը, երեխան որ կլացեր, առեց, քնացրեց: Ուշ գիշեր էր, երկու հայ զինվոր եկան և նստեցին զրույցի: Էն մեկը, որ անունը Վազգեն էր, ասաց. «Եղբա՛յր, քո հրացանը ռուսական է, որտեղի՞ց է ձեռքդ ընկել»: Ես ասացիմ՝ իմ սեփականն է և

[214] **Զիլանցի քրդերի** մասին Ա.-Դոն գրում է, որ այն քրդական բազմամարդ ցեղ էր, որը բնակվում էր Ալաշկերտի, Խնուսի, Բայազետի գավառներում և Պարսկաստանի սահմանների վրա (նշվ. աշխ., էջ 183, 251):

պատմեցիմ, որ մեզի զենք առնելու և մեզի պաշտպանելու գործը երկու հայերին ենք պարտական, մեկը՝ ղարաբաղցի Դալի Ղազարը և մյուսը՝ սարդարապատցի Եգորը: Պատմեցիմ Համազասպի հետ մեր կռիվները թուրքերի դեմ:

Համազասպը, ասացի, այժմ Ռշտունիքումն է, շուտով կհասնի Վան: Զգիտեմ՝ ռուսերեն ի՞նչ խոսացին իրարու հետ, Վազգենն ասաց. «Եղբա՛յր, առավոտուն շուտ վեր կացեք, մենք մի կառք կբերենք, ձեր վիրավորը և կանայք արաբայով մինչև այս կիրճից դուրս կտանենք, մեր շտաբը էնտեղ է և ձեր վիրավորին կնայեն»: Ելան, գնացին, առավոտուն մի կառք բերեցին, կանանց նստացրեցին և ճանապարհվեցինք: Լույսը բացվեց, տեսանք սպանվածներ, թողած-փախած սայլեր և թափթփված իրեղեններ:

Ճանապարհի կողքին կերթա ահռելի Բանտումահի[215] գետը:

Երեկոյան հասանք մի սքանչելի կանաչ դաշտ, որ Աբաղու դաշտ[216] կըսեին: Վազգենը մեզի տարավ շտաբը, և կնոջս ոտքը լվացին, կապեցին, մի քիչ բամբակ և վիրակապ տվեցին ինձի: Մի նամակ էլ Վազգենը տվեց, որ Էջմիածնի քույրերին տամ, որ մեր հիվանդը ընդունեն: Մենք եկանք, հավաքվեցինք իրարու մոտ: Առավոտուն ելանք ճանապարհ, սկսվեց շոգ, անջուր և սև քարերով մի անապատ, որ Սև Քռա անուն կուտային: Շատ-շատ կիներ և երեխաներ անջուր մահացած էին: Մի քարի տակ պառկած մի կին՝ ջո՛ւր-ջո՛ւր կկանչեր: Ես իմ կուժից երկու բաժակ ջուր տվե-

[215] **Բանտումահի** (Պանտումահի, Բանտիմահի) գետը հայտնի է նաև Բերկրի գետ անունով: Սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից և Բերկրի գյուղաքաղաքի մոտ՝ 10 կմ հարավ թափվում Վանա լիճ: Երկարությունը 93 կմ է (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 675):

[216] **Աբաղու կամ Աբաղա դաշտը** Վանա լճի հարավարևելյան կողմում էր, Բերկրի գետի հովտում: Ծովի մակերևույթից բարձր էր 2000-2200 մ, երկարությունը՝ 80 կմ, լայնությունը՝ 17-24 կմ: Կար նաև համանուն բերդաքաղաք: Ոմանք անունը կապում են Աբեղյան նախարարական տոհմի հետ (ՀՀՇՏԲ, հ 1, էջ 2):

ցիմ, բերանը չէր փակվում և լեզուն չորացած էր: Ջուրը խմեց և հոգին ավանդեց: Գիշերվան հասանք ցորենի արտերով մի տեղ: Գիշերեցինք այնտեղ:

ԱՆԻԾՅԱԼ ԳԵՏԸ

Առավոտան ելանք ճանապարհ, հասանք մի մեծ գետի, որ «Սուխ սու» (պաղ ջուր) կասեն: Այնքան խորն է և արագընթաց, որ ով լող չգիտի, ջուրը նրան կտանի: Հազարավոր մարդեր թափված էին ջուրի մեջ: Ռուսական արաբաներ և թնդանոթներ ժողովրդին կոխկռտելով, կանցնին, կերթան: Մենք կանգնանք և կնայենք այս ժխորին: Կմտածեմ՝ ինչպե՞ս անցնենք գետը:

Գասպարին ասացիմ. «Դուք մի տեղ կանգնեք, ես նայեմ, թե որտեղից է ջուրը քիչ, որ կարողանանք անցնել և չխեղդվենք»: Մեր աչքերի առաջ ջուրը ժողովրդին կտաներ, մանավանդ փոքր երեխաներուն: Ես մի քիչ ցածը գնացիմ և տեսամ մի փոքր աղջիկ ջուրը կտանի, ջուրից բռնեցիմ, մայրը բղավելով եկավ, տվեցիմ մորը: Եկամ մերոնց մոտը, և ասացիմ. «Իրարու ձեռք բռնեք, Գասպարը ձեզի կօգնի, չբաժանվեք իրարուց»: Ես կնոջս չվանով կապեցիմ էշի վրան, տղաս գրկեց և մտանք ջուրը: Նույն վայրկյանին ռուսական թնդանոթն այնպես մտավ գետը, որ ալիքները մեզի տապալեցին ջուրի տակ: Մենք ընկանք ջուրի տակ և իրարուց բաժանվեցինք: Ես դուրս ելամ և տեսամ կինս էշի վրա նստած իր շորերը կքամի, հարցուցիմ. «Ու՞ր են մերոնք»: Ասաց. «Չեմ տեսած, միայն մորաքույրդ և հորեղբորդ կինը ջուրի վրան կերթային, Գասպարին և մայրիկին էլ չեմ տեսած»: Ես խենթի պես ջուրի կողքերով կվազեիմ, որ գոնե մորս տեսնեմ և ազատեմ: Չելավ, չելավ, չտեսամ, կորսվանք իրարմե:

Լացելով, մայրի՛կ, Գասպա՛ր կանչելով՝ եկամ կնոջս մոտ: Էն գիշեր հասանք Թաբառեզի սարը: Մի քարի տակ էշը կապեցիմ, կինս իջեցուցիմ, որ հանգստանա: Ես խենթի պես այս և այն կողմ վազելով դեռ կկանչեմ. «Մայրի՛կ, ես Երվանդն եմ, էս կողմ արի»: Ոչ ոք չկա, հազարավորներ կկանչեն իրենց կորսված ընտանիքին: Հուսահատված եկամ և լացելով՝ ընկամ կնոջս մոտ: Կինս էլ կլացի, ոտը ջուր է մտել, կցավի: Վիրակապը փոխեցիմ, որ քնի, բայց ցավում է, չի քնում:

ՎԻՐԱՎՈՐ ԿՆՈՋՍ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

Գիշեր է: Կինս չի քնի, կլացի, և տղաս էլ կլացի: Ասացիմ. «Հեղինե, մի քիչ որ քնես, կհանգստանաս: Այս երեխան մեզք է»: Ասաց. «Երվա՛նդ, էն կամուրջի գլուխը ոտս լվանալուց այդ աղջիկը ինձ քնելու ճար է տվել, միտքս չէր, որ քեզի ասիմ»: Գրպանից հանեց. մի փոքր շիշի մեջ ութ հատ դեղահաբ էր: Մեկը տվեցիմ, կերավ և քիչ անցած քնավ, ես էլ շատ հոգնած և տանջված եմ, բայց քունս չի տանում: Կմտածեմ իմ գլխիս եկած դժբախտությունների մասին, այժմ այս վիրավոր կինս և այս փոքր տղաս որտե՞ղ տանեմ և ինչպե՞ս պահեմ:

Վերջապես լույսը բացվեց: Ժողովուրդը շարժվեց: Քիչ հետո կինս արթնացավ, և մենք էլ ճանապարհվեցինք, հասանք Արարատ սարի տակ՝ շատ ջուրերով մի տեղ, որ Կըռխբուլաղ[217] կըսեին: Ժողովուրդը ձուկի պես լցված է ջուրերի մեջ: Մենք քաշվեցինք մի անկյուն, հաց և ջուր ուտինք: Մի հատ դեղահաբ տվեցիմ, կինս քնավ, ես էլ հանգստացամ, առավոտուն պիտի սարը բարձրանանք:

[217] Կըռխբուլաղ-թուրքերեն՝ քառասուն աղբյուր:

Հասանք սարի գլուխը, որ ռուսական սահմանն է: Մի փոքր լիճ կա և մի հսկա խաչքար: Ժողովուրդը երկու մասի բաժանած են: Հրացանավորներին կխուզարկեն, իսկ մյուսներին կազատեն: Իմ կողքիս քայլող գաղթականը ասաց. «Պարո՛ն, ես հրացանս գցեցիմ, դու էլ գցիր, հանգիստ անցնենք»: Ես հրացանս գցեցիմ: Շարքի կանգնանք: Տասնոցս տվեցիմ կնոջս մոտ, պահեց: Երբ հասանք պահակին, մեզի ձեռքով արեց, որ անցեք և շաքար տվեց տղայիս: Այժմ մենք կիջնենք դեպի Իգդիր քաղաքը[218], ժողովուրդը և սայլերը այնքան շատ են, որ հազիվ հասանք Օրգով[219] ասված տեղը: Գիշերեցինք այնտեղ:

Մյուս օրը, ճաշի ժամանակ հասանք Իգդիր քաղաքը: Ճանապարհ չկա: Ամեն տեղ և ամեն փողոցները լցված են փախստականներով, ալաշկերտցիների սայլերով: Շատ դժվարությամբ քաղաքից դուրս ելանք: Այժմ կերթանք Էջմիածնի ճանապարհով: Հասանք մի տեղ, որ երկու մարդ արտը կջրեին: Առուի ջուրի մոտ մի տեղ իջանք, որ գոնե մի քիչ լվացվենք, փոշին մեր երեսից երթա և մեր աչքերը բացվեն:

Իջանք, առուի ջուրը շատ էր: Նախ տղայիս հագուստը լվացիմ, փռեցիմ արևը, ապա տղային լողացուցիմ, տվեցիմ իր մորը: Իմ հագուստը հանեցիմ, թափ տվեցիմ: Ես էլ լողացամ: Ասացիմ. «Հեղինե՛, արի քեզի մոտիկացնեմ առուին, ջուր լցնեմ՝ գլուխդ, երեսներդ այդ փոշուց մաքրվի»: Այդպես էլ արեցիմ, մաքրվանք, նստանք հացի: Այդ երկու մարդեր գործը վերջացնելուց հետո եկան մեզի մոտ, հարցուփորձ արեցին և գնացին: Քիչ էր անցել, տեսանք մի կին և մի մարդ կուգան դեպի մեզի: Եկան. նույն մարդն էր և իր կինը: Մեզի առատ կերակուր և տղայիս սիրուն հագուստ էր բերած: Շատ տխրեցին մեր վիճակով, և առաջարկեցին, որ երթանք իրանց գյուղը: Ես ասացիմ. «Շնորհակալ եմ ձեր լավությունից, կնոջս ոտը տասը օր է՝ վիրավոր է, այժմ հոտ կուգա, տանելու եմ Էջմիածին՝ հիվանդանոց»: Նրանք գնացին: Մենք այդտեղ գիշերեցինք:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԸ

Առավոտուն ելանք ճանապարհ, հասանք Արաքսի կամուրջին, որ Մարգարայի կամուրջ կըսեն: Հազարավոր սայլեր կանգնած են: Ճանապարհը մնացած է ժողովրդին:

Ինձի Վազգենն ասած էր, որ երբ ռուսները կհարցնեն, կինդ ցույց տուր և ասա՝ «բալնոյ»: Կամուրջի պահակին ասացիմ՝ «բալնոյ», անմիջապես ճանապարհ տվեց: «Բալնոյ», այսինքն՝ հիվանդ: Հասանք Էջմիածին: Ասեղ գցես, ժողովրդի բազմությունից գետին չի ընկնի:

Հանկարծ մեր գյուղացի Օվանեսը և իր եղբայր Ավետը ինձի կտեսնան, վազելով եկան մոտս: Անմիջապես գնացինք հիվանդանոց: Ավետը էշը պահեց, մենք կնոջս տարանք ներս:

---

[218] **Իգդիր** գյուղաքաղաքը Երևանի նահանգի Սուրմալուի գավառի վարչական կենտրոնն էր: Գտնվում էր Երևանից 40 կմ հարավ-արևմուտք, Երևան-Բայազետ խճուղու վրա, Արաքս գետի աջափնյա մասում, հարթավայրում: 1829-32թթ. ուներ շուրջ 700, 19-րդ դարի վերջերին՝ 550 տուն հայ, 70 տուն թուրք, 20-րդ դարի սկզբներին ավելի քան 10000 հայ բնակիչ: Հայերի մի մասի նախնիները այստեղ էին գաղթել Պարսկահայքի Խոյի և Սալմաստի շրջաններից 1829 թ.: Շրջակայքի ճահճուտների ու աղուտների պատճառով Իգդիրի կլիման բարենպաստ չէր: Բնակչությունը զբաղվում էր այգեգործությամբ, պտղաբուծությամբ, արհեստներով ու առևտրով: Ուներ երեք եկեղեցի, արական և իգական վարժարաններ: Հիշատակվում է 15-րդ դարից: 1555-1828թթ. գտնվում էր Պարսկաստանի տիրապետության տակ: 1828թ. Թուրքմենչայի պայմանագրով միացվեց Ռուսաստանին և մտցվեց Երևանի նահանգի՝ Սուրմալուի գավառի մեջ: 1920 թ. Իգդիրը գրավվեց թուրքերի կողմից և 1921թ. Կարսի պայմանագրով՝ Սուրմալուի գավառի հետ միասին անցավ Թուրքիային: Ենթադրվում է, որ Իգդիր տեղանվան մեջ առկա են հայերեն այգե+դիր բաղադրիչները (տե՛ս Սահակյան Լ., Իգդիր-Այգեդիր (հայկական մի տեղանվան պատմալեզվական ստուգաբանություն), «Բանբեր Երևանի համալսարանի», 2004, N 2, էջ 195-197): Իգդիրի, նրա պատմության, նշանավոր իգդիրցիների մասին մանրամասն տե՛ս Սուրմալու-Իգդիր, պատմական քառուղիներում, գիտահանրամատչելի ժողովածուն, Երևան, 2007):

[219] **Օրգով** գյուղը գտնվում էր Երևանի նահանգի Սուրմալուի գավառում, Իգդիր գյուղաքաղաքից 13 կմ հարավ, Հայկական պար լեռնաշղթայի հյուսիսային լանջին, Իգդիր-Բայազետ ճանապարհի վրա: 1906 թ. ուներ 515 քուրդ բնակիչ: Հիշատակում է 5-րդ դարի պատմիչ Ղազար Փարպեցին (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 494):

Ներսը երկու աղջիկ նստած էին, ասացին. «Տեղ չկա, բոլոր կուռռոներից[220] լցված է»: Ես ասացիմ. «Ճիշտ է, որ ես էլ «կուռռ» եմ, բայց կամավոր եմ»: Եվ ցույց տվեցիմ Համազասպի թուղթը և Վազգենի նամակը: Նամակը կարդաց, մի բան դրեց ականջին և ռուսերեն խոսեց: Անմիջապես նամակը և թուղթս տարան վերև, հետո եկան, մեզի տարան վերև, ասացին. «Երեք օրից հետո՝ առավոտուն, ժամը իններին, եկեք այստեղ»:

Մենք իջանք ցած: Ես էշը ծախեցիմ, վրայի թաղիքը և վերմակը շալակեցիմ, գնացինք վանքի պարիսպի տակ՝ Օվանեսի ընտանիքի մոտը:

Երեք օրից հետո ես և Օվանեսը գնացինք հիվանդանոց: Տեսանք, որ կինս կլացի, ասացիմ. «Հեղինե՛, ինչո՞ւ կլացես»: Ասաց. «Ծամերս կտրեցին»: Ես ծիծաղեցիմ, ասացիմ. «Կլավանաս, ծամերդ կուգան»: Բժիշկը ասաց, որ ամեն կիրակի կարող ենք գալ մեր հիվանդի մոտ, և իմ թուղթս տվեց ինձի: Մենք եկանք մեր տեղը: Մի օր գնացինք Էջմիածնի վանքը տեսնալու: Երբ Խրիմյան Հայրիկի գերեզմանի մոտ կանգնած էինք, երեք մարդ եկան՝ ոսկի և արծաթե գոտիներով: Մեզի ասացին. «Կուգա՞ք ձեզի տանենք մեր գյուղը, այստեղ խոլերա է ընկել, կմեռնեք»: Առաջի խոսքը Օվանեսն ասաց. «Ձեր գյուղը պաղ ջուր կա՞»: Ասաց. «Կուռռ՛, մեր գյուղը ձյուն էլ կա»: Էդպիսով մենք վարձվանք նրանց ծառայելու: Իմ աղան տոհմիկ էրզրումցի էր եղած, յոթ գյուղի կառավարիչ էր, Քեշիշօղլի Արշակ ամի կասեին: Նրանք գաղթականներից տավարներ առած էին: Գնացինք նրանց գյուղը, որ Կըրմըզլու[221] կըսեին: Ալագյազի ամենաբարձր գյուղն էր, որ կնայեր Անի քաղաքին: Ամեն կիրակի իմ աղեն՝ Արշակ ամին, կուգար էջ-

[220] **Կուռռ** – երբեմն այսպես հեգնական կոչում էին տաճկահայերին, ըստ երևույթին ծագում է քրդերեն կուռռ-տղա բառից:

[221] **Կըրմըզլուն** ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի շրջանի Կարմրաշեն (1946-ից) գյուղն է, որը գտնվում է Արագածի սարալանջին: Գյուղի Սբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1865թ.: Գյուղի շրջակայքում կան 10-18-րդ դարերի հուշարձանների մնացորդներ: 1897թ. ուներ 790 բնակիչ (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 62):

միածին գործով, ես էլ հետը կուգայիմ և կերթայինք մեր հիվանդին տեսնալու: Բավականին աղեկ էր, և տղաս հիվանդանոցի ծաղիկն էր եղած: Ես շատ ուրախ կվերադառնայիմ աղայիս տունը: Քսանութ հոգուց բաղկացած ընտանիք էր: Այդ ամառը և ձմեռը մենք անցկացուցինք Կըրմըզլու գյուղը: Օվանեսի աղեն մի ամբարտավան և հարուստ մարդ էր: Գյուղի գյուղապետն էր: Մի օր կառաջարկի, որ Օվանեսի կինը աղախին լինի, Օվանես կմերժի, և Ավետի հետ դուրս ելան գործից: Գնացին դեպի Երևան: Արշակ ամու հետ մենք եկանք Էջմիածին և գնացինք՝ մեր հիվանդը տեսնալու:

Բժիշկը ռուսերեն Արշակ ամու հետ ինչ խոսեց, չեմ հասկանում և ինձի ասաց. «Կուզես այս թուղթը ստորագրի»: Ասացիմ. «Ինչո՞ւ»: Ասաց. «Պիտի գործողություն անենք, որ լավանա, գնդակը ծունկի ոսկորը ծակած է»: Ես այդ թուղթը ստորագրեցիմ, և մենք դուրս ելանք, Արշակ ամին իր գործերը վերջացուց, եկանք գյուղը, և շատ ուրախ էիմ, որ կինս կլավանա:

ՀԵՂԻՆԵԻ ՄԱՀԸ

Կիրակի օրը Արշակ ամու հետ եկանք Էջմիածին և ուրախ-ուրախ գնացինք հիվանդանոց: Երբ հասանք ընդունելության սրահը, տղաս ճչաց, ընկավ գիրկս: Ասաց. «Մամին տարան»: Ես հարցուցիմ բժշկին և նա պատասխանեց. «Ցավոք սրտի, կինդ գործողության տակ մահացավ»:

Ես ուշագնաց ընկամ գետին, երբ ուշքի եկամ, տղաս Արշակ ամու գրկին էր, կկանչեր. «Մամաս, մամաս»: Արշակ ամին ասաց. «Երվա՛նդ, երթանք իմ բարեկամի տունը»: Ես տղաս գրկեցիմ, որ երթանք: Աղջիկներից մեկը երկու ոսկի տվեց և ասաց. «Քո կնկան գրպանում էր»: Ես փող չէիմ տված կնկանս, անպայման լույս հոգի մայրս տված էր:

Եկանք Արշակ ամու բարեկամի տունը: Շատ բարի ընտանիք էր: Տղայիս տարան, քնցրան: Արշակ ամին ու իր բարեկամը, թե ինչ էին խոսացել գիշերը, ինձ հայտնի չէր:

Առավոտուն այդ պարոնը, որ անունը Մնացական էր, ասաց. «Երվա՛նդ, տղա՛ս, դու այս որբին չես կարող պահել, և ոչ ոք այժմ չի կարող ուրիշի զավակը պահել, մանավանդ, գաղթականի երեխուն: Վանի որբերը բերած են Երևան, և ձեր շրջանից մի պատվելի կա՝ Հակոբ[222] անունով, նրանց վերահսկիչն է: Ես և Արշակ ամին քեզի խորհուրդ կուտանք, որ տղադ տանես այնտեղ, շատ լավ կպահեն»:

[222] Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Երևանում կուտակված փախստականներին որոշ օգնություն էր ցույց տալիս Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն (Ամերկոմ), որը անհատ քաղաքացիներից կազմված բարեգործական ընկերություն էր: Այն Երևանում բացել էր մի քանի որբանոցներ՝ Գայանյան ուսումնարանում, Ալեքսանդրյան իգական գիմնազիայում, ուսուցչական սեմինարիայում, Մարիամյան ծխական դպրոցում և այլն: Ամերկոմում պաշտոնավարում էին մի շարք հայ ավետարանական գործիչներ, այդ թվում՝ վերապատվելի **Հակոբ Մուդոյանը**: Նա Հայոց ձորի Իշխանի գոմ գյուղից էր: 1915թ. Վան-Վասպուրականի հերոսամարտի ղեկավարներից Օ. Մխիթարյանն իր հուշերում Հայոց ձորի Իշխանի գոմ գյուղի մասին գրում է, որ այնտեղ էին հավաքվել շրջակա գյուղերի բնակիչները, և երբ Գավաշի Խալըտ բեյը հազարի մոտ հեծյալներով ու հետևակով, թնդանոթներով գյուղը պաշարում է, շուրջ հարյուր զինված հայեր բողոքական քարոզիչ Հակոբ Մուդոյանի և ուրիշների ղեկավարությամբ բուռն դիմադրություն են ցույց տալիս և չեն թողնում, որ ջարդարարները գյուղ մտնեն: Գիշերով շատերին հաջողվում է փախչել: Իսկ Մուդոյանը, Այգեստան հասնելով, փամփուշտներ է ձեռք բերում և շտապում Հայոց ձոր և լեռներում ու լքված գյուղերում հավաքում է շուրջ 2500 կին ու երեխա և հասցնում Վարագ (Մխիթարյան Օ., նշվ. աշխ., էջ 126-127): Վասպուրականցիների՝ Արևելյան Հայաստան գաղթից հետո նա 1918թ. վերջին ընտրվել է ՀՀ խորհրդարանի անդամ: Խորհրդային կարգերի հաստատումից հետո վերապատվելի Հ. Մուդոյանը 1924-ին արտաքսվեց Պարսկաստան: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ Հայ ավետարանական ընկերակցությունը Հ. Մուդոյանին նշանակեց Թեհրանի և այլ քաղաքների Ավետարանական եկեղեցիների ու համայնքների վերահսկիչ հովիվ: Նա վախճանվել է ԱՄՆ-ում 1960թ. (Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1879-1917թթ.), Երևան, 1967, էջ 530-531: Ղազարյան Ա., Լևոնյան Ռ., նշվ. աշխ., էջ 158-159, 176-181):

ՂԱԶԱՐՈՍԸ ԵՐԵՎԱՆԻ ՈՐԲԱՆՈՑՈՒՄ

Առավոտուն Արշակ ամին մի կառք վարձեց, գնացինք Երևան: Կառքը մի դուռի առաջ կանգնեց: Արշակը դուռը զարկեց: Ծառան դուռը բացեց: Արշակը պատվելի Հակոբին ուզեց: Պատվելին եկավ, Արշակ ամին պատմեց տղայիս մասին: Պատվելին, երբ իմացավ, որ ես Քերծ գյուղացի եմ, շատ սիրով տղայիս մի բուռ չամիչ տվեց: Ասաց. «Քեզի տանեմ մամայի մոտը»: Տղաս գնաց նրա գիրկը, դուռը գոցեցին, և ես ընկամ գետին ուշագնաց:

Սիրելի ընթերցող, մի վայրկյան մտածիր իմ դժբախտ վիճակս: Ես արթնացամ, երբ հասած էինք Հռիփսիմեի վանքը: Օվանեսը ընտանիքով կանգնած է, Արշակ ամիի հետ կզրուցի, ինձ տեսնալուն՝ շատ լացին, և ես էլ շշմած այս վիճակից կլացեիմ:

Արշակ ամին ուզեցավ, որ երթանք, ես ասիմ. «Ամի՛ ջան, ես չեմ գա, քո հացը ինձի հալալ արեք, ինձի ի՞նչ է մնացել, որ աշխատեմ: Խնդրեմ թույլ տվեք, մենք մի գյուղացի ենք, այս Օվանեսը մեր հարյուրապետն էր ամբողջ կռիվներին: Այժմ մենք այստեղ մարդ չենք, «կուռռ» ենք: Կերթանք, կմնանք մեր ցավերով, կլացենք և կապրենք»:

Արշակ ամին կառքից իջավ, լացելով ինձի գրկեց և ասաց. «Իմ պապերը Էրզրումցի են, ես ձեր ցավը կհասկնամ»: Եվ գրպանից մի բուռ թղթադրամ հանեց, դրեց իմ գրպանը: Ասաց. «Երբ սիրտդ կուզի, արի մեզ մոտ»: Եվ վանքի դուռը ծեծեց:

Ծառան եկավ, ասաց. «Սրանց տեղ տվեք, որ ապրեն»: Վանահայրը եկավ և մեզի տարավ ներս: Երկու սենյակի ցախեր և փայտեր մաքրեցինք: Արշակ ամին և վարդապետը մնաս բարի արեցին ու գնացին:

ՄԵՐ ՀԻՍՆԱՊԵՏ ԵՂԻԱԶԱՐԸ

1916 մարտ ամսին էր, որ մենք մտանք վանքի մեջ և հանգիստ արեցինք: Մի օր Օվանես ասաց. «Երվա՛նդ, երթանք Երևան, տեսնանք՝ ի՞նչ լուր կա»: Գնացինք, հասանք Երևանի կենտրոնական այգին: Օվանեսն ասաց. «Երվա՛նդ, էն աթոռի վրա նստածը ոգմեցի հիսնապետ Պետրոսը չի՞»: Նայեցիմ՝ նա էր:

Կանչեցինք. «Պետրո՛ս-Պետո՛»: Եկավ, գրկախառնվեցինք և նստանք՝ խոսալու: Ասաց, որ Եղիազարը՝ Ֆիդայի Եղոն, այստեղ է: Շատ փնտրելուց հետո Եղոյին տեսանք: Շատ ուրախացավ, մանավանդ Օվանեսին տեսնալուց՝ աչքերը ջուր լցվեց:

Նստանք՝ զրուցելու՝ ի՞նչ կա, ի՞նչ չկա: Եղիազարն ասաց. «Շատ բարի լուր կա, ռուսներ մեր նահանջի կեսից մնացեր են Վանի մեջ, և Արամ փաշեն վերադառնալու է Վան: Շուտով իր շքախումբով ճանապարհ կընկնի, և ես էլ նրանց հետն եմ: Մեր երկիրը շունի ոսկոռ կոծենք, այստեղի հացից աղեկ է: Այստեղի հացը ուտել չի լինի: Այնտեղ մարդ էինք, այստեղ կուռռ, վայրենի»: Արտասվելով՝ ավելացրեց. «Ֆիդայի Եղիազարը կուռռ է եղած»: Ոտքի ելավ, մնաք բարի ասաց ու գնաց: Մենք էլ մի քիչ ուտելիք առանք, վերադարձանք Հռիփսիմեի վանքը: Երկրորդ օրը ես և Օվանեսը գնացինք Էջմիածին՝ իմանալու, թե ինչ վիճակ է:

Հասանք Էջմիածին: Ժողովուրդին նայելուց հասկացանք, որ մի բան կա: Մի տղայի հարցուցինք, թե այս ինչ եռուզեռ է: Ասաց, որ գաղթականները վերադառնում են իրենց երկիրը: Մեզ հարցրեց. «Որտեղացի՞ եք», ասացինք. «Վանեցի ենք»: Ասաց. «Եկե՛ք ձեզի տանեմ վանեցիների արաբաջիների մոտ»: Գնացինք, և մի կարճաբոյ սև մարդ՝ անունը Սենո, ցուցակագրում էր, ասացինք. «Պարո՛ն Սենո, մեզի գրիր»: Ցույց տվեց մի սեղան, որ կգրեին: Գրվեցինք: Օվանեսը փող չուներ: Արշակ ամու տված փողը շատ էր, վճարեցիմ հինգ հոգու ծախսը և ստացական առամ, բերեցիմ, պարոն Սենոյին ցույց տվեցիմ: Սենոն ասաց. «Վաղը չէ մյուս օրը եկեք»: Օվանեսի հետ եկանք, շուկայից ինչ-որ պետք էր առանք, գնացինք վանքը: Այդ գիշեր մինչև լույս ուրախությունով անցկացրինք:

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Երրորդ օրը, մեր ունեցած թաղիքներ և կարպետներ շալակած՝ հասանք պարոն Սենոյի իջևանը: Մեզի հետ եկած էին աթանանցիք, բլթենցիք և քոչկցի Արմենակը: Մեր քարավանը չորս հատ կառք էր:

Վաղ առավոտուն Էջմիածնից դուրս եկանք: Քարավանը հասավ «Ննջեցելոց Վասպուրականի» տասնյոթ անշուք թումբերի առաջ: Այս թումբերը տասնյոթ հազար վասպուրականցիների խմբակային գերեզմանն է. անհայտ, անանուն 17000 անմեղ վասպուրականցի գաղթականներ՝ մեռած սովից, ցավից և ժանտախտից Էջմիածնի անտառներում կամ պատերի տակ:

Մենք բոլորս էլ իջանք կառքերից և գլխահակ «Հայր մեր» աղոթքն ասեցինք, ապա արտասվելով՝ նստանք մեր կառքերը: Ես շատ, շատ հուզվեցիմ: Գիտեիմ, որ անպայման վաղամեռիկ կինս այդ տեղը թաղած են: Հիշեցի նաև անգերեզման մեռած մորս, հարազատներիս ու համագյուղացիներիս:

Գնացինք, հասանք Արաքսի կամուրջին: Մեզի արձանագրեցին և ճանապարհ բացեցին, որ երթանք Իգդիր: Երեկոյան հասանք Իգդիր: Ոչ մի ճանապարհ չկա:

Ալաշկերտցիների, բուլանուխցիների և վասպուրականցիների կառքերը խառնված են իրարու: Կռվից ու հայհոյանքից մարդ խենթանում էր: Շատ դժվարությամբ հասանք Օրգով գյուղը և գիշերեցինք:

Առավոտուն մեր կառքերը բարձրացան Արարատ սարի լանջերը, և հասանք սահմանագլուխը: Երբ տեսանք մեր

սարերը և մեր եկած և այժմ դարձած ճանապարհը, գլուխները խոնարհեցինք և բարևեցինք մեր սարերին: Այժմ իջնում ենք դեպի Բայազետի դաշտը, որ մի տարի առաջ կովեցինք այնտեղը, այժմ մեր դեմ մի գյուղ կա, Արծափ[223] կըսեն: Այդ տեղը գիշերեցինք՝ հակառակ մեր անհամբերությանը, ըսպե կհաշվենք, որ հասնենք մեր գյուղը:

Սենոն մի օր հանգիստ տվեց ձիերին: Երկրորդ օրը ճանապարհվեցինք: Հասանք էն մեծ ջուրին, որ հարյուրավոր կին և երեխա էր խեղտվել: Իմ մորքուրը և հորեղբոր կինը ջուր տարավ: Մայրս գետի ջրում կորավ:

Սենոն ասաց. «Տղամարդեր թո՛ղ իջնեն, որ կառքը հանգիստ դուրս ելնի»: Մեր կառքի մեջ վեց մարդ և երկու կին էին: Մենք հագուստները հանեցինք, մտանք ջուրը: Կառքը դուրս ելավ: Նստեցինք, հասանք Բերկրի կալեն: Այս տեղը ռուսները «Կարմիր խաչ» էին կառուցել և օգնում էին մեզի: Գիշերեցինք: Մեզի հաց, կերակուր և չայ տվեցին: Առավոտյան հասանք Ջանիկ գյուղը, այստեղ էլ «Կարմիր խաչ» կար, նույնպես մեզի կերակրեցին:

Մյուս օրը հասանք Սև ջուր գետին: Կառքերը հանգիստ դուրս ելան: Ճաշի ժամանակ հասանք Վան քաղաքը: Անմիջապես մեր թաղիքը և կարպետը շալակեցինք, ելանք ճանապարհ: Քաղաքից դուրս ելածի պես տեսանք մեր Արտոս սարը: Խաչ հանեցինք մեր երեսներին և այժմ ոչ թե կքայլենք, այլ ուրախությունից իրարու հրմշտելով կվազենք:

Իրիկնապահին հասանք մեր գյուղը: Մեզի տեսնալուն պես գյուղացիները զարմանքով վազեցին, եկան: Համբույրը և արտասուքը խառնված էին իրարու: Ոչ ոք չի կարող նկարագրել մեր ուրախությունը կամ զգալ մեր քաշած տառապանքները և կորսվածների սուգը:

Բախտ ունեցանք կրկին ճաշակելու մեր հալալ հացը: Կուլիկով խմեցինք մեր հալալ և մաքուր աղբյուրի ջուրը: Ջէին դադարում հուզմունքից թափվող արտասուքը: Նստանք զրույցի և հարցուփորձի: Շատ-շատ էր մեր կորուստը. առանց գնդակի մեռնողներ, էջմիածնի պատերի տակ կամ էլ անտառի մեջ և արտերի տարածքում փռված անտեր մեռնողների դիակներ: Առավոտյան գնացիմ՝ մեր տունը տեսնալու: Տունը, մարագը և գոմը վառված տեսամ:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԱԿ

Մեր գյուղացի Ներսոյի Հարությունը, որի աղջկան ջուրը տարել էր, ուխտ էր արել ծառայել ժողովրդին, հացի փուռ էր բացել, հաց կթխեր և կբաժաներ եկողներին: Եկողներից կիներ քիչ էին, իսկ երեխա ոչ մեկը չունին: Իմ ընկեր Խաչիկն ասաց. «Երվա՛նդ, ես կերթամ Վերի Հայոց ձորը, շատախցի Ազատը միլիցիա է գրում Արամ փաշի հրամանով, արի երթանք»:

Գնացինք Կղզի գյուղը, ներկայացանք Ազատին: Ինձ տեսնալուն ասաց. «Դու ծանոթ կերևաս աչքիս»: Ասացիմ. «Պարո՛ն Ազատ, ես այն տղան եմ, որ նամակ բերեցի կոմիտե Այվազին»: Շատ ուրախացավ, և մենք գրվեցինք միլիցիա: Ջենքեր առանք, եղանք քսան հոգի, երկուսը ասորի էին՝ Բենիամին և Շմուլ: Մեր թևերի վրան երկու գիր կպցրեցին Ա. և Պ., այսինքն՝ Ազգային Պահակ: Մեր պար-

[223] **Արծափ** գյուղը գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Կոգովիտ գավառում, Դարոյնքից հյուսիս-արևմուտք, Արծափաքար լեռան ստորոտին՝ այժմյան Իգդիրից Հին Բայազետ տանող ճանապարհի աջ կողմում: Ունեցել է բարեբեր հողեր, առատ ջուր և արևոտ լանջեր: Առաջին անգամ հիշատակվում է 6-րդ դարի վերջին կամ 7-րդ դարի սկզբին: Սեբեոս պատմիչի վկայությամբ, 643թ. Արծափի մոտ Թեոդորոս Ռշտունին հայկական մի փոքրաթիվ զորագնդով ոչնչացրել է բերդը գրաված արաբական 3000-ոց բանակը: Այս դեպքից 800 տարի անց Արծափը հիշվում է որպես ամուր բերդ: Կոչվել է նաև **Բերդավան**: 19-րդ դարի վերջին Արծափը մտել է Էրզրումի նահանգի Բայազետի գավառի մեջ: Ունեցել է վարժարան: 1828-29թթ. շատ արծափցիներ գաղթել և բնակություն են հաստատել Սևանի ավազանի Զիբուխլու (Ծովագյուղ) և Հրազդանի Թայչարուխ (Մեղրաձոր) գյուղերում: 1909թ. Արծափն ուներ 120 տուն հայ բնակիչ: 1914թ. այստեղից գաղթել է 100 հայ ընտանիք: Արծափում են գտնվել Սբ Գրիգոր ավերակ վանքը և Ծաղկավանքը, որը շեն և կանգուն էր մինչև 19-րդ դարի վերջը (ՀՀՇՏԲ, հ.1, էջ 448):

տականություն էր երթալ, հսկել շրջանները և սարերը: Մեր շրջանում որոշ գյուղացիք տեսած էին քուրդերին:

Մի օր տեսանք մի քուրդ հրացանով կանգնած է պատի տակ: Ազատին լուր տվեցինք: Եկավ քուրդը ասաց. «Ես հայ եմ և իմ անունը Հովսեփ է, ես Հանկշտանց[224] գյուղացի եմ»: Ազատը չհավատաց, կուզեր սպանել: Ես չթողեցիմ, ասացիմ. «Ո՞ր տնից ես»: Ասաց. «Ռես Ավոյի եղբայրն եմ»: Հարցրիմ. «Ռես Ավոյի կինը որտեղացի՞ էր»: Ասաց. «Քերծ գյուղացի, ռես Հակոբի քույրն էր»: Ազատին ասացիմ. «Ճիշտ է, իմ հորաքույրն է»: Տարանք տուն, հաց կերավ և պատմեց իր քուրդ լինելու հանգամանքը.

-Մեր գյուղը և Տեմկոսը շատ մոտիկ գյուղեր են: Ռասուլ աղան մի սիրուն աղջիկ ուներ: Սիրում էինք իրարու: Ռասուլ աղան իմացավ, ինձի բռնեց իր աղջկան հետ: Խանչալը դրեց կուրծքիս, ասաց. «Եթե մուսուլման դառնաս, քեզի կամուսնացնեմ իմ մի հատիկ Զայնեի հետ: Եթե ոչ, երկուսիդ էլ կսպանեմ»: Ես համաձայն եղամ և ամուսնացամ Զայնեի հետ: Ռուսներ, որ եկան, մենք փախանք Նորդուզի գավառը՝ Շաքըը աղայի մոտ: Իմ կինս երեխայիս հետ մահացավ: Անդրանիկ փաշեն, որ հասավ Նորդուզի գավառը, բոլորին կոտորեց: Ռասուլ աղային փախնելու ժամանակ ես սպանեցիմ և փախամ: Ընկան իմ հետևից, բայց չհասան ինձի: Այս սարի էն կողմը ձիս սատկավ... Լսելով, որ հայեր հետ են եկած Արամ փաշայի հետ, ես էլ եկամ մեր գյուղը: Ավերակ տեսնալով մեր տունը՝ սկսեցիմ էս գյուղից էն գյուղը ման գալ, մինչև որ հասամ այստեղ: Այս է իմ պատմությունը:

---

[224] **Հանկշտանց** գյուղը հիշվում է նաև Անկշտանց ձևով: Գտնվում էր Վանի նահանգի Հայոց ձոր գավառակում: Համանուն վանք է հիշվում Գավաշի գավառակում: Ըստ Մ. Միրախորյանի՝ 1883թ. ուներ 45 տուն հայ և 1 տուն եկվոր քուրդ բնակիչ: Հայերն ունեին Սբ Ստեփանոս անվամբ եկեղեցի: Գյուղում կային նաև երկու եկեղեցիների հետքեր (նշվ. աշխ., էջ 173-175): 1909թ. ուներ 60 տուն՝ 305 հայ բնակիչ և 4 տուն մահմեդական բնակիչ (Ա-Դ, նշվ. աշխ., էջ 47: Տե՛ս նաև ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 348):

ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐՔԻ ԿԱԶՄՎԵԼԸ

Ազատը որոշեց, որ վաղ առավոտուն երթանք այդ սարի հետև՝ խուզարկելու: Սարը շատ բարձր է, Բաշեդե Մանդան[225] կասեն: Այդ սարը քառասուն պտույտ ունի: Բարձրացանք և իջանք, հասանք մի մեծ գետի, որ Տիգրիս գետի մի ճյուղն է, կերթա Շատախ, կմիանա Սևտիկնա գետին: Զուրն անցանք, Հովսեփի ձին այնտեղ սատկած էր և թամբն էլ վրան գտանք:

Մեր առաջ մի գյուղ երևաց, տեսանք՝ մարդ կա գյուղի մեջը: Ազատը քուրդերեն ձայն տվեց, և նրանք հրացանի գնդակով մեզի պատասխանեցին: Ասորի Բենիամինը թևից վիրավորվեց: Մեր կռիվը մինչև կեսօր տևեց: Նրանք չորս հոգի էին, բայց գյուղի մեջ էին և պատերի տակ: Հովսեփը հինգ հոգի մեզանից վերցրեց և գաղտնի ճանապարհով մտավ գյուղ: Երեքին կսպանեն, և մեկը վիրավորված կհանձնվի: Առինք նրան, եկանք մեր տեղը: Շատ հարցնելուց՝ հայտնի եղավ, որ Հովսեփին հետապնդողները սրանք էին:

Երկրորդ օրը Ազատը Բենիամինին տարավ Վան՝ բուժելու: Տասը օր չեկավ: Մի օր եկավ շատ ուրախ և խմած էր: Հարցուցինք քաղաքից, ասաց. «Ռուսներն իրավունք են տվել, որ հայերը զորք պատրաստեն իրանց երկիրը պահելու համար, և Կոստի Համբարձումյան[226] լիազոր հրամանատար

---

[225] **Բաշեդ** (Պաշեթ) լեռը Հայկական Տավրոսի լեռնահամակարգում է, Վանա լճի հարավային ծայրամասից մոտ 40 կմ արևելք, Բաշկալայից հյուսիս-արևմուտք, Խոշաբ գետի հովտի ձախ կողմում (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 599):

[226] **Կոստի Համբարձումյանը** ծնվել է 1882թ. Շուշիում: 1900-1902թթ. եղել է ԱՄՆ-ում, 1903-1904թթ.՝ Պարսկաստանում, 1908-ին Կապանի կրթության տեսուչն էր: Եղել է ՀՅԴ անդամ: Կազմակերպել է Պարսկաստանի միջոցով Արևմտյան Հայաստան զենքի փոխադրություն: 1909-ին ձերբակալվել է և բանտարկվել Թիֆլիսի Մետեխի հանրահայտ բանտում, ապա աքսորվել է Խարկով: 1911-14թթ. Բելգիայում գյուղատնտեսական բարձրագույն կրթություն է ստացել: 1915-ին ընդգրկվել է Արա-

է: Մենք վաղը կամ մյուս օրը պիտի երթանք՝ զինվորագրվելու»:

Հովսեփը չեկավ մեր հետ: Մենք հասանք Վան և զինվորագրվանք: Նոր զենքեր ստացաք Արարուց մեյդանի պահեստից: Եկանք Խաչփողան, Շիշլի Կազինոյի շենքը: Եղանք ութսունհինգ հոգի և մեր խմբապետը ոզմեցի Ֆիդայի Եղիազարն էր: Նույնպես շատ հարյուրյակներ կազմեցին, և եղանք գունդեր: Մեր գունդի անունը կոչվավ Վանի չորրորդ գունդ, և մեր գնդապետը եղավ շատախցի Զանկե Տիգ-

---

բատյան ջոկատ, դարձել գնդի գումակի պետ, 1915-ի մայիսին մասնակցել է Վանի հերոսամարտին: 1918-ի հունվարին «Վանի երկրորդ Արամը»՝ Կ. Համբարձումյանը, դարձել է Վասպուրականի իշխանության նախագահ և արտաքին հարաբերությունների վարիչ: 1918-ին թուրքական գերակշիռ ուժերը հարձակվել են Վանի վրա և մարտի վերջին տասնյակ հազար հայեր Կ. Համբարձումյանի և Լևոն Շաղոյանի գլխավորությամբ գաղթել են Պարսկաստան և Իրաք: Այս գաղթի մասին տե՛ս նաև Ծիծանց գյուղի քահանա Տեր Ղուկաս Տեր-Պաղտասարյանի հուշը («Վարագ» պարբերական, 2007, N 54, էջ 74-78): Ըստ ականատեսի վկայության՝ Կ. Համբարձումյանը «գաղթի ճամբին, Կօտոլի կիրճի մէջ երեխաներ, ծերեր եւ պառաւներ շալկած գետը անցուցեր էր ժամերով շարունակ կարկուտանման գնդակներու տակ»: Ճանապարհին՝ Սային Կալայում Կ. Համբարձումյանն իր մի խումբ զինակիցների (այդ թվում՝ Հովհաննես Թումանյանի ավագ որդու՝ Արտավազդի) հետ սպանվել է: Ռուբենն իր հուշերում Կ. Համբարձումյանին բազմիցս անդրադառնալով, գրում է, որ նա «ձեռներեց, չարքաշ, խելացի և պայմաններին յարմարուող գործիչ մըն էր եւ, որ էականն է, իր լայն հայացքներով եւ ուսումով՝ ան շուտով գրաւեց կարեւոր տեղ մը մեր կեանքին մէջ»: Հետաքրքրական է, որ նրա ավագ եղբայրը Սարգիս (Սաքո) Համբարձումյանը եղել է բոլշևիկյան նշանավոր գործիչ, 1921-ին՝ ՀԽՍՀ առողջապահության ժողկոմ, 1922-ին՝ կենտգործկոմի նախագահ, 1925-29-ին՝ ժողկոմխորհի նախագահ, ապա տեղափոխվել է Մոսկվա (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 198: Մխիթարեան Օ., նշվ. աշխ., էջ 219: Մաքսապետյան Ա., նշվ. աշխ., էջ 116, 125: Վարդանյան Գ., նշվ. աշխ., 1992, էջ 88, էջ 98: Տե՛ս նաև՝ Վարդանյան Ս., նշվ. աշխ., էջ 43-45: Ռուբեն, նշվ. աշխ., հ. Ա., էջ 278: Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Գ, էջ 432: ՀՀՀ, հ. 3, էջ 77: Սարհադեան Ս., նշվ. աշխ., էջ 200: Ուիլյամս Մ.Օ., Վանը հին ու նոր կոտորածների միջև (անգլերեն), "National Geographic" ամսագիր, 1919, օգոստոս, N 36, էջ 181-184, թարգմ. տե՛ս «Դրօշակ», 2009, N 6, էջ 40-41: Саргизов Л., Ассирийцы стран Ближнего и Среднего Востока, Ереван, 1979, с. 119):

բան Բաղդասարյանը[227]*, որ Սարիղամիշի կռվին թուրքական բանակում յուզբաշի՝ հարյուրապետ էր եղած, և վիրավորված էր ու փոխադրված Շատախ: Մնացած էր այնտեղ, մինչև այս խմբավորման հրահանգի ստանալը:*

Մենք եղանք Վանի նոր կազմված հայկական գունդի առաջին հարյուրյակը, որը կազմվեց 1917-ի հոկտեմբերի 17-ին, ու մեր հարյուրյակը ուղարկեցին Շատախի գիծ՝ պաշտպանելու Սիսեռկա կալեի կիրճը:

Վանից դուրս ելանք, գիշերը հասանք մեր Քերծ գյուղը: Գյուղացիք շատ ուրախացան՝ մեզի տեսնալով և մանավանդ ծանոթ Ֆիդայի Եղիազարին: Մի ամբողջ օր մեզի համար հաց թխեցին: 1917 թ. հոկտեմբերի քսանին մենք հասանք կալու վերին մասի այն քարին և Սուրբ ծառի տակ, որ նախապես գրած եմ, ուր ինձի կուզենային սպանել:

---

[227] Գնդապետ **Տիգրան Բաղդասարյանը** շատախցի է, ծնվել է 1890թ.: Օսմանյան խորհրդարանի հայ երեսփոխանների նախաձեռնությամբ սովորել է Կ.Պոլսի Զինվորական դպրոցում: Որպես սպա՝ մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, Էրզրումում վիրավորվել է և վերադարձել հայրենի տուն (ՅՀՅԴ, պլբոմ-ատլաս, հ. Բ, Լոս Անճելես, 2001, էջ 74: Թորլաքեան Մ., Օրերուս հետ, Պեյրութ, 2001, էջ 568): Մեծ եղեռնի տարիներին 1915-1918 թթ. նա Շատախի հերոսամարտերի և Վասպուրականի իշխանության հարավային ռազմաճակատի ղեկավարներից էր (Մեսրոպյան Ս., նշվ. աշխ., 1990, էջ 78, տե՛ս նաև Մաքսապետյան Ա., նշվ. աշխ., էջ 119, 123): 1918թ. մասնակցել է Հայաստանի Հանրապետության ճակատագրական կռիվներին, ղեկավարել է Իգդիր-Երևան ռազմաճակատի գիծը: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Տիգրան Բաղդասարյանը (ծածկանունը՝ **Տիգրիս**) Դրոյի հետ համագործակցելով՝ կարողացել է Գերմանիայում և գերմանացիների կողմից գրավված շրջաններում (Ղրիմ, Ուկրաինա և այլն) գտնվող շատ հայ գերիների ազատել (Թորլաքեան Մ., նշվ. գիրքը, էջ 567-568, 571): 1944թ. ընտրվել է Բեռլինում կազմավորված Հայոց Ազգային Կոմիտեի նախագահ: Տիգրան Բաղդասարյանը գրել է նաև Առաջին Հանրապետության շրջանին վերաբերող հուշեր (տե՛ս Սահակեան Յ., Բաղտասարեան Տ., Էջեր մեր ազատագրական պատմութենէն, Ա մաս, Սահակեան Յ., Երկու տարի հայկական բանակին մէջ: Բ մաս, Բաղտասարեան Տ., Հայաստանի Հանրապետութեան վերջալոյսին, Փարիզ, 1937, էջ 195-283): Ըստ խորհրդային պետանվտանգության պաշտոնաթող փոխգնդապետ Վ. Մելքումովի՝ 1955թ. Թեհրանում Տիգրիսի՝ Տիգրան Բաղդասարյանի սպանությունը ՊԱԿ-ի հանձնարարությամբ կազմակերպել է ինքը (Համբարձումեան Ռ., Գարեգին Նժդեհ, կենսագրական յաւելումներ, անտիպ գրութիւններ ու խորհրդածութիւններ, 2005, էջ 461):

Այդ տեղը ռուսական բանակի կայանն էր: Մեզի դիմավորեցին մեկ հայ պորուչիկ[228] և մեկ ռուս, իրենց պահեստը հանձնեցին մեզի:

Ունեին բավական շաքար, երշիկ, սուջուխ, մեծ քանակի պատրոն և ութ հատ սիբիրյան եզ:

Այս բոլորը ստացավ Եղիազարը, ռուսները ստացական առան ու գնացին: Նրանց կազմը 160 ռուս և հայ զինվորներ էին: Նրանք գետինը փորած էին և թաղիքով ծածկած գետնափոր տուներ էին պատրաստել: Մենք տեղավորվանք այդ տուներու մեջը:

Մեր գյուղացիք, մեզի ամեն շաբաթ շալակով, տունի հաց կբերեին և փող չէին առնի, Եղիազարը կանչեց մեր գյուղի ռեսին, որ Ներսոյի Հարոն էր, այդ ութ եզներ տվեց նրան, որ գյուղի աշնան ցանքսը անեն և օգտվեն հավասարապես:

Այսպիսով, մենք մնացինք մինչև 1917 թ. նոյեմբերի վերջը: Մեզի փոխարինելու եկավ Հարմշատ գյուղերից, Ծիծանից Մամբրեի խումբը: Մենք դեկտեմբերի չորսին հասանք Վան և Խաչփողանի Շիշլի Կազինո ըսված շենքում տեղավորվանք:

ԹԻՄԱՐԻ ԵԿՄԱԼ ԳՅՈՒՂԻ ՄԱՐԳԱՐԻՏԸ

Այսպիսով հասանք 1918թ. հունվար ամիսը: Ես լսած էիմ, որ իմ հորեղբորս աղջիկը՝ Մարգարիտը, Թիմարի Եկմալ[229] գյուղն է ապրում: Եղիազարից իրավունք ստացամ երթալ՝ տեսնալու: Շատ դժվար անցամ Ակռփու քարից և Մհերի դուռից: Հասամ Լեզք գյուղը: Ճանապարհը հարցուցիմ, տերտերը և մի քանի մարդ կանգնած էին պատի տակ, տերտեր չթողեց երթամ, ուղարկեց հաց, ժաժիկ և մի քասա գինի բերեցին ինձի: Ես պաս բռնած էիմ, ժաժիկը չկերամ: Հաց կերամ, գինին խմեցիմ և գնացիմ հասամ Մարմետի[230] գետին: Գետը սառած էր, ես էլ տեղին անծանոթ, կարող է սառույցը կոտրվի և էլ պրծում չկա, ընկար սառույցի տակ, ջուրը քեզի կքշի ու կխեղդի:

Մտքիս ընկավ, որ աղվեսը որտեղից անցնի՝ ապահով է: Աղվեսի ոտնատեղը գտամ և անցամ:

Գետը անցամ, և ահա մի փոքր գյուղ է: Պատի տակ կանգնած մի կնկա հարցուցիմ դարենցի Շահինկե Հարոյի տունը, ասաց. «Էս պատը նրանց տունն է»:

Հանկարծ մի կին՝ առանց հագուստի, դուրս պրծավ տնից և փաթաթվեց ինձի: Մարգարիտն էր, որ լողանալուց մեր ձայնը լսած էր: Այդ կինը ասաց. «Սև կապած, դու չլուտ[231] ես»: Մարգարիտ նստեց գետին, այդ կինը վազելով նրա հագուստը բերեց: Ներս գնացինք տունը: Այս դեպքը կարոտի ճնշումից էր:

Երեկոյան եկեղեցու զանգը զարկեցին: Մի վարդապետ եկած էր Կտուց Անապատից պատարագի համար, այսինքն, Կտուց կղզու վանքից: Պատարագին ես տիրացություն արեցիմ և հաղորդվամ: Խաչը ջուր գցեցին, երկրորդ օրը վարդապետ ինձի հրավիրեց վանքը: Մի օր մնացիմ, մյուս օր նավավար Պատուրի հետ եկամ գյուղը: Հարոն գնացեր էր Վան՝ ապրանք առնե-

---

[228] **Պորուչիկ** – ցածրաստիճան սպա, ենթասպա:

[229] **Եկմալ** գյուղը գտնվում էր Վանի նահանգի Վանի գավառում, Թիմարի գավառակում: 1909թ. ուներ 30 տուն հայ բնակիչ (Ա.-Դ.ο, նշվ. աշխ., էջ 28):

[230] **Մարմետի** գետը հոսում էր **Մարմետ** գյուղի կողքով: Գյուղը գտնվում էր Վանի նահանգի Վանի գավառում, Թիմարի գավառակում, Վան քաղաքից 11-12 կմ հյուսիս - արևմուտք, լճափից 3-4 կմ հեռավորությամբ: 1850-ական թթ. ուներ 82 տուն՝ 509 բնակիչ: 1909թ.՝ 135 տուն՝ 687 բնակիչ, Սբ Գևորգ անունով եկեղեցի և դպրոց: Բնակիչները զբաղվում էին այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ և արհեստներով (բրուտագործություն): Մարմետը, ըստ Ա.-Դ.ոյի, հայտնի էր իր հացահատիկով (նշվ. աշխ., էջ 26): Մի խումբ գյուղերի հետ կազմում էր Կտուց անապատի թեմը: 1895թ. թուրքերը կողոպտել և ավերել են գյուղը: Մարմետից էին մի շարք նշանավոր ֆիդայիներ: 1915թ. ենթարկվել է բռնագաղթի և ջարդի (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 738):

[231] **Չլուտ**-մերկ:

լու: Նստանք զրույցի և պատմեցինք մեր տառապանքը, նրա տառապանքը: Նրա երկու տղաները մահացած էին:

ԹԱՐԽԱՆ ԲԵԿԻ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերադարձամ Վան, և միացանք մեր ընկերներին: Մեր խումբի մեջ նոր ընկերներ էին եկած: Եղանք հարյուր քառասուն զինվոր: Բուլղարացի Գրիգորը եկավ, մեզի հիսնապետներ և տասնապետներ որոշեց, միացուց ոզմեցի Ասլանի վաշտին, և ուղարկեց Բերկրի՝ Բազիդաղա[232] կոչված վայրեր: Մեր հարյուրյակին ընկավ Խաչեն[233] ավերակ գյուղը և նրա դիմաց փռված Կայմազ մեծ քուրդական շրջանը:

Արդեն փետրվար ամիսն էր: Ռուսները մեզի հանձնեցին քսաներկու Սիբիրի եզներ, վաթսուն ձի և իրանց խոտ քաղելու մեքենան ու շատ լիքը պահեստը: Գնացին մեր խոհարարները, որ ռուսները թողեր էին մեզի: Երկու քուրդ եղբայրներ էին՝ Հասան և Հուսեյին: Ռուսները Կայմազի Թարխան բեկի հետ բարեկամություն արած էին, նրանք էլ որպես փոխադարձ հարգանք երկու եղբայրներին՝ իբրև ծառա, տված էին ռուսներին: Մեծ եղբայր Հուսեյինը Եղիազարին ասաց, որ բեկը մի քիչ խոտ կխնդրի իր ոչխարների համար, սովից կսատկեն: Ռուսները քառասուն հսկա դեզեր խոտ քաղած էին Աբաղայի դաշտից: Եղիազարը, իբրև բարեկամ, երկու դեզ խոտ տվեց Թարխան բեկին:

---

232 **Բազիդաղա** (Բազիդ աղեն) գյուղը գտնվում էր Վանի գավառի Բերկրի-Աբաղա գավառակում, 1909-ին ուներ 6 տուն հայ և 30 տուն մահմեդական բնակիչ (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 35):

233 Նկատի ունի Բերկրիի **Խաչան** գյուղը, որը 1909 ուներ 70 տուն հայ և 10 տուն մահմեդական բնակիչ: Ըստ Ա-Դոյի՝ այս գյուղի բնակիչները ծայրահեղ չքավոր էին, բայց կային նաև 30-40 տավար և 100-150 ոչխար ունեցողներ էլ (Ա-Դո, նշվ. աշխ., էջ34-35):

Թարխան բեկը Եղիազարին հրավիրեց «ղոնախ»: Սա քուրդերի տոհմական սովորությունն է: Եղիազարը ընտրեց առողջ և ուժեղ տղաներ, ամեն մեկիս վեց կապ պատրոնդաշ կապել տվեց, գնացինք: Երբ հասանք գյուղի սկիզբը, բեկն իր ղոլամներով[234] եկավ մեզի դիմավորելու և հայ ֆիդայի տեսնալու:

Շատ հետաքրքիր էր, բոլոր գյուղը թափած էին տների տանիքները, որ ֆիդայի տեսնան: Մեծ պատրաստություն էին տեսած, մի մեծ ափսե փլավ և վրան մի կարմրացրած գառ, տարբեր խմելիք, ուտելիք և այլն:

Ըստ քուրդերի սովորության՝ հացից հետո նշան կխփեն, մի լուցկու տուփ տարան, հեռու տանիքի վրա դրեցին: Թարխան բեկը տաճկական հրացանով հինգ հատ կրակեց, մեկը կպավ լուցկուն, Եղիազարն այդ դատարկ փամփուշտները հինգն էլ շարեց այդ լուցկու տուփի տեղը և ծունկի եկավ ու մեկ-մեկ խփեց: Թարխան բեկը կանգնեց և քուրդերեն իր ժողովուրդին ասեց. «Ո՛վ քուրդեր, կհիշե՞ք Տերիկա[235] վանքի կռիվը, որ Սեյդե Նստոն սպանվեց: Քսան ֆիդայի կռվեցին մեր հազարի հետ, ահա ձեր աչքերով տեսեք ֆիդայիներին»:

Մեր երթալու ժամանակը Թարխան բեկը մի կապույտ ձի նվիրեց Ղազարին, և մենք եկանք մեր տեղը, շատ ափսոս էր, որ կարճ տևեց մեր մտերմությունը:

ՆԱՀԱՆՋ

Մի շաբաթ չանցած՝ Թարխան բեկը լուր ղրկեց. «Թուրքերը հարձակված են հայերի վրա: Անդրանիկ փաշեն կռվում է: Զիլանի քուրդերի շեյխը կուզեր հարձակվել ձեր

---

234 **Ղոլամ** - ծառա, սպասավոր, ստրուկ:

235 **Տերիկա** կամ **Դերիկա** վանքը գտնվում էր համանուն գյուղում՝ Վանի նահանգի Շատախի գավառակում, Նորդուզի շրջանում: 20-րդ դարի սկզբին ուներ 16 քուրդ բնակիչ: Հնում հայաբնակ էր և մինչև Մեծ եղեռնը պահպանվել էր գյուղի եկեղեցին (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 90):

վրան, ես արգելեցիմ. խնդրում եմ, քաշվեք Բազիդաղեն, ձեր խումբի մոտ»:

Եղիազարը գնաց Բազիդաղեն՝ Ասլանի մոտ, և մենք էլ Խաչենից քաշվանք Բազիդաղան: Ասլանը կարգադրեց՝ անմիջապես երկու կառք երթա, Վանից մեզի ռազմամթերք բերի: Երկու կառքերը վերցրեցինք, խսխերցի Հարոյի հետ և երկու զինվորներով հասանք Բերկրի, մտանք Թելեֆոնի սենյակը: Մի վանեցի երիտասարդ Թելեֆոնի վրա է և գիծ տվեց, Թելեֆոն զանգահարեց: Թելեֆոնչին ընկալուչը վերցրեց և քիչ անցած խփեց գետին: Մեր հարցին, թե ինչ է պատճառը, լացելով ասաց. «Անդրանիկը խոսեց Վանի Ազգային Խորհուրդի պետ Կոստի Համբարձումյանի հետ, և ասաց. «Զինվորներ չեն կռվում, Էրզրում թողեցինք, Վանի ժողովուրդը քաշիր Երևան, Թուրքերը ձեր ճանապարհը կկտրեն, եթե հրամանս չկատարեք, ես այդ ժողովուրդի արյունը ձեզանից կպահանջեմ»:

Մենք առավոտուն ճանապարհվանք, գիշերը հասանք Վան: Տեսանք, որ Կոստի Համբարձումյանը մերժած է Անդրանիկի հրամանը: Անխտիր զորահավաք է արել, Լևոն Շաղոյանը Ոստանի հրամանատարն է նշանակված, Տիգրան Բաղդասարյանը՝ Բերկրիի և Առնիսի հրամանատար, մենք ամեն ինչ առանք, վերադարձանք:

Հասանք Բերկրի, մեր հարյուրյակը եկավ, որ երթա Առնիս, միացանք մեր հարյուրյակին և գնացինք Առնիս: Թուրքերը մոտիկացեր էին քաղաքին, մեր կռիվը շատ ուժեղ էր: Ծովից նավերը կոմբակոծեին թուրքերի շարքեր: Ծովի թնդանոթաձիգը ճիշտ չէր խփում թուրքերին: Հետո իմացանք, որ կրակողը ռուս բանակի գերմանացի էր: Տիգրան Բաղդասարյանը նրան ծովը կգցի, և ինքը կսկսի ռմբակոծել: Երեք օր կռվելով՝ մենք հասանք Տեր Հուսկան որդու[236]

[236] **Տեր Հուսկան որդի վանքը** (մենաստանը, անապատը) գտնվում էր Վասպուրականի Առբերանի գավառում, Բերկրիի շրջանում, բարձր քառաժայռի վրա: Հայտնի էր նաև Արգելանա Սուրբ Աստվածածին

սարը, դիրքեր բռնեցինք, շատ հաջող էր մեր կռիվը: Մեր գյուղացի Օվանեսը եկավ և շատ վատ լուր ասաց, որ Ոստանը հաղթված է, Լևոնը վիրավորված է, և մենք էլ պիտի նահանջենք: Մենք, սարից կռվելով, հասանք Բերկրի: Ոչ ոք չկա: Քիչ էր մնացել ընկնեինք թուրքերի ձեռքը: Կրկին բարձրացանք սարը, կռվում էինք, տեսանք, որ թուրքերը մտան Բերկրի, և գիծը կտրվեց Վանի հետ: Կոստի Համբարձումյանը չի կրնար գիծը բանալ և Ջուլամերկի ճանապարհով ժողովրդին կտանի Պարսկաստանով դեպի Միջագետք՝ Բաղդադ:

Մենք հասանք Բերկրի կալուն քիչ մոտիկ, Զիլանի քուրդերը հարձակվեցին մեր վրա: Շնորհիվ մեր վարժ լեռնագնացության՝ մենք շուտ հասանք սարի գլուխը, և սկսեց կռիվը: Մի ամբողջ օր մենք կռվեցինք: Քուրդերը քաշվեցին, և մեր ճանապարհը բացվեց: Հասանք Ասլանի մոտ և պատմեցինք՝ ինչ որ լսած էինք Անդրանիկի և Կոստի Համբարձումյանի խոսակցությունից, մեր կռիվը և մեր՝ այստեղ հասնելը: Մեզ Վան ուղարկելուց՝ Ասլանի զինվորներին տասնութ քրդախոս հայեր կհանդիպեն: Մեկը՝ Կիրակոս անունով, հայերեն գիտեր: Նրանք ռուսների թողած ձիերին թաղիքե համետ[237] կշինեին, որից չորս հատը պահած էր մեզի համար: Իմ ձին կարմիր և երիտասարդ էր: Մի նոր թամբ էլ տվեցին իմ ձիուն:

ԲԱՅԱԶԵՏԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ

Մենք ուրախ-ուրախ մեր ձիերին կմաքրեինք, հանկարծ լուր եկավ, որ Բայազետ քաղաքի հայերը պաշարված են

անունով: Մինչև 19-րդ դարի վերջերը կանգուն էր: Եղել է գրչության հայտնի կենտրոն (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 404):

[237] **Համետ** - փալան:

Մակու քաղաքի քուրդերով և տեղացի թուրքերով: Ասլանի վաշտը և մենք երկու գիշեր ու մեկ ցերեկ քայլեցինք, հասանք Բայազետի երկաթուղու փոքր կայարանը: Մեզի դիմավորեց մի ռուս գնդապետ, մեր ձիերի համետները առեց և նոր թամբեր տվեց: Ձիերը թողեցինք, որովհետև Բայազետ քաղաքը սարի լանջին էր: Բաժանվեցինք երեք մասի. Ասլանը՝ ձախ թևը, Օվանեսը՝ աջ թևը, Եղիազարը՝ կենտրոնը: Սկսվեց կռիվը: Երկու օր մենք չկարողացանք առաջ երթալ: Երրորդ օրը Օվանեսը սարի ճամփան կտրեց, և մենք հասանք Բայազետի պատմական բերդի պարսպի տակ, Ասլանը մտավ քաղաք, և քուրդերի թիկունքը գրավեց, իսկ բերդի կռվողները բերդը թողեցին:

Քաղաքը գրավեցինք, իմ կողքին կռվող զինվորը վիրավորվեց: Մեր հիսնապետը՝ ոզմեցի Գրիգորը, մեռավ: Թշնամու օղակում պաշարված Բայազետի հայերի երեք օրվա կռիվը, մինչև մեր հասնելը, կղեկավարեր մի երիտասարդ, որ մակվցի Մեսրոպ էր անունը: Նա իր տղաներով դեպի Մակու փախնող Սարդարի քուրդերի ճանապարհը կտրեց, և մեր գործը հաջողեց: Մենք մտանք բերդը: Բերդի տակ մի շատ լավ աղբյուր կար, ծարավ էինք, խմեցինք և միացանք Ասլանի տղաներին: Այդ կռվին, չնայած անհավասար ուժերին, մեր կորուստն ու վիրավորները չնչին էին: Ըստ այս ցուցակի՝

Բայազետի գրավման զոհերի և վիրավորների ցանկ

		Սպանված	Վիրավոր
Օվանեսի	հարյուրյակ	2	6
Ասլանի	հարյուրյակ	1	8
Եղիազարի	հարյուրյակ	4	10
		7	24

Վիրավորներին հավաքեցինք քաղաքի հիվանդանոցը, որ առաջ թուրքերինն էր: Թուրքերի սպանվածներին Մեսրոպը լցրեց մի թուրքի տուն ու վառեց: Բայազետը ազատված էր: Թուրքերի հրացանները՝ ութսունչորս խառն զենք և քառասուն թուրքական հրացան, բարձեցինք մի սայլի և ուղարկեցինք կայարան՝ գնդապետին: Վաթսուն քուրդ և ութ թուրք, որ գերի էին ընկել, Եղիազարը տարավ հանձնեց գնդապետներին, եկավ պատմեց, որ ռուս գնդապետը շատ շնորհակալ եղավ և ասաց. «Ես կնայեի ձեր կռվին: Այսպիսի կռիվ չէիմ տեսած: Դուք ոչ մի պաշտպանություն չունեիք և հաղթեցիք այս անառիկ բերդին»: Գերիներին կրկին հանձնեց Եղիազարին, թուղթ առավ Եղիազարից: Մենք տասներկու օր մնացինք Բայազետ քաղաքի մեջ: Ժողովուրդը այդ տասներկու օրվան մեջ ինչ-որ կարող էր, քաշեց տարավ Արծափ գյուղը, մենք ևս եկանք Արծափ, մակվցի Մեսրոպը չեկավ: Իր տղաներին հանձնեց Ասլանին: Երկու օրից հետո գնդապետը կհրամայի Ասլանին, որ գերիներ ուղարկի Էջմիածին, հանձնի այնտեղի քաղաքապետին և ստացական բերի: Հիսնապետ Գրիգորի պաշտոնը Ասլանը տվեց ինձի, և ես պիտի գերիներին տանեմ Էջմիածին:

ԿՐԿԻՆ ԻԳԴԻՐՈՒՄ

1918-ի փետրվար չորսին կրկին Իգդիրում էինք: Մենք, գերիներին առաջ գցած, հասանք Կըռխբուլաղի սարերը և սկսեցինք բարձրանալ, հասանք թուրքական սահմանապահի շենքը, հանգիստ առինք: Ասլանը մեզի ճանապարհելուց մի ականջիս ասաց. «Ցրուկ, ճխթիր[238] զմեն», ոզմեցու լեզու է, այսինքն՝ «Տղա՛, ամենը սպանիր»:

[238] Ճխտել (ծածկաբանական)-սպանել:

Մենք քուրդերին լցրեցինք մի տան մեջ և վերջացուցինք, տունը քանդեցինք նրանց վրա:

Էլ չվերադարձանք Արծափ: Ասլանը ասաց՝ կերթաք Օրգով գյուղը՝ Իգդիրին մոտիկ, մենք էլ կուգանք: Մենք բարձրացանք և հասանք սարի գլուխը, որ ռուսական սահման է, արդեն մեր երեսները դարձուցինք դեպի մեր սարերը և մեր պապենական երկիր: Քուրդախոս Կիրակոսը «Հայր մեր» ասեց, և արտասվալից աչքերով վերջին հրաժեշտի մնաս բարին ասացինք, չգիտեինք՝ մեկ էլ ե՞րբ կտեսնանք մեր ազիզ հայրենիքը:

Սարից իջանք Օրգով գյուղը: Մեր գալուց հետո գնդապետին կհանձնեն Կոճա Դավոյին, որ տանի Էջմիածին: Արարատի քուրդերը, կհարձակվեն Դավոյի վրա, գնդապետը շատ ծանր վերք կստանա, և մի տղա ևս կսպանվի: Գնդապետը հասավ Իգդիր և մահացավ: Ես գերիների ստացական բերելուց ազատվեցիմ:

Եկանք մեր զորամասը, գնացինք, հասանք Իգդիր: Ասլանն իր ընտանիքը տարավ Երևան, երկու օրից վերադարձավ և երկու կառք մեզի ուտելիք բերեց:

Շուտով մենք գնացինք Իգդիր-Մավա գյուղը՝ լո՛ւյս հոգի Ավետիս Ահարոնյանի[239] գյուղը: Մեր առաջը երեք թուրքական գյուղ կա, որ միացած են Մասիսի քուրդերին և ժողովուրդին կողոպտում են: Ասլանին թելեֆոնով կանչեցին Իգդիր, գնաց, եկավ և բարի լուր բերավ. Դրո Կանայանը զինվորական նախարար է եղած և հրամայած է այդ երեք գյուղերը մաքրել: Երկրորդ օրը չորս ձիակառք և ութ զինվորով եկան Իգդիր- Մավա: Երկու գնդացիր, թեթև և շատ ռումբեր բերեցին: Նրանց մեծը մի լավ, համակրելի երիտասարդ զինվոր էր: Նրա օգնականը նույնպես շատ լավ զինվոր էր, առաջինին կասեին Վաչագան և կամ Իգդիրցի Վաչո, մյուսին՝ Էվջիլարցի[240] Վաղինակ կամ Վաղո: Գիշերը որոշեցին, թե ինչ պիտի անեն և որտեղից սկսեն:

ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԿՌԻՎՆԵՐԸ

Մեր զինվորները շատ տրամադիր էին և անհամբեր՝ կատարելու համար այդ հրահանգը, որովհետև մինչ այդ մեր բոլոր կռիվները եղած էին մեր շրջաններում: Այդ երեք գյուղերի մաքրելը լինելու էր մեր առաջին կռիվը Արարատյան հողի վրա: Որոշեցին, որ վաղ առավոտուն հարձակվենք:

Այդ գյուղերի դիրքը այսպես էր, Իգդիր-Մավայից դեպի արևմուտք՝ Արարատ սարից սկսած, Բարդուղյաց լեռնաշղթան, որ մեր ձախ թևն է, իսկ աջ կողմը Արաքս գետն է և շատ այգիներ կան: Մենք բաժանվեցինք երեք մասի, Եղիազարը սարերի կողմից, Օվանեսը՝ Արաքսի կողմից, Ասլանը և Վաչեն՝ կենտրոնից: 1918 թվականի մարտի տասին մենք հարձակվեցինք Գուլոք[241] գյուղի վրա: Թուրքերը ե-

---

[239] Հայ նշանավոր գրող և հասարակական գործիչ Ավետիս Ահարոնյանը ծնվել է 1866թ. Սուրմալուի գավառի Իգդիր-Մավա գյուղում: Սովորել է Լոզանի համալսարանի պատմափիլիսոփայության բաժանմունքում (1898-1901): 1907-09 թթ. եղել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տնօրեն: ՀՅԴ անդամ էր: Հայաստանի Հանրապետության Խորհրդարանի նախագահն էր (1919), իբրև հայկական ազգային պատվիրակության անդամ, ապա՝ ղեկավար, մասնակցել է Կ. Պոլսի, Փարիզի, Լոնդոնի, Լոզանի խորհրդաժողովներին ու բանակցություններին, 1920-ին ստորագրել է Սևրի հաշտության պայմանագիրը: 1934-ին Մարսելում, ելույթի ժամանակ, ուղեղի կթված է ստացել և զրկվել գրելու և խոսելու կարողությունից (Ավետիս Ահարոնեանի վերջին ճառը, «Վարագ» պարբերական, Լոս Անջելես, 2007, N 54, էջ 40-44): Մահացել է 1948-ին Փարիզում (ՀՀՀ, հ. 1, էջ 117: Պատմագրութիւն հայ յեղափոխական դաշնակցութեան, հ. Բ, Աթենք, 1991, էջ 456):

[240] Էվջիլար գյուղը գտնվում էր Երևանի նահանգի Սուրմալուի գավառում, Իգդիր քաղաքից մոտ 12 կմ հյուսիս-արևմուտք: 1829-1832 թթ. ուներ 420, 1906 թ.՝ 1690 հայ բնակիչ, կար վարժարան (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 358):

[241] Գուլոք-հավանաբար հեղինակը նկատի ունի Սուրմալուի գավառում, Իգդիրի տեղամասում, Իգդիր քաղաքից 12 կմ հյուսիս-արևմուտք

րեք օր դիմադրեցին: Չորրորդ օրը Ասլանը և Վաչոն որոշեցին, որ Վաղոն իր տղաներով այգիների միջեն հասնեն գյուղի մոտը, և սպասեն մեր տղաների հարձակմանը և ուռա՛ կանչելու ձայնին ձեռնառումբ արձակեն, մտնեն գյուղը, որից հետո Ղազարը սարից իջնի և Օվանեսը այգիների կողմեն հարձակվի: Արշալույսը չբացված՝ մեր «ուռա՛» կանչելով Վաղոյի ռումբերը պայթեցին: Երեք կողմեն մենք մտանք գյուղը: Ոչ մի կին կամ երեխա չէր մնացել, բնակիչները նախօրոք գնացել էին Քուլթոք գյուղը: Ռումբերից և գնդակներից սպանվածներին, Եղիազարի հրահանգով, հավաքեցինք, լցրեցինք ոչխարի գոմերը և գոմը քանդեցինք վրաները: Երկրորդ գյուղը մինչև գիշեր դիմադրեց, բայց չդիմացան, փախան: Բոլորը հավաքված էին վերջի գյուղը՝ Արաբքուլուքը[242]*, որ Կողբ*[243] *քաղաքին մոտիկ է:*

գտնվող Քյուլլուք գյուղը, որը 1906 թ. ուներ 751 թուրք բնակիչ (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 413):

[242] Հեղինակը նկատի ունի Սուրմալուի գավառի **Արաբկիրլու** գյուղը, որը գտնվում էր Իգդիր քաղաքից հյուսիս-արևմուտք, Արաքսի աջ ափին: 20-րդ դարի սկզբին ուներ 102 տուն բնակիչ (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 376):

[243] **Կողբ** գյուղաքաղաքը (քաղաքը) գտնվում էր Երևանի նահանգի Սուրմալուի գավառում, Արաքսի աջակողմյան վտակ Կողբ (հնում՝ Վարդամարդ) գետի ափին, Բարդող լեռան հյուսիսարևելյան ստորոտին: Հնում վկայված է Այրարատ աշխարհի Ճակատք գավառում՝ որպես բազմամարդ, մեծ պաշարներ ունեցող աղահանքերով նշանավոր ավան: 9-11-րդ դդ. եղել է Բագրատունիների արքունի տիրույթը: Ստ. Օրբելյանը հիշատակում է որպես գյուղաքաղաք: Թուրքական տիրապետության շրջանում աղի հանքերի համար անվանվել է նաև Թուզլուջա (Թուզ՝ թուրքերեն նշանակում է աղ): Գտնվելով Հայաստանը իրար մեջ բաժանող տերությունների սահմանագծի վրա Կողբը եղել է պատերազմների թատերաբեմ և ավերվել է: Հնի մոտ կառուցված նոր ավանը, նախկինից տարբերելու համար, երբեմն անվանել են Նոր Կողբ: Վերջինս 19-րդ դարի երկրորդ կեսին ուներ մոտ 1000 տուն և երբեմն կոչվել է քաղաք: 1909 թ. Կողբն ուներ շուրջ 400 տուն՝ 4025 բնակչով, որոնք զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, մասամբ էլ աշխատում էին աղի հանքերում, որոնք անվանվում էին Աղաք: Կողբն ուներ Վերին և Ներքին թաղեր, որոնցում գործում էին (ըստ Ղ. Ալիշանի) Սբ Գևորգ և Սբ Աստվածածին (ըստ այլոց՝ Սբ Խաչ և Սբ Երրորդություն)

Այստեղ անխնա և անխղճորեն թուրքերը բոլոր հայերին կոտորած են, և տիրացած են աղի հսկայական հանքերին: Պարոն Ասլանը որոշեց, որ այս կռվին ուժ տան գնդացիրին և ռումբերին, որ քիչ զոհ տանք: Այս գյուղի մեր կռիվը տևեց հինգ օր: Թուրքերը կփորձեն փախնել Կողբ քաղաքը, տաճիկ թուրքերը չեն ընդունի:

Ճերմակ լաթով մի խումբ՝ երեք մոլլա, հոգևորական և տասը հոգի խառն-խուռն մարդիկ, եկան կռիվը դադարելու բանակցության համար: Մենք ազատ մտանք գյուղը:

Վաղոն թելեֆոնով կապվեց Դրոյի հետ: Դրոն հրամայած էր, որ տարեց մարդիկ, կրոնավորներ և կանայք առանձին ուղարկեն Իգդիր, զինվորացուներ պահեն, որ ինքը գա տեսնի: Այդպես էլ արեցին: Բայց մենք ամեն գիշերը տասից-քսան ջոկում, սպանում էինք: Ասլանը և Ղազարը տեսած էին իրենց ընտանիքի կոտորածը, էլ ո՞վ կթողնի՝ ասոնք սաղ մնան:

Տասներկու օր մնացինք Արաբքուլուք գյուղը, մինչև կանայք հասնեն Իգդիր: Այդ երեք գյուղի ունեցածը հավաքեցին, տարան Էջմիածին:

Դրոն չեկավ Իգդիր: Մի խումբ զինվորներով եկավ Օվանես Օվանեսյան, և մեզի փոխադրեցին Իգդիր: Նրանք գաղթականներին բաժանած էին Իգդիրի շրջանը և չթողեցին, որ մենք նրանց վերջը տայինք: Այդ պատճառ դարձավ, որ Իգդիրի շրջանի թուրքերը ոտքի ելնեն և ապստամբեն: Դրոն կարգադրեց, որ այդ գյուղերը ճնշենք և հնազանդեցնենք: Մեզի համար ուղարկեց չորս ծանր գնդացիր և երկու լեռ-

---

եկեղեցիներն ու վարժարանը (1897թ.): Հարուստ էր հնություններով: 19-րդ դարի վերջերին հին ավանի տեղում երևում էին երեք եկեղեցիների և այլ շենքերի ավերակներ: Ավանի տարածքում և շրջակայքում կային ուխտավայրեր, Եղնիկ Հայրապետի և Սբ Գ. Լուսավորչի անունով մատուռներ, Թուխ Մանուկ և Սբ Գևորգ անունով ուխտատեղիներ: 1921թ. Կարսի պայմանագրով Կողբն անցավ Թուրքիային: Կողբը Եղնիկ Կողբացու (5-րդ դար) ծննդավայրն է (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 196):

նային թնդանոթ: Եկավ մեզի միացավ մեր պաշտելի գնդապետ շատախցի Տիգրան Բաղդասարյան:

ՄԱԼԱՔԼՈՒ[244] ԳՅՈՒՂԻ ԿՌԻՎԸ

Իգդիրից դեպի էջմիածին ճանապարհի վրա մի մեծ գյուղ կա՝ Մալաքլու անունով: Մեր առաջին կռիվը այդ գյուղի վրա եղավ: Երկու օրվա մեջ հաղթվեցին: Մենք կրկին եկանք Իգդիր:

Նոր էինք տեղավորվել: Գիշերը քուրդեր սարից կիջնեն և մարդ կսպանեն: Գնդապետը հրամայեց, որ երթանք, այդ սարը խուզարկենք: Ասլանը մեզի ուղարկեց: Վաչոն իր գնդացիրը տվեց ինձի, մյուս գնդացիրը Վաղոյի ձեռն էր:

Մենք բարձրացանք սարը: Մի փոքր և ավերակ գյուղ տեսանք: Այդ տեղում հալած ձյունից մի փոքր լիճ կար: Մի հրացան կրակեցինք, պատասխան չստացանք: Առաջ անցանք, հասանք գյուղը: Ջուր խմեցինք և տեսանք ոչխարներ եկան՝ ջուր խմելու, հովիվը մեզ տեսնելուն՝ մի հրացան կրակեց, և քիչ հետո ահագին խուժան հարձակվեց մեր վրա:

Անմիջապես հարմար դիրքեր գրավեցինք: Կռիվը սկսվեց: Նրանք շատ զոհ տվեցին, բայց նորից նոր խումբ եկավ, միացավ նրանց և ուժ ստացան: Մի մոլլա, սուրը ճոճելով, «սալավաթ» կանչելով, ընկած էր առաջ, և ամբոխը՝ նրա հետևից: Մեր կռիվը տևեց մինչև արևամուտը:

[244] **Մալաքլու** գյուղը գտնվում էր Երևանի նահանգի Սուրմալուի գավառում, Իգդիր գյուղաքաղաքից 5 կմ հյուսիս-արևելք, Էջմիածին-Բայազետ ճանապարհին: 1829-32 թթ. ուներ 60 տուն, 1911-13 թթ.՝ 272 տուն թուրք բնակիչ: Գյուղի մոտ կար բերդատեղի, որի արձանագրությունները հարևան Ադաթլու և Քյուլլուք գյուղերի թուրքերը ավերակների քարերի հետ տարել-ոչնչացրել են, օգտագործել են որպես շինանյութ (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 640):

Մենք, փամփուշտ խնայելով, կկրակենք: Նրանք, միանգամից վազելով և մոլլան էլ առաջից, հասան հարյուր քայլի վրա, բայց մեր գնդացիրները հնձեցին նրանց: Սաղ մնացածները փախան: Դիրքերից դուրս եկանք և հարձակվեցինք, հետապնդեցինք նրանց մինչև սարի հարավային կողմը՝ Արծափ գյուղը: Հավաքեցինք նրանց սպանվածների զենքերը՝ վաթսունը ծուխավոր էր և տասնութը տաճկական էր, բերինք Իգդիրում հանձնեցինք Ասլանին:

ՀԱՋԻԼԱՐ[245] ԳՅՈՒՂԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Իգդիրից դեպի էջմիածին շատ լավ խճուղի էր շինված, բայց Արաքսի կամուրջին չհասած՝ մի մեծ քար չեն պայթեցուցած, այլ ծակած են, և անունը մնացել է Ծակ քար: Այդ քարից մի քիչ հեռու թուրքական ապստամբ գյուղերն են:

Հրաման եկավ Դրոյից, որ մաքրենք այդ գյուղերը: Առաջին գյուղը Հաջիլարն էր, որ խճուղու աջ ձեռքի վրա է և կպած է Արարատ սարին:

Գիշերը զինվորական խորհուրդ արեցին և որոշվեց՝ գնդապետ Տիգրան Բաղդասարյանը հսկիչ լինի թնդանոթների վրա, Վաչոն՝ գնդացիրների, իսկ Վաղոն լինի մեզի ճանապարհ ցուցնողը:

[245] **Հաջիլար** անունով գյուղ Սուրմալուի գավառում, ըստ Հայաստանի պատմության պետական արխիվում պահվող Սուրմալուի գավառի բնակավայրերի ցուցակի՝ չի եղել, ըստ երևույթին, հեղինակը շփոթում է գյուղի անունը (տե՛ս Սուրմալու-Իգդիր, պատմական քառուղիներում, էջ 183-186): Եղել է Հաջիաղա անունով գյուղ, որն ունեցել է Սբ Ստեփանոս անունով եկեղեցի (նույն տեղում, էջ 179): Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների հինգհատորյա բառարանը ևս Սուրմալուի գավառում Հաջիլար անունով գյուղ չի հիշատակում: Չի բացառվում, որ խոսքը Սուրմալուի գավառի Արհաջի գյուղի մասին է, որը 1906 թ. ուներ 2028 բնակիչ (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 457):

Հարձակման ծրագիրը այսպես որոշվեց, Եղիազարին և Օվանեսին ընկավ սարի լանջերով դեպի Դաշբուռուն[246] հայկական գյուղը, որ թուրքերը հայերին ջարդած և գրաված էին: Վաղոն մեր ուղեցույցն էր, վանեցի Ֆիլիպ Կորկոտյանը իր վաշտով Արաքսի ափերով պիտի անցեր, Ասլանը՝ մեջտեղով:

Հարձակումը սկսվեց, թուրքերը այգիների մեջն են: Ձեն տեսնվի, գործի ծանրությունը մեր վրա ընկավ, որ սարի ստորոտով առաջանանք: Մեր առաջխաղացումը հաջողացրին Վաչոյի գնդացիրները, նրանք հրաշք գործեցին: Մենք, առանց զոհ տալու, մտանք գյուղը: Թուրքերը խուճապի մատնվան և փախան: Գնդապետը հրամայեց դադար չառնել և հետապնդել:

ԴԱՇԲՈՒՌՈՒՆ ԳՅՈՒՂԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Վեց օրվան մեջ այդ հինգ գյուղերը մաքրվեցին, հասանք Դաշբուռուն: Այդ գյուղը ամենաբարձր գյուղն է Արարատ սարի լանջին: Միայն նրանից բարձր մի վանք կա, որ Ակռռի Սուրբ Հակոբա վանքն է:

Դաշբուռուն գյուղի առաջ մի մեծ առու կա՝ ընկույզի և փշատի խիտ ծառերով, որ թուրքերը մեջը լավ դիրքավորված են:

Մեր երկու հարձակումները հետ տվեցին, և մեզնից վեցը վիրավորվեց: Մեկը շատ ծանր էր:

[246] **Դաշբուռուն** գյուղը գտնվում էր Երևանի նահանգի Սուրմալուի գավառում, Արարատի հյուսիսային լանջին: Հնագույն ժամանակներում այդտեղ էր Մենուախինիլի բերդաքաղաքը, իսկ միջին դարերում՝ Ցոլակերտ բերդավանը: 1906թ. ուներ 2400 հայ բնակիչ, որոնք զբաղվում էին երկրագործությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ: Դաշբուռունում կար եկեղեցի և վարժարան: Գյուղի մոտ կային տարբեր հնավայրեր, հայտնաբերվել են մի քանի սեպագիր արձանագրություններ: Թուրքական հարձակման հետևանքով 1920թ. բնակիչները լքել են իրենց գյուղը և տեղափոխվել Արաքսի հյուսիսային ափ, բնակություն հաստատել Հայաստանի տարբեր վայրերում (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 28):

Գնդապետը հրամայեց, որ թնդանոթները ոմբակոծեն և զինվորները առաջանան: Թնդանոթաձիգը հրաժարվեց գյուղը ոմբակոծելու՝ առանց Դրոյի հրամանի: Գնդապետ կնստի թնդանոթի վրա և ինքը կոմբակոծի:

Գյուղի պաշտպանությունը նահանջեց, և մենք մտանք գյուղը: Այս բարձր գյուղից հանգիստ կտեսնանք Երևանը, Էջմիածինը, Արտաշատը, բայց Դաշբուռուն գյուղի տակը՝ բաց դաշտի մեջ, կա մի գյուղ՝ Դիզա[247] անունով՝ խիտ-խիտ այգիներով և լցված փախստական թուրքերով, և մի վաշտ՝ տակտիկ զինվորներով, որ Փոքր Մասիսի կողմեն օգնության էին եկած: Պետք է լավ կազմակերպած և լավ զինված լինենք, որ մեզի չկոտորեն: Նստան խորհրդի: Որոշեցին Դրոյին խնդրեն, որ թնդանոթները հետ ուղարկի, որովհետև մեր զինվորները տեղին անծանոթ են և շատ զոհ կտանք:

ԴԻԶԱ ԳՅՈՒՂԻ ԿՌԻՎԸ

Գնդապետը նամակ գրեց և Դիզայի գյուղը նկարեց, տվեց մեզի: Իգդիրցի Արտաշեսը, տիգրանակերտցի Կարոն և ես նամակը գիշերով հասցրինք Իգդիր՝ Դրոյի տունը, պահակը գնաց՝ լուր տալու: Դրոն քնած չէր, ինքը եկավ նամակ առավ, գնաց և պատասխանը գրեց, բերեց, տվեց մեզի, կեսգիշեր էր, մենք նամակը տվեցինք գնդապետին: Ասլանը մեզի այսպես ասաց, որ Դրոն գրած է՝ «Դու արշալույսին զինվորներ առաջացուր, թնդանոթները արև չծագած, Դաշբուռունից կոմբակոծեն Դիզա գյուղը»:

[247] **Դիզան** գտնվում էր Սուրմալու գավառակում, Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղու Ուլուխանլու (Մասիս) կայարանից մոտ 10կմ հարավ-արևմուտք՝ Արաքսի աջ կողմում: 1911-1913թթ. ուներ 16 տուն՝ 129 քուրդ բնակիչ, ըստ այլ տեղեկությունների՝ բնակիչները եղել են թուրք (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 105):

Մեզ մոտ Ամերիկայից տասնութ հոգի կամավոր եկած էին: Նրանց մեծն էր յոթանասուն տարեկան խարբերդցի Գաբրիել Առաքելյանը: Նրա օգնականն էր երիտասարդ Մարգարը: Շատ ուրախ տղաներ էին:

Մենք արշալույսին առաջացանք, հասանք գյուղի այգիներին:

Թուրքերը Արաքս գետից մեծ ջուր բացած էին մեր ճանապարհի վրա: Արև ծագեց, թնդանոթ չկա: Գնդապետը հրամայեց՝ ձիավորները աջից և ձախից հարձակվեն, իսկ հետևակը՝ մեջտեղից: Թուրքերը մեզի առին գնդակի տարափի տակ: Հետևակը մինչև ծունկը կմտնի ցեխի և ջուրի մեջ: Շատ զոհ տալով՝ առաջ կերթան մեր ձիավոր հարյուրյակը և Օվանեսի զինվորները: Փախչող ժողովրդի ճանապարհը կտրեցինք, ութսուն սայլեր՝ բեռնած եզներին, և ժողովրդով գերի մնացին:

Այս լսելով՝ խուճապ ընկավ, և թուրքերը գյուղը լքեցին: Հետևակը մտավ գյուղ, և սկսվեց տունից-տուն կռիվը: Ոչ մի ճանապարհ չունեին փախնելու. մենք ճամփան կտրած ենք: Արաքս գետը գյուղի կողքից կանցնի: Ով որ չի ուզի հանձնվի, իրեն կգցի Արաքսը:

Այստեղ մի ցավալի դեպք պատահեց, Գաբրիել Առաքելյանը միշտ գնդապետի մոտ էր: Մեր հարձակումի ժամանակ սուրը կքաշի և կընկնի թուրքի մեջ, աջից և ձախից սրատելով՝ ինքն էլ կսպանվի: Այդ շատ մեծ վիշտ պատճառեց բոլորիս:

Գյուղը մաքրեցինք, բայց այգիների մեջ մի մեծ շենք կա, բուրգի ձև է: Այնտեղից մեզի կխփեն, որոշեցին ռումբով պայթեցնել: Ինձի և քրդախոս Կարոյին ուղարկեցին, որ ռումբ գցենք: Գնացինք, բուրգի մեջտեղը կլոր է, հետ քաշվենք կզարնեն, առաջն էլ չենք տեսնա:

Մենք լուր ղրկեցինք Եղիազարին, որ չենք կարող հետ քաշվել, որ ռումբ գցենք: Ասացինք, որ թող նրանք այդ այգու պատը բռնեն և կրակեն բուրգի պատուհանին: Իսկ

մենք կկարողանանք հետ քաշվել և ռումբ գցել: Օվանեսը կուգա, այգու պատը կբռնի և անընդհատ կխփի բուրգի պատուհանին:

Մեզի հաջողվեց հետ քաշվել և ռումբ գցել, ռումբի մեկը անցավ ներս և պայթեց: Տանիքը փլավ, ինը տաճիկ զինվորական և մի կին հանձնվեցին: Կինը գնաց, իրեն գցեց Արաքս գետի մեջ: Այդ ինը տաճիկներին տարանք, հանձնեցինք գնդապետ Տիգրանին:

Մենք Դիզայի կռվին ունեցանք տասնութ սպանված և քառասունհինգ վիրավոր: Տասներկու օր մնացինք Դիզա գյուղը: Շուտով Իգդիրից մի վաշտ զինվոր եկավ՝ ստանձնելու գյուղի հարստությունը: Բացի փախած բնակչության շարժական և անշարժ հարստությունից՝ Դիզայի մեջ կար նաև բամբակի երկու գործարան:

ԴԱՎԱԼՈՒԻ[248] ԿՌԻՎԸ

Մենք հասանք Արաքսի ափի Մարգարա[249] գյուղը և այդտեղից շարժվեցինք դեպի Էջմիածին: Ոչ ոք չգիտի մեր վի-

---

[248] **Դավալու**-1935թ-ից՝ Արարատ: Արարատ քաղաքը գտնվում է Արարատի մարզում՝ Երևան-Նախիջևան ճանապարհի վրա: Նախկինում մտնում էր Երևանի նահանգի Երևանի գավառի մեջ: Արարատը թաղված է այգիների մեջ և գրավում է ընդարձակ տարածություն: 1831թ. ուներ 661, 1873-ին՝ 2176, 1897-ին՝3367, 1926-ին՝ 1894, 1939-ին՝ 2515, 1959-ին՝ 4240, 1970-ին՝ 5625, 1979-ին՝ 6227 բնակիչ, որոնց նախնիների մի մասն այստեղ է գաղթել Պարսկահայաստանի Մակու գավառից և Սալմաստ գավառի Ասլանիկ, Դիրիչկ (Դրիչկ), Զևաջուկ գյուղերից 1828-29թթ.: Արարատում գործում է գինու գործարան, որը հիմնադրել է Շուստովը 1906թ.: Այն ավերվել և կողոպտվել է թուրքական զորքերի կողմից 1918-ին: Վերականգնվել է 1925թ-ին: Արարատում առաջին դպրոցը հիմնադրվել է 1893թ. (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 395):

[249] **Մարգարա** գյուղը գտնվում է Արմավիրի մարզում: 1897թ. ուներ 1092, 1926թ.՝ 843, 1979թ.՝ 1174 բնակիչ: Գյուղի մոտ է գտնվում Արաքսի գլխավոր կամուրջներից մեկը՝ Մարգարայի կամուրջը: Գյուղի բնակչության նախնիների մեծ մասը եկել է Մուշից, Իգդիրից,

ճակը, նույնիսկ հարյուրապետները: Հասանք Վասպուրականի «Ննջեցելոց թումբերի» առաջ, «Հայր մեր» ասացինք, աղոթեցինք: Հասանք Էջմիածին: Երկաթուղով հետևակը տարան Ղամարլու[250] գյուղը, իսկ մենք՝ ձիավոր, ճանապարհով գնացինք, միացանք Ղամարլու գյուղում գտնվող մեր բանակին: Գնդապետ Տիգրանը գնացած էր Երևան՝ բողոքելու կառավարությանը Դրոյի դեմ, որ նա խոստացած թնդանոթը չուղարկեց, որի պատճառով մենք այսքան զոհ տվեցինք: Դրոն կմերժի դատարան երթալ: Շուտով գնդապետը եկավ և մեզի փոխադրեց Յուվա[251] գյուղը, որ մոտիկ է Խորվիրապին:

Պարսկահայքից՝ 1828-1831թթ.: Ենթադրվում է, որ Մարգարան Հ. Դրասխանակերտցու հիշատակած Վարդանակերտ ավանն է, որի մոտ 703թ. տեղի է ունեցել ճակատամարտ, որում հայկական զորքերը հաղթել են արաբներին (ՀՀՇՏԲ, հ.3, էջ 725):

[250] **Ղամարլու**-1945թ-ից՝ Արտաշատ, ի հիշատակ մ.թ.ա. 189 թ-ին Արտաշես Առաջինի հիմնած Արտաշատ մայրաքաղաքի, որի ավերակները սփռված են մինչև Խոր վիրապ, որտեղ նախկին մայրաքաղաքի միջնաբերդն էր: Արտաշատն ունեցել է միասնական հատակագիծ և եղել է ժամանակի խոշորագույն և գեղեցկագույն քաղաքներից: Այնտեղով էր անցնում միջազգային առևտրական ուղիներից մեկը: Զարգացած էին առևտուրն ու արհեստները, քաղաքում տեղադրված էին արձաններ, տրվում էին թատերական ներկայացումներ: Չորրորդ դարում՝ Դվինի հիմնադրումից հետո, Արտաշատը գիջում է իր դիրքերը, իսկ պարսից Շապուհ արքան 368-369 թթ. արշավելով Հայաստան ավերում է Արտաշատն ու բազմաթիվ այլ քաղաքներ ու բերդեր: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու ժամանակ Ղամարլուն ամայի ու անմարդաբնակ էր: Այնտեղ նոր գյուղ հիմնադրեցին 1828-1829 թթ. Իրանից՝ Խոյից ու Սալմաստից ներգաղթած հայերը: 1897-ին այն ուներ 833, 1926-ին՝ 2555, 1939-ին՝ 4148 բնակիչ: 1920-30-ական թթ. Ղամարլուն մտնում էր Երևանի գավառի մեջ, իսկ 1930 թ. կազմվեց Ղամարլուի շրջան համանուն կենտրոնով: 1995-ից Արտաշատ քաղաքը Արարատի մարզի կենտրոնն է (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 494-496: Վարդանյան Ս., Հայաստանի մայրաքաղաքները, էջ 65-71):

[251] **Յուվա** (այժմ՝ **Շահումյան**) գյուղը գտնվում է Արտաշատ քաղաքից 2-3 կմ հարավ-արևելք, Երևան-Նախիջևան ավտոմայրուղու ձախ կողմում, հարթավայրում: Յուվան Շահումյան է վերանվանվել1950թ.: 1831-ին ուներ 253, 1897-ին՝ 1979, 1926-ին՝ 1804, 1939-ին՝ 2147, 1959-ին՝ 2886, 1970-ին՝ 3323, 1979-ին՝ 3539, 1989-ին՝ 4131 հայ բնակիչ, որոնց մի մասի նախնիները եկել էին Խոյի շրջանից՝ 1828-29թթ. ներգաղթի ժամանակ: Զբաղվում են խաղողագործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ: Ունի եկեղեցի՝ կառուցված 19-րդ դարում: Գյուղը հայտնի է խեցեղենի արտադրանքով: 1995թ-ից մտնում է ՀՀ Արարատի մարզի մեջ (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 61):

Այս փոփոխության պատճառը այն է, որ այդ շրջանի հինգ թուրքական գյուղեր ապստամբած են: Հրամայած են, որ Վանի գունդը երթա, նրանց հնազանդեցնի: Գիշերը խորհրդի նստան, գնդապետը և խմբապետները որոշեցին, թե ինչպես են կռվելու, գիծը բաժանեցին երեք մասի: Մինչև Դավալու հայկական գյուղը, շուրջբոլորը այգեստան է:

Օվանեսը և Ղազարը պիտի կռվեն Խոր վիրապի բլուրից և Քուչուք Վեդի[252] գյուղից մինչև Դավալու: Գնդապետը և Ասլանը պիտի ճեղքեն խճուղու վրայի Զիդամլու[253], Ավշար[254] և Ջաղկռան[255] գյուղերը: Ֆիլիպ Կորկոտյանը Կարմիր սարի

[252] **Քուչուք Վեդի-Վեդի Փոքր**, գյուղ ՀՀ Արարատի մարզում, Երևան-Արարատ ավտոմայրուղուց աջ, արգավանդ ու բարեբեր հարթավայրում: 1831թ ուներ 166, 1897-ին՝ 971, 1926-ին՝ 527, 1939-ին՝ 823, 1959-ին՝ 1395, 1970-ին՝ 2495, 1979-ին՝ 2853, 1989-ին՝ 3246, որոնց մի մասի նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Բալու և Մոկս գավառակներից, մի մասն էլ եկել է Իրանից 1946թ.: Գյուղից փոքր ինչ հարավ-արևմուտք գտնվում է Խոր վիրապի վանքը: Գյուղի մերձակա հանդամասերը հնում մտել են Արտաշատ մայրաքաղաքի տարածքի մեջ: 1988-89թթ. Ադրբեջանում ծավալված հայկական կոտորածների հետևանքով այստեղ են բռնագաղթել շուրջ 670 հայեր (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 795):

[253] **Զիդամլու** (1945թ-ից՝ Ազատավան)-գյուղ Արարատի մարզի Արտաշատի շրջանում, Երևան-Երասխ խճուղու վրա, շրջկենտրոնից 5կմ հյուսիս-արևմուտք: Նախկինում մտնում էր Երևանի գավառի մեջ: Բնակիչների նախնիները 1828-29թթ. եկել են Սալմաստի շրջանից (ՀՀՇՏԲ, հ.3, էջ 594):

[254] **Ավշար (Քյալ բալավան)** գյուղը գտնվում է Երևան–Նախիջևան մայրուղու վրա, Արարատ քաղաքին կից: 1831թ. ուներ 80, 1897-ին՝ 1166, 1926-ին՝ 857, 1939-ին՝ 1359, 1959-ին՝ 2543, 1970-ին՝ 3646, 1979-ին՝ 3877 հայ բնակիչ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Ավշարում բնակություն են հաստատել Վանից, Շատախից, իսկ 1930-ական թթ.՝ Մարտունու, Սիսիանի, Սևանի, Վարդենիսի շրջաններից եկած շատ վերաբնակիչներ, որոնք զբաղվում են խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, անասնապահությամբ, շերամապահությամբ և բանջարաբուծությամբ (ՀՀՇՏԲ, հ.1, էջ 366):

[255] **Ջաղկռան** (**Ճաթղռան Կարաչորլու, Ղարաչուղլու**)-գյուղ Արարատի մարզում, Շիրազլու գյուղից հարավ-արևմուտք: 1831թ. ուներ 140, 1897թ. 432, 1926թ.՝ 360, 1931.թ՝ 434 բնակիչ: 1930-ական թթ. ապաբնակեցվել է:

գծով պիտի հասնի Ռեհանլու[256] հայկական գյուղը, որ թուրքերը գրաված են, և այսպիսով՝ երեք գիծով պիտի հասնենք Դավալու հայկական գյուղը, որ պաշարված է և կռվում է:

Մենք ունեինք չորս հատ ձեռքի գնդացիր: Երկուսը՝ մեր վաշտինն է և երկուսը՝ Ֆիլիպի վաշտինը: Իսկ երկու մեծ գնդացիրը՝ «Մաքսիմ» տեսակի, Ասլանի և գնդապետի մոտն էր:

Կռիվը սկսեց առավոտ շատ շուտ: Մեր գիծը շատ դժվար էր: Թուրքերը բռնած էին Խոր վիրապի եկեղեցու բլուրը, և մենք բաց դաշտով պիտի երթայինք գրավելու այն: Մեզ հետ կար տասը զինվոր Յուվա գյուղից: Նրանք թե՛ ծանոթ էին այդ տեղերին, և թե՛ շատ վրեժխնդիր էին թուրքերից, որովհետև թուրքերն իրենց գյուղերը քարուքանդ էին արել և ընտանիքները պղծել:

Նրանցից մի հիսնյակ զինվոր Օվանեսի հետ կերթան և Աբաքս գետի կողմից կհարձակվեն Քուչուք Վեդի գյուղի վրա: Բլուրի թուրք կռվողներն անակնկալի կուգան և զոհ տալով՝ հիսունչորս հոգի անձնատուր կլինեն: Մեր առաջխաղացումը հաջող անցավ: Մենք, որ աջ թևն էինք, ավշար գյուղը պաշարեցինք: Ասլանի և գնդապետի գործը հաջողվեց:

Այս չորս օրվա կռվից հետո հասանք Դավալու գյուղը, և մեզի դիմավորեց մի պատկառելի մարդ՝ լրիվ զինված, մաուզերը կողքին՝ Լևոն բեկ[257] անունով իր թիկնապահ ֆելդֆեբել[258] Հովհաննեսի հետ միասին: Այս քաջ և անձնվեր մարդը ութ օր իր փոքրիկ խմբով կդիմադրի հինգ գյուղի թուրքերի: Օվանեսն իր բռնած գերիներին կսպանի և նրանց զենքերը կհանձնի Յուվայի տղաներին:

Այս փառավոր հաղթանակին շնորհավորելու եկավ գեներալ Արարատյանը[259] իր համհարզով և մեր գնդապետին

---

[256] **Ռեհանլու** (այժմ՝ **Այգավան**) գյուղը գտնվում է Արարատի շրջանում, Երևան-Նախիջևան երկաթուղու ձախ կողմում: 1873թ. ուներ 206, 1914-ին՝ 467, 1931-ին՝ 594, 1959-ին՝ 1992, 1979-ին՝ 3103 բնակիչ: Ռեհանլուն հիմնադրվել է 1828թ. և Այգավան է վերանվանվել 1946թ.: Այգավանում հայտնաբերվել են մ.թ.ա. 10-8-րդ դարերի զանազան հնություններ՝ կավե ամաններ, հնագույն բնակավայրի մնացորդներ և այլն (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 226):

[257] Հավանաբար խոսքը շտաբս-կապիտան **Լևոն բեկ Մելիք-Ավալյանի** մասին է: Նա ծնվել է 1879թ. Տավուշի Բերդ գյուղում (այժմ՝ քաղաքատիպ ավան): Տեղում տարրական կրթություն ստանալուց հետո սովորել է Թիֆլիսում՝ ռուսական գիմնազիայում և Ներսիսյան դպրոցում: 16-17 տարեկան հասակում, ամառային արձակուրդին, երբ նա Բերդում էր, ադրբեջանցի ավազակները գողանում են նրանց անասունները, 15-20 ընկերների հետ զինված հարձակվում է, սպանում ավազակապետին և վերադարձնում մեծաքանակ ավարը: Այդ միջադեպի մասին իմանում են նահանգապետը և գավառապետը և Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո նրան առաջարկում են աշխատել Թովուզ երկաթուղային կայարանի և հարակից գյուղերի ոստիկանապետ (պրիստավ): Այդ պաշտոնում նա կարգուկանոն է հաստատում, անխնա ոչնչացնում ավազակներին ու թալանչիներին, այդ թվում՝ ադրբեջանցիների կողմից գովերգվող և հերոսացվող ղաչաղ Նաբիին: 1918-20թթ. նա որպես շտաբս-կապիտան ակտիվորեն մասնակցում է բազմաթիվ ռազմական գործողությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության հյուսիսային և հյուսիսարևելյան սահմանների պաշտպանությանը: Լևոն բեկի մասին ժողովուրդը երգեր և լեգենդներ է հյուսել, համեմատել Անդրանիկի հետ: Հայաստանի խորհրդայնացումից հետո, հատկապես կոլեկտիվացման տարիներին, երբ շատերին աքսորում էին, Լևոն բեկը տեղափոխվում է Թիֆլիս, Կրասնոդարի երկրամասի Հայաշատ Արմավիր քաղաք, այնուհետև աշխատանքի է անցնում Ռոստովի մարզում: Երկրորդ համաշխարհայինի տարիներին, ռմբակոծության ժամանակ վիրավորվում է, երկար ժամանակ բուժվում հիվանդանոցում՝ այդպիսով մնում գերմանացիների գրավյալ տարածքում: Նա համագործակցելով Դրոյի, գնդապետ Տիգրան Բաղդասարյանի և ուրիշների հետ բազմաթիվ հայ ռազմագերիների է փրկում համակենտրոնացման ճամբարներից: Պատերազմի ավարտից հետո նա Շտուտգարդից մեկնում է ԱՄՆ՝ բնակություն հաստատում Լոս Անջելեսում: Բայց հայրենիքի կարոտը նրան ու կնոջը հանգիստ չէր տալիս, և նա խնդրում է Վիկտոր Համբարձումյանին միջնորդել հայրենիք այցելելու թույլտվության համար: Աշխարհահռչակ գիտնականը չի մերժում, քանի որ 1920թ. Լևոն բեկը Նոր Բայազետ գավառում փրկել էր Ներսիսյան դպրոցի իր ընկեր Համազասպ Համբարձումյանի և նրա 12-ամյա որդու՝ Վիկտոր Համբարձումյանի կյանքը: 1960թ. Բերդ է գալիս Լևոն բեկի կինը՝ Օլգա Սարգսյանը, բայց այնտեղ մահանում է: 1962-ին կնոջ գերեզմանին այցի է գալիս Լևոն բեկը և ինքն էլ անսպասելի վախճանվում և թաղվում կնոջ մոտ՝ Բերդում (Մելյան Բ., Լևոն Բեկ, Երևան, 1999: Դալլաքյան Ղ., Հոկտեմբերի արևը Շամշադինում, Երևան, 1969, էջ 32, 61, 110: Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը (անհայտ գրողի օրագիրը), ձեռագիրը հայտնաբերեց և հրատարակման պատրաստեց Ս. Հարությունյանը, Երևան, 1993, էջ 39):

[258] **Ֆելդֆեբել**-ենթասպա, վաշտապետի օգնական՝ տնտեսական և ներքին կարգուկանոնի գծով, զինվորական վերակացու:

[259] **Քրիստափոր Արարատյան (Արարատով)**-ռազմական գործիչ, գեներալ-մայոր: Ծնվել է 1876թ. Նալչիկում: Ավարտել է Թիֆլիսի կադետական կորպուսը (1892), Պետերբուրգի Միխայլովյան հրետանային ուսում-

տվեց գնդապետի նշան, բայց ուսադիրները ստանալու համար գնդապետը ինքը պիտի երթար Թիֆլիս, քննություն տար, որ ուսադիր ստանար:

ՎՐԵԺԽՆԴԻՐ ՔԱՋ ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԸ

Դավալուից դեպի Նախիջևան մի ճանապարհ կա, շիտակ դաշտերով դեպի Սադարակ[260]՝ մեծ թուրքական գյուղ է: Այդ գյուղի դիմաց մի բլուր կա, որ թուրքերը բռնած են:

Դրոն մեզի հրամայեց, որ Սադարակը գրավենք:

Գնդապետ Տիգրան Բաղդասարյանը և գեներալ Արարատյանը նկատեցին, որ այդ հարձակումը շատ վտանգավոր է, ուստի պետք էր դիմեին սասունցիներին, որ Զընիդարայի թուրքական շրջանները մաքրելով՝ այժմ հասած էին

նարանը (1896), Ցարսկոյե սելոյի սպայական դպրոցը (1914), Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիային կից բարձրագույն հրամկազմի կատարելագործման դասընթացները (1926): Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին: 1918թ. Հայկական առանձին կորպուսի հրետանային բրիգադի հրամանատարն էր, մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին: 1919թ.-ի մարտին ստացել է հրետանու գեներալ-մայորի կոչում, նշանակվել է Հայաստանի Հանրապետության ռազմ. նախարար (մինչև 1920թ. ապրիլը): Մասնակցել է 1920-ի Թուրքիայի դեմ պատերազմին, գերի է ընկել Կարսի գրավման ժամանակ (հոկտեմբեր): Ազատվել է խորհրդային կառավարության միջնորդությամբ և 1921թ. վերադարձել Հայաստան: 1923-25-ին նշանակվել է Հայկական հրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ, ապա ղեկավարել է ԵՊՀ-ի և Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի ռազմագիտության ամբիոնները: 1937 թ. անհիմն բռնադատվել է և գնդակահարվել, ապա հետմահու արդարացվել (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 53: ՀՀՀ, հ. 1, էջ 343: Տե՛ս նաև Կարապետյան Մ., Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920), Երևան, 1996, էջ 30, 63):

[260] **Սադարակ** գյուղը գտնվում է Ադրբեջանի կազմում գտնվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում, Երևան-Նախիջևան ավտոմայրուղու վրա: 1873թ. ուներ 2874, 1906թ.՝ 4100, 1970թ.՝ 6690 բնակիչ (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 459):

Միլլիդարայի[261] բազմամարդ գյուղերին և տեղադրվել էին Կարախաչ[262] ու Զնջուլու[263] գյուղերի մեջ:

Որոշեցին նամակ գրել սասունցիների հրամանատար Մանուկին և հին ֆիդայի Զոլոյին[264], որ նրանք սարերից իջնեն Սադարակի վրա, մերոնք կարողանան բաց դաշտից հարձակվել:

---

[261] **Միլլիդարա-գյուղ** Երևանի նահանգի Երևանի գավառում՝ Գառնիբասարի ոստիկանական շրջանում (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 819):

[262] **Կարախաչ-գյուղ** Արարատի մարզում, 1978թ. վերանվանվել է Լուսաչող: Շրջապատված է ոչ բարձր, կանաչապատ լեռներով: 1831թ. ուներ 94, 1897թ.՝ 105, 1926թ.՝ 289, 1939թ.՝ 598, 1959թ.՝ 371, 1970թ.՝ 432, 1979թ.՝ 419 բնակիչ, որոնց մի մասը երկվորներ են՝ Մարտունու շրջանի Քարվանսարա և Եղեգնաձորի շրջանի Գնիշիկ, Ենգիջա, Խաչիկ գյուղերից: Այստեղ է գտնվում Հովհաննես-Կարապետի վանքը (եկեղեցին՝ Սբ Աստվածածին)՝ կառուցված 1254թ.: Շրջակայքում կան եկեղեցու ավերակներ, գերեզմաններ, խաչքարեր (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 609):

[263] **Զնջուլու** գյուղը գտնվում էր Արարատի մարզում, Վեդի-Լուսաչող ճանապարհի աջ կողմում, Ուրծի լեռների հյուսիսային փեշերին: 1873թ. ուներ 707, 1897-ին՝ 1587, 1914-ին՝ 2652, 1926-ին՝ 30, 1939-ին՝ 196 բնակիչ. զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ: 1955-1956թթ. Զնջուլուն լքվել է, նրա բնակիչները տեղափոխվել և բնակություն են հաստատել մարզի Արմաշ և Սուրենավան գյուղերում: Գյուղի հյուսիսարևմտյան կողմում է գտնվում Սբ Կարապետ վանքը (կոչվում է նաև Հովհաննես Մկրտչի կամ Հովհաննես Կարապետի վանք)՝ կառուցված 1254 թ.: Գյուղի մոտակայքում նշմարվում են ավելի հին բնակավայրերի հետքեր ու տների ավերակներ (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 312):

[264] **Զոլո** (Աբրահամյան Հարություն), ծնվ. 1878թ. Սասունի Շենիկ գյուղում, մահացել է 1937թ.: Ազգային-ազատագրական շարժման գործիչ է, ֆիդայի, ՀՅԴ կուսակցության անդամ: 1898թ. գործել է Սպաղանաց Մակարի (Տոնոյան) ֆիդայական խմբում, մասնակցել է 1899թ. Սպաղանքի, 1904թ. և 1915թ.՝ Սասունի ինքնապաշտպանական մարտերին: 1916թ., երբ ռուսական զորքերը գրավել են Մուշը, դարձել է կամավորական ջոկատի մարտիկ, գործել Մշո դաշտում, Խնուսում, Ալաշկերտում: Աչքի է ընկել Թալինի բերդի գրավման ժամանակ: 1921թ. Փետրվարյան ապստամբության օրերին եղել է Էջմիածին շարժվող զինված ուժերի կազմում, այնուհետև անցել է Զանգեզուր, այնտեղից Պարսկաստան, Սիրիա, Հունաստան, 1927թ. Մորուք Կարոյի հետ վերադարձել է Հայաստան (Թալին): Ձերբակալվել է, ինը տարի բանտում անցկացնելուց հետո 1936թ. հիվանդ վիճակում ազատվել է բանտից և շուտով մահացել (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 374-375: Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Գ, էջ 438-439):

Նամակը կնքեցին գեներալ Արարատյանը ու գնդապետ Տիգրանը, և նամակ տանողները վեց հոգի ենք՝ երկուսը ֆեդֆեբել Օվանես դավալեցին և իր ընկերը, իսկ չորսը մեր հարյուրյակից էին: Գնացինք հասանք Բիրալի[265] գյուղի սարը, և թուրքերը մեզի կապեցին գնդակի: Իմ և Զահրի ձիերը սպանվեցին: Մենք գիշերով հասանք Բիրալի գյուղը: Այնտեղ էր սասունցի Պետրոս անունով հիսնապետը, մեզի երկու ձի տվեց և մի զինվոր, որ ճանապարհ ցույց տա մինչև Կարախաչ:

Մենք հասանք Կարախաչ և նամակը տվեցինք հրամանատար Մանուկին: Ասաց. «Ձեր ճանապարհը կտրված է: Մնացեք մեզի մոտ»: Մանուկը կկապվե Դրոյի հետ և պատրոն կուզի: Դրոն կմերժի պատրոն տալ սասունցիներին և կըսե. «Դուք ավազակ եք, ժողովուրդին կկոտորեք»: Մանուկը շատ էր բարկացել այդ արտահայտության վրա: Կկանչի Կարախաչ գյուղի Կուլամ Ալի բեկին, կհրամայի՝ բոլոր գյուղերին զինաթափ անել, զենքերը բերել Զնջոլու գյուղը և հանձնի սասունցիներին:

Երկու գյուղ ապստամբեցին: Մի քաջ հայ հարյուրապետ սասունցի զինվորներով սպանեցին, այդ դեպքից հետո հրամանատարները՝ Մանուկը, Զոլոն և Մորուք Կարոն[266] սկսեցին գյուղերի տղամարդկանց առանձին, իսկ կանանց՝ առանձին բանտարկել: Վրեժխնդիր սասունցիներին զսպել անհնար էր: Բացի սասունցի հարյուրապետի կորուստը՝ համարյա բոլորի ընտանիքները բնաջնջված էին, արժանապատվությունները՝ պղծված: Սկսեցին կոտորել:

Այս գյուղերից մի քանիսի անուններն իմ միտս է՝ Կարախաչ, Զնջոլու, Կատլլու, Շաղաբլու[267] և Զիմանքանդ[268]: Մնացած ուրիշ գյուղերի անունները չեմ հիշի:

Հինգ օրից հետո Մանուկը ամբողջ բանակով մտավ Զիմանքանդ և Բոյուք Վեդի[269], մնացած գյուղերը: Ամեն տուն

---

[265] **Բիրալի** գյուղը 1968-ին վերանվանվել է Լանջառ: Գտնվում է ՀՀ Արարատի մարզում: Նախկինում մտնում էր Երևանի նահանգի Երևանի գավառի մեջ: 1873թ. ուներ 404, 1897-ին՝ 677, 1926-ին՝ 202 հայ բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել էին Պարսկահայաստանի Խոյ և Սալմաստ գավառներից (ՀՀՇՏԲ, հ.2, էջ 561):

[266] **Մորուք Կարոն** (Ավոյան Կարապետ) ծնվել է 1875թ. Սասունի Գելիեգուզան գյուղում, մահացել է 1949թ. Պարսկաստանի Համադան քաղաքում: Ազգային-ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի, ՀՅԴ կուսակցության անդամ: Սովորել է ծննդավայրում, Առաքելոց վանքում, Մուշի Կեդրոնական վարժարանում: Քաջությամբ աչքի է ընկել հատկապես Գևորգ Չավուշի՝ 1905թ. ապրիլի 25-ի Խարս գյուղի կռվում: 1908թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո փախստական էր, 1912-14թթ. գործել է Տարոնում: Մասնակցել է 1915թ. Սասունի ինքնապաշտպանությանը: 1916թ. Մուշում միացել է Փեթարա Մանուկի զինվորներին, արշավել Խութ, Մոտկան, Բռնաշեն և ազատել 8000 սասունցիների, ապա մտել մշեցիներից ու սասունցիներից կազմված ժողովրդական գնդերի մեջ,

որոնք գործել են Տարոնում, Խնուսում, Մանազկերտում, Ալաշկերտում: 1918թ. Անդրանիկի խմբի հետ անցել է Խոյ: Մասնակցել է Զանգեզուրում մղված կռիվներին: 1919թ-ից բնակվել է Թալինի շրջանի Ահագչի (այժմ՝ Զովասար) գյուղում, մասնակցել է 1921թ. Փետրվարյան ապստամբությանը, որի պարտությունից հետո անցել է արտասահման, այնուհետև Զոլոյի հետ վերադարձել է Հայաստան, բայց վերջինիս ձերբակալությունից հետո անցել է Պարսկաստան (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 341, Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Գ, էջ 437):

[267] **Շաղաբլուն** 1968թ. վերանվանվել է Շաղափ: Նախկինում մտնում էր Երևանի նահանգի Երևանի գավառի մեջ: Գտնվում է Արարատ քաղաքից 13 կմ հարավ-արևելք: 1873թ. ուներ 437, 1897թ.՝ 853, 1926թ.՝ 253, 1980թ.՝ 750 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1916-1926թթ. գաղթել է Արևմտյան Հայաստանից՝ Վանի և Շատախի շրջաններից: Շրջակայքում՝ Արմենի դեմ և Զիմանդարա կոչված վայրերում կան գյուղատեղիներ, գերեզմանոցներ, պատմական հուշարձաններ (ՀՀՇՏԲ, հ.4, էջ 64):

[268] **Զիմանքենդ** գյուղը 1978թ. վերանվանվել է Ուրցաձոր: Այն նույնացվում է 18-րդ դարում Սիմեոն Երևանցու հիշատակած Ուրծաձորի հետ: 1873թ. ուներ 756, 1897թ.՝ 1260, 1926թ.՝ 914, 1989թ.՝ 2463 բնակիչ (ՀՀՇՏԲ, հ.5, էջ 217):

[269] **Բոյուք Վեդին** Վեդի է վերանվանվել է 1946թ.: Գտնվում է ՀՀ Արարատի մարզում, նախկին Արարատի շրջանի վարչական կենտրոնն էր: 1989թ. Վեդիի կազմն են ներառվել Գորովան և Դաշտաքար գյուղերը: 1897թ. ուներ 2798, 1926թ.՝ 1839, 1937թ.՝ 2830, 1959թ.՝ 3581, 1970թ.՝ 6165, 1979թ.՝ 7900, 1989թ.՝ 10757 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Վանի, Շատախի, Մուշի գյուղերից 1915-20թթ., իսկ նոր ժամանակներում այստեղ զգալի թիվ են կազմում նաև Մարտունու, Սիսիանի և Եղեգնաձորի շրջաններից եկած վերաբնակիչները: 1988-89թթ. Ադրբեջանում ծավալված հայկական

մի տասնյակ զինվոր դրեց և գյուղերը պաշարեց, որ ոչ ոք չփախնի: Գիշերը պիտի մաքրեր այդ երկու անառիկ գյուղերը: Այսպիսով, այդ շրջանը կմաքրվեր թուրքերից, և Նախիջևանի ճանապարհը կբացվեր մեր առաջ:

Այդ երկու գյուղերի և ամբողջ Միլլիդարայի մեծը՝ Աբաս-Կուլի Շաղջոնսկին[270] էր, որ Բաքու քաղաքի հայերին կոտորելուց հետո եկած էր Հայաստան: Անմիջապես թելեֆոն կանի Երևան Փանահ Խան Թունբուլօղլի Ալի խանին, որ ամբողջ Հայաստանի թուրքերի մեծն էր, կհայտնի, որ սասունցիներն այս գյուղերի մեջ են և իրենց պիտի կոտորեն: Ալի խանը, որ սուտից դաշնակցական էր եղած և Դրոյի մտերիմն էր, անմիջապես կհայտնի Դրոյին: Դրոն զրահապատ գնացքով եկավ Ռեհանլու գյուղը: Երկու անգամ սուլիչ հնչեցրեց, հետո ձիավոր ուղարկեց:

Մի նամակ գրած էր հրամանատար Մանուկին և հին Ֆիդայի Զոլոյին. «Անմիջապես քաշվեք ձեր սարերը, եթե չքաշվեք, ձեզի կոմբակոծեմ»: Սասունցիք քաշվեցին Կարախաչ և Զնջալու գյուղերը, իսկ մենք՝ վեց հոգի, որ նամակ էինք տարած սասունցիներին, մեզի երկու եզան սայլ բարձած ուտելիքներով, և մի քիչ էլ մենք շալակած՝ ճամփա դրին: Հասանք Դավալու գյուղը, միացանք մեր բանակին և շատ ուրախացան, որովհետև մեզի կորսված կկարծեին: Երկրորդ օրը մի քանի հայի հետ մի վագոն մթերք կուղարկեն մեզի: Թուրքերը նրանց կջոկեն և կսպանեն և մեր պարենը կտանեն իրենց գյուղը: Մի տասնհինգ տարեկան տղա կփախնի, և մեր պահակները նրան կբռնեն: Բերին հանձնեցին գնդապետ Տիգրանին: Հաջորդ օրը ձիավոր եկավ և նամակ տվեց գնդապետին: Նամակը գրած էր զորավար Դրո Կանայանը, այսպես էր գրված.

կոտորածների պատճառով այստեղ են բռնագաղթել 142 տուն, 561 հայեր (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 794):

[270] Խոսքը Աբաս-Կուլի Շաղլինսկու մասին է, որը 1921թ. ղեկավարում էր Նախիջևանի և Վեդիի շրջանի 400 բոլշևիկ ադրբեջանցիներից կազմված «Կարմիր տաբոր» գումարտակը (Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Երևան, 1967, էջ 147):

8-րդ գնդի հրամանատար, գնդապետ Տիգրան Բաղդասարյան:

Թավրիզ, 1923թ.

Վերջին շարքում կանգնած ձախից աջ՝ 1. Չոլո (Հարություն Աբրահամյան): 2. Արիս Աբրահամյան: 3. Օհան Կարո: 4. ?: 5. Բայլի Մանուկ-Բայլյան: 6. Կարապետ Սարգսյան՝ Բուժակ Կարո: 7. Հայկ Աճեմյան: 8. Վահան Սարիբեկյան: 9. Ասպանիկ Հովհաննիսյան: 10. Բաշգառնեցի Խնկո: Միջին շարքում նստած ձախից աջ՝ 11. Արմենակ Փոխարյան: 12. Միսակ Սիմոնյան: 13. Հայկակ Կոսոյան: 14. Սամվել Մեսրոպյան: 15. Կարապետ Բեյջարյան: 16. Փանոս Ժամհարյան: 17. Վահե Արծրունի: 18. Դավիթ Փափազյան: 19. Ներսես Պապյան: Գետնին նստած են՝ 20. Վաղարշակ Շիրվանյան: 21. Լորթո Հարություն Համբարձումյան: 22. Հաջի Մուրադ Մուրադյան: 23. ?: 24. Արշավիր Աբաբեկյան:

Արա Մանուկյանը, Դրոն, Կոստի Համբարձումյանը, հայ ազատամարտի մի խումբ գործիչներ ռուսական բանակի գեներալ Նիկոլաևի և այլ սպաների հետ:

Վանի ավերակները Եղեռնի օրերին:

Վանի թեկնածուհիների կյանքի՝ Ակնթարթի վկայությունները:

Վանի զինագործները փամփուշտներ են պատրաստում:



Վանի ամերիկյան որբանոցի հյուսնարանը:

Գարեգին Նժդեհն իր զինակիցներով:

Դարալագյազի ճակատի հրամանատարական կազմը:

Ղամարլուի ճակատի հրամանատարական կազմը:

Երվանդ Կյուրեղյանը և Արամ Տեր-Բաղդասարյանը (Գառոնե), (Թեհրան, 1960թ.)

Երվանդ Կյուրեղյանը իր հին զինակից ընկերոջ հետ, («Արմենիա» հյուրանոց, 1979թ.)

«8-րդ գնդի գնդապետ Տիգրան Բաղդասարյանին կհրամայեմ՝ առանց հապաղելու հարձակվիր այդ ավազակ սասունցիների վրա և հեռացուր այդ սարերից», ստորագրված՝ զորավար Դրո Կանայան:

Այս նամակը կարդացին Լևոն բեկը և գեներալ Արարատյանը: Ամբողջ գիշեր ոչ ոք չկարողացավ քնել: Սև սուգ պատեց ամենքին, և մանավանդ, գնդապետ Տիգրանին, Լևոն բեկին ու գեներալ Արարատյանին: Գնդապետ Տիգրանը նամակ առավ, բարի գիշեր ասաց, գնաց պատասխանելու:

Ստորև կգրեմ այդ նամակի[271] բովանդակությունը, ինչքան որ կհիշեմ:

Գնդապետ Տիգրան Բաղդասարյանի նամակը զորավար Դրոյին

«Հարգելի զորավար Դրո Կանայանին:

8-րդ գնդի գնդապետ Տիգրան Բաղդասարյանից:

Ստացա Ձեր հրաման նամակը 1918 ապրիլի 4-ին և այժմ կպատասխանեմ: Պարո՛ն Զորավար, երբ մենք ամենավերջին զինվորով թողեցինք մեր պաշտելի Վան-Վասպուրականը և 1918-ի փետրվարին հասանք Իգդիր՝ Ձեր քաղաքը, Դուք մեր Վանի չորրորդ գունդը անվանեցիք հայկական 8-րդ

---

[271] **Գնդապետ Տիգրան Բաղդասարյանն** իր հուշերում թեև համառոտ անդրադառնում է Բոյուք Վեդիի և հարակից թաթարական (ադրբեջանական) գյուղերի վնասազերծմանը, բայց Դրոյի և սասունցիների միջադեպի, նաև Դրոյին գրած իր որևէ նամակի մասին չի խոսում (տե՛ս Սահակեան Յ., Բաղտասարեան Տ., Էջեր մեր ազատագրական պատմութենէն, մաս Բ, Տ. Բաղտասարեան, Հայաստանի Հանրապետութեան վերջալոյսին, Փարիզ, 1937, էջ 226: Տե՛ս նաև Համլետ Գևորգյանի «Դրո» աշխատությունը (2007), որում անդրադարձ կա Ղամարլուի (Արտաշատ), Դավալուի (Արարատ) և այլ գյուղերի թաթարների վնասազերծումների մասին, բայց Դրոյի և սասունցիների անհամաձայնության, նաև գնդապետ Տ. Բաղդասարյանի նամակի մասին հիշատակություն չկա (Երևան, 2007, էջ 178-181):

գունդ: Անկե հետո, որտեղ որ մեզի ուղարկեցիք, մենք պատվով և հաղթանակով Ձեր հրամանը կատարեցինք:

Այժմ կհրամայեք, որ ես երթամ Ձեր անվանած ավազակ սասունցիների վրա՞: Պարո՛ն զորավար, քանի և քանի անգամ ձեր բերանից լսած եմ քաջ սասունցիք, կտրիճ ֆիդայի սասունցիք, Սերոբը, Գևորգ Չավուշը, Անդրանիկը և այլն, և այլն:

Հիմի ինչպե՞ս եղավ, որ անոնք մի քանի ավազակ և թուրքերի բարեկամ թաթարներ սպանելով՝ ավազակ դարձան:

Պարո՛ն զորավար, Դուք Ձեր աչքերով տեսած եք Մուշ քաղաքի կոտորածը, տեսած եք, ինչպես վառած և հրկիզած են Մուշի և Սասնա կին ու երեխաներին: Այստեղ եղած սասունցիները այդ քո հերոս Սերոբ փաշայի ֆիդայի Զոլոն և Մորուք Կարոն են, Մանուկն ու Ախոն են և շատ-շատեր, որոնք ամենը ոչ թե մեկ տունից են, ո՛չ, ամեն մեկը մեկ գյուղից ազատված են և հավաքված են: Խումբ են կազմել, որ իրենց հրկիզված ծնողների վրեժը լուծեն թուրք և թաթար թալանչիներից: Նույնը և մենք՝ Վանի 8-րդ գունդը, նույն ճանապարհով կերթանք, ինչպես և կերթան վրիժառու քաջ սասունցիները:

Արդ, պարո՛ն զորավար, եթե ես Ձեր հրամանով երթամ սասունցիների վրա, մեր եղբայրասպան և ամոթալի կռվի համար, պատմությունը ի՞նչ կգրի, արդյո՞ք սև մուր չի քսի մեր ճակատին:

Պարո՛ն զորավար, իբրև Ձեր զինակից, կխնդրեմ այս հրամանը ուրիշին տաք: Ինձի ազատեք, ես հրաժարվում եմ:

Մնամ հարգանոք 8-րդ գնդի հրամանատար՝ Տիգրան Բաղդասարյան»:

Այս նամակը կարդացին Լևոն բեկը և գեներալ Արարատյանը, հավանեցին և իբրև վկա ստորագրեցին: Վաղ առավոտյան երկու ձիավոր այս նամակը տարան Երևան, հանձնեցին Դրոյին: Դրոյից մի պատասխան բերեցին գնդապետին հրամայած էր, որ Տիգրանը բանակը հանձնի Լևոն բեկին և գա Երևան: Տիգրանը վերցուց այդ 15 տարեկան տղային, գնաց Երևան: Զորավար Դրոն, իբր պատիժ, մեր սիրելի գնդապետին երեք ամիս կհեռացնի: Գնդապետը կերթա Թիֆլիս, քննություն կուտա և գնդապետի ուսադիրներով ու պաշտոնով կուգա Երևան:

Զորավար Դրոն մի վաշտ զինվոր, երկու գնդացիր ուղարկեց և հրամայեց, որ երթանք Սաղարակ թուրքի գյուղը գրավենք, որ Նախիջևանի ճանապարհը բացվի: Սաղարակ գյուղի մոտ մի բլուր կա, որ թուրքերը լավ ամրացած են, և մեր գնացած ճանապարհը ուղիղ և շիտակ ճանապարհ է: Պարոն Լևոն բեկը Դրոյի ուղարկած վաշտի վաշտապետին, որի անունը Մացակ էր, սարերով ուղարկեց, իսկ մենք ուղիղ դաշտով գնացինք:

Մեր կռիվը սկսեց առավոտից մինչև գիշեր, Մացակը կփախնի, իսկ թուրքերը մեզի պաշարեցին, բախտի բերմամբ սարից իջնող ոչխարները փախան և եկան մեզի վրա: Մենք, օգտվելով ոչխարի հանած փոշուց, նահանջեցինք, և ոչխարներին խառնվելով, հասանք Դավալու գյուղը: Լևոն բեկը Մացակի ձեռքեր կապեց, և գեներալ Արարատյանը նրան տարավ, որ հանձնի Դրոյին: Այս կռվին մենք ունեցանք մի սպանված և չորս վիրավոր:

Մի շաբաթ հետո մի գնդապետ եկավ և Լևոն բեկից խնդրեց, որ զինվոր տա, տանի Բոյուք Վեդի, Աբաս Կուլի բեկը ապստամբած էր, նրան հալածի:

Գնդապետի օգնականը, որ Ասլան Ստեփանյանն է, վաշտապետ Ֆիլիպ վանեցու հետ ուղարկեց կռվի:

Մենք անտեր էինք մնացել: Ասլանը վերցրեց 25 ձիավոր և 50 հետևակ, նստեցինք վագոններ, գնացինք Ղամարլու և միացանք մեր հիսնապետ Ֆիլիպի զինվորներին: Հասանք Բոյուք Վեդի գյուղը:

ԲՈՅՈՒՔ ՎԵԴԻԻ ԿՌԻՎԸ[272]

Մի գիշեր մնացինք Ղամարլու և մի պարոն մեզի տարավ և հասցրեց Խարաբա Քայրիզ ըսված տեղը, որ այժմ Նորաշեն[273] գյուղն է:

Այդտեղից Դարղալու[274] գյուղացի Հայկը, որ տեղերին ծանոթ էր, մեզի հանեց Կարմիր սարի վերևը, որ շտաբը այնտեղ էր: Այդտեղից գիշերով իջանք Բոյուք Վեդիի դաշտը: Մեր կռիվը սկսեց: Մենք ցորենի արտերի մեջն ենք: Ջուր չկա: Մի շաբաթ այդպես մնացինք՝ արտերի մեջ կռվելով: Երկու օրը մի անգամ մեզի հաց և ջուր կղրկեին: Տասնչորսերորդ օրը վաշտապետ Ֆիլիպ Կորկոտյանը կպաշարվի և վեց հոգու հետ կսպանվի: Նույն օրը գնդապետ Տիգրանը, Թիֆլիսից կուգա Դավալու: Լևոն բեկը նրան կասի, որ մի գնդապետ եկավ, զինվորներին տարավ Բոյուք Վեդիի կռիվներին: Գնդապետը եկավ և Ասլանին նախատեց, որ ինչո՞ւ է ուրիշի խոսքով իր զինվորին տարել, և մի աստիճան իջեցուց: Արեց հարյուրապետ, նրա պաշտոնը տվեց Ալուր[275] գյուղացի Մաչանի Արշակին և լսելով իր սիրելի Ֆիլիպ Կորկոտյանի սպանվելը՝ երես դարձուց այն կողմը, որ արտասուքը չտեսնենք: Մեզի հավաքեց, բերեց Ղամարլու: Շատ հիվանդներ ունեինք, մեկը ես էի, որ մալարիայով հիվանդ էի, և տասնյոթ հոգի զոհ տվեցինք: Երկու տարի Բոյուք Վեդին և Ջիմանքանդը կռվեցին կառավարության հետ: Արդյունքը այն եղավ, որ Նախիջևանը մնաց անպարտելի: Մենք տասը օր մնացինք Ղամարլու, և մայիսի տասնութին եկանք Դավալու և միացանք մեր բանակին: Արարատի դաշտը մտնելուց հետո՝ 1918-ի փետրվարի քսանից սկսած, Իգդիրի շրջանից մինչև Դիզա գյուղի գրավելը՝ մենք տվեցինք տասնութ սպանված և քառասունհինգ վիրավոր, իսկ Դավալուի կռվին՝ երկու սպանված և հինգ վիրավոր, Դավալուից դեպի Սաղարակի կռվին՝ չորս սպանված և ութ վիրավոր, Բոյուք Վեդիի կռվին՝ ութ սպանված՝ Ֆիլիպի հետ[276] և տասնութ վիրավոր: Ուրեմն՝ 1918 թվի փետրվարի քսանից մինչև 1918 թվի մայիս 16-ը մեր Վանի չորրորդ գունդը, որ դարձել էր ութերորդ գունդ, այս կռիվների շրջանին տվեց քսանութ[277] սպանված և յոթանասունվեց վիրավոր:

Մայիսի տասնիններին մեզի Դավալուից բերին Էջմիածին: Առավոտը Դրոն եկավ, սպիտակ ձիու վրա նստած, մեր լավ ընկերներ Վաչե Ասատրյանի կամ Վաչե Ասոյանի և իր ընկեր Վաղինակի հետ: Մենք շատ էինք կարոտել այդ երկու քաջ ընկերներին: Դրոն ձիուց վար իջավ: Մենք պատվի առինք, և Դրոն մեր շարքերին այս գլխից այն գլուխ գնալ գալուց հետո գնդապետին հանձնեց իր հետ բերած երկու հարյուր զինվոր հետևակը և հիսուն ձիավորներ. նրանք միացան մեր շարքերին: Դրոն կանչեց. «Պատվի ա՛ռ»: Մենք պատվի առինք: Մի խումբ ձիավորներ եկան, նրանցից մեկը առաջ եկավ, և՛ Դրոյին, և՛ գնդապետին ձեռք տվեց: Սկսեց խոսել: Մենք այսքան լսեցինք, որ ասաց. «Պարո՛ն գնդապետ, Ձեր այս չորս ամ-

---

[272] Հայերի վրա Բոյուք Վեդիի մահմեդականների հարձակումների մասին տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Փարիզ, 1928, էջ 348-371:

[273] **Նորաշեն** գյուղը գտնվում է Արտաշատ քաղաքից 6կմ հյուսիս-արևելք: 1897թ. ուներ 564, 1926թ.՝ 694, 1989թ.՝ 3309 բնակիչ: 1945թ. նրան է միացել Ներքին Նորաշեն (Մեհրաբ Քուրդքենդ) գյուղը (ՀՀՇՏԲ, հ.4, էջ 19,21):

[274] **Դարղալու** գյուղը 1949թ. վերանվանվել է Անաստասավան, իսկ 1957թ.՝ Այգեզարդ: Գտնվում է Արարատի մարզի Արտաշատի շրջանում: Հիմնադրել են Պարսկահայաստանից ներգաղթած հայերը: 1831թ. ուներ 353, 1908թ.՝ 1277, 1919թ.՝ 1350 հայ բնակիչ (ՀՀՇՏԲ, հ.1, էջ 226):

[275] **Ալյուր** գյուղը Վանի գավառի Թիմարի գավառակի ամենամեծ և ամենահարուստ գյուղն էր, 1909թ. ուներ 335 տուն հայ բնակիչ (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 26, 28):

[276] Հեղինակի հաշվարկում վրիպակ կա, սույն գլխի սկզբում Ֆիլիպ Կորկոտյանի հետ սպանվածների ընդհանուր թիվը նշվում է 7:

[277] Սպանվածների թվի գումարը 32 է և ոչ թե 28:

սում կռիվներին մաքրած թուրքական շրջանները[278] ինձ ուրախացրեց, և Ձեր գնդի քաջագործությունը ինձ պատիվ է բերել: Դուք արժանի եք պատվի»: Եվ մի քայլ առաջ եկավ, մի նշան կպցրեց գնդապետի կրծքին և շնորհավորեց: Իմացանք, որ քաջության նշան էր, և ասաց. «Այսօրվանից դուք կպատկանեք իմ զորամասին»: Հետո իմացանք, որ այդ պարոնը գեներալ Սիլիկյանն էր[279]: Հրահանգ տվեց՝ շարժվել դեպի Սարդարապատ:

[278] 1917-1918թթ. հայ բնակչության հանդեպ Սուրմալուի գավառի և Արարատյան դաշտի թուրքերի և քրդերի կատարած արյունռուշտ վայրագությունների մասին տե՛ս Զոհրաբյան Է., Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918թ., Երևան, 2000, էջ 3-52:

[279] **Մովսես Բաբայի Սիլիկյանը** ծնվել է 1862թ. Ելիզավետպոլի նահանգի Վարդաշեն գյուղում: Ռուսական բանակի գեներալ-մայոր, ավարտել է Մոսկվայի ռազմական գիմնազիան (1882թ.), Ալեքսանդրյան ռազմական ուսումնարանը (1884թ.), սպայական հրաձգային դպրոցը (1904թ.): Ռուսական բանակում ծառայել է 1884թ.: Եղել է գումարտակային համհարզ, վաշտի, գումարտակի, գնդի և դիվիզիայի հրամանատար: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին նշանակվել է Երևանի պարետի օգնական: Պատերազմին մասնակցել է Կովկասյան ռազմաճակատում: Եղել է գնդի, ապա՝ Վանի զորախմբի հրամանատար, աչքի է ընկել Մուշի, Բիթլիսի գրավման, Էրզրումի գրոհի ժամանակ, որի գրավումից հետո նշանակվել է քաղաքի պարետ, 1918թ.՝ Առաջին հայկական հրաձգային դիվիզիայի հրամանատար, այնուհետև՝ Երևանյան զորախմբի հրամանատար: Սարդարապատի և Բաշ Ապարանի ճակատամարտերում ջախջախիչ հարված է հասցրել թուրքական զորքերին, կասեցրել նրանց հարձակումը: Այս մարտերում ի հայտ է եկել Սիլիկյանի զորավարական հմտությունը: 1920թ. աշնանը Սիլիկյանը եղել է հայկական զորքերի հրամանատար Կարս-Ալեքսանդրապոլի ճակատում: Բանակից զորացրվելով՝ ծառայել է խորհրդային հիմնարկություններում: 1937թ. անհիմն բռնադատվել է, հետագայում՝ հետմահու արդարացվել (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 416: Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 64):

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ[280]

Գիշերը մնացինք Էջմիածին: Մեզի համար ինչ որ պետք էր, տվեցին: Առավոտյան՝ մայիսի քսանին, ճանապարհվեցինք: Մեր հետևակը գիշերը երկաթուղով տարած էին:

Մեր խումբը Էջմիածնից հազիվ մի գյուղ հասած էր: Մեզի մոտ եկավ մշեցի Դալի Ղազոն[281] իր խումբով, եկավ Քուրդ Ղազոն[282] իր խումբով, եկան քաբաբցի[283] Բաբկենը և

[280] Սարդարապատի հերոսամարտին նվիրված իր հանրահայտ ուսումնասիրության մեջ Հարություն Թուրշյանը, խոսելով Հայաստանի հանրապետությունը ներսից խարխլելու նպատակով մուսավաթականների գլխավորությամբ ապստամբած ադրբեջանաբնակ գյուղերում գնդապետ Տիգրան Բաղդասարյանի գնդի գործունեության մասին, սխալմամբ ենթադրում է, որ գունդը չի մասնակցել Սարդարապատի ճակատամարտին. «...Նրա շարքերում մնացին 800 գիտակից խիզախներ, որոնք թեև չեն մասնակցել ո՛չ Սարդարապատի և ո՛չ էլ Բաշ Ապարանի կռիվներին, սակայն շատ մեծ գործ են կատարել Ղամարլու-Յուվայի ճակատում... Թուրքական ծառայության սպա, շատախցի Տիգրան Բաղդասարյանը... գնդերը և իր հետ Վանից բերած 150 զինվորներին միացրեց և մեկ գունդ դարձրեց, ետ կանչեց Վանի ինքնապաշտպանության դիրքապետներին... այդ ամենը նա կատարեց ընդամենը երեք օրում և 800 սվինից բաղկացած մարտունակ գունդը... տարավ Ղամարլու-Յուվայի շրջանը: Սարդարապատի ճակատամարտի օրերին գունդը մեծ հաջողությամբ կռվում էր, մի կողմից, Բոյուք Վեդիում բուն դրած մուսավաթականների դեմ, իսկ մյուս կողմից պաշտպանում գետանցը, թույլ չտալով, որ թուրքական 5-րդ դիվիզիան անցնի Արաքսի ձախ ափը և միանա Բոյուք Վեդիի մուսավաթականներին» (Թուրշյան Հ., Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969, էջ 286-287): Նա նույնը պնդում է գրքի այլ էջերում, գրելով. «Սարդարապատի կռիվների օրերին Վանի Ա և Բ գնդեր չկային, այլ կար միայն մեկ գունդ՝ 800 սվին կազմով, որը ո՛չ այդ օրերին, ո՛չ էլ հետագայում ամենևին Սարդարապատի կամ Բաշ Ապարանի ճակատներում չի եղել: Նա 1918թ. մայիսի սկզբից Չորրորդ գունդ անունով գործում էր Ղամարլու-Յուվայի ճակատում՝ պահպանելով Գայլի դրունք գետանցը» (նույնը, էջ 247): Երվանդ Կյուրեղյանի հուշագրության այս հատվածը խիստ արժեքավոր ուղղում է մտցնում Հ. Թուրշյանի ուսումնասիրության մեջ և փաստում, որ վանեցիների գունդը ևս մասնակցել է Սարդարապատի հերոսամարտին:

[281] **Դալի Ղազոն** մշեցի էր, եղբոր անունը Աբգար էր (ծանոթագրությունը՝ հեղինակի):

[282] **Քուրդ Ղազոն** Բլխոնց գյուղից էր (ծանոթագրությունը՝ հեղինակի):

[283] **Քաբաբ** (Քեապապիկ) գյուղը գտնվում էր Վանի նահանգի Վանի գավառում, Բերկրիի գավառակում, Բերկրի գյուղաքաղաքից 24 կմ

Նշանը՝ իրենց խումբերով: Եկան բողազքյասանցի[284] Ավագը և Արշակը՝ իրենց խումբերով, և բոլորը միավորեցին, շարժվեցին Սարդարապատ: Ճանապարհ չկա, որ մենք երթանք, բոլորը բռնած են, գյուղացիք՝ կիներ, երեխաներ, շալակավոր մարդեր հաց, ջուր, ուտելիք շալակած կերթան:

Մենք արտերի միջով հասանք մի խումբ ճերմակ զգեստ հագածների: Սրանք վանքի ուսանող և աշակերտներ էին, անցանք և հասանք մի խումբ սև հագած ձիավոր խմբի. Հովսեփ[285] եպիսկոպոսն էր իր շքախմբով:

Մեր՝ իրար միացած ձիավոր խումբը 1918 թվի մայիսի քսաներեքին հասավ Սարդարապատ: Մեր հետևակը շուտ էր հասել: Էլի մեզի դիմավորեցին երկու նույն աստիճանով պատկառելի զորավարներ և մեր գնդապետը, այդ զորավարներն էին՝ կարմիր վերարկու հագած՝ Դանիել բեկ Փիրումյանը[286] և Պողոս

հարավ-արևմուտք: 1850-ական թթ. ուներ 32 տուն, 1909-ին՝ 35 տուն հայ բնակիչ (Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 35), Սուրբ Հովհաննես անունով եկեղեցի (ՀՀՇՏԲ, հ.5, էջ 384):

[284] **Բողազքյասան** գյուղը գտնվում էր Վանի նահանգի Արճակի գավառակում, Վան քաղաքից 55 կմ հյուսիս-արևելք, Սև ջուր գետակի ձախակողմյան վտակներից մեկի ափին: 1850-ական թթ. ուներ 159, 1914թ.՝ 320 հայ և քուրդ բնակիչ: Կար Սուրբ Աստվածածին անունով եկեղեցի (ՀՀՇՏԲ, հ.1, էջ 724):

[285] Հեղինակն, ըստ երևույթին, նկատի ունի **Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանին**, Մեծի Տանն Կիլիկիո ապագա կաթողիկոս Գարեգին Առաջինին, որը մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին: Նա ծնվել է 1867թ. Լեռնային Ղարաբաղի Մաղավուզ գյուղում: 1890թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, ուսումը շարունակել է Բեռլինի, Լայպցիգի համալսարաններում: 1897թ. դասախոսել է Գևորգյան ճեմարանում, եղել է տեսուչ, «Արարատ» ամսագրի խմբագիր: Մասնակցել է Սարդարապատի հերոսամարտին, հայ արվեստի պատմություն և հնագիտություն է դասավանդել Երևանի համալսարանում, 1925թ. ձեռնադրվել է արքեպիսկոպոս: 1927-33թթ. եղել է Ղրիմի և Նոր Նախիջևանի, 1938-43թթ.՝ ԱՄՆ-ի հայոց թեմերի առաջնորդ: 1943թ-ից Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս: Հեղինակ է բազմաթիվ հայագիտական գրքերի, հոդվածների, որոնք անգնահատելի արժեք են ներկայացնում հայագիտության համար: Մահացել է 1952թ. Անթիլիասում (ՀՀՀ. հ. 3, էջ 412-413):

[286] **Փիրումյան Դանիել բեկ Աբիսողոմի,** ծնվել է 1861թ. Լեռնային Ղարաբաղի Նախիջևանիկ գյուղում, մահացել է 1921թ.: Ռազմական գործիչ, ռուսական բանակի գնդապետ (1915): Ավարտել է Շուշիի քաղաքային ուսումնարանը: Սովորել է Թիֆլիսի հետևակային յունկերային ուսում-

բեկ Փիրումյանը[287], որ Պավել կըսեին: Մեզի ջոկեցին իրարից: Մնացին Օվանեսի և Մաչանի Արշակի հարյուրյակները, իսկ ձիավորներից երկու հիսնյակ՝ իմը և ոզմեցի Պետրոսինը: Մեզի հանձնեցին մեր հետ էջմիածնից ընկերացած բաշգառնեցի Մակեդոնին (և կամ թե Մակեդոնյանին): Մեր գծի հրամանատարն էր Պողոս բեկ Փիրումյանը: Ամեն պատրաստություն, երկու օրվան հաց և ջուր տվին, ձիերը մնացին, մենք անցանք կռվի շարքը: Մեր մոտ կար չորս թենդանոթ և վեց գնդացիր «Մաքսիմ» տեսակի, որ վրան ջուր պիտի լցնես տաքանալուն: Կռվի ընդհանուր գիծը կանցներ Սև ջրի բարձունքներից՝ արևելքից մինչև Անի քաղաքի բերան՝ արևմուտքը: Այս լայն ճակատամարտի ընդհանուր հրամանատարը և կռվեցնողը Դանիել բեկ Փիրումյանն էր: Մեր երկու օրվան կռիվը շատ հաջող էր: Երկու ամրացած դիրքերից թուրքերին հետ մղեցինք: Երրորդ օրը մեզի փոխադրելու եկան: Սարից իջանք դաշտ: Կրկին ինչ-որ պետք էր ստացանք և ուղղվեցինք երկաթուղու կայարան:

նարանում, ավարտել է Օրանիենբաումի (այժմ՝ ք. Լոմոնոսով, Սանկտ Պետերբուրգի մարզում) սպայական հրաձգային դպրոցի դասընթացները (1913): Ռուսական բանակում ծառայել է 1881թ.: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կռվել է Կովկասյան ռազմաճակատում, եղել գումարտակի, գնդի հրամանատար: Սարդարապատի ճակատամարտում (1918), որպես Սարդարապատի զորաջոկատի ընդհանուր հրամանատար, ցուցաբերել է զորավարական հմտություն և արիություն՝ ռազմաճակատի կենտրոնական հատվածում ջախջախելով և հետ շպրտելով թուրքերին՝ ապահովելով հաղթանակը (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 454: Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 64-65: ՀՀՀ, հ. 4, էջ 848):

[287] **Փիրումյան Պողոս բեկ Կարամանի (Ղահրամանի),** ծնվել է 1862թ. Լեռնային Ղարաբաղի Նախիջևանիկ գյուղում, մահացել է 1921թ. Երևանում, ռազմական գործիչ, ռուսական բանակի գնդապետ: Ավարտել է յունկերական ուսումնարան (1878): 1878-ից ծառայել է ռուսական բանակում, եղել է գումարտակի, գնդի հրամանատար: 1914թ. զորացրվել է գնդապետի կոչումով, սակայն Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին մտել է գործող բանակ: Կռվել է Արևմտյան, ապա՝ Կովկասյան ռազմաճակատներում: 1916թ. եղել է Հայկական 5-րդ հրաձգային գնդի հրամանատար, մասնակցել Վանի, Մուշի համար մղված մարտերին: 1918թ. Սարդարապատի ճակատամարտում՝ որպես 5-րդ Ղարաբաղյան գնդի հրամանատար, ցուցաբերել է հրամանատարական մեծ ընդունակություններ, տարել հաղթանակ թուրքական զորքերի դեմ (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 454: ՀՀՀ, հ. 4, էջ 848-849: Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 65):

Մեկնեցինք դեպի արևմուտք: Այստեղ կռիվը շատ կատաղի էր: Երկու կողմից թնդանոթներ և գնդացիրներ անդադար կդղրդային: Արևը մեզի վառում է, հրացանը տաքացել է, և մեր ջուրը մեզանից կառնեն՝ գնդացիրները հովացնելու համար: Գիշերը օգնության եկան մի խումբ զինվորներ: Իմ կողքիս կռվող երկու երիտասարդները Թիֆլիսից եկած ուսանողներ էին: Մեկը հայ էր, որ Միշա կըսեին, մյուսը՝ վրացի, Կացո կըսեին: Վազվզան երիտասարդներ էին: Հաջորդ օրը մենք մի դիրք գրավեցինք: Պառկած ենք թուրքերի սպանված դիակների կողքին, կռվում ենք: Տեղացի զինվորները կռվի գործիքներ, բահ և բրիչ ունեին, իսկ մենք չունեինք: Այս ահեղ կռվի մեջ վրացի Կացոն անզգույշ շարժումներ արեց, թուրքերը նկատեցին, գնդացիրը ուղղեցին մեր վրա: Վրացի Կացոն և յոթ հոգի իմ կողքին սպանվեցին: Մեր դրությունը հուսահատական էր:

Գիշերը վրա հասավ, և մեզի փոխադրեցին մեր առաջի օրվան տեղը: Դանիել բեկ Փիրումյանը, տեսնալով մեր տղաների կռիվը այդ երկու օրվան կենտրոնում, շատ կհավանի և գնդապետին շնորհակալություն կհայտնի, կասի. «Ձեր զինվորները ֆիդայու կռիվ կանեն, փորսող չգիտեն անել»:

Մենք կպատրաստվեինք գնալու, երբ եկավ Պողոս բեկը, ասաց. «Այս բարձունքներին ձեր մեջ ծանոթ կա՞»: Օվանեսն ասաց. «Մենք տասնհինգ թվին երեք հոգի մի տարի ապրած ենք այդ բարձր սարի մեջ՝ Կըրմըզլու գյուղում»: Նայեց քարտեզին, շատ ուրախացավ, ասաց. «Այդ գյուղից կիջնի հայկական Թալինի վրա, թուրքերի կռնակը»:

Օվանեսի և Մաչանի Արշակի հետևակները, մեր երկու հիսնյակ ձիավորները բաշգառնեցի Մակեդոնին հանձնեց: Մենք գիշերով ճանապարհ ելանք, հասանք Յաղալու և Կըրմըզլու գյուղերը: Օվանեսը Մակեդոնին ճանապարհը ցույց տվեց, որ ջրաղացների կողքով կմտնի Թալին:

Իջանք ցած և հասանք Թալին՝ ջրաղացների պատերին. ամբողջ ուժով «ուռա՛» կանչեցինք, մտանք գյուղ, թուրքեր չվարած էին: Շատերը գիշերանոցներով այս ու այն կողմ

կփախնեին: Էլ որտե՞ղ կթողնենք փախնեն: Թուրքերի հիվանդանոցները Թալինում էին, մաքրեցինք: Թուրքերը երկու կրակի մեջ մնացին: Կեսը փախան դեպի Ալեքսանդրապոլ, իսկ կեսը՝ դեպի Թուրքի Թալին[288] և Սարդարի անառիկ բերդը: Լույսը բացվեց, մենք Թուրքի Թալինը գրավեցինք: Մեզ օգնության հասան մի վաշտ զինվորներ և երկու ծանր գնդացիր. սկսեցին կրակ թափել բերդի վրա:

ԻՄ ՎԻՐԱՎՈՐՎԵԼԸ

Արև դեռ չմտած՝ մենք հասանք բերդի պարիսպներին: Սարդարապատի կողմից մերոնք կսեղմեն, թշնամին կփախնի: Թուրքերի հետ մեկ առ մեկ մենամարտի տաք ժամին հանկարծ իմ ձին բարձրացավ երկու ոտքերի վրա և ընկավ գետին: Ես մնացիմ տակը: Այդ ահեղ կռվի պահին ես կարծում էի, որ միայն ձիս է խփվել: Բոլորովին իմ վիրավոր լինելուց լուր չունեիմ: Ձիուս ընկնելու ժամանակ հրացանս թռավ իմ ձեռքես: Տեսամ՝ մի թուրք զինվոր իմ ընկնելս տեսել է և կուգա, որ սվինով ինձի սպանի: Ես կաշխատեի ձեռքս հասցնել հրացանիս: Վախեն լրիվ մոռացած էիմ ատրճանակիս գոյությունը: Ձեռքս կպավ ատրճանակիս, անմիջապես քաշեցիմ և երեք հատ կրակեցիմ, թուրք զինվորը ընկավ, կթավալվի այս և այն կողմ: Տեսամ՝ Արշակին բերում են, կողքից վիրավորված էր: Ինձի էլ հանեցին ձիուս տակեն: Թուրքը դեռ չէր

[288] **Թուրքի Թալին**՝ Ներքին Թալին (1978-ից՝ Դաշտադեմ) գյուղը գտնվում է Արագածոտնի մարզում: 18-19-րդ դարերում դարձել է թուրքաբնակ, 1918թ. այստեղ են հաստատվել Եղեռնից մազապուրծ անօթևան հայեր: 1926 թ. ուներ 301 բնակիչ: Գյուղի հարավային եզրին է գտնվում Քաղենիի ամրոցը, որը, հավանաբար, Կամսարականները կառուցել են ուրարտական ամրոցի տեղում: 12-րդ դարում ավելացվել են բուրգեր: 1812թ. Երևանի սարդար Հուսեյին խանը ամրոցը շրջապատել է նոր պարիսպներով և 8 աշտարակներով (ՀՍՀ, հ. 8, էջ 264-265): Կարծում ենք Ե. Կյուրեղյանն այս ամրոցն է կոչում Սարդարի անառիկ բերդ:

սատկել: Սատկեցուցինք: Ինձի և Արշակին տարան Թալին: Էլ չհասկացամ՝ ինչ եղավ, և կռիվը ուր հասավ, ցավից ուշագնաց եղա: Երբ աչքերս բացեցիմ, մի մաքուր սենյակում էիմ:

Ուրեմն՝ պարզվեց, որ ինձի և Արշակին փոխադրել են Էջմիածին: Այդ օրը 1918 թվի մայիսի քսանութն էր: Երեկոյան գնդապետը, Օվանեսը և մի զինվոր, որ անունը Տաճատ Թերլեմեզյան էր՝ եկան մեզի տեսնալու: Բժիշկը գնդապետին կասի. «Արշակը թող այստեղ մնա, իսկ Երվանդին փոխադրենք Երևան, վիճակը ծանր է, գնդակը պայթուցիկ է եղած, ոտքի միսը պոկել է»:

ԵՐԵՎԱՆԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԸ

Զգիտեմ՝ ինձ ինչպես են փոխադրած Երևան, ցավից տեղափոխելիս ուշագնաց էիմ եղած: Ոչ մի թմրացուցիչ դեղ չկար: Աչքերս բացեցիմ, տեսամ մի մորուքավոր բժիշկ, և մի միջահասակ տիկին ինձ մոտ կանգնած են: Բժշկին կասեին պրոֆեսոր Օհանես Օհանեսյան[289] բժշկապետ, տիկնոջը՝ Սոնա մայրիկ:

[289] Բժիշկ Հովհաննես Հովհաննիսյան ծնվել է 1865թ. Երևանում: Ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը (1891): Նույն թվականին բժիշկ է աշխատել Մոսկվայի նահանգում: 1895թ-ին Երևանի քաղաքապետարանի հրավերով վերադարձել է հայրենիք: Եղել է Երևանի քաղաքային հիվանդանոցի գլխավոր բժիշկ, աչքի հիվանդությունների ու վիրաբուժության բաժանմունքների վարիչ (1895): Կատարելագործվել է Մոսկվայի, Բեռլինի, Վենետիկի և Փարիզի վիրաբուժական կլինիկաներում: 1911թ. Երևանում բացել է սեփական հիվանդանոց, որը 1915թ-ից գործել է Աստաֆյան 39, այժմ՝ Աբովյան 3 հասցեում գտնվող շենքում: Հիվանդանոցն ունեցել է ակնաբուժական և վիրաբուժական բաժանմունքներ: Հ. Հովհաննիսյանը եղել է Կովկասյան հայկական բարեգործական ընկերության Երևանի բաժանմունքի նախագահ, Քաղաքների միության Երևանի կոմիտեի բժշկության բաժնի վարիչ, Երևանի բժշկական ընկերության նախագահության անդամ, Սբ Հռիփսիմեի իգական գիմնազիայի բժիշկ: Մահացել է 1935թ. Երևանում (Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1879-1917թթ.), Երևան, 1963, էջ 370, 480: ՀՀՀ, հ. 3, էջ 397: Հոգեբույժ Հ. Մինասյանի Հայ բժշկության պատմության թանգարանի արխիվի նյութեր):

Անցավ տասը օրը: Ամբողջ ժամանակ անտանելի ցավ ունեմ: Ինձի հարցուցին. «Ո՞վ ունիս, ազգական և բարեկամ»: Ասիմ. «Ոչ ոք չունիմ»: Ասացին. «Այս թուղթը ստորագրիր»: Հարցուցիմ. «Ինչի՞ համար է»: Ասացին. «Քո ոտք պիտի գործողություն անենք»:

Հասկացա, որ ոտքս պիտի կտրեն, և հանկարծ ճչացիմ. «Չեմ ուզում, չեմ ստորագրի, իմ կինս գործողությունով մահացավ»: Ինձի ասեղ խփեցին, հանգստացամ: Երկրորդ օրը գնդապետ Տիգրանը և Օվանեսը եկան ինձի տեսնալու: Շատ ուրախացանք: Նստեցինք զրույցի և գնդապետն ասաց. «Երվա՛նդ, էն թուրքը, որ սպանեցիր, քո ընկերը՝ բլթենցի Կալեն, նրա մոտից տասնութ ոսկի և մի քիչ էլ թուրքական թղթադրամ գրպանից հաներ է, քո գրպանում եղած մի բուռ ռուսական դրամը և քո մաուզերը բերած եմ հանձնեմ քեզի»: Ես ասացիմ. «Պարո՛ն գնդապետ, ամենը պահիր քեզի մոտ, եթե լավացամ տուր ինձի, եթե մեռամ, իմ մաուզերը տուր իմ ընկեր Կալեին, իսկ փողերը մեր ամբողջ ընտանիքից միայն իմ որբ տղան է մնացել, որ Երևանի Ամերիկյան որբանոցումն է, որբանոցի տնօրենը Իշխանագոմից պատվելի քաջ Հակոբ Մուդոյանն է, հերոսաբար կռվեց և քսանհինգ հազար ժողովուրդը ազատեց, տարավ Վան քաղաքը, այժմ տղաս, եթե ողջ է, յոթ տարեկան կլինի, հարցրեք և այդ փողերը տվեք նրան»: Այս խոսակցության ժամանակ Սոնա մայրիկը, թաշկինակը աչքերին, կուլար: Հյուրերը ելան, գնացին:

ՓՐԿԱՐԱՐ ՀՈԽԱՆԸ

Երկրորդ օրը ծառան եկավ, ասաց. «Մի կուռո գյուղացի Երվանդին կուզի տեսնալ, անունը Հոխան է»: Ասիմ. «Իմ հորեղբայրն է, թողեք թող գա»:

Եկավ Հոխանը, ճակատս համբուրեց, նստավ և իր ծխամորճը, որ կավից էր շինել, հանեց, որ ծխի: Սոնա մայրիկն

ասաց. «Եղբա՛յր, այստեղ արգելված է ծխելը»: Հարցուցիմ. «Ինչպե՞ս ինձի ճարեցիր»: Մոռացամ ասելու, որ գնդապետն ինձի ասաց, որ մեր գունդը հանգստի եկավ, այժմ Մալականսկայա[290] փողոցում մեր գրասենյակն է և ասաց. «Զինվորներին տասնհինգ օր արձակուրդ տվեցիմ»:

- Այդ զինվորները,- ասաց Հոխանը,- եկան մեր քաղաք՝ Նոր Բայազետ, ես քեզանից հարցուցիմ, ասացին՝ Երվանդը վիրավոր է, Էջմիածնի հիվանդանոցումն է: Գնացիմ Էջմիածին, հարցուցիմ, ասացին Երևանում Աստաֆյան[291] փողոցի Պողոս-Պետրոս եկեղեցու[292] մոտի հիվանդանոցն է, հարցնելով եկամ, գտամ:

Բժիշկն ասաց. «Երվա՛նդ, դու ասացիր, որ ոչ ոք չունիմ»: Հոխանն ասաց. «Պարո՛ն բժիշկ, դուք մեզի կուռռ կանվանեք, ճիշտ է, մենք սարեցի ենք, և անուսում, բայց նահապետական ժողովուրդ ենք: Ես ո՛չ Երվանդի հորեղբայրն եմ, և ո՛չ էլ ազգականը: Մեր շրջանից մինչև Երվանդի շրջանը տասը օրվան ճանապարհ է: Երբ մեր գյուղը կոտորեցին, ես և ընկերս մեր գյուղի կոտորածը կազմակերպող աղային սպանեցինք և փախանք հասանք Երվանդենց գյուղը: Երվանդի հայրը երկուսիս պահեց տարիներ և ինձի ամուսնացրեց: Այժմ ունիմ չորս տղա և երկու աղջիկ: Կապրենք Նոր Բայազետ քաղաքը: Զինվորներից լսեցիմ՝ Երվանդը վիրավոր է, Էջմիածին է: Ես գնացիմ, ինձի հասցե տվեցին, ձեր հիվանդանոցը եկամ, որ տիրությունն անեմ, որ իմ կերած հացը հալալ լինի»: Եվ խնդրեց, որ վերքը իրեն ցույց տան: Սոնա մայրիկն ասաց. «Վաղը ժամը ութին արի, քեզի ցույց կտանք»:

[290] **Մալականի** (ռուս.՝ **Մոլոկանսկայա**) փողոցը 1921թ. վերանվանվել է Կարմիր բանակի: Այժմ՝ Գրիգոր Լուսավորչի:

[291] **Աստաֆիևսկայա** (Աստաֆյան) է կոչվել 1864-1869թթ. Երևանի նահանգապետ, գեներալ-մայոր Աստաֆիևի անունով, 1921թ. վերանվանվել է Աբովյան փողոց:

[292] **Պողոս-Պետրոս** եկեղեցին, որը կառուցվել է 5-6-րդ դարերում, գտնվում էր ներկայիս «Մոսկվա» կինոթատրոնի տեղում: Երևանի 1924թ. հատակագծում ակադեմիկոս Ալ. Թամանյանը Պողոս-Պետրոս եկեղեցու մոտ նախատեսում էր կիսաշրջանաձև հրապարակ, որով բարեկարգվում էր եկեղեցու շրջակայքը: Բայց 1930թ. քաղաքային իշխանությունները որոշեցին քանդել այն: Իզուր էին հայ մտավորականները բողոքում, որ եկեղեցին ունի 6-7 շերտ որմնանկարներ, որոնցից հնագույնը 5-րդ դարի է, որ դրանք համաշխարհային առումով բացառիկ են և մեծ հեղաշրջում են առաջացնելու արվեստի պատմության մեջ: Եկեղեցին քանդվում է և «Մոսկվա» կինոթատրոնի կառուցման ժամանակ գտնվում են դամբարաններ, խճանկարի մնացորդներ, մի շատ խոշոր շենքի հիմքեր (Վարդանյան Ս., Հայաստանի մայրաքաղաքները, էջ 234-235):

ՎԵՐՔԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Առավոտ շուտ Հոխանը եկավ, վերքս տեսավ, մաքրեցին: Եկանք իմ սենյակը: Սոնա մայրիկը ասաց. «Հոխա՛ն եղբայր, ինչպե՞ս է, կլավանա՞»: Հոխանն ասաց. «Այո՛, վերքը կլավանա, ես կբուժեմ»: Բժիշկը ծիծաղեց, ասաց. «Կուռռ՛, ես Ռուսաստան համալսարան ավարտած եմ, հույս չունիմ, որ լավանա, դու կլավացնե՞ս»: Հոխանը բարկացավ և ոտքի ելավ, ձեռքը դրեց սեղանին, ասաց. «Դոկտո՛ր, եթե չլավացնեմ, էսա թևս, էստեղից կտրի քո սղոցով»: Եվ ուզեց երթալ: Սոնա մայրիկն ասաց. «Եղբա՛յր Հոխան, նստիր խոսենք, ասենք ոչ մեկը հայերի կյանքից խաբար չունին: Զե՞ս տեսնա, որ հայերեն շատ չգիտի, կերթաս ի՞նչ անելու»: Հոխան ասաց. «Մի սենյակ կվարձեմ և հիվանդս կտանեմ»: Բժիշկն ասաց. «Կտանես, կմեռնի»: Հոխանն ասաց. «Կմեռնի, ես կթաղեմ իմ մեռելը»: Սոնա մայրիկը բարկացավ և ռուսերեն խոսեց: Բժիշկը նստեց: Սոնա մայրիկն ասաց. «Եղբա՛յր Հոխան, եթե ես այս տեղում մի սենյակ տամ քեզի կմնա՞ս այստեղ, կբուժե՞ս քո հիվանդը»: Հոխանն ասաց. «Քույրի՛կ, քո ձեռքի տեղը քո ոտքն էլ կպագեմ, միայն մի պայմանով, որ այս դոկտորը հիվանդիս վրա չգա, և ձեր ճարերը վերքի վրա չգործածեք: Միայն մաքրեք և փաթաթեք»: Սոնան ասաց, որ վաղը գա: Հոխանը գնաց:

Սոնա մայրիկը մի լավ սենյակ՝ երկու մահճակալով, տվեց մեզի: Հոխանը եկավ Սոնա մայրիկի ձեռքը համբուրեց: Մի փոքր պայուսակ թևի տակն էր, դրեց սեղանին և սպասեց իմ վերքը բացելուն: Տարան վերև, դժվար էր, անտանելի ցավերով վերքս բացին: Հոխան իր պայուսակից մի շարք փոշիներ և ուրիշ բաներ խառնեց և դրեց վերքիս, և ասաց. «Երկու օր չբանաք, ես կուգամ»: Այդ երկու օրը Հոխանը գնաց իր հագուստը և իր մեծ պայուսակը առավ, եկավ և սկսեց ինձի բժշկել: Այս եղավ 1918-ի հունիս 20-ին: Հոխանն կերթար սարեր և տեսակ-տեսակ ծաղիկներ՝ սուսան, կներբուկ, ախպոր արուն, մեռելածաղիկ և բուսական կաթեր կբերեր, կխառներ, կդներ վերքիս վրա: Պայմանն էր, որ երկու օրը մի անգամ վերքս բացեն: Երկու ամիս շարունակ բժշկությունը անդադար այսպես շարունակեց մինչև օգոստոսի վերջը:

Մի առավոտուն Հոխանը մի ամանով խաշ բերեց և երկու շիշ գինի, նստած կուտեինք, Սոնա մայրիկը եկավ տեսավ խաշ կուտենք և գինի կխմենք, ասաց. «Հոխա՛ն եղբայր, այդ ի՞նչ խաշ է»: Ասաց. «Մայրի՛կ, տավարի առջևի ոտը հիվանդին կջապրի»: Մայրիկ հարցուց. «Ջապրել ի՞նչ է»: Ասացիմ. «Կլավացնի, ուժեղ է և սնունդ ունի, մանավանդ որ գինի խմես խաշի հետ»: Մայրիկը ասաց. «Որ այդպես է, մենք Աշտարակից ենք, ամենալավ գինիները մենք ունենք: Այսօր կխոսեմ տղայիս հետ, ձեզի ամենահին գինիից բերի»: Մյուս օրը եկավ մի երիտասարդ, Վիրաբ անունով, մայրիկի հետ բարև ասաց և մի փոքր կուժ տվեց Հոխանին ու գնացին:

Հոխանը մի բաժակ խմեց և ասաց. «Երվա՛նդ, այս գինին քո արյունը կշատացնի, ես չեմ խմելու, ինձի ուրիշ խմիչք կբերիմ»: Հոխանը ինձի սկսեց խաշ և գինի տալ: Հասավ սեպտեմբերը: Հոխանը մայրիկից խնդրեց երկու փայտ տա, որ ինձի քելացնի: Կամաց-կամաց, այսպես ման տալով, հասանք հոկտեմբերը: Ես մի փայտը գցեցիմ և մի փայտով «սալոնում» կպտտեիմ:

Մեկ օր ինձի տեսնալու եկան գնդապետը, Օվանեսը և Թերլեմեզյան Տաճատը: Գնդապետը ինձի գրկեց, համբուրեց, նստանք զրուցելու: Սոնա մայրիկը և բժիշկը եկան, ես մեկ-մեկ հյուրերիս ներկայացրի, որ ինչ պաշտոններ ունին և ովքեր են: Գնդապետը շնորհակալություն հայտնեց մայրիկին և բժշկին, մայրիկն ասաց. «Մենք չենք բժշկել, ահա մեր դիմաց նստած է Երվանդի բժիշկը»: Եվ ցույց տվեց Հոխանին: Գնդապետը հարցուց՝ որտեղացի՞ է: Հոխանը բացատրեց իր կյանքից և մեր տան ապրելուց: Օվանեսը, որ ծանոթ էր, ծիծաղեց և կատակով ասաց. «Հոխան, մեր գյուղի ամենագեղեցիկ աղջիկը առեցիր»: Հոխանը ասաց. «Օվանե՛ս, իմ կինը սիրուն չէ, բայց տնարար է, այժմ ունիմ չորս տղա և երկու աղջիկ, այս ամենի համար դու գիտես, ես պարտական եմ Երվանդի հորը և այժմ եկած եմ իմ պարտքը վճարելու»: Վերջում խնդրանք արեց գնդապետին. «Երվանդին իրավունք տուր տանեմ մեր տուն, և առաջվան պես առողջ կհանձնեմ քեզի»: Գնդապետն ասաց. «Հոխա՛ն եղբայր, արդեն ձմեռ է, ոչ մի վախ չկա թշնամուց: Ինչքան կուզես պահիր»: Մայրիկը խնդրեց, որ նախքան Հոխանի տանելը մի շաբաթով ինձի տանի իրենց գյուղը: Համաձայնվեցին, որ այդպես լինի:

Նախքան հյուրերի գնալը, Հոխանը խնդրեց մայրիկին, որ դոկտորին բերի, վերքը տեսնա: Կանչեց: Եկավ դոկտորը վերքը տեսավ, չհավատաց, շատ զարմացավ, ասաց. «Եղբա՛յր, ի՞նչ դեղեր կօգտագործես»: Հոխանը ցույց տվեց պատուհանի առաջ դրված ծաղիկները, և պայուսակի մեջ եղած բույսերի կաթերը՝ տեսակ-տեսակ տուփերի մեջ:

ԱՇՏԱՐԱԿՈՒՄ

Նոյեմբերին Սոնա մայրիկը երկու կառք վարձեց՝ մեզի տանելու իրենց Աշտարակ գյուղը: Մայրիկը նստեց իմ կառքը, Հոխանը և բժիշկը՝ մյուս կառքը, և մենք գնացինք:

Մայրիկը խնդրեց, որ պատմեմ իմ կյանքից, մեր երկրից, ապրելակերպից, և մի տուփ դրեց մեր դիմաց: Ես սկսեցի իմ մանկությունից, մեր կոտորածներից, ինչ որ գրած եմ այս տետրակիս մեջը, մինչև վիրավորվելս և մայրիկի հիվանդանոց գալս: Զգիտեմ՝ Երևանից Աշտարակ կառքով քանի՞ ժամվան ճանապարհ է, այդ բոլոր ժամանակը Սոնա մայրիկը արտասուք թափեց:

Հասանք գյուղը, և մի մեծ դուռի առաջ կառքը կանգնեց: Տնեցիները՝ փոքրերը և մեծերը ուրախ-ուրախ մեզի դիմավորեցին, տարան վերև: Վեց օր մեզի պահեցին և հյուրասիրեցին իրենց տան մեջ:

Աշտարակը շատ-շատ լավ տեղ է, ունի ընդարձակ, լավ այգիներ: Մի մեծ գետ գյուղի տակից կերթա: Վերջի օրը գյուղապետը մեզի ընթրիքի հրավիրեց: Շատ կենացներ խմեցին, քասայով գինի կխմեին: Սոնա մայրիկը ոտքի ելավ և խոսեց: Այսպես ասաց. «Այս բաժակը կխմեմ հին-հին սերունդի կենացը, որ նրանց ներկայացուցիչը այս մազոտ կուրծքով «կուռոն» է: Մինչև այժմ դուք չեք կարող հասկանալ, որ ջանֆիդային ինչո՞ւ իր հանգիստը, իր տունն ու երեխաները թողած, զենքը առած, սարերը կշրջի, և մենք միայն նրանց երգերը սովորած ենք, բայց նրանց դարդից խաբար չունինք: Ամբողջ ճանապարհին Երվանդը պատմեց՝ ինչ-որ գիտի և ինչ-որ արած և տեսած է, ինչ անցած է նրա գլխով: Այս ջանֆիդայիները հանուն հայրենիքի իրենց սեփական կյանքը և ընտանիքը զոհած են մեր համար, և մենք, փոխանակ նրանց հարգելու, «կուռո» ենք անվանում: Հիվանդանոցում մենք այս երիտասարդ տղայի ոտը պիտի կտրեինք, և այս եղբայրը հին սերնդի ճարերով նրա ոտքը բժշկեց: Խնդրեմ, ոտքի կանգնեք և խմեք հին սերնդի ներկայացուցիչ վիրաբույժի՝ Հոխան եղբոր կենացը»:

Սենյակը բաժակների չխկչխկոցով լցվեց: Բոլորը Հոխանի կենացը խմեցին:

Մայրիկն իր ձեռքի պայուսակից հանեց եվրոպական մի ծխամորճ և նվիրեց Հոխանին՝ իբրև հիշատակ՝ այն դժվար հինգ ամսվան հիվանդանոցում անցկացրած օրերի:

Առավոտուն ճամփա ելանք դեպի Երևան, հասանք հիվանդանոց: Գիշերը մնացինք, առավոտուն Հոխանը կառք բերեց: Ամենքին մնաս բարի ասացինք: Ելանք ճանապարհ դեպի Սևանա լիճը և Նոր Բայազետ քաղաքը: Գիշերը հասանք Հոխանի տունը, Փիրուզա մայրիկը՝ Հոխանի կինը, ինձի տեսնալուն պես գրկեց, շատ լացեց և օգնեց, որ մտնեմ տունը: Շատ հարցուփորձ կաներ: Երբ հարցուց մայրիկիս և կնոջս մասին, պատմեցիմ, երկար լացեց:

Ձմեռը եկավ: Գեղամա սարերը ձյուն նստեց: Փիրուզա մայրիկը քուրսին դրեց, մտանք տակը: Սևանա շրջանին Գեղամա շրջան կըսեն, ժամանակին Գեղամ իշխանի կալվածն է եղած: Ես կամաց-կամաց առանց փայտի, սրահում ման կուգայիմ:

Նոր տարին եկավ, հասանք 1919 թ.: Հազար ինը հարյուր տասնինը թվի փետրվարին, ես առանց փայտի կերթայիմ շուկան: Մի օր ասացիմ. «Հորեղբա՛յր, մի անգամ փորձենք ձի նստեմ»: Ասաց. «Վաղը կփորձենք»: Մի փոքր բարձ էր չինել, կապեցիմ ոտքերիս մեջը, մի շատ դանդաղաշարժ ձի ուներ, նստեցիմ, մի քիչ տեղ պտտեցիմ, շատ ուրախացամ:

Մի օր Հոխանն ասաց. «Երվա՛նդ, մոտիկ գյուղ կա, այնտեղ մի մարդու ոտը պիտի կապեմ, կուգա՞ս ինձի հետ»: Ասացիմ. «Այո՛, եթե տանես, շատ կուրախանամ»: Գնացինք, Երանոս[293]

[293] **Երանոս** գյուղը գտնվում է Մարտունի քաղաքից 9կմ հյուսիս-արևմուտք՝ Սևանա լճի ափին, Ձագ գետի ստորին հոսանքում: 1831թ. ուներ 332, 1897թ.՝ 1794, 1926թ.՝ 2676, 1979թ.՝ 4509 հայ բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1829-30թթ. գաղթել է Արևմտյան Հայաստան Ալաշկերտի գավառից: Գյուղի շրջակայքում պահպանվել են տարբեր հուշարձաններ (13-րդ դարի Սուրբ Հովհաննես եկեղեցի, Թուխ Մանուկ, Սուրբ Սոֆյա անուններով մատուռներ, 15-17-րդ դարերի խաչքարեր) (ՀՀՇՏԲ, հ.2, էջ 211):

գյուղն էր: Մարդու ոտը երկու կողմից տախտակներ դրեց, կապեց: Վերադարձանք տուն:

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԵՐ ԲԱՆԱԿ

Հոխանն ամեն տասը օրը մի անգամ կերթար Երևան: Իր մեծ տղա Անդրանիկը գրագետ էր: Նրան խնդրեցիմ, որ իմ կողմեն մի նամակ գրի մեր գնդապետին, ես լավ գրել չգիտեի: Անդրանիկը նամակս գրեց, և Հոխանը տարավ:

Գնդապետը, երբ իմացավ, որ արդեն կարողանում եմ ձի նստել, նամակում գրած էր. «Արի, գարնանը շատ գործ ունինք», և մառուզերս ու փողերս ուղարկած էր:

1919 թվի մարտի առաջին օրերը Հոխանը մի կառք կանչեց: Մի ոչխար դրեց կառքի մեջ, և մնաս բարի ասացինք, ելանք ճանապարհ:

Երևան հասնելուն, կառապանին ասաց. «Քշիր Կոնդի Աբաս Ալիի հյուրանոցը»: Գիշեր այնտեղ մնացինք: Առավոտուն ասաց. «Երվա՛նդ, որտե՞ղ կուզես երթանք, հիվանդանո՞ց, թե՞ զորանոց»: Ասացիմ. «Հորեղբա՛յր, նախ երթանք շուկան, ինձի համար հագուստ առնենք»: Գնացինք Կաբանի տակ, տեսանք մի կին շրջապատված է մի քանի մարդկանցով. կվիճեն: Մեր հարցումին կինն ասաց. «Այս հագուստը ամուսնունս է և կծախեմ: Մարդս զինվորական էր, Բոյուք Վեդիի կռվին սպանված է»:

Կինն ասաց. «Էս հագուստի արժեք իննսուն ռուբլի կասեմ, ասոնք յոթանասուն կուտան»: Ես հագուստն առիմ, հագամ, շատ լավ եղավ ինձի վրա: Հոխանը հարյուր հիսուն ռուբլի տվեց: Կինը ասաց. «Սխալված ես, շատ ես տվել»: Հոխանն ասեց. «Քույրի՛կ, ճիշտ եմ տվել, հալալ լինի»: Մի մատանի էլ առեց, ասաց. «Երվա՛նդ, էս էլ պահիր, գուցե պետք կուգա»: Ես հասկացամ: Մտանք շուկան, ինձի համար գլխարկ, կոշիկ, ինչ որ անհրաժեշտ պետք ունեիմ առեցինք,

եկանք հյուրանոց: Առավոտուն մաքուր հագնվանք գնացինք հիվանդանոցը: Ոչխարը տվինք, ծառան տարավ ներս: Լուր հասավ Սոնա մայրիկին և բժշկին: Ուրախ-ուրախ եկան՝ համբուրվեցինք: Մայրիկն ասաց. «Եղբա՛յր Հոխան, այն ի՞նչ ոչխար է»: Հոխանն ասաց. «Քույրի՛կ, հինգ ամիս մենք ձեր հացը կերած ենք, բերիմ, որ ուտեք և ձեր հացը մեզի հալալ լինի»: Սեղան բացին, սկսեցինք ուրախությունը:

Սոնա մայրիկը բաժակ բարձրացրեց և առաջարկեց խմել Հոխանի կենացը՝ ասաց.

-Մենք այս երիտասարդին պիտի դժբախտացնեինք, ոտքը պիտի կտրեինք: Այժմ բոլոր ուսյալ մասնագետներս պիտի խոնարհվենք այսպիսի փորձառու վիրաբույժ Հոխանների առաջ: Դոկտո՛ր, դու, որ նրան կուռռ ասացիր, Հոխանը վիրավորված է քեզանից, և չթողեց, որ դու նրա հիվանդի վրա դաս, խնդրեմ, ելնես Հոխան եղբորից ներողություն խնդրես:

Բժիշկը ելավ, Հոխանին համբուրեց, ներողություն խնդրեց և գնաց վերև: Վերադարձավ, մի վկայական և մի մեդալ տվեց Հոխանին, որ Սևանի շրջանում ազատ կարող է բժշկություն անել:

Հասավ բաժանման պահը, շատ-շատ արցունքներով մնաս բարի արեցինք ու գնացինք մեր բանակատեղը: Մեզի տեսնալուն՝ տղաները բոլորը հավաքվեցին մեր շուրջը: Գնդապետը շատ ուրախացավ, ասաց. «Մի քայլ գնա-արի»: Ես գնացիմ-եկամ, պատվի կանգնամ, գնդապետն ասաց. «Ոտքդ մի քիչ քարշ կուգա»: Հոխանն ասաց, որ փոքր երակները կտրված են, բայց ոչինչ, կլավանա: Հոխանին մինչև Աստաֆյան փողոց բերանք, և այդ տեղում շատ հուզված բաժանվեցի իմ ազատարար Հոխան հայրիկից:

Եկանք բանակ, ինձի տվեցին իմ հրացանը: Ինչպես գրած եմ՝ իմ ընկեր Կալեն, էն Թուրքին, որ ես խփեցիմ, նրա թուրքական հրացանը պահած էր ինձի համար: Նաև մի կարմիր ձի տվեցին ինձի:

Գնդապետը ինձի հանձնեց իմ ձիավոր հիսնյակը՝ Եղիազարի հարյուրյակի մեջ: Այս եղավ 1919-ի մարտ ամսու տասին:

Այդ օրերին մեր դրությունն շատ վատ էր, հաց չկար:

Մի քանի օր անցավ, և Դրոն եկավ բանակի վիճակի քննության, հատկապես՝ հացի համար: Մեզի կուտային կես ֆունտ չալթուկի[294] կամ լոբիի ալյուր: Սրանք կլցնեին թիթեղների մեջ, կդնեին փուռը, կողքեր կայրվեր և մեջը խմոր կմնար, չէր ուտվի: Շատ նեղություն կար հացի համար, էլ չեմ ասում հագուստը, որ չէր ճարվում:

Դրոն, այս տեսնալով, զինվորի բաժին ալյուրը արեց օրական մեկ ֆունտ, բայց այդ ուտելիքի դժվարությունից առավել, ճակատից զինվորները կփախնեին և չէին ենթարկվի իրենց հրամանատարներին:

Գնդապետին կանչեցին ժողովի: Գնաց, եկավ և ասաց. «Կառավարությունը շատ նեղված է զինվորների անկարգ փախուստից: Պետք է առաջն առնել»:

Եղիազարին ասաց. «Քո հարյուրյակը, հիսուն ձիավորով, պիտի ելնես շրջանները և փախստականներ բռնես, ուղարկես Դրոյին: Դրոյի այս հրամանը ամեն գյուղի գյուղապետին տուր՝ կարդալու»: Մեր հիսնյակը դրեցին Եղիազարի հրամանի տակ:

1919 թվի մարտի 20-ին մենք գնացինք Քանաքեռից վերև՝ Կըռխբուլաղի[295] շրջանի, Արամուս[296] գյուղը: Այդտեղի գյուղապետը տասնութ հոգի բռնեց, և տարավ Երևան, անցանք Զաթկռան գյուղը: Այդտեղի միլիցապետը, կաշառք առնելով, տասը հոգի թաքցրած և պահած էր: Գյուղապետը մեզի լուր տվեց: Եղիազարը նրա ձեռքերը կապեց, որ ուղարկի Դրոյին: Նրա կնոջ և երեխաների աղերսագին խնդրանքով Եղիազարը ներեց և ազատեց: Անցանք Կըռխբուլաղ գյուղը: Վեց հոգի բռնեցինք: Բռնվածներից մեկի մայրն ինձ ասաց. «Եթե արդար մարդ եք, ինչո՞ւ այդ տունի զինվորին չտարաք»: Ես ասացիմ. «Այնտեղ միայն մի պառկած ծննդաբերող կա»: Ասաց. «Գնա ծննդաբերողի վերմակը վերցուր, տես տղա՞ է, թե՞ աղջիկ»:

Այս խոսքը ինձի վիրավորեց, գնացիմ վերմակը վերցրամ, տեսամ մի երիտասարդ հրացանով պառկած է: Կալեն հրացանը առեց և մտրակելով բերինք խառնեցինք մյուսներին: Տարան Երևան:

Այսպիսով, այդ շրջանի գյուղերից երկու հարյուր և հինգ հոգի հավաքեցինք, ուղարկեցինք Երևան:

[294] **Չալթուկ**-կճեպը՝ թեփը չհանած բրինձ:

[295] 16-19-րդ դարերում **Կըռխբուլաղ** անունով գավառ է եղել Երևան քաղաքից հյուսիս, որը տարածվել է մինչև Գեղամա լեռների փեշերը: Ուներ շուրջ 30 բնակավայր: 1850թ-ից Կըռխբուլաղը գավառակ էր Երևանի նահանգում (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 124):

[296] **Արամուս** գյուղը գտնվում է Աբովյան քաղաքից 4կմ հարավարևելք: 1831թ. ուներ 228, 1873-ին՝ 803, 1907թ.՝ 1241, 1914թ.՝ 1780, 1922թ.՝ 1853, 1979թ.՝ 2492 հայ բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել էին Պարսկահայքից 1829-1830թթ.: Աղբյուրների վկայությամբ Արամուսը հայոց Տրդատ 3-րդ թագավորը նվիրել է Գրիգոր Լուսավորչին: Գյուղի կենտրոնում են գտնվում 6-րդ դարի եկեղեցու ավերակները (ՀՀՇՏԲ, հ.1, էջ 388-389):

ԵՂԻԱԶԱՐԻ ՍՊԱՆՎԵԼԸ

Այժմ պիտի երթանք Սևանա լճի շրջանը, գնացինք Դալի Ղազոյի գյուղը, որ Կարակալա[297] կասեին: Թուրքի գյուղ

[297] **Կարակալա** գյուղը գտնվում էր Երևանի նահանգի Նոր Բայազետ գավառում, Բայազետ (այժմ՝ Գավառ) քաղաքից շուրջ 28կմ հարավարևմուտք, Գեղամա լեռների փեշերին: Ռուսական աղբյուրներում նույն տեղում հիշատակվում էին նույնանուն երկու գյուղեր՝ Կարակալա Առաջին և Կարակալա Երկրորդ, որոնցում, 1906թ. համապատասխանաբար բնակվում էին 290 և 759 ադրբեջանցիներ: Ըստ Երվանդ Լալայանի՝ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին գյուղում նշմարվում էին եկեղեցու հիմնապատեր և մի մատուռի ավերակներ՝ 1206 և 1301 թվականների հայերեն արձանագրություններով (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 990-991): Կարակալա Երկրորդը այժմ մտնում է Կոտայքի մարզի մեջ: Գտնվում է Աբովյան քաղաքից մոտ 15 կմ արևելք, Գեղամա լեռնաշղթայի լանջին: Սևաբերդ է վերանվանվել 1948 թ.: 1926 թ. ուներ 343, 1939-ին՝ 720, 1989-ին՝ 305 հայ բնակիչ, որոնց նախնիները եկել էին Մուշի, Վանի գավառներից՝ Մեծ եղեռնի օրերին (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 575):

էր, Ղազոն գրված և թուրքերին մաքրած էր: Բոլոր գյուղացիները մշեցի էին:

Կարակալայում երկու օր Ղազոն մեզի հյուր պահեց և սարերով մենք իջանք Սևանի ափի առաջի գյուղը, որ Երանոս կըսեին: Երանոսի գյուղապետը մի հսկա մարդ էր՝ Մկրտիչ անունով: Նա տասներկու մարդ իրենց գյուղից և վեց մարդ էլ մոտիկ Աթամա[298] գյուղից հավաքած էր, հանձնեց Եղիազարին:

Այդտեղից անցանք Գյոզալդարա[299], մի դրախտ և գեղեցիկ ձոր, երկու կողմերից տուներ շարված են ձորի բերանները, մեջտեղից մի մեծ ջուր կերթա դեպի Սևանա լիճը: Գյուղապետը տարիքն առած մի հրաշալի մարդ էր: Մեզի երկու օր հյուր պահեց, կերակրեց և երեսունչորս հոգի հանձնեց Եղիազարին:

Էնտեղից իջանք Նոր Բայազետ՝ Հոխանի քաղաքը: Փիրուզա մայրիկը, ինձի տեսնալուն, վազեց գրկեց: Հոխանը և տղաները եկան, շատ լավ ուրախություն արեցինք: Հոխանի տղաների անուններն էին՝ Անդրանիկ, Սերոբ, Վարուժան, Գևորգ:

Երկրորդ օրը գնացինք Վերի Կարանլուղ[300] գյուղը: Մեզի չընդունեցին, և կրակ բացին մեր վրա, մի զինվոր՝ Հակոբ անունով, սպանվեց: Մենք գյուղը պաշարեցինք: Լուր ուղարկեցինք Բասարգեչար[301] քաղաքը, Ասլանին, որ չեն ընդունում և մի զինվոր էլ մեզանից սպանեցին: Ասլանը եկավ, գյուղացիները հանձնվան, տասնչորս հոգի հավաքեցինք և ուղարկեցինք Երևան: Եկանք Ցածրի Կարանլուղ[302] գյուղը: Հեռվից մեզի կապեցին գնդակի: Եղիազարը՝ այդ հին քաջ ֆիդային, սպանվեց դավաճան հայու գնդակից: Ասլանը հրամայեց՝ անխնա խփել, ով որ հանդիպի: Երեկոյան ճերմակ լաթ պարզած եկան տերտերը, գյուղապետը և մի քանի տարեց մարդիկ: Զենքերը հավաքեցին, հանձնեցին Ասլանին և երեսուներկու ապստամբ՝ բոլշևիկ տղաներ, և իրենց մեծավոր Նիկոլը, տարանք Բասարգեչար քաղաքը: Այնտեղ նրանց բանտարկեցին:

---

[298] **Աթամա**-հեղինակն, ըստ երևույթին, նկատի ունի Աթամախ գյուղը, որը գտնվում է Գեղարքունիքի մարզում, Մարտունի քաղաքից 10 կմ հյուսիս-արևմուտք, Սևանա լճի ափից 4 կմ հեռու: 1968 թ. վերանվանվել է Վարդաձոր: 1831 թ. ուներ 169, 1926 թ.՝ 1308 հայ բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել էին Ալաշկերտի գավառից 1828-1829 և 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմներից հետո (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 775):

[299] **Գյոզալդարա** գյուղը 1945թ. վերանվանվել է Վարդենիկ: Գտնվում է Գեղարքունիքի մարզում, նախկին Մարտունու շրջանում, Մարտունի քաղաքից 10-11 կմ արևելք, Սևանա լճի ափամերձ գոտում: 1831թ. ուներ 560, 1897-ին՝ 3016, 1926-ին՝ 4693 բնակիչ, որոնց նախնիները 1827-29 թթ. գաղթել էին Պարսկահայաստանից և Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի և Մուշի գավառներից (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 781):

[300] **Վերին Կարանլուղը** գտնվում էր Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի մեջ, այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի կազմում, Մարտունի-Եղեգնաձոր ճանապարհի վրա, Մարտունի գետի աջ ափին:

1968 թ. վերանվանվել է Գեղհովիտ: 1914 թ. ուներ 2131, 1926 թ.՝ 2273, 1979 թ.՝ 4279 հայ բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել էին Ալաշկերտի և Մուշի գավառներից: Գյուղի շրջակայքում կան բազմաթիվ հնավայրեր, քրիստոնեական հուշարձաններ (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 830):

[301] **Բասարգեչար** քաղաքը 1969թ. վերանվանվել է Վարդենիս: Հնում կոչվել է Վասակաշեն, նաև՝ Ոսկեշեն: Գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում, նախկին Վարդենիսի շրջանի կենտրոնն էր: 1863թ-ին ուներ 102 տուն բնակիչ, իսկ 1895թ-ին՝ 210 տուն՝ 1810 բնակիչ (Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 604, իսկ 1926-ին ուներ 3468, 2002թ.՝ 17600 բնակիչ: Վարդենիսը Հայաստանի հնագույն բնակավայրերից է, նրա շուրջը պահպանվել են միջնադարյան բազմաթիվ հուշարձանների ավերակներ (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 782: ՀՀՀ, հ. 4, էջ 626):

[302] **Ներքին Կարանլուղ** գյուղը 1926թ-ին ի պատիվ Ալ. Մյասնիկյանի կոչվել է Մարտունի, քանի որ նա մամուլում հաճախ այդ կեղծանունով էր հանդես գալիս: Գտնվում է Գեղարքունիքի մարզում, Մարտունու շրջանի վարչական կենտրոնն էր: 1963-ից՝ քաղաք: 1831թ. ուներ 389, 1897թ.՝ 1534, 1926թ.՝ 2499, 1981թ.՝ 10400 բնակիչ: Մարտունու շրջակայքում կան կիկլոպյան ամրոցի, հնագույն բնակատեղիի, եկեղեցիների հետքեր (ՀՀՇՏԲ, հ.3, էջ 743: ՀՀՀ, հ. 3, էջ 633):

ՄԱԶՐԱ ԳՅՈՒՂԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Բասարգեչար քաղաքը Սևանա լճի արևելյան ափի վերջին քաղաքն է: Քաղաքի հյուսիսային կողմում մի մեծ գյուղ կա՝ Մազրա[303] է անունը: Մազրայից էն կողմը երկու թուրքական գյուղ կա, միացած են Մազրային և ապստամբած են:

Ապստամբության լուրը հասավ Երևան, Դրոն հրամայեց Ասլանին անմիջապես զինաթափ անել այդ երեք գյուղերը: Ասլանը մարդ ուղարկեց այդ երեք գյուղերը, պահանջեց, որ վերջ տան խռովությանն ու հանուն բարի դրացիության զենքերը հանձնեն, նաև ենթարկվեն հայկական կառավարությանը:

Թուրքերը, մեր պատգամավորներին անպատվելով, հետ ղրկեցին: Մեզի հրաման եկավ՝ կռվելով նրանց զսպենք:

Քաղաքում մի ենթասպա կար, Ասո անունով, շատ համեստ և լավ մարդ էր, ուներ երկու գերմանական գնդացիր և վաթսունչորս զինվոր: Այդ տեղերին ծանոթ լինելով՝ Ասլանին ասաց. «Այս սարից նրանք ապահովված են, մենք սարի հետևից կարող ենք նրանց չփոթի մատնել»: Հարյուր զինվոր և մի գնդացիր վերցրեց, Ասլանին ասաց. «Երբ ես սարի գլուխը կրակ կվառեմ, դուք հարձակվեք, որ նրանց ուշադրությունը ձեր կողմը լինի, որ ես հանգիստ իջնեմ գյուղը»: Թուրքերը լավ խրամներ փորած էին, և լավ դիրք ունեին:

Արշալույսը չբացված՝ սարի կրակը վառվեց և մենք հարձակվեցինք: Թուրքերը շատ ուժեղ կռվում էին, հանկարծ սարի գլխից «ո՛ւռա» քաշելով՝ ենթասպա Ասոն կմտնի գյուղը: Թուրքերն անակնկալի եկան:

[303] **Մազրա** գյուղը 1991թ. վերանվանվել է Մեծ Մասրիկ: Գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Վարդենիս քաղաքից 5 կմ հյուսիս-արևելք: 1831թ. ուներ 293, 1897թ.՝ 1652, 1926թ.՝ 1232 բնակիչ: Գյուղը հիշատակվում է 7-րդ դարից, 16-19-րդ դարերում եղել է Մելիք-Շահնազարյանների մելիքական աթոռանիստը (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 632):

Կեսօր էր, մենք մտանք գյուղը, տեսանք իրենց աղոթքատեղի վրան մի մեծ ճերմակ դրոշակ բարձրացավ: Գյուղի մոլլան, գյուղացիները, Ղուրանով և աղուհացով եկան, Ասլանի մոտ՝ հանձնվելու:

Մենք մի սպանված և չորս վիրավոր տված էինք, թուրքերը՝ երեսունվեց սպանված և վաթսուն վիրավոր:

Մի շաբաթ մենք մնացինք Մազրա գյուղը. ափսոս, որ մենք էինք. մեր տեղը պիտի սասունցիք լինեին, որ այդ անհաշիվ հարուստ գյուղը մաքրեին:

Թուրքերը երկու եզան սայլ տեսակ-տեսակ հրացաններ բարձեցին և հանձնեցին մեզի, նրանց ներկայացուցիչների հետ ելանք Բասարգեչար քաղաքը: Կորոշվի, որ թուրքերը շատ մեծ տուգանք տան, և ենթարկվեն Հայաստանի կառավարությանը:

Մի շաբաթից հետո մեր հարյուրյակը ուղարկեցին Սևանա լճի հյուսիսային շրջանը, որ սկսվում է Մազրայի գյուղից: Լիճի կողմերի գյուղերով կուգա, կհասնի Զիբուխլու[304] գյուղը, որ դեպի Դիլիջան[305] կերթա:

[304] **Զիբուխլու** գյուղը 1935-ին վերանվանվել է Ծովագյուղ, գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Սևանա լճի ափամերձ գոտում: Դեռևս 13-րդ դարում ճապոտիկ ձևով հիշատակել է Կիրակոս Գանձակեցին: Զիբուխլուին է նվիրված Մուրացանի հայտնի «Առաքյալը» վիպակը: 1834 թվին այստեղ է եղել եվրոպացի նշանավոր ճանապարհորդ Դյուբուան, որի վկայությամբ գյուղի բնակիչների նախնիները գաղթել են Բայազետի Արծափ գյուղից 1830թ.: Այդ է հաստատում նաև Մ. արք. Սմբատյանցը, որը 1863-ին եղել է Զիբուխլուում, և նշում է, որ գյուղն ուներ 85 տուն բնակիչ, և պահպանվել էր այն տունը, որտեղ 1837թ. գիշերել է ռուսաց Նիկոլայ Առաջին թագավորը (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 860: Մ. արք. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 376, 387):

[305] **Դիլիջան** քաղաքը գտնվում է Տավուշի մարզում: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո Անդրկովկասում կատարվեցին նոր վարչական փոփոխություններ և Դիլիջանն իր շրջակայքով մտցվեց Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի մեջ: Ուներ երկու թաղ, հինը՝ հայկական, նորը՝ ռուսական: Գտնվելով Թիֆլիս-Երևան պետական խճուղու վրա՝ Դիլիջանը 19-րդ դարի վերջին առաջադիմում է, դառնում է Անդրկովկասի նշանավոր առողջարանային քաղաքներից մեկը (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 110): Մեծ եղեռնի տարիներին Դիլիջանում գործել են մի քանի որբանոցներ:

Այս շրջապտույտին մեր բռնած և գյուղապետերի հանձնած վեց հարյուր զինվոր ուղարկեցինք Երևան, և մարտի քսանից մինչև մայիսի հինգը մենք, խաբված և դավաճան հայի ձեռքով, զոհ տվեցինք աննման հերոս Ֆիդայի ոգմեցի Եղոյին՝ Եղիազարին և չորս տուների մնացած ճրագներին:

Դա շատ մեծ վիշտ էր մեզի համար: Ամեն մեկը մեկ տունից կամ մեկ գյուղից մի կերպ ազատված գա, իր արյան գնով Հայաստանի Հանրապետություն ստեղծի և հայի գնդակով սպանվի՞:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀՅՈՒՐԵՐԸ

Մայիս վեցին մենք հասանք Երևան՝ թափթփված, հոգնած ու տանջված: Ո՛չ հագուստ կա, և ո՛չ էլ՝ կոշիկ, գնացինք-միացանք մեր բանակին: Դրոն եկավ, փոխանակ շնորհակալություն հայտնելու՝ նկատողություն արեց Ասլանին, որ թուրքերին սպանած էր: Այդ գյուղի տերը գանգատված էր մեզնից: Մեր գունդը Երևանից փոխադրեցին Էջմիածին: Վանքից դուրս մի մեծ լիճ կա, և լճի ցածրում հսկա անտառն է, որ մեր գաղթական ժողովուրդը 1915 թվին այդտեղ խոլերայից կոտորվեց: Մեզի համար կերակուրի խոհանոց տվեցին: Ձիերին գարի չկա: Հրամայեցին, որ առատ խոտ տան, և մենք աշխատեցինք մեր ձիերին խնամել: Մի քանի օր անցած՝ գնդապետը եկավ, մեզանից տասը հոգի ջոկեց, որ երթանք իր հետ: Մի պատվավոր հյուր կուգա Էջմիածինը տեսնալու: Նրան դիմավորելու համար գնացինք դեպի Երևան: Սուրբ Հռիփսիմեի վանքին չհասած՝ երկու կառք և հիսուն ձիավորով հասան մեզ մոտ: Մենք պատվի կանգնանք: Մի շատ հսկա մարդ, կառքից իջավ ցած, հարցրեց թուրքերեն. «Ո՞ր խումբն է»: Գնդապետն ասաց. «Ութերորդ գունդից է»: Անցան, մենք էլ հետևից գնացինք, հասանք Էջմիածնի դուռի առաջ: Մի խումբ զինվորներ բերած էին

պատվի կանգնելու համար: Կառքից իջան մի մարդ և այդ հսկա մարդը: Գնդապետը ինձի և Պետրոսին իր հետ տարավ վանք: Վանքի բակը կանգնած էին վարդապետներ և դպրոցականներ[306]: Բարևելուց հետո մտանք եկեղեցին: Տաճարի աջ կողմի խորանի դուռը բացվեց: Մի վարդապետ, հաղթանդամ մարդը և իր ընկերը մտան խորանը: Ես տեսամ սուրբ մեռոնի երկու կաթսաները: Այն մեկը հին էր, վրան գրություն կար, իսկ մյուսի կափարիչի վրան ոսկի աղավնին՝ ձիթենու ճյուղը բերանին:

Մի պահ մտքով գնացիմ իմ Վանա երկիրը, իմ Քերծ գյուղը: Հիշեցիմ, որ մեր Վանա սարերը Էջմիածնից հատուկ մարդիկ էին գալիս և մյուռոնի համար տեսակ-տեսակ ծաղիկներ էին հավաքում, տանում: Բազմատեսակ ու բազմագույն ծաղիկներ կային մեր սարերում:

Հյուրերը գնացին ճաշելու կամ կոֆե խմելու: Մենք եկանք մեր տեղը: Այդ զոնաղներ բերող հիսնապետին վանեցի Միհրան կըսեին, մեր հարցին, որ այդ հյուրերը ո՞վ են, Միհրանը ասաց. «Այդ հաղթանդամ մարդը Հայաստանի թուրքերի մեծն է, որը զորավար Դրոյի ամենամոտիկն է և դաշնակցական է եղած: Իսկ մյուսը թուրքերի կողմից Հայաստան ուղարկված Բուհաեդդին բեկն է»: Գնացին: Եկանք մեր տեղը: Գնդապետը ասաց. «Տղանե՛ր, նոր հասկացանք, թե ինչու է Դրոն արգելում թուրքերին կոտորել և սասունցիներին ավազակ ասաց, ուրեմն այդ թուրք Բուհաեդդինը և Փանահխանոզլի Ալիխանը, որ Հայաստանի թուրքերի համար հսկիչ են, այս երկու թուրքերը ինչ-որ պատահի Հայաստանում, անմիջապես կարող են լուրը հասցնել Պոլիս»: Այս խոսակցության ժամանակ գնդապետին կանչեցին Երևան: Գնդապետը գնաց: Երեկոյան եկավ, շատ տխուր էր: Մտավ իր վրանը և մի աթոռ առեց, նստեց մեծ ծառի տակ:

---

[306] Հեղինակը նկատի ունի Գևորգյան ճեմարանի սաներին:

Կանչեց Արշակին, Օվանեսին և նստանք, որ պատմի Երևանից: Պատմեց, այսպես ասաց. «Խորհրդարանում ճառ խոսեց Հովհաննես Քաջազնունին[307] և ասաց, մեր վտանգը այժմ ավելի վատ է, քան թե 1918 թվին: Այդ ժամանակ մենք կռվեցինք մի մարդու պես Սարդարապատում, շատ քիչ ուժերով, և այժմ ունինք քառասուն հազար զինվոր, որ տասնութ հազարը փախստական են, և այս լուրը անմիջապես հասած է Պոլիս: Սարիղամիշից Կամազով զորավարը[308], Կարսից՝ զորավար Կարճիկյանը, զորավար Ղորղանյանը[309] կհեռագրեն, որ առաջը առեք, զինվորը չի հնազանդի իր մեծերին, ամեն տեղ բոլշևիկություն է տարածվել, և թուրքական մի պատվիրակություն գնացել է Թիֆլիս՝ բանակցելու կարմիր ռուսների հետ՝ օգնություն ստանալու համար»: Այս խոսակցությունը լսելով՝ ոչ ոք չքնեց մինչև լույս, խումբ-խումբ նստած՝ կխոսեինք այդ մասին:

[307] **Հովհաննես Քաջազնունին** (Իգիթխանյան) ծնվել է 1868թ. Ջավախքի Գանձա գյուղում: Սովորել է Թիֆլիսի ռեալական դպրոցում, 1893թ. ավարտել է Պետերբուրգի քաղաքացիական ճարտարագետների ինստիտուտը: Մինչև 1908թ. ճարտարագետ-ճարտարապետ է աշխատել Բաքվում: Նրա նախագծով է կառուցվել Բաքվի Հայկական Մայր եկեղեցին: Այնուհետև հաստատվել է Վասպուրականում, որտեղ քարոզել է ազգային-ազատագրական պայքարի գաղափարներ: 1914թ. վերադարձել է Հարավային Կովկաս, 1917-18թթ. եղել է ՀՅԴ կուսակցության ներկայացուցիչը Անդրկովկասյան սեյմում: Մասնակցել է Տրապիզոնի և Բաթումի հաշտության բանակցություններին: Հայաստանի անկախացումից հետո նշանակվել է վարչապետ, կազմել կառավարություն: Հայաստանի համար օգնություն կազմակերպելու նպատակով 1919թ. մեկնել է Եվրոպա և ԱՄՆ: 1920թ. սեպտեմբերին վերադարձել է և նշանակվել ՀՀ փոխնախագահ: Խորհրդային իշխանության հաստատումից հետո ձերբակալվել է և ազատվել 1921թ. Փետրվարյան ապստամբության շնորհիվ: Նույն թվականին հաստատվել է Բուխարեստում: 1923թ. դուրս է եկել ՀՅԴ կուսակցությունից: Հրատարակել է «Հ. Յ. Դաշնակցութիւնն անելիք չունի» գրքույկը: 1925թ. վերադարձել է Երևան, դասավանդել համալսարանում, պոլիտեխնիկական ինստիտուտում, զբաղվել գիտական գործունեությամբ: 1937թ. անհիմն բռնադատվել է և 1938թ. մահացել բանտում (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 456: ՀՀՀ, հ. 4, էջ 871):

[308] **Կամազով- Գամազյան (Համազյան, Ղամազյան) Կոստանդին,** հայկական բանակի գեներալ-լեյտենանտ (1918թ.): 1917թ. նոյեմբերին նշանակվել է Հայկական կորպուսի հրետանային գնդի հրամանատար, 1918թ. հոկտեմբերին՝ Անկախ Հայաստանի հրետանային վարչության պետ: 1921թ. աքսորվել է Հայաստանից (Խաչատրյան Հ., Պետրոսյան Տ., Հայկազունք, Երևան, 2002, էջ 143):

[309] **Ղորղանյան Ստեփան Ալեքսանդրի** (1865-1925թթ.), պետական, հասարակական գործիչ: 1885-88-ին եղել է Սուրմալուի, 1888-95-ին՝ Նախիջևանի գավառապետի օգնական, 1895-1910-ին՝ Նոր Բայազետի, 1910-15-ին՝ Քութայիսի գավառապետ, 1919-20-ին՝ Կարսի նահանգապետ (ՀՀՀ, հ. 3, էջ 481):

ՄԱՅԻՍԻ 28-Ի ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երկրորդ օրը գնդապետը պատվիրեց մեզի, որ մեր հագուստները մաքուր պահենք, նաև ասաց, որ զենքերը մաքրենք, ձիերին մաքուր պահենք: Մայիսի 28-ը տոնվելու է: Մենք շատ ուրախ էինք, և սկսեցինք պատրաստվել այդ նշանակալի տոնին մասնակցելու համար:

Մի շաբաթ է, որ քաղաքը կմաքրեն: Այժմ մայիսի 28-ն է: Ամեն մի զորավար իր տեղը կնշանակե: Հետևակ զորքը, Երևանի հրապարակի աջ կողմից բռնած, կհասնի Զանգու գետի կամրջին: Ձիավորները բռնած են ձախ կողմը: Ասոնց հետևն է թնդանոթների սկաղրոնները, և նրանց առաջում կանգնած է գնդացիրների շարքը: Հրապարակում կանգնած են հինգ ձիավորներ՝ առաջին սև ձիավորը սպարապետ Կուռո Թարխանյանն է[310], նրա կողքին՝ գեներալ Թովմաս Նա-

[310] **Կուռո Թարխանյանը** ծնվել է 1896թ. Շուշիում: Ավարտել է Մոսկվայի Զինվորական վարժարանը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, որպես ռուսական բանակի սպա, կռվել է գերմանական ռազմաճակատում, ապա իր խնդրանքով փոխադրվել է Կովկասյան ճակատ: 1917-18թթ. մասնակցել է Բաղեշի, Խնուսի և Ալաշկերտի ռազմական գործողություններին: Հայաստանի Հանրապետության անկախության տարիներին եղել է ռազմական նախարարի՝ Դրոյի օգնականներից: 1921թ.՝ Փետրվարյան ապստամբության օրերին Կոտայքի շրջանի զինուժի հրամանատարն էր, իսկ Հայրենիքի փրկության կոմիտեի իշխանության օրոք նշանակվել է հայկական բանակի ընդհանուր պետ: Ապստամբության ճնշումից հետո անցել է Եվրոպա, բնակություն հաստատել Ռումինիայում՝ Բուխարեստում, որտեղ էլ մահացել է 1944թ. (տե՛ս Լազեան Գ.,

զարբեկյանը[311], նրա աջ կողքի կարմիր ձիավորը Դանիել բեկ Փիրումյանն է, նրա կողքին ճերմակ ձիավորը Դրոն է, Դրոյի կողքի սև ձիավորը Պողոս բեկ Փիրումյանն է: Այս կազմը պատրաստ կանգնած կսպասեն, որ խորհրդարանից մարդ դուրս գա:

Վերջապես խորհրդարանից դուրս եկան Հայաստանի ընտրանի մի խումբ մարդիկ:

Դրոն առաջ եկավ, կանչեց. «Պատվի ա՛ռ»: Մի խշշոց լսվեց, զենքերը փայլփլեցին, և սուրերի պատվի առնելու շարժման ժամանակ ամեն տեղ լռություն եղավ:

Պատշգամբում եղած մեծերի խումբից մի ճերմակ գլուխ մարդ առաջ եկավ և խոսեց: Մեր դիմացն էր, բայց չէինք լսում՝ ինչ կխոսեր:

Այս մարդը Ավետիք Սահակյանն էր, որ Հայր Աբրահամ[312] կըսեին, հետո խոսեց Ավետիս Ահարոնյանը: Կրակոտ

Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Յեղափոխական դէմքեր, հ. Բ, Հալեպ, 1991, էջ 449-451: Հայկական հարց, հանրագիտարան, էջ 138):

[311] **Թովմաս Նազարբեկյանը** ծնվել է 1855թ. Թիֆլիսում, Մոսկվայում ստացել է ռազմական կրթություն, մասնակցել է 1877-78թթ. ռուս-թուրքական, 1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմներին: 1907թ. ստացել է գեներալ-մայորի զինվորական կոչում: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ եղել է Երկրորդ կովկասյան հրաձգային դիվիզիայի հրամանատար: Այդ դիվիզիայում է գործել Անդրանիկի հայկական կամավորական 1-ին ջոկատը: 1915թ.՝ Դիլմանի մոտ, Նազարբեկյանի զորքերը ջախջախիչ պարտության են մատնել թուրքերին: Նազարբեկյանի ընդհանուր հրամանատարությամբ հայկական զորքերն ու կամավորները 1918թ. մայիսին կանգնեցրին Ղարաքիլիսայի, Բաշ Ապարանի և Սարդարապատի վրա հարձակվող թուրքական զորքերին: Հայաստանի Հանրապետության օրոք ղեկավարել է հայկական բանակը: Խորհրդայնացումից հետո՝ 1921թ., աքսորվել է, հաստատվել Թիֆլիսում, որտեղ էլ մահացել է 1931թ. (տե՛ս Լազեան Գ., նշվ. աշխ., էջ 452-459: Հայկական հարց, հանրագիտարան, էջ 350: ՀՀՀ, հ. 3, էջ 827: Ըստ Մ. Կարապետյանի՝ Նազարբեկյանը ծնվել է 1846թ., տե՛ս Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920), էջ 63):

[312] **Հայր Աբրահամը՝ Ավետիք Սահակյանը** ծնվել է 1865թ. Զալալօղլիում (այժմ՝ Ստեփանավան), եղել է պետական, հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ, ՀՅԴ կուսակցության անդամ: 1914թ. ընտրվել է Ազգային բյուրոյի անդամ, այնուհետև՝ Ռուսաստանի սահմանադիր ժողովի, ապա՝ Անդրկովկասյան Սեյմի անդամ, եղել է խնամատարության և պա-

ճառ ասաց Գարեգին Նժդեհը[313]: Այլ խոսքեր խոսողներ շատ եղան: Դրոն «Հանգի՛ստ» կանչեց, և զինվորները հանգիստ առան, զենքերը իջեցրին ցած: Հանկարծ հնչեց «Մեր հայրենիք» երգը: Դրոն կանչեց. «Պատվի՛ ա՛ռ»: Այդ ժամանակ տեսանք եռագույն դրոշակը կամաց-կամաց, դանդաղորեն

ռենավորման նախարար, Հայաստանի Խորհրդարանի նախագահ: 1920թ. դեկտեմբերին բոլշևիկները ձերբակալել են, բանտից ազատվել է Փետրվարյան ապստամբության շնորհիվ: Գաղթել է Պարսկաստան, այնուհետև՝ Լիբանան: Վախճանվել է 1933թ. Բեյրութում (Լազեան Գ., Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Յեղափոխական դէմքեր, Հալեպ, 1991, էջ 272-283: Ներսիսյան Ա., Ավետիք Սահակյան՝ (Հայր Աբրահամ), Երևան, 2003):

[313] **Գարեգին Նժդեհը (Տեր- Հարությունյան)** ծնվել է 1886թ. Նախիջևանի գավառի Կզնուտ գյուղում: Սովորել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում (1904-ին դուրս է եկել), 1907-ին ավարտել է Սոֆիայի սպայական դպրոցը: 1907-37 թթ. եղել է ՀՅԴ անդամ: 1912-ին Անդրանիկի հետ կազմակերպել է հայկական կամավորական վաշտ, որը բուլղարական բանակի շարքերում 1913-ին մարտնչել է Թուրքիայի դեմ: 1914-ին տեղափոխվել է Թիֆլիս, զինվորագրվել է հայկական կամավորական շարժմանը, նշանակվել 2-րդ գնդի հրամանատարի տեղակալ: 1918-ի մայիսին մասնակցել է Ղարաքիլիսայի ճակատամարտին: 1919-ի օգոստոսից Զանգեզուրի զինված ուժերի հրամանատարն էր: 1919-ին ստացել է գնդապետի կոչում: Գ. Նժդեհը չի ընդունել Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև 1920թ. օգոստոսի 10-ին կնքված համաձայնագիրը, որով Կարմիր բանակը դուրս վելու էր Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը, և շարունակել է պայքարը: 1920թ. դեկտեմբերի 25-ին հռչակել է Ինքնավար Սյունիքի (Լեռնահայաստանի) Հանրապետություն և ընտրվել սպարապետ՝ դիկտատորի լիազորություններով: 1921թ. ապրիլի 26-ին Լեռնահայաստանի Հանրապետությունը Նժդեհին շնորհել է զորավարի աստիճան, ընտրել Լեռնահայաստանի վարչապետ: Նժդեհի շնորհիվ Զանգեզուրը մնաց Հայաստանի Հանրապետության կազմում: 1921թ. հուլիսին Նժդեհը Զանգեզուրից անցել է Պարսկաստան, 1922-ին՝ Բուլղարիա: 1932-34 թթ. բնակվել է ԱՄՆ-ում, որտեղ էլ հիմնել է «Յեղակրոն» շարժումը: 1944-ին, երբ խորհրդային բանակը մտել է Բուլղարիա, Նժդեհը կամավոր ներկայացել է խորհրդային իշխանությանը, առաջարկել իր ծառայությունները Թուրքիայի դեմ պատերազմի դեպքում: Նա ձերբակալվել է և տեղափոխել Մոսկվայի, իսկ 1946-ի նոյեմբերին՝ Երևանի բանտ: 1948-ին դատապարտվել է 25 տարվա բանտարկության: 1955-ին վախճանվել է Ռուսաստանի Վլադիմիր քաղաքի բանտում (Ավո, Նժդեհի, կյանքն ու գործունեությունը, Բեյրութ, 1968: Լալայան Մ., Յեղակրոն և Տարոնական շարժումներն ու Գարեգին Նժդեհի գործունեությունը, Երևան, 2001: ՀՀՀ, հ. 3, էջ 877-78: Համբարձումեան Ռ., Վարք Նժդեհի, Երևան, 2001: Նույնի, Գարեգին Նժդեհ (Համառօտ կենսագրական, ասոյթներ եւ կենսատարեգրութիւն), Երևան, 2003):

բարձրացավ Հայաստանի հողի վրա, և վեց հարյուր տարվան գերության շղթան կտրեց հայ ժողովուրդը, կրկին անկախ երկիր ունեցավ:

Հնչեց «Զեյթունցիների երգը», թնդանոթները կրակեցին և զինվորները շարքերով սկսեցին քայլել: Տեսնալու աչք պետք էր, որ տեսնար զինվորների շարքերի անցնելը, նրանց սվինների փայլը, և այժմ, այս որ կհիշեմ ու կգրեմ, արտասուք աչքերիցս կթափվի: Ի՜նչ փառք տեսան իմ աչքեր, բայց, ափսոս որ, խաբվեցինք և չունեցանք լույս հոգի Աբրամ փաշան, որ մեզի մի ճանապարհով ազատեր, և մենք այսպես տարագիր և ցրիվ չլինեինք:

Տոնակատարության փառավոր արարողությունը վերջացավ: Մենք վերադարձանք անտառ՝ մեր բանակի տեղը:

ԿՐԿԻՆ՝ ԴԱՍԱԼԻՔՆԵՐԻՆ ՀԱՎԱՔԵԼՈՒ

Մի շաբաթից հետո, մեր գունդը բաժանեցին, որովհետև անտառի խոտը վերջացել էր, և ձիավորները պիտի երթային Դիլիջանի շրջան, և այդտեղի փախստական զինվորներին գտնեն: Այսպես բաժանվանք: Մաչանի Արշակին հանձնեցին հարյուր հետևակ զինվոր և հիսուն ձիավոր, Օվանեսին նույնպես՝ հարյուր հետևակ զինվոր և հիսուն ձիավոր: 1919 թվի հունիսի տասնհինգին մենք հասանք Դիլիջան: Օվանեսին ուղարկեցին Ղարաքիլիսայի[314] շրջան, մինչև պղինձի հանքի գյուղերը, մինչև անգամ Ղափանի շրջանից փախած դասալիք զինվորներին գտնելու և հավաքելու համար: Մաչանի Արշակին մեր խմբի գլխավորությամբ ուղարկեցին Դիլիջանի ձորի մյուս երեսը՝ Պողոսքիլիսա[315] գյուղի շրջանը, որ դասալիք փախստական զինվորներին հավաքենք: Մենք սկսեցինք Դիլիջանից, ցածր Ջարխեչ[316] գյուղից և Քարվանսարայից, որ այժմ Իջևան է կոչվում: Այնտեղից գնացինք Սևքար՝ Ֆիդայի Սաքոյի գյուղը[317], այնտեղից՝ Կողբ[318] գյուղը, որ ութսունչորս փախստական զինվորներ կային:

Գիշերով հարձակվեցին մեր վրա: Անտառում էինք, ոչինչ չկարողացանք անել և մի զինվոր զոհ տվեցինք, չորս ձի սպանվեց: Այդտեղից գնացինք Այրում[319] կայարան և միացանք Օվանեսի խմբին, ոչինչ չկարողացանք ձեռք բերել: Այս պտույտը տևեց մեկ և կես ամիս: Մեզի հետ կանչեցին, մեր գնալուց մեր գունդը կփոխադրվի Իգդիր՝ Մալաքլու թուրքի մեծ գյուղը, որ

---

[314] **Ղարաքիլիսա** քաղաքը խորհրդային իշխանության տարիներին վերանվանվել է Կիրովական, իսկ 1992-ին՝ Վանաձոր: Լոռու մարզի կենտրոնն է: Նրա տարածքում եղել է հնագույն բնակավայր, իսկ Ղարաքիլիսա է կոչվել սև քարից կառուցված եկեղեցու պատճառով: 1801թ. միացել է Ռուսաստանին: 1831թ. ուներ 494, 1897-ին՝ 3917, 1926-ին՝ 8640, իսկ 1991-ին՝ 169300 բնակիչ (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 149-152, հ. 4, էջ 753):

[315] **Պողոսքիլիսա**-1935թ-ից՝ Շամախյան, 1945թ. հետո մտել է Դիլիջան քաղաքի շրջագծի մեջ: Գյուղի մոտ են գտնվում Մաթոսավանքն ու Ջուխտակ վանքը (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 65): 1873թ. ուներ 529, 1897թ-ին՝ 1006, 1926թ-ին՝ 1282:

[316] **Ջարխեչ** գյուղը 1940թ. վերանվանվել է Կույբիշև, իսկ 1991թ.՝ Հաղարծին: Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Դիլիջան քաղաքից 9 կմ հյուսիս-արևելք: Ենթադրվում է, որ գյուղի անունը ծագել է նրա մոտ գտնվող խաչքարերի շարքից՝ Շարխաչ: 1873թ. ուներ 371, 1897թ.՝ 1304, 1926թ.՝ 2136 հայ բնակիչ: Նրա մոտ է գտնվում Հաղարծին նշանավոր վանքը (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 272):

[317] **Սևքար**-գյուղ Տավուշի մարզում, Իջևան քաղաքից 20կմ հյուսիս, գյուղի մոտակայքում պահպանվել են հնագույն դամբարաններ, 14-րդ դարի եկեղեցի և այլ հնություններ: Այստեղ է ծնվել նշանավոր Ֆիդայի Սևքարեցի Սաքոն (1870-1908թթ.) (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 586):

[318] **Կողբ** գյուղը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի շրջանում: Կողբը համապատասխանում է Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Կողբոփոր գավառի Կողբ բերդավանին, որի մասին առաջին հիշատակությունը վերաբերում է 4-րդ դարին: Այն վկայված է Մ. Խորենացու պատմության մեջ: Հետագա աղբյուրներում հիշատակվում է որպես «քաղաքագյուղ», «բերդավան»: Գյուղի կենտրոնում է գտնվում 6-րդ դարի եկեղեցին: Կողբում եղել է 1892թ. կառուցված բարեկարգ ուսումնարան: Գյուղը 1897թ. ուներ 2008, 1926թ.՝ 2423, 1979թ.՝ 4421 բնակիչ (ՀՀՇՏԲ, հ.3, էջ 196):

[319] **Այրում** քաղաքատիպ ավանը գտնվում է Տավուշի մարզում՝ Նոյեմբերյանի շրջանում: Այն ներառել է Երևան-Թբիլիսի երկաթուղու Այրում կայարանը: 1926թ. ուներ 46, 1979թ.՝ 2252 բնակիչ: Շրջակայքը հարուստ է հնավայրերով: 1887թ. պեղումների ժամանակ գտնվել են մ.թ.ա. 10-8-րդ դարերի դամբարաններ, 1962-ին՝ 49 բրոնզե արձանիկ (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 243):

տասնութին մենք մաքրած էինք: Այսպիսով, մենք 1919-ի սեպտեմբերին հասանք Իգդիրի Մալաքլու գյուղը, միացանք մեր գնդին: Այդ ձմեռը մնացինք, և մեզի լավ կկերակրեին: Հայաստանը Ամերիկայից ամեն տեսակ պարեն և մթերք ստացած էր: Հայաստանը բավականի կազդուրված էր, և մենք՝ զինվորներս, լավ վիճակի մեջ էինք, բայց ափսոս, որ շատ արագ մութ և մռայլ ամպեր եկան Մասիս սարից, այն էլ՝ հայու ամպեր:

1920-ի ապրիլից մենք պատրաստվում էինք մայիս 1-ը տոնելու: Իր շքախմբով եկավ գեներալ Կամազովը, և շատ մեծ խանդավառություն ստեղծեց մեր զինվորների մեջ: Հատկապես, երբ հայտարարվեց, որ պիտի երթանք դեպի Վան, մեր ուրախությանը սահման չկար: Պարեցինք, խենթացեր էինք:

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆԻ[320] ԶՐԱՀԱՊԱՏԸ

Մայիսի ութին մեզի առատ փամփուշտ և ուտելիք տվեցին, որ մայիսի տասին շարժվենք դեպի Օրգով գյուղը, այնտեղից էլ՝ դեպի Մասիս:

---

[320] **Սարգիս Մուսայելյանը** ծնվել է 1882թ. Գետաշեն գյուղում (այժմ՝ Ադրբեջանի Խանլարի շրջանում): 1920թ. Մայիսյան ապստամբության ղեկավարներից էր: Ավարտել է Գորիի ուսուցչական սեմինարիան: 1901-15 թթ. ուսուցչություն է արել Նուխիի գավառի Սաբաթլու գյուղում, ապա՝ Գորիսում: 1915-ին զորակոչվել է Արևմտյան ռազմաճակատ: 1917-ի Փետրվարյան հեղափոխությունից հետո ընտրվել է գնդի հեղկոմի նախագահ: Այնուհետև գործել է Գանձակում և Բաքվում: 1918-ի վերջին, որպես Կարմիր զորամասերից մեկի հրամանատար և զրահագնացքի պետ, Բաքվում մասնակցել է մուսավաթականների դեմ մղվող քաղաքացիական կռիվներին: 1919-ի փետրվարից տեղափոխվել է Ալեքսանդրապոլ: Նշանակվել է «Վարդան զորավար» զրահագնացքի պետ և հեղափոխական աշխատանք տարել զինվորների և երկաթուղային բանվորների շրջանում: Ղեկավար մասնակցություն է ունեցել Ալեքսանդրապոլի՝ 1920թ. մայիսմեկյան ցույցերին: 1920-ի մայիսի 7-ին ընտրվել է Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի կազմում: Մայիսյան ապստամբության պարտությունից հետո 1920թ. օգոստոսի 14-ին գնդակահարվել է (Արզումանյան Մ., Սարգիս Մուսայելյան, Երևան, 1955: Հայկական սովետական հանրագիտարան, հ. 8, Երևան, 1982, էջ 87):

ԵՐՎԱՆԴ ԿՅՈՒՐԵՂՅԱՆԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ (1906-1922թթ.)

Մասշտաբ 1:1 400 000



Ամբողջովին պատրաստվեցինք առաջ շարժվելու, գյուղից դուրս հետևակը ծռվեց դեպի Էջմիածնի ճանապարհը: Մեր գնդապետ զորավար Սեպուհը[321] *և զորավար Կամազովը առջևից կերթային, հասանք Էջմիածնի կայարանը: Հետևակը լցրեցին երկաթուղին, իսկ մենք ճանապարհով պիտի երթայինք:*

Այստեղ զորավար Սեպուհը ճառ խոսեց և այսպես ասաց. «Ի՛մ սիրելի զավակներ, երբ լսեցի, որ ութերորդ գունդը իմ տրամադրությանն է հանձնված և Իգդիր փոխադրված՝ շատ ուրախացա: Ծանոթ էի ձեր քաջագործությանը, ձեր հերոս և ռազմագետ գնդապետի տարած հաղթանակներին Արարատի շրջանում: Շատ հույս ունեի, որ ինձի կառաջարկեն երթալ դեպի մեր պապերի երկիր Վասպուրականը, բայց, ցավոք սրտի, ինձի առաջարկեցին երթալ իմ հարազատ եղբայրների դեմ, մի ոմն կապիտան խաբված է և իր անունով Մուսայելյան զրահապատով Ադրբեջանից եկած է՝ մեր արյունով առած ազատությունը տապալելու, որ մենք գերի դառնանք Ադրբեջանին, նրանց, ովքեր մի տարի առաջ երեսուն հազար հայ ջարդեցին: Եվ այժմ կխնդրեմ, ով որ չի

---

[321] **Զորավար Սեպուհը** (Արշակ Ներսիսյան) ծնվել է 1872թ. Էրզրումի Նահանգի Բաբերդի գավառակի նշանավոր Վարզահան գյուղից կես ժամ հեռավորության վրա գտնվող Թումենջիք-ի Էրամինե գյուղում, որը հայկական աղբյուրներում հայտնի է Թոմնա անունով (Տե՛ս Սահակյան Լ., Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007, էջ 159-160): Սովորել է Տրապիզոնի Ազգային վարժարանում: Ապրել և գործել է Կ. Պոլսում: 1890թ. Գում Գափուի ցույցից հետո անցել է Ղրիմ, Կարս, Տարոն, Սասուն: Մասնակցել է 1904թ. Սասունի ապստամբությանը: 1907-12 թթ. գործել է Տարոնում, Կարինում, Թիֆլիսում: 1913-ից ապրել է Խարկովում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եղել է Հայկական Առաջին կամավորական գնդի վաշտի հրամանատար, մասնակցել է Խոյի և Դիլմանի, իսկ 1918-ին՝ Սարդարապատի ճակատամարտերին: 1920-ին ստացել է գնդապետի աստիճան: Հայաստանի խորհրդայնացումից հետո անցել է Կ. Պոլիս, այնուհետև՝ ԱՄՆ, որտեղ և մահացել է 1940-ին (Վերածին Մ., Զօր. Սեպուհի յուշերը, մանկութիւն, պատանեկութիւն, երիտասարդութիւն, Հալէպ, 1992: Հայկական հարց, հանրագիտարան, էջ 409: ՀՀՀ, հ. 4, էջ 405: Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Բ, Աթենք, 1991, էջ 474):

ուզի կռվել, երդվում եմ չպատժել, ազատ է, թող հրացանը հանձնե և երթա, քան թե կռվի ժամանակ դավաճանե»:

Ոչ ոք առաջ չեկավ: Մեկ էլ բոլորը միահամուռ կանչեցին «Կեցցե՛ մեր անկախությունը, ուռա՛, ուռա՛»: Զորավար Սեպուհը գնդապետ Տիգրանին ասաց. «Ունի՞ս քո տղաների մեջ այս շրջանին ծանոթ, որ երթան քննեն և մեզի զեկուցեն, թե ինչքան զորք ունի Մուսայելյանը»: Գնդապետը գիտեր, որ Օվանեսը և ես այդ շրջանում ապրած ենք, և Սարդարապատի կռվին մեզի ուղարկեց Թալինը գրավելու, կանչեց. «Քերծցի Օվանե՛ս և Երվա՛նդ, առա՛ջ»: Անմիջապես մենք երկու քայլ առաջացանք: Ասաց. «Այս կայարանի և Անի կայարանի մեջ կես կայարան կա: Տասը հոգի վերցրեք և գնացեք խուզարկելու, տեղեկությունը շտապ, գրավոր հաղորդեք մեզի»: Մենք տասը հոգով գնացինք:

Հասանք կայարան: Տղաները մնացին, ես և Օվանեսը գնացինք հասանք Անի կայարանի մոտ: Մի պատի տակ Օվանեսը ձիերը պահեց, ես մի ճրագի լույս տեսամ: Գնացիմ, դուռը ծեծեցիմ, անձրևը սկսած է, դուռը մի տարիքով կին բացեց: Ասաց. «Ո՞վ ես»: Ասացիմ. «Ես Կըրմըզլու գյուղացի եմ և քեշիշօղլու Արշակի տղան եմ»: «Վա՛յ, քոռանամ ես, այս անձրևին ո՞ւրկից կուգաս»: Ասացիմ. «Մայրիկ, Արշակ ամին շատ հիվանդ է, ես Մաստարա գյուղի բժշկից ճար կտանեմ: Ձեր ճրագի լույսը տեսամ, եկամ մի փոքր հանգստանամ»: «Վա՛յ,- ասաց,- Աստված առողջություն տա: Արշակ ամին մեր յոթ գյուղի մեծն է, իրեն «Կլասնի» կասեն»:

Ձայ բերեց: Պատուհանից կերևա զրահապատը: Երկու թնդանոթներ առաջ են, երկուսը հետևն են, չորս գնդացիր այն կողմում է, հավանական է՝ չորսն էլ մյուս կողմն է: Երկու վագոն դատարկ է, և մեջը լիքը երկաթ ու փայտ, մի վագոն հետևն է, մեջը՝ զինվորներ են: Երկու պահակ այս կողմն է, երկուսը՝ այն կողմ:

Ձայս խմեցիմ, դուրս ելամ, եկամ կայարանը:

Մկրտիչը իմ տեսածը գրեց, երկու հոգի տարան գնդապետին: Կրակ վառված էր, և մենք թրջված, հոգնած պառկանք կրակի կողքին, մեր քունը տարավ: Զրահապատը կառաջանա: Հանկարծ մեկը ինձի հրեց, ասաց. «Մերդ մեռնի, կարմիրներ հասան, փախի՛ր»: Ես տեսամ ընկերներս չկան, երկու հոգի մնացած ենք: Մեր դիմացը մի բլուր կա: Մենք հասանք բլուրի գագաթը և դիրք բռնեցինք: Այժմ կռիվը թնդանոթով է: Մեր բանակը շղթայված է, բայց կառաջանա: Ճաշից հետո զրահապատը նահանջեց, հասավ Անի կայարանը և ճերմակ դրոշակ պարզեց: Մենք հասանք Անի կայարանը, մեզի լուր տվին, որ մշեցի զինվորները զրահապատի ճանապարհը քանդած են: Եվ կապիտան Մուսայելյանը թողած, փախած է:

Գիշերով մենք ճանապարհվեցինք Ալեքսանդրապոլ: Մեզի կարգադրվեց քաղաք չմտնել: Պետք է, որ հետապնդենք, որ նրանք չամրանան ոչ մի տեղ: Հրամայեցին շուտ հասնել Համամլու[322] գյուղը և գրավել այն:

Գիշերով գնացինք, հասանք և Համամլու գյուղը պաշարեցինք: Առավոտյան կռիվը սկսվեց, գիշերը մեզի օգնություն հասավ: Մաչանի Արշակի զինվորները հասան և միացան մեզի: Մենք կռվելով մտանք գյուղը, կարմիրները փախած էին դեպի Ղարաքիլիսա, որ այժմ Կիրովական է:

Առավոտյան մեր զորքը հարձակում գործեց, շատ կարճ կռվից հետո նրանք փախան դեպի Դիլիջան: Երկու օր մենք հանգստացանք: Երրորդ օրը շարժվեցինք Դիլիջանի վրա: Այս

[322] Համամլուն 1949-ին վերանվանվել է Սպիտակ: Այժմ՝ քաղաք Լոռու մարզում: 1897-ին ուներ 3004, 1926-ին՝ 4078 բնակիչ: Մեծապես տուժել է 1988թ. դեկտեմբերի 7-ի ահեղ երկրաշարժից, տվել է 5000 զոհ: 1988-89 թթ. Ադրբեջանում ծավալված հայկական կոտորածների, բռնագաղթի պատճառով Սպիտակում են հանգրվանել Բաքվից, Սումգայիթից և Շահումյանի շրջանից բռնագաղթածներ: 2002թ. ուներ 21700 բնակիչ, որոնց մեծ մասի նախնիները գաղթել են Պարսկահայաստանի Խոյի և Արևմտյան Հայաստանի Մուշի գավառներից 1829-30 թթ.: Քաղաքի տարածքը եղել է հնագույն բնակատեղի, պահպանվել են մ. թ. ա. 4-1-րդ հազարամյակների նյութական մշակույթի հուշարձաններ (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 675: ՀՀՀ, հ. 4, էջ 497-498):

տեղը մեր գործը առաջ չի երթա: Թե՛ անտառ է, և թե՛ նրանք տեղացի են, գաղտնի ճանապարհով հարձակվում են մեր վրա:

Երեք օրվան ծանր կռվից հետո մենք Դիլիջան քաղաքը գրավեցինք: Կարմիրները հաստատվան անտառների մեջը:

ՂԱՐԱՂՈՅՈՒՆ[323] ԳՅՈՒՂԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Հինգ օր մնացինք Դիլիջան, և նոր դասավորում եղավ զորքի մեջ: Մաչանի Արշակը վաշտապետ եղավ, նրա օգնական նշանակվեց ոզմեցի Պետրոսը: Նա պիտի երթար Կիրովականից և հասներ մինչև Ղափան՝ պղնձի հանքը, զսպեր ըմբոստացած բանվորներին: Օվանեսը եղավ վաշտապետ: Նրա օգնական նշանակվեց աթանանցի Վարդանը: Նա պիտի երթար, Իջևանից անցներ դեպի Աչաջուր[324] և Սևքար, Կոթի[325] գյուղերով գնար մինչև Այրում կայարանը:

Մեր վրա վաշտապետ կարգեցին հին ֆիդայի՝ կարճկանցի[326] Մուրադ Ալոյանին, և նրա օգնականը եղավ Թելո Սուրեն հարյուրապետը:

[323] **Ղարաղոյուն**-հեղինակը, հավանաբար, նկատի ունի Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի Ղառաղոյունլու գյուղը, այժմ՝ Գեղարքունիքի մարզի Այգուտ (1991թ-ից) գյուղը (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 534):

[324] **Աչաջուր**-գտնվում է Իջևան քաղաքից 12 կմ հյուսիս, Աղստև գետի ձախ կողմում, լեռնալանջի վրա: 1831թ. ուներ 889, 1873-ին՝ 1405, 1914-ին՝ 2043, 1922-ին՝ 2056, 1959-ին՝ 3213, 1970-ին՝ 3891, 1979-ին՝ 3509 հայ բնակիչ: Գյուղը հիմնադրվել է 19-րդ դարում, հիմնականում ոչ հեռու գտնվող հին Աչաջրի բնակիչների կողմից: Հետագայում այստեղ վերաբնակվել են Ղարաբաղի, Գանձակի, Շամխորի շրջաններից եկածները: Աչաջրի շրջակայքը հարուստ է հնավայրերով և պատմաճարտարապետական հուշարձաններով: Այստեղ է գտնվում հռչակավոր Մակարավանքը (10-12-րդ դարեր) (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 303):

[325] **Կոթի**-գյուղ Տավուշի մարզի Նոյեմբերյանի շրջանում, 1964-91թթ.՝ Շավարշավան (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 586):

[326] Վանի նահանգի Վանի գավառում կար **Կարճկան** անունով գավառակ, որն ուներ 70 գյուղ, որից 22-ը հայաբնակ, ընդհանուրը՝ 746 տուն: **Կարճկանց** անունով գյուղ կար Վանի գավառի Մոկսի

Դիլիջանից ցածր՝ Ջարխեչ գյուղի աջ կողմից, մի թունելի պես անցք կա, որ կմտնի Ղարաղոյուն ձորը և կհասնի Ադրբեջանի սահմանագլխի ռուսական մեծ գյուղը՝ Միխայլովկան[327], որտեղ վեցերորդ գունդից մի վաշտ գերի է մնացել: Մեր պարտականությունն է, որ նրանց ազատենք:

Այժմ գրեմ մեր կռվի ճանապարհը: Ղարաղոյուն ձորի բերանը ծառերով փակված է և անտեսանելի է: Նրա առաջ մի ռուս գյուղացի խոզ կպահի: Գիշերը Մուրադի հետ գնացինք այդ ռուսի տունը: Նա մեզի տարավ և ցույց տվեց մի մեծ ընկուզենի ծառ, որ փակուղու առաջն է, և թուրքերը լավ դիրք բռնած են:

Մյուս գիշերը այդ անցքը պաշարեցինք, և սկսեց մեր կռիվը: Չորս օրվան կռվից այդ անցքի բերանի ծառերի ճյուղերը կոտրվան, մենք թուրքերի դիրքերը տեսանք: Տղաների գնդակների տարափը ուղղվեց թուրքերի վրա:

Թուրքերը քիչ-քիչ սկսեցին դանդաղ կռվել, մենք հարձակվեցինք և ճաշից առաջ մտանք կիրճը: Առաջի գյուղը իր զորքի տեղով ու գերիներով գրավեցինք: Վեցերորդ վաշտի գերիներին շատ թշվառ վիճակում ազատեցինք: Մեծ մասը սովահար էին եղած:

Այս ձորի երկու կողմը գյուղեր են, և մի մեծ ջուր մեջտեղեն կերթա: Մուրադը մեզի բաժանեց երկու մասի, աջ կողմը Մուրադն է, ձախ կողմը Թելո Սուրենն է: Երկու օրվան կռվից հետո մենք հասանք ամենամեծ գյուղը, որ Հաջիլար կասեին: Մի օր հանգստացանք, թուրքերն այլևս չկռվեցին: Մենք հասանք ռուսների մեծ գյուղը, ռուսներն աղուհացով եկան մեզի ընդառաջ, և մտանք գյուղը: Մի տունի առաջ ես կանգնամ: Տնից մի ծերունի, երկար մորուքով, հասավ և իմ ոտս համբուրեց ու ասաց. «Ի սեր Աստուծո, ինչ-որ կու-

գավառակում, որը 1909-ին ուներ 30 տուն հայ բնակիչ (Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 59, 60, 75):

[327] **Միխայլովկա** գյուղը 1920-72թթ. կոչվում էր Կարմիր գյուղ, 1972-95թթ.՝ Կրասնոսելսկ, 1995թ.՝ ք. Ճամբարակ (Գեղարքունիքի մարզ) (ՀՀՀ, հ. 3, էջ 494):

զես կուտամ, իմ պատիվը պահիր քո հոր պես»: Մի պառավ կին նաև իմ երեսը համբուրեց: Ես ձիուց ցած էի իջել, նրանց երկուսի ձեռքերը համբուրեցի և ասացիմ. «Դուք իմ հայրս և մայրս եք: Ձեր մի հավը անգամ ոչ ոք ձեռք չի տա: Մեր տղաները միայն հայրենիքի թշնամիներին են հալածում»: Ես մի քիչ ռուսերեն գիտեիմ, բայց նրանք ինձի հետ թուրքերեն կխոսեին: Նոր հասկացանք, որ վեցերորդ գնդի զինվորները բնակիչների հետ վատ են վերաբերվել: Տանտիրոջ անունը Մասլովիչ էր: Երեք հասած աղջիկներ ուներ: Ինձի հետ էր տիգրանակերտցի Կարոն: Իմ անունը՝ Երվանդը, փոխեցին և «Իվան» կկանչեին: Պառավը ինձի կասեր. «Մայա Իվանովկա»: Ես էլ նրանց կսեիմ. «Մայա պապաշա և մամաշա»: Մի լավ սենյակ տվեցին մեզի, բաղնիք տաքացուցին: Մենք լողացանք: Մամաշան մեզի նոր ճերմակեղեն տվեց և մեր շապիկը, որ սև կաշի էր եղած, վառեցին: Մի ամիս այդպես կապրեինք:

ՇԱՀԴԱՂԻ[328] ԿՌԻՎԸ

Գյուղից դեպի հարավ մի մեծ սար կա, որ Շահդաղ կասեին: Մի կողմը Աղբբեջանն է, իսկ հարավային կողմը՝ Սևանա լիճը: Հյուսիսում այս մեծ գյուղն է: Ղարաղոյունլու ձորի թուրքեր փախած՝ միացած են Աղբբեջանի թուրքերին, եկել, այդ սարը գրավել և ամառանոց են արել: Վեցերորդ գունդը չէր կարողացել սարը գրավել, այժմ մենք պիտի երթանք՝ գրավելու:

Մուրադը վեցերորդ գնդից երկու թնդանոթ առեց, որ կռիվը սկսենք:

[328] Շահդաղ է կոչվել Սևանի լեռնաշղթան, որը գտնվում է Սևանա լճի հյուսիսարևելյան կողմում: Առավելագույն բարձրությունը՝ 3317 մ (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 578):



Մեկ էջ Ե. Կյուրեղյանի հուշագրությունից

Մուրադը հրամայեց՝ անցնենք հարձակման: Զինվորը պատրաստ է և թնդանոթներ կգործեն: Սարի գլուխը թուրքերի ձեռքն է, կանաչ և թարմ խոտ է, սարի լանջերը մեր զինվորները կաքավի պես կբարձրանան: Երկու օրվան կռվից հետո թուրքերը սարից փախան: Այնպես եղավ, որ քիչ ընտանիք մնացին գերի, իսկ հարյուրի չափ վրաններ՝ լիքը ապրանքներով և ոչխար-տավարներով մնաց մեր ձեռքը: Մուրադը հրամայեց ռուսներին, որ ձիակառքեր տրամադրեն, որ այս ավարը փոխադրվի Դիլիջան՝ Սեպուհին:

Այս կռվին մի աղջիկ և մի տղա փախան դեպի ինձի: Ես ասոնց մտցրի մի վրանի մեջ մինչև գիշեր: Գիշերվան հանեցիմ դուրս: Արմենակը պահակ կանգնած էր, պատվիրեցիմ, որ Մուրադին չասի: Տարամ այն ճանապարհը, որ կտեսնեին թուրքերի փախուստը, ասացիմ. «Մի վախենաք, այս ճանապարհով գնաց ձեր մաման»:

Նստամ ջուրի առուի կողքին: Արմենակին ասացիմ. «Արմենա՛կ, կհիշե՞ս ձեր փախուստը, որ եկաք մի ամիս մեր գյուղը»: Ասաց. «Այո՛»: Ասացիմ, որ. «Այդպես իրարու կոտորելով ո՞ւր կհասնենք»:

Այս խոսակցության միջոցին ձորի մյուս կողմից մի կանացի ձայն լսեցինք, թուրքերեն այսպես ասաց. «Իմ երեխաները հասան ինձի, դուք հա՞յ եք, թե՞ ռուս եք, ձեր բաժինը Աստուծմե առնեք»: Ես և Արմենակը հուզվանք և լացեցինք:

ՎԱՇՏԱՊԵՏ ՄՈՒՐԱԴ ԱԼՈՅԱՆԻ ԵՎ ԹԵԼՈ ՍՈՒՐԵՆԻ ՄԱՀԸ

Տասներկու օր մնացինք այդ սարը: Սարից ցածրը երկու գյուղ կար: Նրանք էլ մաքրեցինք: Չորս օր այդտեղ մնալուց հետո վերադարձանք դեպի սարը, տեսանք մի պառավ կին գիշերով եկած է և մի տիկ յուղ շալակած կտանի: Արմենակն ասաց. «Երվա՛նդ, այս կինը ժլատ է, փող կունենա»:

Բռնեցինք: Արմենակը նրա գրպաններից մի գունդ արծաթ դրամ և մի փունջ թղթադրամ, տասներկու ոսկի հանեց: Ուզեց սպանել, ես չթողեցիմ, իր բեռ յուղը շալակեց ու գնաց:

Տասնհինգերորդ օրը այդ հսկա հարստությունը մաքրեցինք և սարից իջանք ռուսի գյուղը: Պապաշա Մասլովիչը ինձի համբուրեց, ես էլ նրա ձեռքը համբուրեցիմ: Մամաշան բաղնիք վառեց, մաքրվեցինք և նստանք հացի:

Մի շաբաթ անցավ: Այդ գյուղը, մեր բանակին պիտի հանձնի քսան հազար կիլո գետնախնձոր[329], քսան հազար կիլո գարի և տասը հազար կիլո ցորեն: Այս համաձայնագիրը ստորագրեց գյուղի կոմիսարը և իմ պապաշա Մասլովիչը, որ գյուղի եպիսկոպոսն էր: Այդ պայմանագիրը Մուրադն ուղարկեց Դիլիջան՝ զորավար Սեպուհին:

Գիշերներ ես տունի զավակի պես երգելով կպարեինք «Հոյ, Նազանը», մեծ աղջիկը լավ թուրքերեն կխոսեր, բայց մեր ուրախությունը կարճ տևեց:

Առավոտուն Մուրադը մեզի կանչեց, որ պատրաստվենք՝ երթալու: Ադրբեջանից մի բանակ օգնության է եկած ապստամբ կարմիրներին: Հրամանատարն է մի հայ՝ Բերբերյան[330] ազգանունով:

---

[329] Հեղինակը կարտոֆիլին ասում է գետնախնձոր:

[330] Հեղինակը նկատի ունի **Անանիա Բերբերյանին**: Նա ծնվել է Դոնի Ռոստովում, 1918-ին փոխադրվել է Թիֆլիս, աշխատել «Վոլնա» թերթի խմբագրությունում, կարճ ժամանակով բանտարկվել է: Տեղափոխվելով Երևան տեսուչ-վերահսկիչ է աշխատել Խնամատարության նախարարությունում, այնուհետև ռուսաց լեզվի ուսուցիչ՝ Սևքարում և Քարվանսարայում (Իջևան): Կուսակցական ծածկանունը «Ալյոշա»: Մայիսյան ապստամբության ժամանակ Ղազախ-Շամշադինի ռազմահեղափոխական կոմիտեի անդամ էր: Եղել է Դիլիջանի գավառի բոլշևիկյան կազմակերպության ներկայացուցիչը Շամշադինի (Տավուշի) շրջանում: Իջևանում, Շամշադինում, Ուզունթալայում ղեկավարել է բոլշևիկյան ապստամբություններն ու ռազմական գործողություններն ընդդեմ ՀՀ իշխանությունների և բանակի: Կապ է պահպանել Բաքվի կոմունիստների հետ, այցելել է Բաքու, աջակցել է Ադրբեջանից 11-րդ Կարմիր բանակի ներխուժմանը Հայաստան: Այդ տարիների մասին գրել է «Կարմիր պարտիզանի հուշատետրից» գիրքը (Երևան, 1956): Նրա շամշադինյան գործունեության մասին տե՛ս

Շատ տխուր էր մեր բաժանումը Մասլովիչի ընտանիքից: Հասանք Բաշքանդ[331] մեծ գյուղը: Այժմ պիտի ճանապարհից բաժանվենք և ուղիղ ելնենք դեպի հյուսիս, որ կերթա Շամշադինի շրջանը: Շատ դժվար էր ճանապարհը: Բարձրացանք, մեր առաջը՝ բաց դաշտի մեջ, մի գյուղ կա, չգիտենք հա՞յ են, թե՞ թուրք: Մուրադն ասաց. «Սպասենք, գիշերով պաշարենք գյուղը, հայտնի կլինի թե ինչ են»: Գիշերով պաշարեցինք: Առավոտուն հայտնի եղավ, որ հայի գյուղ է:

Մեզի դիմավորեցին մի հասակավոր հայ գնդապետ և մի նուխեցի գաղթական տերտեր:

Գյուղի կողքին մի փոքր անտառ և նրանից հեռու մի բլուր կար: Այդ բլուրը կարմիրներ գրաված էին: Մենք էլ անմիջապես անտառը գրավեցինք: Կռիվ սկսվեց նրանց կողմից և տևեց երկու օր: Բլուրը նրանք լքեցին: Սուրենը բլուրը գրավեց, և տասներկու հոգի սպանված թողած էին: Ցավոք սրտի, մեկը հայ էր՝ Մուկուչ անունով:

Ճաշից հետո Մուրադը հրամայեց. «Հարձակվե՛նք նրանց վրա»: Գնդապետն ասաց. «Պարոն Մուրա՛դ, այժմ սխալ է ձեր հրամանը: Նրանք անցան ձորի այն կողմը և ձորի մեջ մեծ ջուր կա, պիտի անցնեք, ձեզի կկոտորեն, և այժմ արեգակը քո զինվորի աչքին կխփի: Ձեր հրացանի փայլից նրանք կօգտվեն, և դուք շատ զոհ կտաք»:

Մուրադը բարկացավ և գնդապետին անպատվեց: Կոնյակի շիշը քաշեց, խմեց և հանկարծ կանչեց. «Ի՛մ քաջեր, ուռա՛ կանչեք և իմ հետևից եկեք»:

Դալլաքյան Ղ., Հոկտեմբերի արևը Շամշադինում, Երևան, 1969, էջ 59-61: Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Երևան, 1967, էջ 90:

[331] **Բաշքենդը (Բաշքանդ)** - 1978թ. վերանվանվել է Արծվաշեն, գյուղը հիմնադրել են 1859թ. Ղարաբաղից և Տավուշի Զորաթան գյուղից եկած հայ վերաբնակիչները: 1873թ. ուներ 1015, 1897թ. 1847, 1926թ. 2909, 1979թ. 2771 բնակիչ: Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին գյուղի բնակիչները ենթարկվել են բռնադաղթի, և այն անցել է ադրբեջանական զինված ուժերի հսկողության տակ (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 453):

Զին մտրակեց և անցավ առաջ, հետևակ զինվորները իջնում են ձորի մեջը, և ջուրը մինչև գոտիները կհասնի: Պիտի անցնեն և կռվի բռնվեն թշնամու հետ: Ժամը չորսն է, գնդապետը ռուսերեն մի բան ասաց, թքեց, գնաց: Մուրադի կողքին էինք՝ Իգդիրից Արտուշը, Կարոն և ես: Հասանք մի բլուրի: Թշնամին մեզանից ավելի ծանոթ էր տեղանքին և սպասեց, որ հետևակը մտնի ջուրը, և սկսեց անխնա գնդակոծել մեր զինվորներին: Մուրադը տեսավ իր զինվորի սպանված մարմինը, որ ջուրը կտաներ, և հանկարծ բարձրացավ բլուրի վրա ու թշնամու արձակած մի գնդակով զոհվեց: Մենք նրա դիակը քաշեցինք ցած, և սկսվեց կռիվը մինչև կեսգիշեր: Մենք Մուրադի մարմինը կապեցինք իր ձիու վրա, բերեցինք՝ գնդապետին հանձնելու: Մյուս կողմից բերեցին Թելո Սուրենին: Նա էլ սպանված էր: Այդ կռվին մենք զոհ տվեցինք Մուրադին և աննման Թելո Սուրենին, նաև ութ սպանված ու քսաներկու վիրավոր զինվոր:

ՇԱՄՇԱԴԻՆԻ ԿՌԻՎԸ

Գնդապետը դադար չինել տվեց, բայց հարձակումը սկսվեց: Մենք գյուղը թողեցինք և մոտիկ բլուրն ու փոքր անտառը բռնեցինք: Նամակ գրեցինք զորավար Սեպուհին և խնդրեցինք Մուրադի տեղը մեկին ուղարկե: Եկավ Մաչանի Արշակը: Գնդապետը դաշնակցական էր, իր պահեստից մեզի հաց, փամփուշտ ուղարկեց: Արշակը եկավ, տեսավ զինվորների վիճակը՝ մի օրվան երկու անգամ ջուրը մտնելը և դիրքում պառկելը, կռվելը, նորեն ջուրը մտնելը և կռվելով նահանջելը: Տղաները ոտքից մինչև գլուխը ցեխ էին եղած: Արշակը մի քարտեզ բերած էր: Մկրտիչի հետ նայեցին և որոշեցին մեր վաղվան ճանապարհը:

Գիշերով զգուշորեն բլուրների կողքերով քայլելով հասանք մի գյուղի, որ Ղրղի[332] կասեին: Գյուղը պաշարեցինք: Առավոտուն գյուղապետը և հինգ հոգի տարիքավորներ աղուհացով եկան մեզի դիմավորելու, խոստացան գյուղի զենքերը հավաքել և հանձնել մեզի: Երկու հարյուր մուսեենի հրացան և տասը արկղ փամփուշտ կարմիրները թողած էին, որ երբ ուզենան, գան տանեն: Մի եզան սայլ տրամադրեցին այդ զենքերի համար և երկու օր մեզի հյուրասիրեցին ու պահեցին: Ըստ քարտեզի՝ դեպի հյուսիս մի գյուղ կար և այդ գյուղի ճանապարհը բռնելով՝ մենք հասանք մի բլուրի, որ կիշխեր այդ գյուղին:

Լույսը բացվեց, անակնկալորեն նրանք մեզի տեսան: Այդտեղ մի ավերակ բերդ կար, բերդում դիրքեր բռնեցին, և սկսեցին մեզի խփել: Մենք անմիջապես դիրքավորվանք՝ կեսը՝ աջ և կեսը՝ ձախ կողմը: Մենք շատ ուրախ էինք, որ նրանք մեր վրա կրակ բացին, եթե չխփեին, մենք կիջնեինք գյուղը և գերի կընկնեինք: Կռիվը տաքացավ: Սոսկալի և անխնա կխփեին մեզի, բայց մեր դիրքերը, բլուրի կողքերում բարձր էր նրանց բերդից: Կռիվը տևեց մինչև գիշեր, դանդաղեց: Մենք հաց և փամփուշտ շատ ունեինք, բայց ջուր չունեինք, որ ամենակարևորն էր կռվողի համար: Այդ գյուղի ավերակ բերդը շատ անառիկ էր: Չորս օր մեր կռիվը չդադարեց:

Մի գիշեր հինգ հոգի զինվորներ նրանց կողմեն կուգան, կհանձնվեն հիսնապետ Արտուշին և շատ-շատ լուրեր կուտան: Արտուշը չի հավատա նրանց խոսքերին, կասի. «Եթե ճիշտ կխոսեք, ձեզանից երկու հոգի թող երթան, երկու կուժ ջուր բերեն»: Նրանցից երկու հոգի կերթան և երկու կուժ ջուր կբերեն: Մեկը ուղարկեց մեր դիրքը: Արշակը բաժակով բաժանեց մեր մեջ, կրկին գնացին և բերին: Այս հինգ զինվորները գաղտնի ճանապարհով մեզի մտցրեցին գյուղը: Մենք, ուռա՜-ուռա՜ կանչելով, հասանք բերդին: Թշնամին բերդը թողած, փախած էր:

Արշակը հրամայեց. «Ձիավորնե՛ր, հալածեք թշնամուն, չկարողանա դիրք բռնել»: Մենք, նրանց հետապնդելով և կռվելով, հասանք մի գյուղ, անունը Աշուղի էր[333]: Իմ ձին հանկարծ նստեց, իջամ նայեցիմ, ոտքից վիրավորված էր: Սատկավ: Մենք մտանք Աշուղի գյուղը: Թշնամին փախած էր: Գյուղացիք հարձակվեցին մի տունի վրա, դուռը կոտրեցին: Քառասուներկու հոգի՝ կին և մարդ, դուրս բերեցին: Ասոնք բանտարկված էին, նրանց մեջեն մի երիտասարդ հասավ և սկսեց մեզի համբուրել և կանչում էր. «Մեր ազատարարներն եք, ղուրբան ձեր ճանապարհին, մեր ազատողներ...»:

ՈՒԶՈՒՆԹԱԼԱՅԻ[334] ԳՐԱՎՈՒՄԸ

Արշակը հրամայեց, որ թշնամուն հետապնդենք, չթողնենք, որ ամրանա իր դիրքերում, իսկ այդ երիտասարդը, որի անունը Միշիկ էր, ասաց. «Պարո՛ն Արշակ, այս գյուղը Աշուղի գյուղին նման չի, շատ անառիկ է: Գյուղի կեսը անտառումն է, կեսից շատը ներքևում: Սպասեք, գիշերը ես ճանապարհները ձեզի ցույց կտամ»:

Սպասեցինք, գիշերվան ասաց. «Պարո՛ն Արշակ, մի քանի հոգի վերցուր, երթանք, ճանապարհը սովորեցնեմ ձեզի»:

---

[332] **Ղրղի**-գյուղ Տավուշի մարզի Տավուշի շրջանում: 1978թ. վերանվանվել է Արծվաբերդ: 1831թ. ուներ 293, 1897թ.՝ 1353, 1926թ.՝ 2338, իսկ 1979թ.՝ 3541 հայ բնակիչ, որոնց նախնիների մի մասը եկել էր Արցախից (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 451):

[333] **Աշուղի (Ալի)** - այժմ՝ Վազաշեն, գյուղը գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, Իջևան քաղաքից 18 կմ հյուսիս-արևելք, Հախումի լեռնաշղթայի լանջին: Վազաշեն է վերանվանվել 1978թ.: 1831թ. ուներ 23, 1897թ.՝ 463, 1926թ.՝ 655, 1939թ.՝ 788, 1959թ.՝ 658, 1970թ.՝ 917, 1979թ.՝ 1030, 1989թ.՝ 987 հայ բնակիչ (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 731):

[334] **Ուզունթալա**-գյուղ՝ Տավուշի մարզի Իջևանի շրջանում: 1967թ-ից՝ Հոնուտ, 1969թ-ից՝ Այգեհովիտ: 1831թ. ուներ 345, հարյուր տարի անց՝ 1931թ. 1588 բնակիչ, 1979թ. 3195 հայ բնակիչ: Գյուղի շրջակայքում պահպանվել են մի շարք հնություններ՝ Սրվեղի վանքը (11-12-րդ դար), Սբ Սարգիս մատուռը, ուշ միջնադարի ամրոց-պահակատունը և այլն (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 227, հ. 4, էջ 694, հ. 5, էջ 173):

Մի կացին վերցրեց, և գնացինք մտանք անտառը: Ամեն ծառի կեղևը կացինով պլոկեց իբրև նշան: Այսպես պլոկելով ծառերի կճեպը՝ հասանք գյուղի այգիներին: Այդ տեղում քարից պատ շարեցինք, որ մեր դիրքերը լինեն: Եկանք տունը, նստանք խորհուրդի: Որոշեցինք, որ Միշիկը մեզանից հիսուն զինվոր վերցնի և իր տասներկու ընկերներով երթա, անտառի կողմեն մտնի գյուղի մեջ, և երբ կրակ վառի ու հարձակվի, մենք էլ այս կողմեն հարձակվենք: Պատրաստվեցինք՝ երթալու: Միշիկը գնաց անտառ, և մենք էլ ծառերի նշաններով գնացինք, հասանք մեր շարած պատին:

Լույսը չբացված՝ Միշիկի կրակը վառվեց, և կռիվը սկսվեց: Մենք էլ ուռա՜ կանչելով մտանք այգիներ և առաջացանք, հասանք գյուղի պատերի տակ: Թշնամին անակնկալի եկավ: Նա անտառի կողմեն հարձակմանը չէր սպասում: Կռիվը տևեց մինչև կեսօր: Մենք մտանք գյուղ: Միշիկն էլ վերևից մտավ գյուղ: Թշնամին անձնատուր եղավ:

Գյուղացիք մի դուռ կոտրեցին և վաթսուն բանտարկյալ դուրս բերեցին: Նրանց մեջեն մի բարձրահասակ մարդ չէր կարողանում կանգնել, այնքան որ չարչարած էին: Միշիկը հասավ-գրկեց, համբուրվան: Այս պարոնի անունը Սրապիոն էր, գյուղի կոմիսարն էր: Մեր բռնած գերիները հարյուր և չորս հոգի էին, Միշիկինը՝ ութսուն և երկու հոգի: Այս գերիները հանձնեցինք կոմիսարին:

Այս գյուղը Ուզունթալա կասեին, սահմանակից էր Աղրբեջանին: Կոմիսար Սրապիոնը գերիներին լցրեց մի այգու մեջ և սկսեց ջոկել: Ասոնցմե քսանը ռուս էին, ութը՝ հայ: Ասոնց հանձնեց Միշիկին, մնացած թուրքերին գնդացիրով մաքրեց: Միշիկը գիտեր, որ իմ ձին սպանված է, դիմեց Սրապիոնին, որ մի ձի հատկացնի ինձի, և Սրապիոնը մի լավ ձի տվեց:

ՊՈՂՈՍՔԻԼԻՍԱ ԳՅՈՒՂՈՒՄ

Գիշերը մնացինք այդ գյուղում, առավոտուն ճանապարհ դրեցին, հասանք Քարվանսարեն[335]: Այդտեղ էր մեր Օվանեսն իր զինվորներով, շատ ուրախացանք: Հետո հասանք Դիլիջան: Մեզի դիմավորեցին զորավար Սեպուհը և գնդապետ Տիգրանը, տեսան ինչպես թափթփված ենք, ոչ հագուստ ունենք, ոչ էլ՝ կոշիկ: Մեզի նկարեցին, հետո բաժանեցին շրջանի գյուղերի վրա: Մեր հիսնյակին բաժին ընկավ Դիլիջանի հյուսիսում գտվող Պողոսքիլիսա գյուղը:

Պարոն Արշակը զեկուցեց մանրամասն մեր գնացած ճանապարհը և տված զոհերը: Ուրեմն, մենք 1920 թվի մայիսի տասից Ալագյազի կայարանից սկսեցինք կռվել մինչև օգոստոսի քսանհինգը, զոհ տվեցինք՝ վաշտապետ Մուրադը, հարյուրապետ Թելո Սուրենը, 42 վիրավոր, 12 սպանված և ջուր տարած, կորցրել էինք 32 ձի:

Այս ամենը զորավար Սեպուհը ցուցակագրեց: Նրանք գնացին Երևան, իսկ մենք՝ մեզի ցույց տված գյուղերը:

Մեր տեղը անտառ էր: Ձիերի համար շատ լավ էր, բայց հաց չկար: Արշակը մի քիչ փող ուներ, մի քանի օր մեզի պահեց և փողը վերջացավ:

Արշակը կերթա Դիլիջան և այդտեղի զինվորական մի գնդապետից օգնություն կխնդրի: Գնդապետը մտրակով շատ կծեծի Արշակին և կասի. «Դուք թուրքին բերիք մեր երկիր: Մենք դաշնակից ենք թուրքերի հետ, իսկ դուք կկռվեք նրանց դեմ»: Արշակը եկավ՝ երեսները ուռած և կապուտացած: Նորից դիմեցինք գյուղացիներին, նրանք էլ

---

[335] **Քարվանսարան** խորհրդային իշխանության տարիներին վերանվանվել է Իջևան: Այն Տավուշի մարզի վարչական կենտրոնն է: Գտնվելով կարևորագույն առևտրական ճանապարհի վրա այստեղ վաղուց գոյություն է ունեցել Իջևանատուն՝ քարվանսարա, որից էլ ծագել է բնակավայրի անունը: 1831թ. այն ուներ 440, 1873-ին՝ 1016, 1897-ին՝ 1790, 1926-ին՝ 2261 բանակիչ: Ծխական դպրոցը հիմնադրվել է 1858թ-ին (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 535):

չունեին: Որոշեցին, որ ամեն մարդուն մեկ հաց և երկու եփած գետնախնձոր տան, և այդպիսով ապրեցինք մինչև հոկտեմբերի առաջին շաբաթը:

ՂԱԶԱՐՈՍԸ ՈՐԲԱՆՈՑՈՒՄ

Մի առավոտուն տեսանք երկու կառք կանգնած են կոմիսարի դուռը՝ լիքը հագուստով և ուտելիքներով: Մեզ շարքի կանգնեցուցին, առաջ հացը բաժանեցին, հետո հագուստները: Ոտնամանից բերած էին մինչև գլխարկը, հացը կերանք, հագուստը հագանք և ճանապարհվեցինք դեպի Ղարաքիլիսա, այնտեղեն՝ Ալեքսանդրապոլ: Երբ հասանք Ալեքսանդրապոլ, ասացին. «Մի քանի օր այստեղ ենք, ձեր ձիերին հոգ տարեք և պատրաստ մնացեք ու սպասեք հրամանի»:

Ես անմիջապես իջամ չուկան: Երկու մեծ տուփ ուտելիք և միրգ առեցիմ, գնացիմ պոլիգոնների[336] որբանոցները: Հարցուցիմ 8-րդ և 9-րդ որբանոցը, ցույց տվեցին: Դուռը զարկեցիմ, ծառան բացեց: Տնօրենին ուզեցիմ: Ծառան գնաց, և Մարիամ անունով մի տիկին եկավ: Խնդրեցիմ, ասացիմ Ղազարոս անունով վանեցի որբին կուզեմ, իմ տղաս է, տիկինը գնաց բերեց:

Մի սիրուն, սև աչքերով տղա էր: Գրկեցիմ և սրտովս կուշտ համբուրեցիմ: Ասացիմ. «Ղազարո՛ս, ես քո պապեն եմ, քո հայրիկն եմ»: Այս ասելուց լացեց և ասաց. «Ես մամայիս կուզեմ, ինձի տար մամայիս մոտ»: Այս ասելուց

[336] **Պոլիգոն** նշանակում է հրաձգարան, ընդարձակ տեղանք, որտեղ փորձարկվում է զինվորական տեխնիկան, զինավարժությունների վայր: Ալեքսանդրապոլում (Գյումրի) գտնվող ռուսական բանակի ստորաբաժանումների շենքերը հատկացվեցին Մեծ եղեռնից մազապուրծ որբերին, որի պատճառով ժողովուրդը անվանում էր պոլիգոնների որբանոցներ:

կարծես երկինքը և գետինը շուռ եկան իմ գլխի վրա: Ես լացիմ, տղաս կլացեր, տիկինը նույնպես կլացեր: Վերջապես տուփերը բացեցիմ, տղաս հաց և կաթ կերավ: Ես մի թուղթի վրա գրեցիմ ենովք, Սողոմոն և Խաչատուր, մի բուռ թուղթ փող կարեցիմ տղայիս հագուստին, մի ոսկի տվեցիմ տիկին Մարիամին, որ լավ նայի: Խոստացամ՝ «Վերադարձին, Ղազար ջան, քեզի կտանեմ մամայի մոտ»: Տիկինին պատվիրեցիմ՝ այս անունների տերերը իմ տոհմից են:

Նրանք գնացին, և ես էլ վերադարձա մեր բանակը:

ԴԵՊԻ ԿԱՐՍ

Մեր բանակը լրիվ եղած էր: Մենք եղանք առաջին ձիավոր հարյուրյակը, մի հիսնապետը Կալեն էր, մյուսը՝ ես էիմ:

Մեր վաշտապետը Վարդան Բակուրն էր, իսկ հարյուրապետը՝ Մաչանյան Արշակը: Մենք շարժվանք դեպի Կարս քաղաքը:

Այսպես գնալով՝ հասանք մի տեղ: Տեսանք մի փոքր լիճ և մի գյուղ, մի մարդ արտը կցաներ: Կանչեցինք, եկավ և հարցուցինք, այդ լիճը ըսավ Զըլդրի[337] լիճն է, այս գյուղն ալ, Զըլդըր[338] կասեն, հարցուցինք. «Ձեր գյուղը թուրք կա՞»:

[337] **Զըլդր**-լիճ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասում, Կուր գետի վերին հոսանքի աջ կողմում, Կարս քաղաքից մոտ 40 կմ հյուսիս: Ունի 85 քառ. կմ մակերես, 42 մ խորություն: Եռանկյունաձև է, սուրանկյան գագաթը ուղղված է դեպի հարավ, երկարությունը հյուսիսից հարավ մոտ 20 կմ է, լայնությունը հյուսիսում՝ 16 կմ: Մովսես Խորենացին հիշատակում է Ծովակ Հյուսիսոյ անունով (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 861): Զլդրի շրջանի դեպքերի մասին տե՛ս նաև Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 338, 340):

[338] **Զըլդր** գյուղը գտնվում էր Կարսի մարզի Արդահանի օկրուգում, Զըլդրի տեղամասում, Զըլդր լճի հարավային ափին: 1907թ. ուներ 251 բնակիչ: Այստեղ հայտնաբերվել է Ուրարտուի թագավոր Արգիշտի որդի Սարդուրի արձանագրությունների մեկը (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 35):

Ասաց. «Չէ՛, թուրք չկա, բայց մի տասը հոգի վրացիներ եկած են՝ ձուկ բռնելու և ուրախանալու»: Ես այս զրույցը գրեցիմ և ուղարկեցիմ բանակին: Պատասխանը գրած էին՝ գնացեք և առանց արյունի՝ զինաթափ արեք: Այդ գյուղացուն տարանք և հասանք նույն տունի առաջ: Զորս հոգով մտանք տունը: Արտուշը ռուսերեն կանչեց. «Զեռքներդ բարձրացուցե՛ք և զենքերդ հանձնեցե՛ք, մենք հայեր ենք, չվախենա՛ք»: Շատ սիրով զենքերը հանձնեցին: Բանակը հասավ, և նրանց հանձնեցինք գնդապետ Տիգրանին: Ես մտամ ձիերի ախոռը, տեսամ մի կարմիր ձի, շատ սիրեցիմ: Իմ ձին կապեցիմ նրա տեղը, և նստամ եկամ բանակի մոտ: Երկու օր հանգստացանք: Սկսեց ձյուն և անձրև: Մյուս օրը ելանք ճանապարհ: Կրկին ինձի կանչեցին և նշանակեցին որպես առաջապահ: Պատվիրեցին, որ մարդ կտեսնաք, չխփեք, կարող է զորավար Սմբատի[339] տղաները լինեն: Մենք, նույնպես երկու-երկու զինվոր թողնելով, առաջացանք: Մի քանի բլուրներ անցնելուց՝ տեսանք մի գյուղ է, և կալերի մեջ լիքը ձիեր կան: Լուր ղրկեցիմ, որ մի գյուղ է, և շատ ձիեր կան: Պատասխան եկավ, որ նրանք մշեցիներ են: Մենք հասանք գյուղը: Եկան զինվոր տղաներ: Հայտնեցինք մեր ով լինելը: Տունից դուրս եկավ մի բարձրահասակ զինվորական՝ փափախը գլխին, մաուզերը կողքին և հեռադիտակը ձեռքին, դեղին և հաստ բեղերով: Այս մարդը մշեցի Դալի Ղազոն էր: Բանակը հասավ, և իջան հանգստանալու: Ես անմիջապես գնացիմ, կալերից իմ

Զըլդրի շրջանի դեպքերի մասին տե՛ս նաև Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 338, 340):

[339] **Սմբատ զորավար**-Սմբատ Բորոյան՝ Մախլուտո, ծնվել է 1881թ. Մուշում: Հայ ազգային-ազատագրական պայքարի հերոս՝ ֆիդայի: ՀՅԴ անդամ: Գործակցել է Անդրանիկի, Հրայրի հետ, մասնակցել է Առաքելոց վանքի (1901թ.) կռվին, գլխավորել է Իշխանաձորի մարտերը: Առաջին աշխարհամարտի տարիներին եղել է Առաջին կամավորական գնդի հրամանատար Անդրանիկի տեղակալը: 1918թ. կռվել է Զանգեզուրում: 1921թ. Փետրվարյան ապստամբությունից հետո անցել է արտասահման, 1947թ. հայրենադարձվել, ապրել է Երևանում, ուր և մահացել է 1956թ. (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 88):

ձիուս խուրջինը լիք գարի լեցուցիմ, և ճանապարհվանք դեպի Սմբատի բանակը՝ Մերդենիկ[340] գյուղը:

Գիշերը հանգստացանք: Երկու օր է՝ Սմբատը կռվի մեջ է, և մեզի ուղարկեցին նրանց փոխարինելու, մեր վաշտապետը Վարդան Բակուր Սեբաստացին էր: Հասանք մեր դիրքերը: Մի մետրի չափ ձյուն կար:

Մեր և թուրքերի մեջ անդունդի պես մի ձոր կա: Մինչև մյուս օրը մենք մնացինք մեր դիրքերում և կռվում ենք:

Վահան Պաստրմաջյանի[341] զինվորները եկան մեզի փոխարինելու և այսպիսով, փոխ առ փոխ այդտեղ մնացինք ութ օր: Իններորդ օրը կռվի հերթը մերն էր: Այնքան ձյուն և փոթորիկ էր, մառախուղ, որ իրարու չէինք տեսնում:

Գիշերվան լուր տվեցին, որ նահանջեք, եկեք գյուղը: Ելանք դիրքերից և իրարու մոտ երթալով՝ հասանք գյուղ:

Գիշերով և մոտիկ ճանապարհով մեր առաջնորդը մեզի հասցրեց մի հայի լքված գյուղ: Գյուղացիք չէին կարողացել տանել ամեն ուտելիքները: Սկսեցինք հաց պատրաստել: Շատ առատ ալյուր և ցորեն էր մնացած: Մեր խուրջինները լիք հաց լցրեցինք: Պահակը լուր տվեց, որ զորք է տեսել, կուգան մեր կողմը: Վարդանը հեռադիտակով նայեց և ասաց, որ զորք չէ, այլ ժողովուրդն է՝ սայլերով, ընտանիքներով:

[340] **Մերդենիկ** գյուղը գտնվում էր Կարսի մարզի Արդահանի օկրուգում: 1907թ. ուներ 309 հայ բնակիչ: Մեծ եղեռնի տարիներին գյուղը շատ զոհեր է տվել (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 801):

[341] **Վահան Պաստրմաջյան**-գնդապետ Տիգրան Բաղդասարյանի հուշերից տեղեկանում ենք, որ Վահան Փաստրմաճյանը եղել է թուրքական բանակի սպա և անցել է հայկական բանակ, դարձել Առաջին գումարտակի հրամանատար, գնդի հրամանատարի օգնական (Բաղտասարեան Տ., նշվ. աշխ., էջ 196): Վահան Փաստրմաճյանը Արմեն Գարոյի եղբայրն էր (ՅՀՅԴ, ալբոմ-ատլաս, հ. Բ, էջ 140): Արմեն Գարոն (1872-1923) հասարակական-քաղաքական հայտնի գործիչ էր, ՀՅԴ անդամ, մասնակցել է «Բանկ Օտոմանի» գրավմանը: 1905թ. հայ- թաթարական (ադրբեջանական) բախումների ժամանակ եղել է Թիֆլիսի հայերի ինքնապաշտպանության ղեկավարներից, 1908-ին ընտրվել է Օսմանյան Խորհրդարանի անդամ:«Նեմեսիսի» ղեկավարներից էր: 1920-ից ՀՀ դեսպանն էր ԱՄՆ-ում: Մահացել է Ժնևում 1923թ. (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 66: ՅՀՅԴ, ալբոմ-ատլաս, հ. Բ, էջ 15):

Եկան, հասան գյուղը, ի՜նչ դաժան վիճակում էին՝ Կարսից և գյուղերից փախած էին սայլերով և բարձած անասուններով: Բոլորին տեղավորեցինք գյուղի մեջ, այդ գյուղի անունը Մազրա[342] էր: Գիշերը մնացինք: Պատմեցին՝ Կարսը երկու օր է գրաված են: Մենք տեղեկություն չունեինք: Առավոտուն ճանապարհվեցինք, որ հասնենք Կզըլ-Հախչախ կայարանը և միանանք զորքերին:

Մենք կտրված էինք և լուր չունեինք Կարսից: Նոր հասկացանք, որ զորքը չի կռվում և չի հնազանդվում իր հրամանատարին: Կքայլենք արտերի մեջեն, ճանապարհը կտրված է, ձյուն և անձրև սկսած է: Գյուղացիների եզան սայլերը կթաղվեն ցեխի մեջ: Բարձած անասունները կընկնեն ցեխի մեջ: Էլ ինչպե՞ս նկարագրեմ այդ զարհուրելի տեսածներս:

Հասանք մի ջուրի, շատ չէ, բայց պիտի մտնես մեջը՝ անցնես, տեսամ մի կին, որ երեք զավակ ուներ, իր ունեցածը շալակեր է՝ մի տղան դրած է շալակի վրա և մեկը իր գիրկն է առել, և մեկը՝ տասը տարեկան, իր փեշերից բռնած, կքայլեն. ցեխոտված և թրջված են:

Այս որ տեսամ, աշխարհը փլավ գլխիս վրան: Ճիշտ է, որ մենք էլ գաղթեցինք Վասպուրականից, բայց այս սոսկալի եղանակին, մանավանդ, ձյուն և անձրև և սարերի մեջեն:

Ձիուց իջամ և ասացիմ. «Քույրի՛կ, նստիր իմ ձին, քեզի անցկացնեմ էն կողմը»: Նստավ, անցկացրեցիմ ջուրի էն կողմը: Մեծ տղան կապեցիմ իր մեջքին, երկուսը գրկեց և իմ աղյալս քաշեցիմ վրաները, ձիուս սանձը բռնեցիմ և գնացինք: Միայն պատվիրեցիմ. «Զքնես, թե չէ երեխաները կընկնեն ցածը»:

[342] **Մազրա** գյուղը գտնվում էր Կարսի մարզի Կարսի օկրուգում, Կարս քաղաքից 12 կմ հյուսիս-արևելք, Կարս գետի աջ կողմում: 1907 թ. ուներ 58 տուն՝ 515, 1913 թ.՝ 119 տուն, 1175 հայ բնակիչ և եկեղեցի: Գյուղից 4-5 կմ հարավ-արևելք Կարս-Ալեքսանդրապոլ երկաթուղու վրա գտնվում էր համանուն երկաթուղային կայարանը (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 631):

Երեկոյան հասանք մի լքված գյուղ: Կինը և իրենց ժողովուրդը հավաքվեցին տունների մեջը: Ես գնացիմ իմ տղաներիս մոտ: Կրակ վառեցինք, հագուստներս չորացուցինք: Առավոտուն անձրև կգա, բայց ձյունը կտրված է: Գնացիմ, այդ կինը ինչպես բերած էիմ, նույնպես հեծավ և երեխաներ կապկպեցինք, ընկանք ճանապարհ: Հարցուցիմ. «Քույրի՛կ, դու մարդ չունի՞ս», և կինը արտասվեց և ասաց. «Իմ մարդս զինվոր էր, չգիտեմ՝ ի՞նչ է եղել»: Ես էլ արտասվեցիմ:

Հասանք մի ջուրի, շատ չի թույլ, պիտի մտնես մեջը, մեջը անցնես դեռամ մի կին, որ երեք զավակ ուներ, իր ունեցածը շալակեր, մի տղան դրած շալակի վրա, և մեկը իր գիրկն առած, և մեկը տասը տարեկան, իր փեշերից բռնած, կքայլեն, ցեխոտված և թրջված են, այս որ տեսամ, աշխարհը փլավ գլխիս վրան, ճիշտ որ մտնիմ, փոշտ եկիր վառապուրականից, թույլ այս սոսկալի եղանակին, և մանավանդ ձյուն, և անձրև, և սարերի մեջեն, իրամ դառ, և ասեցիմ գայրիկ, հարիր իմ ձին, քեզի անցկացնեմ էն կողմը, հարուցեցիմ էն կողմը, մեծ տղան կապեցիմ իմ մեջքին, երկուսը գրկեց, և իմ աղյալս քաշեցիմ վրաները, ձիուս սանձը բռնեցիմ և գնացինք, միայն պատվիրեցիմ, զքնես, թե չէ երեխաները կընկնեն ցածը, հասանք մի ջուրի, շատ չի թույլ, պիտի մտնես մեջը, անցնես դեռամ մի կին, որ երեք զավակ ուներ, իր ունեցածը շալակեր է՝ մի տղան դրած է շալակի վրա և մեկը իր գիրկն է առել, և մեկը՝ տասը տարեկան, իր փեշերից բռնած, կքայլեն. ցեխոտված և թրջված են, այս որ տեսամ, աշխարհը փլավ գլխիս վրան, ճիշտ է, որ մենք էլ գաղթեցինք Վասպուրականից, բայց այս սոսկալի եղանակին, մանավանդ, ձյուն և անձրև և սարերի մեջեն, Ձիուց իջամ և ասացիմ. «Քույրի՛կ, նստիր իմ ձին, քեզի անցկացնեմ էն կողմը»: Նստավ, անցկացրեցիմ ջուրի էն կողմը: Մեծ տղան կապեցիմ իր մեջքին, երկուսը գրկեց և իմ աղյալս քաշեցիմ վրաները, ձիուս սանձը բռնեցիմ և գնացինք: Միայն պատվիրեցիմ. «Զքնես, թե չէ երեխաները կընկնեն ցածը»:

Մեզի հասավ Քոչկ[343] գյուղացի Քոչոն, նաև մի ծերունի կին՝ իր թոռը կբերեր: Հասանք Կըզըլչախչախ կայարանը: Այդտեղի հրամանատարը սասունցի Կարոն էր, մի ոտը կկաղար, «թոփալ» կըսեին: Այդտեղ մենք բաժանվեցինք ժողովուրդից: Իմ հացի կեսը տվեցիմ այդ կնոջը և երեխաներին համբուրեցիմ: Կինն ինձի օրհնելով գնաց:

Հրամանատար Կարոն զորավար Սեպուհին և զորավար Սմբատին բաժանեց, այսպես կարգադրեց: Սմբատին ընկավ խճուղուց դեպի հարավ՝ Կաղզվանի[344] կողմը, իսկ Սեպուհին ընկավ դեպի հյուսիս: Մենք պիտի կովեինք, որ նահանջող ժողովուրդը կարողանա անցնել դեպի Ալեքսանդրապոլ:

Թուրքական զորքը երկու թևերով կառաջանար, իսկ մեջտեղը թուրքերի առաջ փակ էր: «Վարդան զորավար» զրահապատը կուգար, մեր շարքերից կանցներ և կսկսեր թնդանոթի և գնդացրի հարվածներով թուրքերին հետ շպրտել: Զորսից հինգ օր տևեց մեր կռիվը: Թուրքերը Կաղզվան քաղաքի կողմից հարձակվեցին Սմբատի վրա, և հաջողեցին առաջ գալ: Մեզի փոխադրեցին Վարդանլու[345] գյուղը: Գիշերը լուր եկավ, որ Ալեքսանդրապոլը հանձնված է թուրքերին, որ նահանջենք և դերի չընկնենք:

[343] Վանի նահանգի Վանի գավառում Քոչկ անունով երկու հայաբնակ գյուղ կար, մեկը՝ Բերկրի-Արաղա գավառակում, ուներ 5 տուն հայ բնակիչ և մյուսը՝ Հայոց ձորում և ուներ 35 տուն՝ 181 հայ բնակիչ (Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 35, 47):

[344] **Կաղզվան** քաղաքը գտնվում էր Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, հայտնի է նաև Երասխաձորի բերդ անունով: Այն Անիի ավերակներից շուրջ 20կմ հարավ-արևմուտք էր՝ Արաքսի աջ ափին: Կաղզվանի տեղում եղել են հնագույն բնակավայրեր: 9-10-րդ դարերում այն նշանավոր ամրոց էր՝ մարդաշատ կայազորով: 1877թ. ուներ 8000, 1906թ.՝ շուրջ 9400 բնակիչ, որի ճնշող մեծամասնությունը հայեր էին (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 909):

[345] **Վարդանլի** գյուղը գտնվում էր Կարսի մարզի Շորագյալի տեղամասում, Կարս քաղաքից մոտ 55 կմ հյուսիս-արևելք, Կարս-Գյումրի երկաթուղու ձախ կողմում: 1907թ. ուներ 950 բնակիչ (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 779):

Մենք հասանք Արփաչայի[346] կամրջին: Երկու կառք քաղաքից եկան մեր առաջ և զորավարին հայտնեցին, որ քաղաք չմտնենք, հանձնված է թուրքերին: Մենք քաղաքի կողքից անցանք դեպի Ջաջուռի սարը և թունելը:

Ես լացելով խնդրեցիմ, որ թույլ տան երթամ քաղաք՝ տղաս որբանոցից ազատեմ: Թույլ չտվեցին: Այժմ չեմ կարող նկարագրել դառն և ցավալի վիճակս:

Ես երեք վիրավոր ազատած եմ, բայց իմ մի հատիկ տղաս մնաց թուրքերին գերի: Արտասվելով՝ անցա շարքերը: Հասանք Ջաջուռ գյուղը, որ թունելից ցածր է:

Այդ գիշեր ժողով կանեն, և առավոտ մեզի բաժանեցին դիրքերի: Վարդան Բակուրի մեր հարյուրյակին ընկավ գյուղից վերև՝ դեպի երկաթուղու կիսակայարանը, իսկ Վահան Պաստրմաջյանի գումարտակին՝ գյուղից արևմուտքի մեծ բլուրը: Հայկ Գնդունին[347] Վահանի աջ կողմը, Տիգրան Գոյումջյանին մնաց օգնության ուժ:

Երկրորդ օրը թուրքերը, երկաթուղով և եզների սայլով քաշած թնդանոթներով՝ հարձակվեցին չորս կողմից:

Մեր դիրքը մի մեծ կիրճ էր, հետևի մասը շատ բարձր էր, իսկ դեպի թուրքերի կողմը ջուրը սրբել, տարել էր: Պատի պես էր՝ կանգնիր, կրակիր:

Թուրքերը մեզի կապեցին թնդանոթի: Ռմբակոծում էին երկու թնդանոթով, մեր հետևի բլուրի ձյունը սև հող դարձուցին: Վարդանն ասաց. «Տղանե՛ր, ոչ մի կրակ չբանաք: Թող կարծեն, որ այստեղ ոչ ոք չկա: Կուգան, կմոտենան, հետո կսկսենք կրակ բացել նրանց վրա»:

Այս թնդանոթային կրակը դադարեց, և զորքը առաջացավ: Վարդանը պատվիրեց, որ ոչ ոք չկրակի, մինչև իր հրամանը: Թուրքերը կուգան երեք շարքով, կչոքեն, կկրա-

[346] **Արփաչայ**-Ախուրյան գետի թուրքական անվանումը:

[347] **Հայկ Գնդունին** հայկական բանակի գնդապետ էր, վիրավորվել է Կարսի կռիվների ժամանակ (ՅՀՅԴ, ալբոմ-ատլաս, հ. Բ, էջ 140):

կեն և կրկին առաջ կուգան: Հասան մեզանից հարյուր մետրի վրա: Վարդանը կանչեց. «Տղանե՛ր, անընդհատ կրա՛կ»:

Մենք սկսեցինք կրակել: Մեր բլուրի լանջի ձյունի երեսը սևացավ թուրքերի սատկածներով: Թուրքերի երրորդ շարանը հետ փախավ: Գիշերվան գնացինք՝ զենքերը հավաքելու և վիրավորներին սպանելու: Դեռ կենդանի մնացած վիրավորներ կային: Վիրավորներին Վարդանը կսպաներ: Սիրտը վառված էր: Նա իր աչքով Ադրբեջանի Բաքու քաղաքի հայերին կոտորելը տեսած էր:

Մեր հավաքած զենքերը բոլորը ռուսական էին և նոր ձևի, որ ռուսներից ստացած էին: Հաշվեցինք՝ հարյուր ինն սուներկու հրացան, տասնհինգ ատրճանակ, տասնհինգ սուր:

Երկրորդ օրը Վարդանն ասաց. «Կռիվ չկա: Այսօր ճերմակ լաթով եկած են իրենց սատկածները տանեն: Ես կերթամ գյուղը: Դուք զգույշ եղեք»: Գնաց՝ հաց բերելու: Գիշերվան եկավ, մեզի շարքի կանգնեցուց, ամեն մեկիս մի հաց տվեց, մեկ հատ էլ մնաց իրեն:

Երրորդ օրը կռիվ սկսեց, բայց թուրքերն այժմ դիրքավորված կկռվեն: Մեր կրակին կպատասխանեն՝ գլուխները ծածկելով: Ուժը տված են թնդանոթի: Կռիվը սաստկացավ Վահանի և Գնդունու կողմը, կլսեինք թնդանոթի գոռգոռոցը:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վարդանն ինձի ուղարկեց հաց բերելու: Հասամ գյուղը, հացը պատրաստեցին, որ տանեմ: Հանկարծ երեք ձիավոր դրոշակով հասան շտաբի դուռը: Գնդապետն ասաց. «Կանգնի՛ր պահակ»: Ձիերից իջան, մի թուրք հազարապետ՝ բինբաշի, իր սուրը և ատրճանակը հանձնեց գնդապետին: Նա էլ հանձնեց ինձի, և գնացին շտաբ: Մնացած երկուսը՝ մեկը բաշ-չավուշն էր, մյուսը՝ Ալեքսանդրապոլի մի թուրք:

Առաջին խոսող բաշ-չավուշն էր: Ասաց. «Կարդա՛շ (եղբայր), որտեղի՞ց ես»: Ասացիմ. «Երևանցի եմ»: Ասաց. «Մաքուր մեր լեզուն կխոսես: Ճիշտ ասա: Երևանցին այդպես մաքուր մեր լեզուն չգիտի»: Ասացի. «Ես Վան քաղաքից եմ»: Մի քիչ սրտնեղած պատասխանեց. «Կարդա՛շ, ո՛չ ես կուզեմ կռիվ, ո՛չ էլ դու, մեզի կռվացնողները խարիջաներն[348] են, անգլիացիք ձեզի տված են քառասուն հազար զինվորի զենք և հագուստ, ցուցակ տված են մեզի, որ ձեզանից առնենք»: Այս մեր խոսակցությունը չէր վերջացել, ներսից դուրս եկան խմբովի՝ մեր զինվորականները և թուրք բինբաշին: Վահան Պաստրմաջյանն իմ ձեռքից առավ սուրը և ատրճանակը, հանձնեց բինբաշուն: Բինբաշին, երբ նստեց իր ձին, այսպես խոսեց և ասաց թուրքերեն. «Ափսոս էր, բոլորդ էլ մեր երկրացի եք և մեր դպրոցն ավարտած եք, բոլորիդ ալ կճանաչենք և գիտենք՝ ով որ երկրացի է: Ցավում եմ, որ վերջը կփոշմանեք: Մնաք բարի»: Ու գնացին:

Ես և մի զինվոր հացը շալակեցինք, հասանք մեր տեղը: Պարոն Վարդանը հացը բաժանեց, ամեն մեկին մի հաց հասավ և մեկ ալ իր համար: Ասաց. «Պատմի՛ր, ինչպե՞ս եղավ թուրքի գալը և երթալը, նստե՛ք»: Նստեցինք իր մոտ: Ես պատմեցիմ իմ և չավուշի խոսակցությունը, և բինբաշու խոսքերը մեր վաշտապետներին: Ծիծաղեց և ասաց. «Տեսեք՝ որքան խորամանկ են թուրքերը: Գիտեն մեր առած իրերը Անգլիայից են, բայց չի ասել, որ իրենցն ալ ռուսներից առած են, երեք նավ զենք և ոսկի: Դուք արթուն հսկեք դիրքերը, այսօր կռիվ չի լինի: Ես կերթամ շտաբ, տեսնանք ի՞նչ եղած է այդ բանակցությունը»:

Վարդանը գնաց և գիշերով եկավ, մի զինվոր էլ՝ հացը շալակած: Հացի բաժանելը հանձնեց ինձի և ինքը նստավ մի քարի վրա և անընդհատ կծխեր: Շատ տխուր և ջղային էր: Հացը բաժանեցինք: Ելավ դիրքերը քննեց, պահակներ կար-

[348] Խարիջա-օտար:

գադրեց: Եկավ նստավ նույն քարի վրա: Կանչեց մեզի, որ երթանք իր մոտ խոսալու: Հավաքվեցինք իր շուրջը: Ասաց. «Տղանե՛ր, համեցեք, մեկ-մեկ ջիղարա[349] ծխեք»: Ես ասացիմ. «Պարո՛ն Վարդան, ես ծխող չեմ»: Ասաց. «Աղեկ է, որ չես ծխել, բայց այս թութունը ծխելուց մարդու գլուխը կհովացնի»: Մենք այս քաղցր խոսակցությունից սիրտ առանք և հարցուցինք. «Ի՞նչ է առաջարկել թուրք պատգամավորը»: Ասաց. «Առաջարկած է, որ մենք զինաթափ լինենք և հանձնվենք իրանց: Մեզի իրավունք չի տված բանակ կազմել և թնդանոթ ունենալ: Տասներկու հազար կիլոմետր հող է տվել մեզի»: Ջղայնացավ և գնաց, պաղ ջուրով երեսները լվաց, եկավ նստեց նույն քարի վրա: Մի լավ հայհոյեց և ասաց, որ այդ հողն ալ, իր կարծիքով, գերեզմանոց է լինելու:

Հարցուցինք՝ զորավար Սեպուհը ի՞նչ է պատասխանել: Ասաց. «Սեպուհը ֆիդայի է, կռված է Սասնա սարերում և կկռվի այս սարերում: Լավ է մարդ կռվի և մեռնի իր հողի վրա, քան ենթարկվի թշնամուն: Սեպուհը կապված է Երևանի հետ և հայտնած է Կարաբեքիր փաշայի պահանջները: Երևանը հրամայած է, որ կռվեք և այդ գիծը պահեք մինչև մեր կարգադրությունը»:

Այստեղ կրկին բարկացավ, հայհոյեց և ասաց. «Մեզի կհրամայեն, որ կռվենք, բայց չեն գիտեր մեր վիճակը: Այս ձուն ու ձմեռ ժամանակը օրը մի գյուղացու հացով ես ի՞նչ խղճով հրամայեմ, որ զինվորը պառկի ձյունի մեջ և կռվի, և այս է մեր մեջլիսի կարգադրությունը»: Ելավ ոտքի, ասաց. «Գնացե՛ք, հանգստացեք, վաղը կերևա այդ խոսակցության արդյունքը»:

Առավոտուն Վահանը լուր տվեց, որ թուրքերը սայլերով և ջորիներով կուգան ձորերի միջով դեպի իր բռնած սարը: Վարդանն այս լուրը լսելուց ծիծաղեց և ասաց. «Տղանե՛ր, վաղը մեր և թուրքերի հարսանիքն է: Այդ ջորիները ծանր

[349] Ջիղարա-ծխախոտ:

գնդացիր կփոխադրեն և սայլերը ծանր թնդանոթ կտանին, ուր որ կուզեն»: Այդ գիշեր շատ զգույշ մնացինք: Մյուս առավոտուն թուրքերը շարք-շարք առաջացան: Կռիվը սաստկացավ, և իր ձևը փոխեց: Այժմ երեք թնդանոթ է գործում մեր վրա, երկուսը մեր դիրքերը կքանդեն, և մեկը օդի մեջ կպայթի, կտորները շաղ կուտա մեր վրա:

Մեր դիրքը, որ պատի պես էր, Վարդանը փորել տվեց: Երբ թնդանոթի արկը կպայթեր, մենք կմտնեինք փորված տեղերը և զոհ չէինք տա: Թուրքերը չէին առաջանում, նրանց հույսը թնդանոթի վրա էր: Կռիվը սաստիկ էր Վահանի և Հայկի դիրքերի վրա: Այդ օրը շատ լավ կռվեցինք: Երկրորդ օրը Վահանը նահանջեց երկրորդ դիրքը: Մի զինվոր թուղթ բերեց շտաբից, որ գրված էր. «Թունելի սարի հետևից թուրքերը մեր ճամփան կտրած են: Պետք է, որ նահանջենք և կռվելով՝ մեր ճանապարհը բացենք: Դուք կմնաք, ձեր դիրքեր կպահեք, մինչև զորքը հասնի թունելին»: Եվ տեսանք, որ Վահանի, Հայկի և շտաբի զինվորները հասան թունելին: Վարդանը կարգադրեց, որ հետևակն այդ ձորերով երթա հասնի թունելին, ձիավորները կռվեն, և երբ հետևակը մտնի թունել, ձիավորները արագ կիջնեն, կհասնեն հետևակին: Այսպիսով, նահանջեցինք, հասանք թունել: Մի վիրավոր տեսամ, առիմ ձիուս վրա, տարամ մոտիկ գյուղը: Վահանը ճանապարհ բացած էր և վաթսուն թուրք գերի վերցրած՝ գնացած էր Ղարաքիլիսա քաղաքը: Մենք այդ գիշեր մնացինք այդ գյուղը: Վարդանի կարգադրությամբ մեզի կերակրեցին չորթանի ապուրով, որ հինգ ամիս է՝ ինչ տաք բան չէինք կերած: Մի օր մնացինք, երկրորդ գիշերը թուրքերը հարձակվեցին մեր վրա: Գյուղացի տղաները գաղտնի, ձորերով մեզի հանեցին սարը՝ թուրքերի քամակը: Թուրքերը անակնկալի եկան և անձնատուր եղան: Նրանք իրենց յուզբաշու հետ վաթսունմեկ զինվոր էին: Նրանց զենքերը, որ ռուսական էին, բոլորը Վարդանը հանձնեց այդ գյուղի ժողովրդին. գերիներին բերանք մի տեղ, ինքը

Վարդանը կոտորեց, և մենք գիշերը հասանք Ղարաքիլիսա: Մյուս օրը հասանք Դիլիջան: Այդ օրը 1920 թվականի նոյեմբեր 20-ն էր: Մի զինվոր եկավ, ասաց. «Երվա՛նդ, գնդապետը քեզի կփնտրե, գնա, տես ի՞նչ է ասում»: Գնացիմ գնդապետի մոտ: Ասաց. «Ե՛կ»: Գնացինք զորավար Սեպուհի մոտ: Զորավարը մի նամակ ուներ ձեռքը, տվեց ինձ և ասաց. «Այս փաթեթը անմիջապես հասցրու այդ ռուսի գյուղը, տուր կոմիսարին և ասա՛, որ մեզի շուտ գարի, ցորեն և փաթաթես ղրկի»: Գնդապետը ասաց. «Երվա՛նդ, զինվորն անոթի է: Ոչ մի տեղ չկանգնեք»: Ես դուրս եկամ, Հովհաննեսին տեսամ: Ասացիմ. «Հովհաննե՛ս, գնա ձիդ հեծի և շուտ արի, ինձի հետ մի տեղ պիտի գնանք»: Նստանք ձիերը ու գնացինք շատ արագ:

ԿՐԿԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ

Երեկոյան հասանք ռուսի գյուղը: Պատի տակ շարված մորուքավոր ռուսներ արևից կտաքանային: Նրանցից մեկը թևերը բացեց, վազեց դեպի մեզի: Կանչելով. «Ի՛մ տղաս, ի՛մ Իվանովկան»: Ինձի Իվանովկա անունով կկանչեին: Ես անմիջապես վար իջամ ձիուցս և պապաշայի ձեռքը համբուրամ: Նա էլ երեսներս համբուրեց: Մյուսների հետ բարևեցինք, և ուզեց, որ երթանք տունը: Ասացիմ. «Պապաշա՛, կոմիսարին կանչե, գործ ունիմ նրա հետ»: Եկավ կոմիսարը, Սեպուհի նամակը տվեցիմ և ասացիմ. «Անմիջապես վեց կառք պատրաստի՝ երկուսը ցորեն, երկուսը՝ գարի և երկուսը ձեր լեզվով կառտոֆիլ, մինչև առավոտուն պիտի հասնի Դիլիջան, և դու մեծ նվեր ունիս զորավարից»:

Կոմիսարը անմիջապես պահեստի դուռը բացեց և արաբաները լիք լցրեցին մեր պահանջած հացահատիկը և ճանապարհեցին: Մենք, պապաշայի և կոմիսարի հետ եկանք տուն, երբ մամաշան և աղջիկներն ինձի տեսան, ուռա՛ կանչելով՝ սկսան ինձի համբուրել: Առաջարկեցին երթանք տուն: Ես ասացիմ, որ կեղտոտ ենք, այստեղ չայ կխմենք, դուք բաղնիքը տաքացրեք, մաքրվենք նոր երթանք տուն, այդպես էլ արեցին: Մայրիկը մեզի ճերմակեղեն ղրած էր, հագանք, մաքրվեցինք, մտանք տունը: Հացի նստեցինք և զրույցի: Գիշերով մեր կառքերը կերթան և առավոտյան կհասնեն Դիլիջան: Զորավարը կոմիսարին մի պատվո խաչ ուղարկած էր:

Այսպիսով, ինը օր մեր կառքեր շարունակ գնացին, եկան: Տասներորդ օրը չգնացին: Իմ հարցումիս կոմիսարն ասաց, որ մի օր հանգիստ են անելու: Այդ օրը մենք կոմիսարի տունը ճաշի հրավիրված էինք, և մեր պապաշան շատ անհանգիստ էր: Միշտ կերթար և կուգար, շատ տխուր կերևար: Ճաշից հետո միասին դուրս ելանք և զարմացանք. մեր ձիեր դուռի վրա էին և մեր հրացանները աղջիկների ձեռքը: Մեկ էլ տեսամ մի կողմից պապաշան և մյուս կողմից մամաշան ինձի գրկեցին, և սկսեցին լացել: Շատ լացելուց հետո կոմիսարը բաժանեց մեզի, և պապաշան այսպես խոսեց. «Իմ տղաս, Իվա՛ն, ես այս գյուղի եպիսկոպոսն եմ, դուն իմ պատիվս սրբությամբ պահեցիր: Զորս ամիս իմ տունս քո տանդ պես պահեցիր: Ոչ մի զինվոր իմ դուռով չանցավ, և այժմ պիտի բաժանվենք, ձեր ճանապարհը դեպի Դիլիջան կտրված է, դուն այս սարին ծանոթ ես, սարերով գնացեք հասեք Սևանա ծովը»: Եվ կրկին փաթաթվեցին ինձի: Առաջ եկավ մեծ աղջիկը և ասաց թուրքերեն. «Եղբայր Իվա՛ն, դուն մինչև այժմ գիտեիր, որ ես պապաշայի աղջիկն եմ: Ես նրա հարսն եմ, իմ մարդս գնդապետ է՝ անունը Ալյոշա, կարող է Երևանում հանդիպեք: Ես կգրեմ, որ նա քեզի շնորհակալություն հայտնի: Երթաս բարի»: Եվ իմ ձեռքս և երեսներս համբուրեց, և մենք տխուր և թաց աչքերով բաժանվեցինք իրարմե:

ԱՊԵՐԱԽՏՆԵՐԸ

Հասանք սարի տակը, երկու մետր ձյուն կար: Շահդաղի սարն է, և շատ դժվարությամբ սարը բարձրացանք: Մայիսյան կռիվներին Մուրադի հետ այս սարը գրավելու ժամանակ երկու գյուղ թուրք կային: Մենք նրանց մաքրեցինք, նրանց տեղը Ադրբեջանից փախած՝ նուխեցի և շամախեցի հայերին տեղավորեցինք: Մի ընտանիք կար՝ երեք հոգուց բաղկացած, հայրը՝ Հարությունը, որին Թույին դայի կըսեին, աղջիկը և փեսան՝ Եգորը: Ես նրանց համար տավար, ոչխար թուրքերից առած տված էիմ Թույին դայուն: Այժմ, որ սարը բարձրացանք, շատ ուրախ ենք, որ կերթանք Թույին դայու տունը, կհանգստանանք:

Հասանք գյուղը, դուռը զարկեցինք, Թույին դային դուռը բացեց, մեզի տեսնալով գրկեց, համբուրվեցինք: Եգորը ձիերը տարավ՝ կեր տալու: Աղջիկը մեզի հաց տվեց, կերանք և հայի տնում, հանգիստ, մեր վերարկուների մեջ կողք-կողքի քնեցինք: Առավոտուն արթնցամ և լացի ձայն լսեցիմ, որ կասեր. «Օձը ձեզի կծի, կարկուտի հանդիպեք, խի՞ կսպանեք, այս խոխանները մեզի հացի տեր արեցին, հիլ արեք[350], թող երթան»: Ես Հովհաննեսին ձայն տվեցիմ և ասացիմ. «Բարի լույս, Թույին դայի»: Ասաց. «Ո՛չ բարի, քո նանի ռեխը...» հայհոյեց: Այժմ մեզի կտանեն ախոռը, որ սպանեն, մեր զենքերը նրանց ձեռքն է: Պիտի տունից ելնենք սրահը, մտնենք ախոռը: Ես Հովհաննեսին ասացիմ քուրդերեն. «Երբ կասեմ, դու մեկին բռնիր, ես էլ երկուսին կսպանեմ»: Ձեռքս մաուզերի վրա դրած՝ հասանք բակը: Աղջիկը իրենց ձին չէր կրնար բարձել: Հանկարծ մի ձիավոր կանգնավ և կանչեց «Թույի՛ն դայի, շուտ արեք, երթանք սարը»: Եվ մեզի տեսնալուն՝ ասաց. «Այս խոխաներ ովքե՞ր են»: Թույին դային ասեց. «Դաշնակ շուներից են»: Ասաց. «Մինա՛ս դայի, այս

[350] Հիլ անել-բաց թողնել:

խոխաներին քեզի հետ տար սարը, մենք ձին բառնանք, շուտով կհասնենք ձեզի»: Մեր հրացանները և ձիերը տվեցին, որ Մինաս դայու հետ երթանք սարը, էնտեղ մեզի սպանեն: Գյուղի մեջեն մի մեծ առու ջուր կերթա, կողքերը մի մետրի չափ սառույց է կապել: Ասացիմ. «Հովհաննես, եթե այս առվից կարողանանք թռնել էն կողմ, ազատված ենք»: Ես ձին դարձուցիմ, հեռվից եկամ, ձիս թռավ: Հովհաննեսինը թռավ, բայց ձիու հետևի ոտները մնացին առուի մեջ, քաշեցինք դուրս, հանեցինք և նստեցինք, որ երթանք: Մինաս դային կսպասեր, որ մեզի տանի սարը: Ես կանչեցիմ. «Մինա՛ս դայի, մենք գնացինք»: Շատ չէինք եկած, Հովհաննեսն ասաց. «Երվա՛նդ, էդ անամոթը կուգա»: Ասացիմ. «Մի հատ խփի՛ր»: Հովհաննեսը մի հատ կրակեց: Թույին դային ընկավ ձիու տակ: Հասանք վրա, Հովհաննեսն ուզեց սպանել, ես չթողեցիմ: Խուրջինը և հրացանը վերցրանք, ձիու տակից նրան հանեցինք, թքեցինք երեսին, Հովհաննեսը մի քանի հատ զոնդաղով զարկեց: Ելավ, ոտքով գնաց:

ՁԻԲՈՒԽԼՈՒ ԳՅՈՒՂՈՒՄ

Մենք ազատվեցինք և ուրախ-ուրախ գիշերվան հասանք Ձիբուխլու գյուղը: Մեր բանակն այդտեղն էր, ընկերները մեզի տեսնալուն՝ ուրախությունեն կկանչեին. «Կորածները եկան»: Մեզի կորած կհամարեին: Գիշերն անցավ, այժմ առավոտ է, դեկտեմբերի մեկն է, ձյուն և փոթորիկը սկսած է, և մեզի շարք կանգնեցուցին, ասեցին. «Դրոն կուգա և դրոշակներ կփոխի, մենք կլինենք սովետական զինվոր և կերթանք Երևան»: Չգիտեմ՝ Դրոն եկավ կամ չեկավ: Առաջը հետևակ զինվորներին շարք կազմեցին: Մի հայ կոմունիստ եկավ, կանչեց. «Երեք քայլ առա՛ջ»: Զինվորն առաջ եկավ. «Զենքները վա՛ր դրեք»: Զենքները վար դրեցին: Եկան հավաքեցին: Հերթը հասավ ձիավորներին: Մեզի ասաց. «Երեք քայլ

առա՛ջ, զենքերը վա՛ր դրեք»: Մեր զենքերը հավաքեցին: Մենք դարձանք դեպի ձիերը, տեսանք ձիերը կտանեն: Ես ուզեցիմ իմ խուրջինը առնել, ռուս զինվորը հրացանը դրեց կրծքիս և ասաց. «Չի՛ կարելի»: Եվ մեզի խառնեցին հետևակի զինվորներին: Այդ ռուս զինվորականը կանչեց. «Զորս շարք կազմե՛ք»: Կազմեցինք: Կանչեց. «Կռուգոմ, մա՛րշ», այսինքն՝ հետ դարձեք և քայլեք: Մենք նոր հասկացանք, որ մեզի չեն տանի Երևան, այլ կտանեն Դիլիջան, Բաքու, Աղրբեջան: Գյուղի միջեն անցնելուց, ես մարագի պատուհանները բաց տեսամ: Կանչեցիմ. «Տղանե՛ր, եկեք մտնենք այս մարագը»: Ես մտամ ներս: Իմ հետ եկավ յոթ զինվոր, նրանցից մեկը մի խուրձ խցկեց մարագի պատուհանը, մթնեց: Մեր հագուստների ձյունը թափ տվեցինք, մտանք հարդի մեջ ու քնանք: Առավոտուն մարագի դուռը բացվեց և մի մարդ, կողովը՝ շալակին, կանցներ, մեզի տեսնալով՝ ասաց. «Դուք ո՞վ եք»: Մենք ասացինք. «Զինվոր ենք»: Կանչեց գյուղացիներին: Եկան կին և մարդ, մեզի հանեցին մարագից: Ութ հոգի էինք, ասաց. «Տղա՛, վազի պրիստավին կանչի»: Տղան գնաց, և պրիստավ եկավ: Մի հսկա մարդ էր՝ յափնջին հագած, փափախը՝ գլխին, մաուզերը՝ կողքին և մի մեծ փայտ՝ ձեռքին: Մենք, իբրև զինվոր, ձեռքերը տարանք վեր, պատվի առեցինք: Նախ մեր անուն և ազգանունը գրեց, և որտեղացի ենք, իմացավ: Ասաց. «Ձեր մեծը ո՞վ է»: Մի տղա ինձ ցույց տվեց: Եկավ մոտս: Ասաց. «Որի՞ զինվորներն եք»: Ասացիմ՝ «Զորավար Սեպուհի»: Անունը դեռ բերանումս էր, մի այնպիսի ապտակ զարկեց՝ կրակ թռավ իմ աչքերիցս: Ես տատանվեցիմ, բայց չընկամ: Հայհոյեց. «Քո մոր ռեխը և քո Սեպուհի ռեխը, - ասաց, - վերարկուդ հան»: Հանեցիմ: Տեսավ, որ մաուզեր ունիմ և մի ապտակ էլ զարկեց: Ասաց. «Ջակետդ հանիր»: Հանեցիմ: Ծառան էլ իմ ոտնամանները հանեց: Ասաց. «Բլուզը հանի՛ր»: Էն ատեն մի կին նրան հրեց և թքեց նրա երեսին, ասելով՝ «Անաստվա՛ծ, սպանիր, էս ձյուն և փոթորիկին կմեռնի: Ձե՞ս ամաչում, երեկ գիշեր դու դաշնակ

էիր, ի՞նչ շուտ կոմունիստ եղար»: Մարդը կանչեց. «Տղա՛, գնա իմ ձին բեր»: Ես, ձիու անուն լսելով, գիտցամ, որ մեզի պիտի տանի Դիլիջան: Մերկ կանգնած ենք, փոթորիկը սաստիկ է, ի՞նչ անենք. մտածեցիմ փախնեմ, կամ կսպանվեմ և կամ կազատվեմ: Քուրդերեն կանչեցիմ. «Ես փախամ, հետևեք ինձի»: Թռամ, առաջս մի կարճ պատ էր, թռամ և խրվամ տանիքից սրբած ձյունի մեջ: Երկու հատ կրակեց պրիստավը, ինձի չկպավ: Ես փողոցների միջով հասամ ճանապարհին, տեսամ ընկերներս կուգան: Հասանք կամուրջին, այն ժամանակ Սևանի ջուրը մինչև ճանապարհը կհասներ, այժմ ցամաքեր է: Կանգնանք, ասացիմ. «Տղանե՛ր, մենք այսպես մերկ չենք հասնի Երևան, իսկ մեր առաջ երկու գյուղ կա՝ Ծաղկունք և Դզմաշեն, նրանք էլ մեզի կողոպտող չիբխլուցիներից են: Էն հեռու գյուղը, որ կտեսնաք, խնուսցի Քուրդ Ղազոյի գյուղն է: Եթե ազատվենք, մերոնք մեզի կազատեն: Կուզեք եկեք, կուզեք մի գաք, ես գնացիմ»: Վազեցիմ: Եկան տղաները:

ՔՈՒՐԴ ՂԱԶՈՅԻ ԵՎ ԴԱԼԻ ՂԱԶՈՅԻ ՄՈՏ

Մենք հասանք Ղազոյի գյուղը: Շուներ հարձակվեցին մեր վրա: Մի տունից մի կին և մի մարդ դուրս ելան: Հարցուցին. «Դուք ո՞վ եք»: Ոչ ոք չկարողացավ պատասխանել: Մեր բերանը չի բացվում: Ես մատովս ձյունի վրա գրեցիմ. «Սեպուհ»: Կինը մի ճիչ արձակեց և ասաց. «Ղազո՛, ասոնք Սեպուհի զինվորներն են»: Կանչեց. «Եկե՛ք-եկե՛ք, ձեր մոր աչքերը քոռանան, ձեզի էդ հալին չտեսնա»: Տարավ ոչխարի գոմը: Ոչխարի գոմը շատ տաք էր և կակուղ փեյին[351]:

Նստանք: Ղազոն մեզի ամեն մեկիս մի բաժակ օղի տվեց, խմեցինք, պառկանք և քնեցինք: Երեկոյան կինը եկավ.

[351] Փեյին-գոմաղբ:

«Ոչխարներ կուգան գոմը: Ելեք ձեզի տանեմ էն կողմի եզների օդան»: Մայրիկը մի շատ մեծ լվացքի տաշտ չորթանի ապուր լցրած էր և լավաշ հացերը դրած էր և ութ գդալ, սկսեցինք ուտել:

Գիշերվան Ղազոն, տերտերը և գյուղացիք հավաքվեցին մեր մոտ: Հարցուցին եղած-չեղածը: Ես դեկտեմբերի երկուսից՝ մեր հանձնվելուց, մանրամասն պատմեցիմ մեկիկ-մեկիկ, մինչև Ղազոյին տունը հասնելը, Ղազոն ասաց. «Այդ շան ձագը երկու անգամ թոռս[352] է ընկած, բայց լավ ձի ունի, նրան ազատեց իմ ձեռքեն»: Տերտերը և Ղազոն խնդրեցին գյուղացիներից, որ ամեն մարդ, ինչ որ ունի՝ հագուստից, ոտնամանից, բերի և այս տղաներին հագցնի: Բերեցին և հագցրեցին մեզի: Ութ օր Ղազոն մեզի պահեց և տղաները խնդրեցին, որ Ղազոն իրենց թողնի, երթան, կուզեն իրենց բարեկամներին գտնել: Բոլորը գնացին: Ես մնացիմ, իմ ոտիս բթամատը ցուրտը տարած էր: Ղազոյի զոքանչը բժիշկ էր, իմ ոտս բժշկեց, բայց եղունգը ընկավ: Ես մինչև հունվարի վերջը մնացիմ Քուրդ Ղազոյի տունը: Ղազոյի ծառան՝ Կրպոն, միշտ կերթար Երևան և նորանոր լուրեր կբերեր: Մի օր ասաց, որ մշեցի Դալի Ղազոյի տունից կուգամ: Ես խնդրեցիմ, որ ինձի տանի իր հետ: Գիշերվան խնդրեցիմ մայրիկից և Ղազոյից, որ ինձի թողնեն երթամ կամ Երևան կամ Դալի Ղազոյի տունը, գոնե իմ հորեղբորս տղան գտնեմ: Առավոտուն ելանք ճանապարհ, գիշերվան հասանք Կարակալա՝ Դալի Ղազոյի տունը: Այս գյուղի բնակիչները մշեցիներ էին, նախկին քուրդ բնակչությանը քշել էին և իրենք էին բնակվել այնտեղ: 1921 թվականի փետրվարի չորսն էր: Ղազոյի տունը օրական քառասուն-հիսուն մարդ հաց կուտեր, և բոլորը զինված խմբապետներ էին: Ղազոն երկու սուրհանդակ ուներ, կերթային Երևան, կուգային: Մեկի անունը Քերոբ էր, մյուսինը՝ Ատո:

[352] Թոռ-ուռկան:

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Մի օր մեծ ժողով եղավ: Այնտեղ էին Թարխանյան սպարապետը, բաշգառնեցի խմբապետ Մարտիրոսը[353], Խնկոն[354], Արտուշը, ոզմեցի Ասլանը, եկած էր Վահան Աֆրիկյանը[355]:

Այս ժողովականները մի թուղթի վրա կվիճեին: Ղազոյի սուրհանդակ Ատոն Երևանից եկավ և զեկուցեց. «Էլ մարդ չմնաց, բոլորին կտանեն դեպի Դիլիջան: Հազարից ավելի են, և Թովմաս Նազարբեկյանն էլ հետներն է»: Ժողովը քարացած լսում էր: Ոզմեցի Ասլանի թիկնապահ Բաբոն ինձի ասաց. «Երվա՛նդ, քո հորեղբոր տղան՝ Ենովքը, մեր դրացին է, արի երթանք մեզի հետ»: Ղազոն հրամայեց, որ գյուղացիքը՝ կին թե մարդ, բոլորը զինվեն, որ գա, տեսնա: Եկավ: Շարք կանգնածների մեջը ես տեսամ երեք կին, մաուզերը՝ կողքերին և հրացանը՝ ուսին: Ասոնցմե մեկը Ղազոյի կինն էր, մեկը՝ Պոլոյան Արշակի կինը, մյուսը՝ Պոլոյան Թոյթոյ Ռուբենի կինը: Ղազոն շարքերը քննեց: Ասլանը մի թուղթ վերցրեց

[353] **Բաշգառնեցի խմբապետ Մարտիրոս Աբրահամյանը** ծնվել է 1884թ. Գառնիում: 19 տարեկանում ընդունվել է ՀՅԴ շարքերը: Մասնակցել է հայ-թաթարական(ադրբեջանական) կռիվներին: 1914թ. Մարտիրոս Աբրահամյանը վաշտապետ է նշանակվել կամավորական Երկրորդ գնդում: 1918-ին մասնակցել է Սարդարապատի և Բաշ Ապարանի ճակատամարտերին: Կարևոր դերակատարություն է ունեցել 1921թ. Փետրվարյան ապստամբության ժամանակ: Այնուհետև անցել է Պարսկաստան, որտեղ և մահացել է 1957թ.: 1992-ին նրա աճյունը տեղափոխվել է և վերաթաղվել Հայրենի հողում՝ Գառնիում (ՅՀՅԴ, ալբոմ- ատլաս, Բ հատոր, էջ 94):

[354] **Բաշգառնեցի Խնկոն** ծնվել է 1884թ. Գառնիում: 18 տարեկանում անդամագրվել է ՀՅԴ կուսակցությանը: Մասնակցել է մի շարք ռազմական գործողությունների, 1905-ին հայ –թաթարական ընդհարումներին: Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական բանակի կազմում կռվել է գերմանական ռազմաճակատում: Հայրենիք վերադառնալով՝ Կամավորական գնդի հետ հասել է Տարոն: Կարևոր դերակատարություն է ունեցել 1921թ. Փետրվարյան ապստամբության օրերին: Անցել է Պարսկաստան, որտեղ և ավտովթարի զոհ է դարձել 1929թ. (ՅՀՅԴ, ալբոմ-ատլաս, հ. Բ, էջ 189):

[355] **Վահան Աֆրիկյանը** ծնվել է 1886թ., մահացել՝ 1969թ.: Առաջին Հանրապետության տարիներին եղել է Նոր Բայազետի քաղաքապետը (ՅՀՅԴ, ալբոմ-ատլաս, հ. Բ, էջ 143):

սպարապետի ձեռքից և Ղազոյին խնդրեց, որ ինձի՝ իր հին զինվորին, տանի իր հետ: Ես Ղազոյի ձեռքը համբուրեցիմ, և Ասլանի հետ 1921 թվին իջանք Երևան: Ես գնացիմ Ենովքի տուն: Ինձ տեսնալուն՝ գրկախառնվանք, լացինք, ուրախացանք, նստանք և մեր գլխի եկածը պատմեցինք իրարու: Ասլանի տունը մոտիկ էր, կերթայինք ժողովի: Այդ թուղթը, որ Ասլանի ձեռն էր, կռվի ցուցակն էր: Անցան մի քանի օրեր: Մի գիշեր հավաքվեցին Ասլանի տունը՝ ոզմեցի Սիմոնը, քոչկեցի Արմենակը, Մաչանի վաշտապետ Արշակը, մեր գյուղացի հարյուրապետ Օվանեսը: Մինչև լուս խոսացինք, մյուս գիշեր եկավ վանեցի Խռանի Խաչիկը: Որոշված էր, որ ապստամբություն պիտի լինի, և ամեն խմբապետ՝ ինչ գծով պիտի առաջանա: Ըստ այդ թուղթի՝ Ասլանը պիտի կամուրջը գրավի և անցնի Շենգավիթ, որ զրահապատը մեր ձեռքն ընկնի: Խռանի Խաչիկը պիտի մտնի հրապարակ, իսկ Քոչկեցի Արմենակ Պլուզյանին հանձնարավեց գրավել թուրքերի թաղը: Օվանեսը և Արշակը ուղղակի բանտի վրա պիտի հարձակվեն: Այդ գծի մեջ ես ու Ենովքն էլ կայինք: Որոշված էր, որ փետրվարի 17-ին սկսվի հարձակումը, բայց փետրվարի 17-ին այնպես ձյուն և փոթորիկ եղավ, որ մեր գործողությունը չկատարվեց: Փետրվար 18-ին խմբապետ Մարտիրոսը և Դալի Ղազոն իրենց ուժերով Քանաքեռից իջան դեպի քաղաք և մենք էլ՝ մեր ուղղությամբ: Կռիվը սկսվեց:

Ասլանը չկարողացավ կամուրջն անցնել, և զրահապատը մնաց բոլշևիկների ձեռքը: Մեր խումբը բաժանվեց երկուսի՝ Օվանեսը պիտի բերդի կողմից հարձակվեր բանտի վրա, իսկ մենք Արշակի հետ ուղիղ պիտի փողոցներով երթայինք: Մեր ճանապարհը դժվար էր, փողոցից փողոց թշնամու գնդացիրը անընդհատ կգործեր: Նույն ժամին խուճապ առաջացավ նրանց մեջը: Մարտիրոսի և Ղազոյի զինվորները հասան Կաբանի տակ, և մեր ճանապարհը բացվեց, այդ ահռելի ուժերով հասանք բանտը: Խառնված ենք իրարու, մենք կուզենք մտնել բանտը, իսկ բանտարկյալները, մեզի հրելով

մի կողմ, դուրս կելնեն: Տեսանք, որ մեզի ծանոթ Փանահխանոզլի Ալի խանը և մեկը էլ Հայր Աբրահամը, գրեթե նվաղած ձեռքերի վրա կտանեն:

Բանտը քիչ-քիչ դատարկվեց: Ես գիտեիմ, որ իմ ազնիվ վաշտապետ Վարդան Բակուրը բռնված է: Նրան կփնտրեինք, մի խցիկ մտանք, Աստված իմ, ի՜նչ տեսանք մեր աչքերով, տասնութ հոգի մի խցիկի մեջ այլանդակված, ջախջախված և մերկ, իրարու կողքին շարված, արյունը լճացել է և սևացել: Համազասպը[356] բոլորովին մերկ էր: Մի խումբ զինվորներ եկան և մեզի դուրս արեցին, որ նրանց տանեն: Մենք լացակումած բանտից դուրս ելանք, գնացինք դեպի Կոնդ թաղամասը: Թշնամին երկու մասի բաժանվեց. զրահապատը փախավ դեպի Շենգավիթ և սկսեց ռմբակոծել: Մեզի դարձուցին դեպի Շենգավիթը: Մեր թնդանոթները դրված էին Թոխմախ[357] գյուղի մոտ և կկռվեին զրահապատի հետ:

Մյուս առավոտուն մեր վաշտին ընկավ Շենգավիթից դեպի Զանգու գետի կողմը: Զրահապատը մեզի տեսավ, արկը եկավ ընկավ, մեր շարքերը իրարուց կիսեց: Վեց հոգի մեռան, մենք չորս հոգի պառկեցինք առուի ջուրի մեջ: Մեզի սպանված կարծեց զրահապատը, և կրակը չիտկեց ուրիշ կողմը: Գիշերով հասանք Արմենակի տունը, մեր հագուստը չորացուցինք: Առավոտուն գնացինք, և կռիվը հասած էր Նորագավիթ:

---

[356] Խոսքը հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ **Համազասպ Սրվանձտյանցի** մասին է:

[357] **Թոխմախ գյուղը** Երևանում գտնվող արհեստական ջրամբար է, որը կառուցվել է մ.թ.ա. 8-րդ դարում: Հետագայում բազմիցս ավերվել է ու ջրազրկվել: Մինչև այսօր ժողովրդի մեջ գործածական Թոխմախ անունը լիճը ստացել է Երևանի Մամադ խանի «Թոխմախ» մականունից: Նա 1578թ. վերականգնել է ջրամբարը և մնացել ժողովրդի հիշողության մեջ: Խորհրդային իշխանության տարիներին լիճը վերանվանվել է Կոմերիտմիության (Կոմսոմոլի), (տե՛ս Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1801-1879թթ.), Երևան, 1959, էջ 157, 161-162: Վարդանյան Ս., Հայաստանի մայրաքաղաքները, էջ 223):

Այսպիսով, կռվելով հասանք խմբապետ Մարտիրոսին:

Խմբապետ Մարտիրոսն իր զինվորներով կռվելով կհասնի Աղբաշ[358] գյուղը, և աննման հերոս Խնկոն Աղբաշում չորս թնդանոթ կգրավի թշնամուց: Նորանոր կարգադրություն եղավ: Սպարապետ Կուռո Թարխանյանը Մարտիրոսին դարձրեց Ղամարլուի ճակատի հրամանատար, և ողմեցի Ասլանին՝ մեր վասպուրականցիների հրամանատար՝ Մարտիրոսին ենթակա: Ասլանը մեզի բաժանեց երեք խումբի՝ առաջինը Մաչանյան Արշակը, երկրորդը՝ մեր գյուղացի Օվանեսը, երրորդը՝ քոշկեցի Արմենակ Պլուզյանը: Առաջին հայկական գյուղերը անցնելուց՝ կհանդիպենք թուրքերի գյուղերին, որ նրանց ձեռքն է: Սկսվում է կռիվը՝ առավոտյան՝ լույս չբացված: Գիշերը էր, ցուրտ, ցեխ և սառնամանիք, մենք նրանց կքշենք մինչև Ավշար և Ջաղկոան գյուղերը, նրանք մեզի հետ կուտան մինչև Յուվա հայկական գյուղը: Երկու զրահապատները նրանց ձեռքն էին՝ «Վարդան Զորավարը» և «Մուսայելյանը»: Մենք մի հարձակումով Խոր վիրապը գրավեցինք և գերեցինք տասնութ թուրք: Բերեցինք Ղամարլու, հանձնեցինք Ասլանին: Նրանք նախիջևանցի էին:

Նրանց մեծը Ասլանին կասի, որ իրենք Աբաս-Կուլու զորքերից են: Աբաս-Կուլի Շաղջոնսկին երեք տարի կռվեց հանրապետության դեմ, այժմ համայնավար է եղած և գնդապետ է: Նախիջևանից բանակ է կազմել և այստեղ կկռվի: Նրա բանակի անունը «Տապոռնի օրդու» էր, այսինքն՝ «Կացնավոր բանակ»:

[358] **Աղբաշ** գյուղը 1945 թ. վերանվանվել է Արևշատ, գտնվում է Արտաշատ քաղաքից շուրջ 10 կմ հյուսիս-արևելք՝ Ազատ գետի աջ ափին: Հնում կոչվել է Մեծ Արմալու: 20-րդ դարասկզբին ուներ կոնյակի փոքրիկ գործարան: Գյուղի բնակիչները գաղթել են 1828-29 թթ. Սալմաստի և Խոյի գավառներից: 1914 թ-ին գյուղն ուներ 661 բնակիչ (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 430):

ՆԱՀԱՆՋ ԵՐԵՎԱՆԻՑ

Մարտ ամսու վերջն է: Ասլանն ասաց. «Երվա՛նդ, Գաբոյի հետ գնացեք, իմ տունս փոխադրեք Բաշգառնի[359]»: Մենք ճանապարհ ելանք: Գիշերը հասանք Երևան: Ասլանի նամակը տվեցինք կնգան, կարդաց և երկու կտոր արեց: Ասաց. «Ես իմ տեղեն չեմ շարժվի և տունս չեմ քանդի: Ինքը ուր կերթա, ազատ է»: Այդ գիշերը մինչև լույս հրացանի ձայնը չդադարեց: Մեզի ասաց. «Ելե՛ք, գնացե՛ք»: Առավոտ էր: Մենք տունից դուրս ելանք, տեսանք ժողովուրդն այս և այն կողմը կփախնի: Մի կին իր տղայի հետ եկավ մեր առաջ, ծանոթ էինք: Գենովա մայրիկն էր և իր տղան՝ Հայրոն:

Հայրոյի ձեռքը բռնեցիմ, որ երթանք: Տեսամ Գաբոն փախած է, և մի խումբ զինվորներ կուգան դեպի մեզի: Մենք ճանապարհը ծռեցինք դեպի թուրքերի թաղամասը: Մի տեղ մի խանութ կթալանեին, և մի մեծ թոփ կտոր ընկած էր հեռու: Առեցիմ և տվեցիմ Հայրոյի շալակը, և քաղաքից դուրս ելանք: Հասանք Թոխմախ գյոլ, չորացած լիճ էր: Զորս հոգի վազելով եկան, մեզի անցան: Ասացին. «Ռուսները մտան քաղաք, փախե՛ք»: Հայրոն ասաց. «Երվա՛նդ, փախնենք»: Ասացիմ. «Հայրո՛, նրանք այսօր կհանգստանան, մի վախենա»: Գիշերվան մենք հասանք Բաշգառնի գյուղը: Մարդ չկար: Փողոցից անցնելուն տեսամ մի դուռ բաց է, և թոնրի կրակը դեռ չի մարել: Թոնրի կողքին ալյուր և հին ու նոր հացեր կան, մի ման էլ յուղ կա: Միտս ընկավ մայրիկիս հալվա չինելը: Անմիջապես լվացքի թաշտը դրեցիմ թոնիրի

[359] **Բաշգառնի** գյուղը 1935թ. վերանվանվել է Գառնի: Գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում՝ Աբովյան քաղաքից 24 կմ հարավ-արևելք՝ Երևանից 18 կմ արևելք՝ Ազատ գետի աջ ափին: Հայտնի է նշանավոր Գառնիի տաճարով: Ավերվել է 1679թ. ահեղ երկրաշարժից: Գյուղին նոր շունչ են հաղորդել 1828-29 թթ. Պարսկահայքից ներգաղթած հայերը: 1897-ին ուներ 1507, 1926-ին՝ 2812 հայ բնակիչ (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 793: ՀՀՀ, հ. 1, էջ 614-615):

վրա, յուղը լցրեցիմ մեջը, ալյուրը լցրեցիմ և մի փայտ տվեցիմ Հայրոյին, որ խառնի, չայրվի: Այդ մեծ թաշտը լիք հալվա արեցիմ, հացեր և սուֆրեն փաթաթեցիմ, տվեցիմ Հայրոյի կռնակը, իսկ կտորը ես շալակեցիմ և մտանք ձորը: Անցանք մյուս կողմը: Գիշեր է: Ճանապարհին անծանոթ ենք: Նստեցինք մի չոր տեղ ու քնանք:

Առավոտուն տեսանք սարից ժողովուրդը, տավար, ոչխար և զինվորներ կուգան դեպի մեզի: Եկան, և մենք էլ խառնվեցինք նրանց մեջ: Շատ չանցած՝ մի զինվոր իմ անունս կանչեց, գնացիմ՝ մեր զինվորներից Վահանն էր, ասաց.«Երվանդ, քո հորեղբոր տղան՝ Ենոքը այս խուժանի[360] մեջն է»: Սկսեցինք կանչել ու Ենոքին գտանք, բայց անոթությունից հալից ընկած էր, մի չոր տեղ նստանք, և հալվան դրեցիմ իմ առաջ, մեկ-մեկ պատառ կուտայիմ, երեք օր հաց կերած չէին, կերան, կշտացան: Հասանք մի գյուղ, որ Զանախչի[361] կասեին: Գյուղի մեջ անցնելու տեղ չկա և մեր հացը կվերջանա: Մի դուռ զարկեցինք, մի կին եկավ, ասեցինք. « Փողով մեզի հաց տուր», ասաց.«Ձեր փողը թուղթ է, ոսկի ունիք հաց կուտամ, թուղթին արժեքը ընկած է»: Ես կտորը ցույց տվեցիմ, երբ տեսավ, խենթացավ: Մենք էլ չէինք տեսած, երբ վրայի թուղթը բացեցինք, ամենալավ կանացի մետաքսե կտոր էր: Ես ամեն մետրին տաս հաց ուզեցիմ, չորս մետր չափեցինք, քառասուն հաց առանք, տվեցինք Վահանի շալակը: Կինը գնաց, չորս հաց և պանիր բերեց մեզի և փող չառավ:

[360] **Խուժան**-խառնիճաղանջ ամբոխ, հասարակ ժողովուրդ, անկազմակերպ զորք:

[361] **Զանախչի**-Զանախչի գյուղը 1948թ. վերանվանվել է Սովետաշեն, 1991թ. ի հիշատակ Պարույր Սևակի՝ Զանգակատուն: Գտնվում է ՀՀ Արարատի մարզի նախկին Արարատի շրջանում: 1897թ. ուներ 1129, 1926թ.՝ 619 բնակիչ: Բնակիչների նախնիների մի մասը 1828թ. գաղթել է Պարսկահայաստանի Սալմաստ և Խոյ գավառներից (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 665):

ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

Ժողովուրդը և անասունները խառը կերթան: Զգիտեմ, երբ հասանք Բազարչայ[362] ռուսական գյուղը: Ձյունը սկսեց, ոչ մի տեղ չկա նստելու, գյուղից դուրսը մի կիսաքանդ ոչխարի գոմ տեսանք, մտանք մեջը, ոչխարի աղբը չորացած էր, վառեցինք, տաքացանք, հաց կերանք, քնանք: Առավոտուն մի մետր ձուն էր եկած, մեր տեղը տաք էր, հաց և հալվա ունինք, չորս օր մնացինք այդ տեղը, ժողովուրդը քաշված է, գնացինք ռուսի տուն հաց առնելու, և կտորը ցույց տվեցինք, խոսացինք, վեց մետրին վաթսուն հաց լավաշ: Ասաց. «Մենք կեսը լավաշ հաց կուտանք, կեսը՝ սոմին, այդքան լավաշ հաց չունինք»: Խոսեցինք սոմինները շուտ տան, որ հասնենք մեր ընկերներին: Այսպես մենք մեր հացեր շալակեցինք, ելանք ճանապարհ: Զգիտեմ, որ օրն էր՝ հասանք Տաթևի վանքը: Երկու օր մնացինք վանքը և տեսանք մի անխիղճ գործ, որ Նժդեհի հրամանով գերիներին վանքի քարափից կգցեին անդնդախոր ձորի[363] մեջը:

Մենք հաց կուտեինք, մի զինվոր եկավ կանգնեց մեր առաջ և մի լավաշ ու մի քիչ հալվա տվեցիմ, ասաց. «Երկու

[362] **Բազարչայ** (այժմ՝ Գորայք) գյուղը գտնվում էր Սյունիքում, Սիսիան քաղաքից 24կմ հյուսիս-արևմուտք: Այն 1877թ. հիմնադրել են Ղարաբաղի Շուշիի շրջանի Բալուջա գյուղից գաղթած վերաբնակիչ ռուս մոլոկանները: 1886թ. ուներ 469, 1897թ.՝ 631, 1926թ.՝ 1076, 1939թ.՝ 1822 հիմնականում ռուս բնակիչներ: Սպանդարյանի ջրամբարի կառուցման պատճառով գյուղը տեղափոխվել է շուրջ 3կմ հյուսիս-արևմուտք (ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 542):

[363] Ըստ «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության 7-րդ հատորի (Երևան, 1967, էջ 154)՝ Նժդեհի կարգադրությամբ են 104 հոգի ցած նետվել Տաթևի ժայռից: Գարեգին Նժդեհը 1921թ. սեպտեմբերին Թավրիզում դաշնակցության կազմակերպած դատավարության ժամանակ կտրականապես ժխտել է իր մասնակցությունը: Նա հետագայում՝ 1947թ. սեպտեմբերի 18-ին, ՊԱԿ-ում հարցաքննության ժամանակ ևս հերքել է, որ կոմունիստներին և կարմիրբանակայիններին գնդակահարելու և Տաթևի ժայռից ցած նետելու հրաման է արձակել (Համբարձումեան Ռ., Գարեգին Նժդեհ, կենսագրական յուշերումներ, անտիպ գրութիւններ ու խորհրդածութիւններ, էջ 277, 469-471):

օր հաց կերած չեմ», ու գնաց: Մենք էլ ելանք գնալու: Հասանք Տաշտուն[364] մեծ գյուղը: Մեղրի քաղաքին մոտիկ այդ տեղը հավաքված էին Փրկության կոմիտեի անդամներ Կարո Սասունին[365], Ռուբեն փաշեն[366], խմբապետներ և շատ-շատերը: Որոշեցին, որ երկու հարյուրյակ զինվոր ուղարկեն Գողթան[367] գավառ: Երկու խումբ՝ ոզմեցի Սիմոնի խումբը և Խռանի Խաչիկի խումբը ճամփա ընկանք: Մենք Սիմոնի խումբի մեջն էինք: Սարալանջ է և ձյունով ծածկված, ոտոտին կերթանք, ով որ ընկավ, կտորները կմնա:

Հասանք Գողթան քաղաքը: Գյուղապետը և քահանան մեր խմբապետներին կասեն. «Ձեզ հետ հաց բերա՞ծ եք, որ մենք էլ ուտենք: Եթե՝ ոչ, դարձե՛ք, գնացե՛ք»: Եվ երկրորդ օրը հետ դարձանք, եկանք-հասանք Մեղրի, որ Արաքսի մոտ է: Մեր զենքերը առան մեզանից, և խուժանի պես եկանք Արաքսի ափին, հազարավոր երիտասարդներ և մի քանի ընտանիքավոր կա: Խմբապետները, սասունցիները և մշեցիները ջոկվան մեզանից, գնացին Շվանիձորը[368]: Մենք մնացինք Մեղրիի տակ, Արաքսի ափին:

---

[364] **Տաշտուն** գյուղը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Մեղրի քաղաքից 20 կմ հյուսիս-արևմուտք, Մեղրի գետի ձախակողմյան Տաշտուն վտակի ձախ կողմում, սարալանջին: Մոտակայքում կան անտառներ և հանքային աղբյուրներ: Գյուղը 1831 թ. ուներ 23, 1873-ին՝ 147, 1897-ին՝ 311, 1922-ին՝ 470, 1926-ին՝ 500, 1931-ին՝ 621, 1939-ին՝ 580, 1959-ին՝ 495, 1970-ին՝ 342, 1979-ին՝ 343, 1989-ին՝ 259 հայ բնակիչ: Ունի Ս. Ստեփանոս անունով եկեղեցի, որը կառուցվել է 11-13-րդ դդ.: Միջին դարերում եղել է գրչության կենտրոն: Գյուղն այն ժամանակ մտնում էր Սյունիք աշխարհի Արևիք գավառի մեջ (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 40):

[365] **Կարո Սասունին** ծնվել է 1889թ. Սասունի Ահարոնք գյուղում: Ավարտել է Մուշի Մուրադ-Մխիթարյան վարժարանը (1906), Կ. Պոլսի իրավաբանական համալսարանի դասընթացը: ՀՅԴ անդամ: Գործել է Տարոնում: 1918-20 թթ. եղել է ՀՀ Խորհրդարանի անդամ, 1920-ի մայիսին նշանակվել է Ալեքսանդրապոլի նահանգապետ: 1921թ. Փետրվարյան ապստամբության ղեկավարներից էր, Հայրենիքի փրկության կոմիտեի կազմում եղել է ներքին գործերի նախարար, այնուհետև տեղափոխվել է արտասահման: Երկար տարիներ Բեյրութում խմբագրել է «Բագին» հանդեսը: Նրա գրչին են պատկանում մի շարք աշխատություններ՝ Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918), Բոստոն, 1927: Պատմութիւն Տարօնի աշխարհի, Բեյրութ, 1956 և այլն: Մահացել է 1977-ին Բեյրութում (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 403-404: ՀՀՀ, հ. 4, էջ 347: Ներսիսյան Ա., Կարո Սասունի, Երևան, 2004: Ով ով է, կենսագրական հանրագիտարան, հ. 2, էջ 399):

[366] **Ռուբեն փաշան** (Տեր-Մինասյան Մինաս) ծնվել է 1882թ. Ախալքալաքում, մահացել 1951թ. Ֆրանսիայում: ՀՅԴ կուսակցության անդամ: Սովորել է Էջմիածնի Գևորգյան, Մոսկվայի Լազարյան ճեմարաններում, Ժնևի համալսարանում: 1903-ին գործել է Կարսի շրջանում, 1904-ին Նիկոլ Դումանի խմբում կռվել է քրդերի դեմ: 1906-08-ին Գևորգ Չավուշի խմբում մասնակցել է Սուլուխի կռվին. 1908-ի երիտթուրք. հեղաշրջումից հետո հեռացել է Տարոնից: 1915-ին՝ Սասունի ինքնապաշտպանության ղեկավարներից էր, այնուհետև մի խումբ ֆիդայիների հետ անցել է Կովկաս: 1917-18-ին եղել է Հայոց ազգային խորհրդի անդամ, զբաղվել է արևմտահայ գաղթականների տեղավորմամբ, ապա՝ Հայաստանի Հանրապետության զինվորական և ներքին գործերի նախարար: Խորհրդային իշխանության հաստատվելուց հետո անցել է Պարսկաստան, այնտեղից՝ Ֆրանսիա (մինչև 1933-ը): 1933-42թթ. ապրել է Կահիրեում, 1942-1944-ին Պաղեստինում, 1944-47-ին՝ Բեյրութում, ապա Ֆրանսիայում: Հեղինակ է մի շարք աշխատությունների: Մասնավորապես իր վավերականությամբ արժեքավոր է «Հայ յեղափոխականի մը յիշատակները» բազմահատորյակը, որն ունեցել է մի քանի հրատարակություններ՝ Թեհրան, 1982, Երևան, 1990 և այլն (ՀՀՀ, հ. 4., էջ 728: Տե՛ս նաև Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան (կյանքը և գործը), Երևան, 2008: Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյանի գործունեությունը Երկրորդ աշխարհամարտի տարիներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2008, N 2, էջ 251-254):

[367] **Գողթն** գավառը Արաքս գետի ձախ ափին էր, երբեմն մտնում էր Վասպուրականի, երբեմն Սյունյաց աշխարհի կազմի մեջ: Տարածքը համապատասխանում էր ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի, մասամբ նաև՝ Ջուլֆայի շրջաններին (Հախնազարեան Յ., Գողթան գաւառ (պատմագրութիւն եւ յուշագրութիւն), Թեհրան, 1991, էջ 9-88: ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 935):

[368] **Շվանիձոր** գյուղը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Արաքսի ձախ ափին, Մեղրի քաղաքից 11 կմ հյուսիս-արևելք: 1831-ին ուներ 152, 1897-ին՝ 977, 1926-ին՝ 830 բնակիչ (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 154):

ԴԵՊԻ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Արաքսի մյուս կողմը Պարսկաստանն է և Ամիր Արշադի[369] երկրամասն է՝ Ղարադաղն[370] է: Երկու փոքր լոգկա կա, որ տիկերով շինված է: Ամեն անգամ ինը մարդ կփոխադրե, և ամեն մի մարդուն մի ոսկի կառնե Ամիր Արշադը: Ոսկի ունեցողները գնացին: Մնացին խեղճ զինվորները: Օրական մի բաժակ ցորեն կուտային մեզի: Փրկության կոմիտեն կպայմանավորվի Ամիր Արշադի հետ, որ մեզի ճանապարհ տա: Եկավ սպարապետ Նժդեհը, տեսավ մեր վիճակը և կարգադրեց խումբերի բաժանել և շարքով ուղարկել: Կապիտան Գարեգինը եղավ լիազորը, որ ժողովրդին անցկացնի: Մեր վաշտապետ Արմենակը և իր կինը ոսկի տված՝ անցած էին: Ինձի ընտրեցին նրա տեղը՝ տասնմեկերորդ խումբի պետ: Ուրեմն՝ տասնմեկ օր պիտի մնանք Արաքսի ափին՝ ցորեն ուտելով: Ես տեսամ մեր տեղից դեպի սարը մի գյուղ կա Կարճևան[371] անունով: Գնացինք այդ գյուղը, մեր կտորից չորս մետր տվեցինք, քառասուն հաց առանք, եկանք, մի քարի տակ մեզի տուն արինք: Ես ամեն օր կերթայիմ և կապիտան Գարեգինին կօգնեիմ, որ շատ չնստեն, ծանր լինի

[369] Ամիր Արշադը Ատրպատականի (պարսկական Ադրբեջանի) գեներալ-նահանգապետն էր, որը, ըստ Նժդեհի վկայության, կենտրոնական կառավարությանը չէր ենթարկվում (Համբարձումեան Ռ., Գարեգին Նժդեհ, կենսագրական յաւելումներ, անտիպ գրութիւններ ու խորհրդածութիւններ, էջ 268-269):

[370] **Ղարադաղ**-բնապատմական շրջան, երկրամաս, խանություն Պարսկահայաստանում՝ Արաքս գետից հարավ՝ Ղարաբաղի հարևանությամբ: Հնում մտնում էր Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի մեջ: Միջին դարերում գրեթե լիովին հայաբնակ էր: 1828-29 թթ. հայերի մեծ մասը գաղթել է Արևելյան Հայաստան: Հայերի գաղթ է եղել նաև 1871-ին և 1946-ին (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 526):

[371] **Կարճևան** գյուղը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Մեղրի քաղաքից 12 կմ արևմուտք: 1831թ. ուներ 154, 1897-ին՝ 489, 1926-ին՝ 566 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել էին Պարսկահայքից 1828-29 թթ.: Կարճևանը հիշատակվում է 10-րդ դարից: Այն Սմբատ Բագրատունի թագավորը (890-914 թթ.) գնել և նվիրել է Տաթևի վանքին (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 49):

ու չերթա ջուրի տակ: Մի օր կապիտանն ասաց. «Երվա՛նդ, ստամոքսս անհանգիստ է, իմ տեղ կանգնիր, ես երթամ Մեղրի քաղաքը՝ բժշկի»: Ու գնաց, ես կանչեցիմ Ենովքին, որ գան նրանց անցկացնեմ մյուս կողմը: Եկան, նրանց և շատ մեր զինվորներից անցկացուցիմ:

Երեկոյան եկավ կապիտանը, ճիշտ ասացիմ և խնդրեցիմ՝ ես էլ երթամ ու գնացիմ:

ՄՈՒՏՔ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Ես անցամ Պարսկաստանի հողը և մեզի՝ ամեն մեկիս, երկու ղռան պարսկական փող տվեցին: Հասանք մի լավ այգի և հանգստացանք: Մեր հացը Հայրոն առել է և փախել իմ բացակայության ժամանակ: Այգու տերը եկավ, կարմիր մորուքով մեկն էր: Մենք այդ փողից ցույց տվեցինք, որ մեզի հաց և եղճու[372] բերի: Մեկ հատ վերցրեց գնաց, մի մեծ թավա եղճու, տասը հատ հաց և մի քիչ էլ դեղին մանր փող տվեց մեզի: Մենք հաց կերանք և հանգստացանք: Ուրեմն՝ ապրիլի չորսին մենք մեր քաղցը հայրենիքից դուրս ելանք և մայիսի քսաներկուսին մտանք պարսկական հողը: Առավոտուն ելանք ճանապարհ, հասանք մի մեծ գյուղի՝ Թուրքի գյուղ է, Իլլարի կըսեն: Ուզեցինք հաց առնել: Ես կտորից մնացածը ցույց տվեցիմ, վեց մետր էր, նրանք արշին կասեին, խոսացինք վաթսուն լավաշ հաց: Ասաց. «Կեսը հաց կուտամ, կեսը՝ ալյուր»: Ուրեմն՝ երկու լիտր, որ բաթման կըսեին, ալյուր և երեսուն լավաշ հացը Վահանը շալակեց: Հաջիի կինը մեկ-մեկ հաց և մեջը պանիր տվեց մեզի: Ելանք ճանապարհ:

Երիտասարդ ենք և անփորձ: Ուրախ-ուրախ, հաց ուտելով՝ կերթանք, գյուղի միջից անցնելով՝ մեր ճանապարհ կորսնցուցինք: Ելանք մի մեծ սարի գլուխը: Կանաչություն և մեծ սա-

[372] Եղճու-ձվածեղ:

րի բանջարեղեն, ինչքան կուզես քաղի: Ենովքը ասաց. «Այս գիշեր մնանք այստեղ, մեր սարերի կանաչեղեններ ուտենք»: Նստած էինք, հովիվ ոչխարներով եկավ նստեց խոսալու, մեզի կաթ տվեց: Մենք հարցուցինք հայի գյուղը՝ Մուժումբար[373], որտեղ է, ասաց. «Այս սարի մյուս երեսը, որ իջնեք Մուժումբար գյուղն է»: Մենք գիշերը մնացինք այդ սարի մեջ և շատ անուշ քնանք, շատ էլ բանջարեղեն քաղեցինք: Առավոտ սարից իջանք և ճաշին հասանք Մուժումբար գյուղը: Հինգ մարդ նստած էին իրարմե հեռու, և ամեն մարդու երկու դռան կուտային: Մենք մեր դրամը առինք և գյուղից դուրս՝ մի այգու մեջ, գիշերեցինք: Առավոտուն այգու տերը եկավ, շատ սիրով բարևեց մեզի: Տեսավ, որ ցամաք հաց կուտենք, ասաց՝ սպասեք: Գնաց երկու կտոր պանիր բերեց:

Այդ այգու տիրոջ անունը Մուքայել էր, միշտ կուգար, կխոսեինք: Մենք հարցուցինք Թավրիզի դրությունից, ասաց. «Ամեն շաբաթ մեր գյուղացիները կերթան և կուգան: Շատ վատ կպատմեն, տեղ չկա, փողոցներում կքնեն, ջուր չի ճարվում: Թուրքերը խանութները փակած և գնացած են իրենց տունները, շատ խառնակ դրություն է»: Մեր հացը քիչ-քիչ վերջանում է: Ասացինք. «Պարո՛ն Մուքայել, մենք ալյուր ունինք, որտե՞ղ կարելի է հաց թխենք»: Ծիծաղեց, ասաց. «Ո՞ր օրվան հայեր ենք, որ ձեր հացը չպատրաստենք, համեցեք, տանենք մեր տուն»: Ասինք. «Մենք չենք գա, դուք տարեք, թխեք, ինչ որ ծախսն է կուտանք»: Տարավ, մյուս օրը մի պարկ լիքը և մի սփռոց էլ լիքը մի մարդու հետ բերեցին, ոչինչ չառեցին: Երկրորդ օրը այդ մարդը, որ հացը բերեց, երկու հավ, շատ էլ հաց բերեց, նստանք

[373] **Մուժումբար (Մուժամբար)** գյուղը գտնվում էր Թավրիզից 10 կմ հյուսիս: 20-րդ դարի սկզբին ուներ 120 տուն հայ բնակիչ: Եղել է Թավրիզաբնակ հայերի ամառանոցը: Կար Սբ Հռիփսիմե անունով եկեղեցի (18-րդ դար): Գյուղի մոտ էին գտնվում Երևման խաչ և Սբ Հովհաննես ուխտատեղիները (ՀԱՀ, հ. 8, էջ 73: ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 882):

գրույցի: Մարդու անունը Արսեն Վարդանյան[374] էր, պատմեց իր կյանքից: Եղած է Հայաստան, ծառայած է Սեպուհին և գնդապետ Բաղդասարյանին՝ Իգդիրի շրջանի Մալաքլու գյուղում՝ նույն և մեր գունդը: Պարսկահայ լինելով՝ քսան թվին եկած է իրենց գյուղը: Մենք տասը օր մնացինք Մուժամբարում՝ պարոն Մուքայելի այգում:

Տարագիրների գալը պակասեց, մենք էլ մնաք բարի ասեցինք Արսենին և Մուքայելին, եկանք Թավրիզ: Ոչ մի տեղ չկա, որ նստես, ընկանք ծուռ-մուռ փողոցներով ման գալու, որ մի տեղ ճարենք: Մի ծերունի թուրքի հանդիպեցինք և բնակելու տեղ ուզեցինք: Մարդը մեզի տարավ, մի դուռ ծեծեց, մի հասակավոր կին դուռը բացեց: Մարդը ասաց. «Ասոնց տեղ տո՛ւր»: Եվ գնաց: Կինը շատ քաղաքավարի մեզի տարավ ներս: Տեսանք մեր Օվանեսը այնտեղ է: Իր սենյակում մեզի տեղ տվեց: Այդ տունը մեծ բակ ուներ և շատ սենյակներ, որ կապրեին Խոյի և Սալմաստի փախստականները: Գիշերը մի ասորի տերտեր եկավ՝ աղոթքի: Ուրեմն՝ այսպես է եղած, ամերիկյան բարեգործական կոմիտեն տուներ կվարձե և ժողովրդին՝ գաղթականներին բողոքական կդարձնե իր քարոզիչներով: Մենք էլ գնացինք՝ քարոզ լսելու:

ԿՌԻՎ ՔՈՒՐԴԵՐԻ ԴԵՄ

Մի քանի օր անցած էր, որ Օվանես եկավ, շատ ուրախ ասաց. «Արմենակը, լսելով ձեր գալը, ձեզի արձանագրած է զինվոր: Պարսկաստան զինվոր չունի, և երկու կողմից խաներն ըմբոստացեր են: Ամիր Արշադը եկած է Թավրիզ և բանակ է կանչում՝ կռվելու ապստամբ և ավազակներ քուրդ Սմկո Իսմայիլի և Ջաֆար Սուլթանի աշիրաթների դեմ»: Այսպես է

[374] Հետագայում **Արսեն Վարդանյանի** կնոջ քրոջ աղջկան կնության է վերցնում Երվանդ Կյուրեղյանի որդին՝ Վարուժան Կյուրեղյանը:

դասավորված, որ Ամիր Արշադը ընդհանուր հրամանատարն է և Սամսոն խան Թադևոսյանը նրա օգնականը, իսկ գնդապետ Զոհրաբյան ռուսահայ զինվորականը՝ հրամանատար: Արմենակը և Սիմոնը ծանոթ վաշտապետներ են: Մեզի երկաթուղով տարան Շարաֆխանա՝ Ուրմիո լճի ծովեզերք, ինչ որ պետք է զինվորին տվեցին, մենք եղանք ձիավոր: Սմկոն, Խոյ քաղաքը գրավելով, կառաջանար դեպի Թավրիզ:

Մեր առաջին ընդհարումը սկսեց Շեյխվալի գյուղից: Գնալով և նրանց քշելով՝ գրավեցինք Շեյխվալի, Կարա Թափա, Թիլ և Թասա գյուղերը և Սմկոյին հանեցինք Շաքարյաղի սարերը: Քուրդերը սարերում լավ կկռվեն: Մենք Շաքարյաղի սարը գրավեցինք և իջանք Սալմաստ գավառի դաշտը: Երկու կողմեն այժմ կռիվ է: Ամիր Արշադը սպանված է: Կռվի ուժը ընկած է հայերի և, մի հարյուրյակ, ասորի Իսրայելի վրան: Այսպես կռվելով և նահանջելով՝ Սմկոն սպանվեց, և Ջաֆար Սուլթանն էլ փախավ Բաղդադի կողմը:

Այժմ խաղաղություն է, մեզի բերեցին Թավրիզ: Մեր զենքերը հանձնեցինք պարոն Սամսոնին և յոթ ամսավճար ստացանք՝ երեք ոսկի կամ տասնհինգ թուման:

Այս 1922-ի սեպտեմբերի վերջն էր:

ՂԱԶՎԻՆՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԴԱՆՈՒՄ

Հորեղբորս տղան՝ Ենովքը, Քոչկ գյուղացի Մկրտիչի հետ գաղտնի անցավ Հայաստան[375], կին և տղա ուներ: Ես և Օվանեսը գնացինք Մուժումբար գյուղը, Արմենակ մնաց Թավրիզ:

[375] Ըստ Ենովք Հարությունյանի Երևանում բնակվող թոռների վկայության, նա 1937թ. անհիմն ձերբակալվել է և դարձել ստալինյան բռնատիրության զոհ:

Երվանդ Կյուրեղյան (1935թ.):



Երվանդ Կյուրեղյանի որդին՝ Ղազարոսը:

Երևանի տարեմուտ կենտրոնում՝ Հանրապետության հրապարակում (1918թ.):
*Նստած՝ Սարգիս Սարգսյան, Ալեքսանդր Ղազարյան, Գրիգոր Ղազար

Երվանդ Կյուրեղյան:

Վարդանուշ Զաքարյան-Կյուրեղյան (Քերմանշահ, 1935թ.):
19 VII 1901-22 XI 1981

Պարգև Կյուրեղյան (Քերմանշահ, 1926թ.):
19 VII 1924-09 XII 1975

Պարգև, Անժել և Վարուժան Կյուրեղյաններ (1935թ.):

Երվանդ Կյուրեղյան
(11 I 1888թ. - 21 II 1998թ.):

Երվանդ և Վարդանուշ Կյուրեղյաններ
(Թավրիզ, 1923թ.):

Օվանեսը պսակվեց մի որբևայրի Շուշանիկ անունով կնոջ հետ: Ես և իմ տունի աղջիկը՝ Վարդանույշ անունով, եկանք Թավրիզ, ամուսնացանք 1922 թվականի դեկտեմբերի 26-ին:

Գարուն էր, Օվանեսը եկավ Թավրիզ: Տարագիրներից մնացած էին արհեստավորներ և խմբապետներ, լսեցինք, որ Բաղդադում անգլիացիք մեծ գործեր բացած են, մենք էլ չորս ընտանիք, մի կառք վարձեցինք, մինչև Համադան[376] քաղաքը՝ մարդուն ութ թուման: Արմենակն էր, Օվանեսը, ես և Մուշեղը, կիները պիտի նստեին կառքը, իսկ մենք՝ քայլեինք: Ճանապարհ չկա: Շատ տանջանքով հասանք Ղազվին քաղաքը: Ղազվինա հայերից մի բարի և համակրելի մարդ մեզի իջևանից տարավ իր տուն: Հացից հետո գիշերը պահեց, առավոտուն ճանապարհելուց մի թաշկինակի մեջ մի գունդ փող դրեց սեղանին: Ասաց. «Պարո՛ն Արմենակ, ընդունեցեք այս փոքր գումարը՝ ձեր ճանապարհի ծախսը»: Այդ բարի մարդու անունը Զոհրաբ խան էր: Կրկին դժվարությամբ հասանք Համադան քաղաքը: Մեզի դիմավորեցին սասունցի հին ֆիդայի Հարությունը Սարգսյանը, որ մեր Օվանեսի հետ Լևոն փաշի զինվոր եղած են: Նրանց հետն էին վաշտապետ Արսենը, Նահապետ Նահապետյանը և Վահրամ Զոհրաբյանը: Մեզի տարան Նահապետյանի տունը, ուրեմն՝ մենք Թավրիզից դուրս եկանք մայիսի մեկին, Համադան հասանք 1923-ի մայիսի 25-ին: Ես հիվանդացամ: Ինձի տարան Ամերիկյան հիվանդանոց: Իմ բժիշկն էր համադանցի Թադևոսը, ոչ թե իմ, այլ բոլոր տարագիրների: Իմ ընկերները գնացին: Ես լավացամ, եկամ տուն: Աշուն էր, ես գնացիմ հաց առնելու, մի տարագիր տղա ինձի բարևեց և ասաց. «Ընկեր, ինձի կճանաչե՞ս»: Ասացիմ. «Ո՛չ»: Ասաց. «Դու ինձի փրկեցիր Տաթևի վանքում, մի հաց

---

[376] **Համադան**-քաղաք Իրանում, Համանուն օստանի (նահանգի) կենտրոնը:

և հալվա տվեցիր: Երկու օր ես անոթի էիմ»: Ասացիմ. «Արի երթանք իմ տուն, զրուցենք, ես ամուսնացած եմ»: Եկավ:

Անունը Իվան էր: Հայաստանի Զնջրլու գյուղացի էր: Նստանք՝ խոսալու: Ասաց. «Ի՞նչ գործ ունիս»: Ասացիմ. «Պարապ եմ»: Ասաց. «Ես մի ասորիի մոտ արաբայի ծառայող եմ: Կինը հայ է, շատ բարի մարդ է, արի երթանք Քերմանշահ[377] քաղաքը: Ապրուստը շատ աժան է: Ձյուն չի գա: Մի բան կճարենք մեզի»: Մյուս օրը նրանց հետ գնացինք Քերմանշահ քրդական քաղաք: Քերմանշահ հասնելուց՝ Իվանի հետ գնացինք հրեաների թաղը: Մի մեծ բակ էր, և բոլորը Սուլդուզի[378] թրքախոս հայեր էին՝ Մարգար դային, Գալուստ դային: Մի սենյակ վարձեցիմ, և տեղավորվանք: Երկրորդ օրը Իվան եկավ, ասաց. «Խոսացեր եմ պարոն Բաբայի հետ, որ այդ մի ձիանի կառքը ծախի քեզի, և դու մեզի հետ աշխատես և պարտքը տաս»: Գնացինք և Բաբայից կառքը առեցիմ: Արժեքը հարյուր թուման էր, կեսը՝ կանխիկ, կեսը՝ ապառիկ: Մտանք սև և տանջալից գործի: Աստված ասած է. «Քո քրտինքով հաց ուտես»: Մենք մեր արյունն էլ խառնեցինք քրտինքին, հազիվ հաց բերեցինք մեր տունը: Մեզի նաջես[379] հարամ կըսեին, ոչ մի բանի չէինք կարող ձեռք տալ, նույնիսկ ընկույզի և հավկիթի:

Չեմ կարող նկարագրել մեր տարագիր ընկերների վիճակը, թե՛ Համադանը, և թե՛ այստեղ՝ Քերմանշահը, սիրտս կճմլվի՝ նրանց վիճակը տեսնելով: Ի՞նչ արած, այս է մեր ճակատագիրը, հայու տոկունությունը և կորովը ինձի ստիպեց գիշեր և ցերեկ աշխատել: Կարողացամ ժամկետից երկու ամիս առաջ պարտքս վճարել պարոն Բաբային, և այժմ

[377] **Քերմանշահ**- քաղաք Իրանի արևմտյան կողմում, համանուն օստանի (նահանգի) կենտրոնը:

[378] **Սուլդուզ**-գավառ Պարսկաստանում, պատմական Ատրպատականի տարածքում, Ուրմիա լճի հարավային կողմում: Ուներ արգավանդ հողեր և բազմաթիվ բնակավայրեր, որոնց բնակիչները հայեր, քրդեր, պարսիկներ և ասորիներ էին (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 698-699):

[379] **Նաջես**-ոչ մաքուր, պիղծ:

փառք Աստծո, արաբայի տեր եմ: Ուրախ և զվարթ կաշխատեմ: Անցան տարիներ: Պարսկաստան մեքենաներ բերեցին անգլիացիք, ֆրանսիացիք և Սուրիայի հայերը՝ Թվանքչյանները: Ես կառքը լավ արժեքով ծախեցիմ, որովհետև ձին լավ պահած էի: Եղա շոֆերի աշակերտ: Շնորհիվ իմ ընդունակությանս՝ քիչ ժամանակ անց շոֆեր եղամ: Անգլիացու մոտ աշխատեցինք Լոռստանում[380], ուր ամեն օր շոֆեր կսպանվեր լոռերի ձեռքով: Ես էլ բեռնատար առամ, կանխիկ և ապառիկ: Այդ բեռնատարի պարտքն էլ տվեցիմ և մեքենատեր եղամ:

Քիչ-քիչ գործս առաջ գնաց, ինչպես մեր մեծերը կասեն՝ իմ ջուրն ընկավ առուն: Այժմ կարող եմ գոնե շաբաթը մի օր իմ տարագիր ընկերներ բերեմ իմ սեղանին, գոնե մի տաք թանապուր ուտենք, մեր ցավերը պատմենք իրարու:

Մինակ ես էիմ ամուսնացած: Կուգային ընկերները, շատերը մեր բանակայիններ էին և ծանոթները: Այսպիսով, անցան տարիներ:

Արյունարբու թուրքը իմ պապենական օջախի ծառերը կտրեց, բայց արմատը մնաց հողի մեջը, և այդ արմատը ծիլ արձակեց, մեծացավ, երեք ճյուղ տվեց: Այդ ճյուղերը իմ երեք զավակները եղան՝ Պարգևը, Անժելը և Վարուժանը, երկու տղա և մի աղջիկ ունեցամ Քերմանշահում: 1941 թվին իմ տունս հավաքեցիմ, բերիմ Թեհրան: Երեխաներս դպրոցը և համալսարանը ավարտեցին փայլուն վկայականով, տղաներս ճարտարապետ եղան, իսկ աղջիկս երկու տեղ վարժուհի էր՝ Քուշեշ և Հայ կույսերի դպրոցներում: Երեքն էլ ամուսնացան, իմ ծառս ճյուղավորվեց և քաղցր պտուղ տվեց: Թոռ ունեցամ: Ուրախ ծլվլոց կլսեիմ և փառք կուտայիմ Աստծուն:

[380] **Լոռստան**-նկատի ունի Թեհրանից հարավ-արևմուտք գտնվող Լուրիստան օստանը (նահանգը), կենտրոնը Խոռամաբադ քաղաքն է:

ԶԿԱՅԱՅԱԾ ՆԵՐԳԱՂԹ

Հայաստանի դռները բացվեցին. 1946թ. սկսվեց ներգաղթը: Այս էլ հայության անսպասելի ամենաերջանիկ օրն էր: Գրվեցինք և խումբ կազմեցինք: Առաջին խումբի մեծն էր Հաջի Նշանը: Սիրիահայեր էին՝ բաղկացած 32 բեռնատար և իր արհեստավորներով:

Երկրորդը մերն էր 25 բեռնատար՝ իր արհեստավորներով: Մեծ տղաս՝ Պարգևը, շատ չարչարվեց խումբի համար:

Առաջին խումբը գնաց: Մենք երկու տարի պարապ սպասեցինք, մեր անունը դուրս չեկավ: Մեր քարավանը՝ բոլորը հայրենասեր ընտանիքներ էին, գնալու պատրաստությամբ, ամեն ինչ ցրիվ էին տվել՝ տուն-տեղ քանդել և ներգաղթի համար պատրաստվել, օր էինք հաշվում, որ օր առաջ գնանք մեր սուրբ հողի վրա աշխատենք և ապրենք, բայց ներգաղթը կանգ առավ:

Նորից սկսեցինք մեր աշխատանքը:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄ

1978 թվականին ուխտագնացների մի խումբ կազմվեց դեպի Սուրբ Երուսաղեմ: Տղաս՝ Վարուժանը, ինձի գրած էր այդ խումբի մեջ: Գնացինք ճիշտ թաթախման գիշերը, հասանք Սուրբ Երուսաղեմը: Պատարագին հաղորդվեցինք և եկանք սեղանատուն: Շատ ճոխ սեղան պատրաստած էին վարդապետները: Հետո եղավ նվիրատվությունը: Սեղան ծածկվեց մեր տված գումարներով: Մյուս օրը ելանք Սուրբ վայրերը՝ պտույտի, գնացինք Բեթղեհեմ և Հովիվների քարայրը՝ Սուրբ Մսուր, գնացինք Գեթսեմանի պարտեզը: Գնացինք Սողոմոնի տաճարը, որ մի պատ է մնացել: Հրեաները կուգան և լացելով՝ գլուխները կզարնեն այդ պատի հսկա քարերին: Մեր առաջնորդը մի հրեա էր և շատ լեզուներ գիտեր, նաև թուրքերեն, պարսկերեն: Մեզի տարավ Սուրբ Հակոբյանց վանքը, էնտեղից՝ Մուհամադ Փեղամբարի հոյակապ մզկիթը: Ոտնամանները հանեցինք, մտանք ներս, տեսանք ներսում կլոր պատ է քաշված և մի մետր բարձրություն ունի, ներսը ոչինչ չկա: Սպիտակ քար է: Հարցուցինք արաբ պահակից, ասաց. «Այդ ճերմակ քարը հայր Աբրահամի սեղանն է, որ Իսահակին զոհ կըներ Աստծուն»: Առավոտ էր, մեր օթոբուսը (ավտոբուսը) իջավ դեպի Հորդանան գետը, հասանք, ջուր խմեցինք և գնացինք այն ծովը, որի վրա Հիսուսը քայլեր էր: Ծովի ձուկով մեզի ճաշ տվեցին, ելանք ճանապարհ, հասանք մի գյուղը և մտանք մի տուն, ուր Սուրբ Մարիամն ապրած է:

Ջրհորից դույլով ջուր քաշեցինք, խմեցինք: Այնտեղից մեզի տարան մի հրեական տաճար, շատ մաքուր էր: Մովսեսի տասը պատվիրանները ոսկեզօծ գրված էին: Մյուս օրը մեզի տարան Հայֆա ծովեզերքի քաղաքը: Հայոց եկեղեցին փակված էր: Ճանապարհ չինած են մինչև բլուրի գագաթը, և շատ մաքուր ուտելիքներ դրված էին մեր սեղաններին: Ճաշից հետո եկանք նրանց ադամանդի գործարանը, շատեր մեզանից գնումեր արեցին, և գիշերով հասանք նորակերտ մայրաքաղաքը՝ Թել Ավիվ՝ Միջերկրականի ափին: Այդտեղ գնացինք նրանց թանգարան, և նաև Բեն-Գուրիոնի սեփական թանգարանը: Այսպիսով, տասնվեց օր Սուրբ վայրեր ման գալով՝ ելանք Հունաստան, Աթենքով հասանք Թեհրան:

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դեպքերի դասավորությամբ Իրանի թագավորությունը 1979 թվին տապալվեց և Իսլամական Հանրապետություն հռչակվեց: Մինչև այդ Խորհրդային երկիր ճամփորդել չէր կարելի: Այս արգելքը վերցրին, սկսվեց դեպի Հայաստան տուրիստների երթը:

Տղաս՝ Վարուժանը, մեր ընտանիքը գրած էր երկրորդ քարավանի մեջ: Ես, Վարդանուշը, Վարուժանը իր ընտանիքով, զոքանչով և աներորդիով, Անժելի զավակներ, 12 հոգանոց խմբով օգոստոսին Փարիզով, Մոսկվայով մեկնեցինք Երևան:

Այդ ճամփորդությունը կազմել էր Արամ Գառոնեի[381] աղջկա՝ Օգեթի ամուսինը՝ Հովիկ Հակոբյանը, որ Վարուժանիս մտերիմ ընկերն էր:

Մեր առաջին պտույտն սկսվեց Ծիծեռնակաբերդից: Շատ հուզվեցինք, երբ մեր խումբից երկու կին «Տեր ողորմյան» և «Հայր մերը» երգեցին: Այնտեղից գնացինք Գառնիի հեթանոսական տաճարը: Վահե Գառոնեն[382] Գառնիի խնձորներով մեզի հյուրասիրեց: Էնտեղից բարձրացանք Սուրբ Գեղարդը: Զորս հատ կնունք կար: Վանքի ներքևից մի հսկա ջուր կերթար: Մի բաժակ խմեցիմ: Մի մարդու հարցուցիմ. «Այս ջուրը ո՞ւր կերթա»: Ասաց. «Այս ջուրը տարած են խողովակով մինչև Արտաշատի և Դվինի շրջանները»: Երգելով և բարձր տրամադրությամբ՝ դարձանք մեր հոթելը:

Երկրորդ օրը գնացինք դեպի Էջմիածին: Կիրակի էր, աղոթքից հետո գնացինք Հայոց Հայրիկի գերեզմանի վրա, աղոթեցինք: Ելանք դեպի Օշական՝ Սուրբ Մեսրոպի վանքը և գերեզմանը: Մեզ հետ կային ֆրանսահայեր և ֆրանսիացիք և անգլիացի ընտանիքներ:

Նրանց թարգմանեցին Սուրբ Մեսրոպի ով լինելը, և թե մեր գրերի գյուտը որքան հին է: Այնտեղից գնացինք Բյուրականի աստղադիտարանը Արագած սարի լանջին, որ կնայի դեպի Մասիս: Պղատու ծառերով շրջապատված է:

[381] **Արամ Գառոնեն** (Տեր- Բաղդասարյան) բանաստեղծ և թարգմանիչ Գեղամ Սարյանի (1902 Թավրիզ- 1976 Երևան) եղբայրն էր: Նա նույնպես բանաստեղծ էր և գրական կեղծանուն էր ընտրել ֆրանսիական Գառոն գետի անունը: Նրանց փոքր քույրը Երվանդ Կյուրեղյանի որդու՝ Պարգևի կինն էր:

[382] **Վահե Գառոնեն** Արամ Գառոնեի որդին է, մասնագիտությամբ՝ գծագրիչ:

Ես գնացիմ դիտարանի դուռը համբուրեցիմ: Երկու կին և մեկ մարդ այգին կջրեին, երբ տեսան, ես դուռը կհամբուրեմ, ծիծաղեցին: Կինը ասաց. «Ախպե՛ր, այդ եկեղեցի չէ»: Ես աստիճանից իջամ և եկամ ասեցիմ. «Քույրի՛կ, այս հոյակապ շենքը մեզի համար եկեղեցուց շատ բարձր է: Այս շենքով է, որ աշխարհը մեզի կճանաչի և Վիկտոր Համբարձումյանը, որ աշխարհահռչակ հայ կճանաչվի, շնորհիվ այս շենքի է»: Եկան ինձ համբուրեցին և մի ծաղկեփունջ տվեցին: Երեկոյան հասանք Երևան:

Մյուս օրը գնացինք Սարդարապատ: Այդ չոր և անջուր ղռերը[383] դրախտ չինած են: Մանավանդ իր տեսակ-տեսակ կոթողներով: Շատ ման գալուց հետո գնացինք ճաշելու: Ճաշի վրա ինձնից, իբրև Սարդարապատի զինվոր, ուզեցին, որ հուշերիցս մի բան ասեմ: Ես կանգնամ դուռի մեջ և մայիս 23-ի մեր կռվի և խրամատի տեղերը ցույց տալով՝ հասամ այդ տեղը, որ իմ յոթ ընկերները նահատակվեցին, լացս եկավ, չկարողացամ խոսել:

Բացի մեր խմբի 42 հոգին՝ ուրիշ լսողներ էլ կային, հատկապես խմբի ուղեկցող օրիորդը, որ պատմության բաժինն էր ավարտել: Շատ էր հուզվել և մեծ տպավորություն էր ստացել: Եկավ, ինձի համբուրեց:

Մյուս օրը գնացինք Սևանա վանքը: Ամեն տեղ ման գալուց և աղոթք անելուց, ճաշից հետո գնացինք՝ Դիլիջանով անցանք Կիրովական, այնտեղից դեպի՝ Օձունի և Հաղպատի փառավոր վանքերը: Իջանք պղնձի հանքը՝ Ալավերդին, այսպիսով, կրկին Դիլիջանով ուշ գիշեր վերադարձանք Երևան:

Իմ սենյակի պատուհանը կբացվեր ճիշտ Մասիսի դիմաց: Ես կանգնած էիմ, կնայեիմ Մասիսին և կլացեիմ: Հանկարծ կինս՝ Վարդանուշը, ասաց, որ մարդ եկավ: Դարձամ հետ, տեսամ պարոն Տաճատ Թերլեմեզյանն[384] ու Հովհաննես Շի-

[383] **Ղռեր**-ամայի, անջրդի վայրեր:

[384] Այս հանդիպման մասին Տաճատ Թերլեմեզյանը հիշատակում է իր նամակներից մեկում: Նա պատմում է, որ 1915թ. Վասպուրականի հերո-

բազն են: Ասացին. «Ինչո՞ւ կլացես»: Ասացիմ. «Մասիսի համար է, և գոնե մի երես թողնեին մեզի»: Շիրազն ասաց. «Դու տեսար մի անգամ և կլացես, ես ամեն օր կլացեմ: Արի, արի մեկ-մեկ խմե՛նք, մեր դարդը մոռանանք»:

Առավոտյան մեզի տարին այցելելու մեր պատմության և մշակույթի վկաներ՝ Մատենադարանը և պատմության թանգարանը: Այդտեղ էին Մշո Առաքելոց վանքի երկու փեղկ դուռները, ահագին բևեռագիր քարեր և մանավանդ՝ Անդրանիկի նկարը և փոքր սեղանը, սուրը, նրա թաշկինակը, ձեռքի փայտը և շատ մանր ու հին իրեր:

Գնացինք ծածկած շուկա և Զարենցի կամարը: Այս տասնվեց օրվա պտույտից հետո, եթե որևէ մի անհատ ինձի հարցնի. «Էլ ի՞նչ տեսար»: Ես պիտի ասեմ. «Էն որ ես տեսամ, ոչ ոք չի տեսել: Էն որ ես զգացիմ, ոչ ոք չի զգացել, որովհետև ես էնտեղից եմ եկել, և կզգայիմ, թե ինչ է եղել մեր բացակայության ժամանակը»:

Սիրելի՛ ընթերցող, այդ ծաղկած Սարդարապատը, ո՛չ - ջուր կար, և ո՛չ մի հատ ծառ: Մի ամայի դաշտավայր էր, որին տիրացել էին երկու եզդի հրամանատարներ՝ Ջահանգիր աղան[385] և Ուսուբ բեկը[386]: Ջահանգիրի վրանը խփված էր Թուրքի Թալինի մոտ, Անի քաղաքին մոտիկ: Ուսուբ բեկի վրանը խփված էր Սև ջուր գետի կողքին, և նրանց ոչխարների արածելու տեղն էր ամառ թե ձմեռ:

Այդ ծաղկած Սարդարապատը կառուցվեց նոր Հայաստանի գյուղացիների և բանվորների աշխատանքով:

Իմ տեսած զինվորական կռիվների ժամանակը և այժմ, որ կտեսնամ, ոչինչ չի նմանի անցյալին:

Երևանի ցածրից՝ Թոխմախ գյոլից մինչև Աղբաշ գյուղը, հազարավոր հեկտար ամայի և ղռեր էին: Մեր փետրվարյան կռիվների վայրը այդ ղռերն էին: Այժմ Սևանա լճի ջուրը բերած են ու այգեստան է եղած:

Արտաշատից վերև եղած անապատը կառուցված է: Երեք հսկայական խողովակ ջուր բերած են Մայր Արաքսեն և կամուրջի պես խճուղուց անցկացրած են, մեքենաները տակից

սամարտի օրերին, Հայոց ձորի Քերծ գյուղից Ավետիս Մուրադյանը գտնվում էր ԱՄՆ-ում, նրա երեք եղբայրները կռվի ժամանակ նահատակվում են Փեսանդաշտում, իսկ քույրերը, գաղթում են Արևելյան Հայաստան: Ավետիս Մուրադյանը Բոստոնում մահանում է 1968թ. և մահից առաջ 10.000 դոլար է կտակում Վասպուրականի հերոսամարտին նվիրված Հայաստանում կառուցվելիք հուշարձանի համար, բայց բանկում մնում է 40.000 դոլարից ավելի գումար, որը պիտի տրվեր, եթե ժառանգներ կամ ազգականներ գտնվեին: Տաճատ Թերլեմեզյանը Ավետիս Մուրադյանի քույրերին՝ Հասմիկին և Նարգիզին փնտրելիս խնդրում է Երվանդ Կյուրեղյանի օգնությունը: Նա իր 29.04.1980թ. նամակում գրում է. «Թեհրանի մեջ կապրի Քերծ գյուղեն Երվանդ Կյուրեղյան: Այդտեղեն մեկ ամիս 4 - 5 օր առաջ Լոնդոնեն եկավ «Արմենիա» հյուրանոց: Արճեշի մեջ ինձ զինվոր եղած է: Նա հայտնեց Ավետիսի քույրերի մասին: Ես գրել եմ Թեհրան, իրեն, թերևս նա գտնի մեկին և ինձ գրի» (տե՛ս Ավո, Տաճատ Թերլեմեզյան, վավերագրական պատում, Երևան, 2002, էջ 99 -101):

---

[385] **Ջահանգիր (Ջանգիր) աղա Խաթիֆյանը** ծնվել է 1874թ. Վանի Նահանգի Բերկրիի գավառակի Զըբխլու գյուղում: Նա Արևմտյան Հայաստանի եզդիների առաջնորդներից էր, թուրքական բռնապետության դեմ պայքարի գործուն մասնակիցներից: 1900-ական թթ. սկզբից գլխավորել է հեծյալ ջոկատ: 1909թ. Վասպուրականի Արճակ գավառակում Անդրանիկի հետ հանդիպումով սկզբնավորվել է նրանց մարտական բարեկամությունը: Ջահանգիր աղան աջակցել է հայ ֆիդայիներին, ցույց տվել ռազմական և նյութական օգնություն: 1918թ. նրա ջոկատը Մոլլա Բայազետ գյուղի մոտ զգալի վնաս է հասցրել թուրքական զորքերին: 1918-ին նա իր 1500 հեծյալներով մասնակցել է Սարդարապատի և Բաշ Ապարանի ճակատամարտերին: Խորհրդային տարիներին անհիմն բռնադատվել է և 1938թ. մահացել Սարատովի բանտում (Հայկական հարց, հանրագիտարան, էջ 381: Լրացուցիչ տեղեկություններ է հաղորդել ՀՀ վաստակավոր լրագրող Հասան Թամոյանը):

[386] **Ուսուբ (Ուսբվ) բեկ Թեմուրյանը** ծնվել է 1860-ական թթ. վերջերին Կարսի մարզի Կաղզվանի օկրուգի Շորագյալի շրջանի Ալաջա գյուղում, որը գտնվում էր Անի քաղաքից ոչ հեռու: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, բայց հիվանդության պատճառով չի ավարտել: 1909 թվականին Միր Իսմայիլը Ուսուբ բեկին նշանակել է Արևելյան Հայաստանի եզդիների գլխավոր: Եղել է Հայաստանի Հանրապետության Խորհրդարանի պատգամավոր և եզդիների ներկայացուցիչ: Մահացել է 1934թ. և թաղված է Արագածոտնի մարզի Աշտարակի շրջանի Շամիրամ գյուղում (տեղեկությունները հաղորդել է ՀՀ վաստակավոր լրագրող Հասան Թամոյանը):

կանցնեն, այդ խողովակների ջուրը բաժանած են մինչև Կարմիր սարը, որ մենք Բոյուք Վեղիի կովին անջուր կտառապեինք:

Դավալու գյուղից, որ այժմ Արարատ կասեն, մինչև Սադարակի սարը, որ Վոլչի վառոտ[387] կըսեն, անջուր անապատ էր: Այժմ արևահայաց այգիներ, և շենքեր եղած են: Այս ամենը ես ավերակ տեսած եմ: Ավերակ թողած երկիրը կառուցված և ծաղկած տեսամ: Էլ չեմ ասում քաղաքի մասին, որովհետև քաղաքը ամեն մարդ տեսավ և նկարեց, իմ դատավորը թող որ 1921թ. Հայաստանից եկած գաղթականները լինեն: Թող հոգով խոստովանին՝ ճի՞շտ է, թե՞ չէ:

Վերջապես 1979թ. օգոստոսին թողեցինք մեր ծաղկած Հայաստանը: Ես միայն մի բուռ հող Սարդարապատից բերեցիմ և պահած եմ, որ մեռնելուց գցեն աչքերիս վրա:

Ելանք օդանավը և աղջիկը՝ Սովետական Հայաստանի օդանավի ուղեկցորդուհին, ասաց. «Ձեզի կտանի Մոսկվա օդաչու գնդապետ Կարապետյանը»:

Հասանք Մոսկվա: Մեկ գիշեր մնացինք, իսկ հետո անցանք Վարշավա, Վիեննա, Աթենք և Թեհրան:

ԱՄԵՐԻԿԱ ՏԵՂԱՓՈԽՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երկրորդ տարին Թեհրանը խառնվեց, դպրոցները փակվեցին, մանավանդ՝ համալսարանները: Բարձրագույն դպրոցների երեխաները մնացին անհույս: Յուրաքանչյուր ծնող սկսեց մտածել իր զավակի ապագայի մասին: Քայքայում ստեղծվեց: Սկսեցին ծախծխել ինչ ունեին-չունեին, թանկ և ժամանի նայող չկար: Միայն՝ անցնեն Եվրոպա և Ամերիկա:

Իմ ընտանիքս էլ սկսեց քայքայվել: Ծախեցին ինչ-որ ծախելու ապրանք էր: Հետև հետևի գնացին: Մնացինք ես

[387] **Վոլչի վառոտ**-Հայկական աղբյուրներում օգտագործվում է Գայլի դրունք ձևը:

և կինս, տղաս՝ Վարուժանը, որ Թավրիզում գործ ուներ: Ամիսը երկու անգամ կուգար Թեհրան: Կինս մահացավ, ես մենակ մնացիմ տան մեջ: Մեր տունը Վանաքի մեջ էր:

Ես նստած էիմ «Գառնի» շենքի իններորդ հարկը և մի գիրք էիմ կարդում՝ «Խուլթեցի Հովնանը»[388], աչքս ընկավ Շեմիրանի սարին, ճիշտ մեր Արտոս սարը, հիշեցիմ մեր Քերծ գյուղը: Արտասվեցիմ: Իմ հոգին գնաց մեր երկիր, մեր սարերը, մանավանդ հիշեցիմ իմ ծնողներիս հետ անցկացրած օրերս և նրանց նահատակությունը, դառնորեն կլացեիմ: Հանկարծ Վարուժան տղաս ներս մտավ, տեսավ կլացեմ: Գրկեց և համբուրեց, հարցուց լացիս պատճառը: Պատմեցիմ, թե սիրտս ինչու է դառնացել և ասացիմ. «Վարո՛ւժ ջան, ո՞ւր է իմ կազմած սիրուն ընտանիքս: Մայրդ էլ մահացավ: Ես թև կոտրած կռունկի պես պիտի մնամ և մեռնեմ այս հարկաբաժնում»: Ասաց. «Պապա՛ ջան, ահա քեզի մի հատ օդանավի տոմս՝ երթալու և վերադառնալու: Գնա Ամերիկա, տես քո զավակներիդ, կուզե՞ս կաց, կուզե՞ս հետ դարձիր»: Ասացիմ. «Ես այս տարիքիս ոչ մի լեզու չգիտեմ: Ինչպե՞ս կերթամ Ամերիկա»: Ասաց. «Պապա՛ ջան, պարսկական օդանավ է, ոչ մի տեղ չի իջնի: Քեզի կտանի Կիպրոս: Էնտեղը՝ Կիպրոսում, քեզի կսպասեն քո փեսա Գրիգորը և քո աղջիկ Անժելը: Անգլիայից եկած են հատուկ քեզի տանելու: Մի ամիս է, որ մենք կաշխատենք, որ քեզի ուղարկենք»:

Ինձի դրեցին պարսկական օդանավ: Հասանք Կիպրոսի օդակայանը: Կանգնած էին Գրիգորը և Անժելը: Ի՜նչ քաղցր հանդիպում էր: Ութ օր մնացինք Կիպրոս: Շատ տեղ մանեկանք և ամեն տեղ հանդիպեցինք անիծված թուրքական դրոշակի: Նիկոզիան սիրուն քաղաք էր: Պողոտաները պատ քաշված են և հայերն էլ նոր եկեղեցի շինած են: Այս ամենից հետո շատ հանգիստ հասանք Անգլիա:

Մի քանի ամիս Լոնդոն մնացիմ:

[388] **Խոսքն**, ըստ երևույթին, **Արման Կոթիկյանի** «Խուլթեցի Հովնան» պոեմի մասին է, Երևան, 1946թ.:

Անժելը տեղափոխվեց Լոս Անջելես, ինձի էլ իր հետ տարավ: Իրենց տունը Գլենդեյլի հյուսիսում՝ բլուրի վրա է: Շատ գեղեցիկ տեսարանով մաքուր ապարանք է: Շրջապատված եմ իմ թոռներով և ծոռներով:

Նստած եմ սեղանի վերևի կողմում, իմ աջ կողմը մեծ հարսս է՝ Քնարիկը, իր տղաներով, հարսներով և թոռներով, իմ ձախ կողմն է փոքր հարսս՝ Էմման, իր զավակներով, դիմացս նստած է իմ աղջիկ Անժելը, իր զավակներով, շատ ուրախությամբ կպատմենք, որ ինչպես եկանք, հասանք Ամերիկա:

Ես ինձ շատ երջանիկ կզգամ, որ իմ ծառիս պտուղները կտեսնամ և կվայելեմ: Այժմ ես ունիմ ինը թոռ և յոթը ծոռ:

Փառք Աստծո, որ իմ ծառս ճյուղավորվեց և պտղավորվեց:

Այժմ ես կբոլորեմ իմ 100 տարեկանս: Աչքերս լավ են, առանց ակնոցի կկարդամ: Օրը երկու անգամ պտույտի կերթամ: Միայն իմ վիրավոր ոտս քիչ մը թուլացեր է, ձեռնափայտով կքայլեմ: Տարիքս հասած է իր սահմանին: Այլևս՝ ո՞ւր կհասնի, Աստված գիտի: Գրած եմ իմ ծնունդս 1888 թ. հունվար 16, Վանի Հայոց ձորի Քերծ գյուղը:

Այս հուշերս կհանձնեմ իմ Վարուժան տղային, որ տպագրի՝ ի հիշատակ իմ Կյուրեղյան տոհմի և պահի իբրև թե՛ հիշատակ, և թե՛ մի անմոռաց Սուրբ կտակ իմ սերունդի համար. այժմ 100 տարեկան եմ: Եթե ապրեցիմ, ավելացրեք ցածրի թվականին մեջ[389]:

1988թ., Գլենդեյլ

[389] Ինչպես արդեն նշել ենք, ըստ Երվանդ Կյուրեղյանի հարազատների վկայության, նա բանավոր խոսքում իր ծննդյան թվականը միշտ նշել է 1886թ., բայց, քանի որ հուշատետրում 1888 է գրել, ապա տպագրում ենք նույնությամբ: Ըստ այդմ, նա մահացել է 110 տարեկանում՝ 1998թ. փետրվարի 21-ին, ԱՄՆ-ում՝ Լոս Անջելեսում, Գլենդեյլում:

ՀԱՎԵԼՎԱԾ

Քանի որ իր հուշագրության մեջ հեղինակը չի անդրադառնում որբանոցում մնացած Ղազարոսի հետագա ճակատագրին, ուստի մենք Երվանդ Կյուրեղյանի որդուն՝ Վարուժան Կյուրեղյանին, խնդրեցինք որոշ պարզաբանումներ անել: Նա պատմեց հետևյալը՝ «Հաճախ մեր տուն այցելող հորս հայրենակիցները, հիշելով իրենց կորուստներն ու տառապանքները, հարցնում էին նաև Ղազարոսի մասին: Այդ պահին լսվում էր հորս մղկտոցը.

-Ա՜խ, իմ որբ մնացած բալես...,-և արցունքները հոսում էին նրա աչքերից:

Հիշում եմ՝ նամակագրական կապ կար, և հայրս, երկարատև ընդմիջումներով նամակ էր ստանում Ղազարոսից: Թե ինչպես էին իրար հասցե իմացել, չգիտեմ, քանի որ այն ժամանակ ես փոքր էի: Նա ուսումը շարունակում էր զինվորական դպրոցում, և դա սփոփում էր հորս, քանի որ իր որդին ծառայելու էր հայրենիքի պաշտպանությանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի բռնկումից հետո վիճակը փոխվեց. իր վերջին նամակում Ղազարոսը հայտնում էր, որ իրենց վաշտը մեկնում է Սևաստոպոլ, և ճշգրիտ հասցեն կգրի տեղավորվելուց հետո:

Բայց, ավա՜ղ, էլ ոչ մի նամակ չստացանք:

Հայրս մեզ արձանագրել էր ներգաղթի ցուցակում՝ հուսալով ապրել Հայաստանում և գտնել Ղազարոսին: Ցավոք, ներգաղթի գործընթացը 1943-46թթ. Իրանում կատարված քաղաքական իրադարձությունների պատճառով, հատկապես Կարմիր բանակի Իրանից դուրս գալուց հետո, կասեցվեց: Պատերազմի տարիներին, եթե հայրս լսում էր, որ Խորհրդային Միությունից ինչ-որ զինվորական ստորաբաժանումներ են եկել Իրանի հյուսիսային շրջաններ, Ղազարոսի մասին որևէ լուր ստանալու հույսով, խմիչքների, ուտելիքի և ծխախոտի կապոցներով գնում էր Կարմիր բանա-

կի հայ զինվորների մոտ, հյուրասիրում և հետաքրքրվում էր Ղազարոսի մասին: Բայց բոլոր ջանքերն ապարդյուն անցան»:

1988թ. գրած հուշագրության մեջ Ե. Կյուրեղյանը խիստ համառոտ է անդրադառնում 1921թ. հետո Պարսկաստանում իր անցկացրած ավելի քան 60 տարիներին, ուստի Վարուժան Կյուրեղյանին խնդրեցինք, որ լրացուցիչ տեղեկություններ հաղորդի նաև Արաքսից այն կողմում իր հոր ապրած կյանքի մասին: Նա պատմեց հետևյալը. «Հայրս Արաքս գետն անցնում և մուտք է գործում մի երկիր, որտեղ չուներ ոչ մի ծանոթ, չգիտեր այդ երկրի լեզուն և իր զինակից ընկերների նման չուներ ոչ մի արհեստ կամ եկամտի աղբյուր: Այդպիսով նրանք բոլորը դառնում են հայրենազուրկ, թափառական գաղթականներ: Այդ հազարավոր երիտասարդների մի մասը մեկնում է Իրաք, անհետ կորչում անապատներում՝ երկաթուղաշինության մեջ: Քչերին է հաջողվում հանգրվանել այլ երկրներում, իսկ ճնշող մեծամասնությունը՝ անտուն և անապաստան, մնում է Իրանում և փոշիանում ծանր աշխատանքի վայրերում կամ սովի ու համաճարակների ճիրաններում: Կային նաև հայ տարագիրներ, որոնք ամուսնացան այլազգի՝ թուրք, պարսիկ, ասորի, հետագայում՝ պատերազմի օրերին՝ Իրան արտաքսված լեհ կանանց հետ: Շատ քիչ անհատների հաջողվեց հայկական ընտանիք կազմել: Հայրս այն երջանիկներից է, որ իրականացրեց Ատրպատականի թեմական առաջնորդ, Տեր Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի[390] հորդորները: Երջան-

[390] **Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը** (ավազանի անունը՝ Նիկողայոս) ծնվել է 1866թ. Զանգեզուրի Բռնակոթ գյուղում՝ Պետրոս բեկի ընտանիքում: Թե՛ պարսից շահերը, թե՛ հետագայում ռուսաց Նիկոլայ Առաջին թագավորը վավերացրել են նրանց ընտանիքի մելիքական իրավունքները: Ներսես Մելիք-Թանգյանը 1886թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, որից հետո մինչև 1890թ. ուսուցիչ է աշխատել Հայրենի գյուղում, հիմնել գրադարան, այնուհետև դասավանդել է Շուշիի թեմական դպրոցում: 1894-ին տեղափոխվել է Բաքու և մինչև

կահիշատակ սրբազանը Ատրպատականի հայությանը քարոզում էր, որ այդ գաղթական առույգ և առողջ երիտասարդներին հովանավորեն, գործ տան, ամուսնացնեն իրենց հարազատների հետ և բնակեցնեն Ատրպատականի տասնյակ հայկական գյուղերում և ավաններում, չթողնեն այդ անծանոթ երկրում՝ օտարության մեջ կորչեն: Թավրիզի այն ժամանակվա առաջնորդարանի ընդարձակ տարածքը և շենքերը գերծանրաբեռնվածությամբ հյուրընկալում էին հազարավոր գաղթականների, ուստի Մելիք-Թանգյան սրբազանի աջակցությամբ բազմաթիվ անօթևան հայ տարագիրներ տեղավորվում են հայկական գյուղերում, այդ թվում՝ Մուժումբար մեծ ու շեն գյուղում: Պատահաբար հայրս բնակություն է հաստատում մուժումբարցի Դանիել և Սոֆյա Զաքարյանների տանը: Նրանց դուստրը՝ Վարդանուշը, որ Թավրիզի թեմական միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ապրում էր Թավրիզում՝ հարազատների մոտ, և աշխատում իրենց հարևան հայուհու կարի արհեստանոցում, իր հայրական տուն այցելելիս հանդիպում է հորս, և այդ ծանոթությունը խորանալով՝ հանգում է հայկական մի նոր

1896թ. մանկավարժական գործունեությամբ զբաղվել: 1897-ին մեկնել է Սանկտ-Պետերբուրգ և մինչև 1900թ. ուսանել տեղի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: 1901թ. ձեռնադրվել է վարդապետ, կարգվել Տաթևի վանքի վանահայր և Սյունյաց թեմի փոխառաջնորդ: Հայադրբեջանական ընդհարումների ժամանակ (1905-1906 թթ.) նա Կապանի Հայկական գյուղերի պաշտպանության կազմակերպիչներից էր: 1906-ին Մայր Աթոռի դիվանապետն էր: 1907-ին ցարական կառավարությունը նրան աքսորել է Ղրիմ՝ Սբ Խաչ վանք: 1909-ին ազատվել է աքսորից և վերադարձել Մայր Աթոռ: 1912թ. Ատրպատականի թեմական պատգամավորական ժողովը նրան ընտրել է Ատրպատականի թեմի առաջնորդ. այդ պաշտոնում նա մնացել է մինչև կյանքի վերջը՝ 1948թ.: 1914թ. ձեռնադրվել է եպիսկոպոս, 1917-ին՝ արքեպիսկոպոս: 1917-ին Գևորգ Սուրենյանց կաթողիկոսի կոնդակով նա կարգվել է նաև Վասպուրականի Հայոց թեմի առաջնորդ: Ներսես արք. Մելիք-Թանգյանը գրել է նաև մի շարք գիտական բարձրարժեք գրքեր և հոդվածներ (Մելիք-Թանգեան Ն., Շուշուց դէպի Հին-Նախիջեւան, Երեւան, 2008, տե՛ս գրքի առաջաբանը՝ էջ 5-13, հեղինակ՝ Գ. Ստեփանյան: Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, հ. Ե., Երևան, 1999, էջ 548, հ. Զ, Երևան, 1999, էջ 923: ՀՀՀ, հ. 3, էջ 649: Ով ով է, հ. 2, էջ 77):

օջախի կազմավորմանը: Մի քանի զինակից ընկերների ներկայությամբ, պսակադրության պարզ արարողությունը տեղի է ունենում 1922թ. դեկտեմբերի 26-ին Թավրիզում: Հայրս այս ամուսնության արձանագրությունը գրել է 1915թ. մայիսի 4-ին Վանում գտած և խնամքով պահած Ավետարանի 1077-րդ սպիտակ էջում:

1923թ. մայիսին հայրս մի քանի ընկերների և նորահարսի հետ ուղևորվում է դեպի Իրաք՝ երկաթգծի շինարարությունում աշխատանք գտնելու հույսով: Մեր օրերում Թավրիզ-Համադան շուրջ 750 կմ ասֆալտապատ մայրուղին հնարավոր է անցնել 7-8 ժամում: Բայց 1923թ. լեռնային խորդուբորդ, նեղ ճանապարհով ոչ մի մեքենա չէր երթևեկում, եղած փոխադրամիջոցները բեռնասայլերն ու մարդատար սայլերն էին: Մերոնք այդ տարածությունը շատ դժվարություններով անցնում են 25 օրում: Համադան քաղաքում հիվանդանալով՝ հորս չի հաջողվում իր ընկերների հետ գնալ Բաղդադ: Նա, դեպքերի բերումով, բնակություն է հաստատում Իրանի արևմուտքում գտնվող քրդախոս Քերմանշահ քաղաքում, որտեղ կարող էր նաև մարդկանց հետ հարաբերվել իր իմացած քրդերենով: Իրաքի սահմանի մոտ՝ Քերմանշահ նահանգում, քարյուղի[391] հանքերի հայտնաբերումով անգլիացիներն իրենց տիրապետության մեջ գտնված այդ գաղութում շատ գործեր էին սկսել՝ աշխույժ առևտուր, քարյուղի և այլ ապրանքների փոխադրում և այլն: Քերմանշահում հաստատվելով՝ հայրս իր ընդունակության և աշխատասիրության շնորհիվ դառնում է բեռնատարի սեփականատեր և մեքենավար: Քերմանշահում նա ունենում է երեք զավակ. Պարգևը ծնվում է 1924թ., Անժելը՝ 1927թ., իսկ ես՝ 1930թ.:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հակաֆաշիստական ճակատի երեք պետությունների՝ ԱՄՆ-ի,

[391] Քարյուղ-նավթ:

Մեծ Բրիտանիայի և Խորհրդային Միության ռազմական ուժերը՝ որպես ֆաշիստական Գերմանիայի դաշնակից երկիր, ներխուժում են Իրան: Ռեզա շահ Փահլավին հրաժարական է տալիս հօգուտ որդու՝ Մոհամեդ Ռեզա Փահլավիի: Ամենուրեք տիրում էր անկայուն վիճակ: Շարունակվող կողոպուտները պատճառ են դառնում, որ Առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքները տեսած հայրս 1942թ. ընտանիքը հապճեպ փոխադրի մայրաքաղաք՝ Թեհրան, որտեղ համեմատաբար ավելի ապահով էր: Այստեղ զավակները մեծանում են, շարունակում իրենց կրթությունը, մասնագիտանում են, ապա ամուսնանում և ընտանիք կազմում: Պարգևը երկար տարիներ ճանապարհաշինության փորձառու մասնագետ էր, վարիչ, կինը Քնարիկ Տեր-Բաղդասարյանն էր՝ անվանի բանաստեղծներ Գեղամ Սարյանի և Արամ Գառոնեի կրտսեր քույրը, ունեցան երեք զավակ՝ Անահիտ, Ռաֆֆի և Ռուբիկ: Անժելը մաթեմատիկայի և ֆրանսերենի ուսուցչուհի էր, հետագայում աշխատում էր Իրանի նավթընկերության Լոնդոնի կենտրոնում: Ամուսինը կիպրահայ Գրիգոր Ալթունյանն էր, զավակները՝ Վաչագան, Հասմիկ և Վազրիկ Ալթունյաններ: Իմ տիկինը Էմմա Հարությունյանն է՝ մասնագիտությամբ ճարտարագետ, ունենք երեք զավակ՝ Նարբե, Նեննեթ և Նաիրի:

Հայրս Քերմանշահում իր համեստ հնարավորություններով հովանավորում էր կարիքավոր հայրենակիցներին՝ նախ իր հետ եղբայրություն կնքած, անբաժան զինակից քեռի Վահանին: Երբ հայ մարտիկները թուրքական բանակի հետ կռվի ժամանակ նահանջում են, դաշտում, փորից վիրավոր ընկած, շարժվել չկարողացող զինվոր Վահանը, մոտեցող թուրքերին տեսնելով՝ աղերսական ճիչերով կանչում է փախչող ընկերներին, որ իրեն ազատեն, բայց թշնամու մոտ լինելու պատճառով ոչ ոք չի համարձակվում օգնության գնալ: Իր կյանքը վտանգելով՝ հայրս թշնամու գնդակների տարափի տակ վերադառնում է զինվորի մոտ,

ձին քշելու ընթացքում մի ձեռքով հմտորեն բռնում և գետնից վեր է բարձրացնում նրան, տանում, հասցնում արագ սլացող խոհանոցային սայլին, կարգադրում հապճեպ տեղափոխել բուժման կետ և այդպիսով փրկում է Վահանի կյանքը: Ապա բուժման վայրում վիրավոր զինվորին այցելելու ժամանակ Վահանի խնդրանքով, զինակիցների ներկայությամբ երդվում է սրի վրա և եղբայրանում Վահանի հետ: Ցավոք, այդ օրերի հայկական բանակի ունեցած անբավարար հնարավորությունների պատճառով՝ բուժկայանը, որ եղել է մի հասարակ վրան, չի ունեցել որևէ մասնագետ վիրահատող բժիշկ և Վահանի վերքը լիակատար բուժում չի ստացել, և նա մինչև կյանքի վերջը միշտ վտիտ էր ու անառողջ: Մենք նրան քեռի Վահան էինք ասում, իսկ նա մեզ՝ ձեքի, այսինքն՝ ձագուկ: Անչափ հարազատ էր, սիրալիր էր բոլորիս հետ, մեզ համար մտերիմ խաղընկեր էր, հաճախ պատմություններով զբաղեցնում էր մեզ: Քեռի Վահանը մինչև իր մահը բնակվում էր մեր տանը՝ իրեն հատկացված սենյակում: Նա ամեն ինչ չէր կարող ուտել: Մեծ զոհողությունների գնով մայրս էր նրան խնամում: Իսկ նա մորս քույրիկ էր ասում, և, իրոք, մայրս հարազատ քրոջ պես էր վարվում նրա հետ:

Մեկ ուրիշը՝ հաշմանդամ Գևոն՝ հորս հայրենակիցը, Սարդարապատում Թուրքի գնդակը վնասել էր նրա աջ արմունկը և ոտքի ջիլը, անդամալույծ էր, աջ ձեռքը և ոտքը չէր կարողանում գործածել: Նրա հագուստը, ուտելիքը, անգամ ծխախոտը հոգում էր նրա զինակից հայրս: Նա ամիսներով մեր տանն էր բնակվում, հաճախ այցելում էր հայկական գյուղերի սրբավայրերը, աղոթում, մոմ վառում, Տիրոջից խնդրում բուժում: Նա բուժվելու հույսով գրբացներին ու գուշակներին էլ էր դիմում:

Հորս նյութական օգնության շնորհիվ էին գոյատևում անտուն և թափառական Խզոն կամ անապավեն, ազնիվ,

գրագետ, բայց առողջությունը քայքայված Սրապիոնը... և դեռ էլի ուրիշներ...

Մեր տունը հարազատ օջախ էր Քերմանշահ այցելող ամեն մի հայրենակցի համար: Այդ ընկերները գործ փնտրելու հույսով գալիս էին Քերմանշահ, գիշերում մեր տանը, երբեմն էլ օրերով մնում: Իսկ կուսակցական գործուղումով Քերմանշահ ժամանած դաշնակցականները կամ Իրաքով Գերմանիա մեկնող կուսակցական սուրհանդակները, ինչպիսին էր Քառ Մովսեսը, ուրիշ ապահով հանգրվան, քան հավատարիմ գաղափարակից Երվանդի տունը, չունեին: Իսկ իմ բազմաչարչար, համբերատար մայրս՝ Վարդանուշը, անխոնջ և անտրտունջ, խարույկի վրա ջուր էր տաքացնում, հագուստները ձեռքով լվանում, կերակուր եփում, հոգատարորեն կերակրում և մինչև իսկ ճանապարհի համար ուտելիք տալիս ու ճանապարհում էր ամուսնու հայրենակիցներին ու զինակիցներին:

Հայրս արտակարգ առողջ էր, ֆիզիկապես դիմակայում էր ամեն մի դժվարության, մարմնական ցավեր կրելու անհավատալի կարողություն ուներ: Հիշում եմ, որ իր հայրենակից վիրաբույժ Ալբերտ Կյուրեղյանը՝ Քերմանշահի միակ վիրաբույժը, 1936թ. հենց մեր տան մեջ՝ հորս փորի վրա, մեծ և լուրջ վիրահատություն արեց: Սարսափելի ցավերին առանց թմրեցնելու դիմանալու համար հայրս մի ոլորած սրբիչ ատամների մեջ սեղմած՝ արթուն վիճակում կրեց այդ ցավերը:

Ավելի քան երկու ամիս նա պառկած էր անկողնում և աշխատել չէր կարողանում: Այդ օրերին մեր բակում էին բնակվում նրա հայրենակից Արշակը և Ժենիկը, իրենց փոքրիկ զավակով: Արշակն էլ վարորդ էր, և ակամա անիվի տակ տրորել էր իր բեռնատարի ստվերում քնած մի քրդի: Դատավորը, լսելով վկաներին, Արշակին անմեղ էր ճանաչել, բայց ազատ արձակելու համար, ըստ օրենքի, մեծ գումար արյան գին էր նշանակել: Արշակի ջահել կինը ոչ մի ծանոթ

կամ բարեկամ չուներ, որ ի վիճակի լիներին գումարը մուծել: Նա հուսահատ, փոքրիկ երեխան գրկին՝ արտասվալից աչքերով եկավ անկողնում պառկած հորս մոտ: Հայրս թույլ և վատառողջ, առավոտյան կանուխ անկողնուց դուրս ելավ ու գնաց: Երեկոյան Արշակին բանտից ազատած միասին տուն վերադարձան: Հայրս մեն-մենակ իր ֆրանսիական «Բեռլե» բեռնատարի միաձույլ կաուչուկի ծանր անիվները հանել, տարել գրավ էր դրել, պետք եղած գումարը հայթայթել, անմիջապես մուծել էր դատարան և իր ընկերոջը բանտից ազատել, բերել էր, որ հանձնի կնոջն ու զավակին: Այդ դեպքից նա երկկողմ գրիժա՝ ճողվածք, ստացավ և վեց տասնամյակ, հետագա բուժումներով հանդերձ, մինչև կյանքի վերջը տառապում էր ցավերից և անհանգստությունից:

Շատ տարիներ անց՝ 1967թ., Թեհրանի մոտ, մեր այգում, զբոսանքի էինք գնացել: Զավակներս փոքր էին: Վերադարձին արդեն ուշ երեկո էր, բոլորին մեքենայում տեղավորելուց հետո օգնեցի, որ հայրս էլ նստի երեխաների մոտ՝ հետևի նստարանին: Երբ դուռը փակեցի, ուզում էի շարժվել, հայրս իր բարբառով հանգիստ ասաց. «Էտա տուռը պա՛ց»: Ոչ մեկս չհասկացանք՝ ինչո՞ւ պետք է դուռը բացենք, երբ ամեն ինչ պատրաստ է մեկնելու համար: Մեկ երկու անգամ կրկնեց. «Քեզի կըսեմ՝ էտա տուռը պա՛ց»: Ճարահատ մեքենայից իջնելով՝ փորձեցի դուռը բացել: Չհաջողվեց: Մտածելով, որ հագուստի մի մասը դռան արանքն է մնացել, ոտքս հենեցի մեքենային և ամբողջ ուժով դուռը դեպի ինձ քաշեցի: Հազիվ դուռը բացվեց, բայց հորս աջ ձեռքի չորս մատների կաշին և միսը պլոկված էին և ոսկորներն էին երևում: Նա նստելուց աջ ձեռքով բռնել էր մեքենայի բաց դռան վերնամասից, և այդ ժամանակ ես դուռը թափով փակել էի: Բոլորիս անհանգստությանը չափ չկար, իսկ նա հանդարտ, չորս մատների պլոկված կաշին և միսը մյուս ձեռքով հրում էր ցած՝ ոսկորները ծածկելու համար: Հետո թաշկինակով մատները փաթաթեց և դրեց ձախ թևի

տակ: Հազիվ կարողացանք համոզել, որ դիմենք հիվանդանոց: Բավականին երկար տևեց մաշկի կարելը, ոչ մի տրտունջ չլսեցինք նրանից:

Քերմանշահում՝ մեր համեստ տանը, հաճախ էին հավաքվում նրա զինակից ու հայրենակից ընկերները, խոսում ու պատմում էին իրենց դառը հուշերը, իսկ երբեմն էլ տխրում ու արտասվում էին: «Հայաստան», «Հայրենի տուն», «Ա՜խ, մեր երկիր» բառերը, ֆիդայական երգերի հետ խառնված, միշտ լսվում էին մեր տանը: Նրա մտերիմ ընկերը՝ կաշվի գործարանում աշխատող շատախոսի Մանուկը, առանց առաջարկության սպասելու, իր բարձր, զուլալ ձայնով սկսում էր երգել.

Գարուն եկավ, սարերի ձյունն հալած է,
Սուրհանդակ հայդուկի ճամփան բացված է...

Հորս և նրա ընկերների հավատամքն էր, որ օտար հողի վրա տուն չշինեն, որովհետև համոզված էին, որ «Մեր տեղը Հայաստանն է», և շուտ թե ուշ վերադառնալու են Երկիր: Երբ 1946 թվին հայրենադարձության լուրը տարածվեց, նա անմիջապես իր ընկերների հետ խումբ կազմեց, որ իր բեռնատարով տունը փոխադրի Հայաստան: Ցավո՜ք, քաղաքական իրադարձությունների հետևանքով նրա ցանկությունը չկատարվեց:

1979թ. ամռանը՝ շահի իշխանության անկումից հետո, երբ կարողացանք Հայաստան այցելել, աննկարագրելի էր նրա ուրախությունը. ծնկաչոք համբուրեց հայրենի հողը: Նրա համար հրաշք էր, երբ նախկին քարուքանդ Հայաստանը տեսավ ծաղկուն և շեն: Նա ամեն քայլափոխի մեզ պատմում էր իր տեսած երկրի և բնակչության թշվառ վիճակի, ավերածությունների, սովի ու հիվանդությունների մասին և հպարտանում էր եղած նվաճումներով: Պատահում էր, որ զբոսավարը լսում էր նրա տված տեղեկությունները և զարմանում դրանց ստույգության վրա:

Սարդարապատում նա, շարունակելով զբոսավար օրիորդի խոսքերը՝ որպես կենդանի վկա, հստակորեն նկարագրեց այդ ահեղ հերոսամարտի մանրամասները, թե որ կողմից և ինչպես էր թշնամու կանոնավոր զորքը գրոհում, թե որտեղ էին մեր դիրքերը: Ասաց, որ թուրքական բանակի նպատակը մինչև վերջին հայի բնաջնջումն էր: Պատմեց, թե ինչքան պարզ զենքերով էին կռվում հայերը, մինչև անգամ սովորական որսորդական հրացաններով, թե ինչպես մեր ժողովրդի անձնվեր զինվորները, կենաց և մահու կռիվ էին տալիս այդ ճակատագրական պատերազմում, թե ինչպես բազմաթիվ պատանիներ և կանայք ուտելիք, փամփուշտ կամ ջուր էին հասցնում կռվողներին, թե ինչպես կռվողների կողքին՝ խրամատում, լցնում էին դատարկ փամփուշտները, թե ինչպես կանայք կապում էին վիրավորների վերքերը: Նա հուշարձանից հարավ-արևմուտք գտնված դաշտում ցույց տվեց այն խրամատի վայրը, որտեղ իր մի խումբ հայրենակիցների հետ կռվել էր թշնամու դեմ: Նա պատմեց, թե ինչպես էր ականատես եղել իր կողքին կռվող ընկերների մահվանը... և հուզմունքից չկարողացավ շարունակել իր խոսքը: Շուրջն օղակ կազմած՝ մեր և օտար խմբերի զբոսաշրջիկները, տեղում քարացած, լուռ լսում էին:

Մի քանի ուրիշ շրջագայություններից հետո հայրս մեզ հայտնեց, որ ինքն ուզում է այցելել ծրագրում չնախատեսված այլ վայրեր: Չնայած այն ժամանակվա խիստ սահմանափակումներին՝ խմբի պատասխանատու տիկին Նորան բարյացակամորեն ընդառաջեց իր հայրական տան նախկին հարևան և վաղեմի ծանոթ հորս առաջարկին: Այնուհետև, քանի օր շարունակ, հյուրանոցին կից օտարերկրացիներին հատկացված, առևտուրը միայն տարադրամով կատարվող խանութից նա կապոցներով շոկոլադ, կոնյակ և այլ նվերներ գնելով՝ տաքսի էր վարձում և ուղևորվում այն գյուղերը, որոնցում բնակվում էին գաղթական արևմտահայեր, մասնավորապես՝ վանեցիներ: Փնտրում էր տարեցներին,

1804թ. Քերծ գյուղի հիմնադիր երկու եղբայրների՝
Գառնիկ Կյուրեղյանի և Գրիգոր Կավոիկյանի տոհմածառը (կազմող՝ Վարուժան Կյուրեղյան)
(Կյուրեղյան գերդաստանի աղջիկ զավակները և հարսները ներկայացված են իրենց ամուսինների ազգանուններով)




Գառնիկ Կյուրեղյան
1804թ. գաղթել են
Քերծ գյուղ
Հունան Կյուրեղյան
(1786-1888թթ.)
Խաչո
Մկրտիչ
Մարգարիտ
Հակոբ, Զարդար
Կյուրեղյաններ
Երվանդ, Վարդանուշ
Կյուրեղյաններ
երկրորդ ամուսնություն
Երվանդ, Հեղինե Կյուրեղյան
Առաջին Ամուսնություն
Ղազարոս
Ենթադրվում է, որ զոհվել է Սևաստոպոլում, Հայրենական պատերազմի ժամանակ
Պարգև, Քնարիկ
Կյուրեղյաններ
Անահիտ, Ալեք Տերյան
Ալմարա, Արթին Նազարյան
Արբի, Ժուանիթա Տերյան
Դվին
Տերյան
Բաֆֆի, Անահիտ Կյուրեղյան
Էսթինե. Արմեն Բաբախանյան
Քլոյի
Բաբախանյան
Շարիս, Պատրիկ Փոլադյան
Լիա
Էմի
Նոա
Փոլադյան
Փոլադյան
Փոլադյան
Մելինե, Զարեհ Զաքարյան
Անդրեա
Քեյլա
Զաքարյան
Զաքարյան
Ռուբիկ, Արմինե Կյուրեղյան
Թենի, Արա Սարոյան
Էմին, Նադին Կյուրեղյան
Անժել, Գրիգոր
Ալթունյաններ
Վաչագան, Կարինե Ալթունյան
Գրեգ Ալթունյան
Լառա Ալթունյան
Քըրք Ալթունյան
Հասմիկ Ալթունյան
Վազրիկ, Սքառլետ Ալթունյան
Փոլեթ Ալթունյան
Առլեն Ալթունյան
Վարուժ, Էմմա
Կյուրեղյաններ
Նարբե, Քարոլին Կյուրեղյան
Նիքըլըս Կյուրեղյան
Քոլին.Կյուրեղյան
Նենեթ, Արմեն Աթաբեկյան
Թալին Աթաբեկյան
Արին Աթաբեկյան
Նաիրի, Մարտիկ Բեգի
Սանե Բեգի
Առնե Բեգի


Ղազարոս, մահ ծաղկախտից
Գառնիկ, Մանյա Հարությունյան
Գրիգոր, Մարուս Հարությունյան
Լենա, Սուրիկ Ղուլյան
Խաչիկ Ղուլյան 1982
Ենոք, Լիլի Հարությունյան
Գրիգոր 1981 և Քրիստինե 1982
Լարիսա, Աշոտ Սահակյան
Արքուր 1983, Գոհար 1984, Գևորգ 1993
Օնիկ, Լարիսա Հարությունյան
Գառնիկ 1997, Ինեսսա 2003, Գոռ 2006
Օնիկ Հարությունյան (մահ.՝ 1936թ. աքսորավայրում)
Ներսես Հարությունյան (մահ.՝ մանուկ հասակում)
Վարդան Հարությունյան (մահ.՝ մանուկ հասակում)
Ենոք, Մարգարիտ
Հարություններ
Մկրտիչ, Ոսկո
Հարություն-
յաններ
Քնարիկ, Սուրեն Շահբազյաններ
զավակները բնակվում են Ուկրաինայում
Սեդա, Լյովա, Ծովինար, Վովա, Սվետլանա, Լիլիթ, Սլավիկ
Լիլիթ, Սլավիկ, Սաշիկ, Սուսան, Սքաննա,
Ռուբիկ, Ոսկի Ղարագաղյան
Ասիա 1986, Միեր 1988, Մխիթար 1989
Ներսես, զոհվել է Ղարաբաղում
Էլմիրա, Անուշավան Վելյան
Գարիկ 1989, Անահիտ 1991,
(Մարտա+Արման՝ մահացած հրդեհից)
Ասյա, Արարատ Ղարագաղյան
Ռիմա, Արարատ Ներսեսյան
Օֆելյա, Ռուբեն Աղաջանյան
Լուսինե
Սուրիկ Օգսենի Մանուկյան
Էդիկ, ռուս կին ունի
Ռուսաստան են բնակվում
Օգսեն Մանուկյան
Հայկուշ, ?? Մանուկյան
Ամուսինը մահացել է
Մարիետ, ունի
երկու տղաներ ?
Մարգարիտ Հարությունյան

ալեհեր գյուղացիներին և հարցնում իր հայրենակիցների և հարազատների մասին: Այդպես Երևանում և շրջակա գյուղերում գտավ իր ազգականներին՝ իր հորեղբոր՝ Մկրտիչի որդիներից մեկի՝ Օգսենի տղային՝ Սուրեն Օգսենի Մանուկյանին, Գրիգոր Հարությունյանին, Իշխան Զազոյանին, բայց, ցավո՛ք, Ղազարոսի մասին այդպես էլ նոր բան չիմացավ:

Մի առավոտ, երբ «Արմենիա» հյուրանոցում նախաճաշում էինք, մեզ լուր տվեցին, որ դրսում սպասող այցելուներ ունենք: Միասին դուրս ելանք: Հորս տեսնելով՝ նրանք գրկախառնվեցին, արտասվեցին, համբուրվեցին: Ծանոթացանք հայրիկիս նոր գտնված հորեղբոր զավակների ու թոռների հետ: Ողջագուրվեցինք և լուսանկարվեցինք: Այնուհետև ևս մի քանի հանդիպումներ ունեցանք մեր հարազատների հետ:

1992թ., երբ ես Մեղրիի կամրջի կառուցման կապակցությամբ ՀՀ տրանսպորտի և հաղորդակցության նախարար պարոն Հենրիկ Քոչինյանի հրավերով մեկ ամիս եղա Մեղրիում[392], առիթից օգտվելով, այցելեցի Երևան, հանդիպեցի Գառնիկ և Մանյա Հարությունյաններին:

Եվ ահա, առաջին հանդիպումից ուղիղ երեսուն տարի անց՝ 2009թ. հուլիսին, սույն գրքի վերահրատարակման առիթով Երևանում եղած օրերին ինձ համար հոգու պարտք համարեցի շարունակել հորս փնտրտուքը: Երևանում գտա հորս այլ հարազատների, այցելեցի և կապ հաստատեցի նրանց հետ: Քերծ գյուղի հիմնադրումից 200 տարի հետո

---

[392] **Վարուժան Կյուրեղյանը** 1948թ. ընդունվել է Թեհրանի պետական համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետ, սակայն, մեկ տարի անց ուսանողական բողոքի շարժմանը մասնակցելու պատճառով հեռացվել է: 1963թ. վերականգնվել է և 1966-ին ավարտել համալսարանը՝ ստանալով շինարարճարտարագետի դիպլոմ: Նա մի քանի տասնամյակ Իրանի տարբեր նահանգներում կառուցել է մի շարք ճանապարհներ, գործարաններ, պետական և մասնավոր շինություններ: Նա նաև մասնագիտական, մշակութային և կրթական մի քանի կազմակերպությունների հիմնադիր անդամ է:

երկու եղբայրների՝ Գրիգոր և Գառնիկ Կյուրեղյանների տոհմածառը հասել է յոթերորդ և ութերորդ սերունդներին: Այդ հարազատների հետ Երևանի «Հաղթանակ» զբոսայգում հանդիպում կազմակերպեցինք և ի հիշատակ՝ լուսանկարվեցինք»:

Երվանդ Կյուրեղյանը Տաճատ Թերլեմեզյանի հետ (1979թ., օգոստոս, «Արմենիա» հյուրանոց):

Երվանդ Կյուրեղյանը Հովհաննես Շիրազի հետ (Երևան, 1979թ.):



Սուրիկ Օգսենի Մանուկյան, Երվանդ Կյուրեղյան, Գառնիկ Հարությունյան (Երևան, 1979թ.):

Տիկին Աղրիանե Մանուկյան (վանեցի), Երվանդ Կյուրեղյան, «Քուրդ»՝ Ջանի Գասպարյան (շապախցի):

Երվանդ Կյուրեղյանը կնոջ՝ Վարդանուշի հետ:

Երվանդ Կյուրեղյանը Մարդարապատի հուշահամալիրում (1979թ., օգոստոս):

Երվանդ Կյուրեղյանը կնոջ հետ Լոնդոնում (1964թ.):

Երվանդ Կյուրեղյանը ազգականների հետ:
Կանգնած՝ 1. ?: 2. Անժել: 3. Վարդանուշ: 4. ?: 5. Սուրեն: 6. Երվանդ: 7. Գրիգոր Հարությունյան: 8. Հին գինակից ընկեր: 9. Էմմա: 10. ?: 11. Վարուժ:
Նստած՝ 1. Նաիրի: 2. Նենեք: 3. Լարիսա: 4. ?: (Երևան, 1979թ., օգոստոս):

1-ին շարքում նստած՝ Շարիս, Ալմարա: 2-րդում՝ Անժել, Քնարիկ, Երվանդ, Էմմա, Վարուժ, Անահիտ: 3-րդում՝ Էսթիեն, Մելինե, Թենի: 4-րդում՝ Ռուբիկ, Վազրիկ, Արբի, Նաիրի, Նենեք, Վաչագան, Հասմիկ, Անահիտ, Բաֆֆի, Արմենե, Ալեք, Նարբե (1988թ.):

Կանգնած՝ Նենեք, Էմմա, Նաիրի, Նարբե Կյուրեղյաններ, Անահիտ և Ալեք Տեր-Պողոսյաններ, Արմենե և Անահիտ Բաբախանյաններ, Բաֆֆի և Ռուբիկ Կյուրեղյաններ, Արբի Տեր-Պողոսյան: Նստած՝ Թենի և Քնարիկ Կյուրեղյաններ, Արտակ սրբազան Մանուկյան, Երվանդ Կյուրեղյան: Առաջին շարք՝ Շարիս, Էսթիեն, Մելինե Կյուրեղյաններ, Ալմարա Տեր-Պողոսյան (Թեհրան, 1979թ.):

Երվանդ Կյուրեղյանը որդու՝
Վարուժանի ընտանիքի հետ:



Նարբե, Քարոլին, Նիկոլաս,
Քոլին Կյուրեղյաններ:

Արմեն Աբաբեկյան, Նենեք Կյուրեղյան-Աբաբեկյան, Արին, Թալին Աբաբեկյաններ:

Ձախից՝ Արմեն Աբաբեկյան, Նենեք, Վարուժ, Էմմա Կյուրեղյաններ,
Քարոլին Գեբասիմյան- Կյուրեղյան, Նաիրի Կյուրեղյան Բեգի, Նարբե
Կյուրեղյան, Մարտիկ Բեգի (Վարուժան Կյուրեղյանի 70-ամյակի առթիվ, 2000թ.):

Վարուժան Կյուրեղյանի ծննդյան
տարեդարձին (2.10.91):
Վարուժան, Նենեք, Նարբե, Էմմա,
Նաիրի և Երվանդ Կյուրեղյաններ:

Նաիրի Կյուրեղյան,
Մարտիկ Բեգի,
Մանե Բեգի, Առնե Բեգի:

Վաչագան, Կարինե, Գրեգ, Լառա, Քրրք Ալթունյաններ:

Վազրիկ, Սքառլեթ, Փոլեթ, Աոլեն Ալթունյաններ:



Զարեհ, Մելինե, Անդրեաս, Քեյլա Զաքարյաններ:

Վերջին շարքում՝ ձախից՝ Շարիս Փոլադյան, Ժուանիտա, Դվին Տերյաններ, Նեներ Աբաբեկյան, Ալեք Տերյան, Նաիրի և Մարտիկ Բեգի, Քարոլին, Արմինե, Նարբե Կյուրեղյաններ, Էսթինե Բաբախանյան, Էմին Կյուրեղյան: Միջտեղի շարքում՝ Բաֆֆի, Անահիտ, Էմմա, Քնարիկ, Վարուժ, Ռուբիկ Կյուրեղյաններ: Առաջին շարքում՝ Արբին և Ալմարա Նազարյաններ, Թենի Կյուրեղյան, Մելինե Զաքարյան, Լիա և Պատրիկ Փոլադյաններ, Արբի Տերյան:

Աջից՝ Ալմարա և Արքին Նազարյաններ, Ալեք, Անահիտ, Արքի և Ժուանիտա Տերյաններ:



Վարուժան Կյուրեղյան (2009թ., հուլիս, Երևան)

Վարուժան և Էմմա Կյուրեղյանները հայապանաբնակ ազգականների՝ Մարուսյա, Օնիկ, Լարիսա, Գառնիկ, Իենեա, Գոռ Հարությունյանների հետ (2009թ., հուլիս, Երևան, «Հաղթանակ» զբոսայգի)

Վարուժան և Էմմա Կյուրեղյանները հայապանաբնակ ազգականների՝ Ոսկի, Ասյա, Ռուբեն Ղարագաղյանների հետ (2009թ., հուլիս, Երևան, «Հաղթանակ» զբոսայգի)

Վարուժան և Էմմա Կյուրեղյանները հայապանաբնակ ազգականների՝ Արքուր, Գևորգ, Լարիսա, Գոհար Հարությունյանների հետ (2009թ., հուլիս, Երևան, «Հաղբանակ» զբոսայգի)

Վարուժան Կյուրեղյանը հայապանաբնակ ազգականների հետ (2009թ., հուլիս, Երևան)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ս., Վանից Դետրոյթ. հայկական ցեղասպանությունից մազապուրծ, Երևան, 2001:
2. Ա-Դո, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները, Երևան, 1912:
3. Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը (անհայտ գրողի օրագիրը), ձեռագիրը հայտնաբերեց և հրատարակման պատրաստեց Ս. Հարությունյանը, Երևան, 1993:
4. Ալպոյաճեան Ա., Իրաքի հայերը, Երևան, 2003:
5. Ակինեան Ն., Գավազանագիրք կաթողիկոսաց Ախթամարա, Վիեննա, 1920:
6. Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976:
7. Առաքել Դավրիժեցի, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, 1988:
8. Ասլանյան Ա., Փեսանդաշտը պաշարված էր (դրվագներ արևմտահայ ցեղասպանությունից), Երևան, 1990:
9. Ասք Անդրանիկ Զորավարի մասին, բանահավաք և մշակող՝ Սուրեն Սահակյան, Երևան, «Լուսակն» հրատ., 2008:
10. Ավագյան Ն., Հայկական ժողովրդական տարազը, Երևան, 1983:
11. Ավագյան Ս. (Սերինե), Արճակ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 8, Երևան, 1978:
12. Ավո, Տաճատ Թերլեմեզյան, վավերագրական պատում, Երևան, 2002:
13. Ատանալեան Կ., Յուշարձան հայ աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցւոյ, Ֆրեզնո, 1952:
14. «Արաքս» հանդես, գիրք Ա, Ս. Պետերբուրգ, 1898:
15. Արզումանյան Մ., Սարգիս Մուսայելյան, Երևան, 1955:

16. Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը. Հայ սպա-
յութիւնը. Շատախ, Երևան, 2002:
17. Աւետիս Ահարոնեանի վերջին ճառը, «Վարագ» պարբե-
րական, Լոս Անջելես, 2007, N 54:
18. Բդոյան Վ., Երկրագործական մշակույթը Հայաստանում,
Երևան, 1972:
19. Բերբերյան Ա., Կարմիր պարտիզանի հուշատետրից,
Երևան, 1956:
20. Գևորգյան Հ., Դրո, կենսագրական, հուշեր, վկայութ-
յուններ, Երևան, 1991:
21. Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի հերոսապա-
տումից, Երևան, 2006:
22. Գևորգյան Հ., Դրո, Երևան, 2007:
23. Դալլաքյան Ղ., Հոկտեմբերի արևը Շամշադինում,
Երևան, 1969:
24. Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն,
Երևան, 2003:
25. Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, թարգ-
մանությունը, ներածությունը և ծանոթագրությունները
Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1971:
26. Թաշճեան Վ., Իշխանը, Վանայ Իշխանի կեանքն ու գոր-
ծունէութիւնը, Երևան, 1994:
27. Թորլաքեան Մ., Օրերուս հետ, Պեյրութ, 2001:
28. Թուրշյան Հ., Սարդարապատի հերոսամարտը, Երևան,
1969:
29. Լազեան Գ., Դէմքեր հայ ազատագրական շարժումէն,
Մոնթեբելո, Կալիֆորնիա, 1993:
30. Լալաեան Ե., Վասպուրական, նշանաւոր վանքերը,
պրակ 1, Թիֆլիս, 1912:
31. Լալայան Մ., Յեղակրոն և Տարոնական շարժումներն ու
Գարեգին Նժդեհի գործունեությունը, Երևան, 2001:
32. Խանասորա Վարդանի հիշատակարանը, գրական մշա-
կումը և առաջաբանը Ս. Վրացյանի, Երևան, 1992:

33. Խաչատրյան Հ., Պետրոսյան Տ., Հայկազունք, Երևան, 2002:
34. Խրիմյան Հայրիկ, Երկեր, հրատարակության պատրաստ-
եցին Հ. Պետրոսյան, Ա. Մաղոյան, Երևան, 1992:
35. Կարապետյան Մ., Հայաստանի Հանրապետության բա-
նակը (1918-1920), Երևան, 1996:
36. Կոթիկյանի Ա., Խութեցի Հովնան, Երևան, 1946.
37. Հախնազարեան Յ., Գողթան գավառ (պատմագրութիւն
եւ յուշագրութիւն), Թեհրան, 1991:
38. Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1801-1879թթ.),
Երևան, 1959:
39. Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1879-1917թթ.),
Երևան, 1967:
40. Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. Զ, Երևան, 1934:
41. Համբարձումեան Ռ., Գարեգին Նժդեհ, Երևան, 2001
42. Համբարձումեան Ռ., Գարեգին Նժդեհ (համառօտ կենսագ-
րական, ասոյթներ եւ կենսատարեգրութիւն), Երևան, 2003:
43. Համբարձումեան Ռ., Գարեգին Նժդեհ, կենսագրական
յաւելումներ, անտիպ գրութիւններ ու խորհրդածու-
թիւններ, Երևան, 2005:
44. Համբարձումյան Հ., Նոր Բայազետի գավառը, 1828-
1913թթ., Երևան, 2008:
45. Հայ չինականի աշխատանքի յերգերը, կազմեց յեվ և
խմբագրեց Արամ Ղանալանյան, Երևան, 1937:
46. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բա-
ռարան, հ. 1, Երևան, 1986:
47. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բա-
ռարան, հ. 2, Երևան, 1988:
48. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բա-
ռարան, հ. 3, Երևան, 1991:
49. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բա-
ռարան, հ. 4, Երևան, 1998:
50. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բա-
ռարան, հ. 5, Երևան, 2001:

51. Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Երևան, 1967:
52. Հայկական հարց, հանրագիտարան, Երևան, 1996:
53. Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 1, Եր., 1990:
54. Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 2, Եր., 1995:
55. Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 3, Եր., 1999:
56. Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 4, Եր., 2003:
57. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, Եր., 1982:
58. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 8, Եր., 1982:
59. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 11, Եր., 1985:
59. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, Եր., 1986:
60. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա., Եր., 2001:
61. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Բ., Եր., 2002:
62. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Գ., Եր., 2004:
63. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Դ., Եր., 2007:
64. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ե., Եր., 2008:
65. Հայրենի երգեր, Հայրիկ Մուրադյան ձայնից վերծանեց և կազմեց Ա. Փահլևանյանը, Երևան, 1980:
66. Ղազարյան Ա., Լևոնյան Ռ., Հայաստանյայց Ավետարանական եկեղեցին (Հայաստան-Կովկաս), Երևան, 1999:
67. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, աշխարհաբար թարգմանությունը Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1982:
68. Մաքսապետյան Ա., Վասպուրականի իշխանությունը, Վան-Վասպուրականի հերոսամարտը (ժողովածու), կազմող՝ Հ. Փափազյան, Երևան, 1990:
69. Մեսրոպյան Ս., Հերոսամարտ Շատախում և Փեսանդաշտում, Վան-Վասպուրականի հերոսամարտը (ժողովածու), կազմող՝ Հ. Փափազյան, Երևան, 1990:
70. Միրախորեան Մանուէլ, Նկարագրական ուղեւորութիւն ի Հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, մասն Ա, Կ. Պոլիս, 1884:
71. Մխիթարեան Օ., Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930:

72. Մելիք-Թանգեան Ն., Շուշուց դէպի Հին-Նախիջեւան, Երևան, 2008:
73. Մելյան Բ., Լևոն բեկ, Երևան, 1999:
74. Մուտոյեան Յ., Տր. Ջ. Ս. Ըէյնօլտս, դրուագներ անոր կեանքէն, մահուան քառասունքին առթիւ, «Հայաստանի կոչնակ», Նյու-Յորք, 1959, դեկտեմբեր 5, թիվ 49:
75. Մուրադյան Ս., Իրաքի հայ համայնքը, Երևան, 1997:
76. Յովնանեան Ռ., Հայ ազգի նուիրեալ զաւակը, «Վարագ» պարբերական, Լոս Անջելես, 2008, N 55:
77. Յուշամատեան Բաղդադի հայ երկսեռ երիտասարդաց միութեան, Բաղդադ, 1976:
78. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, ալբոմ-ատլաս, հ. Բ, Լոս Անճելըս, 2001:
79. Ներսիսյան Ա., Ավետիք Սահակյան (Հայր Աբրահամ), Երևան, 2003:
80. Ներսիսյան Ա., Կարո Սասունի, Երևան, 2004:
81. Ով ով է, հայեր, կենսագրական հանրագիտարան, հ. 2, Երևան, 2007:
82. Ջելեպյան Ա., Ջորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, կենսագրական ակնարկ, Երևան, 1990:
83. Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Ա, Աթէնք, 1990:
84. Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Բ, Աթէնք, 1991:
85. Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Գ, Աթէնք-Երևան, 1992:
86. Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Դ, Աթէնք, 1995:
87. Պողոսյան Հ., Վասպուրականի պատմությունից, 1850-1900, Երևան, 1988:
88. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1-7, Թեհրան, 1982:

89. Սահակյան Լ., Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007:
90. Սահակյան Լ., Իգդիր-Այգեդիր (հայկական մի տեղանվան պատմալեզվական ստուգաբանություն), «Բանբեր Երևանի համալսարանի», 2004, N 2:
91. Սահակյան Ս., Հակոբ Հարությունյան, Երևան, 1985:
92. Սահակեան Յ., Բաղտասարեան Տ., Էջեր մեր ազատագրական պատմութենէն, Ա մաս, Սահակեան Յ., Երկու տարի հայկական բանակին մէջ: Բ մաս, Բաղտասարեան Տ., Հայաստանի Հանրապետութեան վերջալոյսին, Փարիզ, 1937:
93. Սարհադեան Ս., Կեանքիս յուշերից, Երևան, 2007:
94. Սերովբեան Ս., Ուխտաւորի ճամբաներով, «Ակօս», Ստամբուլ, 13 հոկտեմբեր, 2006:
95. Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Երևան, 1999:
96. Սմբատեանց Մեսրովբ արքեպիսկոպոս, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895:
97. Ստեփանյան Խ.. Ռուբեն Տեր-Մինասյան (կյանքը և գործը), Երևան, 2008:
98. Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյանի գործունեությունը Երկրորդ աշխարհամարտի տարիներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2008, N 2:
99. Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Երևան, 1978:
100. Սուրմալու-Իգդիր, պատմական քառուղիներում, գիտահանրամատչելի ժողովածու, Երևան, 2007:
101. Սօս-Վանի, ճանչնանք մեր հայրենիքը. «Վասպուրական մեր աշխարհ», Աթենք, 1938:
102. Վազգեն, Ատրպատականի գոյամարտը,«Հայրենիք» ամսագիր, Բոստոն,1931, N3:

103. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, հ. Ե, Երևան, 1999:
104. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, հ. Զ, Երևան, 1999:
105. Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հ. Բ, Կահիրե, 1950:
106. Վարդանեան Գ., Ազգային տոմար, Վասպուրականէն մինչեւ Իրաք, Լոս Անճելըս, 1992:
107. Վարդանյան Ս., Հայաստանի մայրաքաղաքները, Երևան, 1995:
108. Վերածին Մ., Զօր. Սեպուհի յուշերը, մանկութիւն, պատանեկութիւն, երիտասարդութիւն, Հալէպ, 1992:
109. Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Փարիզ, 1928:
110. Տէր-Մկրտիչեան Ե., Գանձեր Վասպուրականի, հ. Ա, Պոսթոն, 1966:
111. Տիգրան, Շատախի ինքնապաշտպանութիւնը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1931, N 3, N 5:
112. Տեկանց Ա., Այցելություն ի Հայաստան 1878թ., Երևան, 1985:
113. Տեկանց Ե., Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական (1872-1873թթ.), Երևան, 1991:
114. Ուիլյամս Մ.Օ., Վանը հին ու նոր կոտորածների միջև (անգլերեն), "National Geographic" ամսագիր, 1919, օգոստոս, N 36, էջ 181-184, թարգմ. տե՛ս «Դրօշակ», 2009, N 6:
115. Арутюнян А., Кавказкий фронт 1914-1917 гг., Ер., 1971.
116. Саргизов Л., Ассирийцы стран Ближнего и Среднего Востока, Ереван, 1979.

Կիրառված հապավումներ

ՀՀՇՏԲ - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան:

ՀՀՀ - Հայկական համառոտ հանրագիտարան:

ՅՀՅԴ - Յուշարձան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, ալբոմ-ատլաս:

ՀՍՀ-Հայկական սովետական հանրագիտարան:

ՀՅԴ-Հայ Յեղափոխական Դաշնակցություն:

ՅԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

– Ա –

Աբաջի Մուրադ 48
Աբաս Կուլի բեկ 207
Աբգար 211
Աբդուլ Համիդ 3, 10, 49, 95, 96
Աբեղյան տոհմ 161
Աբրահամ 293
Աբրահամյան Հ. (Զոլո) 201, 203, 204, 206
Աբրահամյան Մարտիրոս (Բաշգառնեցի Մարտիրոս) 275, 276, 278
Աբրահամյան Ս. 159
Աբուբաքր խան 24, 31, 32, 52
Աբութալեբ շեյխ 57
Ա-Դո (Ա-Դօ) 10, 19, 20, 22-25, 29-33, 36, 39, 41, 45-47, 62, 69, 70, 72, 74, 75, 77, 79-81, 83, 103, 116, 121, 122, 126, 147, 149, 153-155, 158, 160, 174, 178-180, 208, 212, 262
Ազատ (չատախցի) 173-175
Ալթունյան Գրիգոր 299, 305
Ալթունյան Հասմիկ 305
Ալթունյան Վազրիկ 305
Ալթունյան Վաչագան 305
Ալիշան Ղ. 188
Ալյոշա, գնդապետ 269
Ալոյան Մ. (կարճկանցի) 244-246, 248-251
Ալպոյաճեան Ա. 70
Ախո 206
Ակինեան Ն. 21
Ահարոն 53, 54, 90
Ահմադ 27, 49, 50, 62, 101, 134
Աղայան Ծ. 130
Աղասի 148-150
Աղբյուր Սերոբ, տե՛ս Վարդանյան Սերոբ
Ամիր Արշադ 284, 287, 288
Ամիրյան Խ. (դաշնակցական Խաչո, Խեչո) 144
Այիշե 31, 56-60, 104, 106
Այվազ 84, 173
Անահիտ (Արտեմիդա) աստվածուհի 36
Անդրանիկ զորավար 12, 91, 92, 129, 130, 142, 145-147, 149, 157, 174, 181-183, 199, 206, 236, 237, 258
Անդրանիկ 224
Անժել, տե՛ս Կյուրեղյան Անժել
Աշեր (Աշըր, Ըշըր), ամերիկացի բժիշկ 140
Աշխեն 106
Ապրո 82
Առաքելյան Գ. 194
Առաքել Դավրիժեցի 110
Առաքելյան Վ. 110
Ասլան (ոզմեցի) 180-183, 185-193, 197, 198, 229-232, 275, 276, 278, 279
Ասլանյան Ա. 80
Ասոյան (Ասատրյան Վաչե) 209

Ասո, ենթասպա 230
Ասպո 63, 72, 97
Աստաֆեւ, գեներալ-մայոր, նահանգապետ 218
Ավագ (բողազքյասանցի) 212
Ավդո, հովիվ 125, 126
Ավետ 165, 167
Ավո 98, 99, 237, 296
Ավիտեան Վարդտան 10
Ավետիս Ահարոնյան 186, 236
Ավոյան Կ., տե՛ս Մորուք Կարո
Ատանալեան Կ. 140, 141
Ատո 274, 275
Ատոմ 49, 50, 54, 90
Արաբո 145
Արա Գեղեցիկ 158
Արամ Գառոնե, տե՛ս Գառոնե Արամ
Արամ 97
Արամ փաշա, տե՛ս Մանուկյան Արամ
Արարատյան Ք. (Արարատով), գեներալ-մայոր 199-207
Արգիշտի 257
Արես, խմբապետ 138-141
Արզումանյան Մ. 240
Արծրունիներ 68, 121
Արծրունի Վ. 30
Արղության Իշխան 98, 145
Արմեն Գարո 259
Արմենակ (քոշկեցի) 171
Արմենակ 248, 249, 277, 284, 287-289
Արշակ 212, 215, 216, 234
Արշակ (Քերմանշահի ընկեր) 307-308
Արշակունիներ 68
Արտաշ 151, 152
Արտաշես Ա Բարի 36, 196
Արտաշես (իգդիրցի) 193
Արտաշեսյաններ 68
Արտուշ 251, 252, 258, 275
Աֆրիկյան Վահան 275

– Բ –

Բաբա 290
Բաբկեն 211
Բաբո, թիկնապահ 275
Բագրատունի Սմբատ թագավոր 284
Բագրատունիներ 188
Բալասան 114
Բաղդասարյան Տիգրան, Զանկե (Տիգրիս) գնդապետ 17, 30, 176, 177, 182, 190, 191, 195, 196, 199, 200, 202, 204-208, 211, 217, 242, 258, 259, 287
Բաղդոեան Ազիզ 10
Բաղիկ (Բաղդիկ) 81-83, 87
Բաշգառնեցի Խնկո 275, 278
Բաշգառնեցի Մարտիրոս, տե՛ս Աբրահամյան Մ.
Բարխո 33, 109, 111, 113
Բարսեղ (Մուքոյի Բարսեղ) 73-75
Բարսեղ 76-81, 84, 88-91, 93, 111, 113, 117, 128-130, 132, 136
Բարսեղյան Սարգիս (Վանա Սարգիս, Մեծ Սարգիս) 92, 94, 98
Բաթբը 53
Բդոյան Վ. 42
Բել (Տիտանյան) 19
Բենիամին, ասորի 173, 175

Բերբերյան Անանիա («Ալյոշա») 249
Բորոյան Սմբատ (Սմբատ զորավար, Մախլուտո) 258, 259, 262
Բուլղարացի Գրիգոր 65, 92, 98, 116, 143, 180
Բուհաեդդին բեկ 233

– Գ –

Գաբո 279
Գալուստ դայի 290
Գառնիկ 23, 24
Գառոնե Արամ (Տեր-Բաղդասարյան) 294, 305
Գառոնե Վահե 294
Գասպար 37-39, 49, 51, 52, 54, 60, 73, 75, 77, 89, 156, 157, 159, 162, 163
Գասպար (Համագյուղացի) 100, 110, 114
Գարեգին Առաջին կաթողիկոս (Գարեգին Հովսեփյան) 212
Գարեգին Նժդեհ 177, 237, 281, 284
Գեղամ իշխան 223
Գենովա 279
Գնդունի Հայկ 263, 264, 267
Գոմեշ Հոխան 29, 34, 61, 62, 88, 128, 132
Գրիգոր 23, 24
Գրիգոր, փեսա, տե՛ս Ալթունյան Գրիգոր
Գրիգոր (ոզմեցի), հիսնապետ 184, 185
Գրիգոր Լուսավորիչ 189, 226
Գրիգոր Նարեկացի 69
Գույումջյան Տիգրան 263
Գևո 306
Գևորգ 228
Գևորգ Զավուշ, տե՛ս Ղազարյան Գևորգ
Գևորգյան Հ. 91, 145, 205
Գևորգ Սուրենյանց կաթողիկոս 303

– Դ –

Դալի Ղազար (Դալի Ղազո, ղարաբաղցի) 72, 92, 93, 97, 111-116, 126, 131-133, 161, 227, 228
Դալի Ղազո (մշեցի) 211, 258, 273-276
Դալի Մկրտիչ 48
Դալլաքյան Ղ. 199, 250
Դավիթ Կոճա (Կոճեցի Դավիթ) 116, 117, 131, 132, 137, 138, 186
Դավո, Դավիթ (դհերցի) 98, 120
Դավուդ աղա, տե՛ս Դավիթ դհերցի
Դերձակյան Օնիկ, տե՛ս Վռամյան Արշակ
Դյուբուա 231
Դրասխանակերտցի Հ. 196
Դրո (Դրաստամատ) Կանայան 30, 144, 145, 150, 156, 157, 177, 187, 189, 191, 193, 196, 199, 200, 202, 204-207, 209, 226, 227, 230, 232, 233, 235-237, 271

– Ե –

Եգոր (սարդարապատցի) 73, 93, 111, 113, 116, 131, 161
Եգոր 270
Եղնիկ Կողբացի 189
Եկարյան Արմենակ 65, 143, 144
Եղիազար (ոզմեցի) 67
Եղիազար, հիսնապետ 170, 176-178, 180-182, 184, 185, 187, 188, 192, 225-229, 232
Եղիշե 149-151, 153-155
Եղիշե, պատմիչ 20, 45
Եղո 87, 88
Ենովք 24, 63, 64, 79-84, 87-91, 94, 105, 112, 134, 135, 137-140, 146, 147, 288
Եսայան Ա. 95
Երկար Միրզո (Միրզիկ) 84, 87
Երվանդունիներ 68

– Զ –

Զազոյան Իշխան 311
Զահր 202
Զայնե 174
Զավարյան Ս. 91
Զարդար 37, 39, 100
Զարե 63
Զաքարյան Դանիել 303
Զաքարյան Սոֆյա 303
Զոհրաբ խան 289
Զոհրաբյան Է. 210
Զոհրաբյան Վ., գնդապետ 288, 289
Զորյան Ս. (Ռոստոմ) 91

– Է –

Էմմա, տե՛ս Հարությունյան Էմմա

– Թ –

Թադեոս Առաքյալ 77, 158
Թադևոս (համադանցի), բժիշկ 289
Թադևոսյան Սամսոն խան 288
Թահիր աղա 102, 107
Թահիր բեկ 51, 55
Թամանյան Ալ. 218
Թամոյան Հասան 108, 297
Թանկոյի ռես Ավետ 27-29, 31, 38, 59, 69, 72, 73, 99, 102, 112, 114, 117, 133, 174
Թաշճեան Վ. 79
Թարխան բեկ 180, 181
Թարխանյան Կուռո 235, 275, 278
Թելո Սուրեն 244, 245, 248, 250, 251, 255
Թեյմուր խան 22-24, 27
Թեյմուր (համագյուղացի) 94, 133
Թեմուրյան Ուսուբ (Ոսբվ) բեկ 297
Թեոդորոս Ռշտունի 172
Թերլեմեզյան Գ. 64
Թերլեմեզյան Տաճատ 98, 99, 216, 295, 296
Թորլաքեան Մ. 177
Թվանքչյաններ 291
Թումանյան Արտավազդ 176
Թումանյան Հովհաննես 176
Թուրշյան Հ. 92, 211

– Ժ –

Ժենիկ (Քերմանշահում հարևանուհի) 307
Ժոբեր Պիեր 77

– Ի –

Իշխան 47
Իշպուհինի արքա 154
Իսահակ 293
Իսրայել, ասորի 288
Իվան 290
Իվանովկա, տե՛ս Կյուրեղյան Երվանդ

– Լ –

Լազեան Գ. 65, 92, 98, 144, 235-237
Լազկի 31
Լաթո Միհրան 68
Լալայան Ե. 40, 146, 227
Լալայան Մ. 237
Լոզման, հեքիմ 56, 58
Լորթո Հարություն 65, 116
Լորիս-Մելիքով (կոմս Միքայել Լոռիս-Մելիքով) 22
Լևոն բեկ (Մելիք-Ավալյան) 198, 199, 205-208
Լևոն փաշա, տե՛ս Շաղոյան Լևոն
Լևոնյան Ռ. 140, 168

– Խ –

Խաթիֆյան Զահանգիր (Զանգիր) աղա 296, 297
Խալըտ բեյ (գավաշցի) 168
Խալիլ փաշա 129, 130
Խանազատ Ռ. 48
Խանասորի Իշխան, տե՛ս Արղությյան Իշխան
Խաչատրյան Հ. 234
Խաչատուր 257
Խաչատուր կաթողիկոս, Խաչատուր Բ Շիրոյան 21
Խաչիկ, Հունանի տղա 25
Խաչիկ, նախրչի 139
Խաչիկ, ընկեր 173
Խաչո ռես 29, 31-34, 37, 38, 59-62, 95, 99, 100, 101, 104, 105, 112, 114, 117
Խարախանյան Ն. եպիս. 145
Խեղենեկյաններ 68
Խզո 306
Խըլոեան Կ. 10
Խորենացի Մ. 19, 47, 122, 239, 257
Խռանի Խաչիկ 276, 283
Խրիմյան Հայրիկ 8, 90, 93, 146, 166, 294
Խուշո 72, 111, 112, 114, 133
Խուռիկ 62
Խուրշուդ աղա 29, 49, 51, 102, 108, 136

– Կ –

Կազեան Ա. 10
Կալե 123, 127, 128, 134, 136, 137, 139, 147, 154, 217, 225, 227
Կալիպսե 125, 126, 128, 132
Կայծակ Առաքել 65
Կամազով (Գամազյան, Համազյան, Ղամազյան) Կ. 234, 240, 241
Կամսարականներ 215
Կավռոյիկի թախում 24

Կարաբեքիր փաշա 266
Կարապետ (Կարո, Կրպո), գյուղի ժամհար 25, 105, 111
Կարապետ (Կրպո) 84, 87, 88
Կարապետյան Մ. 200, 210, 213, 236
Կարապետյան, օղաչու 298
Կարճիկյան, զորավար 234
Կարո (տիգրանակերտցի) 193, 246, 251
Կարո (սասունցի), «թոփալ» հրամանատար 262
Կարո Սասունի 282
Կարո, քրդախոս հայ 194
Կարպրեան Ս. 10
Կացո, վրացի 214
Կաֆյան Գ. 48
Կիրակոս, քրդախոս հայ 183, 186
Կիրակոս Գանձակեցի 231
Կյուրեղյան Ալբերտ, բժիշկ 307
Կյուրեղյան Անահիտ 305
Կյուրեղյան Անժել 291, 294, 299, 300, 304, 305
Կյուրեղյան Գառնիկ 311
Կյուրեղյան Գրիգոր 311
Կյուրեղյան Երվանդ 5, 7, 8, 11, 13-19, 22, 24, 26, 28, 30, 35, 39, 41, 45, 56, 68, 73-75, 77, 84, 100-103, 109, 110, 113, 119, 127, 128, 134, 150, 163, 167, 170, 173, 211, 215-218, 220-224, 242, 248, 268, 271, 275, 279, 280, 285, 287, 294, 296, 300, 302, 307, 308
Կյուրեղյան թախում 24
Կյուրեղյան Խ. 25
Կյուրեղյան Հակոբ 25, 26, 35, 53, 54, 112, 113, 119, 125, 126, 132, 133, 174
Կյուրեղյան Ղազարոս, տե՛ս Ղազարոս
Կյուրեղյան Նաիրի 305
Կյուրեղյան Նարբե 305
Կյուրեղյան Նենեթ 305
Կյուրեղյան Պարգև 17, 291, 292, 294, 304, 305
Կյուրեղյան Վարուժան 11, 12, 18, 25, 287, 291, 292, 294, 299, 300, 301, 302, 304, 311
Կյուրեղյան տոհմ 300
Կյուրեղյան Ռուբիկ 305
Կյուրեղյան Ռաֆֆի 305
Կոզյան, Կյոզեյան, Գեզյան Գ., տե՛ս Բուլղարացի Գրիգոր
Կոթիկյան Արման 299
Կոմս 98
Կորկոտյան Ֆիլիպ 192, 197, 198, 207-209
Կրպո, Քուրդ Ղազոյի ծառա 274
Կուլամ Ալի բեկ 202
Կուլանի Սրկո (Սրկե) 59, 112, 114, 115

– Հ –

Հախնազարյան Յ. 283
Հակոբյան Թ. 168, 277
Հակոբյան Հ. 77
Հակոբյան Հովիկ 294
Հակոբ Մծբնա Հայրապետ (Մծբնացի) 155
Հակոբ (մորաքրոջ տղա) 78
Հակոբ ռես, տե՛ս Կյուրեղյան Հակոբ
Համազասպ, տե՛ս Սրվանձտյանց Համազասպ 142
Համբարձումյան Կոստի 175, 176, 182, 183
Համբարձումյան Համազասպ 199
Համբարձումյան Ռ. 177, 237, 281, 284
Համբարձումյան Վիկտոր 199, 295
Համիդ 28, 35, 54, 60, 104
Հայկ 208
Հայկ նահապետ 19, 47
Հայոց Հայրիկ, տե՛ս Խրիմյան Հայրիկ
Հայր Աբրահամ (Սահակյան Ավետիք) 236, 237, 277
Հայրո 279, 280, 285
Հաջի Մուրադ 63, 72, 96-98, 115, 155
Հաջի Նշան 292
Հասան, քուրդ 180
Հասանո 123, 124
Հարո (խսխերցի) 182
Հարություն 114
Հարություն (Թուլին դայի) 270, 271
Հարություն 147, 148
Հարություն (Ներսոյի) 173
Հարություն (Նորգյուղցի) 155
Հարությունյան Գառնիկ 311
Հարությունյան Գրիգոր 311
Հարությունյան Էմմա 300, 305
Հարությունյան Հ. 86, 130
Հարությունյան Մանյա 311
Հարությունյան Ս. 199
Հեղինե 17, 102, 110, 156, 160, 163, 165-167
Հեյդար 23, 24, 27, 106
Հիսուս Քրիստոս 35, 36, 293
Հոխան, Հյուսն (Խարականց գյուղից) 42
Հոխան, փախստական 33, 34, 217-224, 225, 228
Հովիկ 142
Հովհաննիսյան Սերգեյ, տե՛ս Մանուկյան Արամ
Հովհաննես, Լևոն բեկի թիկնապահ 199
Հովհաննես 270, 271
Հովհաննես 268
Հովսեփ 174-176
Հրայր 258
Հունան 25, 26
Հուսեյին աղա 49, 134, 136
Հուսեյին խան, Երևանի սարդար 215
Հուսեյին, մոլլայի ծառա 54, 58, 59, 104

– Ղ –

Ղազար 60, 71-73, 181, 188, 189, 197
Ղազար (Ներսոյի տղա) 96
Ղազար Փարպեցի 45, 122, 164
Ղազարոս (Ոսկոյի տղա) 39, 48, 107
Ղազարոս (Երվանդ Կյուրեղյանի տղա) 16, 17, 107, 128, 137, 148, 156, 158, 169, 256, 257, 301, 302, 311
Ղազարյան Ա. 140, 168

Ղազարյան Գևորգ Արոյի (Գևորգ Զավուշ) 90, 91, 202, 206, 282
Ղանալանյան Արամ 40, 86
Ղորղանյան Ս. Ա. 234

– Ճ –

Ճուկլանի Հարութիւն 112

– Մ –

Մադոյան Ա. 90
Մակեդոն, Մակեդոնյան (բաշգառնեցի) 213, 214
Մահմուդ խան 22
Մամադ խան («Թոխմախ») 277
Մամբրե 178
Մամիկոնյան Վ. 45
Մանաճիհր Ռշտունյաց իշխան 155
Մանուկ (Փափախ Ավոյի տղա) 62
Մանուկ (Գոմեշ Հոխանի տղա) 61
Մանուկ, նկարիչ՝ նաղաշ 25, 26, 118
Մանուկ (ոգմեցի հոտաղ) 100
Մանուկ (քարտաշ) 139
Մանուկ (սասունցիների հրամանատար) 201-204, 206
Մանուկ 309
Մանուկյան Արամ 32, 65, 66, 68, 71, 73, 78, 92, 95, 98, 99, 107, 112, 116, 119, 131, 136, 138, 140, 141, 170, 173, 174, 238
Մանուկյան Սուրեն Օգսենի 311
Մաչանի (Մաչանյան) Արշակ 208, 213, 214, 238, 243, 244, 251-253, 255, 257, 276, 278
Մասլովիչ 246, 248, 249
Մասումե (Ջիբոյի քույր) 94
Մարգար 194
Մարգար դայի 290
Մարգարիտ 80, 103, 127, 178, 179
Մարիամ, որբանոցի տնօրենուհի 256, 257
Մարիամ Աստվածամայր 293
Մարկոս 46, 59, 64, 71, 73, 79, 97, 98, 111, 132
Մարտո 78, 79, 114, 115
Մացակ վաշտապետ 207
Մաքսապետյան Ա. 65, 70, 176, 177
Մելիք-Թանգյան Ներսես (Նիկողայոս) արքեպիսկոպոս 302, 303
Մելիք-Շահնազարյաններ 230
Մելյան Բ. 199
Մելքումով Վ. 177
Մեսրոպ (մակվեցի) 184, 185
Մեսրոպ Մաշտոց 14, 294
Մեսրոպյան Ս. 30, 69, 70, 177
Միհրան (վանեցի), հիսնապետ 233
Մինաս դայի 270, 271
Մինասյան Հ., հոգեբույժ 216
Միչա (Թիֆլիսեցի), ուսանող 214
Միչիկ 253, 254
Միրախորյան Մ. 8, 9, 22, 25, 29, 47, 62, 69, 72, 79, 174
Միքայելյան Ն., տե՛ս Վանի Իշխան
Միքայելյան Բ. 91, 92
Մխիթարյան Օնիկ 47, 65, 70, 134, 168, 176
Մկրտիչ (հալեպցի) 28, 29, 31, 38, 59, 62, 99, 102, 103, 131, 133
Մկրտիչ 243, 251, 288
Մկրտիչ (Երանոսի գյուղապետ) 228
Մկրտիչ 311
Մյասնիկյան Ալ. 229
Մնացականյան (Քիչիչօղլի Արշակ ամու բարեկամ) 168
Մնո, շալագործ 108, 112
Մնոյի Հակոբ 55
Մոլլա 35, 50-60, 76
Մոկաց երեց Տեր Հովհաննես 26, 34, 61
Մոհամեդ Ռեզա Փահլավի 305
Մովսես 293
Մորուք Կարո 201, 202, 206
Մուդոյան Հակոբ (Մուտոյեան Յ.) 141, 168, 169, 217
Մուկուչ 250
Մուշեղ 289
Մուսայելյան Սարգիս 240, 242, 243
Մուքայել 28, 94, 286, 287
Մուքոյի Բարսեղ 28, 59, 63, 64, 66-69, 71
Մուրադ 245, 246, 255, 270
Մուրադյան Ա. 296
Մուրադյան Հ. 40, 86
Մուրադյան Հասմիկ 296
Մուրադյան Նարգիզ 296
Մուրադյան Ս. 70
Մուրացան 231

– Յ –

Յաղուբ 33, 34, 49, 61-63, 94
Յարութեան Սարկիս 10
Յովհաննէս (քերծեցի) 134
Յովնանեան Ռ. 99
Յովսեփ 68
Յոնանեան Օվան 10

– Ն –

Նաբի, դաչաղ 199
Նազարբեկյան Ա. 48
Նազարբեկյան Թ. 235, 236, 275
Նազարբեկյան Մ. 48
Նակաշիձե 144
Նահապետյան Ն. 289
Նարգիզ խաթուն 99
Նարկիզ, հացթուխ 125
Նեթո 83, 84
Ներսիսյան Ա. 237, 282
Ներսիսյան Արշակ (զորավար Սեպուհ) 241, 242, 248, 249, 251, 255, 262, 266, 268, 272, 273
Ներսոյի Հարո 178
Նժդեհ, տե՛ս Գարեգին Նժդեհ
Նիկոլ 229
Նիկոլ Դուման 282
Նիկոլայ Առաջին 231, 302
Նշան 74-76, 78, 134
Նշան (տիրացու) 105, 118
Նշան (քաբաբցի) 211
Նոյ նահապետ 20

– Շ –

Շաղլինսկի Աբաս-Կուլի (Շաղջոնսկի Աբաս-Կուլի) 204, 278
Շահինկե Հայրո (Շայինկե Հարո) 80, 127, 128, 179
Շաղոյան Լևոն (խմբապետ Լևոն) 47, 69-73, 92, 11-116, 125-128, 132-134, 136, 138, 155, 157, 176, 182, 183, 289
Շամիրամ 36, 110, 158
Շապուհ արքա 196
Շատվորյան Ռ. 64
Շաքըր աղա 29, 31-33, 63, 94, 174
Շերո 64
Շիրազ Հ. 295, 296
Շմուլ, ասորի 173
Շուշանիկ 289
Շուստով 195

– Ո –

Ոսկո 39, 48, 51, 103

– Ջ –

Ջաթո 64
Ջելեպյան Ա. 130
Ջեռնոզուբով, զորավար 130
Ջոլո, տե՛ս Աբրահամյան Հարություն

– Պ –

Պաստրմաջյան (Փաստրմաճյան) Վ. 259, 263-267
Պատալգեհյան Միքայել, տե՛ս Դալի Ղազար
Պատուր, նավավար 179
Պարգև, տե՛ս Կյուրեղյան Պարգև
Պարույր Սևակ 280
Պետրոս բեկ 302
Պետրոս (նորգյուղցի) 155
Պետրոս (ոզմեցի), հիսնապետ 170, 214, 244
Պետրոս (սասունցի), հիսնապետ 202, 233
Պետրոս Պյուլպյուլ կաթողիկոս 155
Պետրոսյան Հ. 90
Պետրոսյան Տ. 234
Պլուզյան Արմենակ 275, 277, 278
Պոլոյան Ա. 275
Պոլոյան Թոյթոյ Ռուբեն 275
Պողոս 59
Պողոսյան Հ. 9, 121, 141
Պողոսյան Նիկոլ, տե՛ս Վանի Իշխանը
Պոյաջյան Համբարձում 91

– Ջ –

Ջաֆար Սուլթան 287, 288
Ջիբո (Ջիբրայել Ահմադի), համազյուղացի քուրդ 7, 27, 29, 37, 38, 49-52, 54, 55, 58-63, 94, 96, 99-102, 104, 106, 115, 129, 132, 133, 148
Ջհանգիր 54, 59, 60
Ջևդեթ 30, 78

– Ռ –

Ռասուլ աղա 174
Ռասուլ բեկ 29
Ռաֆայել 97
Ռեզա շահ Փահլավի 305
Ռեյնոլդս Ջ. (Ռեյնո) 140, 141
Ռոստոմ, տե՛ս Զորյան Ս.
Ռուբեն, Ռուբեն փաշա (Մինաս, Ռուբեն Տեր-Մինասյան) 70, 71, 79, 119, 176, 282, 283
Ռուսա Առաջին 158

– Ս –

Սաթենիկ թագուհի 36
Սահակյան Ավետիք, տե՛ս Հայր Աբրահամ 236, 237
Սահակյան Լուսինե 12, 164, 241
Սահակեան Յ. 177, 205
Սահակյան Սուրեն 12, 86, 130
Սարգիս (Շաշո) 98, 107, 129, 138
Սարգսյան Հ. 289
Սարգսյան Օլգա 199
Սարդուր Առաջին 18, 257
Սարկիսեան Կուլան 10
Սարհադյան Ս. 71, 176
Սարյան Գեղամ 294, 305
Սարոյեան 14
Սարո 14
Սաֆրաստյան Ա. 110
Սեբեոս 32, 172
Սեյդե Նստո 181
Սենո 170-172
Սեպուհ 138
Սերոբ (Հոխանի տղա) 228
Սերոբ փաշա, տե՛ս Վարդանյան Սերոբ
Սերովբեան Ս. 47
Սեփոյի Խաչո 26
Սեֆեդինյաններ 68
Սիլիկյան Մովսես Բաբայի, գեներալ-մայոր 210
Սիմեոն Երևանցի կաթողիկոս 203
Սիմոն (ոզմեցի) 68, 276, 283, 288
Սիմոն 124, 125, 151, 152, 154
Սիմոնյան Ազատ 30, 83
Սիմոնյան Անդրանիկ 16
Սիմոնյան Հ. 91, 129, 130
Սմբատյանց Մ. 229, 231
Սմկո Իսմայիլ 287, 288
Սոլեյման աֆանդի (էֆենդի) 43, 118, 119, 125
Սողոմոն 257
Սոնա մայրիկ, բուժաշխատող 216-219, 221, 222, 225
Սոսե 64
Ստեփանյան Ա. 207, 208
Ստեփանյան Ասլան 207
Ստեփանյան Գ. 303
Ստեփանյան Խ. 283
Ստեփանոս Տարոնացի 122
Սրապիոն, կոմիսար 254
Սրապիոն (Քերմանշահում բնակվող) 307
Սրվանձտյանց Գ. 77, 144, 158
Սրվանձտյանց Համազասպ 142, 144, 149, 150, 155 – 157, 161, 166, 277
Սուլթան Ռաշիդ 96

Սևակ Գուրգեն 15
Սևքարեցի Սաքո 239
Սօս-Վանի 53

– Վ –

Վազգեն 160, 161, 165, 166
Վահան 114, 280, 285
Վահան, հաշմանդամ 305, 306
Վահե Գառոնե, տե՛ս Գառոնե Վահե
Վաղինակ, Վաղո (էվլիլարցի) 187-192, 209
Վանի (Վանա) Իշխան 78, 79
Վաչագան, Վաչո (իգդիրցի) 187, 188, 190-192, 209
Վարանդեան Միքայել 98
Վարդան (աթանանցի) 244
Վարդան Բակուր (սեբաստացի) 257, 259, 263-268, 277
Վարդան, զորավար 44, 45
Վարդան 47, 94
Վարդան (Խանասորի Վարդան, Վահե Սյունի) 150-152, 154-156
Վարդանյան Արսեն 287
Վարդանյան Սերգեյ 12, 18, 77, 110, 121, 147, 176, 196, 218, 277
Վարդանյան Գ. 71, 176
Վարդանյան Սերոբ (Աղբյուր Սերոբ, Սերոբ փաշա) 63, 206
Վարդանուշ (Երվանդ Կյուրեղյանի կին) 17, 289, 294, 295, 306, 307
Վարուժան (Հոխանի տղա) 228
Վերածին Մ. 241
Վերֆել Ֆրանց 5
Վիրաբ 220
Վռամյան Արշակ (Վռամ փաշա) 119
Վրացյան Ս. 150, 208, 257, 258

– Տ –

Տանտանի Նշան 59
Տարմոյի Հակոբ 29
Տարմոյի Հարո 96
Տեր-Բաղդասարյան Քնարիկ 305
Տեր-Հովհաննես, տե՛ս Մոկաց երեց Տեր Հովհաննես
Տեր-Մարտիրոսյան Հովհաննես, տե՛ս Ա-դո
Տեր-Մինասյան Եգոր 92
Տեր-Մինասյան Մինաս, Ռուբեն, տե՛ս Ռուբեն
Տեր-Պաղտասարյան Տեր Ղուկաս 176
Տէր-Ակոբեան Արթեն 10
Տէր-Յովակիմ 134
Տէր-Մկրտչեան Ե. 8-10, 90, 140, 141, 143
Տիգրան 255
Տիգրան (պլթենցի) 131-134, 136, 138, 143, 148-156, 195, 196
Տոնոյան Մակար (Սպաղանացի Մակար) 201
Տրդատ Երրորդ 226
Տեկանց Ա. 10
Տեկանց (Տեր-Սարգսյան) Երեմիա արքեպիսկոպոս 10, 47

– Ու –

Ուիլյամս Մ. Օ. 176

– Փ –

Փահլևանյան Ա. 40, 86
Փանահ Խան Թունբուլղոլի Ալի խան 204, 233, 277
Փանոս 140
Փարիշա 32
Փափազյան Հ. 30
Փափախ Ավո 62
Փեթարա Մանուկ 202
Փիրուզա մայրիկ 223, 228
Փիրումյան Դանիել բեկ Աբիսողոմի 212-214, 236
Փիրումյան Պողոս (Պավել) բեկ Կարամանի (Ղահրամանի) 212-214, 236
Փորթուգալյան Մ. 64

– Ք –

Քաջազնունի (Իգիթխանյան) Հովհաննես 234
Քառ Մովսես 309
Քերոբ, Դալի Ղազոյի սուրհանդակ 274
Քեչիշօղլի Արշակ ամի 166 – 169, 242
Քնարիկ (Երվանդ Կյուրեղյանի մեծ հարս) 300
Քոչինյան Հենրիկ 311
Քոչո 262
Քուրդ Ղազո 211, 273, 274
Քուրդ մոլլա 28

– Օ –

Օդեթ 294
Օխանեան Մխո 10
Օհանես Օհանեսյան (Հովհաննես Հովհաննիսյան), բժիշկ 216
Օվանես (քերծեցի) 166, 167, 169-171, 183, 184, 187, 188, 192, 217, 221, 234, 238, 239, 242, 244, 276, 287-289
Օվանես Օվանեսյան, զինվորական 189, 194, 195, 197-199, 202, 213, 214, 216
Օրբելյան Ստ. 188
Օքսեն 61

– Ֆ –

Ֆերիդուն Բեյ 110
Ֆիլիպ, տե՛ս Կորկոտյան Ֆիլիպ
Ֆրունզե Մ. 200

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

– Ա –

Աբաղա (Աբաղու) դաշտ 161, 180
Աբզեյնի (Ավզնի) գյուղ 7, 52, 80, 104, 120
Ագարակ 99
Աբովյան քաղաք 226, 227, 279
Ադամանց քար (Լեզք գյուղում) 158
Ադաթլու գյուղ 190
Ադանա 95
Ադրբեջան 4, 149, 197, 203, 241, 249, 254, 264, 279
Ազատ գետ 278, 279
Ազատավան 197
Աթամա (Աթամախ) 228
Աթանանց գյուղ 46, 133, 134, 149, 150, 156,
Աթէնք 53, 78, 186, 241, 293, 298
Ալաջա գյուղ 297
Ալագյազ 166
Ալագյազի կայարան 255
Ալաշկերտի գավառ 228, 229
Ալաշկերտ 12, 144, 160, 201, 203, 223, 235
Ալավերդի 295
Ալեքսանդրապոլ 16, 65, 78, 193, 210, 215, 240, 243, 256, 260, 262, 264, 282
Ալյուր (Ալուր) գյուղ 208
Ալջավազ գավառ 122
Ախալքալաք 282
Ախուրյան (Արփաչայ) գետ 263
Ակոռի գյուղ 192
Ակռավաքար (Ռուսախինիլի, Ակռփու քար) 158, 178
Ահագէի 203
Ահարոնք գյուղ 282
Աղբաշ գյուղ 297
Աղթամար 68, 69, 153
Աղթամար կղզի 69, 154
Աղթամարի շրջան 124-126
Աղթամարի Սբ Խաչ եկեղեցի 69, 155
Աղստև գետ 244
Ամենափրկիչ մատուռ (Լեզք գյուղում) 158
Ամերիկա 98, 103, 194, 240, 298-300
ԱՄՆ 12, 99, 119, 141, 145, 168, 175, 199, 212, 234, 237, 241, 259, 296, 300, 304
Այգեդիր, տե՛ս Իգդիր
Այգեստան 8, 76, 77, 110, 168
Այրարատ աշխարհ 172, 188
Այրում կայարան 239, 244
Անգլիա 265, 299
Անգղավանք, տե՛ս Սբ Աստվածածին վանք
Անգղ բերդ 45
Անգղ գետ 77
Անգղ գյուղ 44, 45, 47, 107, 150, 153
Անդոկ լեռ 64
Անդրկովկաս 110, 130, 231
Անթիլիաս 212
Անի կայարան 242, 243
Անի քաղաք 213, 262, 297
Անծղնապատի Սբ Աստվածածին 69
Անկշտանց (Հանկշտանց) գյուղ 30
Անձևացիք գավառ 32
Աշտարակ 220-222
Աշտարակի շրջան 297
Աշուղ (Լալի, Վազաշեն) գյուղ 253
Աչաջուր 244
Առաջին հանրապետություն 98, 177, 275
Առաքելոց վանք 202, 258
Առեղ գյուղ 80
Առնիս 182
Առնիս Ներքին 122
Առնիս Վերին 122
Ասլանիկ գյուղ 195
Ասկերան 73
Ասորեստան 110, 158
Աստղ 91
Աստղկան բերդ 76
Աստվածաշեն (Հայկաշեն) գյուղ 12, 18, 47
Աստրախան 22
Ավանց գյուղ 120
Ավշար (Քյալ բալավան) գյուղ 197, 198, 278
Ատրպատական 70, 150, 284, 290, 302, 303
Արաբկիրլու գյուղ 188
Արաբքուլուք 188, 189
Արագած 166
Արագածոտն 99, 166, 215, 297
Արագած սար 298
Արամուս գյուղ 226
Արարատ 186, 187
Արարատ սար 163, 171, 192
Արարատ քաղաք 195, 197, 203, 205
Արարատի դաշտ 209
Արարատի շրջան 280
Արարատի մարզ 195-197, 201-203, 208, 280
Արարատյան հող 187
Արաքս գետ 28, 164, 165, 187, 188, 191-195, 198, 211, 262, 283, 284, 297, 302
Արաքս կամուրջ 171
Արարուց մեյդան 110, 111, 143, 176
Արարք թաղ 110
Արգելանա Սուրբ Աստվածածին 182
Արմավիրի մարզ 195
Արծափ 172, 185, 186, 191, 231
Արծափաքար լեռ 172
Արծկե (Ալջավազ) 122
Արծվաբերդ (Ղրղի) 252
Արճակ գավառակ 212, 297
Արճեշ գավառակ 122, 296
Արմաշ գյուղ 201
Արմավիրի մարզ 195
Արմավիր քաղաք 18, 199
Արմինիա կուսակալություն 68
Արտաշատ 193, 196, 197, 208, 278, 294
Արտաշատի շրջան 197, 203, 208, 241
Արտամետ (Արտամետ, Արդեմիդա) ավան 20, 36, 74, 107, 108, 113
Արտոս սար 20, 80, 105, 123, 134, 149, 151, 153, 173, 299

Արցախ 252
Արքավանք 91
Արևելյան Հայաստան 6, 11, 19, 30, 65, 66, 121, 149, 168, 196, 231, 284, 296, 297
Արևելյան Տաճկաստան 8, 29
Արևելյան Տիգրիս 23, 30, 31
Արևմտյան Հայաստան 19, 23, 48, 63, 65, 78, 91, 144, 145, 175, 197, 203, 223, 228, 243, 297
Արևիք գավառ 280
Արևշատ (Աղբաշ) գյուղ 278

– Բ –

Բաբ Ալի 48
Բաբերդ 12, 241
Բաբերդ գավառ 12
Բագրատունյաց պետություն 68
Բագրևանդ գավառ 45
Բազարչայ (Գորայք) 281
Բազիդաղա (Բազիդ աղեն) գյուղ 180, 182
Բաթում 234
Բալու գավառակ 197
Բալուջա գյուղ 281
Բաղդադ 70, 85, 183, 288, 289, 304
Բաղեշ, տե՛ս Բիթլիս
Բայազետ 144, 160, 164, 183-185, 190, 231
Բայազետի գավառ 172, 227
Բայազետի դաշտ 172
Բաշ Ապարան 66, 144, 210, 211, 236, 275, 297
Բաշեղե Մանդան (Բաշեդ, Պաշեթ) լեռ 175
Բաշքենդ (Բաշքանդ, Արծվաշեն) 250
Բասարգեչար (Վարդենիս, հնում՝ Վասակաշեն, Ոսկեշեն) 229-231
Բասեն 144
Բասրա 70
Բարադոտիկ լեռ 80
Բարդող լեռ 188
Բարդուղյաց լեռնաշղթա 187
Բարձր Հայք 12, 241
Բարվարի շրջան 23, 33, 147
Բաքու 28, 65, 144, 149, 204, 234, 240, 243, 249, 264, 272, 302
Բաքվի Մայր եկեղեցի 234
Բեթղեհեմ 292
Բելգիա 175
Բեյրութ (Պեյրութ) 23, 66, 78, 177, 237, 282
Բեռլին 90, 177, 212, 216
Բերդ ավան 198, 199
Բերդակ 91
Բերդաձորի Սբ Աստվածածին (Սպիտակ վանք) 69
Բերդաքաղաք 119
Բերկրի 183, 297
Բերկրիի Աբաղա գավառակ 122, 180, 211, 262
Բերկրի գետ 122, 161
Բերկրի գյուղաքաղաք 161, 211
Բերկրի կալա բերդաքաղաք 120, 160, 172, 183
Բերկրիի շրջան 122, 180, 182
Բիթլիս (Բաղեշ) 10, 32, 69, 141, 210, 235
Բիթլիսի գավառ 33, 121
Բիթլիսի գավառակ 33
Բիթլիսի նահանգ 33, 121, 147
Բիթլիսի շրջան 129
Բիրալի գյուղ (Լանջառ) 202
Բլթենց (Բլլթենց, Պլթենց) գյուղ 46, 131, 134, 149-151
Բլխոնց գյուղ 211
Բղլաքար սար 153
Բյուրական 294
Բոյուք Վեդի (Վեդի) 203, 205, 207, 208, 209, 211, 224, 298
Բոստոն 8, 30, 90, 145, 282, 296
Բողազքյասան 212
Բսանաց գավառ 90
Բռնակոթ 302
Բուլղարիա 48, 65, 119, 237
Բուխարեստ 8, 234, 235

– Գ –

Գայլի դրունք 211
Գանձա գյուղ 234
Գանձակ 65, 72, 92, 144, 240, 244
Գառնի (Բաշգառնի) 275, 279, 294
Գառնիբասար 201
Գառնիի տաճար 279, 294
Գառնո գետ 294
Գավաշ (Ռշտունիք), Գյավաշ, Կավաշ 69, 153-155
Գավաշ (Ոստան) գավառակ 20, 29, 70, 72, 79, 174
Գավառ 10, 168
Գեթսեմանի պարտեզ 293
Գելիեգուզան գյուղ 63, 202
Գեղամա շրջան (Սևանա շրջան) 223
Գեղամա սարեր 223, 226, 227
Գեղարդ 294
Գեղարքունիքի մարզ 228-231, 244, 245
Գետաբեկ գյուղ 92
Գետաշեն գյուղ 240
Գերմանիա 145, 177, 305
Գլենդեյլ 30
Գյոզալդարա (Վարդենիկ) գյուղ 228-230
Գյումրի 256
Գնիշիկ 201
Գողթան (Գողթն) գավառ 283
Գողթան քաղաք 283
Գոսնի (Կյուսնի) գյուղ 29, 174
Գորայք (Բազարչայ) 281
Գորի 240
Գորիս 240
Գորովան 203
Գուգարք աշխարհ 239
Գուլոք 187, 188
Գուկանս գյուղ 69
Գում Գափու 48, 241

– Դ –

Դաշբուռուն գյուղ 192, 193
Դաշտադեմ, տե՛ս Թուրքի Թալին
Դաշտաքար 203
Դավալու 197, 198, 200, 204, 207-209, 298
Դավալու, տե՛ս Արարատ քաղաք
Դավիթ-Բեկ գյուղ 65

Դատվան 121
Դարղալու (Անաստասավան, Այգեզարդ) 208
Դարոյնք 172
Դեղձիս գյուղ 69
Դետրոյթ 159
Դերիկա (Տերիկա) վանք 181
Դերջան գավառ 12, 241
Դիզա գյուղ 193, 195, 209
Դիլիջան 144, 231, 238, 239, 243-245, 248, 249, 255, 269, 272, 273, 275, 295
Դիլիջանի շրջան 238, 249
Դիլման 129, 130, 236, 241
Դիմգոստանի, տե՛ս Տեմկոսանի
Դիվաբույնի Սբ Հարություն եկեղեցի 69
Դիրիշիկ (Դրիշկ) գյուղ 195
Դոնի Ռոստով 249
Դվին 169, 294

– Ե –

Եգիպտոս 143
Ելիզավետպոլի նահանգ 210, 231, 244
Եկմալ գյուղ 178
Եղեգնաձոր 228
Եղեգնաձորի շրջան 201, 203
Ենգիջա գյուղ 201
Երանոս գյուղ 223, 228
Երասխ 197
Երասխաձորի բերդ 262
Երվանդունիք գավառ 18
Եփրատ 85
Երևան 9-11, 16, 18, 20, 30, 40, 42, 45, 65, 66, 69, 71, 76-80, 86, 90-92, 98, 99, 110, 130, 140, 141, 144, 145, 150, 157-159, 164, 168-170, 177, 182, 186, 193, 195-200, 204-207, 210-213, 215-218, 222-224, 226, 227, 230-235, 237, 239-241, 249, 250, 255, 258, 266, 269, 271, 272, 274-277, 279, 281-283, 303, 311, 312
Երևանի գավառ 195-197, 201-203, 210
Երևանի նահանգ 164, 188, 190, 192, 195,201-203, 210, 226, 228
Երուսաղեմ 292
Երևման խաչ ուխտատեղի 286
Եվրոպա 234, 235

– Զ –

Զանգեզուր 201, 203, 237, 258, 302
Զանգու 235, 277
Զեյթուն 46, 68
Զեյվա գյուղ, տե՛ս Դավիթ-Բեկ
Զիլան 181, 183
Զինջոլու գյուղ 201-204, 290
Զովասար (Ահագէի) 203
Զևաջուկ գյուղ 195

– Է –

Էջմիածին 90, 119, 165-167, 170, 171, 173, 185, 186, 189-191, 193, 195, 196, 201, 209, 211-213, 216, 218, 219, 232, 233, 241, 282, 294, 297, 302

Էրզրում 10, 121, 122, 177, 182, 210
Էրզրումի նահանգ 172, 241
Էրզրումի վիլայեթ 20, 29
Էրմերու գյուղ 47

– Թ –

Թաբառոզի սար 163
Թազա Բայրեզ 75, 110
Թալինի բերդ 201
Թալինի շրջան 166, 201, 203, 214-216
Թաղ գյուղաքաղաք 30, 83-85, 141
Թայչարուխ (Մեղրաձոր) գյուղ 172
Թասա գյուղ 288
Թավրիզ 15, 97, 143, 145, 281, 286-289, 294, 298, 299, 304
Թբիլիսի (Թիֆլիս) 28, 65, 66, 91, 92, 141, 145, 147, 175, 186, 198-200, 207, 208, 212, 214, 231, 234-237, 239, 241, 249, 259
Թել Ավիվ 293
Թեհրան 11, 15, 16, 79, 97, 168, 177, 282, 283, 291, 293, 296, 298, 299, 305, 308, 311
Թիլ գյուղ 288
Թիմար գավառակ 161, 121, 178, 179, 208
Թոխմախ գյոլ 277, 279, 297
Թովուզ կայարան 199
Թվարեք 41
Թուզլուջա (Կողբ) 188
Թուխ Մանուկ մատուռ 223
Թումենջիք 241
Թուրքաշեն գյուղ 47
Թուրքի Թալին (Ներքին Թալին, Դաշտադեմ) 215, 242, 297
Թուրքիա 164, 189, 200, 237
Թուրքմենչայ 97, 164

– Ժ –

Ժնեև 48, 259, 282

– Ի –

Իգդիր 98, 144, 164, 171, 172, 177, 185-191, 193, 195, 205, 239-241, 251
Իգդիր-Մավա գյուղ 186, 187
Իգդիրի շրջան 209, 287
Իզմիր 150
Իլլարի գյուղ 285
Իշխանագոմ (Իշխանիգոմ, Իշխանի գոմ) գյուղ 47, 168, 217
Իշխանաձոր 91, 258
Իջևան 239, 244, 249, 253, 255
Իջևանի շրջան 253
Իսքելեքոյ (Իսքալաքոյ) 121
Իրան 196, 197, 289, 290, 301, 302, 304, 305, 311
Իրանի թագավորություն 293
Իրաք 70, 71, 176, 302, 304, 305

– Լ –

Լայպցիգ 212
Լեզք (Արալեզ) գյուղ 158, 159, 178

Լեռնահայաստան (Ինքնավար Սյունիքի Հանրապետություն) 237
Լեռնային Ղարաբաղ 3, 73, 212, 213
Լիբանան 145
Լիմ կղզի 10, 121
Լոզան 186
Լոնդոն 186, 296, 299, 305
Լոռի 144, 145, 238, 243
Լոս Անջելես 12, 13, 17, 71, 73, 99, 177, 186, 199, 300
Լուսապտուղ Սբ Սահակ վանք 69
Լուրիստան (Լոռստան) 291

– Խ –

Խանասոր 145, 150
Խանլարի շրջան 240
Խաչան գյուղ 180
Խաչեն 182
Խաչիկ 201
Խաչկե գյոլ 21, 74, 77
Խաչփողան (Խաչփողոց) 77, 157, 158, 176, 178
Խառակոնիս 116
Խաստուր գյուղ 12
Խարաբա Բայրիզ (Նորաշեն) գյուղ 208
Խարականց (Խարականաց, Խարագան, Խառականց) գյուղ 42, 47, 69, 72
Խարկով 10, 22, 175, 241
Խարս 202
Խեք գյուղ 47
Խիզան գավառակ 33
Խլաթ գավառակ 33, 63
Խնուս 160, 201, 203, 235
Խոյ 164, 196, 202, 203, 241, 243, 277, 278, 280, 288
Խոշաբ գետ 18, 45, 79, 175
Խառամաբաղ 291
Խոսխեր (Խսխեր) 147
Խոսպ գյուղ 47
Խորգոմ գյուղ 47
Խորխոռունիք 122
Խորհրդային Հայաստան 3, 145
Խորհրդային Միություն 301, 305
Խորհրդային Ռուսաստան 237
Խոր վիրապ 196-198, 278
Խութ 202

– Ծ –

Ծակ քար 191
Ծաղկանց լեռներ 161
Ծաղկավանք 172
Ծաղկոտն գավառ 45
Ծիծանց գյուղ 176, 178
Ծիծեռնակաբերդ 294
Ծովագյուղ, տե՛ս Զիբուխլու
Ծովակ Հյուսիսո, տե՛ս Զըլդիր լիճ
Ծվստան գյուղ 74-76
Ծվստանի Սբ Աստվածածին եկեղեցի 74, 75
Ծվստանի Սբ Գևորգ եկեղեցի 75

– Կ –

Կաբանի տակ 224, 276
Կաթողիկոսի աղբյուր 21
Կալիֆորնիա 92, 144
Կահիրե 98, 282
Կաղազիս գյուղ 80
Կաղզվան քաղաք 262
Կաղզվանի օկրուգ 262, 297
Կայմազի շրջան 180
Կայնեմերան գյուղ 80
Կապան (Ղափան) 175, 244, 303
Կապուտկող բերդ 69
Կապուտկողա Սբ Հակոբ վանք 69
Կատալակի ջրվեժ 19, 21, 34
Կատլու 203
Կարաբուլաղ լեռ 80
Կարադեր, տե՛ս Փեսանդաշտ
Կարախաչ (Լուսաշող) գյուղ 201-204
Կարակալա 227, 228, 274
Կարակալա Առաջին 227
Կարակալա (Սևաբերդ) Երկրորդ 227
Կարա Թափա 288
Կարին 65, 241
Կարկառ գավառակ 72
Կարճկան (Վանի նահանգի Վանի գավառում) 244
Կարճկանց (Վանի գավառի Մոկսի գավառակում) 244
Կարճևան 284
Կարմիր (Կրասնոսելսկ, Ճամբարակ, Միխայլովկա) գյուղ 245
Կարմիր սար 197, 208, 298
Կարմրաշեն գյուղ 166, 167, 214
Կարս գետ 260
Կարս 65, 78, 91, 164, 189, 200, 210, 234, 241, 257, 260, 263, 282
Կարսի մարզ 257-260, 262, 297
Կարսի օկրուգ 260
Կեմ (Գեմ) գյուղ 47, 74, 76, 77, 137
Կզբլչախչախ կայարան 260, 262
Կզնուտ գյուղ 237
Կըզըլդաշ (Կզլդաշ) գյուղ 77, 118, 134
Կըզըլդաշ, Գզըլ-թաշ (Կարմրաքար) 25, 26, 46, 74
Կըռխբուլաղ (Քառասուն աղբյուր) 185
Կըռխբուլաղ շրջան 226, 227
Կըրմըզլու, տե՛ս Կարմրաշեն
Կիլիկիա 11, 95, 212
Կիճի գյուղ 72
Կիպրոս 299
Կլոր-դար թաղամաս 142
Կոգովիտ գավառ 172
Կոթի (Շավարշավան) գյուղ 244
Կոճ գյուղ 116
Կողբ բերդավան, գյուղ 239
Կողբոփոր գավառ 239
Կոնդ 224, 277
Կովկաս 92, 130, 140, 154, 282
Կորանդաշտ գյուղ 57, 123
Կ. Պոլիս, տե՛ս նաև Պոլիս, Ստամբուլ 8, 9, 63, 65, 98, 177, 186, 241, 282,
Կոտայքի մարզ 227, 279
Կոտայքի շրջան 235
Կտուց Անապատ 179
Կտուց կղզի 179
Կրասնոդարի երկրամաս 199
Կոտոլի կիրճ 176

– Հ –

Հալեպ 236, 237, 241

Հախումի լեռնաշղթա 253
Հաղարծին վանք (Համանուն գյուղի մոտ) 239
Հաղպատ 295
Համադան 202, 288, 289, 304
Համամլու (Սպիտակ) 243
Համփա 41, 42
Հայաստան 3, 4, 14, 18, 20, 24, 42, 68, 71, 77, 97-99, 110, 120, 121, 140, 141, 144, 145, 147, 150, 188, 191, 192, 196, 199-201, 203, 204, 229, 231, 233, 234, 237, 238, 240, 241, 249, 277, 283, 287, 290, 292, 293, 296-298
Հայաստանի Հանրապետություն 66, 144, 145, 168, 177, 186, 199, 200, 202, 205, 208, 211, 232, 234-237, 249, 279, 282, 297
Հայկաբերդ դաստակերտ 19, 47
Հայկական լեռնաշխարհ 257
Հայկական պար 164
Հայկական Տավրոս 20, 175
Հայկաշեն, տե՛ս Աստվածաշեն
Հայոց աշխարհ 45
Հայոց ձոր 6, 12, 18-20, 25, 29, 30, 36, 39, 44-46, 69, 70, 72, 74, 77, 88, 92, 149, 168, 174, 262, 296, 300
Հայֆա քաղաք 293
Հանկշտանց (Անկշտանց) գյուղ 174
Հաշկանի ակ (ջուր) 87
Հաշկանց (Հաշկունց) գյուղ 83
Հաջիլար (Հաջիաղա) գյուղ 191, 245
Հառիճ 65
Հավրեզք գյուղ 70, 71
Հարաղենց գյուղ 47
Հարավային Կովկաս 234
Հարմշատ գյուղ 178
Հիլի գյուղ 153, 154
Հին Աչաջուր 244
Հին Բայազետ 172
Հին Նախիջևան 303
Հիրճ գյուղ 46, 47, 78, 79, 97, 103
Հիրճ գյուղի Սբ Ստեփանոս եկեղեցի 79
Հովիվների քարայր (Սուրբ Մսուր) 292
Հովհաննես-Կարապետի վանք (եկեղեցին՝ Սբ Աստվածածին) 201
Հորդանան 293
Հունաստան 201, 293

– Ձ –

Ձագ գետ 223
Ձմեն լեռ 80

– Ղ –

Ղազախի գավառ 231, 244, 249
Ղազվին 288, 289
Ղամարլու (Արտաշատ) գյուղ 196, 205, 207-209, 211, 278
Ղամարլուի (Արտաշատի) շրջան 196
Ղարաբաղ 150, 237, 244, 250, 281, 284

Ղարադաղ 284
Ղարաղոյունլու (Այգուտ) գյուղ 244
Ղարաղոյունլու ձոր 245, 246
Ղարաքիլիսա քաղաք (Կիրովական, Վանաձոր) 236-238, 243, 244, 256, 267, 268, 295
Ղարաքիլիսայի շրջան 238
Ղափան, տե՛ս Կապան
Ղրիմ 22, 177, 212, 241
Ղրիմի Սբ Խաչ 303
Ղրղի (Արծվաբերդ) գյուղ 252

– Ճ –

Ճակատք գավառ 18
Ճապոտիկ, տե՛ս Ջիբուխլու

– Մ –

Մազրա (Մեծ Մասրիկ) գյուղ 230, 231, 260
Մաթոսավանք (Պողոսքիլիսայի մոտ) 239
Մալաքլու գյուղ 190, 239, 240, 287
Մակարավանք (Աչաջուր գյուղի մոտ) 244
Մակու 184, 195
Մաղավուզ գյուղ 212
Մանակերտ 69
Մանազկերտ 203
Մաստարա գյուղ 242
Մասիս (Ուլուխանլու) կայարան 193
Մասիս սար 186, 240, 294-296
Մարգարա գյուղ 165, 195, 196
Մարմարա 11
Մարմետ գետ 179
Մարմետ գյուղ 179
Մարսել 64, 186
Մարտունի քաղաք 223, 228, 229
Մարտունու շրջան 197, 201, 203, 228, 229
Մեծ Արմալու 278
Մեծ Բրիտանիա 305
Մեծ Հայք 18, 20, 68, 149, 172, 239, 284
Մեղրի գետ 282
Մեղրի քաղաք 282-285, 311
Մեյդանթաղ, տե՛ս Թաղ
Մենուախինիլի բերդաքաղաք 192
Մենուայի ջրանցք 62
Մերդենիկ 259
Մըկտենք գյուղ 90
Մժնկերտ 47
Միլլիդարա գյուղ 201, 204
Միխայլովկա գյուղ 246
Միջագետք 31, 70, 183
Միջերկրական ծով 293
Միր Իսմայիլ 297
Մհերի դուռ 158, 178,
Մշո Առաքելոց վանք 90, 91, 296
Մշո Սբ Կարապետ վանք 90
Մշո դաշտ 201
Մոլլա Բայազետ 297
Մոխրաբերդ 126, 154
Մոկաց գավառ 22, 156, 157, 197, 244
Մոկաց (Մոկս) գյուղաքաղաք 22, 30, 86
Մոկաց երկիր 24
Մոնթեբելո 92, 144

Մոսկվա 176, 210, 216, 235, 237, 282, 294, 298
Մոսկվայի նահանգ 216
Մոսուլ 70, 85
Մովսեսի լեռ 5
Մոտկան գավառակ 33
Մուժումբար (Մուժամբար) գյուղ 11, 286-288
Մուլք գյուղ 47, 49, 62, 136
Մուհամեդ փեղամբարի մզկիթ 293
Մուհանջիկ, տե՛ս Դիլման
Մուշ 10, 90, 121, 122, 195, 201-203, 206, 210, 213, 227-229, 243, 258, 283

– Յ –

Յաղալու գյուղ 214
Յուվա (Շահումյան) գյուղ 196, 198, 199, 211, 278

– Ն –

Նալչիկ 199
Նախիջևան 196-198, 200, 204, 207, 209, 234, 278
Նախիջևանի գավառ 237
Նախիջևանիկ գյուղ 212, 213
Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն 200, 283
Նահր-էլ-Օմար 70, 71
Նարեկա վանք 155
Ներքին թաղ (Կողբ գյուղաքաղաքում) 188
Ներքին թաղամաս 30
Ներքին Նորաշեն (Մեհրաբ Քուրդքենդ) գյուղ 208
Ներքին Վարագ 76
Նիկոզիա 299
Նյու Յորք 414
Նյու Ջերսի 99
Նոյեմբերյանի շրջան 239
Նորագավիթ 277
Նորագյուղ 69
Նորաշեն եկեղեցի 140
Նորաշեն գյուղ 208
Նորաշեն թաղ 76, 137, 138, 143, 148
Նոր Բայազետ 10, 144, 223, 227, 228, 275
Նոր Բայազետ գավառ 199, 218, 219, 234
Նոր գյուղ 63, 72, 154, 155
Նորդուզ (Նորդուս, Նորտուզ, Նուրտուզ) գավառակ 23, 31, 32, 149, 174, 181
Նոր Նախիջևան 212
Նուխի գավառ 240

– Շ –

Շահումյան 243
Շաղաբլու (Շաղափ) գյուղ 203
Շամիրամի ջրանցք 19, 36, 45, 75, 107
Շամխոր 244
Շամշադին (Տավուշ) 199, 249-251
Շատախ ավան 23, 31
Շատախ գավառակ 23, 24, 30-32, 52, 53, 68, 70, 78-81, 83, 85, 86, 89, 97, 99, 103, 113, 126, 141, 150, 157, 175, 177, 181, 197, 203
Շավարշավան, տե՛ս Կոթի
Շարաֆխանա 288
Շաքարյաղի սար 288
Շեմիրանի սար 299
Շեյխվալի գյուղ 288
Շենգավիթ 276, 277
Շիդան գյուղ 80, 126
Շիրազլու գյուղ 197
Շորագյալ 262, 297
Շվանիձոր 283
Շտուտգարդ 199
Շուշանից դիրք 137
Շուշի 65, 78, 144, 175, 212, 235, 302, 303
Շուշիի շրջան 281

– Ո –

Ոգիմ (Ոզըմ, Ոզմի, Օզիմ) գյուղ 23, 68
Ոստան 24, 29, 37, 47, 49, 51, 52, 62, 89, 101, 107, 108, 116, 126, 134, 136, 153, 154, 182, 183
Ոստան ավան 20, 155
Ոստան գյուղաքաղաք 20, 48, 62, 149

– Զ –

Զաթկռան գյուղ 226
Զանախչի (Զանգակատուն) գյուղ 280
Զավուշթեփե, տե՛ս Աստվածաշեն
Զարահան Սբ Նշան վանք 149
Զարենցի կամար 296
Զըլդր գյուղ 257
Զըլդր լիճ 257
Զըլուչապ սար 30
Զիբուխլու (Ծովագյուղ) 172, 231, 271
Զիդամլու, տե՛ս Ազատավան
Զիմանդարա 203
Զիմանքենդ (Զիմանքանդ) 203, 209
Զըլդրի շրջան 257
Զղինդարա 200
Զորաթան 250

– Պ –

Պաղեստին 282
Պատկանց գյուղ 126, 155
Պարծիս գյուղ 69
Պարսկահայաստան 195, 202, 208, 228, 243, 280, 284
Պարսկաստան 6, 11, 42, 70, 71, 84, 129, 145, 160, 164, 168, 175, 176, 183, 195, 201-203, 237, 275, 282, 284, 285, 287, 290, 291, 295, 302
Պետերբուրգ 10, 199, 24, 237
Պճեղ 41, 42
Պյատիգորսկ 144
Պոլիս (Պոլիս, Կ. Պոլիս), տե՛ս նաև Ստամբուլ 9, 28, 31, 39, 43, 46, 48, 69, 95, 100, 102, 103, 105, 119, 127, 128, 147, 233, 234,
Պողոս-Պետրոս եկեղեցի 218
Պողոսքիլիսա (Շամախյան) 239, 255
Պոսթոն, տե՛ս Բոստոն

– Ջ –

Ջաղկռան (Ճաթղռան, Կաբաչորլու, Ղարաչորլու) գյուղ 197, 278
Ջալալօղլի 145, 236

Ջանիկ 121, 160, 172
Ջաջուռ գյուղ 263
Ջաջուռ սար 263
Ջավախք 234
Ջարխեչ (Ջարխեջ, Կույբիշև, Հաղարծին) գյուղ 239, 245
Ջրաղացի թաղամաս 30
Ջուլամերկ 183
Ջուլֆա 283
Ջուխտակ վանք (Պողոսքիլի-սայի մոտ) 239

– Ռ –

Ռեհանլու (Այգավան) գյուղ 198, 204
ՌԽՖՍՀ 144
Ռշտունյաց (Ռշտունիք) գավառ 20, 63, 68-70, 75, 80, 97, 124, 147, 151, 153, 157, 161
Ռոստովի մարզ 199
Ռումինիա 8, 63, 119, 235
Ռուսաստան 4, 22, 164, 196, 219, 231, 236, 238

– Ս –

Սաբաթլու 240
Սաղարակ գյուղ 200, 201, 207, 209
Սաղարակի սար (Գայլի դրունք, Վոլչի վառոտ) 298
Սալմաստ գավառ 195, 202, 278, 280, 287, 288
Սամարա 22
Սային Կալա 176
Սանահին 145
Սանկտ Պետերբուրգ 146, 303
Սանկտ Պետերբուրգի մարզ 213
Սաչան ջրվեժ 45
Սասուն 282
Սարատով 22, 297
Սարդարապատ 6, 17, 66, 73, 92, 200, 210-213, 215, 234, 236, 241, 275, 296-298, 310
Սարիղամիշ 72, 144, 177, 234
Սիբիր 144
Սիսեռկա կալե (գելին, ձոր) 53, 60, 80, 81, 104, 177
Սիսիան քաղաք 281
Սիսիանի շրջան 197, 203
Սիվտիկնա (Սևտիկին, Սուրբ տիկին) գետ 31, 175
Սիրիա (Սուրիա) 291
Սիփան սար 88, 123
Սղերդ գավառ 23, 33, 147
Սյունիք 65, 281-284
Սողոմոնի տաճար 292
Սովետական Հայաստան 298
Սովետաշեն 280
Սոուխ սու (պաղ ջուր) 162
Սոֆիա 134, 237
Սպաղանք 201
Սպանդարյանի ջրամբար 281
Սպարտա 68
Սպեր գավառ 12, 241
Սպիտակ վանք (Անգղում) 150
Սպիտակ վանք (Սիվտկու վանք, Սպիտակ Սուրբ Աստվածածին վանք) 151
Սպիտակ վանք գյուղ 39

Ստամբուլ (Ստամբոլ), տե՛ս նաև Պոլիս, Կ. Պոլիս 47, 55, 101,
Ստեփանավան, տե՛ս Ջալալօղլի
Սրվեղի վանք 253
Սուլդուզ 290
Սուլուխ 282
Սուլուխ գյուղ 90
Սումգայիթ 243
Սուրամի 145
Սուրբ Ամենափրկիչ (Շիտան գյուղում) 126
Սուրբ Աստվածածին (Արգելանա) 182
Սուրբ Աստվածածին եկեղեցի (Բերդաձոր) 154
Սուրբ Աստվածածին (Բերկրի կալա) 122
Սուրբ Աստվածածին (Բողազքյասան) 212
Սուրբ Աստվածածին (Դարենց) 103
Սուրբ Աստվածածին (Լեզք) 158
Սուրբ Աստվածածին (Խարականց) 72
Սուրբ Աստվածածին (Կարմրաշեն) 166
Սուրբ Աստվածածին (Սուրբ Երրորդություն) (Կողբ) 188
Սուրբ Աստվածածին (Պատականց) 155
Սուրբ Գրիգոր վանք (Արծափ) 172
Սուրբ Գրիգոր վանք (Վան) 98
Սուրբ Գևորգ եկեղեցի 45
Սուրբ Գևորգ եկեղեցի (Աթանանց) 149
Սուրբ Գևորգ (Սուրբ Խաչ) (Կողբ) 188
Սուրբ Գևորգ ուխտատեղի (Կողբ) 189
Սուրբ Գևորգ եկեղեցի (Մարմետ) 179
Սուրբ Գևորգ եկեղեցի (Մոխրաբերդ) 154
Սուրբ Խաչ (Ղրիմ) 303
Սուրբ Վարդան վանք 69
Սուրբ Ծիրանավոր բլուր 45
Սուրբ Կարապետի վանք (Հովհաննես Մկրտչի կամ Հովհաննես Կարապետի վանք) 201
Սուրբ Հակոբ վանք (Ակոռի) 192
Սուրբ Հակոբյանց վանք 293
Սուրբ Հովհաննես եկեղեցի (Երանոս) 223
Սուրբ Հովհաննես եկեղեցի (Փշավանց) 155
Սուրբ Հովհաննես եկեղեցի (Քաբաբ) 212
Սուրբ Հովհաննես ուխտատեղի (Մուժումբար) 286
Սուրբ Հռիփսիմե վանք 232
Սուրբ Հռիփսիմե եկեղեցի (Մուժումբար) 286
Սուրբ Մեսրոպ վանք 293
Սուրբ Նշան վանք 20
Սուրբ Նշան վանք 88
Սուրբ Սարգիս եկեղեցի 36, 42
Սուրբ Սարգիս բլուր 45
Սուրբ Սարգիս մատուռ 253
Սուրբ Սոֆյա մատուռ (Երանոս) 223

Սուրբ Ստեփանոս եկեղեցի (Անկշտանց գյուղում) 174
Սուրբ Ստեփանոս (Հաջիաղա) 191
Սուրբ Ստեփանոս եկեղեցի (Տաշտուն գյուղում) 282
Սուրբ Ստեփանոս եկեղեցի 8, 22, 24, 26, 47, 112
Սուրբ Ստեփանոս եկեղեցի (Թիմարի գավառակի Ջանիկ գյուղում) 121
Սուրբ Վարդան գյուղ 47
Սուրբ Վարդան վանք 69
Սուրենավան գյուղ 201
Սուրմալուի գավառ 164, 186-188, 190-193, 210, 210, 234
Սևանա լիճ 223, 227, 228, 230, 231, 246, 269, 273, 297
Սևանի ավազան 172
Սևանի լեռնաշղթա (Շահդաղ) 246, 270
Սևաստոպոլ 301
Սև գետ 159
Սև ջուր գետ 121, 212, 297
Սևտիկե կալե 81
Սևտիկին գետ 81, 85
Սևտիկին գյուղ 81, 82, 87, 89
Սևր 186
Սևքար 239, 249

– Վ –

Վաղարշապատ 90
Վան, քաղաք 68, 9, 12, 18, 20, 22, 29, 36, 43, 47, 53, 64, 65, 68, 70, 72-80, 86, 88-90,36, 43, 47, 53, 64, 65, 68, 70, 72-80, 86, 88-90, 92, 98, 100, 101, 110, 113, 119-121, 134, 136-138, 140, 141, 143-146, 148-150, 159, 161, 168, 170, 173, 175-180, 182, 183, 197, 203, 205, 206, 209-211, 213, 233, 240, 300, 304
Վանա լիճ (ծով) 11, 20, 22, 32, 36, 47, 76, 77, 120-122, 149, 154, 155, 161, 175
Վանաք 299
Վանի գավառ 20, 23, 31, 32, 103, 121, 126, 153, 154, 158, 178-180, 208, 221, 227, 244, 262
Վանի նահանգ 20, 23, 30, 31, 44, 45, 65, 69, 72, 79, 81, 122, 153-155, 157, 158, 174, 178, 179, 181, 211, 212, 244, 262
Վանի վիլայեթ 20, 29
Վասպուրական 8, 9, 10, 15, 16, 18, 23, 32, 42, 53, 65, 66, 68, 70, 71, 76, 88, 90, 121, 143, 146, 149-151, 157, 168, 171, 177, 234, 241, 283, 295, 296, 303
Վարագ 134, 168
Վարագա գետ 137
Վարագա սար (լեռ) 76, 110, 146
Վարագավանք 10, 76, 90, 136, 146, 156
Վարդաձոր (Աթամա) 228
Վարդանլու (Վարդանլի) գյուղ 262
Վարդենիս 197, 229, 230
Վարզահան գյուղ 241
Վարշավա 298
Վեդի 201, 203, 204
Վենետիկ 216
Վերին Թաղամաս 30
Վերին Կարանլուղ (Գեղհովիտ) 228
Վերին Վարագ 76
Վերին Տարենց (Դարենց) գյուղ 103, 127
Վիեննա 21, 298
Վլադիմիր քաղաք 237
Վոլոգդա 145
Վրաստան 4

– Տ –

Տաթևի ժայռ 281
Տաթևի վանք 281, 284, 289, 303
Տալվորիկ 91
Տաճկահայաստան 282
Տաշտուն գյուղ 282
Տաշտուն վտակ 282
Տավուշ 198, 231, 239, 250
Տավուշի մարզ 252, 253
Տավուշի շրջան 252
Տարենց գյուղ 80
Տարոն 72, 90, 144, 202, 203, 241, 275, 282
Տեմկոսնի գյուղ (Գոսնի, Կյուսնի) 29, 30, 47
Տիգրանակերտի շրջան 24
Տիգրիս 30, 85, 175
Տշող (Տայշող) 69
Տոսպ գավառ 146

– Ց –

Ցածրի Կարանլուղ (Մարտունի) 229
Ցարսկոյե սելո 200
Ցոլակերտ (Բերդավան) 192

– Ու –

Ուզունթալա (Այգեհովիտ, Հոնուտ) 249, 253, 254
Ուլուխանլու, տե՛ս Մասիս
Ուկրաինա 177
Ուրաշտու 68
Ուրարտու 18, 68, 257
Ուրծի լեռներ 201
Ուրմիա 147
Ուրմիա լիճ 288, 290
Ուրցաձոր (Զիմանքենդ) 203

– Փ –

Փաշավանց (Փշավանց) գյուղ 126
Փաշի աղբյուր 75, 109, 120
Փարիզ 145, 177, 186, 205, 208, 216, 294
Փեսանդաշտ (Բեսանդաշտ) 30, 47, 80, 92, 116, 125, 126, 133, 134, 136, 138, 148, 157, 296
Փիրբաղալան գյուղ 31
Փշավանք գետակ 155
Փոքր Մասիս 193
Փոքր Վեդի 197

– Քաբաբ –

Քաբաբ (Քեապապիկ) գյուղ 211
Քաղենիի ամրոց 215
Քանաքեռ 226, 276
Քարադաշտ (Մանակերտ) 126, 153, 154

Քարվանսարա 201, 239, 249, 255
Քեռչք (Քոչկ) 262, 288
Քերծ (Քերց, Գերծ) 8-11, 16, 18, 20, 22, 24, 41, 69, 71, 92, 106, 112, 115, 134, 138, 150, 169, 174, 177, 233, 296, 299, 300, 311
Քերմանշահ 11, 290, 291, 304, 305, 307
Քիշնև 145
Քյուլլուք (Գուլոք) 188, 190
Քութոք գյուղ 188
Քուչուկ Վեդի 197, 198

– Եվ –

Եվրոպա 290

– Օ –

Օշական 294
Օսմանյան կայսրություն 69, 96
Օրանիենբաում (Լոմոնոսով) քաղաք 213
Օրգով գյուղ 164, 171, 186, 240
Օրդուբադ 283

– Ֆ –

Ֆրանսիա 282
Ֆրեզնո 140

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վարդանյան Ս., Սահակյան Լ.
ԳԻՐԸ ՄՆԱՑ ՀԻՇԱՏԱԿՈՂ 3
Սիմոնյան Ա.
ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 13
ԻՄ ՀՈՒՇԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ 17
ԽՈՍՔ՝ ԳԱԼԻՔ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՍ 18
ՄԵՐ ՔԵՐԾ ԳՅՈՒՂԸ ԵՎ ԻՄ ՏԽՈՒՐ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ 20
ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆՎԵԼԸ 22
ԻՄ ԾՆՈՒՆԴԸ 24
ՏԱՎԱՐԻ ԺԱՆՏԱԽՏԸ 26
ՀՈՐՍ ՎԵՐԱԴԱՐՁԸ 28
ՄՈԿԱՑ ԵՐԵՑԻ ԴՊՐՈՑԸ 34
ՀՈՐՍ ՓԱԽՈՒՍՏԸ 36
ՄԵՐ ԿՅԱՆՔԸ ՀՈՐՍ ՓԱԽՈՒՍՏԻՑ ՀԵՏՈ 38
ԳՈՒԹԱՆԻ ՀԵՐԿԸ 41
ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ 46
ՀԱՅՈՑ ՁՈՐԻ ԳՅՈՒՂԵՐԸ 46
ՀՈՐԵՂԲՈՐՍ ԵՂԵՐԱԿԱՆ ՎԱԽՃԱՆԸ 48
ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ԱՎԵՐՈՒՄԸ 49
ԻՄ ԽԱՂԸՆԿԵՐ ԱՏՈՄԸ 49
ՄԵՐ ԳՅՈՒՂԸ՝ ԹԱԼԱՆՎԱԾ 51
ԴԵՊԻ ԱԲԶԵՅՆԻ ԳՅՈՒՂԸ 52
ՆԱՄԱԿ ՄԵՐ ԳՅՈՒՂԻՑ 54
ՄՈԼԼԱ ԹԱՀԻՐԻ ԱՐԴԱՐ ՎՃԻՌԸ 55
ԼՈՂՄԱՆԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ 56
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐՈՒՄ 58
ՎԵՐԱԴԱՐՁ 59
ՀՈՏԱՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 63
ՄԵՐ ՄՈՒՏՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵՋ 64
ԳՅՈՒՂԻ ՅՈՒՅԱԿԱԳՐՈՒՄԸ 69
ԱՌԱՋԻՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՍ ԴԵՊԻ ՎԱՆ ՔԱՂԱՔԸ ... 74
ՄԱՐՏՈՆ 78
ՍՈՒՐՀԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՇԱՏԱԽ 80
ԹԱՂ ՔԱՂԱՔԸ 84
ԵՐԴՈՒՄ ՄՈՐՍ ՄՈՏ 89
ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ «ԾԱՂԻԿ» ԽՈՒՄԲԻ ՀԻՄՆՎԵԼԸ 91
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ԿԶԻՆՎԵՆ 94
ՀՈՒՐԻԱԹ 95
ՀԱՋԻ ՄՈՒՐԱԴԸ 96
ՋԵՆՔԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄՆԵՐ 98
ՀԱՅՐԻԿԻՍ ՎԵՐԱԴԱՐՁԸ 99

ԻՄ ՆՇԱՆԴՐԵՔԸ 102
ՀԱՐՍԱՆՅԱՑ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ 104
ԻՄ ՊՍԱԿՎԵԼԸ 1908-Ի ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՕՐԸ 105
ՂԱԶԱՐԸ՝ ՏՂԱՍ 107
ԹԱՀԻՐ ԲԵԿԻ ԱՏՐՃԱՆԱԿԸ 108
Ի ՁԵՆ 111
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՐ 116
ՊՈՁԱՎՈՐ ԱՍՏՂԸ 117
ԶՈՐԱՀԱՎԱՔԸ ԵՎ ՍՈԼԵՅՄԱՆԸ 118
ԵՍ՝ ԹՈՒՐՔԻ ԶԻՆՎՈՐ 120
ՓԱԽՈՒՍ 123
ԿԱԼԻՊՍԵ ՄԱՅՐԻԿԻ ՆՎԵՐԸ 125
ՁԵՆՔԵՐԻ ԱՌԱՔՈՒՄԸ 129
ՔԵՐԾ ԳՅՈՒՂԻ ԿՌԻՎԸ 1915 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-ԻՆ 134
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՆ ՔԱՂԱՔԻՆ 137
ԽՄԲԱՊԵՏ ԱՐԵՍԻ ԴԻՐՔԵՐՈՒՄ 138
ՀԱՋԻ ԲԱՔԸՐԻ ԶՈՐԱՆՈՑԻ ԿՌԻՎԸ 142
ՀԱՂԹԱՆԱԿԻ ՇՔԵՐԹԸ 143
ՀՈՐՍ ՎԱԽՃԱՆԸ 146
ՄԵՐ ԳՅՈՒՂԸ՝ ԱՎԵՐՎԱԾ 148
ՄԻԱՑՈՒՄ ՀԱՄԱԶԱՍՊԻ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ 149
ՍՊԻՏԱԿ ՎԱՆՔԻ ԴԱԺԱՆՈՒԹՅՈՒՆԸ 151
ՀԻԼԻ ԳՅՈՒՂԻ ՆՎԱՃՈՒՄԸ 153
ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՆԱՀԱՆՋԸ 157
ՆԱՀԱՆՋԻ ԺԽՈՐԸ 159
ՀԵՂԻՆԵՆ՝ ՎԻՐԱՎՈՐ 160
ԱՆԻԾՅԱԼ ԳԵՏԸ 162
ՎԻՐԱՎՈՐ ԿՆՈՋՍ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ 163
ԷՋՄԻԱԾՆԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԸ 165
ՀԵՂԻՆԵԻ ՄԱՀԸ 167
ՂԱԶԱՐՈՍԸ ԵՐԵՎԱՆԻ ՈՐԲԱՆՈՑՈՒՄ 169
ՄԵՐ ՀԻՄՆԱՊԵՏ ԵՂԻԱԶԱՐԸ 170
ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ 171
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԱԿ 173
ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐՔԻ ԿԱԶՄՎԵԼԸ 175
ԹԻՄԱՐԻ ԵԿՄԱԼ ԳՅՈՒՂԻ ՄԱՐԳԱՐԻՏԸ 178
ԹԱՐԽԱՆ ԲԵԿԻ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ 180
ՆԱՀԱՆՋ 181
ԲԱՅԱԶԵՏԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ 183
ԿՐԿԻՆ ԻԳԴԻՐՈՒՄ 185
ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԿՌԻՎՆԵՐԸ 187
ՄԱԼԱԲԼՈՒ ԳՅՈՒՂԻ ԿՌԻՎԸ 190
ՀԱՋԻԼԱՐ ԳՅՈՒՂԻ ԳՐԱՎՈՒՄԸ 191
ԴԱՇԲՈՒՌՈՒՆ ԳՅՈՒՂԻ ԳՐԱՎՈՒՄԸ 192

ԴԻԶԱ ԳՅՈՒՂԻ ԿՌԻՎԸ 193
ԴԱՎԱԼՈՒԻ ԿՌԻՎԸ 195
ՎՐԵԺԽՆԴԻՐ ՔԱՋ ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԸ 200
ԲՈՅՈՒՔ ՎԵԴԻԻ ԿՌԻՎԸ 208
ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ 211
ԻՄ ՎԻՐԱՎՈՐՎԵԼԸ 215
ԵՐԵՎԱՆԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԸ 216
ՓՐԿԱՐԱՐ ՀՈԽԱՆԸ 217
ՎԵՐՔԻ ԲՈՒԺՈՒՄԸ 219
ԱՇՏԱՐԱԿՈՒՄ 221
ՎԵՐԱԴԱՐՁ ՄԵՐ ԲԱՆԱԿ 224
ԵՂԻԱԶԱՐԻ ՍՊԱՆՎԵԼԸ 227
ՄԱԶՐԱ ԳՅՈՒՂԻ ԳՐԱՎՈՒՄԸ 230
ԷՋՄԻԱԾՆԻ ՀՅՈՒՐԵՐԸ 232
ՄԱՅԻՍԻ 28-Ի ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ 235
ԿՐԿԻՆ՝ ԴԱՍԱԼԻՔՆԵՐԻՆ ՀԱՎԱՔԵԼՈՒ 238
ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆԻ ԶՐԱՀԱՊԱՏԸ 240
ՂԱՐԱՂՈՅՈՒՆ ԳՅՈՒՂԻ ԳՐԱՎՈՒՄԸ 244
ՇԱՀԴԱՂԻ ԿՌԻՎԸ 246
ՎԱՇՏԱՊԵՏ ՄՈՒՐԱԴ ԱԼՈՅԱՆԻ ԵՎ ԹԵԼՈ ՍՈՒՐԵՆԻ ՄԱՀԸ ... 248
ՇԱՄՇԱԴԻՆԻ ԿՌԻՎԸ 251
ՈՒԶՈՒՆԹԱԼԱՅԻ ԳՐԱՎՈՒՄԸ 253
ՊՈՂՈՍՔԻԼԻՍԱ ԳՅՈՒՂՈՒՄ 255
ՂԱԶԱՐՈՍԸ ՈՐԲԱՆՈՑՈՒՄ 256
ԴԵՊԻ ԿԱՐՍ 257
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ 264
ԿՐԿԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ 268
ԱՊԵՐԱԽՏՆԵՐԸ 270
ԶԻԲՈՒԽԼՈՒ ԳՅՈՒՂՈՒՄ 271
ՔՈՒՐԴ ՂԱԶՈՅԻ ԵՎ ԴԱԼԻ ՂԱԶՈՅԻ ՄՈՏ 273
ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ 275
ՆԱՀԱՆՋ ԵՐԵՎԱՆԻՑ 279
ՍՅՈՒՆԻՔՈՒՄ 281
ԴԵՊԻ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ 284
ՄՈՒՏՔ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ 285
ԿՌԻՎ ՔՈՒՐԴԵՐԻ ԴԵՄ 287
ՂԱԶՎԻՆՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԴԱՆՈՒՄ 288
ԶԿԱՅԱՅԱԾ ՆԵՐԳԱՂԹ 292
ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄ 292
ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 293
ԱՄԵՐԻԿԱ ՏԵՂԱՓՈԽՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ 298
ՀԱՎԵԼՎԱԾ 301
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 313
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ, ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ 321, 334

ԵՐՎԱՆԴ ՀԱԿՈԲԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ
ԻՄ ՀՈՒՇԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Երևան - 2009

Yervand Kyureghyan
MEMOIRS

Edited With an Introduction and Commentary
by Sergey Vardanyan and Lusineh Sahakyan

Ерванд Кюрегян
МЕМУАРЫ

Редакторы и авторы предисловия и примечаний
Сергей Варданян и Лусине Саакян

Yerevan 2009 Ереван

Ստորագրված է տպագրության 12.10.2009: Չափը՝ 60 x 84 1/16: Թուղթը՝ օֆսեթ № 1: Տառատեսակը՝ «Arial Armenian»: Տպագրությունը՝ օֆսեթ: 22,125 տպ. մամուլ + ներդիր և քարտեզներ: Տպաքանակը՝ 700 օրինակ:

Տպագրվել է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ

ԼՈՒՍԱԿՆ

հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:
Էլ. փոստ lusakn@rambler.ru

ԵՐՎԱՆԴ ԿՅՈՒՐԵՂՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՏԱՐ

1/16/1888-ին Վանի նահ[illegible] գավառակի Քերծ գյուղում, Հակոբ և Զ[illegible]դար Կյուրեղյանների ընտանիքում ծնվում է Երվանդը: 1892թ. երկու քուրդ կողոպուտի նպա[illegible] հարձակվում են հոր՝ Հակոբի վրա, որը քր[illegible]ի մեկին սպանելով՝ փրկվում է և ճարահատյա[illegible] գյուղից հեռանում: 1896թ. տեղի է ունենում [illegible]ծ գյուղի կոտորածը: Երվանդը մոր հետ տեղափոխվում է Աբզեյնի (Ավզնի) գյուղ, որտեղից վերադառնում են 1898թ: 1905թ. ընդունվում է Հոտաղների միություն, միանում է գյուղի պաշտպանության խմբին: 1906թ. սուրհանդակ է գնում Վան, 1907թ.՝ Շատախ: 1908թ. անդամակցում է ՀՅԴ կուսակցությանը: Հայրը՝ Հակոբը, օգտվելով «Հուրիեթի» ընձեռած ազատությունից, վերադառնում է տուն: Երվանդին ամուսնացնում է Հեղինեի հետ: 1910թ. ծնվում է որդին՝ Ղազարոսը: 1914թ. Երվանդը զորակոչվում է թուրքական բանակ և հաջողում է փախչել բանակից: 1915թ. մասնակցում է Քերծ գյուղի ինքնապաշտպանությանը և Վանի հերոսամարտին: Գաղթի ճանապարհին Հեղինեն վիրավորվում է ու մահանում էջմիածնի հիվանդանոցում: Հայրը զոհվում է Վարագավանքում: Ղազարոսին հանձնում է Երևանի որբանոց: 1916-1917թթ. վերադառնում է բնօրրան, դառնում է Ազգային պահակ, ապա ծառայում է 4-րդ և 8-րդ գնդերում: Մասնակցում է Բայազետի գրավմանը, Գուլոքի, Մալաքլուի, Հաջիլարի, Դաշբուռունի, Դիզայի, Դավալուի, Սադարակի, Բոյուք Վեդիի, Շահդաղի, Շամշադինի, Ուզունթալայի մարտերին: 1918թ. մասնակցում է և վիրավորվում Սարդարապատի ճակատամարտում, բուժվում Երևանի հիվանդանոցում: 1919թ. նշանակվում է հիսնապետ 8-րդ գնդում: 1920թ. որդուն՝ Ղազարոսին, տեսակցում է Ալեքսանդրապոլի որբանոցում: 1921թ. Փետրվարյան ապստամբությունից հետո ղեկավարության հրահանգով տարագրվում է Իրան: 1922թ. Թավրիզում ամուսնանում է Վարդանուշի հետ, ընկերների հետ որոշում են գնալ Բաղդադ՝ աշխատելու, սակայն հաստատվում է սահմանամերձ Քերմանշահ քաղաքում: 1924թ. ծնվում է Պարգևը, 1927թ.՝ Անժելը, 1930թ.՝ Վարուժանը: 1942թ. ընտանիքով տեղափոխվում է Թեհրան: Արձանագրվում է Հայաստան ներգաղթելու համար, բայց Իրանի քաղաքական դրության պատճառով ներգաղթը դադարում է: 1942թ. խզվում է նամակագրական կապը որդու՝ Ղազարոսի հետ, որը, ենթադրվում է, զոհվել է Սևաստոպոլում: 1975թ. մահանում է որդին՝ Պարգևը: 1978թ. ուխտի է գնում Երուսաղեմ: 1979թ. այցելում է Հայաստան, գտնում հեռու ազգականներին: 1981թ. մահանում է կինը՝ Վարդանուշը: 1985թ. բնակություն է հաստատում Լոս Անջելեսում, որտեղ և մահանում է 1998թ. փետրվարի 21-ին:

Երվանդ Կյուրեղյանի բանախոսությունները

1982թ. ապրիլ, ոգեկոչման համահավաք Թեհրանի առաջնորդարանում: 1983թ. ապրիլի 24, ԻԱՄ միությունում, Թեհրան: 1986թ. ապրիլի 24, ՀՄԸՄ «Արարատ» կազմ., նաև բանախոսություն Լոս Անջելեսի Շամլեան վարժարանում: Ասուլիսներ Կալիֆորնիայի UCLA համալսարանի հայագիտական ամբիոնում, հայկական հեռուստածրագրերին, Զորյան ինստիտուտում, հայկական մամուլին, ավանդական երեք կուսակցություններին: